


ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐ
ԵՎ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XXVIII



✓
NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA

INSTITUTE OF ORIENTAL STUDIES

THE COUNTRIES AND PEOPLES
OF THE NEAR AND MIDDLE EAST

XXVIII

YEREVAN 2011

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

**СТРАНЫ И НАРОДЫ БЛИЖНЕГО
И СРЕДНЕГО ВОСТОКА**

XXVIII

ЕРЕВАН 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XXVIII



ԵՐԵՎԱՆ 2011

ՀՏԴ 93/99(5-011)
ԳԱԴ 63.3(5)
Ս663

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Սաֆրաստյան Ռ.Ա. (նախագահ), Չորանյան Պ.Ա. (նախագահի տեղակալ)
Ղազարյան Ռ.Պ. (պատասխանատու քարտուղար)
Քայրուրդյան Վ.Գ., Գովհաննիսյան Ն.Գ., Քոսյան Ա.Վ.,
Կարամանուկյան Շ.Լ., Գակոբյան Ա.Գ.

Տեխնիկական համակարգող՝ Ն.Վ. Կարախանյան

ՍԵՆՉԱԿՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԵԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ
ՍԽՐ. ԽՈՐՀՈՒՐԴ Ռ.Ա. Սաֆրաստյան և ուրիշ. – Եր.: Ձանգակ–97, 2011. –
352 էջ:

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» ծածկանշարի
հեջթական XXVII հատորը ընդգրկում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների
էին և միջին դարերի պատմության, նոր և նորագույն ժամանակների, ինչպես
և նաև քանակության հարցերի հետազոտություններ Զգալի տեղ է
հատկացված տարածաշրջանի քաղաքական զարգացումների, միջազգային
հարաբերությունների և այլ հիմնականների լուսաբանությանը:

Լախատեսվում է արևելագետների, միջազգայնագետների, պատմաբանների,
քանակության հարցերով զբաղվողների, ինչպես նաև քարձրագույն
ուսումնական հաստատությունների ուսանողների համար:

ՀՏԴ 93/99(5-011)
ԳԱԴ 63.3(5)

ISBN 978-99941-1-939-4

© ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2011

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԵՆԱՐԿԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ Ն. ԱՂՈՆԻ «ՀԱՅՈՑ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ..... 14

ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ՈՒՌԲԵՆ

ՍԱՍՆԱՅԱՆՆԵՐԻ ԴԵՄ ՀՈՂՄԵՆԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՔՈՒՇԱՆՆԵՐԻ ՄԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԸՈՒՐՁ (231-
232 թթ.)..... 22

ՅԱԿՈԲՅԱՆ ԱՆՔԱՆԱՆ

«ԳԱՀԱՄԱՍԿ ԱԶԱՏԱՑ ԵՎ ՏԱՆՈՒՏԵՐԱՑ ՀԱՅՈՑ». ՀԵՏԱԶՕՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲՆԱԳԻՐ..... 27

ԽՈՐԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՂՎԱՆԻՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԶԱԿԱՆ ՔԱԺԱՆՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ
«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի..... 67

ՄԱՅԵԿՈՍՅԱՆ ԱՌԹՈՒՐ

ՀԱՅ ԵՎ ԲՅՈՒՋԱՆԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՔՐԻՍՏՈՍԱՔԱՆԱԿԱՆ
ՀԱՅԵՍԱԿԱՐԳԵՐԸ Ը ԴԱՐՈՒՄ..... 86

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԻՒԹ

ԲԶՄՄԱՈՒ ՀԱՅ ԿԱՅՈՒԿ ԿԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ..... 98

ՆԱԿԱՍԱՐԴՅԱՆ ՆԱԶԵԼԻ

1905-1911 թթ. ԻՐԱՆԻ ՍԱՀԱՄԱԴՐՈՒԿԱՆ ԸՈՒՃԱՆՈՒ ՀԱՅԵՐԻ
ՄԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԸՈՒՐՁ..... 112

ՄԱԿՅԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ

ԿՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿՈՐՄԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱ-
ՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ (1918-1921 թթ.)..... 139

ՀՊԿ ՀԱՆՆԻՍՑԱՆ ԱՆՈՒՄ
 ԱՐԾԿԵԼՅԱՆ ԼԵԳԻՈՆԸ ԵՎ ՅՐԱՆՍԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
 ԹՈՒՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔԸ 164

ՃԱՌՈՒԹՅՈՒՆՑԱՆ ԿԱՐԴԱՆ
 ԱԼԵԿՍԻԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՆՈՒՄԸ ԵՎ
 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՈՐՈՊԱՅՈՒՄ 1960-2000-ԱԿԱՆ թթ. 171

ՀՊԿ ԱՆԹՅԱՆ ԼԵՎՈՆ
 ԵՎՐԱՍԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇՆԱՐԿԱԳՐԱԿԱՆ ԴԵՏԵՐՄԻՆԱՒԱՄԻ
 ՆԿԱՏՄԱՍԲ ԹՈՒՐԹԱԿԱՆ ԶԻՆԿՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ
 ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԸՈՒՐՋ 188

ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՒՑԱՆ ԿԱՐԴԱՆ
 «ՀԱՆՐԱՊԵՏՆԱԿԱՆ-ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ» ԿՈՒՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ 1960-2010
 թթ. ԹՈՒՐԹԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՆԱԴՐԱՄԸ
 ԿՈՒՄԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱԾՈՒՆՄԱՆ ԿԵՆ ԴԱՐԸ 200

ԱՍՏԿԵԼՅԱՆ ԿԱՐԻՆԵ
 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՊՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԶՈՒՄ ԵՎ ՆՐԱ
 ԸՈՒՐՋ (2009-2010 թթ.) 218

ՔԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՌՈՒԹՅՈՒՆՑԱՆ ՆԻԿՈՒՍՅ
 ՈՒՐԱՐՏԵՐԵՆ ՃԵՃԻ ԵՎ ՃԵՏՆԱՐՔՈՒԹԻ ԱՏՈՒԳԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ 235

ՀԱՅԱԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ
 ՆՈՒՈՒԿԱԿԱՆ *ՏԵԿՆՈԼՈԳԻԱՆ ԱՍՏԿԱԾՈՒՄԸ ԱՆԿԱՆ ԵՎ ԿԵՐՊԱՐՈՒ
 ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՄԻԵԱԿԱՆ ԵՎ ԼԵԶԿԱԿԱՆ
 ՆՅՈՒԹԵՐՈՒՄ 239

ՆԱՄՈՑԱՆ ՄԱՅՐԱՄ

ՔՐԻՐԵՆ ԼԵԶԻ ՔԱՌԱԿԱՊԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ
 ՏԻՊԱՔԱՆՈՒԹՅԱՆ ԸՈՒՐՋ 252

ՄԻՋՈՑԱՆ ՔԱՐԻԿ, ԱՎԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
 ԹՈՒՐԹԵՐԵՆԻ ԿԻ ԱՏՈՐԱԴՄԱՍԿԱՆ ՀԱՂԿԱՊԻ
 ԻՆՍՏԻԿՈՐՏԱՌՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 264

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՍԿԱՆՂԱԹՅԱՆ ԳՈՎԱՐ

ԻՐԱՆ-ԵՎՐՈՍՄԻՒՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20-ՐԴ ԴՄԱՐԻ
ԿԵՆՏՐՈՆ 21-ՐԴ ԴՄԱՐԻ ՄԱՋՔԻՆ..... 270

ՄԻՆԱՅԱՅԱՆ ՆՅԱԻ

ԹՈՒՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅԻ
ԹՅՈՒՐԻԱԼԵԶՈՒ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ «ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (2002-2007
թթ.). ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ..... 292

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՌԱՎՆԻ

ՉԻՆ-ԵՂԻՊՏԱԿԱՆ ԱՌԿՏՐՈՍՆԱՅԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՇՈՒՐԶ..... 300

ՊՈՂՈՍՅԱՆ ՔԵՆԻԱՄԻՆ

ԱՆՆ-ԻՍՐԱԵԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
(2009-2010 թ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)..... 315

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՆԱՆՁԱՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԱՐՄԵՆՈՒՂ ԵԶՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ..... 329

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԿՈՍՏԻԿՅԱՆ ՔՈՒՍՏԻՆՅ

ԻՐԱՆԻ ՊԱՍՏՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՐ ՄԱՐԱԿԻՆ ՄՈՎ ՄՈՒՀԱՄՄԱԴ ՆԱՆԻ
1795 թ. ՊԱՐԱՐԱՐՅԱՆ ԱՐՇԱԿԱՆՔԻ ՄԱՍԻՆ..... 336

СОДЕРЖАНИЕ

ДРЕВНЯЯ И СРЕДНЕВЕКОВАЯ ИСТОРИЯ

- ГРИГОРЯН СОНА
КЛИНОПИСНЫЕ ТОПОНИМЫ АРМЯНСКОГО НАГОРЬЯ СОГЛАСНО
"ИСТОРИИ АРМЕНИИ" Н. АДОЦА 14
- МАНАСЕРЯН РУБЕН
К ВОПРОСУ ОБ УЧАСТИИ КУШАН В ВОЙНЕ РИМСКОЙ ИМПЕРИИ И
АРМЕНИИ ПРОТИВ САСАНИДОВ (231-232гг) 22
- АКОГЯН АЛЕКСАН
"ГАРНАМАК АРМЯНСКИХ АЗАТОВ И ТАЛУТЭРОВ", ИССЛЕДОВАНИЕ И
ТЕКСТ 27
- ХОРИКЯН ОГАНЕС
АДМИНИСТРАТИВНЫЕ ДЕЛЕНИЯ АЛБАНСКОГО МАРЗПАНСТВА ПО
"АШХАРАЦУЙЦУ" ("АРМЯНСКОЙ ГЕОГРАФИИ") 67
- МАТЕВОСЯН АРТУР
ХРИСТОЛОГИЧЕСКИЕ КОНЦЕПЦИИ АРМЯНСКОЙ И ВИЗАНТИЙСКОЙ
ЦЕРКВЕЙ В VIII ВЕКЕ 86

НОВАЯ И НОВЕЙШАЯ ИСТОРИЯ

- АРУТЮНЯН ЛИЛИТ
ОСНОВАНИЕ АРМЯНСКОГО КАТОЛИЧЕСКОГО МОНАСТЫРЯ В
БЗММАРЕ 98
- НАВАСАРДЯН НАЗЕЛИ
К ВОПРОСУ ОБ УЧАСТИИ АРМЯН В ИРАНСКОМ КОНСТИТУЦИОННОМ
ДВИЖЕНИИ 1905-1911гг. 112
- МАИЛЯН БЕНИАМИН
ОСНОВНЫЕ ПРИНЦИПЫ ФОРМИРОВАНИЯ И ВНУТРЕННЕЙ
ПОЛИТИКИ РЕСПУБЛИКИ ГРУЗИИ (1918-1921гг.) 139
- ОГАНЕСЯН АНУШ
ВОСТОЧНЫЙ ЛЕГИОН И ПОЛИТИКА ФРАНЦИИ В СВЕТЕ НОВЫХ
ТУРЕЦКИХ ПУБЛИКАЦИЙ 164

АРУТЮНЯН ВАРДАН ФОРМИРОВАНИЕ И ДЕЯТЕЛЬНОСТЬ АЛЕВИТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ЕВРОПЕ В 1960-2000гг.	171
ОВСЕЛЯН ЛЕВОН О ПОДХОДАХ К ЕВРАЗИЙСТВУ И ГЕОГРАФИЧЕСКОМУ ДЕТЕРМИНИЗМУ В ТУРЕЦКИХ ВОЕННЫХ КРУГАХ	188
ТЕР-МАТЕВОСЯН ВАГРАМ "РЕСПУБЛИКАНСКАЯ-НАРОДНАЯ" ПАРТИЯ В 1960-2010гг.: ПОЛТОРА ВЕКА ТРАНСФОРМАЦИИ ПАРТИИ, ОСНОВАВШЕЙ ТУРЕЦКУЮ РЕСПУБЛИКУ	200
САМВЕЛЯН КАРИНЕ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В ИРАКЕ И ВОКРУГ НЕГО (2009-2010гг.)	218

ФИЛОЛОГИЯ

АРУТЮНЯН НИКОЛАЙ ЭТИМОЛОГИЯ УРАРТСКИХ СЛОВ <i>daš</i> И <i>dašusi</i>	235
АМАЯКЯН АСМИК ПРОЯВЛЕНИЕ ИМЕНИ И ОБРАЗА БОГИНИ ⁴⁵ Ša(w)uš(k)a В АРМЯНСКОМ МИФОЛОГИЧЕСКОМ И ЯЗЫКОВОМ МАТЕРИАЛЕ	239
ХАМОЯН МАКСИМ К ПОНЯТИЙНОЙ ТИПОЛОГИИ СЛОВСОЧЕТАНИЙ КУРДСКОГО ЯЗЫКА	252
МИРЗОЯН КНАРИК, СААКЯН ЛОСИНЕ СЕМАНТИКО-ФУНКЦИОНАЛЬНЫЕ ПРОЯВЛЕНИЯ СОЮЗА <i>ki</i> В ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ	264

МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

ИСКАНДАРЯН ГОАР ОТНОШЕНИЯ МЕЖДУ ИРАНОМ И ЕС В КОНЦЕ 20-ГО И НАЧАЛЕ 21- ГО ВВ.	270
МИНАСЯН НЕЛЛИ ПОЛИТИКА ТУРЦИИ В ТЮРКОЯЗЫЧНЫХ СТРАНАХ ЦЕНТРАЛЬНОЙ АЗИИ В ПЕРВЫЕ ГОДЫ ПРАВЛЕНИЯ ПАРТИИ "СПРАВЕДЛИВОСТИ И РАЗВИТИЯ" (2002-2007): НОВЫЕ ТЕНДЕНЦИИ	282

АРУТЮНЯН АГАВНИ ВОКРУГ КИТАЙСКО-ЕГИПЕТСКОГО ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКОГО СОТРУДНИЧЕСТВА.....	300
--	-----

ПОГОСЯН БЕНИАМИН ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ В АМЕРИКАНО-ИЗРАИЛЬСКИХ ОТНОШЕНИЯХ (2009 - ПЕРВАЯ ПОЛОВИНА 2010г.).....	315
---	-----

ОБСУЖДЕНИЕ

ХАНЗАДЯН МАРИАМ О ТЕРМИНЕ АРМЕНОИД	329
---	-----

ПУБЛИКАЦИИ

КОСТИКЯН КРИСТИНЕ ПРИДВОРНЫЙ ИСТОРИОГРАФ ИРАНА САРАВИ О КАРАБАХСКОЙ КАМПАНИИ АГА МУХАММАД ХАНА 1795 ГОДА.....	336
---	-----

CONTENTS

ANCIENT AND MIDDLE HISTORY

GRIGORYAN SONA

THE TOPONYMS OF THE ARMENIAN HIGHLAND ACCORDING IN THE
"HISTORY OF ARMENIA" OF N. ADONTZ..... 14

MANASSERYAN RUBEN

ON KUSHANS' PARTICIPATION AT WAR OF ROMAN EMPIRE AND
ARMENIA AGAINST THE SASANIANS (231-232)..... 22

HAKOBIAN ALEXAN

"THE GAHNAMEK OF ARMENIAN AZATS AND TANUTERS". RESEARCH
AND TEXT..... 27

KHORIKYAN HOVHANNES

THE ADMINISTRATIVE DIVISIONS OF THE ALBANIAN MARZPANATE
ACCORDING TO THE "ASHKHARHATSOYC" ("ARMENIAN
GEOGRAPHY")..... 67

MATEVOSYAN ARTHUR

THE CHRISTOLOGICAL CONCEPTIONS OF THE ARMENIAN AND
BYZANTIAN CHURCHES IN VIII CENTURY..... 86

MODERN AND CONTEMPORARY HISTORY

HARUTYUNYAN LILIT

THE FOUNDATION OF ARMENIAN CATHOLIC CONVENT OF BZUMMAR... 98

NAVASARDYAN NAZELY

ON THE ISSUE OF THE ARMENIANS PARTICIPATION IN 1905-1911
IRANIAN CONSTITUTIONAL REVOLUTION..... 112

MAILYAN BENIAMIN

THE MAIN PRINCIPLES OF THE FORMING AND THE INTERNAL
POLITICS OF THE REPUBLIC OF GEORGIA (1918-1921)..... 139

HOVHANNISYAN ANUSH

EASTERN LEGION AND POLICY OF FRANCE IN THE LIGHT OF NEW
TURKISH PUBLICATIONS..... 164

HARUTYUNYAN VARDAN THE FORMATION AND ACTIVITIES OF ALEVI ORGANIZATIONS IN EUROPE IN 1960-2000	171
HOVSEPYAN LEVON ON THE APPROACHES OF EURASIANISM AND GEOGRAPHICAL DETERMINISM IN THE TURKISH MILITARY CIRCLES	188
TER-MATEVOSYAN VAHRAM THE REPUBLICAN PEOPLE'S PARTY BETWEEN 1960 AND 2010: THE HALF CENTURY OF TRANSFORMATION OF A PARTY FOUNDING THE REPUBLIC OF TURKEY	200
SAMVELYAN KARINE THE SOCIAL-POLITICAL SITUATION IN AND AROUND IRAQ IN 2009- 2010	218

PHILOLOGY

HARUTYUNYAN NIKOLAY THE ETYMOLOGY OF THE URARTIAN WORDS <i>daš</i> AND <i>dašuz</i>	235
HMAYAKYAN HASMIK MANIFESTATION OF NAME AND CHARACTER OF HURRIAN GODDESS ² <i>Sa(w)uš(k)a</i> IN ARMENIAN LANGUAGE AND MYTHOLOGY	239
KHAMOYAN MAXIM ON THE CONCEPT OF THE TYPOLOGY OF KURDISH WORD- COMBINATIONS	252
MIRZOYAN KNARIK, SAHAKYAN LUSINEH SEMANTIC-FUNCTIONAL MANIFESTATIONS OF THE TURKISH SUBORDINATE CONJUNCTION <i>Kİ</i>	264

INTERNATIONAL RELATIONS

ISKANDARYAN GOHAR IRAN-EU RELATIONS IN THE END OF 20 th AND THE BEGINING OF 21 st CENTURIES	270
MINASYAN NELLY TURKISH POLICY IN CENTRAL ASIAN TURKIC REPUBLICS DURING THE FIRST YEARS OF JUSTICE AND DEVELOPMENT PARTY RULE (2002- 2007): NEW TRENDS	282

HARUTYUNYAN AGHAVNI ON THE SINO-EGYPTIAN TRADE-ECONOMIC COOPERATION	300
---	-----

POGHOSYAN BENIAMIN MAIN TRENDS IN US - ISRAEL RELATIONS (2009-MID 2010).....	315
--	-----

DISCUSSION

KHANZADYAN MARIAM ON THE TERM ARMENOID	329
--	-----

PUBLICATIONS

KOSTIKYAN KRISTINE THE REPORTS OF SARAVI, THE COURT HISTORIOGRAPHER OF IRAN ABOUT AGHA MUHAMMAD KHAN'S CAMPAIGN IN KARABAGH IN 1795	336
---	-----

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱԵՆԱՐԿԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ Ն. ԱՂՈՆՑԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱԵՆԱՏՈՒԹՅԱՆ

Հայ ուրարտագիտության մեջ մեծ է հայ ականավոր գիտնական Ն. Աղոնցի ներդրումը: Նա իր կյանքի վերջին տարիներին զբաղվել է Բիայնիլի-Ուրարտուի պատմության ուսումնասիրությամբ և արդյունքները հետմահու 1946 թ. ֆրանսերեն հրատարակվել են «Հայաստանի պատմություն. Ակունքները X-VI դդ. մ.թ.ա» խորագրով ստվարածավալ հատորում¹: Նա իր աշխատության մեջ հիմնականում անդրադարձել է Բիայնիլի-Ուրարտուի (մ.թ.ա IX-VI դդ.) ռազմաքաղաքական իրադարձություններին, տեղանուններին, դիցանուններին ու նաև հայ ժողովրդի քաղաքական պատմությանը և ներքին կյանքին:

Այս աշխատությունը արդյունք է հեղինակի երկար տարիների քանադիր գիտական պրպտումների, սեպագիր հաղուստ աղբյուրների և այլալեզու փաստական նյութի մանրակրկիտ հետազոտության²:

¹ Adontz N., Histoire d'Arménie. Les origines du X siècle au VI (Av. J. C.) Paris, 1946, p. 445 (այսուհետև՝ HA). Տե՛ս նաև Աղոնց Ն., «Հայաստանի Պատմություն. Ակունքները X-VI դդ. մ.թ.ա» Վ. Սեդրուկյանի հայերեն թարգմանությամբ և Գ. Սարգսյանի խմբագրությամբ՝ (այսուհետև՝ ՀԳ), Երևան, 1972, էջ 430: Ն. Աղոնցի ֆրանսերեն աշխատության առաջաբանը գրել է Ֆրանսիացի ակադեմիկոս Ուլնե Գրուսեն: Ն. Աղոնցի մահվանից հետո Ո. Գրուսեն ծեռնածուխ եղալ Ֆրանսերեն լեզվով երկհատորանոց «Հայոց պատմություն» աշխատության ստեղծմանը, և 1947 թ. Փարիզում հրատարակեց "Histoire de l'Arménie. des origines à 1071. t. I. Avec dix cartes et cinq tableaux géographiques", Paris, 1947 աշխատությունը: Անհրաժեշտ է նշել, որ պատ 2006 թ. շնորհիվ Գ. Հովհաննիսյանի, Գ. Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ սկսվել է Ն. Աղոնցի երկերի քաղմատատրգակների հրատարակությունը, և պատ հայազետների տրամադրության տակ է «Հայաստանի պատմություն» աշխատության նոր հրատարակությունը. տե՛ս Աղոնց Ն., երկեր, Զննական պատմություն հայոց (այսուհետև՝ ՀԳ), հ. V, Երևան, 2009:

² Հովհաննիսյան Գ., Ն. Աղոնցի «Հայոց քննական պատմության» ստեղծագործական ձևատառադրը, Պատմա-քանակական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), Երևան, 2001, №1

«Հայոց պատմություն» աշխատությունը շատ հարուստ է իր ժամանակաշրջանի գիտական ձեռքբերումներով: Ն. Աղոնցի հետ միաժամանակ կողողոյային Հայաստանում Գ. Ղափանցյանն առաջինն էր, ով հայերեն գրել էր ընդարձակ մենագրական ուսումնասիրություն՝ «Ուրարտուի պատմություն»-ը³:

Ն. Աղոնցն ունի մի շարք ուշագրավ, այժմ ևս գիտականորեն կենսունակ դիտարկումներ, այդ թվում ուրարտական արչավանքների երթուղիների ճշգրիտ կրահումներ, մի շարք երկրների անունների և տեղադրումների պարզաբանումներ, ուրարտա-հայկական տեղագրական ընդհանրությունների քաջահայտման քազում փաստեր:

Ուրարտական տեղանունների համադրությունների շարքում արժեքավոր է՝ Ն. Աղոնցի կողմից առաջարկված էրիկուախի-Որկով նույնացումը: Այս երկիրը հիշատակվում է Մենուա արքայի Յուպեբուտի արձանագրության մեջ⁴, որը հայտնաբերվել է Արաքս գետի մոտ գտնվող Ղաշրուսուն գյուղից: Ն. Աղոնցը ուրարտական սեպագիր ստյուրների էրիկուախի երկրանունը նույնացրել է Մասեաց-ոսն գավառի Որկով գյուղանվան հետ, որը համապատասխանում է Իզդիլիից հարավ, Մեծ Արարատի հյուսիսարևմտյան լանջին գտնվող այժմյան Օրկոֆի տեղանվանը: Որկովի գյուղանունը իր աշխատությունում հիշատակել է նաև հինգերորդ դարի հայ պատմիչ Ղազար Փարպեցին: Ն. Աղոնցի այս համադրությունը ուրարտագիտության մեջ ընդունել են Գ. Ղափանցյանը, Ն. Հարությունյանը և այլք⁵:

(156), էջ 64, նույնի՝ Աղոնց Ն., երկեր, Քննական պատմություն հայոց, հ. V, Երևան, 2009, էջ 6; Պետրոսյան Ա., Ն. Աղոնց, Երկեր, հ. Ա, Գաղտնագիտական ուսումնասիրություններ, ԳԲՀ, 2006, № 3, էջ 280-285: Ինչպես նաև ուրարտագիտության մեջ Ն. Աղոնցի կատարած հետազոտությունների և դիտարկումների համար տես Հարությունյան Ն., Ն. Աղոնցը և ուրարտագիտությունը, ԳԲՀ, 1997, № 2, էջ 215-224; Ն. Աղոնցի գիտական գործունեության վերաբերյալ տես Ղիզախան Գ., Լիկոյայու Աղոնցը որպես պատմաբան, Արման, 1943; նաև՝ Յուզբաշյան Կ., Լիկոյայու Աղոնցի գիտական ժառանգությունը, ԳԲՀ, 1962, № 4, էջ 115-127:

³ Ղափանցյան Գ., Ուրարտուի պատմությունը, (այսուհետև՝ ՈւՊ), Երևան, 1940:

Историко-лингвистическое значение топонимии древней Армении (այսուհետև՝ ИЛТДА), Ереван, 1940.

⁴ Арутюнян Н., Корпус урартских клинообразных надписей (այսուհետև՝ КУОН),

Ереван, 2001, № 48 – Salvini M., Corpus Dei Testi Uraltei (այսուհետև՝ СТУ), v. I, Roma, 2008, A 5-27.

⁵ Adontz N., HA, էջ 201, ինչպես նաև՝ Каланцян Г., Историко-лингвистическое значение топонимии древней Армении (այսուհետև՝ ИЛТДА), Ереван, 1940, с. 51,

Վանում հայտնաբերված Մենուայի արձանագրություններից մեկում հիշատակվում է Ուտուտանի երկիրը, որը նվաճվել է Արաույանի քաղաքով հանդերձ: Ուտուտանիի հետ հիշատակվում են Նիրիթայի դաշտի երկիրը՝ Կալիբլիանի քաղաքով, Տուշուրիեի երկիրը՝ Խուլմեբունի քաղաքով, Էրունի քաղաքը, Ուլիթանի քաղաքը՝ Կիրպունունի քաղաքով⁶: Ն. Ադոնցն Ուտուտանի համադրում է Սասունի հետ: Նշենք, որ նրա այս լեզվաբանական համեմատությունը հաստատվում է նաև աշխարհագրական տեսակետից: Ուտուտանիից առաջ հիշատակվող Կալիբլիանի քաղաքը նա փորձում է մոտեցնել Ջիբենե-սուի ակունքներում գտնվող Քիլ-Կալենին, իսկ Ուտուտանիից հետո հիշատակվող Խուլմեբունի քաղաքը ասուրական Կուլլմեբին է՝ հայկական Ք(ու)ղիմարը: Հետևաբար, ըստ Ն. Ադոնցի, Կալիբլիանիի և Խուլմեբունիի միջև գտնվող Ուտուտանի երկիրը Սասունի շրջանն է⁷:

Ուրարտական տեղանուններից արժեքավոր է Ուրմիա լճից հարավ ընկած Մանայի թագավորության բնակատեղիներից Իզիրտու-Քերդիզորի կապակցությամբ արված Ն. Ադոնցի համադրությունը: Իզիրտուն հիշատակվել է Սալմանասար III-ից մինչև Աշշուրբանապալ ընկած շրջանը, սակայն, ամենից շատ հիշատակվում է Սարգոն II-ի կառավարման տարիներին⁸: Քաղաքի տեղայնացման խնդրին

прим. 3: Арутюнян Н., Топонимика Урарту (այսինքն՝ ԿՄ), Ереван, 1985, с. 260-261: Հմմտ. նաև՝ Меликшадзо Г., Урартские клинообразные надписи (այսինքն՝ ԿԿԻ), Москва, 1960, с. 425-426; Diakonoff I., Kakhki S., Geographical Names According to Urartian Texts (այսինքն՝ GNAUT), Wiesbaden, 1981, pp. 31-32.

⁶ Арутюнян Н., КҮԿԻ, № 44 - Salvini M., CTU, I, A 5-9.

⁷ Ադոնց Ն., ՀՊ, էջ 199, ծնթ. 91: Նշենք, որ Ն. Ադոնցի այս տեսակետի հետ համակարգիչ է նաև Հ. Լորիվանը: Են՝ Լորիվան Հ., Ասորական-Պարսկական արձանագրության և հարակից անուններից մ.թ.ա. 6-4-րդ դարերում, ՊՃՀ, 2006, № 3, էջ 190: Հ. Լորիվանը Ուտուտանի երկիրը (ու-ի անկումով) նույնացնում է Քեիսաունի արձանագրության Ջուզաիթի հետ: Միևնույն ժամանակահատվածում Ն. Ադոնցի հետ, տե՛ս՝ Կարազոզյան Հ., Սեպազի տեղանուններ (Արարատու և հարակից նահանգներում), Երևան, 1998, էջ 307, ծնթ. 11, ինչպես նաև էջ 41:

⁸ Սալմանասար III-ի համար տես Luckenbill D., Ancient Records of Assyria and Babylonia (այսինքն՝ ARAB) I, Chicago, 1926, p. 587; Grayson A., The Royal Inscriptions of Mesopotamia (այսինքն՝ RIMA), v. III, Toronto, 1996, p. 70, իսկ Աշշուրբանապալի Luckenbill D., ARAB, II, 786; Дьяконов И., Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսինքն՝ АВНИУ), ВДИ, 1961, № 2, 3, 4, 72 (II, 95-II, 26); իսկ Սարգոնյան տեղանքի համար՝ Luckenbill D., ARAB, II, 6, 13, 55 (2); Дьяконов И., АВНИУ, 46 (52, 75), 49 (6).

անդրադարձել են քազմաքիվ հետազոտողներ, այն նույնացրել են Բապանբու բնիեի կամ Բալայջի բնիեի հետ, տեղորոշել Սաքըզի շրջանում, տեղայնացրել են Բանեի մոտ, Բուկանից հյուսիս և այլն⁹։ Այս քուր տեղորոշումների մեջ Ն. Ադոնցը Իզիրտուն համադրել է Բերդեսորի հետ, մի քաղաք, որին համապատասխանում է Իզիրտուն¹⁰ ասորեստանյան աղբյուրներից ենթադրվող տեղադրությունը, որը գտնվել է Չամուա նահանգի և Պարդիթայի հարևանությամբ¹⁰։ Ն. Ադոնցի այս տեղորոշման հետ մասնագիտական գրականության մեջ համաձայնվել են մի շարք հեղինակներ¹¹։

Ուրարտական ժամանակաշրջանի տեղանունների համադրությունների մեջ արժեքավոր են նրա կողմից արված հետևյալ դիտարկումները։ Կալխուում քարե սալերի վրա հայտնաբերված Թիզլաթապալասար III-ի արձանագրություններից մեկում նշված մի շարք տեղանունների հիման վրա Ն. Ադոնցը սեպագիր աղբյուրների Կիխասան համադրում է Քիլիսի, Իզգեղան՝ Ազդինի հետ, որոնք գտնվել են Էնզիտե (պատմական Անձիտ)՝ այժմյան Թուրքիայի Սիլվանի շրջանում։

Սեպագիր աղբյուրներում հիշատակված Նալ լեռան մոտ գտնվող Սարդարնի նախատիպը Ն. Ադոնցը համարում է Սարդաուրդին։ Նույն Կալխուի արձանագրության մեջ հիշատակվող Բիսիա տեղանունը, որը ուրարտական ամրոց է եղել «Նալ լեռան հետևում», ինչպես նշվում է արձանագրության մեջ, նա նույնացնում է ներկայիս Աղերդի շրջանի Բիշիլի հետ¹²։ Հետագայում մասնագիտական գրականության մեջ Ն. Ադոնցի այս տեղանվանական համադրումներին հիմնովին համապատասխանեցին Էնզիտե երկրի մասին Ֆոտերի կողմից արված Դիուար-Դիլբի և Արբիսա-Ֆիս նույնացումները, որոնք գտնվում են ներկայիս Խանիի բնակատեղիի մերձավորությամբ¹³։


⁹ Меликшвили Г., Некоторые вопросы истории Маничского царства, ВДИ, 1949, № 1, с. 57-72; Арутуниан Н., ТУ, с. 87, նույնի՝ КУКН, էջ 513-514. Մանաչի քազավորության պատմության, նրա տեղանունների, և հատկապես նրա մարտաքաղաքի տեղորոշման վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Գրեղյան Ե., «Մանաչի քազավորություն» քննվածուական ատենախոսությունը, Երևան, 2002, էջ 181-183 և հղումներ 830, 831, 832, 833, 834։

¹⁰ Adontz N., HA, p. 101, 66p. 1.

¹¹ Арутуниан Н., ТУ, с. 87; Գրեղյան Ե., «Մանաչի քազավորություն», էջ 183։

¹² Adontz N., HA, p. 93-94.

¹³ Fother E., Provinzeinteilung des assyrischen Reiches (այսինքն՝ PAR), Leipzig, 1920, S. 85, ինչպես նաև Հարությունյան Ն., Ն. Ադոնցը և ուրարտագիտությունը, էջ 215։



Ն. Ադոնցն իր «Հայաստանի պատմություն» աշխատության մեջ անդրադարձել է նաև ասորեստանյան սեպագիր աղբյուրներում վկայված Աշշուրիկիշա (ասուր. «Աշշուրը նվիրել է») քաղաքին: Այն Ք.ա. VIII դարում Ուլլուբա երկրում կառուցել է Թիզլաթպալասար III-ը, ինչը իր տարածքով համընկնում է այսօրվա խուլա-Կուլսի շրջանին՝ Վանա լճից արևմուտք: Նա իրավամբ Աշշուրիկիշան նույնացրել է «Աշխարհացոյց»-ի Թիշի հետ¹⁴, որը եղել է պատմական Աղծնիքի քաղաքներից, և, միաժամանակ, Քոյմաղը նույնացրել է ասորեստանյան և ուրարտական սեպագիր աղբյուրներում վկայված Կուլլիմների-Կուլմերիի՝ բյուզանդական աղբյուրների Խյոմաղոնի հետ, որը գտնվել է Ախվանից հարավ-արևելք¹⁵:

Փաստական նյութի տրության պատճառով Ուրարտուի տեղանունների շարքում զգալի դժվարություն է հարուցել սեպագիր աղբյուրների խարդա քաղաքի տեղադրումը: Ասորեստանյան թագավոր Սարգոն II-ի ժամանակվա հետախուզական նամակներից հայտնի է, որ ուրարտացիները պահակային ծառայություն են կատարել Խարդայում: Այդ նույն նամակում, այնուհետև, հիշատակված է ինչ-որ իտուացի պալատականների վերադարձը Եփրատից, ինչպես նաև պահակային ծառայություն կատարելը Շուրուբում¹⁶:

Ն. Ադոնցը ուրարտական արձանագրություններում հիշատակված Խարդայի տակ ենթադրել է Խարդ-բերդը (Խարդ-բերդ) և այն նույնացրել այժմյան Խարբերդի կամ Խարպուտի հետ՝ Արածանիի ստորին հոսանքում, էյազըղից մի փոքր էյուսխա-արևելք¹⁷: Հետագայում մասնագիտական գրականության մեջ այս տեսակետը իր աշխատություններում ընդունել է Ն. Հարությունյանը¹⁸:

Մեծ կարևորություն է ներկայացնում Ն. Ադոնցի՝ Վերին Եփրատի հոսանքում, Մելիտեա (այժմյան՝ Մալաթիայի մոտ) երկրի մի շարք քաղաք-ամրոցների՝ նրա կողմից արված համադրությունը անտիկ և իհն հայկական աղբյուրների համապատասխան տվյալների հետ¹⁹:

¹⁴ Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 114:

¹⁵ Adontz N., HA, p. 196, ծնթ. 1; Арутюнян Н., ТУ, с. 118; Fother E., PAR, S. 87; Diakonoff I., Kashkai S., Geographical Names..., p. 68.

¹⁶ Дьяконов И., ВНИИУ, § 50 (34, 35).

¹⁷ Adontz N., HA, p. 120.

¹⁸ Арутюнян Н., ТУ, с. 224, ինչպես նաև նույնի՝ Базанюки (Ураарту) (այսուհետև՝ БУ), Ерван, 1970, с. 53, прим. 174.

¹⁹ Մելիտեա երկրի քաղաք-ամրոցների մասին տե՛ս Меликшадзюки Г., Ураартюке

Այսպես, ըստ նրա՝ Թումեիշկին եփրատի ծախ ափին գտնվող Թումիսան է, հին հայկական Թմնիսը (այժմյան՝ Իզդուլուն), որը լավ վկայված է Շուփքի թագավորության պատմությունից: Իսկ Գաուրախին անտիկ աղբյուրների Կլիմա Գարինեսն է, հայկական Գավրեցը՝ աշխարհագրության Չորրորդ Հայքի գավառներից մեկը Արածանիի գետաբերանի մոտ: Իսկ Կարնիշին, ըստ նրա, հիշեցնում է Պևտինգեոյան քարտեզի Կոսենն²⁰, որը հոմեաական կայան էր Մալաթիայից հարավ-արևելք, եփրատի աջ ափին, Կալուդիայում²¹:

Անդրադասնալով Կանա լճից հարավ ընկած սեպագիր դարաշրջանի աշխարհագրական միավորներին՝ Ն. Ադոնցն ուշադրությունը սևեռել է Տումուրրուի վրա: Ատրեստանյան թագավոր Մինախեդիքի (Ք.ա. 705-681 թթ.) արձանագրությունների տվյալներով դա բնակատեղի է, որը Կիբշուի հետ միասին ընկած է եղել «Նիբուր լեռան վրա» (այժմյան՝ Ջուդի-դադ) ²². Ի դեպ, Կիբշուն մասնագիտական գրականության մեջ սովորաբար նույնացվում է այժմյան Գեֆշի հետ՝ Ջախտից 14 կմ հյուսիս-արևելք՝ Արևելյան Նաբուրի ավազանում²³:

Տեղադրման և տեղանունների հնչյունական համապատասխանության տեսանկյունից, միանգամայն իրավացի է Ն. Ադոնցը, երբ ատրեստանյան սեպագրերի Տումուրրուն նույնացնում է հայ պատմագիրների կողմից վկայված Տմորիցի հետ²⁴, որը միջնադարում զբաղեցրել է Արևելյան Նաբուրի ամբողջ ավազանը՝ Կերին, Միջին և Ներքին Կորդրիք գավառներով²⁵:

Չնայած այն հանգամանքին, որ Ն. Ադոնցի ուրարտագիտության վերաբերյալ մի շարք տեսակետներ այլևս չեն ընդունվում կամ վիճելի են արդի պատմագիտության մեջ, սակայն դա բոլորովին էլ չի նսեմացնում ուրարտագիտության զարգացման մեջ ներդրած նրա հսկայական ավանդը: Թեև անցել է մի քանի տասնամյակ, սակայն այսօր էլ Ն. Ադոնցի քաղմաթիվ տեսակետներ հաստատվել են,

клиннообразные надписи (այսուհետև՝ ԿՄԿ), Москва, 1960, с. 306-307, № 158.

²⁰ Adontz N., HA, p. 199.

²¹ Այս երկրի տեղադրության մասին տե՛ս Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհագրոց»-ի, էջ 89:

²² Дьяконов И., АВВМУ, § 50 (34, 35).

²³ Adontz N., HA, p. 58, 122; Fother E., PAR, p. 37; Дьяконов И., АВВМУ, 10, прим. 74.

²⁴ Adontz N., HA, p. 122; Арутюнян Н., ТУ, с. 190.

²⁵ Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհագրոց»-ի, էջ 86:

շատերը՝ դեռևս անվազն ունեն կանգի իրավունք: Հանգամանք, ինչը
ևս մեկ անգամ վկայում է նրա՝ մեծ գիտնական լինելու մասին:

SONA GRIGORYAN

THE TOPONYMS OF THE ARMENIAN HIGHLAND ACCORDING IN THE
"HISTORY OF ARMENIA" OF N. ADONTZ

In the second half of the 19th century the Armenian nation gave birth to several great personalities, who raised the Armenian studies to higher level. Among those great researchers N. Adontz must be mentioned. In the last period of his life he occupied himself with the research of the history of Biajnli-Urartu. The results of his research were posthumously published in 1946 in a voluminous work under the heading "History of Armenia". In his work he dedicated himself mainly to the research of the military-political events of Biajnli-Urartu (IX – VI centuries B.C.), to its toponyms and to the names of its gods. In reality he never had a goal to occupy himself with the research of the history of Urartu. Actually, we have to do here with a voluminous work of a greater research, in which the part, dedicated to the events of the Urartian epoch, was to make up only one portion of that more comprehensive research which he intended to realize. We should note that this study by N. Adontz is rich in foreign sources. He consulted for it the works by E. Fomer, A. Sayce, F. Thureau-Dangin, S. F. Lehmann-Haupt etc. But the urartological studies of the Soviet period are missing here. It is known that simultaneously G. Kapantsyan was active in Soviet Armenia who first wrote an extensive monograph "The History of Urartu" (Yerevan, 1940). In the juxtaposition of the Urartian toponyms is very significant the identification of the toponyms Erikuahi-Orkov. He has identified the toponym Erikuahi of Urartian cuneiform sources with the name of the village *Workov* of the province *Masiaz Otn* which also the historian *Khazar of Parpi* mentions. In the urartology this point of view was adopted by N. Harutjunyan. In the inscriptions of the king *Menua*, which were discovered in *Van*, the country of *Ususuan* is mentioned which was occupied together with the town *Arpujani*. N. Adontz identifies *Ususuan* with *Sasun* (H. Khorikyan agrees with this theory, whereas H. Keragjozyan identifies it with *Bsang*). Among the Urartian toponyms the identification is important, which he realized with respect to settlement *Izirtu-Berdizor* of the Kingdom *Mana* which lies to the south of the lake *Urmia*. *Izirtu* was mentioned in the period from *Salmanasar III* to *Sargon II*. It was mostly mentioned under the reign of *Sargon II*. With the question of the localization of the town a lot of researchers have occupied themselves. They have identified it with *Qapianu tepe*, *Qalajgi tepe* and located in the neighborhood of *Saqz*, near *Baneh*, to the north of *Bukan*, but N. Adontz has compared *Izirtu* with *Bardesor*, a town which corresponds to *Izirtu* and was situated in the neighborhood of the state *Zamua* and *Paddira*. G. Melikishvili,

N. Harutjunyan, E. Grekyan agreed with this localization by N. Adontz. Therefore, despite the fact that some points of view of Adontz concerning the Urartology are disputable in the modern Urartian studies, his contribution to this branch of history is immense.

ՈՒՐԵՆ ՄԱՆԱԽՐՅԱԼ

ՄԱՍՆՅԱՆՆԵՐԻ ԴԵՄ ՀՈՒՄԵՆԿԱԼ ԿԱՅԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՔՈՒՇԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԵՈՒՐՁ (231-232 թթ.)

Հայաստանի և Քուշանական տերության միջև Արտաշիր Պապականի դեմ դաշինքի կնքելը՝ 231-232 թթ.-ի հռոմեա-իրանական պատերազմին մասնակցելու նպատակով պատկանում է վիճելի փաստերի շարքին: Այդ դաշինքի մասին վկայությունները պահպանվել են համեմատաբար ուշ աղբյուրներում՝ միայն Ագաթանգեղոսի և Մովսես Խորենացու աշխատություններում: Ըստ հայ պատմագիրների Քուշանական թագավորության հետ ռազմական դաշինք է կնքել Հայոց թագավոր Խոսրովը՝ հունա-հռոմեական աղբյուրների Տրդատ II-ը (217-252 թթ.) իր հակառակող Արտաշիր Պապականին արևելքից հարված հասցնելու նպատակով: Հայաստանի և քուշանների դաշնակցելու փաստը չի նշվել հունա-հռոմեական աղբյուրներում (Դիոն Կասիոսի, Հերոդիանոսի երկերում), որոնք հայտնում են Հռոմեական կայսրության՝ Մասանյանների դեմ մղած կռիվների մասին: Ընդ որում, իրադարձությունների նրանց տված շարադրանքին պակասում են հաջորդականությունն ու ամբողջականությունը:

Պատմաբանները չեն համոզվել միասնական տեսակետին Ագաթանգեղոսի և Մովսես Խորենացու հաղորդումների արժանահավատության վերաբերյալ: Այսպես, Ռ. Գրուսեն անվերապահորեն վավերական է համարում հայկական պատմական ավանդույթի հաղորդած փաստը: Ըստ Ռ. Գրուսեի՝ Տրդատի (Խոսրովի) դաշնակիցն էր քուշան արքա Վասուդանս¹: Նժանայես Բ.Յ. Ստալինսկին, Գ.Մ. Բոնգարդ-Լեվինը գտնում են, որ քուշանները մասնակից են դարձել Հայոց թագավորի նախածնունած հակառակության դաշինքի²: Ի տարբերություն նրանց Ա. Քրիստենսենը, Ռ. Ֆրայը, Կ. Գ. Լուկոնինը կամ բնավ չեն նշում հայկական աղբյուրների

¹ Grousset R., Histoire de l'Arménie des origines à 1071, Paris, 1973, p. 114.

² Сталюкис Б., Средние Азия в кушанский период - История таджикского народа, Москва, 1963, т. 1, с. 367; Бонгард-Левин Г., Ильин Г., Индия в древности, Москва, 1985, с. 408.

այդ վկայությունը, կամ էլ մեծում դրա հավաստիությունը²: Այսպիսով, Աբաթանգեղոսի և Մովսես Խորենացու հաղորդած տվյալների հանդեպ գիտության մեջ արտահայտված թերահավատությունը պահպանում է դրանք հիմնավորել լրացուցիչ փաստացի նյութով: Այս խնդրում հետաքրքրություն է ներկայացնում Հերոդիանոսի կողմից 231-232 թթ.-ի հոմեա-իրանական պատերազմի գրած պատմությունը, որը սակայն քվանդակում է մութ և պարզաբանմանը դեռ կարող դրվագներ:

Պատերազմն սկսվեց հոմեական զորքերի ծավալուն հարձակմամբ երեք ուղղությամբ: Առաջին հոմեական բանակը դաշնակից Հայաստանի վրայով ներխուժեց Մարաստան: Նրան իր զորքով միացավ Հայոց արքան: Երկրորդ հոմեական բանակը Եփրատի երկայնքով շարժվեց դեպի Պարսից ծոց, այսինքն նպատակ ուներ գրավելու Տիգրոնը: Եվ երրորդ բանակը կայսր Ալեքսանդր Սևերոսի գլխավորությամբ շարժվեց «միջին ուղիով»: Հերոդիանոսը չի ճշգրտում, թե աշխարհագրական ո՞ր վայրում էր գտնվում Ալեքսանդր Սևերոսն իր բանակով, այսինքն՝ որտե՞ղ էր անցնում այդ «միջին ուղին»: Սակայն Հայաստանում, Մարաստանում և Հարավային Միջագետքում հոմեական մյուս բանակների գործողությունների պայմաններում ակնհայտ է, որ կայսերական զորագնդերը գործողություններ էին ծավալել Ասորեստանում (Հյուսիսային Միջագետքում):

Պատերազմը հոմեացիների համար ավարտվեց ծանր անհաջողությամբ: Դեպի Միջագետքի հարավը խորացած հոմեական զորքերը ջախջախվեցին պարսից հեծելազորի կողմից: Ալեքսանդր Սևերոսը, գործելով Կենտրոնական Միջագետքում, չիացրեց գալ նրանց օգնության և շուտով՝ քանակում սկսված համաճարակի հետևանքով նահանջեց Սիրիա: Հաջողաբար էր սկզբում ընթանում Մարաստանում գործող հոմեական բանակի և նրա դաշնակից հայկական զորքերի գործողությունը Հերոդիանոսի հաղորդմամբ, սասանյան զորքերի հակառակորդները օգտագործում էին անհարթ և խորդուբորդ տարածքը, քայքայեցր նահանջից հետո ստիպված էին ետ քաշվել Հայաստան:

² Christensen A., L'Iran sous les Sassanides, Copenhagen, 1944, pp. 88-89; Frye R., The History of Ancient Iran, München, 1984, pp. 293-294; Лухонин В., Древний и раннесредневековый Иран, Москва, 1987, с. 214.

Հերոդիանոսի աշխատության ուսումնասիրողները համամիտ են, որ նա ցուցաբերում է նյութի բյուր իմացություն, աղոտ պատկերացումներ ունի իր նկարագրած իրադարձությունների աշխարհագրության մասին: Ինչպես նշում է Ա. Դովատուրը «Հերոդիանոսի աշխարհագրական գիտելիքները այժի չեն ընկնում ընդարձակությամբ և ճշգրտությամբ»⁴: Ա. Դովատուրի դիտարկումներով Հերոդիանոսի հաղոդումներում հոմոնեական կայսրերի (Կարակալայի, Մակրինոսի) արշավանցների մասին բացակայում են «որևէ աշխարհագրական ցուցումներ»: Պատմիչը, օրինակ շփոթում է Երջանիկ և Սկենիտական Արաքիաները: Պարսից ծոցը Հերոդիանոսի պատկերացմամբ գտնվում է «քարքարոսական երկրի արևելքում» (VI, 5, 2)⁵:

Հերոդիանոսի կողմից 231-232 թթ.-ի Արևելքում պատերազմական գործողությունների ներկայացրած նկարագրության մեջ անկարելի է անուշադրության մատնել նրա վկայությունը մի իրադարձության մասին, որը տեղի է ունենում Մարաստանում ծավալվող կռիվների թեժ պահին:

Հերոդիանոսը պատմում է. «...եկան պարսիկի մոտ ինչ-որ գուժականներ և հաղորդեցին, որ պարթևների արևելյան երկրամասերում երևան եկավ հոմոնեացիների մեկ այլ բանակ և հարձակվում է նա հարթավայրերով: Այդ իսկ պատճառով, զգուշանալով, որ նրանք արագ ավերելով պարթևների երկիրը կներխուժեն Պարսք, նա (Արտաշիտ Պապականը – Ռ.Մ.) թողնելով իր ուժերի մի մասը, որը նրա կարծիքով բավարար պիտի լիներ Մարաստանի պաշտպանության համար, ինքն իր զորքով շտապեց դեպի Արևելք» (V, 5-6):

Հերոդիանոսի այդ հաղոդումը դեռ չի քննվել Սասանյան Իրանի և քուշանների պատմության մասնագետների կողմից: Ա. Քրիստենսենը, Ռ. Ֆրայը, Կ.Գ. Լուկոնինը չեն անդրադառնում այստեղ առկա տվյալներին, թեև այդ տվյալները անխուսափելի հարցեր են առաջացնում: Հերոդիանոսը պնդում է աներևակաելի, ֆանտաստիկ մի իրադրություն. հոմոնեական բանակի հարձակումը Սասանյանների խոր արևելյան թիկունքի վրա: Ուշագրավ է, որ այդ հարձակմանը

⁴ Доватур А., Историк Геродот – Геродот. История императорской власти после Марка, Вестник древней истории, 1972, № 1, с. 241; Հերոդիանոսի աշխարհագրական անճշտությունների ցանկը ընդած է նաև՝ Herodan. History. transl. by C.K. Whitteer, Cambridge (Mass.), v. 1, 1969, Introduction, p. XLIV. Dopp, Herodan (3) RE Bd VIII, Stuttgart, 1913, col. 967.

⁵ Доватур А., Историк Геродот..., с. 241.

ենթարկվում են Պարթևքի արևելյան երկրամասերը՝ այսինքն Սասանյանների հակառակորդն իր հարձակումը ձեռնարկում է արևելքից՝ Պարթևստանին (Պարթևքին) հարակից Բակտրիայից՝ Քուշանական տերության հենց կենտրոն եղած երկրից: Իր հերթին Արտաշիլը շտապ շրջում է դեպի արևելք իր հակառակորդին ընդառաջ, արդեն նույնիսկ քուն Պարսքին վտանգը կանխելու մտադրությամբ: Անշուշտ սխալ կլիներ մտքով այդ հաղորդման իսկությունը՝ լուր այն պատճառով, թե այստեղ իբրև հարձակվողներ հիշատակվում են հոմեացիները, որոնք իսկապես ոչ մի կերպ չէին կարող հայտնվել Բակտրիայի տարածքում: Հերոդիանոսի այդ հաղորդման մեջ, ի տարբերություն իր երկի մի շարք այլ դրվագների, վերարտադրված է արևելյան օագմաթենը կազմող երկրների աշխարհագրական ճիշտ դասավորումը. Մարաստան, Պարթևք, Պարսք: Հերոդիանոսի տեքստում այդ ճշացող անհեթեթությունը՝ հոմեական բանակի գրոհը Բակտրիայի տարածքից, անշուշտ, պիտի վերագրվի նրա կողմից աշխարհագրության՝ կոնկրետ Արևելքի էթնոգաղաքական իրողության թույլ իմացությանը, որն և պիտի պայմանավորեր իր կողմից աղբյուրի թերի ըմբռնումը և քուշանների փոխարեն կամայաբար հոմեացիների գետնելը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հունա-հոմեական պատմագրությանը հայտնի չէր «քուշան» էթնոնիմը, այն հայտնվում է հայկական պատմագրության մեջ (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ) Սասանյանների վիճազրություններում, ավելի վաղ՝ չինական աղբյուրներում⁶: Քուշանական տարածքի՝ ժամանակակից հյուսիսային Աֆղանստանի քնակիչներին հոմեացիները ճանաչում էին սովորաբար «ինդկասկյութերի» անվան տակ⁷: Ուստի, շատ հավանական է, որ Հերոդիանոսի մեզ անհայտ աղբյուրը հիշատակում էր «քուշան» անունը, որն անծանոթ էր պատմիչին: Տեղափոխելով հոմեական բանակը հեռու Արևելք, Պարթևքից այն կողմ, Քուշանական քաղաքավորության սահմանների ներսը, Հերոդիանոսը վարվում էր ճիշտ ըստ Արևելքի մասին իր ունեցած աղուտ պատկերացումների, որոնց համաձայն Պարսից ծոցը գտնվում էր Արևելքում: Որպես դրա արդյունք

⁶ Смазучков Б., Срестьян Азии..., с. 355.

⁷ Grousset R., L'Empire des Steppes, Paris, 1948, p. 89. Շատ հավանական է, որ Ամմիանոս Մարկելիոսը, ինչպես այդ ենթադրվում է (Лыкокин В., Древность..., с. 228), «Քուշան» անունը հաղորդում է աղավաղված ձևով՝ «եսուր» (Am. Marc. XVI, 5, 4). Դա հոմեական պատմագրության մեջ քուշանների միակ հիշատակումն է:

իրար են միացվում իրար չհարող պատերազմական դրվագներ: Դեպի Արևելք է ուղևորվում Արտաշիր Պապականը Պարթևքը պաշտպանելու մտադրությամբ: Դեպի Արևելք՝ Պարսից ծոցի ուղղությամբ է շարժվում նաև հոմեաական առաջապահ զորքը: Մարաստանից Պարթևք Արտաշիրի հեռանալուց հետո Հերոդիանոսի երկում տրված է հոմեացիների համար կործանաբար մի ճակատամարտի նկարագրություն, քայք այդ ճակատամարտը իրականում տեղի էր ունեցել Հարավային Միջագետքում, քացառված չէ, որ Տիգրոնի մոտակայքում, որին Հերոդիանոսը սակայն չի հիշատակում: Թերևս ուշագրավ է, որ այդ ճակատամարտը նկարագրելիս Հերոդիանոսը չի հիշատակում Արտաշիր Պապականի մասնակցությունը: Այնուհետև արդեն պատմելով հոմեական զորքերի Միրիա վերադարձի մասին, Հերոդիանոսը հիշատակում է ճակատամարտը Պարթևքում, որտեղ ի տարբերություն իր երկի նախորդ գլխում նկարագրած ճակատամարտի, պարսիկները ունեցան շատ սպանվածներ և վիրավորներ (VI, 5):

231-232 թթ. Արտաշիր Պապականը մարտնչելով երեք ճակատով, կարողացավ ետ մղել իր հակառակորդների՝ արևմուտքում հոմեացիների և հայերի և արևելքում քուշանների գրոհները:

Այսպիսով, Հերոդիանոսի պահպանած տվյալները 231-232 թթ.-ի մեծ պատերազմի մասին ոչ միայն հաստատում են հայկական պատմական ավանդույթի վավերականությունը՝ Հայոց և քուշան արքաների միջև հակասասանյան դաշինքի կնքման մասին, այլև քուշաններն տալիս հաստատապես պնդելու, որ այդ դաշինքի համաձայն Քուշանական տերությունը մասնակից էր Արտաշիր Պապականի դեմ պատերազմին:

RUBEN MANASSERYAN

ON KUSHANS' PARTICIPATION AT WAR OF ROMAN EMPIRE AND ARMENIA AGAINST THE SASANIANS (231-232)

Herodian (V, 5-7), informing of the "Roman army" which attacked the eastern regions of Parthia (... *φαίνοιο Ρωμαίων στρατός έπρεος έν τοίς έμφοίς μέτροι Παρθυσίων...*) i.e. advanced from Bactria, in reality mentions Kushans's expedition against Artashir Papakan.

ԱՆԵՔԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ

«ԳԱՀՆԱՄԱԿ ԱԶԱՏԱԾ ԵՒ ՏԱՆՈՒՏԻՐԱՆՑ ՀԱՅՈՑ». ՀԵՏԱԶՕՏՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԲՆԱԳԻՐ

«Գահնամակ» եւ «Չորանամակ» անուններով մեզ են հասել Հայոց վաղ միջնադարի երկու փաստաթղթերի եզակի գոյազրական պատճէններ: Դրանցից առաջինը պահպանուել է անլայտ մագաղաթեայ ժողովածոյ-մեծագրից հանուած եւ պահպանակի վերածուած թերթի վրայ (անցման երկարագրով, երկու էջերի երկուական սիւնակների 25-ական տողերում ամբողջութեամբ): Այն 1850 թ. թիֆլիսցի Համբարձում եւ Անտիք ենֆիաճեանցների գրավաճառանոցում յայտնաբերել է ժամանակի յայտնի մշակութային ու պետական գործիչ, բժիշկ Գէորգ Ավսիբոյեանը (Եռ. Ա. Ախվերդով), որը, ճիշտ գնահատելով գտածոն ու նախնաբար վերծանելով նրա բնագիրը, 1851 թ. ուղարկել է այն Մոսկուա (նախ իր արտագրութիւնը, ապա մի քանի ամիս անց՝ նաեւ մագաղաթեայ թերթը) իր բարեկամ, Լազարեան հաստատութեան ուսուցչապետ Մկրտիչ Էմինին¹: Վերջինս էլ 1858 թ. իրագործել է «Գահնամակ»-ի առաջին իրատարակութիւնը Մովսէս Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի իր բարգմանութեան երրորդ յաւելածում՝ կից սիւնակում տալով նաեւ ռուսերէնը եւ կոչելով այն «Վեամական»²: Հետագայում Մ. Էմինը

¹ 1851 թ. Փետրուարի 13-ին Մ. Էմինին գրած նամակում Գ. Ավսիբոյեանն իր գիւղի ծախն ծանուցրաւ իւր յաւելում էր. «Когда я принимал вместе с Петром Шенкелевым от Эфемианджянца рукописи, купленные нами для приношения библиотеке института, Амбарцум мне указал на несколько листов пергамента, которые были замочены перелетчиком в перелет... какого-то дшзг-а; я вынул их, оставил их у себя, и на другой же день приступил к разбору этих листов, которые показались мне старые, потому что буквы все заглазные (երկարագիր), большие и довольно красивые, но буквы в некоторых местах сильно поминны, а в других покрыты были жиром и копотью... оказалось, что это остатки каких-то речей или толкований о извести дикк мироздания; они имеют свое достоинство: мысли довольно ясны, но, главное, слог изящен и красив... Зато в одном листе я нашел вознаграждение за труды мои; точную копию с этого листа присылаю к тебе... ты увидишь, что это почерк, переходный от еրկարագիր-а к բրդրագիր-ու...» (Ավսիբոյեան Գ., Լաճակներ, «Գրական ժամագրութիւն», գ. 3, Երեւան, 1964, էջ 212-213): Տես նաեւ Յ. Յունիսի, 1851 թուականի նամակը՝ էջ 224-225, եւ ծանոթագրութիւնները՝ էջ 364-366:

² История Армении Моисея Хоренского, Перевел с армянского и объ. конца Н. Эмин,

պահպանակն ուղարկել է Վենետիկ՝ Դեռնոյ Ալիշանին, որը 1890 թ. «Այրարատ» աշխատության մեջ վերահրատարակել է «Գահնամակ»-ը՝ կոչելով այն «Սահակեան» կամ «Վեամական» եւ կից զետեղելով ցայսօր Մխիթարեան միաբանության Ս. Դազարի վանքի մատենադարանում պահպանող մագաղաբայ թերթի զոյգ էջերի լուսանկարները¹: Բնագրի սկզբում ասկայ Սահակ Պարթեւի նամակ-առաջաբանի տուսերէն բարգմանութիւնն Ի դարի սկզբին իրենց հիմնարար մեծագրութիւններում ներկայացրել են նաեւ Գրիգոր Խալաբեանը² եւ Նիկողայոս Աղոնցը³, իսկ աշխարհարար թարգմանութիւնն աւելի ուշ կատարել է Ստեփան Մալխասեանը⁴:

Երկրորդ փաստաթուղթը՝ «Ջօրանամակ»-ը, յայտնաբերուել է (եւ 1842 թ. արտատպուել) Յովհ. Շահխաթունեանցի կողմից՝ Ս. Էջմիածնի կաթողիկոսարանի մատենադարանի մի ձեռագրում, գրչուհի Տիրամայրի ընդօրինակութեամբ՝ կցուած Անանիա Շիրակացու անունը կրող ժամանակագրութեանը⁵: Հետագայում նրա արտատպութիւնը վերահրատարակեց Ղ. Ալիշանը⁶, իսկ բնագրի ընթերցումը՝ Ն. Աղոնցը⁷: Այս-

Москва, 1888, с. 358-360 (վերահիշատ.՝ История Армении Мовсая Хоренского, Новый перевод Н. Эмина, Москва, 1893, с. 295-297):

¹ Ալիշան Հ. Ղ., Արարատ, Բնագրարի Հայտնութեաց, Վենետիկ - Ս. Դազար, 1890, էջ 430-431 (լուսանկարը՝ ներդրով, այդ էջերի միջեւ):

² Sbu Xalateni G., Армянские Араакшы в "Истории Армении" Мовсая Хоренского, Опыт критики источников, к. I, Москва, 1903, с. 297.

³ Адонц Н., Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе хазарского отпора, Санкт-Петербург, 1908, с. 249-250 (վերահիշատ.՝ Ереван, 1971, աշխարհարար թարգմ.՝ Երեւան, 1987, անգլերէնը՝ Adontz N., Armenia in the Period of Justinian..., Translated with partial revisions, a bibliographical note and appendices by N. Garsoian, Lisbon, 1970, pp. 191-195; Appendix III, pp. 67-69):

⁴ Մովսէս Խղեմեացի, Հայոց պատմութիւն, Յարգմանութիւն, ներածութիւն եւ ծանօթագրութիւններ Ստ. Մալխասեանի, Երեւան, 1940, ծրթ. 338, էջ 338-339 (էջ 338-338-ում՝ նաեւ բնագիրը), տես նաեւ. Հայ ժողովրդի պատմութեան քրեատմանիս, հ. 1, Երեւան, 1981, էջ 613-615 (իստուածի կազմող՝ Ա. Գ. Արահամեան):

⁵ Ատղապարտիւն Կարսիկէլ էջմիածնի եւ ինչ գաւառացն Արարատաց, Աշխատախրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց Շաղիխարդ, հ. Բ, Վաղարշապատ - Ս. Էջմիածին, 1842, ներդիր՝ էջ 68-ից յտող: Յիշատակագրութիւնը ըզրրակ (ովայածեւ) աղխական իր մեջ արտիակող ուղղանկիւն գաղղաշրքանակի այդ կողղաշրքանակի ներքեւի մատում է. «Յիշեալ՝ Արիստոխոս ողղորմութեան)ք ջո զՏիրամայնն և թող գանցանն նորա»:

⁶ Ալիշան Հ. Ղ., Արարատ, ներդիր՝ էջ 424-425-ի միջեւ, նոյն էջերում նաեւ բնագրի ընթերցումը:

⁷ Адонц Н., Армения в эпоху Юстиниана..., с. 251-252:

օր Մաշտոցի ան. Մատենադարանում պահում է փաստաթղթի «մի թե-
րի օրինակ» (Չեռ. թի. 1379, ք. 1ք. Երզնկա, 1334 ք., գրիչ Թորոս)¹:

Երկու փաստաթղթերի հրատարակիչների եւ թարգմանիչների, ինչ-
պէս նաեւ Գր. Խալաբեանցի, Սիրեկան Տիգրանեանի, Յակոբ Մանան-
դեանի քննական անդրադարձերից յետոյ² քնազերի առաւել մանրա-
մասն վերլուծութիւնը ներկայացրեց Կիրիլ Թումանովը³, որը նորովի
համեմատեց դրանց մատուցած նիւթը առատական դարաշրջանի Եւ-
րոպայի իրողութիւնների հետ, սակայն, նաեւ կրկնեց Ն. Աղոնցի մի
խնդրառու ենթադրութիւնը մեզ հասած «Գահնամակ»-ի իբրեւ ոչ պաշ-
տօնական գրուածք է դ. կտերից յետոյ ստեղծուած լինելու մասին⁴,
ինչպէս նաեւ ոչ լրիւ արդարացուած մի փորձ կատարեց վերանայելու
«Ջօրանամակ»-ի կառուցուածքը: Փաստաթղթերի վերջին համաձա-
նայից քննութիւններն իրականացրել են Գագիկ Սարգսեանը, Բագ-
րատ Ուլուքաբեանը, Լեւոն Շահինեանը, Բարկէն Յարութիւնեանը, Ա-
նահիտ Փերիխանեանը եւ Կարէն Իւզրաշեանը⁵:

¹ Տես Գահինեան Լ., Ջօրանամակ, ՎՃԿ, հ. Գ, Երեւան, 1977, էջ 704 (մեկ շնչ տեսել
պէր թերթը), Ասոյ քուգակ հայերէն մեռագրաց. հ. 7, Երեւան, 2005, էջ 1107-1108:

² Տես Մանուկ Գ., Армянские Археологические... 4, 1, с. 292-297; Տիգրանեան Ա., Հայոց
լիւարեցի պատմութեան նըրածութիւն, Երեւան, 1923, էջ 187-202; Մանանդեան Յ.,
Ճեղագիտը ինչ Հայաստանում, Երեւան, 1934, էջ 14-15; նոյնի Երկեր, հ. Բ, Երեւան,
1978, էջ 326-330: Իրմիտաժի Ասանեան չրքանի ուկէ սկրտերի գարդապատկերների
եւ Սոկրի քուրդ բերիկ կենցաղի համադրութեամբ նախադարձական քարձերի ու գահերի
վերաբերեալ ուշագրաւ դիտարկումներ է կատարել Յովսէփ Օրբէլի (Օրբեալ Կ.,
Фольклор у нас Москва, Москва, 1981, с. 33-34): Անիքն օգտագործում եմ
երանտագիտութիւնս յայտնելու ուսուցիչս Գարոյ Մուրաշեանին, որի օգնութեամբ եմ
ուշալիդ գտնուել պս եւ այլ կարեւոր հարցերում:

³ Toumanoff C., Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, pp. 229-253.
Եւրոպ միտանկիւնների մասին հմտ. Ասրգսեան Գ., Լիկոյայս Աղոնցի
գրվելգործը, - Աղոնց Ն., Հայաստանը Յուսեփիանոսի դարաշրջանում..., Երեւան,
1987, էջ 556, մեք. 7 (վերսիրատ. Գ. Ասրգսեան, Գահնամակի նախադարձական
նետազոտութիւններ, Կազմեց եւ խմբագրեց Գ. Մուրաշեանը, Երեւան, 2006, էջ 183):

⁴ Հմտ. Ազոնի Կ., Армения в эпоху Иосифа..., с. 296.

⁵ Ասրգսեան Գ., Ճլլինիտական դարաշրջանի Հայաստանը եւ Մովսէս Խորենացին,
Երեւան, 1966, էջ 158-161; Ուլուքաբեան Բ., Հիւսիս-արեւելեան Հայաստանի
նախաճարգապատմական չրքանի վարդա-քաղաքական վիճակի հարցի չուրդը, ԹԵԿ, 1975,
№ 2, էջ 159-163; նոյնի Դրուագներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան (V-VI դդ.),
Երեւան, 1981, էջ 124-127; Շահինեան Լ., Գահնամակ, ՎՃԿ, հ. Բ, Երեւան, 1976, էջ 662-
664; Յարութիւնեան Բ., «Գահնամակի» քուագրման հարցի չուրդը, ԳԹԿ, 1976, № 2, էջ
57-74; Персиджан А., Общественное и право Ирана в персидском и сасанидском периодах,
Москва, 1983, с. 67-72, 312-314; Իւզրաշեան Կ., Ասորացի ճակատամարտից ղեպի
Լուարսակի պայմանադրութիւնը, Երեւան, 1989, էջ 23-30 (վերսիրատ. Անիլիպա, 2005):

Մեզ հասած «Գահնամակ»-ը վաղ միջնադարի Հայոց արքունիքի համակարգում նախադարական տոհմերի զբաղեցրած եօթ տասնեակ պատուաստիճան-գահերի ցուցակն է՝ ներկայացրած Ս. Սահակ Պարթև կաթողիկոսի (388-439) նամակում, ուր նշուած է նաեւ, որ այն հաստատուել է Սասանեան արքայից արքայի կողմից: Նամակում ուղղակիօրէն տրուած է վաւերագրի անուանումը՝ «Գահնամակ», որն ակնյայտօրէն իրանական ժազման է¹ (բնագրում «Ներսեհ՝ իրամանաւ արքայից արքայի եւ ես՝ Սահակ Հայոց կաթողիկոս, կնքեցաք զԳահնամակին», իմա՝ «այս Գահնամակի-ն»²): Այդ անուանումը յիշատակուած է նաեւ հայ մատենագիրների երկերում, սակայն ոչ ամենավաղ շրջանի: Մովսէս Խորենացին նման պաշտօնական վաւերագրերի (աօանց անունը տալու) սկզբնաւորումը կապում է այն «բարեկարգութիւնների» հետ, որ Հայաստանում կատարեց Արշակունեաց արքայատոհմի հիմնադիր Վաղարշակ թագաւորը (ըստ Պատմախօրը հասած ամառութեան Բ դար Ն. Զ.)³: Ինչպէս նա, այնպէս էլ վաղ շրջանի միւս մատենագիրները (Նոյիշէ, Փաստոս Բուզանդ, Ղազար Փարպեցի, Պետրոս Սիւնեցի, Սեբիոս), աօանց յիշատակելու «Գահնամակ» վաւերագիրը, քաւականին ընդարձակ տեղեկութիւններ են հաղորդում Արշակունեաց թագաւորութեան եւ մարզպանութեան շրջանի Հայոց նախարարների կայուն ժաօանգական գահերի ու տեղակարգութեան հաստատութեան

¹ Տես Անաեւեան Հ., Հայերէն արմատական բաւարան, Խ Ա, Նրեան, 1971, էջ 504 («ԳԱՄԱՄԱՄԱՎՅՈՒՄՆԵՐԻ ԱՅԱՏՈՒՄ ԱՍՏԻՃԱՆԻ ԾՈՒՅԱԼ»... = Չու. աղ. "գնիճմակ, իր պու. "գնիճմա «գահական թույլ, զից կամ ցուցակ», որ կազմուած է ցնի «գահ, պատույ աստիճան» եւ ռճմակ «գրութիւն, գրուածք» բաւերից. - Հերշ. 126»):

² Ի դեւ, եզրույթի այս ճեղ մը՝ Գահ-Նեմակի (ի տարբերութիւն «հայերէն» ճեղի, որն ընկալուած է՝ որպէս Գահ-Նամակ), թեոնա, կարող է դիտարկուել իրանական իզաֆետային կատարողածքի նշան (թէկուզ եւ այդ դէպքում անելի տոյրուական պիտի լինէր բաղադրիչների հակաօակ շարադասութիւնը):

³ Մովսէսի Խորենացու Պատմութիւն Հայոց, Աշխատութեանք Ս. Արեղեան եւ Ա. Յարութեանեան, Յիլիս, 1913 (այտուհետեւ՝ ՊՂ, գ. Բ է-ց, էջ 109-117: Հննտ., օր.՝ էջ 109. «Քանզի բազում ինչ աստ՝ կարգաց եւ յարիճուածոց տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, եւ համայն անել՝ արիւն թագաւորութեան եւ որ ինչ շուրջ զթագաւորութեանք՝ զարաց, զարապետաց կողմանց, կողմնակալաց, եւ որ նման պարզից», էջ 117. «Եւ արիւն ինչ հաստատել [Վաղարշակ] ի տան թագաւորութեան իւրոյ... եւ՝ կարգս զհնուրութեանց, եւ լոցունց աօաջինս եւ երկրորդս եւ երրորդս եւ որ ի կարգին»: Այստեղ եւ ստորեւ բնագրերում որոշ կէտադրման փոփոխութիւններ կամ ընդգծումներ ենք կատարել՝ աօանց յատուկ ծաեթագրելու):

վերաբերեալ¹, որոնց «գոյութեան փաստը հայերի մէջ կասկածի ենթակայ չէ»²:

«Գահնամակ»-ը յանուանէ յիշատակում է Ուխտանէս Յախկոպոսը ժ դ. վերջերին (982 թ.³), ընդ որում՝ նրանից կարճ մէջերում անելով, եւ դրանից նկատուած է, որ պատմիչի ծեցքի տակ եղել է հէնց մեզ հասած քնագրի մի տարբերակը⁴: Ըստ հեղինակի ներկայացման՝ Վաղարշակ Արշակունի թագաւորը խնդրել է աւագ եղբօրը, Պարթեւ արքային օգնելու իր պատգամաբեր Մարիթայ Կատինեային, որին յանձնարարել էր «որոնել զդիւանն արցունի եւ տալ զԳահնամակն նախարարացն Հայոց... իսկ նա գտեալ զԳահնամակն՝ բերեալ [աս] Վաղարշակ արքայն Հայոց: Իսկ նա առեալ զօրինակն նախարարութիւնս կարգէ իւրաքանչիւր ումեց բարձ եւ պատիւ տալով նախարարացն՝ ըստ իւրաքանչիւր բարձի տալով իշխանութիւն միոյ միոյ ըստ արժանեաց՝ որում վայելէր...» (չարունակութեան մէջ ասում է. «եւ զայլս մի ըստ միոցէ կարգէ եւ կոչէ անուանս. առաջին՝ Սիւնեաց տէր, երկրորդն՝ ասպետ Բագրատունի, երրորդն՝ Արծրունի, չորրորդն՝ Մաղխազունի, հինգերորդն՝ Մամիկոնեան, եւ զայլ եւս...»)⁵: Ինչպէս նկատուած ենք, ժ դարի հեղինակը զուտ զրական շեղում է կատարում իրեն աղբիւր ծասայած ևւորեանցու վկայութիւններից, որոնց համաձայն՝ Վաղարշակ Արշակունի թագաւորը Հայոց նախարարութիւնների գահակարգութիւնը սահմանել էր առանց աւելի հին փաստաթղթի ու կարգի⁶:

Նոյն դարում (ըստ հեղինակի յիշատակագրութեան՝ 967 թ.) Մեսրոպ երէց Վայոցձորեցին իր «ժաղկաքաղ արարած» «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց հայրապետի» երկի Ծ գլխում բերում է թագաւորական եւ նախարարական 167 տոհմերի անուններ պարունակող մի ցուցակ, որը ներկայացնում է իրրեւ «Գահը [կամ] Բարձը չորեքհարիւր/

¹ Ղրանց անիւռի քննութիւնը տես Ասոնց Կ., *Армения в эпоху Истанбула...*, с. 272-277.

² Նոյն տեղում, էջ 272: Շարունակութիւնը՝ «Оно [местничество] было принято как при дворе армянских Арцаклов, так и персидских царей. Об этом свидетельствуют отдельные исторические».

³ Տես Աւինեան Հ., Բանասիրական հատակութիւնը. 3. Ե՛րբ զրած է Ուխտանէս իր Պատմութիւնը. «Աւետիգ», Պէտրոպ, 1944, № 5-8, էջ 57: Ուխտանէս Յախկոպոս, Հայոց պատմութիւն, Թարգմանութիւնը, աստգարան եւ ծանօթագրութիւնները Վ. Աւարեանի, Երեւան, 2006, էջ 16-17:

⁴ Ուխտանէս Յախկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, գլ. ԱյԷ, էջ 40:

⁵ Նոյն տեղում:

⁶ Հնժո. նաեւ Ն. Աղոնի ուշադրաւ զիտարկումները (*Армения в эпоху Истанбула...*, с. 253-254):

իշխանացն Հայոց» (նախադրութիւնն է. «Եւ իբրեւ ծեօնադրեցաւ մեծն Ներսէս ի Կեսարիա եւ եկեալ ի Հայս՝ նորոգել զգահս իշխանացն Հայոց զոր էր կարգեալ ի *Լուսորույնայ* եւ յայլ թագաւորացն: Չնոյն եւ նա կարգել ի ժամ ճաշոյն ի սեղան արքային Արշակայ՝ *բարձս* չորեքհարիւր, որ են այսօրիկ...»): Սակայն այս քննազրուում որոշակի են ուշ գրական ծագում յուշող իրողութիւնները¹, ուստի՝ այն կոչում են ոչ միայն «Ներսէսեան», այլեւ յաճախ՝ «Կեղծ գահնամակ» (թելէտ նաեւ կարծւորում է, որ հնդինական, ըստ ամենայնի, օգտագործել է մեզ հասած «Գահնամակ»-ը եւս):

Եւ վերջապէս՝ ժԳ դարի վերջին Ստեփաննոս Օրբելեանը, յիշով Դեմոնդին (որի տակ Լ. Արոնցը ենթադրում է Օ դ. յայտնի պատմագրին, թէեւ նրա «Պատմաքանութեան» մէջ նման հաղորդում չկայ²), գրում է Տրդատ Մեծի արցունիքում գործածուած «Գահնամակ»-ի մասին, ընդ որում զգացում է հեղինակի ծանօթ լինելը եւ մեզ հասած «Գահնամակ»-ին, եւ «Ջօրանամակ»-ին, եւ «Ներսէսեան» գահնամակին (բնագիրն է. «Իրամայէ մեծին Տրդատայ կարգել զթագաւորութիւն իւր ըստ սահմանի կայսերացն Յունաց եւ տալ ըստ իւրաքանչիւր պատշաճի զահ եւ պատիւ իշխանացն յաջմէ եւ յահեկէ: Որ եւ գեղեցկապէս յօրինեալ՝ ի ժամ ճաշոց նստել բարձս չորեքհարիւր իշխանաց, որոց զահագլուխք՝ րոնեաշխն Գուգարաց, իշխանն Աղծնեաց, իշխանն Անգեղտանն, իշխանն Կորդուաց, ասպետն Բագրատունի, իշխանն Արծրունեաց, իշխանն Սիւնեաց եւ իշխանն Մամիկոնէից սոքա էին զահագլուխք ամենայն իշխանացն Հայոց: Իսկ զօրացն եւ աշխարհին վերայ չորս միայն կացուցանէ իւրոյ թագաւորութեանն երկրորդ հրամանատարս ի վերայ ամենայնին. արեւելեան կողմանն՝ զիշխանն Սիւնեաց քսան եւ մի իշխանօք, հիւսիսային կողմանն՝ զրոնեաշխն Գուգարաց քսան եւ երկու իշխանօք, արեւմտեան կողմանն՝ զԿորդուացին քսան եւ մի իշխանօք, հարաւային կողմանն՝ զիշխանն Անգեղտանն քսան եւ երկու իշխանօք: Ձայս այսպէս զտաք ի *Գահնամակի* իշխանացն Հայոց, զոր *Դեմոնդ* գրեաց, եւ սակաւ մի ցուցանէ *Ազարանգեղոսին* եւ *Ներսիսին*»³: Տեղին նշենք, որ չբացատրով «Գահնամակ»-ի ա-

¹ Տե՛ս Ասիկեց Հայկալեանը, Չ, Կենտրիկ - Ա. Դազար, 1853, էջ 32-38; Աիշան Հ. Գ., Արարատ, էջ 432-433; Ազուն, H., *Армения в эпоху Юстиниана...*, с. 257-259.

² Սանրանան տե՛ս H. Ազուն, *Армения в эпоху Юстиниана...*, с. 259.

³ Լոյն տեղում, էջ 254-255:

⁴ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Ի՛ լոյս ընծայեց Ա. Իմին, Մոսկվա, 1861, գ. 2, էջ 15-16; Պատմութիւն նահանգն Սիսական, Արարեալ

օրօմ յուսած աղբիւրի վերաբերեալ Ն. Աղոնցի ենթադրութիւնը՝ կարելի է, իրրեւ այլ վարկած՝ Միւնեաց պատմիչի յղումը վերագրել նաեւ ոչ պակաս յայտնի Ե դ. 4արդանանց նահատակ Ղեւոնդ երեցին, որը Մաշտոցի ու Մահակ Պարթեւի առաջին սաներից էր եւ Կորին վարդապետի աշակերտակիցը¹։ Ստ. Օրբէլեանն այլուր առիթ չի ունեցել՝ յիշատակելու Ո դ. պատմիչին, իսկ Ղեւոնդ երեցին յիշում է եւս մէկ անգամ²։

Ինչպէս նշեցինք, մեզ հասած՝ հայ ազնուականութեան պատուաստիճան-գահերի ցուցակ-«Գահնամակ»-ը ներկայացուած է Հայոց Սահակ կաթողիկոսի նամակում, իսկ առանձին, փաստաթղթային ծեւաւորմամբ ցուցակի տարբերակ մեզ չի հասել։ Սակայն չբացատրով նման տարբերակի (անգամ տարբերակների) գոյութիւն ունեցած ու զործառուած լինելը՝ հարկ է նշել, որ, ըստ ամենայնի, պարտադիր չէ կասկածի տակ առնել նաեւ հէնց նամակ-տարբերակի՝ պաշտօնապէս շրջանառուած-զործառուած լինելու հնարաւորութիւնը (իհարկէ՛ իր ժամանակին)։ Անելին՝ Ստ. Օրբէլեանի մի դրուագից երելում է, որ մարզպանական դարաշրջանի հասարակական մտածողութեան մէջ պատուաստիճանների ցուցակ-«Գահնամակ»-ի զործառումը հարիւր է ընկալուել նաեւ պատմագրական երկի, այն է՝ Ագաթանգեղոսի «Պատմութեան» կազմում։ Համապատասխան զլխագրում յիշով Ջ դ. կէտերի եպիսկոպոս, մատենագիր եւ Մովսէս Խորենացու («Քերթովախոր») աշակերտ Պետրոսին («յասացուածոց սրբոյն Պետրոսի Միւնեաց եպիսկոպոսի») Օրբէլեանը չարադրում է Դ դ. յայտնի իշխան Անդոկի (Արշակ Բ-ի աներոջ) մասին մի կիսանովելային պատում, ըստ որի, մասնաւորապէս, Շահուհ Բ Որմզդեան արքան կամեցել է ճշտել հայ աւագանու՝ «զգա-

Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Միւնեաց, Թիֆլիս, 1910, գ. է, էջ 24-25: Տես նաեւ Ստեփանոս Օրբէլեան, Միւնիցի պատմութիւն, Թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները Ա. Աբրահամեանի, Երեւան, 1986, էջ 78-79:

¹ Տես Կորին, 4արդ Մաշտոցի, Բնագիրը ... առաջաբանով եւ ծանօթութիւններով ի ձեռն Ս. Աբղէանի, Երեւան, 1941, գ. ժՁ, էջ 66, գ. ժԹ, էջ 74; Կորին, 4արդ Մաշտոցի, Յատարարան, բնագրի վերակազմութիւն եւ ծանօթագրութիւններ, Աշխատակիցն Հ Անանեան (Հանդերձ իրաւելին թարգմանութեամբ), Կենտրոն - Ս. Դազար, 1996, § 51, էջ 50, § 69, էջ 62; Մատենագիրը Հայոց, հ. Ա-Բ, Ե դար, Անթիլիաս, 2003 (բնագիրն ըստ Կորին, 4արդ Սեպուրա Մաշտոցի, Աշխատութեամբ Ա. Մաքեմեանի, Երեւան, 1994), գ. ժԷ, էջ 244, գ. Ի, էջ 248: «Կարգ»-ի մի վաղ զղջագրում էրերի յտնառարութեան մասին տես Մաքեմեան Ա., Կորինի Սեպուրա Մաշտոցի պատմութեան ծեւագրի մի քոյի տեղադրութիւն, Կենտրոն - Ս. Դազար, 1990:

² Ստեփաննոսի Միւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Միսակն, գ. ժՁ, էջ 42 (Պատմութիւն նահանգին Միսակն, գ. ժԷ, էջ 59):

տատուհման եւ զնոցին նախապատիւ նախադաս նախագահութիւնս», ուստի հայերից պահանջել է այդ մասին վկայող պաշտօնական գրաւոր որեւէ նիւթ («զնախնականն զի՞ր ըստ իւրաքանչիւր ըստ տանց ազատագարմն եկաց ծերոց զնախաստիճանն եւ զնախնախտ պատիւն»), որին ի պատասխան «նոյնժամայն խորհուրդ արարեալ իշխանացն Հայոց Մեծաց՝ մատուցին ասացի թագաւորին զցանկալին ամենայն տառից... զգրաւորական գիրս սրբոյն Գրիգորի, որ Ազաթանզօղն կոչի... գտեալ նմա զգի՞ր տասն եւ եօթն քարծի ազատացն Հայոց իշխանաց...»¹:

Ինչ վերաբերում է մեզ հասած «Ջօրանամակ»-ին, ապա այն ուղղանկիւն զարդաշրջանակի մէջ ներգծուած բոլորակ (օվալաձեւ) քառաքաժին աղիւսակ է, որի քաժինների (անուանուած՝ ըստ Հայոց Արշակունեաց թագաւորութեան չորս կուսակալ զօրավարութիւնների՝ «Արեւելեան Դուռն», «Հուսիսային Դուռն», «Արեւմտեան Դուռն» եւ «Հարաւային Դուռն») ճառագայթածելու բացուող եռասիւնակ տողերում թուարկուած են 21-22-ական նախարարութիւններ (ընդամենը՝ 86), իրենց համարներով (Ա - ԻԱԻԲ., ասացին սիւնակում) եւ զօրականների քանակով (Տ - ԱՔՆ, երրորդ սիւնակում): Բացի այդ, ուղղանկիւն զարդաշրջանակի աջ կողադաշտի մէջ վերելից ներքեւ կարճ տողերով տրուած է բնագրի աւարտն ու ամփոփումը. «եւ զոմանս՝ ի յայլ աշխարհս զրաւեալս. եւ լինի թիւ մարտիկ արանց, որ ընդ ազգաւք՝ 2Դ-ից հազարաց, թող զսպասաւորս դրանն արքունի, որ է Ռստանդ, որք ի պատերազմ ելանէին ընդ արքայի, եւ Մարդաբնուական, որ է ներքինի պահապան ի վերայ թագուիւոյն եւ զանձուցն: Եւ ընդ ամենայն թիւ զաւրացն Հայոց, որ է հարիւր եւ քսան հազարաց»²: Այս իւրատեսակ ձեւաւորումը, գուցէ, կարող էր ուղակիօրէն կրկնած լինել այն վաղազոյն հայերէն նախօրինակ-պատճենի արտաքին պատկերը, որը գրեթէ զիւտից յետոյ պիտի բարձրանուած-կազմուած լինէր Արշակունեաց աստուական պետութեան զինուոժի կառուցուածքն ու ձեւաւորման չափաքանակները

¹ Լոյն տեղում, գ. Ը, էջ 20-21 (Պատմութիւն նահանգին Ախալական, գ. Թ, էջ 30-31): Պատուոժի մանրամասն պոժեւորումը տես Ազոնլ Ի., Армянские а зноуу Юстиниана..., с. 273-277.

² Տես Ատորագրութիւն Կարուշիկէ էջմիածնի եւ ինձգ զաստացն Արարատայ, էջ 58-ից յաջորդող ներշիլը: Հ. Ղ. Ալիշանի «Արարատ»-ի էջ 424-ին յաջորդող ներշիլի արտաստիւթեան մէջ բնագրի այս աւարտը տեղափոխուել է բոլորակ աղիւսակի կենտրոնում ներգծուած ուղղանկեան մէջ:

(Ստրենացու բնորոշումով՝ «կարգը զինուորութանց»¹) պաշտոնապէս սահմանող մի հրովարտակ-վաւերագրից²: Վերջինիս լեզուն, կարող էր կամ յունարէնը լինել (զոնէ Տրդատ Սեօի շրջանում շատ հաւանական տարբերակ), կամ պարսկերէնը, կամ ասորերէնը, սակայն նրա արտաքին ձեւատրման վերլուծութիւնը ստիպում է կանգ անել վերջին տարբերակներից մէկի վրայ, քանի որ մեզ հասած աղիւսակում «Չիսիսա-լին» եւ «Հարաւային» դոնանունների տեղերը շփոթուած են աջից - ձախ: Այդ վիճակումը կարող է կապուել միմիայն սեմական գրահամակարգին բնորոշ (արամէերէն տառերով էր նաեւ պաղպաղեղը) աջից ձախ գրութիւնից արուած անուշադիր թարգմանութեան հետ: Մատենագրութեան մէջ «Ջօրանամակ» անուանումն արծանագրուած չէ, ուստի այն շարունակում է մնալ պայմանական: Չնայած դրան, ճիշտ չի թոււմ Ն. Ադոնցիի ի վեր շրջանառուող այն դրոշքը, թէ տուեալ փաստաթուղթը «Գահնամակ»-ի մի տեսակ է:

«Ջօրանամակ»-ի քնազիրը թողնում է մեզ ամբողջական հասած լինելու տպաւորութիւն, իսկ «Գահնամակ»-ն, ընդհակառակն՝ ըստ ամենայնի, բազմաթիւ անունների պակաս ունի վերջից (Ն. Ադոնցիի հաշուով՝ երկու տասնեակից աւելի³): Բայց արդէն նկատուած է, որ դրա պատճառը զուտ տեխնիկական է. այդ՝ առանց բացառութեան փոքր նախարարութիւնների անուններն, անշուշտ, եղել են մեզ հասած միակ թերթը պարունակած ձեռագրի յաջորդ թերթի սկզբում⁴: Ընդ սմին, կորսուած անունների մեծ մասը կարող է որոշ հաւանականութեամբ վերականգնուել «Ջօրանամակ»-ից⁵: Պակասում են նաեւ քնազրի վերնագի-

¹ ՊՀ գ. Բ Զ, էջ 117 («Եւ արէս իմն հաստատ [Վաշարշալը]... եւ՝ կարգը զինուորութանց...»):

² Հմմտ. Ազոնցի Н., Армения в эпоху Юстиниана..., с. 280 ("Токува зводствосала это положение относительно нахарарской кавалерии, необходимы были точные сведения о численности князей и их войсках. На почве такой необходимости должны были возникнуть соответствующие письменные документы официального или иного происхождения, родственные с тем памятником, который трактуется нами, - воинской грамотой").

³ Նոյն տեղում, էջ 256:

⁴ Տե՛ս Խաղաթյանցի Г., Армянские Аршакиды..., ч. I, с. 297 ("Воих княжества в списке - 70: быть может, их было больше, так как до нас сохранился лишь один лист, испорченный до конца").

⁵ Իսկ վերջինիս համեմատութեամբ՝ «Գահնամակ»-ն աւելի ունի նիւթն երեք տոննանուններ՝ ՃԻՐ. Լապեղլին 4. Թաշարապետն պարունի եւ 47. Տոյս [եթէ, ինարկ]. լիաշունք թուով 11 երկրորդ-երրորդ իշխանաճիւղերը): Հմմտ. Ազոնցի Н., Армения в эпоху Юстиниана..., с. 256-257.

րը եւ ասօցին տառը (կամ տառերը): Սկզբնատառը չկայ՝ թրեւս, որ-
 եւէ գրչի վրիպման պատճառով. գրիչները յաճախ էին արտագրութեան
 պահին քաց թողնում հատուածի սկիզբնատառը կամ տողը՝ մեկնա-
 գիրն աւարտելուց յետոյ դրանք գունազարդ նկարելու նպատակով,
 ասկայն երբեմն մոռանում էին անել դա: Եթէ ընդունենք, թէ բնագիրն
 ասանծին վերնագիր է ունեցել, ապա կարող ենք նաեւ ենթադրել, որ
 այն գրուած է եղել նախորդ մագաղաթաթերթի վերջում:

«Ձօրանամակ»-ի մեզ հասած բնագրի կազմման ժամանակը
 Տրդատ Գ-ի դարաշրջանին կամ ամենաուշը՝ խորով Կոտակի իշխա-
 նութեան ասօցին տարիներին վերագրելու տարբերակը վաւերագրի
 հաւաստիութիւնն ընդունող մասնագէտների մօտ կասկած չի յարու-
 ցում¹: Իրոք, փաստաթղթում արձանագրուած մի քանի նախարարա-
 կան տներ Հայաստանում հաստատուել էին, ըստ հաւաստի աղբիւրա-
 գիտական տուեալների՝ Տրդատի իշխանութեան տարիներին (298-
 330), իսկ մի քանիսն էլ ոչնչացուել էին նրա որդու՝ խորով Կոտակի օ-
 րօք (Մանաւազեաններ, Որդունիներ եւն): Փոխարէնը՝ մեզ հասած
 «Գահնամակ»-ի բուագրման հարցում տեսակէտներն էապէս տարբեր-
 ւում են: Ն. Աղոնցի ու նրա հետետորդների կարծիքով՝ Սահակ Պարթեւի
 նամակը գրուել է մարզպանութեան ստեղծումից (այսինքն՝ 428-ից) յե-
 տոյ²: Բովանդակութեան ուշադիր վերլուծութեան հիման վրայ այդ
 կարծիքը չընդունելով՝ Բ. Ուլուքաբեանը ցոյց է տուել, որ «Գահնա-
 մակ»-ն արտացոլում է մինչմարզպանական շրջանի պատկերը, ուստի
 կարող է շարադրուած համարուել Ե դ. ասօցին քառօրյում³: Այս
 խնդրում վճռորոշ է «Գահնամակ»-ում «ԻԳ. Գարդմանայ տէր» իշխա-
 նի յիշատակման փաստը, քանի որ միայն 428-ին Ուտիք աշխարհը (եւ
 նրա կազմում Գարդման գաւառը) Վեամ Ե Սասանեանի կողմից հա-
 նուեց մարզպանութեան վերածուած Հայաստանի կազմից ու միացուեց
 Ադուանից թագաւորութեանը (նոյն ժամանակ ստեղծուած Ադուանք-Ա-

¹ Տե՛ս, օր.՝ Ըսիինեան Լ., Ձօրանամակ, էջ 704; Հայ ժողովրդի պատմութեան
 ջրբառմատիւ, էջ 818 (հատուածի կազմող՝ Ա. Արախանեան); Յակոբեան Ա., Պատմա-
 աշխարհագրական եւ վիճազրագիտական հետազոտութիւններ (Աղստն եւ Ուտիք),
 Վիեննա-Երեւան, 2009, էջ 281-283:

² Ասուհի Հ., Армения в эпоху Юстиниана... с. 262-263; Երեմեան Ա., Հայաստանը ըստ
 «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմութեան
 ժամանակակից քարտեզագրական հիմնի վրայ), Երեւան, 1963, էջ 23; Toumanoff C.,
 Studies in Christian Caucasian History..., pp. 229-231.

³ Ուլուքաբեան Բ., Հուսիս-արեւելեան Հայաստանի նախամարզպանական շրջանի..., էջ
 159-163; նոյնի՝ Դրագներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան, էջ 124-127:

ոան մարզպանութեան կազմում): Բացի այդ, «Պարոմանայ» եպիսկոպոսական «գահ» է յիշատակում Ռիխտանտի երկում պահպանուած (զլ. Ա.Կ. «Յաղագս եպիսկոպոսաց, որք ընկալան արօռ ի տեղիս տեղիս ի սրբոյն Գրիգորէ յիւրաքանչիւր գահս») 30 եպիսկոպոսական բեմերի ցանկը, որը նոյնպէս իրականում արտացոլում է 387-ից 428 թթ. միջակայքի պատկերը¹: Եւ վերջապէս Բ. Ուլուքաբեանի ճշտումներից յետոյ պատմա-քանակական նոր քննութեան ենթարկելով մեզ հասած «Գահնամակ»-ի բնագիրը Բաքլէն Յարութինեանը փորձել է փաստարկել, որ Սահակ Պարթեւի նամակը կարող է թուազրուել 432-ով (այսինքն՝ մարզպանական շրջանով), սակայն նրան յաջորդող ցանկը պէտք է համարել Հայոց թագաւոր Խոսրով Դ-ի եւ Հակոբի Գ Սասանեանի օրօք 388 թ. հաստատուած «Գահնամակ»-ը²:

¹ Ռիխտանտ եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, զլ. Ա.Կ, էջ 100 (բնագրում. «...չարադրեցիք եւ յաւտ արարեց զիւրաքանչիւր գահս՝ որպէս Լուսաւորիցն մերկ սրբոյն Գրիգորի է կարօպա եւ երես զեպիսկոսան արօռնեայ եպիսկոպոսացն զկարգս... Այս երեսուն եպիսկոպոս, որք արտակալութեամբ ընկալան ծոնաշարութիւն ի սրբոյն Գրիգորէ...»): 428-451 թթ. վարչական փոփոխութիւնների խնդրի մասին մանրամասն տես նաեւ Յարութինեան Բ., Մեծ Հայքի թագաւորութեան հիւսիս-արեւելեան մարզերի վարչա-քաղաքական կարգութիւնը 387-451 թթ., ԹԵՎ, 1976, № 2, էջ 77-95; Арутюнян Б., Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елмиза, Кавказ и Византия, вып. 1, Ереван, 1979, с. 19-35; Акопян А., Армянско-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1967, с. 109-114; Семенов И., Этнополитическая история Восточного Кавказа в III-VI вв., Автореф. дисс. ... канд. ист. наук, Мекенкала, 2002, с. 14.

² Բ. Յարութինեանը ենթադրում է («Գահնամակ» թուազրուան հարցի շուրջ, էջ 62-74), որ «Հահայն Օռիպց տիր»-ի տակ «Գահնամակ»-ը նկատի ունի Հահուեաց Օռիպց գաւառի իշխանին (որը երկրի «քաճանցից» յետոյ գտնում էր Կայսրութեանն անցած հաստատում), իսկ դա կարող էր լինել միայն այն տարիներին, երբ Արշակ Կերէցի թագաւորի մահուանից յետոյ Խոսրով Դ-ն, Սասանեանների եւ Հոնի միջեւ կայացած ժամանակաւոր համաձայնութեամբ, վերախկում էր նաեւ Հայաստանի արեւմտեան մասը (ՊՀ, զլ. Գ խթ, էջ 319-320): Սակայն Հահայն եւ Հահուեանուանների նշանցումը խնդրատու է թու՛մ, քանի որ Ազարանգեղոսի իշխանացանկում դրանց տակ հանդէս են գալիս երկու տարբեր նախարարներ («եպսքորոյ իշխանն Օռիպց աշխարհին... յորեքտասաներորդ իշխանն շահայն Յարաւանդ եւ Հոր գաւառի»): Բացի այդ «Գահնամակ»-ի «Օռիպց»-ը մեծ հասանակութեամբ, կարող է լինել «Մեծ Օռիպց» (որը պարսկական մատու էր), ինչպէս որ երեւում է յունարէն բարգմանութեամբ պահպանուած «Գրիգորի վարք»-ի իշխանացանկից՝ «եօքորոյ իշխանը Մեծ Օռիպց, որը Միջագետքի մօտ է գտնուում» (տես Garitte G., Documents pour l'Étude du livre d'Agathange, Rome, 1946, p. 73; Ազարանգեղոս, Պատմութիւն Հայոց, Աշխարհաբար բարգմանութիւն... ծանօթութիւններով Ա. Տէր-Պետրոսեանի, Երեւան, 1977, էջ 176): Ըստ այդմ «Գահնամակ»-ում կարելի է վերականգնելի համարել Ը. Հահայն [Զ.] Օռիպց տիր վիւ Ը. Հահայն Օռիպց տիր:

Բոլոր դէպքերում բնագիրը թուազրող ուսումնասիրողները նախ եւ առաջ յենուել են նրա սկզբնամասի վրայ՝ ընկալելով դրա բովանդակութիւնն այնպէս, թէ հայ նախադարձերի գահացուցակը Ս. Սահակ Պարթեւ կաթողիկոսը (388-439, ընդմիջումներով) յայտնաբերել է Հայոց թագաւորի դիւանում (վերջին Արտաշէս-Արտաշէրի կամ Խոսրով Դ-ի) կատարած փնտրութեի («խնդիր արարեալ») արդիւնքում, որից յետոյ վաւերաբուխը հաստատման է ուղարկուել Տիգրան արքայից արքայ Կոստ Ե Գոռին (420-438/439): Սակայն ամբողջ բնագրի ուշադիր վերլուծութիւնը եւ լեզուաբանօրէն հնարաւորինս ճիշտ տողատումն ու կէտադրումն աւելի հաւանական են դարձնում նրա ընթերցման այլ տարբերակ:

Նախ՝ թում է, թէ ուսումնասիրողներին պարզապէս կաշկանդել է բնագրի ամենակարգի պակասի տեղում աւելի քան մէկուկէս դար առաջ Մ. Էմինի առաջարկած վերականգնումը՝ «*Մայիակայ խնդիր արարեալ...*»¹ (Ն. Աղոնցը դա շեշտուած է դարձրել՝ «*ԴՄ Մայիակայ...*»): Իրականում շատ աւելի հաւանական է, որ կորսուել է միայն մէկ տառ, այն է՝ *Մ* սկզբնատառը «*Մ*իս կայ խնդիր արարեալ» պարզ արտայայտութեան մէջ, որը քաղկացած է «*Միս*» եղանակաւորիչից եւ «*կամ*» քայից՝ գործածուած որպէս օժանդակ քայ «*առնեմ*» քայի անցեալ դերքայի հետ²: Այդ «*կողած*» (ինչպէս ենթադրում էր, օր. Բ. Յարութիւնեանը) ստորոգեալը «*յայտնաբերելով*»՝ տեսնում ենք, որ բնագրի առաջին նախադասութեան գործող անձը ոչ թէ կաթողիկոսն է, այլ հենց Հայոց «*Արտաշէս թագաւոր*»-ը («*Մ*իս կայ խնդիր արարեալ... *Արտաշէս* թագաւորի»): Դրանից յետոյ պարզ է դառնում, որ «*խնդիր արարեալ*»-ն այդտեղ ունի ոչ թէ «*որոնելու*», այլ ուղղակի՝ «*հայցելու*, հարցնելու

¹ Տե՛ս դեռ նրա՝ Գ. Անվերդեանին հասցեագրած 2.04, 1851 թուակիր նամակ (Անվերդեան Գ., *Նամակներ*, էջ 355 եւ *Восточные Арменіа Мусульмане Хорасанскаго*, 1858, с. 358):

² Հմտ. «*Բաղարեալ ժամանակ է կազմում նաեւ կամ քայլ խոնարհուող քայի անցեալ դերքայի հետ. նաեւս կամ (իսպել եմ), նաեւս կամ (պատկած էք), նաեւս կամ (նկել է)*» (Առաջելեան Վ., *Գրաբարի քերականութիւն*, Երեւան, 2010, էջ 194): Սենագրութեան «*Գրաբարի հատընտիր*» բաժնի օրինակներից տես «*կայր կախեալ յերեսք տեսլը նշանակի, եւ փաղկաղէր ծարթին ի բարձուն...*» (էջ 244; Փաստոսի Բագանդաբուր Գատնութիւն Հայոց, Կենտրին, 1933, գլ. Դժբ, էջ 185; Մատենադարձ Հայոց, հտ. ԱԲ, էջ 375): Ա. Գրիցը նշենք «*սիս*»-յով, անցեալ դերքայով եւ օժանդակ քայ դարձած «*կամեով*» թի օրինակ՝ «*Համարք Արդասիւմ զայս իւր եւ նոնս, եւ սիս իւր թի կախեալ կայր զծառոյն սարկայ զեղեցեաց*» (ՄՄՆդ, ԻԲ 13), որի յամարձնում եւս աւելայ են «*սիս*»-ն եւ թաղարեալ ստորոգեալը («*καὶ ἀναβλέψας Ἄβρααμ τοὺς ἀφθαλμοὺς αὐτοῦ εἶδεν καὶ ἰδοὺ κρῶς εἰς κατεχόμενος ἐν φουφί σπυρεκ τῶν κερῶτων*»):

հարցում անելու» իմաստը¹ (ըստ այդմ յաջորդող «եթե»-ն պահանջող հարցական է դառնում), իսկ «զոր ի Տիսպոնն» հատուածն անհրաժեշտ է ընկալել իբրև երկու բառով ընդմիջուած «ի դրան արցունի» հատուածին լրացնող (պայմանականօրէն պարզեցուած՝ «կայ խնդիր արարեալ *Արտաշէսի թագաւորի*՝ ի դրան արցունի, *զոր՝ ի Տիսպոնն, ... եթե՝ ես... տեսի*): Նաեւ հասկանալի է դառնում, որ «Արտաշէսի ի դիւանին» ըստ ամենայնի, նշանակել է «*Արտաշէսական դիւան*» իբրև բնորոշում (եւ անգամ գոցել, անուանում) Իրանի պետական արխիւ-դիւանի (կամ առնուազն նրա նորօրեայ եզրոյթով ասած՝ ֆոնդերից մեկի), ընդ որում՝ աւելի հաւանական է՝ հէնց առաջին Սասանեան արքայի անունով: Վերջինս, ինչպէս դա պատկերացնում էին Ե դարի հայ հեղինակները (նորեմացու օրինակով), բացի իրենց հայրենիքը նուանելուց ու նրա մեծ մասն անբրածութեան ենթարկելուց («գերելով՝ զլոյով մասն աշխարհիս յաւեր դարծուցանէր»²) դրա հակառակն էլ էր արել. «գեղեցկապէս յարդարեալ զաշխարհս Հայոց ի կարգ առաջին *խախնքն* նախկին, Վաղարշակ թագաւորի օրերի/ հաստատէր»³: Եւ ահա, հեր-

¹ Ըստ Հայկազեան բառարանի «խնդր» գոյականի իմաստներն են (խտ. Ա, էջ 862).

«եւրզ, լոզ, որունմն», «Քննութիւն, հարցումիորն վէճ. տարաձայն լուծանելի, խնդարկութիւն բանից», «Գիտանքումն», «Ննդրուած, հարցում, իրն հարցեալ»: Այսպիսով՝ ստացում է. «Ահապէսիկ հարցում է արուել Արտաշէս թագաւորի կողմից...»:

² Գոցել, իրօք, վերականգնելի համարելով՝ *Կրփիս գոր ինչպէս նկատել է Բ.*

Տարտեմնեանը («Գանձանակի» թուագրման հարցի շուրջ, էջ 73): Ուսումնասիրում առաջինն է ձիւտ նկատել նաեւ այս հատուածի վերջում՝ «տեսի» բառից յետոյ նախադասութիւնն ասարտելու անհրաժեշտութիւնը թելուզ եւ լզգալով նրանում «եթե»-ի հարցական բնոյթը (նոյն տեղում):

³ Հմմտ. ԳԸ, գ. Բ.Իգ, էջ 215: Ի դէպ, մեծ քաղերայտութիւն կը լինէր, եթէ այս արտայայտութեան մէջ կէտարման՝ մեր կատարած փոփոխ վտարութիւնը (1913 թ. ջննական բնագրի համեմատ) նպաստէր՝ յայտարարելու վերջին տասնամեակներում հայագիտութեան մէջ վաստակաշատ գիտնականների մի շտապողական վիճակն հետնանքով ապրոյած այն քիչընկալումը, իբրև թէ տուեալ արտայայտութիւնից բնում է մեծ Հայքի թագաւորութեան բաժանուած լինելը Սասանեան Իրանի եւ Հռոմեական կայսրութեան միջեւ Գ ղ. կէտերին (ԳԸԸ, 1976, № 1, էջ 67-88: Հայ մողոլոյրի պատմութիւն, հ. 8, Երեւան, 1984, էջ 39-43: «Հանդես անտօրեայ», 2007, էջ 160-171): Այդ պնդումը լոկ զրաբարի չարահիւսութեան նրբերանգների թող իմացութիւն է ցուցանում (պիտի ընկալել, պայմանականօրէն պարզեցուած՝ «զլոյով մասն աշխարհիս գերելով՝ յաւեր դարծուցանէր») եւ կոպտօրէն անտեսում յարաւից ենթատեքստերը, այդ բնում հէնց շարունակութեան մէջ՝ «Յրոմէ զայցեալ նախարարն Հայոց ...ի Յոյսն առաւելին» (այսպէս, այդ ոչ թէ՛ «Հայաստանի ոչ յոյով, Յունական բաժին»): Բացք, ցաւօք, այն դո՛ւնս թեթեւօրէն անցնում է արեւնախօսութիւնից արեւնախօսութիւն եւ շարունակից թարտել:

⁴ ԳԸ, գ. Բ.Իէ, էջ 215-216: Ուշադրաւ է նաեւ՝ «Եւ գերկիս գրով ընդ հարկաւ իրով արկանէ եւ անենիոթ գիւր անուն հաստատէ»:

թական անգամ Տիգրոն ուղարկուած Սահակ Պարթեւից ակնկալել են իէնց այդտեղ՝ «Արտաշէի ի դիւանին» փնտրել ու գտնել («Եթ՛ ես ... տեսի») անհրաժեշտ փաստաթուղթը¹: Այն, բարեբախտաբար, յայտնաբերուել է, ապա հաստատուելով արցալից արքայի ու կաթողիկոսի կնիքներով Սահակի կողմից ուղարկուել է (քննականաբար՝ Հայաստան) «Քաղոց ամսի 17» թուակիր մի նամակ-առաջարանով («գիշ արարի ես՝ Սահակ կաթողիկոս») այն ժամին, թէ «Նորին բարերարութիւն» Հայոց թագաւորն (այլ ոչ թէ Պարսից արքան) ինչպէ՛ս նախկին ժամանակների օրինակով կարգադրի (ապաօճիով, այլ ոչ թէ յորդորական հրամայականով, «Եթե որպէ՛ս Չեր բարերարութիւնը հրաման *ուսցի՛ր*... որպէս յառաջ առ Հայոց ազգին...») գահակարգութեան խնդիրները «Հայոց ազատաց եւ տանուտէրանց» համար առաջարկուած «արդար եւ ճշմարիտ» ծնով նրանց իր «դիւանի շահեամարի» մէջ «ասնելով» (դասակարգելով-հաշուառելով)²: Եւ այդ ամենը, կրկին նշենք ի պա-

¹ Այս դիտարկումը կատարել է դոկտ. Գր. Աւաթբանցը (Арменские Архаивы... ч. I, с. 296). «...католикос Саак ездил в Персию в дни армянского царя Арташеса, при персидском царе Време V, быть может, даже для утверждения Арташеса на престоле... 17-го числа армянского месяца к'аг'оца... католикос Саак посетил в персидской столице Ктезифоне персидскую государственную канцелярию и в архиве царя Арташира (375-383) видел казачийскі армян ամանական նամակի - податный список крестьян, составленный, быть может, по приказанию этого царя после разделения Армении между Персией и Византией» (վերջին միտքն, իհարկէ, միշտ չէ): Հմմտ. «420-421 զինը Տիգրոն ևը գտնենց, ուր գտից կ'երազ Արտաշէի քաղաղութիւնը յարողնելու համար, եւ պարսիկ արքային վնայ իր ունեցած հերինակութեամբ դարբեցել ևր տայ քրիստոնեաներու դէմ հանուած հալածանցը» (Քիւրաբեան Հ., Պատմութիւն հայ իին գրականութեան, Կենտրոն-Ա՛ւազար, 1992, էջ 75):

² «Անեն՛» քալի երկրորդ ինձատով (ըստ Հայկազեան քառարանի, Ի. Ա, էջ 308. «Կաշրուցանել, կարգել, համարիլ»): Նամակի հասցեատիրոց Կարցուն Գր. Աւաթբանցի տեսակէտը, ցաւօք, չի տարբերում միաներից (նոյն տեղում. "Тут он именно обращается к "царю царей" и благодетелю" (но-видимому, таков был титул этого благодетеля) Врему, прося его о скинудеке: "чтобы твоей канцелярии повенело, как то было прежде у армян, произвести для твоей канцелярии (новой) обычую перепись армянских дворян и владельцев, дабы [сообразно с тем] места их в разрядном списке были определены"). Հմմտ. նոյնը՝ Ստ. Մալխասեանցի ընկալման մէջ (էջ 338). «զրեցի Կոստ արքայից արքային եւ բարերարին, թէ թող լիկայ դրանցը՝ ձեր քաղաղութիւնը հրաման տայ՝ Հայոց ազատների եւ տանուտէրների ցուցակագրութիւնը կազմել ձեր դիւանում...: Բայց ընթացից ամենաշատ շնորհները Մ. Իմինին են (վերնախնդրեան ցանկացած տարբերակով) կոչւնուած Ն. Աղոնցի կողմից (Армения в эпоху Юстиниана, էջ 270). "Я Саак искал во дворе царя Арташеса того, о чем заговорил в Ктезифоне, что я видел тамекал пите Арташира в дзани [17 месяца к'аг'оца]. И обратился к католикос Саак к Врему... с просьбой: да прикажет Ваше Благодение сделать перепись армянским азамат и манутерам для своего дзана..." (տն՛ս նախ

տախտան Արտաշէս Թագաւորի անշուշտ, Սահակ Պարթեւի հետ նախապէս մտադրացուած ու պատրաստուած պաշտօնական հարցումի («խնդիր արարեալ ի դրան արքունի յԱրտաշէսի Թագաւորի...»):

Ամեն ինչից բացի, նախորդ վերծանողներին ու բարգձմանիչներին խանգարել է նաեւ բնագրի առաջին սիւնակի 7-րդ տողաւարտում պատուոյ նշանի տակ վերցուած ժ՛ (17) թուանշանից յետոյ գրչի դրած վերջակէտը, որին նաեւ երկու խոշոր գլխատափեր են յաջորդում¹ («տեսի ի բաղոց ամսոյ ի ժ՛: Ի Կօամայ...»): Կատաւելով դրան հրատարակիչներն այդ նոյն տեղում են աւարտել իրենց վերականգնած բնագրի առաջին նախադասութիւնը (միայն Բարկէն Յարութեանեանը խախտեց այդ «աւանդոյթը»), որի հետեւանցով ամսաթիւը կտրուել է Սահակի ուղարկած նամակից («գիր արարի ես՝ Սահակ կաթողիկոս...») եւ կապուել արքունի դիւանում «Ռամական նամակը» տեսնելու-գտնելու հետ: Իրականում, սակայն, դժուար չէ նկատել, որ անյայտ գրչի համար հիմք են ծառայել, ամենայն հաւանականութեամբ, նախօրինակից եկած՝ թուանշան ցուցանող կրկնակէտերը («*ի : ժ՛:»), որոնցից երկրորդը նա սխալմամբ ընկալել է իբրեւ վերջակէտ: Ի դէպ, չտարողական է թուած նաեւ հրատարակիչների վստահութիւնը գրչի յաջորդ վերջակէտի նկատմամբ, որը նա դրել է «նոյնպէս ներսե» բառերից առաջ: Այն յետ տանելով ու դնելով «Որ յայտ հետէ»-ից առաջ (այսպիսով ընկալուած է. «Որպէսզի այսուհետեւ... գահակարգը յայտնի լինէր, ...կնքեցինք Փահնամակը...»²) յաջողուած է միեւնոյն նախադասութեան մէջ չթողնել բայի տարբեր ժամանակներով խոնարհուած երկու ստորոգեալները («իրաման տաջէ» եւ «ի յայտ յինէր») եւ իրարից

ծնք. 1, հմտ. *История Армянна Монаха Хоренского*, с. 358): Դժուար է հասկանալ, թէ գիտնականների պատկերացմամբ՝ ինչպէ՞ս կարող էր Սահակը գրել «Եւ է պայլէս պողար եւ ճշմարիտ», եթէ նամակն ուղղում էր Պարսից արքային: Եղելու ճշտոյց կաթողիկոսի կրիչը դնելու հարցում, եթէ կնքուող թուղթ պիտի պահուէր Տիգրանի դիւանում:

¹ Դրանցից առաջինը ձագաղաթեայ պատառիկ լուսանկարում յտակ ցեփեցրող գլխատափ Բ է, բայց զարմանալի է, որ երեք հրատարակիչներն էլ նրա փոխարէն Շ են վերծանել:

² Հճճտ. «Ռասական շրջանի մատենագրութեան շարահիտական համակարգն ունի բարդ նախադասութիւնների պնակիտ տիպեր, որոնցում գլխաւոր եւ երկրորդական մասերի գործողութիւնները, նշելով իսկոյնով ժամանակային յաջորդականութիւն, հանդէս են գալիս միշտ հետեւեալ յարաբերութեամբ. երկրորդական նախադասութեան գործողութիւնը իբրեւ կանոն միշտ նախորդում է գլխաւոր նախադասութեան գործողութեանը» (Նալչեան Լ., *Գրաբարի շարահիտութիւն*, Հանդէս Ամսօրեայ, ճՁ տարի, Կիւննա, 1992, էջ 15):

ոչ շատ հեռու կրկնուած «Հայոց ազատաց եւ տանուտէրանց»-ներն ու «նոյնպէս»-ները:

Եւ մի փոքր էլ յետ վերադառնալով մանրամասնէնք, որ Ասիակի նամակ-ասացարանի սկզբում մեր կողմից վերականգնուած «[Ա]իա» ե-դանակաւորիչ բառը¹ բազմաթիւ այլ դէպքերում եւս տեսնում ենք միջ-նադարեան թղթերի, ճառերի, ինչպէս նաեւ մէջքերուած ուղղակի խօսքերի եւ կարեւոր հատուածաբաժանումների սկզբում (նաեւ՝ «Եւ աիա», «Ձի աիա», «Արդ աիա», «Աիաասիկ» տարբերակներով): Օր.՝ նրանով է սկսում «Գիրք թղթոց»-ի հէնց այն նամակը (Թիֆլիսեան տպագրում՝ ԶԹ.), որը Հ. Լորայր Պողարեանի աշխատասիրած երկրորդ հրատարակութեան մէջ դրուած է ասօջին տեղում («Ա. Երանելւոյն Մակարայ՝ Սրբոյ քաղաքին Երուսաղէմի հայրապետի՝ Կանոնական թուղթ ի Հայս... Աիա վասն աիին եւ երկիրոյն Աստուծոյ եւ ի փառագ փրոյ բարեպաշտութեան ձերոյ փութացայ զարթուցանել զբարեսէր եւ զպարզամիտ սիրտս ձեր...»):² Եւսն հրատարակութեան երկրորդ փաստաթղթում (Թիֆլիսեան տպագրում՝ ԶԸ.) «Եւ աիա»-ով է սկսում հասցէագրութեանն ու ոճական նախաբանին յաջորդող ասօջին բովանդակա-յին պարբերութիւնը («Ք. Սրբոյն Կիրոյի եպիսկոպոսի՝ առ Նեստոր... Առ ս. եւ աստուածապաշտ եւ պաշտանակից մեր Նեստոր... ողջոյն: ... Եւ աիա մեծ փնհողոսն որ եղեւ...»):³ «Աիա»-ով է սկսում նաեւ Օձնեցուն վերագրուող «Լորին տեառն Յովհաննու Հայոց կաթողիկոսի՝ Ընդդէմ այնոցիկ, որ ապականեն զսուրբ խորհուրդն ի ձեռն խմորոյ եւ ջրոյ» վերուստութեամբ նամակը՝ հետեւեալ շարադասօրէն ուշազրաւ սկզբով. «Աիա յասացազոյն ժամուցեայ ասացելոցն՝ զապստամբութիւն հերժուածոյն ի ճշմարիտ հաւատոյն, եթէ այլայլեն զխորհուրդ տնաւր-նութեանն Քրիստոսի: Յասացազոյն հաստատեցին զգեղ բշկութեան ի գիրս եւ ի գլուխս ընթերցարանաց...»⁴: Հասցէագրութիւնից յետոյ այդպէս են սկսում եւս երկու թղթեր՝ Աղեքսանդրիայի Պետրոս հայրապետի՝ Կոստանդնուպոլսի պատրիարք Ակակին ուղղուած իններորդը («ԻԸ... Աիա արժանի եղեր, սուրբ հայր իմ, տեսանել զհաօս Տեառն

¹ Հճնտ. Անցելեան Կ., Գրարարի քերականութիւն, Երեւան, 2010, էջ 220:

² Գիրք թղթոց, Երկրորդ հրատարակութիւն, Երուսաղէմ, 1994, էջ 1: Տես նաեւ Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 407: Կանոնագիրք Հայոց, Կ. Ք. Աշխատասիրութեամբ Կ. Յակոբեանի, Երեւան, 1971, էջ 216:

³ Գիրք թղթոց, Երկրորդ հրատարակութիւն, էջ 10: Տես նաեւ Գիրք թղթոց, 1901, էջ 460:

⁴ Գիրք թղթոց, Երկրորդ հրատարակութիւն, էջ 467 (մի փոքր փոփոխել ենք կետադրութիւնը): Տես նաեւ Գիրք թղթոց, 1901, էջ 234 (ԸԸ):

մերոյ...») և Կիրիոն Վրաց կաթողիկոսի Հայոց Արքահամ Աղաքանեցի հայրապետին ուղղուած Երրորդը («Ահաւասիկ» տարբերակով. «Չ... *Ահաւասիկ* այս և ի մէջ երրորդ թուրք զրեցաւ աս ձերում սրբութիւնդ: Եւ ե՛ս զսահման հաշտութեան պիտո պահեմ...»¹): «Ահա»-ով է սկսուած «Երանելոյն Թէոդորոսի [Քոթենաւորի] Շնդդեմ Մայրագումացոյն» ձառը. «*Ահա* այժմ նորահրատ տոչորեցաւ բոց և զբեղմնաբեր տուննս բանական դրախտին... համրացուցանել ճարակի...». դրան յաջորդող պարբերութեան սկիզբն է. «*Քանզի ահա* վերայալտեցան այժմ ի տանս Թորգոմաց նորածին դատութեան զարմբ...»². Իրեւեկարեւոր հատուածաբաժանումների սկիզբ՝ երկու օրինակ յիշենք Յովհան Օձնեցու «Մակս ժողովոցն, որ եղեն ի Հայս» երկից, ուր վերջին հատուածում կանոնական կարեւոր դրոյթներից առաջ հեղինակը երկիցս յիշատակում է իրեն («*Ահաւասիկ* զայս զրեցաք կանոնս՝ եւ Յովհաննէս Հայոց կաթողիկոս, ամենայն եպիսկոպոսաք և քահանայիք և ուխտի մանկամբք եկեղեցոյ սրբոյ...». «*Ահաւասիկ* եւ Յովհաննէս Հայոց կաթողիկոս, զրեցի իմով ձեռամբ զայս կանոնս, հաստատութեամբ սուրբ հաւատոյ...»³): Եւ իրեւեկ մեջբերուած ուղղակի խօսքի սկիզբ՝ մի քանի օրինակ նշենք Մովսէս Դասխուրանցու (պատմագրութեան մէջ կոչուած նաեւ *Կաղանկատուացի*) «Պատմութիւն Աղուանից»-ում քառացի արտագրութեամբ պահպանուած «684 թուականի պատմութիւն» անուանուած երկից. պատել «Ահա»-ով են սկսուած Ռխտանէս կաթողիկոսի, Վարազ Տղաւտ իշխանի և Իսրայէլ եպիսկոպոսի խօսքերը (համապատասխանաբար՝ «*Ահա* առաքեաց մեզ Տէր ի Սիովլէ զաւագան զաւրոյբանս, և սովա՛ տիրեսցուք մերոց թշնամեաց...». «*Ահա* հարկք, որ եղան ի վերայ մեր ի դժնդակ ազգէն Տաճկաստանեաց, յոյժ վտանգեալ տարակուսեցէ զմեզ...». «*Ահա* զխոստմունս սիրոյ քո, զոր ունիս աս Աստուած...»⁴): Վերջում յիշենք, որ Ս. Գրքում, որի մեծագոյն մասի

¹ Գիրք թղթոց, Երկրորդ հրատարակութիւն, էջ 346: Տե՛ս նաեւ Գիրք թղթոց, 1901, էջ 185:

² Տե՛ս Յովհաննէս Իմաստասիրի Աձնեցոյ Մատենագրութենք, Երկրորդ տպագրութիւն, Վենետիկ - Ս. Դազար, 1833, էջ 171:

³ Յովհան կաթողիկոս Օձնեցի, Մակս ժողովոցն, որ եղեն ի Հայս, Գիտա-քննական քննազիւր Ա. Յակոբեանի, Հանդէս Ամսօրեայ, ՃԻԳ տարի, Վիեննա-Երեւան, 2009, էջ 130, 134: Տե՛ս նաեւ Գիրք թղթոց, Երկրորդ հրատարակութիւն, էջ 490, 492 (ՉԸ): Գիրք թղթոց, 1901, էջ 231-232 (ՉԷ):

⁴ Անանու՛ն 684 թուականի պատմութիւն, Գիտա-քննական քննազիւր Ա. Յակոբեանի, Մատենազիւր Հայոց, հ. Դ-Ե, է դար, Ամբիլիաս, 2005, էջ 820, 868, 888: Տե՛ս նաեւ Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական քննազիւր Եւ Ներանութիւնը Վ. Առաքելեանի, Երեւան, 1983, գ. Բ.թ, էջ 184, գ. Բ.թ, էջ 237, գ. Բ.թ,

քարզմանից եւ խմբագիրը Ս. Սահակ Պարթեւն էր, «Ամիս»-ն հանդիպում է 331 անգամ (ըստ համարաբաժի¹, համեմատութեան համար՝ խորենացու մօտ մէկ տասնեակից պակաս է), ընդ որում դրա քառորդ մասը նախադասութիւնների սկզբում է: Եւ նկատի ունենանք, որ անհրաժեշտութեան դէպքում օրինակների թիւը կարելի է անելացնել:

Սեզ հասած «Գահնամակ»-ի կազմման պատմական համատեցսող լիարժէք ճշտելու համար անհրաժեշտ է նրա նամակ-առաջաբանի հարողդած տուեալներին զուգահեռ քննարկել (ինչպէս որ դա արել են նաեւ նախորդ աղբիւրագէտները) Մովսէս Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում պահպանուած այն տեղեկութիւնները, որ վերաբերում են Տիգրանում Սահակ Պարթեւի գործունէութեան երեք դէպքերին՝ 380 կամ 390-ական թուականներին, 414-ին եւ 428-432 թթ.²: Դրանցից առաջինը, որ ուսումնասիրողների կողմից նկատուած խիստ ուշագրաւ մանրամասնել է պարունակում, Պատմաօր որդեգրած ժամանակագրական համակարգի թերիների պատճառով³ նաեւ անկայտ հակասութիւններ է ցուցաբերում: Խորենացու խօսքերով՝ Վասնշապուի թագաւորը, որն իր աւագ եղբորը՝ Շապուի Գ Սասանեանի կողմից (ըստ Պատմաօր ժամանակագրական պատկերացումների՝ Շապուի Բ-ի կողմից) գահընկէց արուած Խոսրով Դ արքային յաջորդել էր 388 թուականին (իսկ, ըստ ամենայնի, Ցազկերտ Ա-ի կողմից պաշտօնակալ հաստատմամբ՝ 399-ին⁴) «իրաժարէր աօանց հրամանաց արքայից արքայի աօնել զայն [*Հանազասպ Մամիկոնեանին նշանակել տպարապետի*]... Վասն որոյ աօեալ ի նմանէ թուղթս՝ ...ինքնին չոգաւ [Սահակն.

էջ 258:

¹ Հանաբարբառ Հիմ եւ Լոր կտակարանաց, Աշխատախորութիւն Թ. վրդ.

Աստուածատրութեան Արաբներուց, Երուսաղէմ, 1895, էջ 28-30:

² ՊՀ, գլ. Գ.Ճա, էջ 322-324; գլ. Գ.Ճե, էջ 329-330; գլ. Գ.Կդ-Կե, էջ 348-352:

³ Մանրամասն տե՛ս անգիտազանցելի մնացած՝ Ասրքսեան Գ., Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» ժամանակագրական համակարգը, Երեւան, 1965:

⁴ Տե՛ս Անանեան Հ., Գրոց գիտի թուականը եւ Վասնշապուի Հայոց թագաւորի վեցերորդ տարին, Բազմավեպ, 1965, էջ 138 (յօդուածի ժամօթագրուած վերադրատարակութիւնը տե՛ս Միջազգային գիտաժողով՝ նուիրուած Հայոց գրերի գիտի 1600-ամեակին, Երեւան, 12-17 Սեպտեմբերի, 2005 թ., Ձեկուցումների ժողովածոյ, Երեւան, 2006, էջ 589): Հեղինակը 414 թ. վախճանուած Վասնշապուի 21-ամեայ իշխանութեան (ըստ Խորենացու ժամանակագրական տուեալի) ոչ պաշտօնական սկիզբը դնում է 393-ից, սակայն չի բացատրում նաեւ 388/389 թուականի ննարատրութիւնը:

որը կաթողիկոս էր 388-ից] առ Արտաշիր Պարսից արքայ [sic/ - 379-383/384¹], որ յետ եւաթանատուն անի թագաւորութեան հարն կայազուէրութիւնն անս չորս: Եւ մեծարի ի նմանէ յոյժ... Որոյ զքնան կատարեալ զխնդիրսն, նախ վասն փեսայի նորա Համազասպայ, դարծեալ եւ վասն մնացելոցն մեղուցեալ նմա ազգացն Կամսարական եւ Ամատունի... հրամայեաց զտունս երկաքանչիւրոցն՝ զկայեալսն յարքունիս՝ դարծուցանել ի նոսա, քայց միայն ի գահ հայրենի ոչ հաստատել... Իսկ զազգն՝ Համազասպայ, որ է տոհմ Սամիկունեան՝ ի վեր մատուցանել, զի կարգեսցին ունել զհինգերորդ գահ նախարարացն Հայոց, եւ ի դիւանի իւրում գրել»²: Պատմահայրն, անշուշտ, ամենեւին չի գիտակցել Սահակ Պարթեւի այս այցը Արտաշիր Բ-ի հետ կապելուց առաջացող ժամանակագրական հակասութիւնը եւ անգամ պնդում է, որ հինգ այդ արքայից արքան է պատասխան նամակով Հայոց թագաւորին համապատասխան յանձնարարութիւններ տուել (նամակի սկիզբը. «Սազդեզանց քաց Արտաշիր արքայից արքայ՝ առ եղբայր Վեամշապուհ թագաւոր Հայոց՝ ողջոյն շատ: Ընկալայ զգրեալս ք...»)³: Դրանց մէջ մեզ համար կարեւոր է. «զՀամազասպ կացուցեն ի վերայ զարացի սպարապետ՝ մեր հրամանաւ, եւ ազգի դորա տացնս զգահն Կինգելորդ⁴ պատուոյ նախարարացդ... եւ զտունս վնասակարաց ազգացդ, զորս կալաց յարքունիս, թողցն ի քաց՝ աներկիւղաբար ժառանգել նոցին մնացորդաց, քայց գահուց հայրենականաց պատուոյն մի՛ արասցես արժանի. զի եւ մեք ի մեքում դիւանի հրամայեցաց գրել»: Ինչպէս նկատում ենք, Խորենացին երկու գլուխներում էլ արժարծում է Սասանեան արքայի եւ Սահակ կաթողիկոսի կողմից քննարկուած (եւ լուծուած ստա-

¹ Սասանեան արքաների ժամանակագրութիւնը (որը շարունակում է մնալ տարբերակներով) վերջին անգամ տն՛ն Կրպչաշ Զ., Армения и Сасанидское Иран (Историко-этнографическое исследование), Алматы, 2003, с. 387:

² ՊՀ, գլ. Գ.ձա, էջ 322-323: Շարունակութեան մեջ ոչ ազդու է. «Տի զերկուս զայս պապէս պահելն տփրաբար, զի բրժամ նստըր արքայ նոր, նոյն ժամաց փոխելն զորան՝ գտեալ ի գանձս արքունի, զնորայն տախտորեալ պատկեր, եւ զզիր զիւանին յայ փոխեալ նորա անուամբ՝ սուր ինչ գանազանեալ, ոչ քանակով զիմն: Իսկ երբ յանից ի տէրութեանն անս քաջութնս եւ արասցէ աշխարհագիր նոր, թողուին զայն, որ ի հնոյն փոխեցաւ, զի միայն նորոյն վեռազրեսցի անուն: Արդ Արտաշիր ոչ ժամանեալ ի կարծութենէ աւուրցն այլ անել աշխարհագիր՝ յայն որ յառաջնոցն փոխեաց, իր անուամբն հրամայեաց գրել...»:

³ ՊՀ, գլ. Գ.ձբ, էջ 323-324:

⁴ Այստեղ քննական հրատարակութեան աշխատակիցների դրած բուրջ չփոփոցում է. պետք է ընկալել (պայմանականօրէն պարզեցուած) «զհինգերորդ պատուոյ-գահն նախարարացդ»:

ցած) հայ նախարարների գահակարգութեան խնդիրներ, սակայն ոչինչ չի ասում ուղղակի «Գահնամակ»-փաստաթղթի վերաբերեալ (հակասակ, որ: Բ. Յարութիւնեանի վարկածի)¹: Բայց փոխարէնը՝ կարելի է, որ պատմիչի խօսքերն ակնարկում են մի շատ հին կարգից («գահուց հայրենականաց պատուոյն») շեղումների վերականգնման կամ չվերականգնման հրողութեան մասին:

Ինչ վերաբերում է իրական ժամանակագրութեան համեմատ ի յայտ եկող հակասութեանը, ապա հետազօտողները լուծում են այն՝ ենթադրելով, որ Սահակ Պարթեւը Տիգրանում հանդիպել է, հաւանաբար, ոչ թէ Արտաշէր Բ-ին, այլ կամ նրա որդի Շապուհ Գ-ին (383/384-388)², կամ, գուցէ, թո՞ւմը՝ Վեամ Դ Կրմանին (388-399)³: Կարելի է թոււմ, որ Պատմահայրն Արտաշէրի նամակից յետոյ գլխի վերջում ուշագրաւ նշում ունի, ըստ որի այդ արքայից արքայի՝ վրայ հասած վախճանից յետոյ գահակալած Վեամ Կրմանը *նոյն կերպ* բարեացակամ վերաբերմունք է ցուցաբերել Հայոց թագաւորի, աւագանու եւ *Սահակ Պարթեւի* նկատմամբ (քննադրում. «յորժամ եկն մեծն Սահակ եւ զամենայն պարգեւեալսն յԱրտաշէր հաստատեաց, մտաւ արքայն Պարսից Արտաշէր, եւ փոխանակ նորա թագաւորեաց Վեամ, որ եւ Կրմանն կոչեցաւ, ամս տասն. եւ *զնոյն* բարեկամութիւն կալաւ ընդ աշխարհիս Հայոց եւ ընդ թագաւորին մերում Վեամշապիոյ եւ *ընդ մեծին Սահակայ...*): Այդ տեղեկութիւնն ինչ-որ չափով մեղմում է պատմիչի վկայութիւնների *քոյոր* մանրամասների հաւաստիութեան վերաբերեալ ծագող կասկածը եւ թոյլ տալիս համարել, որ նրա ծեցի տակ ենթադրաբար եղած բուն աղբիւրում, գուցէեւ, կարող էր նշուած լինել Սահակին Պարթեւին Տիգրանում իրօք ընդունելութեան արժանացրած արքայից արքայի մասին, բայց ո՛չ յատկապէս Արտաշէր Բ-ի:

¹ Որ «Գահնամակ»-ում եւս Մամիկոնեանների դիրքը հինգերորդն է (որոշ վերականգնումով՝ ոչինչ չի փոխում, քանի որ Սահակի խնդրանքին անսած Պարսից արքայի կճեց յետոյ այդ կարգը սփոխ քնակամօրն չարմանալուած լինել գոնէ տասնամակնեի: Նոյնը վերաբերում է նաեւ Խորխոսունի մախազների՝ 387-388 թթ. ծեց քերած բարձր դիրքի չարմանակմանը:

² Տե՛ս Յարութիւնեան Բ., «Գահնամակի» թուագրման հարցի շուրջ... էջ 83-84:

³ Տե՛ս Վաղդանեան Վ., Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուրիներում, Վաղարշապատ - Ս. Էջմիածին, 2005, էջ 141: Հ. Պօլոս Անանեանը հնաբար է համարում անգամ Յազկերտ Ա-ի տարրերակը (399-420)՝ սակայն չբացատրելով նաեւ վերջինիս անազ եղբայր Վեամ Դ-ին (Հ. Պ. Անանեան, Գրոց գիւտի թուականը եւ Վեամշապուհ Հայոց թագաւորի կենցիկը տարին, էջ 139: Սիլբազգացին գիտածուրով նուիրուած Հայոց գրեթէ գիւտի 1600-ամեակին, էջ 590):

Մի փոքր շեղուելով մեր հիմնական նիւթից՝ տեղին նշենք, որ Շապուհ Գ-ի գահակալութեանը ծանօթ չի եղել ոչ միայն Մովսէս Խորենացին, այլև է դ. 40-ական թթ. կէտերին իր երկի շարադրանքն սկսած (եւ, ինչպէս ցոյց ենք տուել այլ տեղում, 659 թ. կէտերին դադարեցրած) Սեբիոսը¹, որն օգտագործել է Ե դարում չըրանատուած նշանուն-գուգահիւր արքայացանկի մէկ այլ՝ «մինչխորենացիական» տարբերակ²: Սակայն հէնց այդ արքայից արքայի մասին (այլ ոչ թէ Շապուհ Բ-ի) երկու գլուխներում գրում է Ղազար Փարպեցին³ (Ե դ. ամենավերջ), եւ թում է, թէ որեւէ երրորդ տարբերակի չգոյութեան պատճառով մենք պարտաւոր ենք ենթադրել, որ նա պէտք է յենուած յինէր իրեն աղբիւր ծառայած Կորիւնի խօսքերի վրայ, թէպէտեւ այդպիսիք քաջակալում են «Վարդ Մաշտոցի» երկի մեզ հասած ամբողջական ձեռագրում: Այսինքն՝ մենք համարում ենք, որ վերջինիս մէջ անհրաժեշտ է անպայման գտնել այն յարմար հատուածը, որտեղ ենթադրաբար կարող էր լինել Շապուհ Գ-ի յիշատակութիւնը՝ կորսուած, ըստ ամենայնի, մի վաղ գրչական վրիպման հետեւանքով: Ընդ սմին դժուար չէ նկատել, որ այդ յարմար հատուածն, առաւել մեծ հաւանականութեամբ, «Վարդ»-ի ա-

¹ Տես Սեբիոսի նախկնականի Պատմութիւն, Չորրորդ տպագրութիւն, քաղաքագրութեանը ձեռագրաց, հանդերձ առաջարակն եւ ձանձորագրութեանը ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1938, գ. 4, էջ 19 (1979 թ. իրատարակութեան մէջ գ. Ե, էջ 61, ափք ենք ունեցել՝ ցոյց տալու, որ 1979 թ. իրատարակութիւնը պակաս յարմար է օգտագործման համար, քանի որ նրա աշխատախորհրդ յարդարացուած շեղումներ է կատարել պահպանուած միակ ամբողջական ձեռագրից, տես Ա. Յակոբեան, Սեբիոսի Պատմութեան հատուածաբանմանն ինդիլը եւ Չուարթեցի տամարի կարտցման նախն գուխը, Հանդէս անտրեպ, ճճՁ տարի, Վիեննա-Երևան, 2005, էջ 213-270):

² Տես Անանեան Հ., Սեբիոսի Պատմութեան զրքի մասին քանի մը յուսարանութիւններ, Վենետիկ - Ս. Ղազար, 1972, էջ 81-108: Աղինակը սրբագրում է նախորդ քանատեղների վարկածնեղ եւ փաստարկում, որ այդ ետանուն արքայացանկը է դարի պատմիչը կարող էր վերցնել Փարսոսի «Պատմութեան» մեզ յիասած Ա եւ Բ դարութիւններում ենթադրաբար եղած «ժամանակագրական կանոն»-ից («որուն մէջ պէտք էր արտագրուած ըլլալ Ազաթանգեղոսի արձանագրութեան պատճենը, ինչպէս կը խոստանայ Սեբիոսն Ա. գլուխին յառաջարանը», էջ 108): Նշուած դարութիւնների խնդրի մասին վերջին անգամ տես նաեւ Առոն Ա., "История Армении" Феодосия Бузанда как источник "Повести о Ваганае" (Снова о первом и втором зпрятках Феодосия Бузанды), Кавказ и Византизм, вып. 5, Ереван, 1987, էջ 72-81:

³ Տես Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, Աշխատութեան Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ Մալխասեան, Տիֆլիս, 1904, գ. Ա.Ք, էջ 12-13, գ. Ա.Ք, էջ 18 («մեռաւ եւ Շապուհ արքայն Պարսից, եւ թագաւորեաց Կոստ որդի նորա... յետ մահուան Կոստայ արքային Պարսից թագաւորէր Յակոբեոս երբայր Կոստայ, որդի Շապուհ...»); Մատենադիւրը Հայոց, հ. Ա.Ք, էջ 2211, 2216:

արտական գլխում տրուած ժամանակագրական ամփոփումն է¹, որի մէջ կարելի է վերականգնելի համարել երեք բառ՝ «որդույ Շապիոյ արքայի» (այսպիսով՝ «թագաւորեալ Կրմանայ՝ Պարսից արքայի, [որդույ Շապիոյ արքայի], անս վեց...») հմմտ. արքայի... արքայի): Ի դէպ, այդ տեղից մի փոքր յետոյ դեռես Լորայր Քիզանդացին, ապա՝ Մ. Արեղեանը, Հր. Անտեանը եւ այլոք անհրաժեշտ են զտել՝ վերականգնելու «եւ Վեամայ՝ անս քսան» կամ «եւ Վեամայ՝ ուք եւ տասն» քառերը² (այսպիսով՝ «եւ Յազկերտի՝ անս քսան եւ մի, եւ Վեամայ՝ ուք եւ տասն, եւ] /հմմտ. եւ... եւ/ յատաջնումն անի երկրորդ Յազկերտի՝ որդույ Վեամայ, վախճանեցաւ երանելին»):

Տեղին նշենք նաեւ, որ նոյն տրամաբանութեամբ (այլ տարբերակի բացակայութեան պատճառով) պէտք է վերականգնում ենթադրել Պազար Փարպեցու մեզ հասած միակ գրչագրի Ա.ժբ գլխի սկզբում: Գլխի ասացին նախադասութիւնից («Յետ այտրիկ մեծաւ եւ Շապուի արքայն Պարսից, եւ թագաւորեաց Վեամ որդի նորա, որ էր Կրման արքայ»⁴) յետոյ անհրաժեշտ է բուրմ վերականգնել ինչ-որ վաղ վրիպման հետեւանցով մէկ պարբերութիւն ներքեւ տեղափոխուած 4-րդ նախադասութիւնը («եւ յետ մահուան Վեամայ արքային Պարսից թագաւորէր Յազկերտ եղբայր Վեամայ, որդի Շապիոյ՝ ի վերայ աշխարհին Պարսից»): Նրան, այսպիսով, հեղինակային սկզբնօրինակում յաջորդում էր բովանդակութեամբ արդէն լիովին իր տեղում գտնուող արտայայտութիւն՝ «յորմէ [իւնա՝ ի Յազկերտէ] խնդրեցին Հայք թագաւոր զնոյն միասնգամ

¹ Տես Կողմն, Վարդ Մաշտոցի, գ. ԻԲ, էջ 98; Կողմն, Վարդ Մաշտոցի, 1998, § 94, էջ 83; Մատենադիրը Հայոց, հ. ԱԲ, գ. Լ, էջ 257:

² Գրչական վրիպակով՝ Դիւնուպ. Լորայր Քիզանդացու, Հր. Անտեանի եւ Մ. Արեղեանի առ սրբագրումն ընդունուած է բոլորի նշումը:

³ Կողմնի քննական քննադրելի եւ ծանօթագրութիւններ ըստ Լորայրի (Լորայր Ն. Քիզանդացու դիւնուց, հրատարակող՝ Մ. Միսեան), Հանդես Ամսօրեայ, 62 տարի, փետնա, 1992, էջ 94, 128, 138 («եւ Վեամայ Չիզբորդի՝ անս քսան»); Կողմն, Վարդ Մաշտոցի, գ. ԻԲ, էջ 98, էջ 123, մտք. 173; Մատենադիրը Հայոց, հ. ԱԲ, գ. Լ, էջ 257; Անտեան Հ., Հայոց գրից, Օրնան, 1984, էջ 353 («եւ Վեամայ՝ ուք եւ տասն»); Kohlen, La Vie de Mesroc, Traduction annotée par J.-P. Mahé, - REArm., NS, t. 30, Paris, 2005-2007, p. 84 [«et Wam, six-huit ans»]: Օստ Հ. Անտեանի վերականգնելի տարբերակն է՝ «եւ Վեամայ՝ անս իննետասան» (Կողմն, Վարդ Մաշտոցի, 1998, § 94, էջ 88), իսկ ըստ Հ. Պողոսեանի՝ «[...անս քսան եւ մի]» համարելով Ե դարի պատկերացումների հետ (Լորեմացու օրինակով) եւ մկատել տալով՝ քսան եւ մի... քսան եւ մի (Լորայր եպս., Կողմնի ժամանակագրական Վերջաբանը, Լիոն, 1962, № 2-3, էջ 364):

⁴ Տես Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց, գ. Ա.ժբ, էջ 18; Մատենադիրը Հայոց, հ. ԱԲ, էջ 2218:

Խոսքով՝ զեղբայր Կոսմապիոյ, զոր յառաջնումն բանսարկութեամբ ետուն մերժել զնա Հայք՝ Շապիոյ արքային Պարսից ի թագաւորութենէ Հայոց»։ Այսպէս լիովին իր տեղում է յայտնուած նաեւ 3-րդ նախադասութեանը («եկեալ Խոսրով յաշխարհս Հայոց եւ կեցեալ ամիսս ութ վախճանէր...») շարունակող հինգերորդը՝ «Եւ ոչ կամեցեալ Յազկերտի թագաւորեցուցանել ի վերայ աշխարհիս Հայոց յազգէն Արշակունեաց՝ թագաւորեցուցանել ի վերայ սոցա զիւր որդին...»։ Քննարկուած վրիպման հաւանական պատճառ կարելի է համարել կամ ժամանակագրական տուեալներ հաղորդող լուսանցագրութիւններից (զուտ իբրեւ վարկած հնարաւոր) սխալ տեղում արտագրուելը, կամ մի այնպիսի գրիչ-խմբագրի անյաջող նախածեռնութիւնը, որը նկատել է զխի սկզբում նշուող Պարսից արքաների գահակալութիւնների յիշատակուելը (Կոսմ Կրման եւ Յազկերտ տղայրների) եւ, մտածելով, թէ յաջորդող տեղեկութիւններն էլ են նշուող վերաբերում, սկզբնամասի՝ երկրորդ արքայի մասին հատուածը բաժանել-իջեցրել ու միացրել է այն կտորին, որը կրկին նշում էր նրա անունը («Եւ ոչ կամեցեալ Յազկերտի...»)։ Նախորդ բանասերները նշուած հակասութիւն անսպասելի թեթեւութեամբ վերագրել են ուղղակի Փարպեցի-պատմիչի կոպիտ վրիպմանը²։ Իրականում, ճիշտ կը լինէր մի փոքր էլ խորանալ ու նկատել, որ «սոս ցանկալի» Կորիւնին երիցս յանուանէ յող եւ իր այդ աղբիւրը քաւականին խնամքով օգտագործող Ղազար Փարպեցին ուղղակի չունէր այնպիսի գաղափարական մօտեցումներ կամ ժամանակագրութեան մասին իրաւտեսակ պատկերացումներ (Նորենացու եւ Աբիուսի ետանուն-զուգադիւր յախասակների ձեռով), որոնք ինչ-որ կերպ կարող էին հիմք դառնալ նման իրօք «աննկարագրելի» վրիպման համար, հետեւաբար վերջինս կարող էր ի յայտ գալ միմիայն մեզ հասած բնագրի գրչագրական թերիների հետեւանքով³։

¹ Շատ ձեռագրի տպագրում գեղարույ՝ Կերչին երեք քառեղ պիտի ընկալել (պայմանականորէն պարզեցուած)՝ «միսանգամ զոն Խոսրով»։

² Տե՛ս, որ. Անատեան Հ., Հայոց զրեղ, էջ 382 (որպէ՛ն արքայելի է Փարպեցու տգիտութիւնը)։ Անանեան Հ., Չրոց գիտի թուականը եւ Կոսմապիոսի Հայոց թագաւորի վեցերորդ տարին, էջ 129-131 (Միջազգային գիտատեղով նուիրուած Հայոց զրեղի գիտի 1600-ամեակին, էջ 581-583)։

³ Հմեռ, որ. Ստեփաննոս Ասողկի բնագրի մի թերիի աշխուլ նոյն Հր. Անատեանի յօսքը (Հայոց զրեղ, էջ 387). «Իհարկէ Ասողին այնքան անմիտ չէր, որ այսպիսի ինքնաբերական զուր տար. պէտք է ուրեմն կարժել, որ ձեռագիրը լախազանց խանգարուած է»։ Փարպեցու ձեռագրի քննադատական վիճակի մասին մանրամասն տես Մուրադեան Պ., Իւզգաշեան Կ., Ղազար Փարպեցու «Պատմութեան» նորայայտ

Սահակ Պարթևի Տիգրանյան զործերի մասին Մովսէս Խորենացու երկրորդ վկայութեան համաձայն՝ երբ 21 տարի թագաւորած Վռամշապուհը վախճանուեց (414 թ., իրականում փաստացի 28 տարուայ իշխանութիւնից յետոյ), Արտաշէր Բ-ի (իրականում Շապուհ Գ-ի) եւ Վռամ Դ-ի օրերից ի վեր Անյուշ բերդում «կապեալ» Խորով Դ-ն կրկին Հայոց գահին հաստատուեց այն բանի շնորհիւ, որ կաթողիկոսը մեկնեց Յազկերտ Ա արքայի մօտ ու համոզեց նրան¹: Պատմահօր հաղորդումը զուգահեռ չունի Պազար Փարպեցու համապատասխան դրուագում, որտեղ նշուած է միայն Վռամշապուհի՝ «հասեալ ի յերկար ծերութիւն» եւ «յանկողնի իւրում խաղաղական հանգստի» մահուանից յետոյ Պարսից արքայի կողմից Խորովին Խորովին երկրորդ անգամ թագաւորեցնելու մասին («որո՞՞մ խնդրեցին Հայք թագաւոր զնոյն միւսանգամ Խորով՝ զեղբայր Վռամշապուհ... եւ նորա կատարեալ զխնդիրս նոցա՝ թագաւորեցուցանէր դարձեալ զԽորով, զայր յոյժ ծեր»)՝ իսկ Կորինն իր վարքագրական ոճով շարադրանքի թուում յարմար չի գտել արծարծելու անգամ դա: Չնայած այդ հանգամանքին՝ ուսումնասիրողներն, ըստ էութեան, կասկածի տակ չեն ատել Մովսէս Խորենացու վկայութեան հաւաստիութիւնը²:

Եւ երրորդ դէպքում Պատմահայրը հաղորդում է 428 թ. Արտաշէս Վերջին թագաւորի ու նրան սատարող կաթողիկոսի՝ Վռամ Ե Գոռի կողմից Տիգրան կանչուելու եւ ամբաստանուելու, առաջինին գահընկէց անելու, քանտարկելու (եւ այդպէս՝ Հայաստանը մարզպանութեան վերածելու), իսկ Սահակին կաթողիկոսի պաշտօնից հեռացնելու եւ որջ ունեցուածքը քսեալգրաւելու մասին³, որից միայն 3-4 տարի անց նա

պատասխան, ՔՄ, № 11, Երեւան, 1973, էջ 7-32:

¹ ԳՀ, գ. Գ.ժ, էջ 329 (քննարկում է «երթեալ մեծին Սահակայ ի դուռ արքային Պարսից Յազկերտի խնդրել զկապեալս Խորով, որ զկնի մահուանն Արտաշէր լուծեալ պահեցաւ արձակ յԱնուշն [տարբ. յԱնուշն] կողեցեալ բնոյի յարուս Վռամս: Եւ Յազկերտի հասնեալ՝ կատարել զհայցումսն. սայլով նմա զաշխարհիսն՝ արձակ է ի Հայք»):

² Պազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց, գ. Ա.ժ, էջ 18 (նախենազից Հայոց, հտ. Ա.Բ, էջ 2218): Հմմտ. վերնում, ծնթ. 77:

³ Տե՛ս Յաւատու Դ., Армянские Армавны..., 4. I, с. 293; Մ. արքեպ. Օրմանեան, Հայապատմ, հ. Ա. Վարդաշապատ - Ս. էջմիածին, 2001, էջ 327:

⁴ ԳՀ, գ. Գ.Կ, էջ 348-349: Տիգրանյան վերջին դրուագի այս առաջին կէտի մասին (428 թ.) հաղորդում է նաեւ Փարպեցին (Պազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց, գ. Ա.ժ, էջ 23-25; Սաւոննազից Հայոց, հ. Ա.Բ, էջ 2221-2223): Շատ երկու պատմիչներ իր կաթողիկոսի գահը քանդ հասաւ Սահակի զխաւոր ամբաստանիւն՝ Արծկի երեք (Քզնուհիթում) Արմանկին, որը կարճ վայելեց իր դասանունութեան վարճը, քանի որ ամխնեղ անց հալածուեց ու պաշտօնանկ արուեց իրեն սատարած նախարարների

ներման արժանացաւ ու կարողացաւ հայրենից վերադառնալ, սակայն լոյ՛ իբրեւ խիստ կոճատուած իրաւասութիւններով «հակառակաթոս» կաթողիկոս (Բողոքիչի փոխարէն կարգուած ասորի Շամուլ «անարժան հոմիլիստան»-ի հետ, որին վերապահուած էր՝ վարելու բոլոր տնտեսական ու վարչական գործերը)¹: Վերջին վճօից բաւարարուած Սահակը դիմել է արքայից արքային (Նորենացու խօսքերով՝ իր համազգի պարքեւ պալատականի միջոցով) երկու խնդրանքով, որոնցից մէկն էր՝ «զգահ նախարարացն Հայոց, որպէս կարգեալ Վրտաշրո՛ վարեցան մինչեւ ցայժմ՝ նորին աւրինակաւ հրամայեսցէ եւ առ յապայ, զի մարգպանք պարսիկք մի՛ կարասցեն... փոփոխել ըստ կամաց իւրեանց», ընդ որում այդ խնդրանքը բաւարարուել է («Այնմ լսող եղեալ Վրամայ՝ հրամայէ զամենայն կատարել»)՝²:

Հարկ է նշել, որ արդէն Գր. Նալաբեանցի ուշագրաւ դիտարկմամբ՝ կարծես բէ, Պատմահայրն իրար է միացրել Սահակ Պարթեւի երկու տարբեր Տիգրանեան այցելութիւններ՝ 428-ին եւ 432-ին³: Մի առիթով մենք ես նկատել ենք⁴, որ հէնց այդ տարիների միջեւ են ընկնում Կորիւնի եւ նոյն Նորենացու կողմից բաւականաչափ յուսաբանուած երկու կարեւոր իրադարձութիւններ՝ Մաշտոցի երկրորդ հիւսիսային ուղեւորութիւնը (դէպի Աղուանք, Բաղասական, Գարդման, ապա՝ Վիրք եւ Տաշիր), որից վերադարձին նրան դիմաւորում էր Ս. Սահակը՝ «ի սովորական տեղիսն» (բառացի ընկալման դէպքում՝ Վաղարշապատում)⁵:

խնդրանքով: Պարսից արքան կաթողիկոս կարգեց (ըստ Նորենացու) անի վարժար Բողոքիչ անորուն, որն էլ հետագոյն 3 տարի իշխելուց յետոյ:

¹ ՊՀ, գլ. Գ.ԼԵ, էջ 350-352 (տե՛ս նաեւ ԿԸ գլխի վերնագրում, էջ 353):

² Լոյն տեղում, էջ 352:

³ Ճաւորուի Դ., *Археология Арцакуայ...*, 4, է. 293-294:

⁴ Տե՛ս Յակոբեան Ա., Մաշտոցի երկրորդ հիւսիսային ուղեւորութեան ժամանակը եւ խնդիրները, Միջազգային գիտաժողով՝ նուիրուած Հայոց գրերի զիտի 1600 ամեակին, Երեւան, 12-17 Սեպտեմբերի, 2006 թ., Տեկուցումների մուլտիպոլը, Երեւան, 2006, էջ 122-131:

⁵ Տե՛ս Կորիւն, Վարդ Մաշտոցի, գլ. ԺԸ, էջ 74: Մատենադիրք Հայոց, հ. Ա.Բ, գլ. ԺԹ, էջ 247: Կորիւն, Վարդ Մաշտոցի, 1998, § 66, էջ 60-ում՝ «ի բազաւորական տեղիսն»՝ ըստ Հ. Ալիմեանի անհարկի ուղղման (տե՛ս էջ 110, ծնթ.): Նորենացու ասացին դրուագի (գլ. Գ.Ը, էջ 329) ներկայացմամբ՝ Վիրքից ու Աղուանցից Մաշտոցի վերադարձի պահին Սահակը զբաղուած էր Ա. Գրից բարգձանութեամբ. «զտանէ զձե՛ն Սահակ բարգձանութեան պարասեալ յարուոյն՝ յը ինելոյ յունի» (ոմմտ. Տեր-Մինասեանց Ե., Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորոց եկեղեցիների հետ, Ա. Էջմիածին, 1908, էջ 51): Ժխտ է. այդ գլխում խասնուած են հիւսիսային երկու ուղեւորութիւնների տունայնորը, բայց հասանական է, որ Սահակի բարգձանութիւնների պահը Պատմահայր

Եւ Եփեսոսի 431 թ. տիեզերածողովից անմիջապէս առաջ աշակերտնե-
 րի մի խմբի նախապատրաստումը եւ ուղարկումը Քիզանդիոն խորա-
 նալու յունական դպրութեան մէջ¹ (բայց զուցէ եւ՝ հէնց ժողովին ներկայ
 լինելու նպատակով): Ըստ այսմ՝ Սահակին ամբողջ չլոյս տարի Տիգր-
 նում պահելու մասին Պատմաօր նշումը զուցէ հնարաւոր է համարել
 կենդանի շարադրանքի բովում ծնուած չափազանցութիւն-շեղում, իսկ
 իրելու թէ 432 թ. արքայից արքայի կողմից պարզեւուած «շնորհները»
 (ներումը եւ «հակաօակաթո» կաթողիկոսական կարգավիճակը), զու-
 ցէ, կարելի է իրապէս ստացուած համարել արդէն ամբաստանիչ Սուր-
 ճակի կաթողիկոսութեան անկասունակ ասարտից յետոյ (այսպիսով՝
 թուագրելով 428-ի շնորհագրկումից մի քանի ամիս անց՝ նոյն տարեմու-
 տով կամ յաջորդ տարուայ սկզբով): Ինչպէս վերելում նշեցինք, Պա-
 զար Փարսեցու մօտ նկարագրուած են միայն 428 թ. դէպքերը, որից յե-
 տոյ պատմիչն անցնում է քարոյախօսական զեղումների եւ Ներսէս Մե-
 ծի տեսիլի երկարաշունչ շարադրանքին՝ այդպէս էլ ուղիղ չնշելով կա-
 թողիկոսական պաշտօնին Սահակի վերադարձի մասին²: Մեր վարկա-
 ծին չեն հակասում նաեւ կաթողիկոսի Տիգրնեան ուղեւորութիւնների
 մասին ոչինչ չասող Կորիւնի հաղորդած յարակից տուեալները, թէպէտ
 պարզ է, որ իր վարքագրական երկը նա շարադրել է արդէն իր երանե-
 լի ուսուցիչների՝ «լցեալ ատուրքք երկայն ժամանակաւք եւ վայելչացեալ
 աստուածաբեր պտղոցն քարութեամբք» վախճանից (439 թ. Մեպտեմ-
 բեր եւ 440-ի Փետրուար) ոչ շատ անց, քայց՝ 440-ական թթ. երկրորդ
 կէսի՝ ըստ ամենայնի, քարուք տարիներին ու, կարծես թէ, ուրախ է ե-
 դել (նաեւ՝ ժանրի ոճին հարազատ) լրիւ մոռացութեան տալու ոչ վաղ
 անցեալի ինչ-ինչ անուրախ պատահմունքներ: Բայց բոլոր դէպքերում
 հաւաստին այն է, որ ժամանակային մեծ կամ փոքր միջակայքից յետոյ
 Սահակ Պարթեւն իր կեանքի վերջին՝ շուրջ 10 տարիներն ապրել է կա-

աղբիւրում (ինչպէս նաեւ՝ իրականում) հանցնել է հէնց երկրորդ ուղեւորութեան
 ասարտի հետ, քանի որ Կորիւնը եւս Մաշտոցի՝ Տաշիրից վերադարձը նշելուց յետոյ
 զրուս է քարգմանական խնդիրների մասին (գլ. ժԹ եւ § 67-68. «Յետ այսորիկ ուշ եղեալ
 երկրունց երանելեացն զիրեանց ազգին դարութիւնն առաւելոյ, յարցել եւ դպրաց
 ուսուցանել՝ ձեռն ի գործ արկանէին ի քարգմանել եւ ի գրել՝ ըստ յատարարն
 սովորութեանն...»):

¹ Կորիւն, Վարդ Մաշտոցի, գլ. ժԹ, էջ 74; Կորիւն, Վարդ Մաշտոցի, 1968, § 68-69, էջ 62;
 Մատենադիրք Հայոց, հտ. Ա.Բ, գլ. Ի, էջ 247-248; ՊԿ, գլ. Գ.Լ, էջ 341:

² Պազարայ Փարսեցոյ Պատմութիւն Հայոց, գլ. Ա.ԺԹ-ժԺ, էջ 25-37 (Մատենադիրք Հայոց,
 հտ. Ա.Բ, էջ 2221-2234): Հմմտ. վերելում, ծնթ. 84:

քողիկոսական իր իրաւունքները վերականգնած, ընդ որում դրանց վերականգնման մասին վճիռը կայացուել էր Տիգրանում:

Այդ, ուսումնասիրողներն, իբրև կանոն, փորձել են նոյնացնել «Գահնամակ»-ի նամակ-առաջաբանում եւ Մովսէս Խորենացու ներկայացրած այս երէք-չորս դրուագներից մէկում կամ երկուսում յիշատակուած իրողութիւնները, իսկ տարբերութիւնները վերագրել են Պատմահոր ունեցած տեղեկատւութեան ու դրա ընկալման թերիւներին (Ն. Ադոնցն անգամ ենթադրել է, թէ վերը նշուած առաջին դրուագի շարադրանքի հիմքում բացառապէս ընկած են պատմիչի ձեռքի տակ եղած «Գահնամակ»-ի տուեալները)¹: Յատուկ չանդրադասնալով արտայայտուած կարծիքներին՝ կարելի է ուղղակի նշել, որ վերը կատարուած քննութիւնից իրականում երեւաց այլ պատկեր. ընդհանուր առմամբ, մենք տեսանք՝ մի կողմից՝ Խորենացու հաղորդումներից իրաքանչիւրի, միւս կողմից՝ «Գահնամակ»-ի նամակ-առաջաբանի տուեալների ինքնուրույնութեան ու հաստատութեան որոշակի աստիճանը: Այդ պատճառով՝ բուն է, թէ թուատրելի կը լինէր միմիայն այն վերապահումը, թէ Պատմահայրը, նկատելով «Գահնամակ»-ի տուեալների հետ իր իմացած տեղեկութիւնների ինչ-ինչ զուգորդութիւններ, զուցէ, իրօք փորձել է որոշ ղէպերում համաձայնեցնել դրանք: Օր.՝ արդէն Ն. Ադոնցը նկատել է, որ այդպիսի տպաւորութիւն է առաջանում Կեանքի Նահակ Պարթևի ներկայացրած վերջին խնդրանքի բաժնից՝ «զգահ նախարարացն Հայոց, որպէս կարգեայ յԱրտաշէր՝ վարեցան մինչեւ ցայժմ...», որոնք կարելի է զուգորդուած համարել «Գահնամակ»-ի «զօսմականն զնամակն, զոր Արտաշէրի ի դիւանին տեսի» հատուածի հետ: Սակայն հէնց այս օրինակը լաւագոյնս ցուցանում է, որ Պատմահոր հնարաւոր միջամտութիւնն ամենեւին չի եղել այն աստիճանի, որպէսզի ուշադիր ընթերցողը Սահակի յղումը չկարողանայ վերագրել հէնց առաջին Սասանեան արքային², ում օրօք հաստատուած

¹ Адоиц Н., Армения в эпоху Юстиниана..., с. 267-271.

² Իսկ մեր ժամանակների մասնագէտի հայացքով՝ «Հայաստանի մեծ արքայ» տիտղոսով 262-272 թթ. բազաւորած Որմիզդ-Արտաշէր - Արտաշէս Սասանեանին, որն էլ, զուցէ, անկախ զրականութեան մեջ կուտակուած ծաւալուն ասանդիթից, հոռմացի մի պատմագրոյի կողմից (տն՛ս Julius Capitolinus, *Valerianus duo*, § 6-7) կրուած է նաեւ Արտաշազը (Artabases, հմմտ. *Oromazd-Artasir): Շապուհ Ա-ի Քաւար-Յ Տարդուշտի եօպեգու վիճազի յայտնաբերումից յետոյ Սասանեաններին ենթակա Հայաստանում Որմիզդ-Արտաշէրից բացի այլ տիրակալ ընդունելու անհասանկանութեան մասին մանրամասն տն՛ս Chaumont M.-L., *Recherches sur l'histoire d'Arménie de l'avènement des Sassanides à la conversion du royaume*, Paris, 1969, pp. 85-86.

կարգի մասին (որը կրկնում էր առաջին Արշակունի թագաւոր Վաղարշակի հաստատած կարգը) ակնարկ կայ ոչ միայն «Գահնամակ»-ում, այլևս հէնց «Պատմութիւն Հայոց»-ի Բ.Է գլխի՝ վերելում բերուած դրուագում¹: Հետեւաբար անգամ վերջը նշուած վերապահումը թուլատրելի է, գուցէ միայն այն չափով, որչափ որ Պատմահայրն Արտաշիր Բ-ին վերագրել է իրապէս անհաստատի գործեր, այդ թւում նախարարների գահակարգութեան խնդիրներին ասելուող (քայք կրկին շենք կարող մտտանալ, որ սխալի հիմքում ընկած էին Ե դ. երկրորդ կէտի թիւր ժամանակագրական պատկերացումները, որոնց համակարգման խորենացիական ճիգերի արդիւնքում Արտաշիր Բ-ի իշխանութեան չորս տարիներն, ըստ էութեան, պատահականօրէն համընկել էին Մեծ Հայքի մասնատմանը յաջորդած ժամանակին²): Այսպիսով՝ մեր նշած թուլատրելի վերապահումը եւս ոչ մի չափով հիմք չի տալիս՝ կասկածի տակ ասելու: Տիրոնում Սահակ Պարթեւի՝ կարեւոր խնդիրներ լուծած լինելու մասին փաստերը ոչ Ղ դ. վերջերին³, ոչ Վտանշապուտի մահուանից յետոյ, ոչ 428-432 թթ., եւ ոչ էլ, ինչպէս երեւում է «Գահնամակ»-ի առաջաբանից՝ Արտաշէս թագաւորի վեցամեայ իշխանութեան (422-428) առաջին տարիներին, այսինքն՝ նաեւ մի չորրորդ կամ հինգերորդ դէպքում:

Անկիւններ. այս նոր տարբերակով «Գահնամակ»-ի նամակառաջաբանի ամբողջ քննադիրը դառնում է չափազանց պարզ, եւ վերանում է քերականական անհարթութիւնները շրջանցելու, առանձին բառեր անտեսելու⁴ կամ լրացուցիչ վերականգնումներ կատարելու⁵ անհրաժեշտութիւնը: Թէպէտ, թւում է, թէ կարելի է փորձել կատարել ընդամենը մէկը՝ «արքայից արքայի եւ քարերարի» բառերին յաջորդող «եւ»-ի

¹ ԳՀ, գ. Բ.Է, էջ 215-216 (իմնու. վերելում, էջ 38, ճմբ. 3):

² ԳՀ, գ. Գ.ձ-ձա, էջ 320-322: Հմմտ. Աեթուսի ծով արեւմտում՝ ոչ պակաս խառնակ տարբերակը. «Երկրորդի ամի Արտաշիր արքային Պարսից թագաւորին ի վերայ Հայոց Արշակ եւ Վաղարշակ՝ անս Ե: ...Այլա թագաւորէ Պարսից Վտան՝ անս ժԱ: ...Յարի եղբորդի Վտանայ... թագաւորէ ի վերայ Հայոց Խտրով ոմն՝ հրամանա Պարսից արքային՝ անս Գ» (Աեթուսի եպիտաֆի Պատմութիւն, գ. Գ, էջ 19):

³ Բաց. ինքովէ, ոչ Արտաշիր Բ-ի, այլ, ինչպէս ենթադրում են ուսումնասիրողները՝ կամ Շապուհ Գ-ի, կամ Վտան Ղ կրմանի, կամ, անգամ՝ վերջինիս 399 թ. յաջորդած Յազկերտ Ա-ի օրոք (իմնու. վերելում, էջ 45, ճմբ. 2-3):

⁴ Հմմտ., օր.՝ Ստ. Մալխասեանցի թարգմանութեան ձեչ (Մովսէս Խորենացի. Հայոց պատմութիւն, էջ 336-339):

⁵ Տե՛ս Առուսի Ի., Армения в эпоху Юстиниана..., с. 270; Տարութիւնեան Բ., «Գահնամակի» թագաւորան հարցի շուրջ, էջ 73:

փոխարեն նախօրինակում ենթադրելով «Եի», այսինքն «հինգերորդի [ամի]»: Դրանով կը յարթահարուէր դեռես Գր. Խալաթեանցի նկատած քերականական ակնյայտ անհարթութիւնը¹, ու նաեւ պարզ կը դառնար Սահակ Պարթեւի նամակի ոչ միայն ամսաթիւը (Քաղոց ամի 17-ը), այլ յի ճշգրիտ տարեթիւը՝ Կոստ Գոտի թագաւորութեան հինգերորդ տարին (= 424 թ. հաշուած 420 թ. Նաւասարդի 1-ից², որն Օգոստոսին էր): Հետեւաբար՝ ճշգրիտ ամսաթիւը մեզ մօտ ստացում է 424 թ. Դեկտեմբերի 26-ը³:

Յաւելելի է նաեւ, որ ըստ Մ. Էմինի եւ Դ. Ալիշանի՝ «զօսմական զնամակլի» բառերը կարելի է վերականգնել «զ[վ]թամական զնամակլի»⁴: Սակայն, ինչպէս արդարացիօրէն նկատել են դեռես Գր. Խալաթեանցը եւ Ն. Աղոնցը, նման լրացման անհրաժեշտութիւն չի զգացուում, քանի որ «օամ» պահլաւերէն «ժողովուրդ» (նաեւ՝ «խասարակ ժողովուրդ») է նշանակում (որից կան «երամ» եւ «օամիկ»), իսկ «նամակ/նամա»-ն իրանական լեզուներում էլ նոյնն է՝ իր նաեւ «զրուածք», «վաւերաթուղթ» նշանակութեամբ⁵: Այդպիսով՝ Սահակ Պարթեւի նամակում աղբիւրագիտական առումով խիստ ուշագրաւ փաստերի թում յիշատակութիւն է պահպանուել նաեւ իրանական այն վաւերագրերի մասին (Ռամական նամակ), որոնք ամփոփում էին Սասանեան պետական աշխարհագրերի (այստեղ՝ բառացի թարգմանութեամբ՝ «ժողովրդագրերի», իսկ նորօրեայ եզրոյթով ասած՝ մարդահամարների⁶) ար-

¹ Տե՛ս Խալաթեաց Դ., *Армянские Армавкиды...*, ч. I, с. 297.

² Սասանեանները նոր արքայի աստիճան տարին հաշում էին նախորդին փոխարինելու տարուայ Նաւասարդի 1-ից (Christensen A., *L'Iran sous les Sassanides*, Copenhagen, 1926, p. 166):

³ 424 թ. Նաւասարդի 1-ը Օգոստոսի 12-ին էր (428-431 թթ. քառանկում այն Օգոստոսի 11-ին էր. տե՛ս, օր. Բրուսեան Գ., Օրացոց Շարց, *Վարդաշապատ - Ս. Էջմիածին*, 1997, էջ 130-131; Վարդանեան Ռ., *Շարց տօմարցը* (4-18-րդ դարեր), Երևան, 1999, էջ 16-17), Ռուսեարար Քաղոցի 1-ը՝ Դեկտեմբերի 10-ին: Հմմտ. Խալաթեաց Դ., *Армянские Армавкиды...*, ч. I, с. 296 («17-го числа армянского месяца к'ах'оца, соответствующего декабря месяцу - не показано, однако, какого года...»):

⁴ *История Армении* Москва Хоренского, 1893, с. 296; Ավելիդեան Գ., *Նամակներ*, էջ 355; Ալիշան Հ. Դ., *Արարատ*, էջ 430:

⁵ Տե՛ս Hübner H., *Armenische Grammatik*, Bd. 1, Leipzig, 1895, S. 147, 201, 233; Անտեան Հ., *Շարժուն արմատական բառարան*, հ. Գ, Երևան, 1977, էջ 425, հ. Դ, Երևան, 1979, էջ 140: Հմմտ. Խալաթեաց Դ., *Армянские Армавкиды...*, ч. I, с. 295; Ասոն Կ., *Армения в эпоху Юстиниана...*, с. 297.

⁶ Այդ աշխարհագրերի մասին գիտէր նաեւ Մովսէս Խորենացին (ՊԸ, գլ. Գ.Ճա, էջ 323. «Ի զոչի զհասնիսյս փոխեալ նորա անուամբ ... ոչ բառաւով զհինն: Իսկ երբ յամից էր

դիւնքները¹: Քայք պատմական դիտանկիւնով ամենից կարեւորն, ի-
հարկէ, այն է, որ «Գահնամակ»-ի ժամանակի մասին նոր ընկալումը
ցոյց է տալիս, թէ Հայոց վերջին Արշակունի թագաւորի ասօջին տարի-
ներին երկրի հասարակական եւ պետական կառոյցն ամրապնդելու
ուղղութեամբ որքան ծանօթ ջանքեր էին գործադրում հայ պատաս-
խանատու-նուիրեալները (ճիշտ այնպէս, ինչպէս դա արել էին ու անե-
լու էին դարեր շարունակ, անցեալում ու ապագայում, հայրենի հողի
վրայ ու տիգրոններում՝ ի հեճուկս յարադրուն եւ ամեն ազգային-կեն-
սականը կաթուածահարող հանրային յոռետեսութեան):

Այսպիսով՝ մեզ հասած «Գահնամակ»-ը կարող է ներկայացնել
ստորեւ տրուած՝ նոր կէտադրմամբ եւ տողատմամբ գիտա-քննական
բնագրով, որը կազմուած է մէկ գրչագրով պահպանուած մատենագ-
րական միաւորի (այն նշանակում ենք՝ А) նախօրինակի վերականգն-
ման սկզբունքներով²: Այդ բնագրից յետոյ ներկայացնում ենք նաեւ մեզ
հասած մրակ գրչագիր օրինակի՝ թիֆլիսեան մագաղաթեայ պահպա-
նակ-պատահիկի զոյգ էջերի վերծանութիւնը (Հ. Ղ. Ալիշանի՝ «Այրա-
րատ»-ում հրատարակած սեւ-սպիտակ լուսանկարից, ինչպէս նաեւ
Արշակ Բանուչեանի՝ Ս. Ղազարի վանքի քանգարանում պահուող բնօ-
րինակից նորերս արուած գունաւորից, այդ առիթով յայտնում եմ հե-
տազօտողին իմ երախտագիտութիւնը), եւ վերջում՝ նոր աշխարհաբար
թարգմանութիւնը (մասնակի):

տեղութեան ան քազումս եւ արասցէ աշխարհազիր նոր, թողո՛ւն զայն, որ ի հնդն
փոխեցաւ, զի միպն նորոյն վերագրեացի անուն: Արդ՝ Արտաշիր ոչ ժամանեալ ի
կարծութենէ ատուրնն այլ ասնել աշխարհազիր՝ յայնմ որ յասացնոցն փոխեաց, իր
անուանն հրամայեաց գրել...»): Հմտ. վերեւում, էջ 44, ճմբ. 2:

¹ Ի դէպ, Ն. Աղոնցը (Армения в эпоху Коммунизма..., с. 297) փորձում է վիճարկել արդէն
Գր. Խաչատրեանի կողմից կատարուած (որոշ շեղումով) այս դիտարկումը (հմտ.
Хачатурян Г., Армения в Архаике..., ч. I, с. 296. "...в архаике царя... также как существо
время означенных годов (в) - податным числом крепостных...") եւ «տմական» եզրորդի
տակ «հեծելազօրային» («երանակ-աշին») իմաստ տեսնել: Անպայքն դա չի թուում
ենթատեքստի րովանդակութիւնից, հակառակ հետազօտողի անընդհատ պնդումների՝
«Տօրանամակ»-ում ուղղաւի նշուած է Հայոց «մարտիկ արանց» (թարգմանում է՝
«զօրանան», «տազմիկ») քանակը, այլ ոչ թէ միպն հեծելազօրի: Ընդ սմին՝ հայ
նախարարական հեծելազօրը յէր կարող 84 հազար կազմել, հմտ. փաստաթղթի
անկիւնիման մէջ՝ «լինի թիւ մարտիկ արանց, որ ընդ ազգայն՝ ՉԴ-ից հազարաց»:

² Օգտագործել ենք հետեւեալ փակագծերը. [...] – վերականգնում; [...] – աւելորդ տառեր;
... – կրտումս հատուած:

[Ա]յիա կայ² խնդիր արարեալ ի զորան արցունի յԱրտաշէսի³ բազա-
տրի՝ զոր⁴ ի Տիսպոնն, խաւսեցեալ եթե՝ ես զտամականն⁵ զնամարկն⁶,
զոր Արտաշէսի ի դիւանին տեսի:

Ի Քաղոց ամսոյ ի⁷ ժե-ի⁸ Կոսմայ արցայից արցայի եւ բարերարի Ե-
ի⁹ գիր արարի եւ Սահակ կաթողիկոս, եթե¹⁰ որպէս Չեր բարերարու-
թիւնը¹¹ հրաման տացէ Հայոց ազատաց եւ տանուտէրանց՝ որպէս յա-
տաց առ Հայոց ազգին եւս¹² նոյնպէս եւ ի Չերուս դիւանի շահիւմա-
րոյն¹³ ասնել:

¹ Ա յից Գահնանակ... Հայոց (վերականգնում ըստ առաջաբանում նշուած անուանման),
այ վարկանները ըստ Ռիտտանտի: Գահնանակ նախարարացն Հայոց ըստ Ատ.
Օրդինանի: Գահնանակ իջեանացն Հայոց կարող են ուղղակի ուշ գտական հոգի վրայ
ծագած դիտուել:

² Ա Հակայ վիս [Ա]յիա կայ (վերականգնում. Ա. Էմինը եւ Դ. Ավիշանց վերականգնելի են
համարել [Ն]այիակայ, իսկ Լ. Արոնցը [Մ] Նայիակայ)

³ Դ. Ավիշանի հրատարակութեան մէջ, հասանաբար, տպագրական վրիպակով
[Ա]րտաշէսի

⁴ Գուգէ, կարելի է վերականգնելի համարել որ փն զոր (ըստ Բ. Յարութինեանի չփոք)

⁵ Ըստ Դ. Ավիշանի վերականգնելի է գրվեանման վիս գտանականն (A)

⁶ Բաթի վերջին տասերը (ըստ բախի երկու) կորել են պատահիկ-պահպանանց նոր
մտազգում կարելիս փորում 5 անցքերից 2-րդի մէջ, թէպէտ վերելի երկու յնչին կետեր
յուսանկարում նշմարում են (= փն, իզաճեսային ոճի-ն թիչ իստանական է). Ա. Էմինը
վերականգնել է ճանակահի (Գ. Անվիշան, Լամակներ, էջ 355), Դ. Ավիշանը լոկ ճի.
Լ. Արոնցը քայ է քորել

⁷ Լ. Արոնցի մօտ այս Ի-ն բացակայում է հասանաբար, տպագրական վրիպակով

⁸ Այս Ի-ին յուսանկարում յստակ ընթերցող խոշոր գիշատատով է (զրդի քորած
վերջակէտից յետոյ՝ ժե՝ Ի), քայց զարձանալիորեն երեք հրատարակվելներն էլ նա
փոխաբեն ժե են վերձանել

⁹ Ա բարերարի ձե փն բարերարի Ե-ի (վերականգնում. իմա՝ «Ե-երրորդի [անի]», իմնու.
երկարագիր Ի-ի, ըստ Լ. Արոնցի եւ Բ. Յարութինեանի վերականգնելի է՝ բարերարի ձե
[Թաղի])

¹⁰ Հրատարակիչները վերձանել են՝ թե փն ձեթ, իսկ երկու տող վեր՝ ձեթ, քայց
յուսանկարում երկու դէպքում էլ ձեթ-ն է յստակ ընթերցում (այ վաղ գրապատում եւս
երկրորդ ձե է անելի յամախ)

¹¹ Գրիցը վրիպել է պատուոյ նշանը. քոլոր հրատարակիչները վերականգնել են ի-ց
ասանց նշման

¹² Այս ձեքայը, թերեւ, պատահմամբ վրիպուել է Լ. Արոնցի հրատարակած ընագրում

¹³ Բաթի յ տասի ստորին մասը կորել է պատահիկ-պահպանանց կարելիս փորում 5
անցքերից 4-րդի մէջ (վերելի մասը յուսանկարում նշմարում է). վերականգնումը
կատարել են քոլոր հրատարակիչները, ըստ Գ. Ասայանեանցի վերականգնելի է
շահիւմանը (Մաս 1, էջ 295)

Որ յայսմ հետև Հայոց ազատաց եւ տանուտէրանց զահ ի յայտ լինէր, նորմախ Ներսեհ՝ հրամանաւ արքայից արքայի, եւ ես՝ Սահակ՝ Հայոց կաթողիկոս, կնքեցաք զԳահնեմակին² եւ եղաց մատանի զարքայից արքայի եւ զմերս:

Եւ է այսպէս արդար եւ ճշմարիտ³.

Առաջին իշխանն⁴ Հայոց եւ Մախդազն⁵,

Ա.⁶ Սինեաց տէր,

Բ. Սապտն,

Գ. Արծրունեաց տէր,

Դ. Մամիկոնեաց տէր⁷,

Ե. Շահապն Օռփաց տէր⁸,

Զ. Մոկաց տէր,

Է. Ռչտունեաց տէր,

Ը. Վահունեաց տէր,

Թ. Կասպեից⁹ տէր,

Ժ. Անձաւացեաց տէր,

ժԱ. Ապահունեաց տէր,

¹ «Սահակ անուան մկրտատառերը մնացել են պատահիկ-պատահական կարելիս փորոսած վերջին անցքի մէջ (վերականգնուող կատարել են բոլոր հրատարակիչները)

² Նախորդ հրատարակիչների վերծանած զԳահնեմակին ըստ Ն. Արոնցի ցնկալելի է զԳահնեմակն էջ 270, ձևք. 1, եզրոյցի այս մեջ՝ Գահ-Տեմակ-ի գուցէ, կարող է դիտուել իբրև իրանական իգաֆնտաֆն կատարածքի նշան

³ Ն. Արոնցի մօտ տպագրական վրիպակով է՝ ճշմարիտ

⁴ Ն. Արոնցի մօտ, հասանաբար, տպագրական վրիպակով է՝ իշխան

⁵ Սատնեացիների մօտ այս գործակալութեան անուանումը Մախդազ տարբերակով է ի-«Տարանանակ-ի՝ Կրնտնեան Պեան... Զ. Արղիտտունի - Ո [1000] մարտիկ պոզը

⁶ Գուցէ, այս Ան յաջորդ թուահամարները կարելի է հետագայ արտագրողի յանելում համարել, կամ էլ՝ չարունակող նախորդ մայրնազ-իշխան-ի թուահամարին ըստ Գ. Խաչատրեանցի Մաս I, էջ 294, Մաս II, էջ 114)

⁷ Ըստ Ն. Արոնցի վերականգնելի է՝ Դ. Մախդազունի, Ե. Մամիկոնեից տէր փն Դ. Մամիկոնեից տէր (նմուտ. Ուխտանէս, գ. Ա.Ի, տնս վերնուսմ, էջ 30, ձևք. 4-6)

⁸ Գուցէ, կարելի է վերականգնելի համարել՝ Ե. Շահապն Օռփաց տէր փն Ե.

Շահապն Օռփաց տէր (տնս Ապարանգեղոսի իշխանացուցակում՝ Նախնորդ իշխանն Օռփաց աշխարհին... իրնքտաւաննորդ իշխանն յարապ յձ. յահապ Տարանանց եւ Վր գառաթի, բոլոր դէպքերում, հակասան Բ. Յարութիւնեանի դրոյցի՝ «Գահնեմակ-ի Օռփաց = Մեմն Օռփաց, ինչպէս որ եղել է յուրաբն թարգմանութեանը պատահական «Գրիգորի վարդ-ում. Նախնորդ իշխանն Ան Օռփացի որդ Միքազեանցի մօտ է գտնուել (տնս Gerbe G., 1948, p. 73; Ապարանգեղոս, 1877, էջ 178)

⁹ Թերեւս, կարելի է վերականգնելի համարել՝ Կասպեից փն Կասպեից (տնս Յակոբեան Ա., 2009, էջ 336)

- ԺԲ. Կամսարական,
 ԺԳ. Այդ Ապահունի¹,
 ԺԴ. Կանանդացին,
 ԺԵ. Ամատունի² տեր,
 ԺԶ. Գողթան տեր,
 ԺԷ. Չնունաց տեր,
 ԺԸ. Այդ Անձաացի,
 ԺԹ. Տայոց,
 Ի. Բասենոյ դատաւորն³,
 ԻԱ. Չնթունաց տեր,
 ԻԲ. Կարծաունին,
 ԻԳ. Գարդմանայ⁴ տեր,
 ԻԴ.⁵ Սահլախունին⁶,
 ԻԶ. Գաբելնից⁷ տեր,
 ԻԷ. Արեղնից տեր,
 ԻԸ. Ախնաց երկրորդն,
 ԻԹ. Արծրունաց երկրորդն,
 Լ. Արծրունաց երրորդն,

¹ Պատահելով երկրորդ քաղ վերջապատով միացած է առաջինին *Աղբալաւորն* նրան էլ եւ միս երեք դէպքում *ԺԸ. Արանձաւացի* *ԼԶ. Աղբաբոնանն* *ԼԷ. Արցիկաբանն*

² «Ճորանամակ»-ով, թերեւ, գրչական վրիպակով *Արեղնեան* *Պատն...* *Բ. Անտրոնի* նրա զօրաքանակի թուանշանը եւս, զուցէ, կարելի է համարել երկաթազիր տասերի շիտի արդեւնք եւ վերականգնել *Տ* (4000) փոխ *Մ* (200) յիշենք, որ ոչ շատ անց 440 եւ 450-461 թթ. Կահան Ամատունի-ն Հայոց առաջին պաշտօնեան էր՝ հազարապետը (ըստ Կրդիւնի ԻԶ գլխի՝ ի զննութեամբն *Արցիկեանն* առաքելոսն՝ Կահան անուն յազգոյն Ամատունաց, որ էր հազարապետ Հայոց Անձալ)

³ Գուցէ, կարելի է վերականգնելի համարել *Ի. Բասենոյ թուլ* Պատուարն վիս *Ի. Բասենոյ դատաւորն* (A)

⁴ Դ. Այլշանի մօտ, հասանաբար, տաբգրական վրիպակով *Գարդմանայ*

⁵ Գուցէ, կարելի է վերականգնելի համարել *ԻԳ. Գարդմանայ տեր* *ԹԴ. Ճաւղից* (կամ *Ռաւիցի տեր*) *ԻԵ. փոխ ԻԳ. Գարդմանայ տեր* *ԻԶ. Ճաւղից* (կամ «Ճորանամակ»-ի եւ նորեմացու, որոնք *Գարդմանայ, Ճաւղից* եւ Ռաւիցի իշխաններն յիշում են իրար կողքի, հմտ. տեր... տեր, ըստ Բ. Յարութիւնեանի՝ «Ճաւղից»-ի մեկ հասած բնազրոն *Ճաւղից* իշխանութեան յիշենք քաւարը է՝ մտածելու, թէ այն վերացուել էր մինչեւ Դ Գ. կէտերը, որից յետոյ Փաստոս Բուզանդը նշում է Սուշել Մամիկոնեանի կողմից արելն *Արեղնեան* կողմէն կոչուած ակառանքած նարդի հայատակեցումը)

⁶ *Ա. Անտրոնի* փոխ *Անտրոնեանի* (զրլի կողմից, զուցէ, իրօք պատահաբար քաղ թողած ափ վերականգնուող կատարել են թղթը հրատարակիչները, այն էլ՝ առանց նշումի)

⁷ Այս եւ յաջորդ անունը, զուցէ, կարելի է վերականգնելի համարել *Գաբելնից* եւ *Արեղնից*, ինչպէս նախնապիւրները մօտ էլ (իմնու. նաեւ ստղծել *ԼԶ. Արցիկեանն*)

- 1Ա. Մամիկոնէից երկրորդն,
 1Բ. Ռուխեանն,
 1Գ. Աշոցեանն¹,
 1Դ. Դիմաքսեանն,
 1Ե. Բուխա Դիմաքսեանն²,
 1Զ. Այլ Աբղղեանն,
 1Է. Այլ Դիմաքսեանն,
 1Ը. Պալունին,
 1Թ. Ատաեղեանն,
 1. Աշահմարեանն³,
 1ԱԱ. Համբուժեանն⁴,
 1ԱԲ. Վարապետեանն⁵,
 1ԱԳ. Զինակեանն,
 1ԱԴ. Ակեացին,
 1ԱԵ. Զարեհաւանեանն,
 1ԱԶ. Ոնծալեցին⁶,
 1ԱԷ. Մանդակունին,
 1ԱԸ. Աղկունին,
 Ծ. Երմանթունին⁷,

¹ Ա Վարդեանն (վերականգնումը՝ բոլոր հասարակչւնքի հիմտ. 1Գ յՊԼ(ոցեանն))

² Պատասխան երկրորդ բառը միացում է առաջինին՝ Զուխաղիմաքսեանն

³ Ըստ Աղոնցի՝ Աշահմարեան = «Ջորանամակ»-ի՝ Աշեարարեան (Հոսիսացի Պատմ... ԲԱ... - Տ // 100) մարտիկ այբը. տե՛ս էջ 257 (իմտ. ուշ երկաթաշիր Մ - Տ > Դ)

⁴ Ըստ Ն. Աղոնցի՝ Համբուժեան = «Ջորանամակ»-ի՝ Հարուժեան (Հարուսացի Պատմ... Ը... - Տ // 100) մարտիկ այբը. տե՛ս էջ 263 *ու. Կանչառու 100* (երկու տարբերակների համադրումով, թե՛րես, վերականգնելի է՝ *Հարուժեան իրական անուանածուց, որով կատարուել են յածախ հանդիպող անցումներ՝ աք → աք եւ աք → ալք)

⁵ Ըստ Ն. Աղոնցի՝ Վարապետեան = «Ջորանամակ»-ի՝ Վարապետիկեան (Հոսիսացի Պատմ... ԲԲ... - Տ // 100) մարտիկ այբը. տե՛ս էջ 263 *ու. Երաբուռու 100*

⁶ Ըստ Ն. Աղոնցի՝ Ոնծալեցին = «Ջորանամակ»-ի՝ Ոնծալեցի (Արեւմտեան Պատմ... ԾԳ... - Տ Յիդղեյի Մ (իմտ. ուշ երկաթաշիր Մ - Տ) (200) մարտիկ այբը). միեւնոյն ժամանակ, զմարթէ կարող է ձիշտ լինել այս նախարարութեան լրին երկու փաստաթղթով էլ յաջողում է Մանդակունի եւ Աղկունի տոհմերի իշատակութիւնը, եւ որին ծանօթ լինելով է ու Փարսեցին) նոյնացումը հետագայի Վասարականի արեւելքում Անձախիծոր գաւառի (Թովմա Արծրունու մօտ մէկընդմէջ կտրուած նաեւ) Ոնծալեց ժողի իշխանատոհմի հետ (տե՛ս էջ 264, 317). այն չառ հետո էր «Արեւմտեան Պատմ», եւ նրա անունը կարելի է փնտրել յոյ «Արեւելեան Պատմ» ցուցակում. պատահական չէ, որպէս, որ «Ներսէսեան» գահնամակում երկու տարբեր տոհմեր կան՝ Ոնծալեցը (դրուած՝ Ապարտմիցի ու Հարդեանքի միջեւ) եւ Ոնծալեցիք անուններով

⁷ Ըստ Ն. Աղոնցի՝ Երմանթունի = «Ջորանամակ»-ի՝ Երմանթունի (< Երմանթունի >

- ԾԱ. Սպանդունին,
 ԾԲ. Առաւելեանն,
 ԾԳ. Տրունին,
 ԾԴ. Տամբերացին¹,
 ԾԵ. Հաւնունին,
 ԾԶ. Բժնունին,
 ԾԷ. Քաջբերունին,
 ԾԸ. Մեհնունին,
 ԾԹ. Նախճերին,
 Կ. Քաղաքապետն արքունի,
 ԿԱ. Որսապետն արքունի²,
 ԿԲ. Արտաշէսեանն,
 ԿԳ. Վանանդացին երկրորդ,
 ԿԴ. Յուլն,
 ԿԵ. Վիժանու³,
 ԿԶ. Աբաճու,
 ԿԷ. Եփրակա Դիմաքսեանն⁴,
 ԿԸ. Գազրիկանն,

Շրուանդունի (Հայրապետն Դոսեմ... ԺԳ... - Զ //300) մարտին պղծ). տես էջ 263 *տ. Ервантоян 300*

¹ Ա Մաթեոսացին Էփեսոսապետն Սաթեմբուցին (վերականգնում ըստ Ղ Ալիշանի եւ Ն. Արնցի, հիմնու. ուշ երկայնագիր Տ - Ս. «Ջօրանանակ»-ում կրօնընթաց Դոսեմ... Ե. Տախարացի /«Տաթեմբուցի»- Տ //100) մարտին պղծ)

² Շատ Ն. Արնցի /Պրսապետն արքունի = Խորենացու՝ Վարաճեանի (տես էջ 262). ճիշտ է. Գասովահաղը արքունի որսապետ-գործակալների տոհմի անունաւոր Վարաճեանի տոհմի սերունդն է համարել Պրսապետն Գասովից, այսինքն կասել է Արաբատի հիւսիս-արեւելեան Վարաճեանի գաւառի հետ (Մարմարիի աւազան եւ Աղստեի վերնահովիտ), այնինչ «Ջօրանանակ»-ում աղ անունով տոհմ լիակ «Արեւելեան» կամ «Հիւսիսային Դոսան» պաշտպանների շարքում (այստեղի համապատասխանաբար Մազազացի կամ Նիզի Գնթուհի տոհմերի կողքին), այ միայն «Արեւմտեան Դոսան» պաշտպանների (ուրեմն՝ հետագայի Տուրուքթանի նոյնանուն գաւառում). ժՁ. Վարաճեանի - Զ //300) մարտին պղծ). իսկ «Արեւելեան Դոսան» ժԵ. Վիժանունի տոհմանունը (որում Գազրիկանից յետոյ), որը «Գահնանակ»-ում /Պրսապետից լորս տող ներքեւ է. կարող է կասուել միայն հետագայի Վաստուրակի հարա-արեւելեան Վարաճեանի գաւառի եւ նրա Վարաճեանի տոհմի հետ (լայ յայտնի է դ. «Ալեքարիացոյց»-ին եւ Թովմա Արժրունն)

³ Շատ Ն. Արնցի վերականգնելի է՝ Վիժանունի (տես էջ 250). «Ջօրանանակ»-ում կրօնընթաց Դոսեմ... ժԵ. Վիժանունի - Ծ //50) մարտին պղծ)

⁴ Ն. Արնցի ծուտ, հասանաբար, տաւազական վրիպակով Դիմաքսեան պատառիկի բնագրում այս բառը միացուած է նախորդին եւ փոքրատառով է՝ Եփրակապետն Դիմաքսեանն

ԿԹ. Մարացեան տէր,
Հ. Վազրասարունին¹,
[...]:

¹ Լ. Արնոնցի ծով, հասնաբար, տպագրական վրիպակով՝ «Վազրասարունին ըստ գիտնականի՝ Վազրասարունի = «Վարանաման»-ի՝ Անգրաստունի (Վարասացի Դուռ... ԵՏ... - Ճ //100) մարտիկն այլը): տես էջ 284 (իճնու. վաղ երկարագիր Կ - Ա)

² Այս վերջից կրտսեր հատուածում կարող են վերականգնելի համարուել «Վարանա-ճան»-ի հետեւեալ 19 համեմատաբար փոքր նախաբարական տրոհելը, որոնցից մի քանիսի անունները (ոչե՛ք ըստ Լ. Արնոնցի դիտարկման) զրբական աղայապումներով են. Կրննիցեան Դուռ... Զ. Լեւոնացի յօրուց, վերականգնելի՝ Արանացի Արարատում - Ա //200) մարտիկն այլը!

Զ. Մազազացի - Ճ //100) մարտիկն այլը!

Թ. Վասնունի յօրուց, համեմատելի՝ Լեւոնացի զաւատ հետագայի Դարակահայցում - Ծ //50) մարտիկն այլը!

Ճ. Տաքան իճնու. Տաքան զաւատ հետագայի Վասարականի հարաւ-արեւելքում - Ծ //50) մարտիկն այլը!

ՃԱ. Կրննիցեան իճնու. Կրննիցեան զաւատ Վասարականի արեւելքում - Ծ //50) մարտիկն այլը!

ՃԲ. Գրննիցեան իճնու. Գրննիցեան զաւատ Վասարականի արեւելքում, չվերջել Գրննիցեան բերդի հետ՝ Վանայ լճի ափին - Ծ //50) մարտիկն այլը!

ՃԳ. Պատարարունի իճնու. Պատարարունից զաւատ Վասարականի արեւելքում - Ծ //50) մարտիկն այլը!

ՃԴ. Տանդաղան յօրուց, համեմատելի՝ Արանացի-տուր զաւատ Վասարականի արեւելքում - Ծ //50) մարտիկն այլը!

ՃԵ. Անքնեան յրատ Լ. Արնոնցի՝ Տուրքեան Վասարականի հիւսիս-արեւելքում, տես էջ 321 - Ծ //50) մարտիկն այլը!

Զ. Տրդնեան յօրուց, համեմատելի՝ Չորդ-Կապան Միւնիցում, տես Յակոբեան Ա, 2009, էջ 282-283 - Ծ //50) մարտիկն այլը!

Զ. Գրզնունի յօրուց, համեմատելի՝ Գրզնու՝ հետագայի Արցախի հարաւում, տես Յակոբեան Ա, 2009, էջ 281-282 - Ծ //50) մարտիկն այլը!

ՃԶ. Արցախի իճնու. Արցախ զաւատ Միւնիցի հիւսիս-արեւելքում - Ծ //50) մարտիկն այլը!

Դ. Կրննիցեան յօրուց, համեմատելի՝ Կրննիցեան ու Չորդ-Կապանի հարաւային Միւնիցում, տես Ա. Յակոբեան, 2009, էջ 282-283 - Ծ //50) մարտիկն այլը! (վերջին լրուց կարող էին «Գահնամալ»-ում նաեւ չլինել՝ մեզ հասած բնագրում երկիցս իշխան Միւնից

տրոհմանուան տակ նկատու անուան լինելու պատճառով),

Կրննիցեան Դուռ... ՃԶ. Կրննիցեան - Ճ //100) մարտիկն այլը!

ՃԸ. Վարանունեան - Ճ //100) մարտիկն այլը!

Վարասացի Դուռ... Թ. Տրպատունի - Ճ //100) մարտիկն այլը!

ՃԿ. Համաստունեան - Ճ //100) մարտիկն այլը!

ՃԼ. Արարատեան - Ճ //100) մարտիկն այլը!

ԻԱ. Բոզունի ընագրում՝ Բոզունի - Ճ //100) մարտիկն այլը! իճնու. Արնոնց Լ., էջ 256, ուր նաեւ մի քանի վրիպումներ կան)

ՎԵՐՇԱՆՈՒԹԻՒՆ

(Նշուած են միայն գրչի կետադրական նշանները եւ գլխատառերը:
մերն են փակագծերը եւ բառաբաժանումը, որը բնագրում խառն է.
տողահամարները տուել ենք ըստ չորս սիւնակների)

Հա կայ խնդիր արարեալ ի դը-
րան արքունի յարտաշէ-
սի թագաւորի զոր ի տիս-
արոն խասեցեալ եթե
5 եւ զօամականն զնամա-
ւնն զոր արտաշտի ի դիւ-
նին տեսի ի քաղոց ամսոյ ի ԹԷ-
ի Վօամայ արքայից արքա-
յի եւ քարերալի եւ զիր ա-
10 րաքի եւ Սահակ կաթողի-
կոս, եթե որպէս ծեր քա-
րերաբոսիկնոյ հրաման
տացէ հայոց ազատաց եւ
տանուտէրանց որպէս
15 յատաց առ հայոց ազգին
եւս նոյնպէս եւ ի ծեր-
ում դիւանի շահեանա-
րօին առնել որ յայսմ
հետէ հայոց ազատաց եւ
20 տանուտէրանց գահ ի
յայտ լինէր: Լոյնպէս
ներսնի հրամանաւ ար-
քայից արքայի եւ եւ
«Սահակ հայոց կաթողի-
25 կոս կնքեցաք զՎահնե-

մակին. եւ եղաք մատա-
նի զարքայից արքայի եւ
զմերս. եւ է այսպէս ար-
դար եւ ճշմարիտ:

5 Ատաշին իշխանն Հայոց
եւ մայրազն:
Ա Սիւնեաց տէր:
Թ Ասպետն:
Չ Արծրունեաց տէր:
10 Դ Մամիկոննից տէր:
Ե Շահապն ծովաց տէր:
Ճ Սոկաց տէր:
Ը Ոչտունեաց տէր:
Ը Վահունեաց տէր:
15 Թ Կասպից տէր:
Թ Անծաւացեաց տէր:
ԹՆ Ապահունեաց տէր:
ԹԹ Կամսարալեանն:
ԹՉ Այդ ապահունի:
20 ԹՂ Վանանդացին:
ԹԵ Ամատունի տէր:
ԹԶ Գողթան տէր:
ԹԷ Գնունեաց տէր:
ԹԸ Այդ անծաւացի:
25 ԹԹ Տայոց

- Ի Չասնոյ դատարոն:
- ԻՍ Չնցունաց տէր:
- ԻԲ Վարձաւունին:
- ԻԳ Չարդմանայ տէր:
- 5 ԻԵ Սահունին:
- ԻԶ Չաբղէնից տէր:
- ԻԷ Աբղէնից տէր:
- ԻԸ Սիւնաց երկրորդ:
- ԻԹ Արծրունաց երկրորդ:
- 10 Լ Արծրունաց երրորդ:
- ԼԱ Սամիկունից երկրորդ:
- ԼԲ Ռովսեան:
- ԼԳ Չաշոցեան:
- ԼԴ Դիմաքսեան:
- 15 ԼԵ Թոխա դիմաքսեան:
- ԼԶ Այլ արեղեան:
- ԼԷ Այլ դիմաքսեան:
- ԼԸ Պազունին:
- ԼԹ Ատաւղեան:
- 20 ԼՆ Աշտիմարեան:
- ԼՍ Համբուժեան:
- ԼԲ Վարդապետեան:
- ԼԳ Չիւնակեան:
- ԼԴ Ալեացի:
- 25 ԼԵ Զարեհաւանեան:

- ԼԶ Ոնձայեցին:
- ԼԷ Սանդակունին:
- ԼԸ Աղկունին:
- ԼԹ Տայրեան
- 5 Ծ Երմանքունին:
- ԾԱ Սպանդունին:
- ԾԲ Առաւենեան:
- ԾԳ Տրունին:
- ԾԴ Սամբերացին:
- 10 ԾԵ Հանունին:
- ԾԶ Բժնունին:
- ԾԷ Քացրերունին:
- ԾԸ Մեհունին:
- ԾԹ Նախճերին:
- 15 Կ Քաղաքապետն արքունի
- ԿԱ Որսապետն արքունի
- ԿԲ Արտաշեսեան:
- ԿԳ Վանանդացին երկրորդ
- ԿԴ Յուլն:
- 20 ԿԵ Վիժանու:
- ԿԶ Աքաճու:
- ԿԷ Շիրակա դիմաքսեան
- ԿԸ Չազրիլեան:
- ԿԹ Սարացեան տէր
- 25 Հ Վազրասպունին¹

¹ Բացի գլխատանից նշտապես ուշ երկաթագրով են Ձ, Է, Թ, Լ, Ա, Կ, Հ, Չ, Ա, Է, Ը, Պ, Դ, Զ, Թ, Ք տառերը, երկնն է ԼԿՆ՝ Եսաստեղն (բոլորագրով) եւ երկաթեղն (ուշ երկաթագրով). Գ տառը յի հանդիպում միւսանեղ բոլորագրով են

ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՆ

(մասնակի՝ բացի Սահակ Պարթևի նամակ-առաջաբանից¹)

Ահա ապիկ Արտաշէս թագաւորի կողմից արքունի դսանը [արքունիքին], որը Տիգրանում է, հարցում է արուել, [որում] խօսուել է այն մասին], թէ արդեօ՞ք ես գտել եմ [զտայ, տեսայ] այն Ռամական-Նամակը, որը [կար] Արտաշէրի դիւանում:

Յաղոց ամսի տասնեօթին՝ Վեամ արքայից արքայի եւ քարեղարի հինգերորդ [տարուայ], նամակ գրեցի ես՝ Սահակ կաթողիկոսս [այն մասին], թէ Չերդ քարեղարութիւնը ինչպէ՛ս հրաման տայ՝ Հայոց ազատներին եւ տանուտէրերին Չեր դիւանի շահիւսմարում [աշխարհագրում] այժմ ես նոյն կերպ դասակարգել, ինչպէս որ նախկինում [էր] Հայոց ազգի մօտ:

Նաեւ, որպէսզի այսուհետեւ Հայոց ազատների եւ տանուտէրերի գահ(ակարգ)ը յայտնի [պարզ] լինէր, արքայից արքայի հրամանով՝ Ներսեհը եւ ես՝ Սահակ Հայոց կաթողիկոսս, կնքեցինք այս Գահնամակը եւ [կրան] դրեցինք արքայից արքայի մատանին [մատանեղոջմը] եւ մերը:

Եւ այսպէ՛ս է արդարը եւ ճշմարիտը.

Նախ եւ առաջ՝ Հայոց իշխանը եւ Ստրիտագը, [ապա]²

Առաջին՝ Սիւնեաց տէրը³,

Երկրորդ՝ Առաքետը⁴,

Երրորդ՝ ...

...

Եօթանասուներորդ՝ Վազրասպունին,

[...]:

¹ Քասակուսի փակագծերի մէջ տուել ենք ինչպէ՛ս լրացումներ՝ «պարտուայ հայերէնով ստիւն շարադրանք ստանալու նպատակով», այնպէ՛ս էլ քաջատրական նշումներ նախորդող բառի կամ բառերի համար (իմնու. Ուխտանէս եպիսկոպոս, Հայոց պատմութիւն, Թարգմանութիւնը, առաջաբանը... Վ. Առաքելեանի, Նմբազիւր Ա. Յակոբեան, Երևան, 2006, էջ 17-18): Շնդ սմին ջնագիղը (որի շարադասութիւնը ես ինքապարհինս տուել ենք պարտուայ հայերէնով՝ պահելով զրաբար խօսքի շեշտերը) կարելի է ընթերցել՝ նաեւ դրանց մի մասը բաց թողնելով

² Այս տողի միտքը, ժուցէ, կարելի է ընկալել նաեւ այլ տարբերակով՝ Հայոց իշխաններինց՝ առաջինը՝ նաեւ [Հայոց] մարտագըն [ը]

³ Ինչն՝ Սիւնեաց իշխանը

⁴ Ինչն՝ յազարայի/առաքետ իշխանը

**"THE GAHNAMAK OF ARMENIAN AZATS AND TANUTERS",
RESEARCH AND TEXT**

In the article a new historic-philological analyse of Armenian unique, early medieval document, namely "Gahnamak" (Throne List, Ranking List), and its scientific-critical text is presented. This analyse shows, that the beginning of Sahak Partev's letter, to which the list of "gahs" (ranks) of Armenian "azats and tanuters" (noblemen and earls) is attached, should be conjectured as Միտա լայ խնդիր արարեալ... ("Here is requested..."), not "Մի՛՛մ Սա]հակայ խնդիր արարեալ..." ("I, Sahak, was searching..."), as former philologists supposed. Therefore, Sahak's letter was sent to Armenia from Ktesiphon (the capital of Iran), not per contra, as it was thought by now. The list of princes was made in reply to the request from the last Arsakid king of Armenia Artashes (422-428) to Iranian court and in the result of searches of catholicos Sahak in the Ktesiphonien archive, which was named "Ardashir's archive" (Ardashir was probably the founder of Sassanid dynasty). If our hypothetic conjecture is true, the letter can be dated to the 5th year of Sassanid king Bahram V Gur's reign, that is 424 year (the date is also mentioned in the text, namely the 17th of month K'eloc', that is the 26th of December). Movses Khorenci does not know about Sahak's this trip to Ktesiphon, but he reports about 3-4 other similar trips. There is only a single folio that reached us and which contains the list of Armenian principalities only up to number 70 are brought forward in it but at least 19 more smaller principalities can be restored, because they were mentioned in an other unique document of early medieval, namely "Zoranimak" (Military List, Military Register). The proposed reading and translation of "Gahnamak" are also given at the end of the article.

ՀՈՎԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ

ԱՊՎԱՆԻՑ ԱՄՐՁՂԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ «ԱՆՆԱՐՎԱՅՈՅ»-Ի

Հայոց «Աշխարհացոյց»-ում Աղվանից մարզպանությունը հիշատակվում է Ասասնյան Իրանի Քուստ-ի Կապկոի երկրամասի շահրնրի շարքում, իսկ Աղվանից մարզպանության նկարագրության մեջ հաղորդվում են լրացուցիչ տեղեկություններ, որոնց ուսումնասիրությունը առաջնային նշանակություն ունի Աղվանից մարզպանության վարչական բաժանումների ուսումնասիրության համար: Այսպես, հայոց «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում Աղվանցի մասին գրված է. «ԻՎ. Աշխարի Աղբանիա, այսինքն Աղուանք. յելից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչեւ ցՀայոց սահմանաւ, առ Կուր գետով. թեպէտ եւ աստի ցԿուր զամենայն սահմանս հանեալ է ՚ի Հայոց: Բայց մեք ասացուք զբուն աշխարին Աղուանից, որ ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լեռինն: Նախ առ Վրօք, Ելանի գաւառ առ Աղուան գետովն, եւ Քամբէճան առ Կուրաւ. եւ ըստ հաղաւոյ նորա բերդն Վարազմանաւառ, հանդերձ Կուղրաք գեղաքաղաքաւ, եւ վայրքն անապատ մինչեւ ցԿուր գետ. յորոյ յելից կողմանէ Գըւգաւ քաղաք. առ Աղուան գետով, եւ Բիխ գաւառ առ Կաւկասաւ, եւ յելից նորա, Շաքէ, եւ Դէդասու գետ. առ որով հոմանուն գաւառ՝ առ Սանի գետով: Այս ամենայն հոսին ՚ի Կովկասայ, եւ խառնեալ ՚ի յԱղուան գետ՝ անկանին ՚ի Կուր գետ. իսկ ՚ի յելից կուսէ՝ Քավաղակ քաղաք Աղուանից մերձ ՚ի Կաւկաս. ընդ որոյ մէջ գետն Սէրօջ դէպ ՚ի հարաւոյ ըստ փոքր (?) Հայոց»¹:

Աղվանից մարզպանությունը նկարագրված է նաև «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեջ:

¹ Աշխարհացոյց Մովսեսի հոդուածացոյ յաւելումովք մասնաց, հրատ. Ա. Սուքեբան, Վենետիկ, 1881, 28-29: Տե՛ս նաև Սառննազից Դայոց, հ. Բ, Ե. դար, մեթիլա-Լիբանան, 2003, էջ 2151: The Geography of Ananias of Sirak (Aḫarhacoyc), The Long and the Short Recensions, Introduction, translation and commentary by R. Hewsen, Wiesbaden, 1992, pp. 59, 143-146 (այսուհետև՝ Hewsen).

«Ի՞նչ Աղբանիա, այս ինքն է Աղուանց, յեկից կալով Վրաց առ երի Սարմատիոյ առ Կաւկասա մինչև ցԿասքից ծովն և ցՀայոց սահմանն առ Կուր գետով: Ունի դաշտս արգաւանդս, քաղաքս և բերդս և գեղաքաղաքս, գետս քաղունս, եղեգունս հզօրս: Եւ գաւառք են այսոցիկ. Ելանի, Բեխ, Քամբեճան, Շաքէ, Ոստանի Մարծաթան, Դաշտի Բալասական. և այլ գաւառս զորս ՚ի Հայոց հանեալ է, Շիկաշէն, Գարդման, Կողք, Ջաւէ և այլ քսան գաւառ մինչև ցխառնումն Երասխայ ՚ի Կուր գետ»²:

«Քսան եւ վեցերորդ՝ Աղբանիա է, այսինքն Աղուանց, յեկից կալով Վրաց առ երի Սարմատիոյ առ Կաւկասա մինչեւ ՚ի Կասքից ծովն եւ ցՀայոց սահմանն առ Կուր գետով: Եւ ունի Աղուանց դաշտս արգաւանդս, եւ գետս քաղունս, եւ եղեգունս հզաւրս, եւ քաղաքս, եւ բերդս, եւ գեղաքաղաքս: Եւ գաւառք են այսոցիկ. Ելանի, Բեխ, Քամբեճան, Հողմաղ, Շաքէ, Գեգաւու, Ոստան, Հաքանդ, Իմարծ, Պանան, Քաղաց դաշտ, Իրազկան. եւ այլ գաւառք, զոր ՚ի Հայոց հանեալ է. Շակաշէն, Գարդման, Քուստիվառնես, Կողք, Ազուէ, Յուլքատակ, Ուտոստակ, Ուտապետակ, Մեծ Կուանց, Մեծ Իրանց, Պիանց, Հարծկանց, Պածանց, Մոխանց, Վակունից, Փոքր Հաքանդ, Ախսական, Ուտաստակ, Բերձոր, Աստուտ մինչեւ ՚ի խառնումն Երասխայ ՚ի Կուր գետ»³:

Քննութեան շահեկանութունից ելնելով՝ մեզքերում ենք նաև Աղվանքի գավառների մասին Ղևոնդի հաղորդումը, որը խնդրո ուսումնասիրութեան համար ունի քաջաօրիկ կարևոր նշանակություն: Ղևոնդը գրում է, որ խազարները Կուրից հյուսիս գրավում են Աղվանքի գավառները՝ Հեջար, Քաղա, Ոստան Մարգապանյան, Հաքանդ, Գեղալու, Շաքե, Բեխ, Խենի, Կամբեխճան, Խողմագ, որից հետո ավելացնում է. «առին և զգանկալի դաշտն Բաղասական...»⁴:

«Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութունից պարզվում է, որ Աղվանքի նկարագրութեան մեջ հին Աղվանքի ծովափնյա մասն արտացոլված չէ, այսինքն՝ հեղինակը Կասպականից արևելք ընկած տարածքները բուն Աղվանքի մաս չի համարում: Հետևաբար ընդարձակ խմբագրութեան մեջ արտացոլված է վարչա-քաղաքական

² Патканов К., Армянская География VII века, Санкт-Петербург, 1877. Հավելված՝ «Աշխարհացոյց է պարտ», էջ 17:

³ Արքաիան Ա., Անանիա Շիրակացու մատենագրութունը, Երևան, 1944, էջ 348:

⁴ Պատմութիւն Պետրոնիայ Մեծի վարդապետի Հայոց, Անակո Պետրոսով, 1887, էջ 132:

բաժանման որոշակի կացություն, ինչը պայմանավորված էր հին Աղվանքի արևելյան կեսն ընդգրկող Բաղասական վարչական միավորի գոյությամբ, որն ավելի ուշ արդեն միացվում է Աղվանից մարզպանությանը: Համառոտ խմբագրության մեջ բացակայում է Կապադակը, ավելի ճիշտ Կապադակի անունը և միաժամանակ Մարծպանի (ոմա՝ Մարզպանյան) և Դաշտի Բաղասականի ու Իրազկանի հիշատակությամբ արդեն Աղվանքի սահմանները հասցվել են արևելքում մինչև Կասպից ծով: «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունը, նկարագրելով Աղվանքի գավառները, միաժամանակ տեղագրական որոշակի ուղղորդումներ ու հստակություններ է մտցնում շարադրանքի մեջ: Բնությունը սկսենք ընդարձակ խմբագրության մեջ առաջինը հիշատակված Ելսնիից հետո նշված Կամրեճանից:

Կամրեճան: Աղվանքի այս գավառի մասին հիշատակում են անտիկ աղբյուրները: Այսպես, Ստրաբոնը Կամրյուսենե-Կամրեճանը և Խործենեն համարում է Հայաստանի ամենափոփոխային գավառները, որոնք մոտ են Կովկասյան լեռներին, Իբերիային ու Կողքիսին⁶: Այս տեղեկությանը զործնականում չեն հակասում նաև Կամրյուսենեին վերաբերող հաջորդ տեղեկությունները: Ամասիացի մեծ աշխարհագրագետը գրում է, որ Հայաստանը մասամբ հարթավայրային, մասամբ էլ լեռնային երկիր է, «ինչպես Կամրյուսենեն, որտեղ հայերը միաժամանակ սահմանակցում են իբերների և աղվանների հետ»⁷: Վերջին երկու տեղեկություններից հստակ երևում է, որ Կամրյուսենեն Ստրաբոնի ժամանակ մտնում էր Հայաստանի մեջ, որը Կամրեճանի արևմտյան կողմում սահմանակցում էր Վիրջին, իսկ արևելքում՝ Աղվանքին: Հաջորդ տեղեկության մեջ Ստրաբոնը գրում է, որ «անցումը Իբերիայից Աղվանք ձգվում է անջուր և քարքարոտ Կամրյուսենե մարզով դեպի Ալազան գետը»⁸, այսինքն՝ հստակ նշված է, որ անցումը Իբերիայից ուղղակի Աղվանք չէր մտնում,

⁶ Ստրաբոն (քաղցեց և քարզմանեց Հ. Անադյան), Երևան, 1940, էջ 57:

⁷ Страбон, География в 17 томах (перевод, статьи и комментарии Г. Стратановского), Ленинград, 1964, с. 475; The Geography of Strabo (with an English translation by H. Jones), in Eight Volumes, London, 1969, p. 223.

⁸ Страбон, с. 478; Strabo, p. 219. Այս տեղեկությունը Հր. Անադյանի ծուխ քարզմանված է. «Վիրջից Աղվանք անցող չոր ու անջուր Կամրյուսենեով է՝ Ալազոնիս գետից այն կողմ» (Ստրաբոն, էջ 110), սակայն Կամրեճանը տարածվել է մինչև Ալազան գետի աջափնյակը, որից հյուսիս Աղվանքն էր:

քանի որ ճանապարհը պետք է նախ անցնել Կամբեճան զավատով մինչև Ալազան գետը, որը Ստրաբոնը հիշատակում է Աղվանքի կազմում⁹: Ստրաբոնի մեկ այլ տեղեկության մեջ ևս⁹ Աղվանքից Իրբոխա անցումը կապվում է Ալազան գետի վերին հոսանքի շրջանի հետ: Հակասակ դեպքում Կամբեճանը տեսնել Աղվանքի կազմում վստալ կլինի Ստրաբոնի մյուս տեղեկությունների քննության համատեքստում:

Մ. ք. ա. I դարում Կամբեճանի՝ Հայաստանի կազմում գտնվելու մասին վկայում են նաև Դիոն Կասիոսը և Պլուտարքոսը: Համաձայն առաջինի՝ աղվանները բնակվել են Կյուսնոսից (Կուրից) հյուսիս, և արդեն հաջորդ տեղեկություններից պարզվում է, որ աղվանները բնակվել են Ալազան գետի ծախ ակին, քանի որ առանց դիմադրության հռոմեական բանակն անցնում է Կուր, Կամբյուսես (Իորի) գետերը և արդեն Արաս-Ալազան գետի հյուսիսային ակին հանդիպում աղվաններին¹⁰:

Նույն դեպքերը նկարագրող Պլուտարքոսը ավելացնում է, որ հռոմեական բանակը դժվարությամբ անցնում է Կյուսնոս գետը, քանի որ բարբարոսները (իմա՝ աղվանները) գետի վրա երկար ցցապատ էին կառուցել, և Արանտ-Ալազան գետի մոտ (հյուսիսային ակին-և, Հ.) հանդիպում են աղվանների մեծ բանակին¹¹: Կուր գետի վրա կառուցված ցցապատի մասին հիշատակությունը կասկածելի է, քանի որ այդ դեպքում հենց նույն գետի հյուսիսային ակին աղվանները կդիմադրեին նվաճողներին, և հռոմեացիներն անարգել չլին անցնի մինչև Ալազան ընկած տարածքը: Պարզապես կարելի է մտածել, որ Պոմպեոսի փառքը գովերգող Պլուտարքոսը պատմական տվյալ (նաև շատ դեպքերում) տեղեկությունը շարադրելիս դիմել է, այսպես ասած, պատկերավոր նկարագրության միջոցների:

Դիոն Կասիոսի և Պլուտարքոսի տեղեկությունները աղվանների հետ Պոմպեոսի առաջին բախման մասին բացահայտում են կարևոր

⁹ *Смрѣдох*, с. 474; *Strabo*, p. 219.

⁹ *Смрѣдох*, с. 474; *Strabo*, p. 221.

¹⁰ «Օսար աղբյուրները Հայաստանի և նախորդ մասին», «Հին հունական աղբյուրներ», Ա. Հովսեփյան Փավլոս, Դիոն Կասիոս, թարգմ. քննադրից, առաջաբան և ծանոթ. Ա. Կելկաշարյանի, Երևան, 1976, էջ 142, 145:

¹¹ *Тизмарт, Источники античности*, т. II, Москва, 1987, с. 311: Պլուտարքոս, Կենսագրություններ, կազմել էին հունարենից թարգմանեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց՝ Ս. Գրքաշարյան, Երևան, 2001, էջ 287:

մանրամասներ: Երկու հեղինակներն էլ գրում են, որ աղվաններն ասացին անգամ հարձակվել են Պոմպեոսի վրա՝ անցնելով Կուր գետը: Դիոն Կասիոսը հաղորդում է, որ Պոմպեոսը զորքը բաժանում է երեք մասի և ծնեռում Անահտական երկրում և Կուր գետի մոտ: Կարծում ենք, որ Կուրի մոտ բանակած հռոմեական բանակի մի մասը գտնվել է ներկայիս Մինգչաուրի ուղղությամբ, որտեղից էլ հարձակվել է աղվանների մի խումբը¹²: Ուրեմն, երկու հեղինակներն էլ Կուրից Ալազան ընկած երկիրը չեն ընդգրկում Աղվանքի մեջ, որը, դատելով Ստրաբոնի տեղեկություններից, մտել է Հայաստանի մեջ: Պատահական չէ նաև, որ Պոմպեոսը երկրորդ անգամ իր արշավանքը աղվանների դեմ, ըստ Դիոն Կասիոսի, կրկին սկսում է Հայաստանից¹³: Ըստ իւրօրան, Դիոն Կասիոսի և Պլուտարքոսի հիշատակած Անահտական երկիրը և Փոքր Հայքը նույնանուն են Կամբեճանին, ընդ որում, Կամբեճանը Անահիտի անունով անվանելը, ամենայն հավանականությամբ, կապված է Անահիտ աստվածուհու պաշտամունքի հետ, և այս առումով կարծում ենք, որ պատահական չէ Ստրաբոնի այն տեղեկությունը, թե աղվանները ասավել պաշտում են Սելենե-Լուսնին, որի սրբավայրը գտնվել է Իբերիային մոտ¹⁴, հավանաբար Վելիս-Ցիխեից արևելք: Հայտնի է, որ Լուսնի պաշտամունքը հայերի մոտ նույնպես կարևոր տեղ է զբաղել և կապված է եղել Անահիտի պաշտամունքի հետ¹⁵: Հենց Վելիս-Ցիխեից արևելք ընկած շրջանում էլ Աղվանքը մ. թ. ա. I - մ. թ. I դարերում պետք է սահմանակցեր իբերներին: Օրինակ, նույն Ստրաբոնը գրում էր, որ աղվանները ապրում են իբերների ու Կասպից ծովի միջև¹⁶: Իսկ Պլինիոս Ավագն էլ գրում է, որ աղվանները իբերներից բաժանված են Օկազան (Ալազան-Կ. Հ.) գետով¹⁷: Եթե, իրոք, իբերների ու աղվանների սահմանգիծը համարենք Ալազան գետը, ապա ամբողջ Կամբեճանը, եթե ոչ Իրի գետի ձախափնյակը, պետք է տեսնենք Վիրքի կազմում: Այս մուտեցումը չի բացառվում, եթե նկատի ունենանք,

¹² Այս կարծիքն ավելի վաղ հայտնել է Հ. Սվազյանը (տես Սվազյան Հ., Աղվանից պաշարի պատմություն (Հազարյն շրջանից-VIII դարը ներառյալ), Երևան, 2006, էջ 124):

¹³ Դիոն Կասիոս, էջ 145:

¹⁴ Տրաբոն, ս. 477:

¹⁵ Մելիք-Փաշայան Կ., Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 66-72:

¹⁶ Տրաբոն, ս. 475:

¹⁷ Plini Secundus C., Naturalis historiae, v. 1-10, Cambridge, Mass.-London, 1950-1962 (Loeb Classical Library), VI, 26, 29.

որ Վիրքի արքայական տան¹⁸ հայրը գահի հռոմեացի դրածոները մ. թ. I դարում որոշ ժամանակով իշխել են Հայաստանում, հետևաբար Կուրից հյուսիս ընկած Կամրեճանը կարճ ժամանակով գտնվել է Վիրքի քաղաքական իշխանության ներքո: Կամ էլ Պլինիոս Ավագի տեղեկությունը, ինչպես և Ստրաբոնինը, պետք է տեղագրական առումով դիտարկել կրկին Վելիս-Ցիխեից արևելք ընկած շրջանում, իսկ Ալազան գետն էլ Վելիս-Ցիխեից արևելք մինչև Կուրի մեջ թափվելը եղել է Աղվանքի արևմտյան սահմանագիծը:

Այսպիսով, Կամրեճանը մ. թ. ա. I (գուցե II դարից)-մ. թ. I դարերում, գտնվելով Հայաստանի կազմում, ընդգրկել է հսկայական տարածք՝ տարածվելով Կուրի և Ալազանի միջև, արևելքում մինչև Կուրի և Ալազանի միախառնումը, հյուսիս-արևմուտքում Վիրքից բաժանված էր Վելիս-Ցիխե ամրոցով, որից հարավ սահմանը ձգվում էր՝ կտրելով ներկայիս Ցիլի Գոմրորի լեռնաշղթան՝ հասնելով մինչև Աղսուկի Կուրին խառնվելու կետը¹⁹:

Պատելով որոշ աղբյուրներից՝ մ. թ. II դարում Կամրեճանը անցնում է Աղվանքին, որի արևմտյան սահմանն էլ կազմում է Կամրեճանի վերջ նշված արևմտյան սահմանագիծը: Այսպես, Պտղոմեոսը, առանց սահմանաբաժան գետ նշելու, գրում է, որ Աղվանքն արևմուտքում սահմանակցում է Իբերիային²⁰, սակայն աշխարհագրագետի հետևյալ հիշատակությունը կարող է որոշակի եզրակացության հիմք հանդիսանալ: Պտղոմեոսը Իբերիայի և Կովկասից Կյուրոս (Կուր) գետը թափվող գետի միջև նշում է աղվանական բնակավայրեր²¹: Այս անանուն գետը, ըստ էության, նույնանուն է Ալազան գետին, հետևաբար Կամրեճանը մ. թ. II դարում արդեն մտնում էր Աղվանքի

¹⁸ Օրինակ՝ Տակիտոսը խոսում է մ. թ. I դարի 40-ական թվականներին իբրև-աղվանական պատերազմի նախն (Cornelius Tacitus, *Annales*, т. I, Ленинград, 1988, с. 213-214), որի արդյունքում, ըստ Ա. Հակոբյանի, կարճ ժամանակով Կամրեճանը անցավ Վիրքին (տե՛ս Акаopian A., *Археник-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 1987, с. 28):

¹⁹ Տե՛ս նաև Ալազան Հ. Աղվանից աշխարհի պատմություն..., էջ 69-70: Մնակտ Եպի. Բաբխուսարեանը Կամրեճանը տեղադրում է պեճյան Տաքթալայի շրջանում (տե՛ս Մնակտ Եպի. Բաբխուսարեանը, Աղյանից երկիր և դրացիք. Արցախ, Երևան, 1999, էջ 81):

²⁰ Claudii Ptolemaei Geographia, «codicibus recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis instructi Carolus Möllerus, voluminis primi, pars secunda, Parisiis, 1901, V, 11, 1.

²¹ Այն տեղում, V, 11, 3:

կազմի մեջ: Սակայն հետագա դարերում Կամբեճանը, որը երկար ժամանակ գտնվել էր Մեծ Հայքի պետության կազմում, շարունակում է պահպանել իր հայկական լեզուի դիմագիծը: Վրաց աղբյուրների հավաստմամբ մ. թ. VI դարում Իբերիայի պատրիարք Դավիթ Չարեջելին Կամբեճանում (այսինքն նաև Հերեթում Կամբեճանի հյուսիսում) տեղի բնակչի հետ հայերեն է խոսել²²: Վրաց պատմիչ Արսեն Սափարացին էլ հայտնում է, որ Թեոդորոս Ռշտունուց հետապնդվող Հովհան Մաջրավանեցին ի վերջո ապաստան է գտնում Կամբեճանի «Հայոց (Սոմխիթի) ծոր» կոչված վայրում²³: Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին Կամբեճանի հայ բնակչությանը նկատի ունի, երբ գրում է, որ տեղի ժողովուրդը «ի ժողովրդենն մերն է և խաչն արօտի մերոյ էին»²⁴: Կամբեճանը, ըստ Վախուշտի Բագրատիոնիի, համապատասխանում է ներկայիս Կիզիկին²⁵:

Ստորև ուշադրություն ենք հրավիրում «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ Կամբեճանին վերաբերող հատվածի վրա: «Աշխարհացոյց»-ի հեղինակը, բվարկելով Աղվանքի գավառները, գրում է, որ «նախ աս Վրօք, Եխնի գաւառ աս Աղուան գետովն, եւ Քամբէճան աս Կուրաւ, եւ ըստ հարաւոյ Նորա բերդն Վարազմանաւաս, հանդերձ Կուղրաք գեղաքաղաքաւ, եւ վայրքն անապատ մինչեւ ցԿուր գետ»: Եխնի գավառը գտնվել է Աղուան-Ալազան գետի վրա, որից հարավ հիշատակվող Կամբեճանը արդեն նշվում է Կուր գետի վրա: Սակայն, ինչպես արդեն նշել է ակադ. Ս. Երեմյանը, տվյալ հատվածում խոսքը գնում է ոչ թե Կուր գետի (տնցստում՝ Կուրաւ), այլ Իորի կամ Կամբեճան գետի մասին²⁶,

²² Մելիքեթ-Քելե, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 98:

²³ Նույն տեղում, էջ 46-47:

²⁴ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցու պատմություն Հայոց, աշխարհաբար քարզմ. և ծանոթ. Գ. Թուսունյանի, Երևան, 1996, էջ 220:

²⁵ Տե՛ս Мусхеллиани Д., Из историческои географии Восточной Грузии (Имаи и Гораена), Тбилиси, 1962, с. 16, 22.

²⁶ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 54: Ձարմանայի է. որ «Աղվանքը 387-706 թթ.» քարտեզում հայազանը Վարազմանախաղ տեղադրել է Աղվանքի կազմից դուրս, իսկ Իորի գետի երկու ափերը ներառելով Աղվանքի մեջ՝ Կամբեճանը ցույց է տվել միայն Նույն գետի ծախափնջակում (տե՛ս Հայրապյան Սովետական Հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974, էջ 264)՝ արախնակը լնչելով ոչ թե գավառի մեջ: Կուղրաքը քարտեզի վրա չի նշվում, քայց ներառված է Աղվանքի մեջ:

հավասակ դեպքում Վարազմանավաթ բերող Կուղրաթ գյուղաքաղաքով հարկ կէին տեղադրել Կուրից հարավ, ինչն, անշուշտ, սխալ կէին: Մյուս կողմից էլ ակադ. Ս. Երեմյանի կողմից երկրորդ սրբագրումը՝ Կամբեճանից հյուսիս (տեքստում՝ հարավ) նշված բերդի և գյուղաքաղաքի տեղադրումը, մեր կարծիքով, ճիշտ չէ, քանի որ Վարազմանավաթ բերդն ու Կուղրաթ գյուղաքաղաքն անապատային վայրերով հիշատակվում են մինչև Կուր գետը, որից արևելք արդեն Չղվզավ քաղաքն է Աղուան-Ալազան գետի վրա: Հետևաբար Կուր գետից արևելք հիշատակված Չղվզավ քաղաքը, որը, մեր կարծիքով, Պտղոմեոսի հիշատակած Դեզլանն է²⁷ (կարդա՛ գեզլավ), պետք է գտնվեր Ալազանի՝ Կուրի մեջ քաղվելու վայրի մոտ, որպեսզի Կուր և Ալազան գետերը հիշատակվեին միմյանց հարևանությամբ: Այս պարագայում հարկավ կարելի է ենթադրել, որ «Աշխարհացոյց»-ը, Կամբեճան գավառը տեղադրելով նույնանուն գետի միայն հյուսիսային ափին, գետից հարավ ընկած Վարազմանավաթ բերդն ու Կուղրաթ գյուղաքաղաքն էլ չի ընդգրկում Կամբեճանի մեջ, ինչից կարելի է կրկին ենթադրել, որ նշված բերդն ու գյուղաքաղաքը հանդիսացել են վարչական այլ միավոր, ինչն այլ աղբյուրներով չի հաստատվում: Սակայն, ինչպես վերը քննարկած աղբյուրները, այնպես էլ ուշ շրջանի հեղինակները Կամբեճանը տեղադրում են Կուր և Ալազան գետերի միջև: Օրինակ՝ Մովսես Դասխուրանցին գրում է, որ Ջուանշիրն անցնում է իրեն ենթակա իր հայրենիքի սահմաններից Կուր գետի այն կողմ գտնվող Կասիճան (Կամբեճան) գավառը և ճակատամարտում պարսից զորքի դեմ²⁸: Ինչպես տեսնում ենք, Կամբեճանը գտնվել է Կուրից հյուսիս, հետևաբար Կամբեճանի տեղադրությունը Իորի գետի հյուսիսային և հարավային ափերին միանշանակ հաստատվում է սկզբնաղբյուրների տեղեկություններով: Իսկ միմյանց հարևանությամբ գտնված Վարազմանավաթ բերդն ու Կուղրաթ գյուղաքաղաքը²⁹ գտնվել են Իորի գետի աջափնյակում, ամենայն հավանականությամբ, Վիրքի

²⁷ Ptol. V, 11, 3.

²⁸ Մովսես Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1963, էջ 178, 305:

²⁹ Վախուշտի Բագրատունին Վարազմանավաթ բերդը նույնացնում է Սանալի գյուղին (Hewsen, p. 144; Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 82), իսկ Կուղրաթը Կամբեճի զորյուն է Կախեթում (Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 61):

արևելյան սահմանի հարևանությամբ, որտեղից մինչև Հոնաց դուռը (Ճորա պահակ) և Արաքս գետը իշխում էր Տուանշիրը²⁰։

Այսպիսով, աղբյուրների տեղեկությունների քննությունից կարող ենք եզրակացնել, որ Կամրեճանը եղել է Աղվանքի ամենաընդարձակ գավառը, որտեղ զգալի է եղել հայ էթնոսի դերը, և ըստ տեղյան հենց դա էր պատճառը, որ մտնելով նախ Աղվանից թագավորության, հետո մարզպանության մեջ՝ Կամրեճանը պատմական աղբյուրներում էթնիկական առումով տարբերվում էր Աղվանքից։ Այս կարծիքը հաստատվում է այն տեղեկությամբ, որ V դարի երկրորդ կեսին աղվանական թագավոր Կաչազանի եկեղեցական-կրոնական գործունեության մեջ Կամրեճանը և Աղվանքը հիշատակվում են կողք կողքի, որոնք նույն հրաձանն են ստանում թագավորից²¹։

Կապադակ։ Աղվանից թագավորության մայրաքաղաքն էր և նույնանուն է ներկայիս Կարալա գյուղին (Չուխուր Կարալա, Կոչալանչալ և Կարալայ գետերի միջև)՝ Նիժ գյուղի մոտակայքում²²։ Եղիշեն բաղաձայն անվանում է մեծ շահաստան²³։ Կապադակն առաջին անգամ հիշատակում են Պլինիոս Ավագը Cabalaca²⁴ և Պտղոմեոսը Χαβάλα²⁵ անվանաձևերով։ Կապադակը Շաքեի հետ հիշատակվում է նաև «Hudūd al-'Alam»-ում²⁶։ Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Կապադակի միջով հոսում էր Սերոզ գետը, որը նույնանուն է ներկայիս Թուրխանչային, դեպի հարավ՝ Փոքր Հայաստան։ Աս. Մնացականյանի

²⁰ Մոխսե Կապանյանուացի, էջ 183։

²¹ Նույն տեղում, էջ 50։

²² Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 58։ Մակար Եսա.

Բարխուտարեանցը Կապադակին նույնացնում է նաև Պեղալու, Պեղալու գավառը և տեղադրում Դաալայի շրջանում (տե՛ս Մակար Եսա. Բարխուտարեանց, Արևանից երկիր... էջ 61)։ Կապադակին նույնանուն է Եսաի կարողիկոսի հիշատակած Դաալա-Դաալան (տե՛ս Արևանից կարողիկոս Տ. Եսաի Հասան-Ջալալեանց, Պատմության համառոտ Արևանից երկրի, Ստեփանավերտ, 2007, էջ 51, 53)։

²³ Եղիշ, Կասկ Կադրանց եւ իւղոց պատերազմին, աշխատակրթությամբ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989, էջ 154։

²⁴ Plinī Secundī C., Naturalis historiae, VI, 26, 29.

²⁵ Plin. V, 11, 5. Ս. Երեմյանը Կապադակի հետ է նույնացնում նաև Թաֆլաչա-ն, ինչը կապադակի է։

²⁶ Hudūd al-'Alam, The Regions of the World. A Persian Geography 372 A. H.-982 A. D., translated and explained by V. Minorsky, with the Preface by V. Barthold, London, 1982, pp. 77, 144։ Կապադակը բազմիցս հիշատակում են արաբական աղբյուրները (տե՛ս օրինակ Արաբական աղբյուրներ, Չ. Արաբ անտեմազիկներ, Թ-ժ դարեր, բարձ. ընթացից, ներածությունը Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 265, 274, 476, 574, 622 և այլն)։

կողմից այս Փոքր Հայքի նույնացումը Անդրկուրյան Հայքին (Կամբեճանին)³⁷ կասկածելի է, քանի որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը Փոքր Հայքի անվան տակ հնարավոր է՝ նկատի ունի Հայոց Արևելից Փոքր Հայքը, և V դարի Արևելից կողմերը իրոք կարող էին նույնացվել և ընկալվել որպես Փոքր Հայաստան, «ստորին Հայք»: Սակայն այս հարցում կիսում ենք Ա. Հակոբյանի կարծիքը, համաձայն որի՝ վենետիկյան գրչագրի նախազաղափար օրինակի տվյալ հատվածում եղել է՝ «...դարձուածք եփրատայ դէպ ի հարաւոյ, ըստ Փոքր Հայոց» նախադասության ավարտը, որի «դէպ ի հարաւոյ» բառերի նույնությունը Աղվանքի նկարագրության մեջ ասկա հատվածի հետ պատճառ է դարձել անուշադիր գրչի վրիպման համար³⁸: Կապաղակը՝ որպես զավատ և եախկոպոսություն, հիշատակում է նաև «Պատմութիւն Աղուանից»-ը³⁹: Կապաղակը՝ որպես Աղվանից թագաւորութեան մայրաքաղաք, «Աշխարհացոյց»-ի համատու խմբագրություններում և Ղառնդի մոտ հանդես է գալիս Ուտան անվանումով (տես ստորև): Ըստ Վ. Մինորսկու՝ Իսթաթրիի հիշատակած Անրասիան (Անրասի իշխանությունը) նույնանուն է Կապաղակին⁴⁰: Մեր կարծիքով, Անրասիան «Աշխարհացոյց»-ի հին օրինակներում հիշատակված Համրասին է, որը չի նույնանում Հաքանդին⁴¹:

Շաքե: Համապատասխանում է Շաքի կամ Նուխի քաղաքի շրջանին, Կապաղակից արևմուտք, Աղրիչայ և Կուրմուխչայ գետերի միջև⁴²: Պտղոմեոսի Օսիական է (Շիկա-Շակա)⁴³: Շաքեն հանդիսացել է Աղվանքի եախկոպոսություններից մեկը⁴⁴: Շաքեն Կապաղակի հետ

³⁷ Мнацаканян А., О литературе Кавказского Албаниа, Ереван, 1969, с. 39, 41-42.

³⁸ Յակոբյան Ա., Միսակեան-ի Կոտակ և Արցախի հարապահին միա գաւառների տեղորոշումն ըստ «Աշխարհացոյց»-ի, Հանդես անտրեայ, Վիեննա-Երեւան, 2008, քիւ 1-12, էջ 93-94, 96թ. 4: Տես նաև Յակոբյան Ա., Պատմա-աշխարհագրական եւ վիճագրաչիտական հետազոտութիւններ (Արցախ եւ Ուտից), Վիեննա-Երեւան, 2009, էջ 217-218:

³⁹ Սովսե Կալանկատուացի, էջ 89, 122, 232, 294, 304, 345-346:

⁴⁰ Минорский В., История Ширвана и Дербенца X-XI веков, Москва, 1963, с. 107, 191.

⁴¹ Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 108:

⁴² Սակաթ եպ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր..., էջ 61: Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 73: Минорский В., История Ширвана..., с. 116.

⁴³ Ptol. V, 11, 4.

⁴⁴ Սովսե Կալանկատուացի, էջ 122, 213, 344:

կողք կողքի քազմիցս հիշատակում են միջնադարյան արաբ ինչինսակները՝ Կոթախրին, Իրն Հաուկայը, Մուկադդասին, Իրն ալ-Ասիրը և ուրիշներ⁴⁵։ Բալազուրին Շաքեն հիշատակում է Կամրեճան-Կամրեզանից արևելք⁴⁶։ Ցակուտ ալ-Համալին Շաքե (Շաքա) նահանգը տեղադրում է Կուր գետի վրա, Թիֆլիսի մոտերում⁴⁷։ Այս տեղեկությունից կարելի է ենթադրել, որ խոսքը վերաբերում է Շաքե-Կամրեճանի իշխանությանը⁴⁸։

Եխնի (Խենի)։ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում հիշատակվում է Ալազան գետի վրա՝ Վիրքի հարևանությամբ։ Վիրքի հարևանությամբ հիշատակված մեկ այլ գավառից՝ Կամրեճանից հյուսիս, Ալազան գետի հյուսիսային ափին էլ ուսումնասիրողներն իրավացիորեն տեղադրում են Եխնի գավառը։ Եխնի գավառը տեղադրվում է ներկայիս Ջաքաթալայի շրջանում⁴⁹՝ արևելքում Մուրղալ գետով բաժանվելով Բելս գավառից։ Եխնի տեղադրությունը Շաքեից հյուսիս-արևմուտք հաստատում է նաև Պևտը Աղվանից գավառների քվարկման հերթականությամբ։ Ս. Երեմյանը անունը նույնացնում է վրացական Գանուխին՝ կապելով հենդոխների ցեղանվան հետ⁵⁰, որը հասկանալի է։

Բելս։ Տեղադրվում է Կովկասյան լեռների ստորոտին, Ալազան գետի հյուսիսային ափին, Եխնիից հարավ, Շաքեի և Եխնիի միջև, Շաքեից բաժանված էր Կուրմուխչայ գետով։ Ընդգրկում էր ներկայիս Կախիի շրջանը⁵¹։ Նույնանուն է Պտղոմեոսի Բակրիային⁵²։ Բելսին

⁴⁵ Արաբական աղբյուրներ, հ. Բ, Իրն Ալ-Ասիր, քաղմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագր. Ա. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1981, էջ 56; Արաբական աղբյուրներ, հ. Գ, էջ 574, 622, 651-652։

⁴⁶ Արաբական աղբյուրներ, հ. Գ, էջ 266։

⁴⁷ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Լալբանդյան, Երևան, 1965, էջ 84, հիմն. էջ 103։

⁴⁸ Արաբական աղբյուրներ, հ. Գ, էջ 274։

⁴⁹ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 50։ Տե՛ս նաև Մակար Եպ. Բարխուտարեանցի տեղադրությունը (տե՛ս Մակար Եպ. Բարխուտարեանց, Աղանից երկիր..., էջ 62)։

⁵⁰ Ерещен С., Страны «Махелония» на границах Кавказа-и-Зеркалам, Вестник древней истории (издательство ВДН), 1967, № 4, с. 49; Мускеленишвили Д., Из исторической географии..., с. 33։

⁵¹ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 44։ Ա. Հակոբյանը Բելսը տեղադրում է պեճյան Բելուլանիի և Լազոդիսի տարածքներում, իսկ Եխնին էլ՝ պեճյան Կվարեի քաղաքի շրջանում (տե՛ս Առոսթ Ա, Արձան-Աղանե..., с. 98)։

⁵² Ptol. V, 12, 3.

թերևս նույնանուն է նաև Անանուն Ռավեննացու *Belalus*-ը⁵³։ Բեխը Հովհաննես Գաբրիելնցու թղթում («Գիրք թղթոց»-ում և Մովսես Ղափտուրանցու մոտ) հանդես է գալիս Բախադատի նախնկոպուսթյուն անվանումով⁵⁴։ Ղևոնդը հիշատակում է Շաքեից հյուսիս-արևմուտք։

Դեղատու: Պետք է լինի *Գետառու*, որը Պտղոմեոսի *Գետառան* է⁵⁵։ ներկայիս Աղրիչայը։ Տեղադրվում է Շաքեից հարավ՝ Աղրիչայ, Լկազան, Ալիջանչայ (Սանի) և Կուր գետերի միջև⁵⁶։ Մեր կարծիքով, *Գետառու* գավառին նույնանուն է նաև Ղևոնդի *Գեղավու* և «Աշխարհացոյց»-ի *Գեղավու* գավառը, որը Ս. Երեմյանը տեղադրել է այժմյան Աղ-տուի շրջանում՝ անունը տեսնելով Քյալվա կամ *Գեղարու* գյուղանվան մեջ⁵⁷։ Սակայն դատելով այն իրողությունից, որ Ղևոնդը *Գեղավու*-ից հետո հիշատակում է Շաքեն, Բեխը, Խենին, Կամրեխձանը, այսինքն՝ հարավ-հյուսիս-արևմուտք շարքով, հետևաբար *Գեղավու*-ի՝ Ս. Երեմյանի առաջարկած տեղադրությունը չենք կարող ընդունել։ Միաժամանակ Ղևոնդի *Գեղավու*, Շաքե, Բեխ, Խենի, Կամրեխձան շարքը կրկնվում է «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ՝ *Դեղատու* (*Գետառու*)-*Շաքե-Բեխ-Կամրեխձան-Եխնի*։ Մեր կարծիքով, *Գետառու* գավառի *Գեղավու-Գեղավու* անունն⁵⁸ ուղղակիորեն կապված է զրվգավ քաղաքի անվան հետ (*Գր(ւ)գավ* > *Գեղավ*)։

Մենք ընենցինք «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեզ հասած միակ ձեռագրի մեջ հիշատակված մարզպանական Աղվանքի վարչական նկարագրությունը։ Համառոտ խմբագրությունները

⁵³ Ермен С., Торговыя пути Закавказья в эпоху Сасанидов по Tabula Peutingeriana, ВДН, 1939, № 1, с. 89.

⁵⁴ Գիրք թղթոց, Եիֆլիս, 1901, էջ 81-84; Մովսես Կաղանկատուացի, էջ 122: Ա. Հակոբյանը Բախադատը նույնացնում է Դերբենդից հարավ գտնվող Բեյլիջի բնակավայրին (այս և այլ նույնացումների մասին տես Ա. Առանյ-Ասյուխ..., с. 131, прим. 31):

⁵⁵ Ptol. V, 12, 2.

⁵⁶ Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 47:

⁵⁷ Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 47; Ермен С., Страна «Махелония»..., с. 51. Մ. Նալ, Բաղխուստարեանը *Գեղավու* գավառը նույնացնում է Կապադակիան գտնելով, որ վերջինս իր գեղեցիկ բնության և մեծ կլիմայի պատճառով կոչվել է *Գեղավու*, այսինքն՝ գեղեցիկ (տես Մակար Նալ, Բաղխուստարեանը, Արտանից երկիր..., էջ 81, ծնթ. 8):

⁵⁸ Թերևս Պտղոմեոսի *Տեղառան* (V, 12, 2) է, որը վերականգնվում է *Գեղարա* (տես Ա. Առանյ-Ասյուխ..., с. 56):

պահպանել են նոր գավառանուններ, որոնք ընդլայնում են մեր պատկերացումները Աղվանքի ընդհանուր վարչական կացության վերաբերյալ:

Իմարծպանան: Չնայած «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության երկու հրատարակություններում էլ հիշատակվում է մի դեպքում որպես մեկ վարչական միավոր Ոստանի Մարծպանը, մյուս դեպքում Ոստանի և Իմարծպանանի (քննարկում առանձին հիշատակված Իմարծ-ը, Պանանը պետք է կարդալ, անշուշտ, Իմարծպանան) միջև հայտնվել է Հաբանդը, միանում ենք մի շարք ուսումնասիրողների այն կարծիքին, որ Ոստանը և Իմարծպանանն առանձին վարչական միավորներ են. Ոստանը համապատասխանում է Աղվանից թագավորների մայրաքաղաք Կապաղակին իր շրջանով, իսկ Իմարծպանանը՝ Աղվանից մարզպանների նստավայրին՝ Չողին: Հետևաբար, Աղվանից մարզպանության արևելյան հատվածի հյուսիսային ծովափնյա մասն ընդգրկված է Իմարծպանան-Մարզպանյանի մեջ, իսկ հարավային ծովափնյա հողերը՝ Ղաշտի Բալասականի կամ Իրազկանի մեջ: Ընդ որում, «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության առաջին տարբերակում Ղաշտի Բալասականը տեղադրված է Մարզպանյանից հարավ, իսկ երկրորդ խմբագրությունում՝ Իրազկանը՝ Կապաղակից հարավ ընկած Քաղաց ղաշտից արևելք: Այսպիսով, Իմարծպանանը համապատասխանում է Չողին, ներկայիս Ղերբենդին⁵⁸, որը մինչև 451 թվականն արդեն Սասանյանների իշխանության տակ էր⁵⁹: Չողը Սասանյան մարզպանների նստավայրն էր, հետևաբար Աղվանից մարզպանության: Այսպես, եղիշեն հիշատակում է ճորա մարզպանի մասին, որի անունը Սերուխտ էր⁶⁰: Պատմիչը գրում է նաև, որ Կարդանը Կրաց սահմանից պետք է հարծակվեր ճորա մարզպանի վրա, որ եկել էր Աղվանից եկեղեցիներն ավերելու⁶¹: Միաժամանակ Սերուխտը, չմնալով ճորա կողմերում, անցնում է Կուր գետը և Կրաց

⁵⁸ Артамонов М., История хазар, Ленинград, 1962, с. 119-122; Кудряков А., Древний Дербент, Москва, 1982, с. 83-84.

⁵⁹ Եղիշէ, էջ 19, 25, 39, 87, 157 և այլն:

⁶⁰ Եղիշէ, էջ 149-150: Տես նաև Սովսեւ Կաղանկատուացի, էջ 113-114: Ղազար Փարսեցու Նիխորական Սերուխտն է (տես Ղազարու Փարսեցու Պատմութիւն Հայոց, բոլոր առ Կախան Մամիկոնեան, քննական քննադիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մախաբյանի, Երևան, 1982, էջ 151):

⁶¹ Եղիշէ, էջ 149:

սահմաններին մոտիկ խաղխաղ քաղաքի հանդեպ քանակ է դնում⁶³։ Երկրորդ հիշատակությամբ արդեն հստակեցվում է Վիրքի և Աղվանքի սահմանը, իսկ Վիրքից արևելք արդեն Աղվանից մարզապանությունն էր, քանի որ Սեբուխտուն, ըստ պատմիչի, ավերելու էր Աղվանից եկեղեցիները, այսինքն՝ Աղվանքն ինքնըստինքյան պատմիչի համար Սասանյաններին ենթակա երկիր էր, և խոսքը վերաբերում էր ոչ թե Աղվանքին, այլ Աղվանից եկեղեցիներն ավերելուն։ Պատահական չէ, որ ճորա պահակից մինչև խաղխաղ Սեբուխտուն անցնում է առանց դիմադրության հանդիպելու և շատ արագ։ Իսկ նման անցումը հնարավոր էր միայն հպատակ երկրով, և իրոք, ճորա կողմերից մինչև Կուրն անցնելը Եղիշեի համար մեկ երկիր է, և խաղխաղն էլ նշում է սույն Աղվանից թագավորների ծնեօային նստավայր, որը Սեբուխտի իշխանության տակ էր, և տվյալ դեպքում պարսից մարզպանը պաշտպանում է իր մարզապանությունը։ Հետևաբար ճորա մարզպանը պատմիչի համար նույն Աղվանից մարզպանն էր⁶⁴, իսկ Եղիշեի այն տեղեկությունն էլ, թե պարսից զորքը պիտի հալածվեր Աղվանքից⁶⁵, նշանակում է ոչ թե Աղվանքից՝ առանց Չողի, այլ հենց ամբողջ Աղվանքից, ներառյալ նաև Չողը։ Եղիշեի մեկ այլ տեղեկությունը, կարծում ենք, որ ոչ մի տարակարծությունների տեղիք չի տա։ 450 թվականի դեպքերի կապակցությամբ Վասակը պարսիկ մոզպետին առաջարկում է Սասանյան արքունիքին նամակ ուղարկել, որպեսզի Աղվանից աշխարհում գտնված տասը հազար այրուծին զա Հայաստան⁶⁶։ Տասը հազար այրուծին այն ուժն էր, որը գտնվում էր պարսից մարզպանի անմիջական հրամանատարության տակ, որի կենտրոնատեղին ճորա պահակի շրջանն էր։ Հետևաբար, Եղիշեն պարզ վկայում է, որ Աղվանքը մարզապանություն էր, իսկ վերջ քերված տեղեկությունները ցույց տվեցին, որ մարզապանության կենտրոնը Չողն էր, որին տիրողը, քնականաբար, տիրում էր ամբողջ Աղվանքին, որը մինչև 461 թվականը պահպանում է սեփական թագավորությունը։ 451 թվականին՝ Ավարայրի ճակատամարտից հետո, Մուշկան-Նիսալավուրտը զորքով ուղարկվում է Աղվանից, Լինաց, Ճրբաց, Հեծմատակների, Թավասալարների, Խիբիվան երկրները և այն

⁶³ Նույն տեղում, էջ 151։

⁶⁴ Ахонян А., Азганя-Агуянк..., с. 115-116.

⁶⁵ Եղիշե, էջ 151։

⁶⁶ Նույն տեղում, էջ 127։

ամրոցները, որոնք ավերել էր Հոնաց գունդը: Եղիշեն շարունակում է. «Որպէս և յոյժ իսկ տրտմեալ էր քազաւորն, ոչ միայն ընդ աւեր աշխարհացն և ընդ անկանել զօրացն, այլ ևս առաւել ընդ աւերել պահակին, զոր ի քազում ժամանակաց հազի ուրեմն կարացին շինել...»⁶⁷: Ակնհայտ է, որ պարսից քազավորը տխրել էր այն երկրների համար, որոնք մինչ ապստամբությունը գտնվել են իր տիրապետության տակ, ինչպես և ճորա պահակը: Ուշադրության է արժանի նաև պատմիչի այն տեղեկությունը, որ Հոն Հեռանը Աղվանքում կոտորում է պարսից, տվյալ դեպքում մարզպանական, զորքերին⁶⁸: Աղվանքի և Զողի անջատ լինելու մասին կարծես թե վկայում է Եղիշեի այն տեղեկությունը, որ Աղվանից հազարապետն ասում է, որ պարսից զորքը մտել է իրենց երկիրը⁶⁹: Այս տեղեկությունը կարծես թե խոսում է այն մասին, որ Աղվանքը դեռևս մարզպանություն չէր, չնայած որ հայերի, վրացիների հետ հեծելազոր էր տալիս Սասանյան արքունիքին⁷⁰: Այստեղ, սակայն, խոսքը վերաբերում է կրոնափոխության քաղաքականություն իրագործող այլ զորքերի և մոզերի՝ Աղվանք մտնելուն: Որ Աղվանքը, ինչպես և Հայաստանը, Վիրքը, Լիինքը մտել են Սասանյան Իրանի կազմի մեջ, վկայում է այն տեղեկությունը, որ մոզերը և պարսից զորքերը, քացի նշված երկրներից, պետք է մտնեին բոլոր այն տեղերը, որոնք պարսից իշխանության մեջ էին և ծածուկ քրիստոնեություն էին պաշտում⁷¹: Եղիշեն, խոսելով Աղվանից Վաչե քազավորի⁷² ապստամբության մասին, գրում է, որ վերջինս չէր ուզում նորից պարսից ծառայության տակ մտնել, քանզում է ճորա պահակը և մասքութների (հոների) զորքը անցկացնում դեպի հարավ⁷³: Տվյալ ժամանակ Ալանների դուռը (Ղարիալի կիրճը) նույնպես պարսից իշխանության ներքո էր⁷⁴:

⁶⁷ Լույս տեղում, էջ 260:

⁶⁸ Լույս տեղում, էջ 271:

⁶⁹ Լույս տեղում, էջ 141: ՀՃՄտ. էջ 157:

⁷⁰ Լույս տեղում, էջ 39:

⁷¹ Լույս տեղում, էջ 103:

⁷² Ամուլը պահպանվել է միայն Գյուտ Արաիեզացու «Միջում» և «Վալազանի վեպում», որոնցից վերջինը է Մովսես Ղափուրյանցին՝ ավելացնելով Եղիշեից արտագրված հատվածում (տե՛ս Յակոբյան Ա., «Վալազանի վեպ»-ը եւ Արշակունեաց քազաւորայեան խնդիրը Դ-Ձ դարերի Աղուանքում, «Հանդես անտորեայ», Վիեննա-Երևան, 2003, թիվ 1-12, էջ 74-75):

⁷³ Եղիշէ, էջ 399:

⁷⁴ Լույս տեղում: Մովսես Կաղանկատուացի, էջ 16:

Վերջապես Չողի և Աղվանքի վարչական նույն իրողություն լինելը հաստատում է Ղազար Փարպեցին, համաձայն որի, Աղվանից և Հոնաց իշխանությունների միջև գտնվող ճորա պահակը հանձնվում է Վահանին⁷⁵: Ակնհայտ է, որ Չողը պատմիչի համար նույն Աղվանքն էր կամ ավելի ճիշտ նրա քաղկացուցիչ մասը: Հետաքրքիր է, որ Ղազար Փարպեցու վկայությամբ Վասակն ասում է, որ ինքը Վրաց մարզպանն էր և Աղվանից դուռը իր ձեռքում է եղել⁷⁶: Աղվանից դուռը ճորա պահակն է, հետևաբար Վասակը մինչև Հայոց մարզպան նշանակվելը Վիրքի և Աղվանքի մարզպանն է եղել, և իրոք, Վիրքի ու Աղվանքի վարչական միավոր լինելու մասին վկայում է նաև ստատյան ժամանակաշրջանի կնիքներից մեկը (Arran ud Wirozban amargar = Առանի և Վիրքի համարկար)⁷⁷, որը, թերև, քվազրվում է հենց V դարով: Ուրեմն ճորա մարզպան կամ Աղվանից մարզպան հավասարազոր հասկացություններ են: Աղվանից կաթողիկոսարանը մինչև Պարտավ տեղափոխելը գտնվել է Չողում⁷⁸: Չողը 428 թվականից հավանաբար մինչև VI դարի սկիզբը Աղվանից մարզպանության մայրաքաղաքն էր⁷⁹:

Ղաչտի Բալասական, Իրազկան: Գտնվել է Կուրի ստորին հոսանքի ծախսախնայակում՝ լայն առումով ընդգրկելով Աղվանքի արևելյան ծովափնյա կեսը⁸⁰:

Հողմաղ: Ղևոնդի հողմազն է: Ս. Երեմյանի կարծիքով, այժմյան իսաչմազն է, Վարդաշենի շրջանում⁸¹: «Ալշարիացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ Գետառու գավառը նշված է մինչև Սանի գետը (թերևս Ստրաբոնի Թանեսն է, XI, III, 2): Գետառու գավառից հետո հիշատակվում է Կապաղակ քաղաքը, որը գտնվել է Նիժ գյուղի մոտակայքում: Հետևաբար Սանի (Ալիջանչայ) և Սեբոջ (Թուրխանչայ) գետերի միջև հողմազի տեղադրությունը, կարծում ենք, տարակարծությունների տեղիք չի տալիս:

⁷⁵ Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց, էջ 155; Եղիշէ, էջ 157:

⁷⁶ Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց, էջ 197:

⁷⁷ Хрущевая Э., Армения и окрестности Иран, Алматы, 2003, с. 230-231.

⁷⁸ Մովսես Կաղանկատուացի, էջ 118-119, 320:

⁷⁹ Ахонян А., Албания-Алыанк..., с. 118, 133.

⁸⁰ Նույն տեղում, էջ 102: Տես նաև Լորիցյան Հ., Բաղասական աշխարհի տարածքը,

Պատմա-բանասիրական հանդես, 2010, թիվ 2, էջ 150-168:

⁸¹ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Ալշարիացոյց»-ի, էջ 56:

Քաղաց դաշտ: Ս. Երեմյանը տեղադրում է այժմյան Աղդաշի և Մինգչլաուրի շրջաններում և նույնացնում վրացական աղբյուրների Քալաձորիին⁸²: Մեր կարծիքով, Քաղաց դաշտը ընդգրկել է այժմյան Թուրիանչայ և Գյոկչայ գետերի ստորին հոսանքների հարթավայրային շրջանները: «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ Կապադակց հիշատակվում է որպես քաղաք, որն իր շրջանով՝ Ոստանով մտնում էր Աղվանից մարզպանության մեջ: 461 թվականին Աղվանից թագավորության վերացումից հետո Աղվանից Ոստանից՝ մայրաքաղաք Կապադակից, անջատվում է նրա քաղաքային տերիտորիայի հարավային հատվածը, որն էլ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունում հանդես է գալիս Քաղաց դաշտ, իսկ Ղևոնդի մոտ՝ Քաղա անվանումներով: Մեր կարծիքով, Քաղաց դաշտի ճիշտ անվանումը Քաղաքադաշտ է՝ որպես Ոստան Աղվանից: Աղվանից թագավորության վերացումից հետո Ոստան անունը պահպանվում է հյուսիսում՝ Կապադակ քաղաքի շրջանում, իսկ հարավում ժամանակի ընթացքում վարչական քաժանումների պատճառով Աղվանից ոստան գավառի նախկին հատվածի հարավային մասում Քաղաքադաշտ անունն ավելի գործածական է դառնում (հմմտ. Վաղարշապատի Քաղաքադաշտ անվանումը, Ոստան Ղվնա գավառը): Քաղա(քա)դաշտին ամենայն հավանականությամբ համապատասխանում է Դասխուրանցու Արբերդ գավառը⁸³, այժմյան Աղդաշը: Արբերդը որպես Քաղաքադաշտ գավառի կենտրոն, հավանաբար, կոչվել է Քաղաքաբերդ, որից էլ առաջացել է Արբերդը:

Հարանդ: Ըստ Ս. Երեմյանի՝ գտնվել է Շամախի քաղաքի շրջանում⁸⁴: Մի դեպքում Հարանը հիշատակվում է Ոստանից (Կապադակից), մյուս դեպքում Մարզպանյանից (Չոդ) հետո: Հետևելով Բ. Հարությունյանին՝ մենք ևս հակված ենք տեղադրելու այն Քաղաքադաշտից հյուսիս, Կապադակից հարավ-արևելք և արևելք, Մարզպանյանից հարավ, այսինքն՝ Գյոկչայ գետի վերին հոսանքի ծախավնյակի և Գըրղըման-չայ գետի վերին հոսանքի աջափնյակի

⁸² Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 89: Ստ. Կանայեանը Քաղաց ուղղակիորեն կապում է Կապադակի՝ Ոստան-ի Մարզպանեանի հետ (տե՛ս Կանայեանը Ստ., Անշարտ գաւառներն ինն Հայաստանի, Վաղարշապատ, 1914, էջ 172):

⁸³ Մովսէս Կաղանկատուացի, էջ 304: Արբերդը ձեռագրելուց հանդիպում է նաև տաղընթերցումներով՝ Արբոյ, Արբոյ և այլն (տե՛ս The history of the Caucasian Albanians by Movses Dasouranc 1, translated by C. Dowsett, London, 1961, p. 197, n. 2):

⁸⁴ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 82:

միջև⁸⁵։ Հարանդի հետ միգրացե կապված է Պյուտարբոսի հիշատակած Աբաս, Աբանտ գետը, որը նույնացվել է Ալազանին⁸⁶։

Վեջեր, Վեջար։ Ըստ Ս. Երեմյանի՝ Վեջերի անունը պահպանվել է Ուջարի երկաթուղային կայարանի անվան մեջ։ Կոչվում էր նաև Դաշտի Բազկան և զրավում էր Շիրվանի տափարակի հիմնական մասը⁸⁷։ Ուսումնասիրողի կարծիքով, Պտղոմեոսի Գեորոս գետը համապատասխանում է Գըրղըման-չայ գետին, որը կոչվում էր Վեջերի, իսկ Վեջերի տունը տեղադրում է Շաքեի շրջանում, որի անունը պահպանվել է Ուջարիի անվան մեջ⁸⁸։ Ելնելով Դևոնդի՝ Աղվանքի գավառների թվարկումից, որը սկսվում է Վեջարից, ապա Վեջարի տեղադրությունը Քաղաղաշտից արևելք, Գյոլչայ գետի ստորին հոսանքում ընդունելի է։ Կարելի է ենթադրել, որ Վեջարի գավառը առաջացել էր Քաղաղաշտի բաժանումից։ «Աշխարհացոյց»-ի էին օրինակներում հիշատակվում է Աղվանքի գավառներից էօօրը⁸⁹, որը նույնացնում ենք Վեջարին (էջօր)։

Աղվանից մարզպանության կազմում կային նաև փոքր պետություններ, որոնք 462 թվականից հետո դադարում են գոյություն ունենալ⁹⁰։ Բացի այդ, Աղվանից մարզպանությանն էին անցել նաև հայոց բնիկ երկրամասեր Ուտիքն ու Արցախը, որից հետո Աղվանից մարզպանության սահմանը հարավում հասել էր մինչև Երասխի գետագիծը⁹¹։

⁸⁵ Տե՛ս Հարությունյան Բ., Հայաստան ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Երևան, 2001։

⁸⁶ Տե՛ս, օրինակ, Առուսե՛ն Ա., Աճառա-Ալառա..., ս. 59։

⁸⁷ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 62։

⁸⁸ Ерссен С., Страны «Макелоника»..., с. 56-57։

⁸⁹ «Աշխարհացոյց է դարու», էջ 17։

⁹⁰ Տե՛ս Առուսե՛ն Ա., Աճառա-Ալառա..., с. 118-121։

⁹¹ Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանման մասին տե՛ս Հարությունյան Բ., Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի, Շուշին հայոց քաղաքակրթության սրբան, Գիտաժողովի կուրթըր, Երևան, 2007, էջ 20-43։

**THE ADMINISTRATIVE DIVISIONS OF THE ALBANIAN MARZPANATE
ACCORDING TO THE "ASHKHARHATSOYC" ("ARMENIAN GEOGRAPHY")**

The comprehensive investigation of the sources shows that the Albanian marzpanate was one of the largest administrative units in Kusti-kapkoh and had an important role in the political life of Transcaucasia. Many important and wrinkled issues on the administrative divisions and historical geography of the Albanian marzpanate were examined in the article, the elucidation of which has an important meaning for studying the history of the Sassanian Iran as well as obeying peoples.

ԱՐՁՈՒՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅ ԵՎ ԲՅՈՒԶԱՆՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՔՐԻՍՏՈՍԱՐԱՆՄԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ Ը ԴԱՐՈՒՄ

Ը դարը կարևոր մի փուլ էր քրիստոնեական Եկեղեցու պատմության մեջ, որն ամփոփեց ուղղափառ քրիստոնեական վարդապետության ծնավորման Դ դարում սկսված գործընթացը: Հենց Ը դարում է քրիստոնեական դավանաբանությունը ստացել այն դասական և վերջնական սահմանումները, որոնք անառարկելի ճշմարտություններ են դարձել հետագա սերունդների աստվածաբանների համար: Ասվածն արդարացի է ինչպես հայ, այնպես էլ քուզանդական Եկեղեցիների համար: Սույն դարի ամենանշանավոր աստվածաբաններն էին Հովհան Օծնեցին և Հովհան Դամասկացին: Իրենց Եկեղեցիների պատմության մեջ այս երկու մեծ աստվածաբանների կատարած վճռորոշ դերը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք ի մի են բերել իրենց նախորդած Եկեղեցական հայրերի աստվածաբանական, և առաջին հերթին՝ քրիստոսաբանական հայացքները, ստեղծելով դավանաբանական մի համակարգ, որն ընդհանրացրել է Տիեզերական ժողովների դարաշրջանի աստվածաբանական մտքի նվաճումները: Քանի որ Տիեզերական ժողովների առջև ծառայած հիմնական աստվածաբանական հիմնախնդիրը Հիսուս Քրիստոսի ինքնության սահմանումն էր, Օծնեցու և Դամասկացու քրիստոսաբանական հայացքների չափումը ճիշտ ըմբռնելու համար հարկ է համառոտակի վերհիշել ուղղափառ քրիստոսաբանության ծնավորման պատմությունը:

325 թ. Նիկիա քաղաքում տեղի ունեցած Առաջին Տիեզերական ժողովը սահմանեց, թե Քրիստոս մարմնացած Աստծո Բանն, որ ծնված Հոր չափումից հավիտենության մեջ: Դրանով, մի կողմից, ապացուցվեց միաստվածության համատեղելիությունը Աստծո ավելի քան մեկ Անձ ունենալու հետ, ինչին դեմ էին արիոսականները, իսկ մյուս կողմից, հիմնավորվեց մարդու փրկության և աստվածացման գաղափարը, որը քրիստոնեական հայտնության անկունաքարն հանդիսանում: Աստվածացումն անհնարին կլիներ, եթե Հիսուսի Անձի մեջ մարդացած Բանը զուրկ լիներ կատարյալ աստվածային

քննությունից, իմա՝ չլինել այն մի և ճշմարիտ Տերը, որի մասին խոսում է Ա.Գիրքը: Աստվածաբանական բանավեճը, որ ծավալվել էր Առաջին Տիեզերական ժողովի ժամանակ, և հատկապես՝ նրանից հետո, բնավ սխոլաստիկ մտավարժություն չէր, քանի որ Հոր և Որդու համագոյությունը քրիստոնեության համար կենաց ու մահու հարց էր: Եթե Քրիստոս մարմնացած ճշմարիտ Աստված չէր, ապա Նա չէր կարող լինել այն մեկը, ով իրեն ընդունածներին «...իշխանություն տվեց լինելու Աստուծո որդիներ»: (Ա Հովհ.1,12) Ասկայն, մյուս կողմից, եթե Քրիստոս ճշմարտապես և կատարելապես Մարդու Որդի չէր, նա չէր կարող բժշկել ու փրկել մեղքով ախտահարված մարդկային քնությունը: Ուստի 381 թ. Կոստանդնուպոլսում կայացած 2-րդ Տիեզերական ժողովում արիսականների կրած վերջնական պարտությունից հետո Եկեղեցու Հայրերն իրենց ուշադրությունը կենտրոնացրել են Քրիստոսի անձի մեջ աստվածային ու մարդկային քնությունների փոխադրության հիմնախնդրի վրա: Վերջինս առավել կարևոր էր դարձել 5-րդ դարի սկզբում նեստորականության ի հայտ գալուց հետո: Նեստորը ժխտում էր աստվածության և մարդկության իրական կապի ասկայությունն ի Քրիստոս: Խոսելով Փրկչի երկու քնությունների մասին, նա փաստորեն նկատի ուներ երկու անձերը, երկփեղկելով Մարդ-Աստծու անբաժանելի անձնավորությունը: Նեստորի համար Աստծու Որդու և Մարդու Որդու միջև կար ոչ թե գոյաբանական, այլ լոկ քաղոյական կապ, որ դրսևորվում էր կամքի և գործունեության միասնության միջոցով: Նա համարում էր, որ Հիսուս չէր ծնվել որպես Աստծու Որդի, դառնալով այն լոկ Հորդանանում մկրտվելուց և անապատում սատանայական զայթախությունները հաղթահարելուց հետո Աստծու շնորհի միջոցով, որ տրվել է Նրան որպես պարզև ճգնակեցության և անբասիր քաղոյականության համար:

Նեստորական քրիստոսաբանության թերիությունը ուղղափառ տեսակետից միանգամայն ակնհայտ էր, քանի որ Նեստորի համար Քրիստոս փաստորեն ոչ թե Աստծու միածին Որդին էր, այլ շնորհի միջոցով աստվածացման հասած սովորական մի մարդ, որը մնացած սրբերից տարբերվում էր լոկ իր անզուգական քաղոյական կատարելությամբ: Ուստի բնավ պատահականություն չէր, որ Նեստորը Սուրբ Կույսին Աստվածածին չէր անվանում, վերապահելով Նրան ընդամենը Քրիստոսածին անունը: Եկեղեցին, անշուշտ, չէր կարող հաշտվել քրիստոնեական հավատքի նման աղավաղման հետ, և 431 թ. Եփեսոսում կայացած 3-րդ Տիեզերական ժողովի կողմից Նեստորը հեյալվեց հերետիկոս ու դատապարտվեց: Ասկայն չուտով

ի հայտ եկավ նոր աստվածաբանական ժայռահեղություն, որ կապված էր Քրիստոսի անձի մեջ մարդկային բնությունը վերացնելու ծգտման հետ, որ ստացավ միաբնակություն անվանումը: Այն ժամանակավորապես հաղթանակ տարավ 449 թ. Եփեսոսում կայացած ժողովում, սակայն 2 տարի անց մերժվեց ու դատապարտվեց Քաղկեդոնի ժողովի կողմից: Կասկածից վեր է, որ այս ժողովն իսկական պատմաեկեղեցական աղետի պատճառ դարձավ, քանի որ ամբողջ ոչ հունալեզու Արևելքը մերժեց այն, և անջատվեց այն եկեղեցիներից, որոնք ընդունեցին Քաղկեդոնի ժողովի կողմից հաստատված քրիստոսաբանական դավանանքի այն տարբերակը, որի աղբյուրը Հռոմի և նաև պապի հայտնի «Տումարն» էր: Մասնավորապես, Քաղկեդոնի դավանանքը կտրականապես մերժվեց Հայոց եկեղեցու կողմից: Դարեր շարունակ և մինչ օրս քաղկեդոնականները թյուր են ըմբռնում հայերի այդ դիրքորոշումը, քանի որ միաբնակությունը նրանց համար Եվտիցեսի հերձվածի հոմանիչ է: Եվտիցեսը բացատում էր, որ Քրիստոսի մարմինն իսկական մարդկային մարմին էր, դարձնելով այն երևութական մի բան: Հայոց եկեղեցու քրիստոսաբանությունն այս կարգի միաբնակության հետ որևէ ընդհանրություն չունի, ինչի մասին աներկմտաբար խոսում է Հովհան Օձնեցին. «Քանզի առ այս անենայն քրիստոսասիրաց լուսաւորեալ են մտաց այք. զի ոչ է մի բնութիւն մարմնոյն եւ բանին ըստ նոյնութեան բնութեան. զի ոչ մարդկային երկոցին եւ ոչ աստուածային: Ոչ մարմինն յերկնից իջեալ, ըստ առաջին Եւտիցեսայ բաջաղանացն, եւ ոչ Աստուածն Բան ի Մարիամայ առեալ սկիզբն, որպէս Փօտինոսի թուեցաւ ասել, այլ Բանն անեղձ յանեղազունէն իջեալ Հօրէ, մարմին ստացական յարգանդէ կուսին զգեցաւ»¹: Այսպիսով, որևէ երևութականության մասին Օձնեցու քրիստոսաբանության մեջ խոսք անգամ չի կարող: Եւ, և հանձնինս նրա Հայոց եկեղեցին

¹ Ընդդէմ երեւութականաց, «Յովհաննու Իմաստասիրի Աձնեցոյ ժառնագրութիւնք», Կենսովկ 1833, էջ 50 Հայոց եկեղեցու քրիստոսաբանության և Հովհան Օձնեցու աստվածաբանական հայացքների մասին տես: «Կնիք հաաստոյ ընդհանուր սուրբ եկեղեցոյ յուղախաւ ևս հոգեկիր հարցն մերոց դասանութեանց, յատուս Կոմիտաս կաթողիկոսի համահաւացեալ», հրատ. Կարապետ Եսիկյանի ընդարձակ նախաբանով, Իքմիածին, 1914: Ե. Տեր Մինասյանց, Հայոց եկեղեցու հարաբերություններն Աստուաց եկեղեցիների հետ. Էջմիածին, 1908: Մելքոն քահանա Արամյան, Հայ եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուղղագծեր Դ-Շ դ.դ. (Ղազնաբանական եղբուղ), Փանծասար, հ. Բ, 1992, էջ 86-122:

անվերապահորեն հաստատում է Քրիստոսի մարդկությունը, դրանով իսկ որևէ հիմք չթողնելով նրան երևութականության մեջ մեղադրելու համար: Միանգամայն ակնհայտ է, որ սույն դավանաբանական դիրքորոշումը ամբողջապես հիմնված է Կյուրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանական վարդապետության վրա, ու հետևաբար զուտ ուղղափառ է ու որևէ ընդհանրություն չունի Եվտիմեոսի հերձվածի հետ: Ինչպես ասում է ինքը Կյուրեղը. «Քրիստոսի ամենայն ինչ նորոգեցաւ, այլ գիտել մեզ ճշմարտի: Եւ հաստալ, եթէ որ է Բանն Աստուած եւ եղեւ մարմին եւ ի բնութիւն մարմնոյ ոչ փոխեցաւ, զի անհնար էր, այլ զի միացոյց Իւր մարմին ի Կուսէն: Եւ ոչ ասեմ մարդ զոք կամօք եւ հաճութեամբ մերձաւորութեամբ մերձեալ աս Աստուած, այլ միացեալ եւ մարդացեալ Բանին Աստուծոյ ի սուրբ Կուսէն՝ սա մի Որդի է Յիսուս Քրիստոս, մի Տէր անբաժանելի, ոչ ի մի երես՝ զԲանն Աստուած եւ ի մի երես՝ զմարդն՝ ի Կուսէն, այլ զմի եւ զնոյն Որդի խոստովանել Աստուած մարդացեալ»²: Ինչպես տեսնում ենք, Հովհան Օձնեցին խստորեն հետևում է Կյուրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանությանը, որի ուղղափառությունը երբեք կասկածի չի ենթարկվել անգամ երկաթնակների կողմից: Ու քանի որ այս ուսմունքի վրա է հիմնված Հայոց Եկեղեցու քրիստոսաբանական վարդապետությունը, ակնհայտ է քաղկեդոնականների կողմից նրա դեմ հերետիկոսության մեջ ասօց քաշվող մեղադրանքների անհիմն լինելը: Քրիստոս կատարյալ մարդ է և կատարյալ Աստված, և դա չէր բացասում հայ աստվածաբաններից և ոչ մեկը: Ըստ էության, խոսելով Քրիստոսի մի բնության մասին, Հայոց Եկեղեցին հանձինս Հովհան Օձնեցու միայն շեշտում էր Փրկչի անձի անբաժանելի միասնությունը, ինչը ժխտում էին նեստորականները: Այս դավանաբանական դիրքորոշումը որպես Քրիստոսի մարդկության բացասում որակելը, ինչպես դա հաճախ արվում է նույնիսկ մեր ժամանակներում, հնարավոր է միայն հայ աստվածաբանների բնազդերը գիտակցաբար անտեսելու դեպքում:

Այժմ անդրադառնանք Հովհան Դամասկացու քրիստոսաբանական հայացքներին: Իր «Ուղղափառ հավատքի դավանության» երրորդ գրքի հիմնգերոզը գլխում նա գրում է. «Նույնպես և աստվածային, անձառելի և ամենայն միտքն ու ճանաչողությունը գերազանցող մեր փրկության տնօրինության մեջ մենք դավանում ենք երկու բնություն՝ Աստվածային և մարդկային՝ մեր Տեր Հիսուսի Քրիստոսի՝ Բան Աստծո

² Գանձասար, Խ. Ա. Երևան 1992, էջ 138:

և Աուրբ Երրորդության Անձերից մեկի, որոնք մերժեցել և անձնապես միացել են միմյանց հետ, ստեղծելով երկու քնություններից կազմված մի բարդ առանձնավորություն: Հաստատում ենք նաև, որ երկու քնությունները մեկ բարդ առանձնավորության, իմա՝ Քրիստոսի մեջ միանալուց հետո ևս պահպանում են իրենց ամբողջությունը և գոյություն ունեն ճշմարտապես իրենց քնական հատկություններով հանդերձ, և ինչպես նրանք միացած են առանց միաձուլման, այնպես էլ քվարկվում ու զատորոշվում են իրարից առանց բաժանման»³: Առաջին հայացքից, այս երկու տեսակետները էապես չեն տարբերվում իրարից, քանի որ և՛ Դամասկացին, և՛ Օծնեցին հավասարապես ընդունում են, որ Քրիստոս ուներ և՛ աստվածային, և՛ մարդկային քնություն: Մակայն ուշագրավ է այս երկու աստվածաբանների կողմից օգտագործված եզրույթաբանության տարբերությունը: Մասնավորապես, Հովհան Դամասկացին օգտագործում է «առանձնավորություն» (hypostasis) եզրույթը, որը չունի Օծնեցին: Այս եզրույթը վերցված է Արիստոտելից, և ինքը Դամասկացին իր «Իմաստասիրական գրություններ»-ում տալիս է նրան հետևյալ սահմանումը. «Hypostasis բառն ունի երկու նշանակություն: Ընդհանուր առումով այն գոյացություն է նշանակում, իսկ նրա բուն իմաստն անհատն է կամ առանձին անձնավորությունը: Նմանապես և enypostaton բառը երկու նշանակություն ունի, քանի որ այն նշանակում է և նաև զոյն ընդհանրապես՝ մենք այդպես ենք անվանում ոչ միայն գոյացությունն, այլև պատահական հատկությունը՝ և առանձին անհատ կամ անձնավորություն»⁴: Այլ կերպ ասած, առանձնավորությունն իրապես գոյություն ունեցող մի բան է, որ ինքնուրույն է և ինքնագո, արհմքն՝ առանձին մի անհատ, որ նույն տեսակի այլ ներկայացուցիչներից տանքերվում է միայն թվով, օրինակ՝ Գողոս, Պետրոս, առանձին նժույգ: Միանգամայն ակնհայտ է, որ այս կատեգորիան վերացարկված է զգայական փորձից, որ գործ ունի իրերի, այլ ոչ թե անձերի, ու առավել ևս՝ ոչ աստվածային Անձերի հետ:

³ Св. Иоанн Дамаскин, Точное изложение православной веры, <http://orthlib.narod.ru> Հովհան Դամասկացու քրիստոսաբանական հայացքների և քրեմադրական հարաբերության պատմության մասին տե՛ս Բологов В., Лекции по истории Древней церкви, вып. 1-4, Москва, 1994; Кирсавин А., Святые отцы и учителя Церкви (раскрытие Православия в их творениях), Москва, 1994; Килриан (Керн), архимандрит, Золотой век Свято-Отеческой письменности, Москва, 1995.

⁴ Св. Иоанн Дамаскин, Философские главы, <http://orthlib.narod.ru>

Նույնը կարելի է ասել քոլոդ տրամաբանական ձևերի և օրենքների մասին, որոնք ոչ այլ ինչ են, քան նյութական աշխարհի աստվել ընդհանուր հատկությունների արտացոլումը մարդկային մտածողության մեջ: Ու, չնայած դրան, Հովհան Ղամասկացին, միաբնակների հետ քանակիճելիս, լայնորեն օգտագործում է այդ ձևերը: Միա քե ինչ փաստարկների օգնությամբ է նա ապացուցում Քրիստոսի մեջ երկու բնությունների անկախությունը. «Երկու բնություններն ի Քրիստոս միավորվել են իրար հետ առանց փոխակերպման ու փոփոխության, այնպես որ ոչ Աստվածայինն է զրկվել իրեն բնորոշ բնությունից, որ էլ մարդկայինը աստվածային բնություն դարձավ կամ անզղյացավ: Հավասարապես և երկուսից մի քարոջ բնություն չկազմվեց, քանզի քարոջ բնությունը, աչափոխվելով որպես երկու տարրերի բնություններից կազմված, արդեն չի կարող համազո լինել նրան կազմած բնություններից և ոչ մեկին: Օրինակ, չորս տարրերից կազմված մարմինը համազո չի հորջորջվում ոչ՝ հրին, ոչ՝ օդին, ոչ՝ ջրին, ոչ՝ հողին, և համարուն չէ այս տարրերից և ոչ մեկին: Ուստի եթե Քրիստոս, բնությունների միավորումից հետո մեկ քարոջ բնություն դարձավ, ինչպես կարծում են հերետիկոսները, ապա Նա ապարզ բնությունից վերածվեց քարոջի, և արդեն համազո չէ ոչ Հորը, որի բնությունը պարզ է, ոչ էլ Սորը, քանզի նա կազմված չէր Աստվածությունից և մարդկությունից: Այս դեպքում Քրիստոս նույնպես չէր ունենա ոչ Աստվածություն, ոչ էլ մարդկություն, և չէր կարող անվանվել ոչ Աստված, ոչ էլ մարդ, այլ միայն Քրիստոս, ընդորում և բուն անունը՝ Քրիստոս, նրանց կարծիքի համաձայն, կլիներ ոչ քե Անձի, այլ մի բնության անուն»⁵: Առաջին հայացքից այս փաստարկումն անհերքելի է, սակայն ավելի ուշադիր դիտարկումից հետո պարզ է դառնում նրա անհամոզիչ լինելը: Հովհան Ղամասկացին միաբնակներին վերագրում է Քրիստոսի մի բնության քարոջության զարգափարը, սակայն ճշմարտությունն այն է, որ միաբնակները հանձինս Հովհան Օծնեցու առհասարակ Քրիստոսի բնությանը պարզություն կամ քարոջություն չէին վերագրում, արդարացիորեն համարելով, որ հավատքի խորհուրդների մասին խոսելիս, (իսկ Աստծո Որդու մարդեղությունը հենց հավատքի խորհուրդ է) պիտի հետևել անձառելի աստվածաբանության հիմնական սկզբունքին, որի համաձայն Աստծուն որևէ դրական ատրիբուտներ չվերագրելը ավելի

⁵ Св. Иоанн Дамаскин, Точное изложение православной веры, <http://orthlib.net/ru>

ստոյգ է արտահայտում Արարչի էութունը, քան թե Նրան այդ ատրիբուտների վերագրումը: Ահա թե ինչ է գրում Օծնեցին Հայոց եկեղեցու միաբնակության այդ հիմնական սկզբունքի մասին: «Ապա ուրեմն, ոչ ըստ բնութեան նոյնութեան մի բնութիւն, զի թէ եւ ասեմք՝ մի բնութիւն Բանին մարմնացելոյ, ոչ այդպէս խելայեղ եւ ջախջախ մտածութեամբ, որպէս թե միոյն ի միսմէն ի բաց բարծեայ, և կամ լուծեալք ի միմեանց՝ որպէս խոնաուտ բնութեանցն, յորմէ լինի եւ ոչ մի բնութիւն: Այլ զոր էրն ոչ ի բաց թողով, եղեւ՝ զոր ոչն էր. և այսպէս բարձրագունին ծանուցաւ խոնարհութիւն. մնալով ի բարձրութեան գտաւ: նոյն ինքն ի խոնարհութիւն: «Ապա ուրեմն մի բնութիւն եւ մի դէմ Բրիստոսի, եթէ պարտ է համառոտագոյնս ասել, ոչ է ըստ նոյնութեան բնութեան կամ ըստ միանձնականութեան. զի այս զերկոսին ի միասին գրեթէ զրկեսցէ, զԱստուած ի մարդն լինելոյ եւ զմարդն յաստուածանալոյ, այլ է, որպէս քազում անգամ ասացի, ըստ անձառ միաւորութեան Բանին ընդ Իւրում մարմնի»⁶: Այստեղ Հայոց եկեղեցու դավանաբանական դիրքորոշումն արտահայտված է սպառնիչ հստակությամբ: Ինչպես տեսնում ենք, Օծնեցին չի խոսում ոչ Բրիստոսի առանձնավորության, ոչ էլ Նրա մի բնության պարզության կամ բարդության մասին: Նա չէր կարող Դամակացու նման խոսել Բրիստոսի առանձնավորության մասին, քանզի դա կնշանակեր, որ Հոսուս Բրիստոս առանձին մի անհատ էր, որ պատկանում էր մի առանձին տեսակի, ինչպես, օրինակ, Սոկրատեսը պատկանում էր փիլիսոփաների տեսակին: Սակայն դա կհակասեր քրիստոնեության հիմնական սկզբունքներից մեկին, որի համաձայն Բրիստոս Աստծո միածին Որդին էր, և միակ Մարդ-Աստվածն ըստ Իր էության, քանի որ մյուսները կարող են հասնել աստվածացման միայն Ս.Հոգու շնորհի միջոցով: Ըստ էության, Հովհան Դամակացին չի նկատում, որ Բրիստոսի մասին խոսելիս, hypostasis եզրույթը կարելի է անվերապահորեն օգտագործել սուկ այն դեպքում, եթե, նեստորականների նման ընդունել Բրիստոսի մեզ երկու անձերի առկայությունը, որոնք կապված են ոչ թե գոյաբանորեն, այլ լոկ բարոյական կամքի միասնությամբ: Եվ իրոք, Բրիստոսի առանձնավորության մասին կարելի է խոսել, եթե Նա պարզապես մի մարդ էր, որը մյուսներից տարբերվում էր լոկ նրանով, որ կատարյալ

⁶ Շնորհիմ երեսությանաց, Յովհաննու Իմաստասիրի Ածնեցու ծառնակագրութիւնք, Կենտրն, 1833, էջ 50:

քարոյական հնազանդութեամբ և համաձայնութեամբ միավորված էր Քանի հետ: Այս դեպքում Նա իրոք կունենար Իր առանձնավորութունն, ինչպես որ այն ունեին, օրինակ, Սուրբատեղ կամ Պատոնը: Ուստի պիտի նշել, որ քաղկեդոնականներին սքողված նեստորական համարելու մեղադրանքը, որ ավանդական էր հայ աստվածաբանների համար, ամենևին էլ անհիմն չէր:

Ավելին, Հովհան Դամասկացին չի նկատում այն հանգամանքը, որ Ղևոնդեոս Բյուզանդացու կողմից ստեղծված Քրիստոսի քարոյ առանձնավորության մասին տեսությունը հակասում է ուղղափառության հիմքը հանդիսացող Հոր և Որդու համագոյության դավանանքին, քանզի եթե Հայրը պարզ բնություն ունի, ապա քարոյ առանձնավորություն ունեցող Որդին չի կարող համագոյ լինել Նրան: Ուստի Դամասկացին, չզիտակցելով դա, ջուր է լցնում արիտասական հերժվածի ջրադաշին: Այս դեպքում Ս. Երրորդության Անձերի համագոյության սկզբունքի պահպանման համար անհրաժեշտ կլինե՞ր ընդունել Հայր-Աստծո Առանձնավորության քարոյությունը, ինչը քաջահայտ անհեթեթություն է հենց Դամասկացու տեսակետից:

Քաղկեդոնական քրիստոսաբանության այս բոլոր ներքին հակասությունները, վերջին հաշվով, պայմանավորված են քաղկեդոնականների փաստացի հրաժարումով անձառելի աստվածաբանության սկզբունքներից: Եթե փորձելու լինենք առանձնացնել այն կարևորագույն եզրույթը, որը մեզ հնարավորություն կընձեռենք ըմբռնելու Հայոց Եկեղեցու վարդապետության բուն էությունը, ապա դա կլինե՞ր «անձառ» եզրույթը, որ Օծնեցին օգտագործել է Քրիստոսի բնության միությունը բնութագրելու համար: «Արեուպագիտիկաները» հայերեն թարգմանելիս, հենց այդ քառն է օգտագործել հունարեն *apophaticos* բառը հայացնելու համար, Հովհան Օծնեցու ժամանակակից Ստեփանոս Սյունեցին: Քրիստոսաբանության մեջ անձառելիության աստվածաբանական սկզբունքը պահանջում է հրաժարվել Աստծու մարդեղության խորհուրդը տրամաբանական օրենքների և վերացական հասկացությունների միջոցով իմաստավորելու քոլոր նկրտումներից, քանի որ դրանք վերացարկված են զգայական փորձի առարկա հանդիսացող բնական իրերից և երևույթներից, մինչդեռ Քանի մարդեղությունը գերբնական հրաշք է, ու հետևաբար այն անմատչելի է մարդկային մտածողության համար: Ս.Երրորդության մեջ, հակասության տրամաբանական օրենքին հակասակ, համընկնում են միությունն ու եռակիությունը, ինչի հետևանքով Նա անհասանելի է ոչ

միայն մարդկային, այլև հրեշտակային մտածողության համար: Եւ այն կարելի է ասել նաև Սարգ-Աստու մասին, որի միեղեն Անծի մեջ անշփոթ նույնացել են մի կողմից՝ անել և անսահման, իսկ մյուս կողմից՝ եղական ու սահմանափակ բնությունները: Ուստի Օծնեցին առանց վարանելու տալիս է Քրիստոսին իրարամերժ, տրամաբանության տեսակետից հակասական սահմանումներ, քաջ գիտակցելով, որ դրանք, առանձին վերցված, հավասարապես անկարող են ճշտորեն արտահայտել Աստու Որդու էությունը: Նրա խոսքերով. «Իսկ եթե իրաւապէս եւ բարեպաշտաբար զերկուսին լսես, ոչ ինչ է արգել զմին ասելով ի իշել եւ զառ ի յերկուցն՝ եւ դարձեալ՝ ոչ մտտանալով զյերկուցն, խոստովանել եւ զմին»⁷:

Քրիստոսաբանական դավանանքի նկատմամբ բյուզանդական աստվածաբանների մոտեցումը, որի դասական օրինակն է հենց Հովհան Դամասկացու աստվածաբանական համակարգը, հիմնված բոլորովին այլ սկզբունքների վրա: Թեև անճաշելի աստվածաբանությունը ստեղծել էին հենց եկեղեցու բյուզանդացի հայրերը՝ մեծ կապաղովկացիները և «Արեոպագիտիկաներ»-ի հեղինակը, այդուհանդերձ նրանք միաժամանակ գտնվում էին հին հունական իմաստասիրության, և մասնավորապէս՝ Արիստոտելի տրամաբանության հզոր ազդեցության ներքո: Դա հիմնադրանում պայմանավորված էր այն հանգամանքով, որ անտիկ իմաստասերների երկերի քաջ իմացությունը պարտադիր էր բյուզանդական դպրոցների սաների համար: Ուստի պետք չէ զարմանալ, որ նման կրթություն ստացած բյուզանդական աստվածաբաններն, աստվածաբանական հիմնախնդիրների շուրջը քանակիճելիս, անհրաժեշտ ու արագարացված էին համարում դիմել տրամաբանական փաստարկների օգնությանը: Նրանց թվում էր, որ հակաքաղկեդոնականները չեն ենթարկում հավատքի խորհուրդները մարդկային դատողականության օրենքներին՝ տրամաբանորեն մտածելու անկարողության պատճառով, մինչդեռ իրականում դա սուսկ անճաշելի աստվածաբանության սկզբունքներին հավատարիմ մնալու ցանկության հետևանք էր: Սույն հիմնախնդրի բյուզանդական ընկալման համար խիստ հատկանշական է Հովհան Դամասկացու հետևյալ արտահայտությունը. «Եվ ինչպե՞ս կկարողանար մի բնությունը պարփակել հակադիր էական հատկությունները:

⁷ Եւ այն տեղում, էջ 58:

Հնարավոր է արդյոք, որ միևնույն բնությունը միաժամանակ լինի և եղական և անեղ, և մահկանացու, և անմահ, և նկարագրելի, և աննկարագրելի»⁸: Այս հարցին հայ աստվածաբանները կարող էին պատասխանել, որ Քան-Աստծու և մարմնի միությունն անճառ է, այսինքն՝ վեր է մարդկային մտածողության օրենքներից ու սահմանափակումներից: Այն, ինչ անհնարին է Արիստոտելի բյուզանդական աշակերտի համար, հայ աստվածաբանի համար ոչ միայն հնարավոր է, այլև անհրաժեշտ:

Նշելով քրիստոսաբանական դավանանքի ըմբռնման հարցում հայ և բյուզանդացի աստվածաբանների միջև եղած տարբերությունները, մենք բնավ չենք ցանկանում անտեսել նրանց հայացքների էական ընդհանրությունները: Եվ՝ Հովհան Օծնեցու, և՛ Հովհան Դամասկացու համար հավասարապես անընդունելի են ինչպես նեստորականության մարդաբանական մաքսիմալիզմը, այնպես էլ եվտիքականության մարդաբանական մինիմալիզմը: Նրանց երկուսի համար Քրիստոս՝ կատարյալ մարդ և կատարյալ Աստված է: Խորապես սխալ կլիներ ասել, որ նրանք տարբեր հավատք ունեին, սակայն նրանց ընդհանուր ուղղափառ հավատքը, աստվածաբանական մեթոդի տարբերության պատճառով սահմանվում է իրարից զանազանվող դավանաբանական քանաձևերի միջոցով, որոնց միջև կան էական տարբերություններ: Չենք սխալվի, եթե ասենք, որ արևելյան քրիստոնեության ողբերգությունը կայանում էր նրանում, որ մշակութափոփոխական տարբերություններով ու քաղաքական հակասություններով պայմանավորված աստվածաբանական համակարգերի եզրույթաբանական տարբերությունները խանգարում էին տեսնել հավատքի էական նույնությունը:

Ընդհանրացնելով մեր վերլուծության արդյունքները, նշենք հետևյալը: Հովհան Օծնեցուն և Հովհան Դամասկացուն են պատկանում քրիստոսաբանական դավանանքի դասական սահմանումները համապատասխանաբար հայ և բյուզանդական եկեղեցիների համար: Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս ինչպես այս երկու մեծ աստվածաբանների քրիստոսաբանական հայացքների միջև ասկա զգալի ընդհանրություններն, այնպես էլ նրանց էական տարբերությունները: Ու եթե ընդհանրությունները պայմանավորված են հայ և բյուզանդական եկեղեցիների

⁸ Св. Иоанн Дамаскин, Точное изложение православной веры, <http://orthlib.narod.ru>

վարդապետության ընդհանուր աղբյուրով՝ Ա.Գրգուլ և Ա. Ավանդությանը, ապա տարբերությունների պատճառը հայ և բյուզանդացի աստվածաբանների կողմից կիրառված աստվածաբանական մեթոդների տարբերությունն է: Հանձինս Հովհան Օծնեցու հայ աստվածաբանները, քրիստոսաբանական դավանանքը բանաձևելիս, ելնում էին Ս.Երրորդության անձառույցի, ու քանի որ Քրիստոս Ս. Երրորդության մարմին դարձած Դեմեքրից մեկն էր, անձառ է նաև Նրա Անձի մեջ աստվածության և մարդկության փոխհարաբերությունը: Հետևաբար, պետք է խուսափել հավատքի խորհուրդների օացիոնալ հիմնավորման քուր փորձերից, քանզի այդ խորհուրդները գտնվում են գոյաբանական մի ոլորտում, որ սկզբունքորեն անմատչելի է մտածողության համար: Հովհան Դամասկացին, որը բյուզանդական աստվածաբանության տիպիկ ներկայացուցիչ էր, այս հիմնախնդրի նկատմամբ ուներ այլ մոտեցում: Բնավ չմերժելով արևելաքրիստոնեական աստվածաբանության հիմքում ընկած անձառելիության սկզբունքը, նա այնուհանդերձ համարում էր, որ դավանաբանական բանաձևերը չպիտի հակասեն ծնական տրամաբանության պահանջներին, ու մեղադրում էր հայերին իրենց հավատքի տրամաբանական հակասականության համար: Իսկ հայերի համար քաղկեդոնականների քրիստոսաբանությունը պարզապես մարդկային մտածողության և նրա օրենքների չարդարացված կիրառում էր մի ոլորտում, որի հետ նրանք չունեին որևէ առնչություն: Կարելի է ասել, որ քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների միջև ասկա գաղափարական հակասությունները, որ գոյություն ունեն և այսօր, բխում են ոչ այնքան հավատքի տարբերությունից, որքան աստվածաբանական մեթոդի զանազան ըմբռնումներից, որոնք, իրենց հեղինակ, ժողովուրդների միջև գոյություն ունեցող մշակութային և հոգեբանական տարբերությունների հետևանքն են հանդիսանում:

ARTHUR MATEVOSYAN

THE CHRISTOLOGICAL CONCEPTIONS
OF THE ARMENIAN AND BYZANTIAN CHURCHES IN VIII CENTURY

John of Odzun and John of Damascus are very important figures in the history of eastern Christian theology. Living in VIII century, they summed up the period of formation of the orthodox Christian doctrine, having generalized and systematized

the theological views of Fathers of Church living in epoch of ecumenical councils. John of Odzun and John of Damascus are the originators of classical formulations of christological dogma, which were adopted by their Churches. The comparative analysis shows both significant similarity, and essential divergences between christological ideas of these two great theologians. And if similarities are caused by the general source of dogma-Holy Writ and Holy Tradition, the distinctions depend on the essentially various methodology of theological research used by the Armenian and Byzantine theologians. The Armenian theologians in the person of John of Odzun formulating the christological dogma started with the fundamental ineffability and transcendency of Holy Trinity. Hence, speaking about a parity of a deity and humanity in the Christ-the second Person of Trinity - it is necessary to avoid any attempts of a rational substantiation of mysteries of faith as they lay in the ontological plane essentially inaccessible to human reason. The approach of the Byzantine theologians in the person of John of Damascus was another one. Not denying the fundamental apophatism, underlying the eastern Christian theology, they, nevertheless, considered not only possible, but also necessary to coordinate the christological formulas with requirements of formal logic, reproaching Armenians in logic discrepancy of their belief. For Armenians the Byzantine approach to Christology was simply an incorrect use of laws of formal logic in area to which they are inapplicable. It is possible to tell, that ideological contradictions between monophysites and dyophysites, existing down to this day, are founded not on dogmatic distinctions, but on different understanding of the nature and the method of theological knowledge, caused by cultural and psychological differences between peoples.

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԲԶՄԱՆՈՒ ՀԱՅ ԿԱԹՈՒԿ ԿԱՆԹՐՈՒՄԻ ԳՄՆԱԴՐՈՒՄԸ

16-18-րդ դդ. համարվում են ծաղկման շրջան Հայեայի հայ համայնքի համար: Իր մեծաքանակ առևտրական տներով, Հայեայց կարևոր առևտրային կենտրոն էր Եվրոպայի և Ասիայի միջև¹: Հայտնի հայ ձանապարհորդ Սիմեոն Լեհացին այսպես է նկարագրում այն. «Քաղաքը հղթակապ առևտրական կենտրոն է... նրանում կային 365 խաներ, մեծ քվով խանութներ և կրպակներ: Բաղնիքները հիասքանչ են»²:

1535 թ. ֆրանս-օսմանյան համաձայնագիրը, ինչպես նաև դրան հետևած Օսմանյան Կայսերության և եվրոպական մի շարք երկրների միջև ստորագրված համաձայնագրերը /որոնք հետագայում դարձան Կապիտուլյացիոն համակարգի հիմքը³ ուղի հարթեցին 1670 թ.-ից Հայեայ Լաւոն միսիոներների հաստատման համար: Միսիոներները գործում էին Ֆրանսիայի հյուպատոս Ֆրանսուա Պիլետի հովանավորության ներքո⁴:

Հայեայի բարգավաճ հայ համայնքի հարուստ մշակութային կյանքը հիմնականում կենտրոնացած էր Սուրբ քառասուն մանկանց Ապոստոլված 1509 թ./ և Սուրբ Աստվածածին /վերանորոգվել է 1535 թ./ եկեղեցիների շուրջ: Հայ առևտրականներն ընդհանրապես հատուկ ուշադրություն էին դարձնում համայնքի մշակութային կյանքին, ինչպես

¹ Тихомиров М., Левантинская торговля и города Сирии в XVI-XVIII вв., История и экономика арабских стран, Москва, 1977, с. 132; Sanjian A., The Armenian Communities in Syria under Ottoman Domination, Harvard, 1966, p. 49.

² Սիմեոն դպիր Լեհացի, Ուղեգրություն տարեգրություն եի Յիշատակարանի, Կաթ. Հ. Ներսես Վ., Ալիմեան, Կիեւնա, 1936, էջ 317-324; Ներսես Վ., Ալիմեան, Հայ կյանքը Հայեայի մեջ, Հանդես անսորբա, 3-4, ծարտ-հունիս, 1933, Հայեայ, էջ 307-308:

³ Թեփուզան Հ., Միջույի և Լիբանանի հայկական գաղթբջայնների պատմություն, Երևան, 1996, էջ 33:

⁴ Jeranian P., Catholic Armenian-Maronite Relations in Mount Lebanon /1720-1840/, Հայկազյան հայագիտական հանդես, հ. ԻԶ, Բեյրութ, 2006, էջ 41:

նաև վերոնշյալ եկեղեցիներին: Ավելին, ելնելով իրենց քրիստոնեական երայրական զգացմունքներից, նրանք նաև աջակցում էին Սուրբ Իլիաս մարոնիական եկեղեցուն, որը գտնվում էր Սուրբ Աստվածածին եկեղեցու հարևանությամբ⁵: 15-րդ դարի վերջին Ռաֆա Իսսան, որը հայ համայնքի մեծահարուստներից էր, ընդլայնեց Սուրբ Քառասուն մանկանց, ինչպես նաև օգնեց վերակառուցել մարոնիական Սուրբ Իլիաս եկեղեցիները⁶:

17-րդ դարում Հալեպում մարոնի համայնքը զգալի գործունեություն էր ծավալում՝ հայերի շրջանում կաթոլիկություն տարածելու ուղղությամբ: Կաթոլիկ քարոզիչները, որոնք վայելում էին կուպատսունների աջակցությունը, հայերին գրավում էին՝ նրանց խոստանալով աջակցություն իրենց հետագա առևտրային գործունեության ոլորտում⁷: Այս հանգամանքն առաջացնում էր Հայ առաքելական եկեղեցու և օսմանյան կաթավարության դժգոհությունը: Օսմանյան կաթավարությունը Հայ առաքելական պատրիարքին դեռևս 16-րդ դարի սկզբին ճանաչել էր հայկական միլլեթի ղեկավար⁸:

1776 թ. Հալեպում հայ կաթոլիկների թիվը 4. 000 էր, 1794 թ.՝ 5.000⁹, իսկ 1827 թ.՝ 3.000¹⁰: Կաթոլիկ հայերի թվաքանակի անկումը պայմանավորված էր նրանց այլ երկրներ արտագաղթով՝ հատկապես Լիբանան, որտեղ վերջիններիս համար Քիսրվանի շրջանում ստեղծվել էին հարմարավետ պայմաններ՝ իրենց կրոնական ուսմունքը քարոզելու համար: Հայ կաթոլիկները 18-րդ դարում Հալեպում և Կ. Պոլսում հետապնդումների էին ենթարկվում առաքելական պատրիարքության և Օսմանյան կաթավարության կողմից: Այդ հետապնդումների հիմնական պատճառը նրանց հարաբերություններն էին միսիոներների հետ, որոնց նպատակն էր «դավանաւիթիս անել առաքելականներին»¹¹:

⁵ Rabath A., Documents inédits Pour Servir à l'histoire du Christianisme en Orient, Paris, 1905, p. 388.

⁶ Արտաազդ Արքեպիսկոպոս Ափրոնեան, Պատմութիւն Քալէպի Քաղոց, Քալէպ, հ. Բ, Բէյրութ, 1946, էջ 33:

⁷ Լույն տեղում, էջ 518:

⁸ Гаспарян М., Ореикова С., Петросян Ю., Очерки истории Турсуа, Москва, 1983, с. 50.

⁹ Լույն տեղում, էջ 15:

¹⁰ Terzian M., Le Patriarcat de Cilicie et les Arméniens Catholiques, Beyrouth, 1955, p. 26.

¹¹ Raphael P., La Role des Maronites dans le Retour des Eglises Orientales, Beyrouth, 1935, p. 7.

1735-36 թթ. Օսմանյան Կայսրությունում հայ կաթոլիկների նկատմամբ հետապնդումները վերսկսվեցին: Ֆրանսիան փորձում էր հանդես գալ կաթոլիկների պաշտպանությամբ, ինչն ընկալվում էր որպես կայսրության ներքին գործերին միջամտելու փորձ: Ցանկացած լարվածություն Ֆրանս-օսմանյան հարաբերություններում օգտագործում էր հայ առաքելական պատրիարքությունը՝ նպաստելով կաթոլիկների նկատմամբ հետապնդումների ուժեղացմանը կայսրությունում: 1828 թ. Սուլթանը ֆերման հրապարակեց՝ թույլ տալով հետապնդումներ իրականացնել կաթոլիկների նկատմամբ¹²: Մեծ թվով կաթոլիկներ բանտարկվեցին և աքսորվեցին, զգալի մասն էլ ապաստան գտավ Լիբանանում:

Հայ կաթոլիկների վիճակը Հայեպում անկայուն էր և ոչ ապահով: Եվրոպական դեսպանների՝ մասնավորապես Ֆրանսիայի, աջակցությունը ոչ միշտ էր արդյունավետ¹³: Հայ կաթոլիկները հասկանում էին, որ նման պայմաններում նրանք չէին կարող կազմակերպվել որպես առանձին համայնք: Եվ բնական է, որ նրանց ուշադրությունը սևեռվեց Լիբանանի վրա, որտեղ մարոնիների շրջանում ստեղծվել էին բարենպաստ պայմաններ բնակություն հաստատելու համար¹⁴:

17-րդ դարի վերջին և 18-րդ դարում Հայեպից հայերը սկսեցին հաստատվել Լեոնային Լիբանանի մարոնիական վանքերում: 1701 թ. մարոնի պատրիարք Դովային Հայեպում քարոզիչ Արդալահ Քարալիին /1672-1742 թթ./ նշանակեց Լիբանանում Մար էլիշա վանքի զլխավոր տնօրեն¹⁵: Այն գտնվում էր Քիշարե գյուղից հյուսիս՝ Քաղիշա գետի հովտում, որը սկիզբ է առնում մայրիների շրջանից և հոսում է դեպի Միջերկրական¹⁶:

Տարբեր էթնիկ պատկանելության զգալի թվով երիտասարդներ՝ հույներ, ասորիներ, հայեր և հրեաներ հաստատվեցին վանքում, որտեղ նրանք հավասար պարտականություններ և հնարավորություններ

¹² Tekoyan V., Le Patriarcat Arménien Catholique de Cilicie au Temps de Gregoire Pierre VI (1812-1840), Beyrouth, 1954, p. 140.

¹³ Charles-Roux, France et Chrétiens d'Orient, Paris, 1939, p. 301.

¹⁴ Jeranian P., Catholic Armenian-Maronite Relations ..., p. 48.

¹⁵ Մաղաթիա Աղեբախկոպոս Օրմանեան, Ազգաբախում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմութեամբ, հ. Բ, Մարտի արտ. Ա. Էջմիածին, 2001, էջ 3145:

¹⁶ Jeranian P., Catholic Armenian-Maronite Relations ..., p. 48.

ունեին: 1707 թ. Լիվայզեում հիմնադրված Անտոնյանների վանքի փաստաթղթերը փաստում են, որ մարոնիական վանքերում հաստատվող հայ երիտասարդների թիվը ժամանակի ընթացքում աճում էր: Նրանցում հաստատված հայ վանականներից շատերն այժի էին ընկնում իրենց մտավոր կարողություններով: Նրանցից շատերը հետագայում մեկնում էին Հռոմ՝ բարձրագույն կրթություն ստանալով Պրոպագանդայի վարժարանում¹⁷:

Վերոնշյալ հայերից մի քանիսը կարևոր վարչական պաշտոններ էին զբաղեցնում Անտոնյան միաբանությունում: 1707 թ. Լիվայզեում Անտոնյան միաբանությունը բացեց դպրոց, որի տնօրեն նշանակվեց հայազգի Յակոբ Հարութինը¹⁸:

Հայ վանականներից մարոնիական վանքերում կարևոր պաշտոններ է զբաղեցրել նաև Բուստրոս Սաաթին, ով մարոնի Անտոնյան միաբանության կառավարիչն էր, ինչպես նաև Լիվայզեի վանքի կենտրոնական գրադարանի ղեկավարը: Այստեղ պահվում էին արժեքավոր փաստաթղթեր Լիբանանի պատմության և մարոնի համայնքի վերաբերյալ¹⁹:

18-րդ դարում հայ կաթոլիկների շրջանում աստիճանաբար հասունանում էր մարոնի Անտոնյան միաբանության օրինակով վանք հիմնելու գաղափարը: Հայեացի չորս կաթոլիկ եղբայրներ՝ Հակոբ, Հովհաննես, Աբրահամ և Մինաս Հովսեփյանները Մուրադյան/դարձան Բիսրվանում հայ կաթոլիկ միաբանության հիմնադիրները²⁰: Վերջիններս առևտրականներ էին և լավ հարաբերություններ ունեին Հայեալում մարոնի վաճառականների հետ, որոնք ավելի ուշ դարձան հայտնի կրոնական գործիչներ՝ նրանց թվում նաև Արդալաի Բարային:

Եղբայրներից ավագը՝ Աբրահամը, 1702 թ. այցելեց Լիբանան իր հին ընկերոջը՝ Բարայինին, որի հետ քննարկեց այստեղ հայ կաթոլիկների վանք հիմնելու ծրագիրը²¹: Նշենք, որ Բարային զգալի հեղինակություն

¹⁷ Լույն տեղում:

¹⁸ Jermianos F., *Tarikh 'al-Rahbaniiyya'* (History of the Congregation), Manuscript Held in the Monastery of Luwayzeh, p. 24, տե՛ս Jeranian P., *Catholic Armenian-Maronite Relations ...*, p. 50.

¹⁹ Bisybil L., *Tarikh al-Rahbaniiyya al-Maruniyya* (History of the Lebanese Maronite Congregation), Egypt, 1924, p. 287, տե՛ս Jeranian P., *Catholic Armenian-Maronite Relations ...*, p. 53.

²⁰ Mésérian J., *Histoire et Institutions de l'Eglise Arménienne: Evolution Nationale et Doctrinale Spiritualité-Monachisme*, Beyrouth, 1998, p. 319.

²¹ Սաղաքիա Աղբախեղոս օրմանեան, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ

ուներ Քիսրվանում՝ հատկապես խազին շեյխերի շրջանում, որոնք այդ շրջանի խոշոր ավատատերերից էին²²։ Նա լավագույն օգտագործեց իր կապերը՝ հայ եղբայրներին օգնելու նպատակով։

1718 թ. եղբայրները Քիսրվան գյուղում հանդիպեցին շեյխ Սախր Ալ-խազինի հետ, ով խոստացավ այդ հարցով խորհրդակցել մարոնի պատրիարք Յակոբ Աուադի և եպիսկոպոսների հետ²³։

Նույն թվականին խազին շեյխերի հետ իրենց առաջին հանդիպումից հետո, Հովսեփյան եղբայրները նամակ հղեցին Հռոմի Կեմենտ XI պապին, որտեղ իրենց հավատարմությունը հայտնեցին կաթոլիկությանը և ընդունեցին Հռոմի պապի գերակայությունը։ Նրանք նաև հայտնեցին Լեռնային Լիբանանում վանք հիմնելու իրենց մտադրության մասին²⁴։ Հռոմի պապը հավանություն տվեց եղբայրների ձեռնարկին և երաշխավորագիր ուղարկեց մարոնի խազին շեյխերին և պատրիարքին՝ տարածք տրամադրելու նպատակով²⁵։ Այս ընթացքում Հակոբն ու Մինասը վերադարձան Հալեպ, վաճառեցին իրենց ունեցվածքը՝ վանքի կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ձեռք բերելու նպատակով։ Հռոմ ուղարկած նամակը Պրոպագանդայի ժողովը քննարկեց 1719 թ. հունիսի 19-ին և հավանություն տվեց Մուրադյան եղբայրների ձեռնարկին՝ ավելացնելով դպրոց և ուսումնական կենտրոն ունենալու պայմանը։ Որոշումը կայացվեց 1720 թ. մարտի 8-ին և այն փոխանցվեց մարոնի պատրիարքին²⁶։

Մինչ այդ Հալեպում Հակոբին քահանա ձեռնադրեց հայ կաթոլիկ եպիսկոպոս Աբրահամ Արծիվյանը²⁷։ Իր գործերն ավարտելուց հետո Հակոբը ևս վերադարձավ Լիբանան։

1721 թ. հուլիսին եղբայրներին ընդունեց մարոնի պատրիարքը և հայտնեց, որ դեռևս մարտին խազին շեյխերը ստորագրել էին Քրեյմում իրենց տարածքներից հայ եղբայրներին հողակտոր տրամադրելու

անցքերը...», հ. Բ, էջ 3145։

²² Raphaël P., Le Role des Maronites dans le Retour..., p. 24.

²³ Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցու անցքերը..., հ. Բ, էջ 3201։

²⁴ Mésérien J., Histoire et institutions de l'Eglise Arménienne ..., p. 319.

²⁵ Արաբեան Ի., Հայ Անտոնեան միաբանութեան հիմնադրումը, Հանդես անտրես, IX, սեպտեմբեր, XVI, 1902, էջ 289։

²⁶ Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցու անցքերը..., հ. Բ, էջ 3280։

²⁷ Նույն տեղում։

վաստաթուղթ²⁸։ Նրանում նշվում էր, որ այն երբևէ չէր կարող վաճառվել և պետք է օգտագործվեր միայն վանք կառուցելու նպատակով։ Տարածքի համար խազին շնխետին վճարվելու էր միլի հարկատեսակը²⁹։

1721 թ. հուլիսի վերջին մարոնիների պատրիարք Յակոբ Աուաղը հրապարակեց ուղերձ, որում նա Քիսրվանի բնակչությանը կոչ արեց հայերին վերաբերվել որպես եղբայրների, հարգել նրանց և աջակցել հնարավոր միջոցներով³⁰։ Կաթոլիկ հայերը համարվեցին Քիսրվանի լիիրավ բնակիչներ։

Նույն բվականին Հովսեփյան եղբայրները Քրեյմում՝ Ռուստա գյուղի մոտ հիմնեցին Սուրբ Անտոնի վանքը և Սուրբ Փրկիչ եկեղեցին³¹։

Լեռնային Լիբանանի հայ կաթոլիկ համայնքի կազմավորման գործում զգալի ներդրում ունեցավ Աբրահամ Արծիվյանը /1679-1749 թթ./։ 1710 թ. նա եպիսկոպոս ձեռնադրվեց Հալեպում։ Ղեռնա Մելքոն Թասպապանի մոտ ուսանելու տարիներին Աբրահամը գործնական զաղափարներ էր մշակում ասանձին հայ կաթոլիկ համայնք ստեղծելու և նրանում իր դիրքերն ամրապնդելու ուղղությամբ³²։ Արծիվյանն իր ակտիվ գործունեության արդյունքում երեք անգամ քանտարկվեց՝ 1712 թ., 1715 թ. և 1720 թ.³³։ 1720 թ. սեպտեմբերի 2-ին Երուսաղեմի Գրիգոր Շրջայակիր պատրիարքի, ինչպես նաև Կ.Պոլսի հայ առաքելական պատրիարք Կոլոտի առաջարկով Արծիվյանն օսմանյան կառավարության կողմից արտաքսվեց Արվաղ կղզի³⁴։

Երկու տարի այնտեղ անցկացնելուց հետո Տրիպոլիում ֆրանսիական փոխկուպատոս մարոնի Անտոն Տուրքայի միջնորդությամբ 1722 թ. նա տեղափոխվեց Քրեյմ և հաստատվեց հայ վանականների շրջանում³⁵։

²⁸ Archives of the Armerian Antonine Monks, Box № 43, տե՛ս Jeranian P., Catholic Armenian-Maronite Relations ..., p. 58.

²⁹ Նույն տեղում, էջ 59։

³⁰ Մաղաքիս Աղբնիսկոպոս Օրմանեան, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը..., հ. Բ, էջ 3280-3281։

³¹ Նույն տեղում։

³² Բազմախիչ հանդիսարան, Յեռնար, քի 1, Կենսովի, Սուրբ Ղազար, 1903, էջ 506։ Յերզեան Մ., Խոստովանողի մը նամականին, Պեչրոթ, 1958, էջ 20-21։

³³ Athanasian Kh., Abraham-Pierre I^{er} Ardzivian Catholicoe, Beyrouth, 1959, pp. 56-57.

³⁴ Նույն տեղում, էջ 77։

³⁵ Մաղաքիս Աղբնիսկոպոս Օրմանեան, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը..., հ. Բ, էջ 3281։

Այստեղ Արծիվյանն աստիճանաբար ձեռք բերեց ազդեցիկ դիրքեր: Լիբանանում հաստատված հայկական վանքն ապաստան դարձավ թուրք այն եկեղեցականների համար, որոնք հարում էին կաթոլիկությանը և խնդիրներ ունեին Հայոց պատրիարքության հետ:

Մարոնի պատրիարք Յուսուֆ Ալ-Նազհին /1733-1742 թթ./ հատուկ վերաբերմունք էր տածում Արծիվյանի և Քրեյմի հայ վանականների նկատմամբ: Նա 1733 թ. հրապարակեց պաշտոնական նամակ, որով վերջիններին թույլ տվեց եկեղեցական արարողություններ կատարել Քիսրվանի մարոնիական եկեղեցիներում՝ նշելով, որ մարոնիներն ու հայերը նոթայունք են³⁶:

1735 թ. սեպտեմբերի 14-ին շեյխ Ջումբլաթ Ալ-Նազհինը Քրեյմի հայ վանականներին նվիրաբերեց Դթայում Մար Ջիրջիս վանքն՝ իր պահանջներով և հողատարածքներով³⁷:

1739 թ., երբ Հալեպում թուլացան կաթոլիկների դեմ հետապնդումները, Արծիվյանը վերադարձավ իր թեմ: Այնտեղ նա երեք հայ կաթոլիկ եպիսկոպոս ձեռնադրեց, որոնք էլ իրենց հերթին նրան ընտրեցին պատրիարք: 1740 թ. նոյեմբերի 26-ին Արծիվյանը կատարեց իր կաթոլիկոս օժման արարողությունը³⁸: Մարոնի կրոնական վերնախավն Արծիվյանի խնդրանքով 1741 թ. սեպտեմբերի 10-ին երաշխավորագիր հղեց Բենետիկտոս 14-րդ պապին՝ խնդրելով արագացնել Արծիվյանի հաստատման գործընթացը³⁹: Պապական կոնդակն Աբրահամ Պետրոս Ա Արծիվյանը՝ որպես Կիլիկիայի հայ կաթոլիկների պատրիարք, ստացավ 1742 թ. նոյեմբերի 26-ին, որից հետո նա վերադարձավ Լեռնային Լիբանան և հաստատվեց Քրեյմում⁴⁰:

Արծիվյանի այնտեղ հաստատվելուց հետո Քրեյմի վանքը դարձավ պատրիարքարան, որտեղից ղեկավարվում էին Օսմանյան Կայսրության մի շարք շրջանների հայ կաթոլիկները: 1722 թ.-ից սկսած, երբ հայտնի դարձավ, որ Արծիվյանը գտնվում էր Լեռնային Լիբանանում, մեծ թվով հայ կաթոլիկներ Հալեպից սկսեցին

³⁶ Jeranian P., *Catholic Armenian-Maronite Relations ...*, p. 81.

³⁷ *Archives of the Monastery of Bzummar, Box No 122, Year (1679-1749)*, see Jeranian P., *Catholic Armenian-Maronite Relations ...*, p. 62.

³⁸ Մաշաբա Արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցու պատմություն... հ. Բ, էջ 3404:

³⁹ Raphael P., *Le Role des Maronites dans le Retour...*, p. 40.

⁴⁰ Մաշաբա Արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցու պատմություն... հ. Բ, էջ 3409-3411:

հաստատվել Լիբանանում: Շատ հայ ուխտավորներ, որ մեկնում էին Երուսաղեմ, վերադառնալիս այցելում էին վանք և հաստատվում այնտեղ⁴¹:

Արծիվյանը Քրեյմի վանքը ղեկավարում էր մարոնի Անտոնյան միաբանության կանոնադրությամբ: 1739 թ. նա այն ներկայացրեց վանականների քննարկմանը, որոնք որոշ փոփոխություններից հետո հաստատեցին վերջինս՝ որպես հայ Անտոնյան միաբանության կանոնադրություն⁴²: 1738 թ. հուլիսի 15-ին 75 տարեկան հասակում մահացավ Քրեյմի վանքի հիմնադիր և արքահայր Աբրահամ Մուրադյանը: Վանքում առաջնային դիրքեր սկսեցին զբաղեցնել Արծիվյանի երկու քեռորդիները՝ հայր Պետրոս և հայր Գրիգոր Ներսիսյանները: Հայր Պետրոսն Աբրահամի մահվանից հետո եռամյա ժամկետով նշանակվեց նրա պաշտոնում⁴³:

Ժամանակի ընթացքում Քրեյմի վանքը շարունակում էր ընդլայնվել՝ ներառելով այլ տարածքներ: Հայեպից և Օսմանյան Կայսրության այլ շրջաններից զգալի թվով երիտասարդներ շարունակում էին հաստատվել Քրեյմում:

Ճետաքրքրական են Անտոնյան և Մխիթարյան հայ կաթոլիկ միաբանությունների հարաբերությունները: Բզմմառի վանքում առկա են փասաթղթեր, որոնք վկայում են երկու միաբանությունները միավորելու մտադրությունների մասին: Այս գաղափարը կյանքի կոչելուն էր ուղղված մարոնի Անտոնյանների կանոնադրիքը Մխիթարյանների կանոնագրքով փոխարինելու մտադրությունը, որի մասին խոսվում էր Արծիվյանի՝ Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթարին ուղղված 1741 թ. հուլիսի 18-ի նամակում⁴⁴: Սակայն միավորման զործընթացն այդպես էլ կյանքի չկոչվեց՝ միաբանությունների միջև այդ հարցում առկա հակասությունների հետևանքով: 1742 թ. փետրվարի 9-ին Մխիթարն Արծիվյանին ուղղված իր նամակում մերժեց Անտոնյանների հետ միավորման առաջարկը⁴⁵:

1740 թ. հետո հայ վանականների թվաքանակի ավելացումը Քրեյմի վանքում էլ ավելի հասունացրեց նոր վանք հիմնելու գաղափարը:

⁴¹ Jeranian P., *Catholic Armenian-Maronite Relations ...*, p. 64.

⁴² Լույս տեղում, էջ 66:

⁴³ Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգաբախում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը..., հ. Բ, էջ 3402-3403:

⁴⁴ Լույս տեղում, էջ 3407-3408:

⁴⁵ Լույս տեղում, էջ 3408-3409:

Արծիւյանը վանականների հորդորով որոշեց կառուցել առանձին վանք: Այս նպատակով նա 1749 թ. հրապարակեց նամակ՝ որում ֆինանսական աջակցություն էր խնդրում իր համայնքի համար⁴⁶: Այդուհանդերձ նա չկարողացավ տեսնել իր նախագծի իրականացումը, քանի որ 1749 թ. հոկտեմբերի 1-ին մահացավ:

Մինչև նոր պատրիարքի ընտրությունը եպիսկոպոսները փորձեցին իրականացնել հանգուցյալ պատրիարքի մտադրությունը: Նրանք հանդիպեցին մարոնի պատրիարք Սիման Աուադի հետ և նրա թույլատվությունը ստանալուց հետո, սկսեցին աշխատել ծրագրի իրականացման ուղղությամբ:

1749 թ. հոկտեմբերի կեսին հանդիպում տեղի ունեցավ շեյխեր Մուշրիֆ և Քաթայան Ալ-Նազհիների հետ: Վերջիններս այդ նպատակով տրամադրեցին Բզմնաթի ագարակը⁴⁷: Հռոմի եկեղեցուն պատկանող Սուրբ Տիրամոր վանքը կառուցելու նպատակով⁴⁸:

Հետաքրքրական է, որ հողերի նվիրաբերման փաստթղթերում իշխանության կողմ էին համարվում մարոնի պատրիարքը՝ որպես համայնքի գերագույն ղեկավար և Նազհին ավատատերերը, որոնք աջակցություն էին ցույց տալիս կաթոլիկ հայերին հայ առաքելական պատրիարքի և օսմանյան կաթավարության հետապնդումներից խուսափելու գործում⁴⁹: Այս փաստն ապացուցում է, որ Լեոնային Լիբանանում 18-րդ դարում մարոնիներն ունեին քավարար իշխանություն, ինչը հնարավորություն էր տալիս նրանց, իրենց շահերից ելնելով, ազատորեն աջակցել հայ կաթոլիկներին:

Հոկտեմբերի 14-ին 5 Անտոնյան միաբանները գումարեցին նիստ և կաթողիկոս հռչակեցին Հակոբ Հովսեփյան Մուրադյան/ Հայեպի եպիսկոպոսին: Եկեղեցական աշխատություններում վերջինս հիշատակվում է որպես Հակոբ Պետրոս Բ: Դեկտեմբերի 22-ին կաթողիկոս օծման արարողությունը տեղի ունեցավ, իսկ 1750 թ.

⁴⁶ Mésérian J., Histoire et institutions de l'Eglise Arménienne..., p. 325.

⁴⁷ Բզմնաթի գտնվում է Միջին Քարվանսում՝ ծովի մակարդակից 950 մ բարձրության վրա: Բզմնաթից արևմուտք գտնվում են Հադիսա, Ղարուն և Ղոստա գյուղերը, արևելքում՝ Ույֆուն և Աշքուր գյուղերը, որոնց բնակիչները մարոնիներ են:

⁴⁸ Վարժապետյան Ս., Հայերը Լիբանանի մեջ, հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Ա, Պեղոս, 1982, էջ 270:

⁴⁹ Archives of the Monastery of Bzoummar, Box № 26, Year 1753, see Jeranian P., Catholic Armenian-Maronite Relations ..., p. 66.

սեպտեմբերի 23-ին կարդինալական ժողովում հաստատվեց նորընտիրի պաշտոնը⁵⁰:

Պատրիարք Հակոբը ստանձնեց Բզմմաթի վանքի կառուցումը: Վանքի շուրջ գնեց նոր հողեր, որտեղ նրա ղեկավարությամբ տնկվեցին խաղողի այգիներ և թթենիներ: Վանքի վրա արձանագրված է 1749 թ.⁵¹ որպես շինարարության սկիզբ, իսկ այն ավարտուն տեսք ստացավ 1771 թ.⁵²: 1750 թ. Հակոբը բողեց Քրեյմը և հաստատվեց Չմմաթում՝ իր հետ տանելով մի քանի Անտոնյան միաբաններ:

1750 թ. Բեյթ Խաշրո կոչված բարձունքի վրա կիրանանում հայ Անտոնյաններին հնարավորություն տրվեց կառուցել ևս մեկ վանք: Փաստաթուղթը 1750 թ. ապրիլի 12-ին ստորագրեց շայխ Սինտո Ալ-Խազին և հաստատեց պատրիարք Տաբիյա Ալ-Խազին⁵²:

1753 թ. հունիսի 10-ին վախճանվեց Հակոբ Պետրոս Բ. կաթողիկոսը, որի վաստակը ևս շատ մեծ էր հայ կաթողիկ միաբանության հիմնադրման գործում: Հակոբին հաջողվեց նաև զգուշավորություն դրսևորել և հակասություններ չունենալ հայ առաքելական եկեղեցու հետ: Հովսեփյանը թաղվեց Քրեյմում⁵³:

1753 թ. հունիսի 23-ին կաթողիկոս ընտրվեց Միքայել Պետրոս Գ-ը, որի ընտրությունը պատճառ վավերացրեց 1754 թ. մայիսի 6-ին⁵⁴: Վերջինս ևս, Արծիւյանի օրինակով, փորձեց իր ազդեցությունը տարածել Օսմանյան կայսրության ողջ հայ կաթողիկների նկատմամբ, սակայն այս գաղափարը հավանություն չգտավ Հոտում: 1759 թ. ապրիլի 30-ի պապական վճռով կաթողիկոսության իրավասությունները սահմանափակվեցին միայն Կիլիկիայով, Ասորիքով և Միջագետքով⁵⁵:

Նրա ղեկավարությամբ Բզմմաթի շինարարությունը շարունակվեց: Գնվեցին նոր հողատարածքներ: Գասպարյանը մահացավ 1780 թ. նոյեմբերի 16-ին և թաղվեց Բզմմաթում⁵⁶: Հաջորդ պատրիարքը՝

⁵⁰ Terzian M., Le Patriarcat de Cilicie et les Arméniens Catholiques, p. 93.

⁵¹ Jeranian P., Catholic Armenian-Maronite Relations ..., p. 67.

⁵² Մաղաթիա Աղեմսիկուպու Օրմանեան, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցու անցքերը ..., հ. Բ, էջ 3483:

⁵³ Jeranian P., Catholic Armenian-Maronite Relations ..., p. 67.

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ Մաղաթիա Աղեմսիկուպու Օրմանեան, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցու անցքերը ..., հ. Բ, էջ 3484-3485:

⁵⁶ Ալեքսանդրեան Ա., Համառոտ պատմութիւն երկուտասան կաթողիկոսաց Կիլիկիոյ, Կենտրոն, 1906, էջ 22:

Բասիլիոս Ալքադյանն, ընտրվեց 1780 թ. դեկտեմբերի 1-ին: Նորընտիր պատրիարքը հյուրընկալում էր այն կաթոլիկներին, որոնք խուսափում էին Կ. Պոլսի առաքելական պատրիարք Ջաքարիայի /1780-1781 թթ./ հետապնդումներից: Բասիլիոսը մահացավ 1788 թ. փետրվարի 15-ին⁵⁷:

1788 թ. մայիսի 11-ին Ադանայի աղքեպիսկոպոս Գրեգորի Կուպեյանն ընտրվեց պատրիարք: Պապի հաստատումը ստացվեց նույն օրվականի դեկտեմբերի 15-ին⁵⁸:

Կուպեյանի ամենանշանակալի գործը 1810 թ. Բզմմառի ժառանգավորաց վարժարանի հիմնադրումն էր, որը մինչ օրս շարունակում է հոգևորականներ պատրաստել⁵⁹: Այս կրթական հաստատությունում դասավանդվում էր հայերեն: Կրթական համալիրի ֆինանսավորման միակ աղբյուրը Մադրասի հայ առևտրականների նվիրատվություններն էին, ինչը սահմանված էր պատրիարքի և նրանց միջև 1791 թ. սեպտեմբերի 29-ին կնքված համաձայնագրով⁶⁰:

Այսօր էլ ժառանգավորաց վարժարանում ուսանում են զգալի թվով երիտասարդներ, որոնք ստանում են որակյալ կրթություն: Զմմառի շրջանավարտներից շատերը՝ նաև որպես ուսուցիչներ, զգալի դեր են խաղում Սիրիայի և Լիբանանի հայ համայնքներում երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակության գործում:

Կուպեյանը մահացավ 1812 թ. հունիսի 17-ին: Նույն օրվականին պատրիարք ընտրվեց եպիսկոպոս Գրեգորի Ջերանյանը⁶¹: Նրա օրոք, մարոնի պատրիարքի հրամանով, վանքին նոր հողատարածքներ նվիրաբերվեցին Քիսրվանի գյուղերում՝ Ջիբջինում և Բզմմառում:

1828 թ. հունիսի 14-ին Կ. Պոլսում և Հալեպում հայ կաթոլիկների նկատմամբ հետապնդումներից խուսափելու նպատակով՝ Գրեգորի Սարայանը՝ 16 այլ հոգևորականների հետ, Անատոլիայից հաստատվեց Բզմմառի վանքում⁶²: Նույն օրվականի նոյեմբերի 15-ին հոգևորականների և մեկ խումբ Տաբոնից հաստատվեց Բզմմառում:

⁵⁷ Նույն տեղում, էջ 32:

⁵⁸ Մաղաքիա Աղքեպիսկոպոս Օրձանեան, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցույ անցքերը..., հ. Բ, էջ 3680:

⁵⁹ Վարժապետյան Ա., Հայերը Լիբանանի մեջ, հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Ա, էջ 271; Raphael P., Le Role des Maronites dans le Retour..., p. 51.

⁶⁰ Terzian M., The Armenian Monastery of Bzummar, Beirut, pp. 49-50.

⁶¹ Jeranian P., Catholic Armenian-Maronite Relations ..., p. 68.

⁶² Նույն տեղում, էջ 69:

Այս հոգևորականները պատրիարքի հովանավորությամբ վանքում մնացին մինչև 1830 թ.⁶³, երբ Սուլթան Մահմուդը հրապարակեց հրովարտակ, որով ճանաչեց հայ կաթոլիկներին առաքելական պատրիարքությունից անկախ համայնք՝ միլլեթ: Արդյունքում հետապնդումները դադարեցին: Վերոնշյալ հրամանգիրը հնարավորություն տվեց հայ կաթոլիկներին ազատորեն դավանել իրենց հավատքը: Այն մեծապես ոլորացրեց Բզմմառի վանքի քարոզչական գործունեությունը:

Պատրիարք Ջերանյանը մահացավ 1840 թ. սեպտեմբերի 22-ին և թաղվեց Բզմմառում⁶⁴:

Լիբանանում եմիր Բաշիր II ղեկավարման շրջանը /1788-1840 թթ./ հատուկ նշանակություն ունեցավ Քիսրվանի հայ համայնքի համար: Նրա հատուկ վերաբերմունքը Բզմմառի հայ համայնքի նկատմամբ պայմանավորված էր նաև Ջմմառի եպիսկոպոս Հակոբ Հոլասայանի հետ Բաշիրի մտերիմ հարաբերություններով: Վերջինս Բաշիրի երկրորդ կնոջ՝ Հասն Զահանի հոգևոր հայրն էր⁶⁵: Բաշիրի խնդրանքով նա էլ կատարեց նրանց ամուսնության արարողությունը:

1838 թ. եմիր Բաշիրը հազար աֆաստր զուսար նվիրաբերեց հայ կաթոլիկ համայնքին⁶⁶: 1832 թ. վերջինիս հրամանով Բզմմառի վանքի Քիսրվանի տարբեր շրջանների կալվածքներն ազատվեցին միրի հարկատեսակից⁶⁷:

Եմիր Բաշիրը հայ համայնքին ցույց էր տալիս քաղաքական, քարոյական և տնտեսական աջակցությունը նպաստեց համայնքի դիրքերի ամրապնդմանը Լեռնային Լիբանանում: Այդ հարկից ազատումը հնարավորություն տվեց զգալի ֆինանսական միջոցներ կենտրոնացնել համայնքի ձեռքում:

Լեռնային Լիբանանում հայ կաթոլիկների հաստատումը հանընկալ այն ժամանակաշրջանի հետ, երբ մետաքսի առևտուրը տնտեսական ակտիվության հիմնական ոլորտն էր այս շրջանում: 19-րդ դարի կեսին մետաքսը շարունակում էր մնալ Լիբանանի հիմնական արտադրանքներից մեկը: Եմիր Բաշիր 2-րդի հայ համայնքի

⁶³ Ալեքանդրեան Ա., Համառոտ պատմություն երկրաշառն..., էջ 40:

⁶⁴ Terzian M., The American Monastery of Bzummar, p. 174.

⁶⁵ Jeranian P., Catholic Armenian-Maronite Relations ..., p. 73.

⁶⁶ Լույն տեղում, էջ 74:

⁶⁷ Լույն տեղում, էջ 75:

կապվածքները միջի հարկից ազատելու որոշումը խթանեց նաև համայնքում մետաքսի մշակմանն ու առևտրի զարգացմանը:

Դեռևս 1749 թ. օգոստոսի 4-ին Քրեյմում տեղի ունեցած նիստի ընթացքում որոշում էր կայացվեց թեմիների այգիների ավելացման մասին: Դրանք երբեք չպետք է վաճառվեին⁶⁶: Բզմմառի վանքի փաստաթղթերի համաձայն 1749-1841 թթ., տարբեր պատրիարքների օրոք, վանքը գնել էր 9,689 պիաստր արծեթի թեմիների և խաղողի այգիներ⁶⁷: Այսօր Ձմմառի այգիների տարածքը 120.000 քառ. մետր է⁶⁸:

Համայնքում նաև գործում էր մետաքս գործվածքների փոքր արտադրություն և զգեստների պատրաստում:

Բզմմառի հայ կաթոլիկ համայնքը կարճ ժամանակում կարողացավ ձեռք բերել բավարար տնտեսական ներուժ: Հայերի տնտեսական ակտիվությունն իր հերթին նպաստում էր Լեռնային Լիբանանի զարգացմանը:

Վանքն ունի նաև հայերեն ձեռագրերի արծեթավոր հավաքածու: Ձմմառի ձեռագրերի համառոտ ցանկը տպագրվել է Սիսակ Յակոբ Վարժապետյանի «Հայերը Լիբանանի մեջ. հանրագիտարան լիբանանահայ գաղութի» գրքում⁶⁹:

Վանքի հարստությունն է համարվում հրաշագործ Տիրամոր յուղաներկ կտավը, որ վերագրվում է Ուֆայելի վրձինին: Այն 1742 թ. Հոռմից իր հետ բերեց Աբրահամ Պետրոս Ա. կաթողիկոսը⁷⁰:

1915 թ. ցեղասպանությունից հետո, հազարավոր հայերի հաստատումը Լիբանանում, որտեղ նրանք լավ ընդունելության արժանացան, մեծապես կապված էր նաև Բզմմառի վանքի գոյության հետ, որի ավելի քան երկդարյա գործունեությունը Լեռնային Լիբանանում լավագույն երաշխիքն էր հաստատվող հայերի համար:

⁶⁶ Athanassian Kt., Abraham-Pierre l' Ardzivian..., p. 340.

⁶⁷ Jeranian P., Catholic Armenian-Maronite Relations ..., p. 79.

⁶⁸ Վարժապետյան Ա., Հայերը Լիբանանի մեջ. հանրագիտարան լիբանանահայ գաղութի, հ. Ա, էջ 271:

⁶⁹ Լույն տեղում, էջ 465-470:

⁷⁰ Լույն տեղում, էջ 270:

THE FOUNDATION OF ARMENIAN CATHOLIC CONVENT
OF BZUMMAR

Maronite monasticism, which was reorganized in Mount Lebanon in the XVII century, provided the environment for young Armenians who were coming from Aleppo to find the opportunity to receive religious education and offer their administration, artistic and intellectual talents for development of the Maronite Antonine monasteries in their organizational phase.

Another consequence of this early interaction between the Maronites and Armenian Catholics was the encouragement and support offered by the Maronite religious authorities and the Khazin feudal lords. Armenian individuals, including the trainees of the Maronite convent of Qozhayya in Beshareh, were helped. Permission was granted for the Armenian Catholics to found their community, convent of Kraym in Ghosta in 1720 and the convent of Bzummar in 1746, thus creating a foothold for the Catholic Armenians in Lebanon, which would attract in course of time, other Armenians, who escaping anti-Catholic persecution perpetrated by the Armenian Orthodox patriarch and the Ottoman government in Aleppo, would seek refuge within these monasteries under the protection of the Maronites.

Within a short period, the monastery of Bzummar, with its silk production and supply of wheat flour and money lending, became a center of commerce in the local market, which in its turn promoted the status of the community members not only as polite and intelligent, but also as an economically useful element to the prosperity of Mount Lebanon.

ՆԱԶԵԻ ՆԱԿԱՍԱՐԴՅԱՆ

1905-1911 թթ. ԻՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՐԴԱԿԱՆ ՀԱՐԺՄԱՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԵՈՒՐՁ

1905-1911 թթ. Իրանում տեղի ունեցած սահմանադրական շարժման վերաբերյալ խորհրդային շրջանի մի շարք աշխատություններ կարևոր տեղեկատվական և գիտական արժեք են ներկայացնում: Սակայն ժամանակաշրջանին բնորոշ գաղափարական նկատառումներից ելնելով՝ պատմագրության մեջ տասնամյակներ շարունակ կամ լուս շրջանցվել կամ ոչ պատշաճ ուսումնասիրության է ենթարկվել Իրանում 1905-1911 թթ. սահմանադրական հեղափոխությանը հայերի մասնակցության խնդիրը¹:

Սահմանադրական շարժումն Իրանում XIX դ. երկրորդ կեսին և XX դարի սկզբին արտաքին քաղաքական բազմաթիվ իրադարձությունների և երկրի ներսում ծնավորված սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետևանք էր:

Իրանի միջնադարյան քաղաքական և կիսաավատական կարգը, խոշոր ավատատերերի անջատողական ձգտումները, անձի և զույգի անապահովությունը, օտարերկրյա տերությունների, մասնավորապես Մեծ Բրիտանիայի և ցարական Ռուսաստանի միջամտությունն Իրանի ներքին խնդիրներին բավականին լուրջ խոչընդոտներ էին, որոնք արգելակում էին երկրի բնականոն զարգացումը: Չնայած իրականացվող դրոշ քարեփոխումներին և պետական ապարատի եվրոպականացման առանձին փորձերին, Իրանը շարունակում էր մնալ գյուղատնտեսական թերզարգացած երկիր: Ավատատիրական մնացորդները և օտարերկրյա տերությունների չափազանց միջամտությունը երկրի քաղաքական և տնտեսական կյանքին, առաջին հերթին սահմանափակում էին երկրում ծնավորվող մանր ու

¹ Иванов М., Иранская революция 1905-1911 годов, Москва, 1957; Арутюнян Г., Иранская революция 1905-1911гг. и большевики Закавказья, Ереван, 1956; Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Հայկական ՍՍՀ գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1981, էջ 438-440; Бор-Раменский Е., К вопросу о роли большевиков Закавказья в Иранской революции 1905-1911гг., Историк марксист, № 11, 1940 և այլն:

միջին բուրժուազիայի և լիբերալ հողատերերի գործունեությունը, որոնց շրջանում աստիճանաբար ծնավորվում էին ազգային բուրժուազիային հատուկ հատկանիշներ: Հասարակության այդ շերտը քաջ գիտակցում էր գործող կարգերում արմատական փոփոխություններ իրականացնելու, երկրի կենտրոնացման և միասնական շուկայի ստեղծման անհրաժեշտությունը:

XIX դարի վերջին տասնամյակներն Իրանում նշանավորվեցին ազգային ինքնագիտակցության բուռն վերելքով: Դրան առաջին հերթին նպաստում էին Իրանում և արտերկրում բնակվող մտավորականության գործունեությունը, արտասահմանում կրթություն ստացած իրանցիների սովոր գանգվածը, ազգայնական ոգով և քաղաքական ուղղվածությամբ թերթերն ու ամսագրերը²: Օսմանյան կայսրությունում և Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխական խմորումները լայն արձագանք էին գտնում իրանական մամուլում: Կովկասի և Թուրքիայի հետ լեզվական և մշակութային ընդհանրությունները Թավրիզը վերածեցին սահմանադրական շարժումը սնող քաղաքական կենտրոնի:

Իրանի հասարակական-քաղաքական կյանքում կարևոր գործոն էր նաև շիա հոգևորականության մեծ ազդեցությունը, որո անընդհատ միջամտում էր երկրի կառավարման հարցերին: Շատ այդմ, վերջինիս և դաջարական իշխող վերնախալի միջև հարաբերությունները մշտապես լարված էին: XX դարասկզբին դաջարական կառավարության կողմից հոգևորականության արտոնություններն ու իրավունքները սահմանափակելու հետևանքով այդ առձակատումն էլ ավելի սրվեց³, որի հետևանքով բարձրաստիճան հոգևորականների զգալի մասն օժանդակեց երկրում սահմանադրական կարգերի հաստատմանը:

Իրանում սահմանադրական շարժման սկիզբ է համարվում 1905 թ. դեկտեմբերը: Խորը տնտեսական ճգնաժամից անմիջապես հետո պայթեցին մի շարք հասարակական բողոքներ՝ մեկը մյուսից ավելի հուժկու, որոնց հետևեց 1906 թ. հուլիսյան քեստը⁴ Թեհրանի

² 1905 թ. ավելի քան 150 անուն ծանուլ էր հրատարակվում Թեհրանում, 50-ը՝ Թավրիզում և շուրջ 15՝ Փիլանում: Browne E., *The Press and Poetry of Modern Persia*, Cambridge University Press, 1914, pp. 27-166.

³ Шумов Г., *Персия под властью последних Каджаров*, Ленинград, 1933, с. 24, 76-79.

⁴ Անձեռնմխելիության իրավունք մզկիթներում, դամբարաններում, մուսուլմանական սրբավայրերում, ինչպես նաև դեսպանատների տարածքներում՝ իշխանությունների

բրիտանական դեսպանատան այգում: Երկրի հյուսիսում, այնուհետև մայրաքաղաքում սկսեցին ձևավորվել և ընդհատակից դուրս գալ քաղաքական և հեղափոխական կոմիտեները (էնջումենները): Սկզբնական փուլում դրանք իրականացնում էին տեղական ընտրական մարմնի գործառույթ:

1905 թ. օգոստոսի 5-ին Մոզաֆֆար էդ-Ղին շահը ստորագրեց Իրանում սահմանադրական կարգեր և Ազգային ժողով (Մեջլիս) հիմնելու մասին հրամանագիր: 1906 թ. դեկտեմբերի 30-ին մահամեծ շահը հաստատեց նաև Սահմանադրության առաջին մասը՝ «Հիմնական օրենքը»⁶: 1907 թ. հուլիսին, նրա մահվանից հետո նոր շահ հռչակվեց որդին՝ Ատրաքատականի կաթավարիչ Մոհամմեդ Ալին: 1907 թ. հոկտեմբերի 7-ին վերջինս հաստատեց Սահմանադրության Հիմնական օրենքի «Հավելումները»⁶: Հիմնական օրենքի «Հավելումները» նախատեսում էին կազմակերպել նահանգային և շրջանային էնջումեններ որջ երկրի տարածքում: «Հավելումները» 90,91,92,93 հոդվածները վերաբերում էին նահանգային էնջումենների իրավունքներին⁷: Համաձայն Սահմանադրության, էնջումենները ձեռք բերեցին տեղական ընտրական, խորհրդատվական ինքնակառավարման մարմնի արտոնություններ և իրավունքներ: Ակզբում Կովկասում, այնուհետև Իրանում կազմակերպվեցին գաղտնի «մոջահեդները» (մարտիկներ սրբազան գործի համար) հեղափոխական միություններ, ֆիդայական ջոկատներ, որոնք պատրաստ էին զոհաբերելու իրենց հանուն սահմանդրական կարգերի հաղթանակի⁸: Մոջահեդները ազգային-հեղափոխական, ռազմական

կողմից հետապնդվելու դեպքում:

⁶ Բաարալի Ա., Թարիխ-ե մաշրուբ-ե Իրան, Եեհլան, 1379, ս. 171-172, (այսու): Constitutions, Electoral Laws, Treaties, of States in the Near and Middle East, Duke University Press, 1947, pp. 68-78.

⁷ A Brief Narrative of Recent Event in Persia, Followed by a Translation of "The Four Pillars of the Persian Constitution", trans. by Brown Ed., London, 1909, pp. 87-101; Сборник дипломатических документов касавшихся События в Персии (այսուհետ՝ Сборник диплом. док...), Санкт-Петербург, 1911, с. 1-2.

⁸ A Brief Narrative of..., p. 99.

⁸ Մոջահեդների միության ծրագիրը ընդունվել է 1907 թ. սեպտեմբերի 10-ին Մեշհեդում (մոջահեդների ներկայացուցչական ժողովում), Afary J., Social Democracy and the Iranian Constitutional Revolution of 1906-1911, A Century of Revolution Social Movements in Iran, ed. J. Foren, v. II, University of Minnesota Press, 1984, p. 29.

այն ուժն էր, որի վրա հիմնվում էին շնչումենները և գործող հեղափոխական կազմակերպությունները:

Սահմանադրական շրջանում ասկա էին երկու հակադիր խմբավորումներ՝ «Մաշրուփե» և «Մոսաբեթ» (սահմանադրականներ և հակասահմանադրականներ): Իշխող վերնախավը, հատկապես ազնվականությունը մոսաբեթյան ճամբարում էր և մեղադրում էր սահմանադրականներին՝ իսլամի սկզբունքներից շեղվելու մեջ: Սահմանադրության կողմնակիցներն ավելի փոքրաթիվ էին՝ հիմնականում մտավորականությունը, բուրժուազիան և այսպես կոչված «քազարիները» (մանր ու միջին բուրժուազիայի ներկայացուցիչները, արհեստավորները): Ընդհանուր առմամբ սահմանադրական շարժման սկզբնական փուլում հասարակության մեծ մասն ուներ հակասահմանադրական տրամադրություններ: Սակայն, երբ բարձր հոգևորականությունը աստարեց շարժմանը, հասարակության մյուս՝ ավելի ցածր դասերի ներկայացուցիչները նույնպես միացան նրանց⁹: Ուլեմները ստածնեցին շարժման ղեկավարությունը՝ փորձելով իրենց հետևից տանել զանգվածներին:

1905 թ. ռուսական հեղափոխության պիչքը Իրան հասավ կովկասյան քաղաքներում արտազնա աշխատանքների մեկնած բանվորների, Ռուսաստանի համալսարաններում կրթություն ստացած իրանցի ուսանողների, Իրանի հետ գործադար կապեր ունեցող մարդկանց, գլխավորապես իրանցի և ռուս ասետրականների միջոցով: Բազմաթիվ կովկասցի հեղափոխականներ, այդ թվում նաև հայեր, որոնք, Իրան էին փախել ռուսական իշխանությունների հետապնդումներից, նույնպես հեղափոխական գաղափարախոսության ներկրողներ էին:

Մեծ թիվ էին կազմում նաև թե՛ Իրանի հյուսիսային շրջաններում Կովկասից արտազնա աշխատանքների մեկնած բանվորները, թե՛ Անդրկովկասի նավթային արդյունաբերությունում աշխատող իրանցիները¹⁰:

⁹ Pevs G. S. M., Iran в XX век. Политическая история, Москва, 1994, с. 45-46; Abrahamian E., Iran between Two Revolutions, Princeton, New Jersey, 1982, p. 58.

¹⁰ Օրինակ՝ Գիլանում ձկնարդյունաբերության ձեռնարկություններում զբաղված էին 4200 բանվոր, որոնցից 3200-ը ռուսախառակ էին: Իսկ Անդրկովկասում աշխատող իրանցիների թիվը 1905 թ. շուրջ 82 000 էր հասնում: XX դարի առաջին տասնամյակում Բաքվի նավթաշխարհի բանվորների 50% իրանցիներ էին: Կովկասում ծաղկունք էին ապրում պարսից զրականություն ու կրթական հիմնարկները, հրատարակվում էին

Սահմանադրական կարգեր հռչակելուց անմիջապես հետո շահն անզիջում պայքար սկսեց սահմանադրականների դեմ: Այն ավելի կատաղի բնույթ ստացավ, երբ 1908 թ. հունիսի 22-ին շահը թեհրանում ռազմական դրուգյուն հայտարարեց, իսկ հունիսի 23-ին Իրանի Կոզակական բրիգադի ռուս հրամանատար գնդապետ Վ.Պ. Կախովի աջակցությամբ պետական հեղաշրջում իրականացրեց՝ ռմբակոծելով Մեջլիսի շենքը: Հայտարարվեց, որ Մեջլիսն ու էնջումենները ցրվում են: Սպանվեցին, ձերբակալվեցին և երկրից արտաքսվեցին սահմանադրական շարժման բազմաթիվ առաջնորդներ¹¹: Բռնությունների այս նոր պայմաններում հեղափոխական շարժումը տեղափոխվեց երկրի հյուսիսային շրջաններ, մասնավորապես՝ Ատրպատական և Գիլան: Այստեղ կենտրոնացան Կովկասից ժամանած զինյալ խմբեր՝ կազմված հայերից, վրացիներից և աղբրեջանցիներից, որոնք իրենց հետ զենք, զինամթերք, քարոզչական գրականություն էին բերում¹²: Թավրիզում սկսեցին խտանալ նաև հետադիմական ճանքարի ուժերը, որոնք կատաղի պայքարի մեջ մտան սահմանադրականների հետ: Ատրպատականի սոցիալ-դեմոկրատների կազմակերպությունը, Թավրիզի էնջումենը, մոզահեդների խմբերը կազմակերպեցին ազգային ինքնապաշտպանական բանակ՝ Սաթթար խանի ղեկավարությամբ, որի մեջ ընդգրկվեցին նաև Անդրկովկասից ժամանած հայ, վրացի և ազերի հեղափոխականներ¹³: Էնջումենների աչքի ընկնող անդամները, որոնք փախել էին երկրից և ընդհատակյա գործունեություն ծավալել

թրթր, իրանց վաճառականներն իրենց հայրենակիցների համար քաջ էին անում արագ դադարեցնելի ուսումնական կենտրոններ և այլն: Ռուսաստանում (Անդրկովկասում) գոյություն ունեին սոցիալ-դեմոկրատական կոդմոտորշմաք տարատեսակ իրանական կազմակերպություններ, որոնք անդամակցում էին բազմաթիվ իրանցի աշխատավորներ և ժողովրդականներ: Բայցվում է հիմնադրվել իրանական ազգեցիկ՝ «Էջեմայուն-ե Ամլուն» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: Արտագնա աշխատանքների մեկնած իրանցիները հայրենիք էին վերադառնում կատարելապես քաղաքականազգված: Արդյունքում Իրանում մտավորվում էին քաղաքական մախ կոդմոտորշմաք հոսանքներ: Հայ, ասորի, վրացի և իրանցի քանվորները, յնպած իրանական հասարակությանը բնորոշ ռաայական և կրոնական ժամատվածուզանը, համատեղ քաղաքական գործունեություն էին ծավալում զանազան հեղափոխական էնջումեններում (կոմիտեներ): Pese Fouc M., Iran e XX seca... c. 32-33.

¹¹ Afery J., The Iranian Constitutional Revolution, 1906-1911, New York, 1996, pp. 140-142.

¹² Abrahamian Er., Iran between Two Revolution, Princeton, New Jersey, 1982, pp. 95-97.

¹³ Շումոբ Դ., Որոշում ուղ ճառուայ... , c. 114-115.

Կովկասում, նույնպես վերադարձան՝ համալրելով շարժման գինված մասնակիցների շարքերը¹⁴:

Իրանի սահմանադրական շարժմանը հայերի մասնակցության կարևոր պատմական փաստը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է ավելի լայն դիտարկել քաղաքական և սոցիալական այն պայմանները, որոնցում ապրում էր պետականություն չունեցող հայ ժողովուրդը:

XIXդ. Թուրքիայում, Կովկասում և Իրանում ապրող հայերը քաժանված էին ոչ միայն աշխարհագրորեն, այլև գտնվում էին սոցիալական, տնտեսական, մտավոր և քաղաքական զարգացման տարբեր մակարդակներում: Իրանի հայկական համայնքը, ի տարբերություն Օսմանյան և Ռուսական կայսրությունների հայկական համայնքների, ավելի փոքրաթիվ էր, սակայն քաղաքական առումով, որպես կրոնական փոքրամասնություն, գտնվում էր ավելի շահեկան պայմաններում: 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրից հետո XIXդ. վերջին և XX դարսկզբին Իրանի հայ բնակչությունը կենտրոնացած էր հիմնականում Ատրպատականի, Գիլանի և Սպահանի հատվածներում: Նրանց մոտավոր թիվը, ըստ տարբեր աղբյուրների, հասնում էր 63000-70000¹⁵: Նշված ժամանակաշրջանն իրանահայ գաղութի համար նշանավորվեց աշխարհիկ կրթություն ստանալու և երկրի քաղաքական կյանքին մասնակից լինելու լայն հնարավորություններով:

XIXդ. վերջին Իրանում, մասնավորապես Ատրպատականում, հայկական համայնքի կրթված և քաղաքականացված տարրը ծնավորվում էր կովկասահայության հետ իր շփումների անմիջական ազդեցությամբ¹⁶: Այս ազդեցությունն ուժեղ էր Կովկասից եկող հայկական հեղափոխական երկու գլխավոր կուսակցությունների

¹⁴ Afary J., *The Iranian Constitutional...*, p. 218.

¹⁵ Ստեփանյան Մ., Հայ ասեղական քրոժուազիան Իրանի տնտեսական կյանքում, Երևան, 1992, էջ 48-59; Ֆրանզեան Ե., Ատրպատականի (պարսկերազարդ ժողովածու), Թիֆլիս, 1905, էջ 7; Փախլանյան Հ., Իրանահայ համայնքը (1941-1979), Երևան, 1989, էջ 32-33; Chaqueri C., *Introduction to the Armenians of Iran: A Historical Perusal; The Armenians of Iran*, ed. by Chaqueri C., Harvard University Press, 1998, pp. 11-13; Curzon G., *Persia and the Persian Question*, London, 1892, v. I, pp. 493, 548.

¹⁶ Chaqueri C., *Introduction to the Armenians of...*, p. 5.

Հնչակյան կուսակցության¹⁷ (հետագայում Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան կուսակցություն) և Հայ Յեղափոխական Դաշնակցության¹⁸ կողմից, որոնք Իրանի հյուսիսային շրջաններում ակտիվ գործունեություն էին ծավալել դեռևս 1890 թ.-ականներից:

Բազմաթիվ փաստաթղթեր վկայում են, որ ինչպես այս կուսակցությունները, այնպես էլ սոցիալ-դեմոկրատական կողմնորոշմամբ հայկական այլ կազմակերպություններ գործունե մասնակցություն են ունեցել Իրանում սահմանադրական շարժմանը: Արդարացի չի լինի թերազնահատել նրանց ներդրումն Իրանի հասարակական-քաղաքական մտքի ձևավորման մեջ՝ ելնելով միայն այն հանգամանքից, որ տվյալ ժամանակահատվածում այս քաղաքական ուժերի ներսում և նրանց միջև առկա են եղել որոշ գաղափարական անհամաձայնություններ և մրցակցություն:

Մինչև Սահմանադրական հեղափոխության սկզբնավորումը հայ քաղաքական կուսակցությունները, ինչպես Հնչակյան, այնպես Դաշնակցությունը չէին միջամտում Իրանի ներքին քաղաքական խնդիրներին: Ազգային կուսակցությունների ներկայությունն Իրանում հիմնականում պայմանավորված էր իրանահայ համայնքում նրանց կրթական և հասարակական գործունեության հետ¹⁹: Մյուս կողմից Իրանի աշխարհագրական հարևանությունը թույլ էր տալիս այդ կուսակցություններին գործողություններ իրականացնել Օսմանյան

¹⁷ Կուսակցության մասին մանրամասն տե՛ս Հայաստանի ազգային արժիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1458, ց. 1, գ. 5, 27, 19, 20; Կիտուր Ա., Պատմություն Ա.Դ. Հնչակյան կուսակցության, հ. Ա, Պելրոս, 1962; Կուսակցության ծրագիրը տե՛ս «Հնչակյան կուսակցության ծրագիր», ՀԱԱ, ֆ. 1458, ց. 1, գ. 5, ք. 1-6; Nalbandian L., The Armenian Revolutionary movement: The Development of American Political Parties through the Nineteenth Century, Berkeley, Los Angeles, 1963.

¹⁸ Կուսակցության մասին մանրամասն տե՛ս Տասնամյակյան Հ., Պատմություն Հայ Չեղափոխական Շարժման և Հայ Չեղափոխական Դաշնակցության, Լիբանան, 2000; Վաչրանյան Մ., Հ.Յ. Դաշնակցության Պատմություն, հ. Ա, Յեհյաձ, 1981; Nalbandian L., The Armenian Revolutionary movement ...:

¹⁹ Կուսակցից հայ հեղափոխական գործիչներից շատերը Իրան էին գործուղվում որպես ուսուցիչներ, ինչը մեծապես նպաստում էր Իրանում հայերի զգալի շերտի ոչ միայն քաղաքականացման, այլև նրանց կրթական մակարդակի բարելավմանը: Ուսուցչական գործունեությունն իր աշխատավարձով հնարավորություն էր ընձեռում տեղում կուսակցական գործիչներ պահելու համար: Ուսուցչի պաշտոնում կարելի էր նշանակվել Առաջնորդարանի և Հոգաբարձուների խորհրդի միջոցով, հետևաբար, մեծ նշանակություն ունեի Յեմական Առաջնորդի կամ Հոգաբարձուների խորհրդի անդամների համալրանքը կամ հակալրանքը այս կամ այն կուսակցության նկատմամբ:

կայսրության հայկական շրջաններում: «Թավրիզը, Ալանաստը և խոյը այն կամուրջն էին, որոնցով անցնում էին «առաջին առաքելները» դէպի Երկիր գնալու համար. յատկապէս Սալմաստում էր, որ վարժում ու մարզում էին յեղափոխական մարտիկները, կազմակերպում խմբերի մէջ (զինատար և մարտական), և ապա մէկնում Երկիր»²⁰:

Իրանում հնչակյանների գործունեության վերաբերյալ տեղեկություններն այդքան էլ առատ չեն, որքան դաշնակցության մասին հաղորդվող տվյալները: Հնչակյան կուսակցության շատ աղբյուրներ սահմանափակ են ի տարրերություն Իրանում ՀՅԴ ծավալած գործունեության մասին գոյություն ունեցող փաստացի նյութերի և պատմագրության: Բացի այդ, թեև հնչակյանները մասնաճյուղեր և խմբեր հիմնեցին Ատրպատականում ՀՅԴ-ից մի քանի տարի առաջ, սակայն ինչպես նշում է Հնչակյան պատմագիր Ա. Կիսուրը, նրանց դիրքերը բավականին թուլացան 1896 թ. ներկուսակցական ֆրակցիոն բաժանումից հետո և ապա 1905 թ. սկզբունքային պառակտումն նույնպես իր որոշակի անդրադարձն ունեցավ Ատրպատականի հնչակյան կազմի վրա²¹:

Դաշնակցականների և Հնչակյանների զենքի և ֆիդայիների տեղափոխություններն Իրանի տարածքով փաստորեն ազատ էին ու չէին խոչընդոտվում իրանական կառավարության կողմից (Օսմանյան և Ռուսական կայսրությունների հետ ունեցած որոշ հակասությունների պատճառով): Դաշնակցականներն Իրանում նույնիսկ զենքի արտադրություն սկսեցին. 1891 թ. Թավրիզում հիմնվել է «Խարխախ» զինագործարանը: Դաշնակցությունը հայթայթում էր զենք նաև Նոր Ջուղայում՝ Օսմանյան կայսրություն անցնող ֆիդայիներին բաժանելու

²⁰ Մինչև 1896 թ. Իրանում ՀՅԴ համար առաջնային նշանակություն ուներ Սալմաստում բուրջ-պարտական սահմանազրկում գտնվող Դերիկի վանքը: Այստեղ էին հավաքվում ՀՅԴ անվանի հայտնի դեմքեր ինչպես Իշխան Հուլիսի Արդաբանը, Վարդանը, Ան Թարեցի Ասցոն, Լիկոլ Դումանը և այլոք, որտեղից էլ նրանք անցնում էին Վասպուրական: Ուղեմարտական կարևոր նշանակություն ուներ նաև խոյը, հատկապես Մակրի շրջանի Թաղեու Առաջայի վանքը: Բացի Ջուլֆա-Թավրիզ-Սալմաստ գծից, կարևոր էր նաև Ջուլֆայից խոյ տանող ճանապարհին Դարաշաճերում գտնվող Ա. Ստեփանու Նախաձայի վանքը, այստեղից էլ Վաս հայկական գյուղի և Դոբորի վրայով դեպի «Երկիր» տանող ճանապարհը: Այլապեսները նույնպես ունեին պղպիսի կացարաններ Սալմաստում, Իրանի Կրումս-արմուտցում Փայաքունում: Անուրյան Ա., ՀՅ. Դաշնակցությունը Գարսկատանում 1890-1918, Թեհրան, 1950, էջ 11-17:

²¹ Կիսուր Ա., Գառնուրին Ա.Ղ. Հնչակյան..., էջ 396:

նպատակով²²։ Հետագայում, Թավրիզի ինքնապաշտպանության ժամանակ, դաշնակցականների զենքի արտադրության և տեղափոխման հմտությունները օգտակար եղան նաև իրանցի սահմանադրականներին։

Հայ հեղափոխականների մասնակցությունն Իրանի Սահմանադրական շարժմանը պայմանավորված էր մի շարք գործոններով²³։

• Ցարական Ռուսաստանում դարասկզբին անց կացվող վարչական, հողային և այլ քարեփոխումների հետ մեկտեղ, կառավարությունը պետական մակարդակի վրա սկսեց վերահսկել տարածքային և էթնիկ անջատողական բոլոր շարժումներն ու ձգտումները (ֆինների, լեհերի, հրեաների, հայերի և այլոց նկատմամբ)։ Կառավարության դիրքորոշումը հետևյալն էր. «հետևողական լինել այն հարցում, որպեսզի ոչ մի ազգային տարր մեծամասնություն չկազմի կայսրության ռազմավարական կարևորություն ունեցող և ոչ մի նահանգում»²⁴։ Նշված քարեփոխումների շարքից էր նաև Կովկասի փոխարքա Գ.Գուլիցինի բոլոր հայկական դպրոցների և քարեգործական (մարդասիրական) միությունների փակման հրամանը²⁵։ 1903 թ. հունիսի 12-ին Նիկոլայ II հաստատում է հայ եկեղեցու կալվածքները և գույքը քոնազրավելու մասին օրենքը, որի համաձայն հայկական եկեղեցապատկան կալվածքներն ու եկամտաբեր զույքն անցնում էին ռուսական համապատասխան նախարարությունների տնօրինության տակ²⁶։ Ցարական իշխանությունների այս հայտնաբեր քաղաքականությունն ազդեց նաև Իրանում հայկական համայնքի տրամադրությունների վրա՝ դժգոհություններ առաջացնելով նաև ռուսամետ իրանահայերի շրջանում²⁷։

²² Ամուրյան Ա., ՀՅ.Դաշնակցութենը Պարսկաստանում..., էջ 42, Հ. Բերբերյանը իր աշխատության մեջ ավելի մանրամասն տեղեկություններ է հայտնում «խարխուս» զինազործաբանի մասին տե՛ս Berberian H., Armenians and the Iranian Constitutional Revolution of 1906-1911: The Love for Freedom Has No Fatherland, Westview Press, 2001, pp. 49-50:

²³ Berberian H., Armenians and the Iranian Constitutional..., pp. 87-98.

²⁴ Ամուրյան Ա., «Ցարական Օրբանյակի Արիւնք», զիջք Ա, Թեհրան, 1978, էջ 82-83:

²⁵ Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան 1981, էջ 350-351; Suny R., Armenia in Modern History, Indianapolis, Indiana University Press, 1984, p. 47.

²⁶ Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 350-351:

²⁷ Chaqueri G., Introduction to the Armenians of..., p. 5.

• XX դարասկզբին Անդրկովկասում հայերը քախվեցին ավելի ընդգծված հակահայկական տրամադրությունների հետ. 1905-1906 թթ., ռուսական իշխանությունների թողսկությամբ հայերի և իսլամադավանների միջև քախումները ստիպեցին հայկական կուսակցություններին վերանայել իրենց բաց ազգայնական գործելաոճը, վերաբժարել իրենց դիրքը կովկասյան հասարակության մեջ: Վերջիններս ընդգրկվեցին սոցիալ-դեմոկրատական ուղղվածության այնպիսի հեղափոխական շարժումներում, որոնք առաջարկում էին ավելի «արդյունավետ» համագործակցություն²⁸:

• Քանի որ Սահմանադրական շարժումն առաջին հերթին ուղղված էր Իրանում օտարերկրյա, մասնավորապես ռուսական տիրապետության դեմ, ուստի հայ և իրանցի հեղափոխականները միավորվեցին ընդհանուր գաղափարի շուրջ:

• Ցարական կառավարությանը վրդովվեցնում էր հատկապես շահական կառավարության անտարբեր մոտեցումը հայ հեղափոխական կազմակերպությունների կողմից Իրանի տարածքից Ռուսաստանի դեմ իրականացվող քարոզչական ու ահաբեկչական գործողությունների նկատմամբ:

• 1905 թ. Օսմանյան ազրեսիան Իրանի նկատմամբ²⁹ նույնպես իր քաջասական ազդեցությունն ունեցավ Իրանում ապրող հայ ազգաբնակչության վրա, և անհանգստության առիթ տվեց հայ հեղափոխականներին:

• 1908 թ. ստոլիպինյան բռնությունների արդյունքում մեծացավ հակացարական տարրերի, այդ թվում նաև հայ հեղափոխականների հոսքը Կովկասից Իրան (հատկապես երկրի հյուսիս-արևմտյան շրջանները), որտեղ հեղափոխական գործունեության պայմանները շատ ավելի դյուրին էին: Փաստենք, որ կովկասահայերի և իսլամադավանների միջև տեղի ունեցած սարսափելի ընդհանրումներից մեկ-երկու տարի հետո, Իրանի սահմանադրական հեղափոխությունն ընկալվում էր որպես ընդհանուր հասարակական պայքարի մի «իրապարակ», որտեղ գաղափարական ընդհանրությունը հնարավոր էր դարձնում նրանց համագործակցությունը:

²⁸ Приложение к газете "Тинак" № 3 об армяно-мусульманской резне в Баку 9-10 февраля 1905г., ЦИИ, ф. 1456, г. 1, к. 68, pp. 1-2.

²⁹ Սահմանադ տե՛ս Բաբրուրյան Վ., Թուրք-իլանական հարաբերությունները (1900-1914 թթ.), Երևան, 1974:

• 1906 թ. ՀՅԴ և Ա.Դ. Հնչակյան կուսակցությունները վերանայեցին նաև միջկուսակցական հարաբերությունները՝ փորձելով համագործակցության եզրեր գտնել նաև Իրանում: 1907 թ. ՀՅԴ և Ա.Դ. Հնչակյան կուսակցությունների միջև ստորագրվեց հռչակագիր՝ համատեղ գործունեության վերաբերյալ³⁰:

• 1906 թ. հուլիս ամսին իրանական կառավարությունն արգելեց Դաշնակցության պաշտոնական մարմին «Դրօշակը», որը 16 տարի շարունակ անարգել տեղափոխվում էր ժնկից Իրան, իսկ այնուհետև տարածվում «ըստ նշանակության»: Ուսական ճնշման տակ իրանական կառավարության այս արգելքը նույնպես ազդեց Իրանում Սահմանադրական շարժմանը մասնակցելու Դաշնակցության որոշման վրա³¹:

• 1908 թ. Օսմանյան կայսրությունում պետական հեղաշրջումից և 1876 թ.-ի Սահմանադրության վերահաստատումից հետո երիտթուրքական Միություն և Առաջադիմություն կուսակցությունը հնչակյաններին և հատկապես Դաշնակցությանը կոչ էր անում դադարեցնել իրենց ընդդիմադիր գործունեությունն Օսմանյան կառավարության դեմ³²: Ոնդամին ազգային կուսակցություններն կարողացան իրենց ռազմական ներուժը ուղղորդել Իրանում սահմանադրական կարգերի հաստատման նպատակին:

ՀՅԴ, Ա.Դ. Հնչակյան կուսակցությունը, այնպես էլ առանձին սոցիալ-դեմոկրատներ համագործակցում էին Իրանի և կովկասյի հեղափոխականների հետ և կովկասյան սոցիալ-դեմոկրատական կոալիցիայի մաս էին կազմում³³:

Խորհրդային պատմագրության մեջ Իրանի Սահմանադրական հեղափոխությանը հայերի մասնակցությանը վերաբերող որոշ հարցեր լրացուցիչ լուսաբանման կարիք ունեն: Գ. Հարությունյանը իր «1905-1911 թթ. Իրանական հեղափոխությունը և Անդրկովկասի բուլշևիկները» աշխատության մեջ նշում է, որ իրանական սոցիալ-դեմոկրատիան

³⁰ ՀԱՍ, ֆ. 1457, ց. 1, գ. 45, թ. 1, «ՀՅԴ Առաջատարների Կ.Կոմիտեի և Ա.Դ. Հնչակյան Կ. Պարսաստանի Մ. Ճյուղերի Գործ. Հանձ. ուղեբոց ընկերներին միավորելու քրդը հայերի ուժերը հաղթանակին հասնելու համար»: ՀԱՍ, ֆ. 1456, ց. 1, գ. 3, թ. 67, «Հնչակ», № 2, փետրվար, 1907 թ.:

³¹ Դրոշակ, № 7, հուլիս, 1907, Դրոշակ, օգոստոս, 1908:

³² Սահմանադրական տեխն. Кочер М., Армено-турецкие общенационально-политические отношения и армянский вопрос, Ереван, 1968.

³³ Berberian H., Armenians and the Iranian Constitutional..., p. 116.

ստեղծվել է Անդրկովկասի բոլշևիկների անմիջական մասնակցության շնորհիվ³⁴: Սակայն Խ. Չաքերին փաստում է, Կ. Կաուցկիի և Գ. Պլեխանովի հետստալինյան շրջանում հայտնաբերված արխիվային փաստաթղթերը և նրանց ուղղված Թավրիզի հայ սոցիալ-դեմոկրատների նամակները նոր լույս են սփռում այն փաստի վրա, որ սոցիալիստական դոկտրիններն Իրանում հիմնականում ձևավորվել են իրանահայ մտավորականների գաղափարական ազդեցության շնորհիվ³⁵:

Թավրիզի սոցիալ-դեմոկրատների խումբը (ԹՍԴԽ) ձևավորվել է 1905 թ. ամռանը Սահմանադրական շարժման սկզբնափուլում փուլում, որի հիմնադիրներից են եղել Արշավիր Չիլինգարյանը, Կաստ Խաչատուրյանը, Սեդրակ II և Կռամ Փիլոսյանը և Տ. Դերվիշը (Տեր-Հակոբյան): Նշված գործիչներն Իրանի սահմանադրական շարժման ընթացքի և բնույթի մասին հողվածներ են տպագրել գերմանական սոցիալիստական *Neue Zeit* ամսագրում³⁶: Թավրիզի ինքնապաշտպանության շրջանում (1908-1909 թթ.) հայ սոցիալ-դեմոկրատները Թավրիզում նամակագրական կապի մեջ են եղել մարքսիստական տեսաբաններ և սոցիալ-դեմոկրատական առաջնորդներ Կ. Կաուցկիի և Գ. Պլեխանովի հետ³⁷: Այդ նամակներում խմբի առանձին անդամներ վերջիններիս կարծիքն ու խորհուրդներն են հարցրել Իրանում սահմանադրական շարժման բնույթի և նրանում սոցիալ-դեմոկրատների մասնակցության վերաբերյալ³⁸:

³⁴ Арутюнян Г., Иранская революция..., с. 121.

³⁵ Chaqueri C., *Armenian-Iranians and the Birth of Iranian Socialism 1905 to 1911*, The Armenian of Iran, ed. by Chaqueri C., p. 81.

³⁶ Chaqueri C., *Armenian-Iranians and the Birth of...*, p. 86.

³⁷ Joseph Karakhanian to Georgi Plekhanov (September 1905), pp. 311-312; Archavir Tchilinkirian to Karl Kautsky (July 1908), pp. 313-316; Karl Kautsky's Reply to Archavir Tchilinkirian (August 1908), pp. 317-321; Archavir Tchilinkirian to Karl Kautsky (August 1908), pp. 322-323; Vasso A. Khachaturian to Georg V. Plekhanov (November 1908), pp. 324-330; Protokol № 1 of the Social-Democratic Conference, Sent to Georgi Plekhanov (October 1908), pp. 331-334; Archavir Tchilinkirian to Georgi V. Plekhanov (December 1908), pp. 335-337; Tigran Derviche to G. V. Plekhanov (December 1908), pp. 338-344; Archavir Tchilinkirian to Karl Kautsky (June 1910), pp. 345-346; Archavir Tchilinkirian to Karl Kautsky (October 1911), արցրւոց՝ The Armenian of Iran...

³⁸ Protokol № 1 of the Social-Democratic Conference, Sent to Georgi Plekhanov (October 1908), pp. 131-134; Tigran Derviche to G. V. Plekhanov (December 1908), pp. 338-344, արցրւոց՝ The Armenian of Iran...

1908 թ. Թավրիզի նահանգային խորհուրդը (էնջուման-ե Իյալաթի-ե Ազարբայջան կամ Թավրիզի էնջումենը), սոցիալ-դեմոկրատների գաղտնի կենտրոնը (Մարջազ-ե Ղայթի) և մոջահեդների խմբերը ձևավորեցին Թավրիզի հեղափոխական բանակը՝ Սաթթար և Բաղիթ խաների հրամանատարության տակ, որին անդամակցեցին մեծ թվով անդրկովկասցի հայեր: Թավրիզի սոցիալ-դեմոկրատների երեսուն հոգանոց խումբը (ԹԱՂԽ), որոնց մեծամասնությունը հայեր էին, 1908 թ. հոկտեմբերի 16-ին խորհրդակցություն գումարեցին՝ շարժման հետագա ընթացքը քննարկելու նպատակով³⁹: Քննարկումների ընթացքում խմբի ներսում սահմանադրական շարժման բնույթի և դրանում սոցիալ-դեմոկրատների մասնակցության հարցի շուրջ ձևավորվեցին երկու տարբեր ռազմավարական մոտեցումներ: Խմբի մեծամասնության կարծիքը ներկայացնող Արշավիր Չիլինգարյանը և Վաստ Խաչատուրյանը այն տեսակետին էին, որ Իրանում անհրաժեշտ է աշխատավորությանն ու գյուղացիության մեջ ձևավորել դասակարգային պայքարի մոտեցումներ: Այնուհետև ընդգրկել նրանց շարժման մեջ: Նրանց ընդդիմախոսներ՝ Սեդրակի, Վեամ Փիլոսյանի և Տ. Տեր-Հակոբյանի կարծիքով Իրանը վերջերս էր թևակոխել արդյունաբերական կապիտալիզմի զարգացման փուլ և դեռ վաղ է խոսել սոցիալիստական ծրագրերի մասին, ուստի շարժման այս փուլում հարկավոր է ընդգրկվել դեմոկրատական պայքարի մեջ և համագործակցել հիմնականում սահմանադրական շարժման աջաչնորդների հետ⁴⁰: Հետագայում խմբի փոքրամասնության տեսակետը ներկայացնող անդամները՝ Վեամ Փիլոսյանը և Տ.Տեր-Հակոբյանը (Դերվիշ) գաղափարական և գործնական մեծ մասնակցություն են ունեցել նաև 1909 թ. «Իրանի Դեմոկրատական կուսակցության» (Ֆերքե-ե Դեմոկրատ-ե Իրան) կազմավորման գործում: Վ. Փիլոսյանը և Տ.Տեր-Հակոբյանը գաղտնի, բայց բավականին արդյունավետ, համագործակցել են այդ կուսակցության հիմնադիրներից մեկի՝ մեջլիսի ձախակողմյան ներկայացուցիչ Սեյիդ Հասան Թաղի-Չադեի հետ⁴¹: Տիգրան Տեր-Հակոբյանը «Դերվիշ» կեղծանունով անդամակցել է 1909 թ. օգոստոսից տպագրվող

³⁹ Afary J., *Amerian Social Democrats, the Democrat Party of Iran, and Iran-e New: a Secret Camaraderie*, Iran and Iranian Studies, p. 239.

⁴⁰ Afary J., *Social Democracy and the Iranian...*, pp. 32-37; Chaqueri C., *Armenian-Iranians and the Birth of...*, pp. 81-89.

⁴¹ Afary J., *Armenian Social Democrats...*, pp. 240-241.

Դեմոկրատական կուսակցության պաշտոնական մարմին՝ «Իրան-ե Նոու» թերթի խմբագրական կազմին⁴²: Ինչպես նշում է Ջ. Աֆարին, հայ սոցիալ-դեմոկրատները ներգրավված են եղել Դեմոկրատական կուսակցության ձևավորման յուրաքանչյուր փուլում, և նրանց համագործակցությունն իրանցի գործընկերների հետ հետագայում լուրջ հիմքեր ստեղծեց Իրանում ավելի ազդեցիկ քաղաքական կուսակցություններ ձևավորելու համար⁴³:

Մեկ այլ իրանական սոցիալ-դեմոկրատական խումբ ձևավորվել է Գիլյանում Հնչակյան կուսակցության անմիջական ազդեցության տակ: Ղոլամ-Հոսեյն խան Սոհամմադը⁴⁴ 1909 թ. գաղտնի կապի մեջ է մտել տեղի Հնչակյան կազմակերպության հետ՝ Գիլյանում սոցիալ-դեմոկրատական կուսակցության մասնաճյուղ հիմնելու նպատակով: Համաձայն Ա. Կիտուրի, հնչակ Գր. Եղիկյանի անմիջական օգնությամբ այս խումբը թարգմանել է Հնչակյան կուսակցության ծրագիրը և որոշ փոփոխություններով համաձայնեցրել այն տեղական քաղաքական պայմաններին: Ծրագրի թարգմանությունից հետո հնչակյաններ Գր. Եղիկյանը, Ն. Սիմոնյանը, Իս. Տեր-Հովհաննիսյանը և իրանցի Արոլ Դասեմ Ռեզազադեն, Արոլ-Ֆազլ խանը, Ղոլամ-Հոսեյն խան Սոհամմեդը կազմեցին է մի «խառը» խումբ⁴⁵: Սակայն 1910 թ. շարունակելով գաղտնի համագործակցությունը խմբի հայ անդամների հետ, որոշում են հիմնել բացառապես իրանցիներից կազմված Հնչակյան կուսակցության իրանական մասնաճյուղ: Խումբը թարգմանեց և տպագրեց «ԻՆչ են ասում Սոցիալ-դեմոկրատները» հնչակյան գրքույկը, որի շապիկին գրված է եղել. «Հրատարակություն Ա.Դ. Հնչակյան Սոցիալ-դեմոկրատական կուսակցության էնգելի մասնաճյուղի Իրանի խմբի» (Ֆերցե-ե Սոսիալ-Դեմոքրատ-ե Շո'րե-ե Անգալի, դաստե-ե Իրան)⁴⁶: Հոգևորականության ճնշումների տակ 1911

⁴² Chaqueri C., *Armenian-Iranians and the Birth of...*, pp. 99-100.

⁴³ Afary J., *Social Democracy and the Iranian...*, pp. 32-37.

⁴⁴ Բեյ Սյեյդան, հետագայում Մեջլիսի պատգամավոր, 1920 թ. դարձավ Գիլյանի Առաջին Հանրապետության նախագահ՝ Միրզա Քուլեբ խանի կառավարության անդամ:

⁴⁵ Հիմնականում գաղափարական քարոզչություն էին իրականացնում կասախական շրջանների ծնորդների շրջանում: Կիտուր Ա., Դատուրիան Ա.Դ. Հնչակեան..., էջ 403:

⁴⁶ Հասկանալի է, որ տնտեսական, վարչական և այլ բարեփոխումներ իրականացնելու առաջարկներից բացի, համաձայն խմբի ծրագրի՝ Իրանը իր կատարյալ անկախությունը կարող էր ձեռք բերել օգտագործելով տարածաշրջանում բրիտանական և օտաական զերտերությունների քաղաքական և տնտեսական մղակցությունը: Կասախարությունը հատուկ ուշադրություն պետք է դարձնի

թ. հունվարի 11-ին, խումբը հրաժարվեց իր անվանման ոչ իրանական ծագում ունեցող «հնչակյան» բառից⁴⁷:

Որոշ ժամանակ անց, խումբը իրանական կազմով, առանձին գործունեություն ծավալեց՝ անմիջական կապի պահպանելով հայ հնչակյանների, հատկապես զր. Եղիկյանի հետ: Չաքերին վրաստում է, որ հենց այս նույն զր. Եղիկյանի և նրա ընկերների հետ են համագործակցել Ա. Օրջոնիկիձեն և ուրիշ քոլչևիկներ: Խումբը վերջիններիս օգնել է Իրանում ծավալել ոչ միայն հեղափոխական գործունեություն, այլև Իրանի տարածքով Թավրիզ-Էնզելի-Ռաքու-Ռուսաստան գծով Ռուսաստան տեղափոխել քոլչևիկյան գաղտնի հրատարակություններ և նրա մարմին «Իսկրա»-ն: Այս իրողությունը նույնպես շրջանցվել է խորհրդային ժամանակաշրջանի Իրանի սահմանադրական շարժմանը նվիրված աշխատություններում, որոնցում ի հավելումն այդ բոլորի Հնչակյան կուսակցությունը ներկայացվում է, որպես «մանր բուրժուական», ազգայնական կուսակցություն⁴⁸:

Նույնով Թավրիզի քաղաքացիական ինքնապաշտպանությանը (1908-1909 թթ.) հայերի մասնակցության հարցի շուրջ Մ.Իվանովը հանիրավի հետևյալ դատողությունն է բերում. «Մինչև 1908 թ. Դաշնակցականները չեն մասնակցել Թավրիզի ինքնապաշտպանությանը: Այնպես 1908 թ., երբ թավրիզցիները հետ շարտեցին հետադիմական զորքերը դաշնակները որոշեցին մասնակցել իրանական հեղափոխությանը»⁴⁹: Սակայն մեկ այլ ռուս հեղինակ Գ. Շիտովը իր աշխատության մեջ նշում է, որ քաղաքացիական պատերազմի ընթացքում Թավրիզում էին գտնվում Կովկասից ժամանած 14 հոգի հայ սոցիալ-դեմոկրատներ, 50 դաշնակ, 26 վրացի, 4 ռուս և 8 դադստանցի⁵⁰: Ավելացնելով նաև, որ

Գերմանիայի և Օսմանյան կայսրության ծավալապաշտպան քաղաքականության Իրանում: Օրագիրը անդրադառնում էր նաև Օսմանյան կայսրությունից ելող, «անցանցալի», «վրամազալի» պանիվանական շարժումների տարածման խնդրին և նշում, որ իրանական քաղաքական շրջանները պետք է զգոն լինեն դրանց նկատմամբ: Բրդր ուժերը, չնայած ազգային և կրոնական պատկանելության, պետք է համախմբվեն հանուն մեկ գաղափարի՝ Իրանում սահմանադրական կարգի հայտնաբերել: Ենթի Օրագիրը տես Chequeri C., *Armenian-iranians and the Birth of...*, pp. 89-92:

⁴⁷ Կիտուր Ա., Գառնուրին Ա.Դ. Հնչակյան..., էջ 402:

⁴⁸ Chequeri C., *Armenian-iranians and the Birth of...*, pp. 88-89.

⁴⁹ Կանոս Մ., *Իրանական բեթառախ...*, ս. 377.

⁵⁰ Յառոս Դ., *Սերուս ուն Կառուս...*, ս. 120-121.

«Հայկական «Ղաշնակցություն» կուսակցությունը, որն իրեն անվանում է սոցիալիստական, սկզբում չէր միջամտում շարժման ընթացքին: Վիեննայի 1907 թ., իսկ հետո նաև Շվեյցարիայի կուսակցական վեհաժողովներից հետո, նրանք որոշեցին գործուն մասնակցություն քերել շարժմանը»: Կանգ առնելով XIX դարավերջին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայկական կոտորածների վրա՝ Շիտովը, շարժման սկզբնական փուլում Ղաշնակցության զգուշությունը, ապա հետագայում, Թավրիզի ինքնապաշտպանության ժամանակ, հայ հեղափոխականների ակտիվ մասնակցությունը բացատրում է նրանով, որ կուսակցությունը հայ ժողովրդի տառապանքները չավելացնելու համար աշխատում էր շատ այքի չընկնել Իրանում: Հեղինակը գերմանական պարբերականի *‘Asien’ Der Kaukasus und die Revolution in Persien, 1909, jan., 8, s.118/* հաղորդած տվյալների հիման վրա նշում է, որ Ղաշնակցությունը Շվեյցարիայում տեղի ունեցած ժողովի որոշմամբ՝ Բաքվում, իրանական հեղափոխության նպատակների համար է, փոխանցել 40 000 ռուբլի և ուղարկել 20 երիտասարդ կամավոր»⁵¹:

Փաստերը վկայում են, որ Իրանի սահմանադրական շարժմանը հայերի մասնակցությունը սկսվել է դեռևս 1907 թ., սակայն այն ավելի լայն տարածում ստացավ Թավրիզի 1908-1909 թթ. ինքնապաշտպանության ընթացքում:

1908-1912 թթ. Ղաշնակցության գործունեության կենտրոնները ռուսական իշխանությունների կողմից հետապնդվելու պատճառով Կովկասից տեղափոխվեցին Թուրքիա և Իրան: Թավրիզի Կ. Կոմիտեն ուներ մասնաճյուղեր գրեթե ողջ Հյուսիսային Իրանում՝ Ուրմիա, Սալմաստ, Խոյ, Ջուլֆա, Ղարադաղ, Գիլյան (Ռեշտ, Էնզելի, Աստարա), Մազանդարան, Ղազվին, Նոր-Ջուղա, Թեհրան (Թեհրանի կոմիտեն հետագայում, 1912 թ. դարձավ Կենտրոնական կոմիտե): Այս մասնաճյուղերի բոլոր խնդիրները, իրախանգները, ցուցումները տրվում էին Թավրիզի «Վրեժ» Կ.Կոմիտեի կողմից (ինն հայկական տեղանվան Ղալեբժ բառի կրճատ ծևն է)⁵²:

1907 թ. Շուտագարդի Երկրորդ Սոցիալիստական ինտերնացիոնալին միացավ նաև ՀՅՂ⁵³: Սոցիալ-դեմոկրատական

⁵¹ Եսյն տեղում:

⁵² Ամուլյան Ա., ՀՅ.Ղաշնակցությունը Պարսկաստանում..., էջ 41-42:

⁵³ Ազգայնական և սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսության այս դրախդիզի

գաղափարախոսությունն իր դասակարգային պայքարի դրույթներով ապահովում էր նաև Իրանում սահմանադրական շարժմանը կովկասյան և տեղական կուսակցությունների մասնակցության գաղափարական ընդհանրությունը: Եվ ուղղված էր առաջին հերթին ցարական իշխանությունների վարած բաղաքականության, սահմանադրական շարժման նկատմամբ նրա կոշտ դիրքորոշման դեմ: Սակայն հայ հեղափոխականները մի շարք խնդիրներից ելնելով՝ աշխատում էին չերևալ Իրանում տեղ գտած հեղափոխական գործընթացներում:

Կուսակցությունների կենտրոնական մարմիններին հատկապես անհանգստացնում էին այնպիսի հարցեր, ինչպես օրինակ. 1. Ի՞նչ կարգի աջակցություն է պետք ցույց տալ Իրանում սահմանադրության կողմնակիցներին, որպեսզի դա օգտակար լինի ոչ միայն Իրանում ապրող, այլև Օսմանյան կայսրությունում ապրող հայերի համար: 2. Ինչպես մասնակցել շարժմանը, որպեսզի այն չհանգեցնի հայերի և հատկապես իրանահայերի նկատմամբ բացասական դրսևորումների: 3. Ինչպիսի՞ն են Իրանի Սահմանադրական հեղափոխության գաղափարական հիմքերը և այլն:

Հարցերը մարմիններում ձևավորվեցին հակադիր երկու տեսակետներ: Շարժմանը բարոյական մասնակցություն ցույց տալու կողմնակիցները գտնում էին, որ մասնակցությունը կսպառե կուսակցության ուժերը, որոնք հետագայում հարկավոր կլինեին հակաթուրքական պայքարում: Այս տեսակետի կողմնակիցները մտավախություն ունեին, որ իրանցի հեղափոխականների պարտության պարագայում հարվածի տակ կդնեն իրանահայությանը, որոնք կուսակցական ուժերի հեռանալուց հետո, կարող էին կրոնական մոլեռանդության թիրախ դառնալ: Սակայն գործուն մասնակցության կողմնակիցները պնդում էին, որ միացյալ պայքարը իրանցիների կողքին՝ իրանահայերին նույնպես հնարավորություն կտա օգտվելու սահմանադրական հավասար իրավունքներից⁵⁴:

համար ժամանակին համախոս քննադատությունների էին արժանանում ինչպես Ղաչնակցական, այնպես էլ Հնչակյան կուսակցությունները: Նրանց մեղադրում էին սոցիալիստական գաղափարախոսության լրջվածության և աղքատական դրսևորումների մեջ Ղրղալե, օգոստոս, № 8, 1907, սեպտեմբեր, № 9, 1907; Հնչակյանների մասին՝ ՀԱՄԷ, ֆ. 1456, ց. 1, գ. 3, «Հնչակ», Ս. Սապախ-Գիլյան, 1907, № 2, ք. 63-65:

⁵⁴ Բաբուրյան Վ., Իրանի պատմություն, էջ 523-523:

1907 թ.-ից սկսած իրանցի սահմանադրականները խորհրդատվության և աջակցություն ստանալու նպատակով դիմել են Թալրիզում ՀՅԴ Ատրպատականի Կենտրոնական կոմիտեին՝ իբրև հեղափոխական անցյալ և փորձառություն ունեցող կուսակցության⁵⁴:

1907 թ. փետրվար-մայիս Կենտրոնում անցկացվող ՀՅԴ Զորքոր Ընդհանուր ժողովը որոշում է աջակցել սահմանադրականներին և հանձնարարում դաշնակցական մարմիններին ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները շարժման զարգացմանը նպաստելու համար: ՀՅԴ Կ. Բյուրոն շուտով Իրան է գործուղում իր անդամներին տեղում իրավիճակին ծանոթանալու նպատակով⁵⁵:

Նույն քվականի դեկտեմբերին իրանական Սեջլիսի դեմոկրատական թևի և ՀՅԴ ներկայացուցիչների միջև տեղի են ունեցել բանակցություններ: Բանակցությունների մանրամասները Ռոստոմը հայտնում է Թեհրանից իր 1908 թ. հունվարի 10-ին ՀՅԴ Բյուրոյին հասցեագրված նամակում, որին կից նաև բանակցությունների արձանագրությունը⁵⁶:

Քաղաքացիական (1908-1909 թթ.) պատերազմը սկսվելուց ամիցապես հետո ՀՅԴ Ատրպատականի Կ. կոմիտեն իր աջակցությունը ցույց տվեց նաև Թալրիզի ինքնապաշտպանության առաջնորդ Սաթթար խանի բանակին⁵⁷: Թեև վերջինիս տնօրինության տակ կային տեղացի և Կովկասից ժամանած մոջահեդների բավականին մեծ կազմավորումներ՝ հազեցած ժամանակակից զենքով, սակայն նրանցում թույլ էր կազմակերպվածությունը և մարտական գործողություններ վարելու փորձը: Դաշնակցականները Սաթթար խանին են տրամադրել զինված ստորաբաժանումներում կազմակերպվածություն հաստատելու մասին 17 կետից բաղկացած

⁵⁴ Էմար Հ. (Հովսեփ Հովհաննիսյան), Եփրեմ, Թեհրան, 1964, էջ 104; Վարանդյան, Հ.Յ. Դաշնակցության..., հ. Բ, էջ 264:

⁵⁵ Դրոշակ, 1907, № 5, Վարանդյան, Հ.Յ. Դաշնակցության..., հ. Բ, էջ 261: Գրոժոմն մասնակցության պաշտոնական որոշումը սկզբում ընդունվել է Ատրպատականի Կենտրոնական կոմիտեի կողմից 1906 թ. օգոստոսի 19-ին Իրանում, պետական հեղաշրջումից մի քանի ամիս անց: 1909 թ. սեպտեմբերին Վարանդյան անց կացվող կուսակցության Չնդեբորդ Ընդհանուր համագումարում այն հաստատվել է պաշտոնապես: Berberian H., Armenians and the Iranian Constitutional..., p. 128.

⁵⁶ Սանդանաս տեմ Ռոստոմ, խմբ. Հ. Տամաշեղյան, Լիբանան 1979, էջ 164-169: Ռոստոմ, Նաճականի, Պելլուք, 1999, էջ 431-439; Վարանդյան Մ., Հ.Յ. Դաշնակցության..., հ. Բ, էջ 270-271:

⁵⁷ Նույն տեղում:

ասացարկ: Ինչպես փաստում է Հյուրի Բերբերյանը, համաձայն պայմանագրի հայերեն և պարսկերեն տեքստերի, 1908 թ. օգոստոսի 22-ին Ղազնակցականների և մոջահեդների միջև ստորագրվել է համաձայնագիր, ըստ որի կազմվելու էր յոթ հոգուց բաղկացած մի խառը հանձնախումբ (կոմիտե): Այն զբաղվելու էր ողջ Իրանում սահմանադրական կարգերի վերահաստատմամբ: Կազմվել է նաև երեք հոգուց բաղկացած մեկ այլ հանձնախումբ՝ ներքին ռազմական և արտաքին քաղաքական գործերը վարելու նպատակով, որին անդամակցեցին նաև Կովկասից ժամանած Սև Քարեցի Սաքոն իր ֆիդայական խմբով, այնուհետև Քեօին (Արշակ Գաֆալյան)⁸⁹ և Ռուստոնը⁹⁰: Հայ ֆիդայիները և Սաթթարի ազգային-հեղափոխական մոջահեդների քանակը 1908թ աշնանից մինչև 1909 ապրիլ ամիսը, մարտական խմբեր տեղափոխելով Իրանի հյուսիսային շրջանները, համատեղ հանդես են եկել Ալվարի, Սոֆիանի, Մարանդի ինքնապաշտպանական մարտերում: Ինքնապաշտպանություն են կազմակերպել նաև Մուծումբար հայկական գյուղում⁹¹:

Սակայն Թավրիզի ինքնապաշտպանության հետո, օտար հպատակների կյանքի և զույգի պաշտպանության և առևտրական ճանապարհները բաց անելու պատրվակով 1909 թ. ապրիլի 25-ին ռուսական զորքերը զենքայլ Սանարսկու հրամանատարությամբ մուտք գործեցին Թավրիզ⁹²: Ռուսական արտաքին գերատեսչության հրամանով քոլոր ռուսահպատակ ֆիդայիները պետք է զինաթափ արվեին և արտաքսվեին Իրանից⁹³: Ռուստոնը հարկադրված անցնում է Վան, իսկ Քեօին՝ Սալմաստ⁹⁴:

Թավրիզի ինքնապաշտպանության շրջանում հնչակյան կողմի մասնակցության մասին տեղեկությունները սահմանափակ են: Սակայն որոշ աղբյուրներ փաստում են, որ հնչակյան կողմը, չնայած մասնակցության վերաբերյալ կուսակցության ներսում եղած

⁸⁹ Քեօին ՀՅԴ կենտրոնական մարմինների հրամանով Կովկասից Իրան անցավ 25 հոգանոց զինված ֆիդայական արշավախմբով:

⁹⁰ Թավրիզի հայկական թաղամասերից մեկում Ռուստոնը հիմնեց պաշտուցիների պատրաստման լադրատղիս: Կարանդյան Ս., Հ.Յ. Ղազնակցության ..., հ. Բ, էջ 273:

⁹¹ Նույն տեղում, էջ 277-280:

⁹² Сводник зап. док., 1911, свт. 2, с.107.

⁹³ Նույն տեղում:

⁹⁴ 1909թ. Քեօին վերադարձավ Թավրիզ և միացավ դեպի Թեհրան արշավող եվրոն խանի հրամանատարության տակ գտնվող զորախմբին: 1911թ. իր վերանազգնալ խմբով մասնակցեց գաղղնկեց շահի և Սալար էդ-Ղուլիի դեմ մղվող կռիվներին, էջ 75:

տարակարծությունների, նույնպես մասնակցել է Թավրիզի ինքնապաշտպանությանը: Կուսակցության Թավրիզի գործադիր մարմինները Սաթթար խանին են հանձնել իրենց տրամադրության տակ եղած 80 հրացան: Համաձայն Ա. Կիտուրի, հնչակյանները, որոնց ներկայացնում էր Ռաֆայել Մովսիսյանը, Սեդրակ Բանվորյանի (Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության «ՌԱԴԲԿ» ներկայացուցիչ) և Ռուստոմ Ղարախանյանի (<ՅԴ ներկայացուցիչ) հետ միասին մասնակցել են Թավրիզում Սաթթար և Բաղիր խաների «զաղտի ռազմական խորհրդին»⁶⁵: Այս տարբեր քաղաքական հոսանքների համագործակցությունը հիմք դրեց 1909 թ. հուլիսին Գիլանում 200 հոգանոց մարտական խմբի կազմավորմանը, որի մի մասը եփրեմ խանի հրամանատարությամբ մասնակցեց նաև Ռեշտի զինանոցի գրավմանը, իսկ այնուհետև Թեհրանի արշավանքին 1909 թ. (փետրվար-հուլիս): Մարտական այս խումբը բաղկացած էր յոթ ենթախմբերից՝ 1) 23 վրացի սոցիալ-դեմոկրատներից՝ Վալիկոի հրամանատարությամբ 2) 21 հնչակյաններից՝ Պետրոս Սելիք Անդրեասյանի հրամանատարությամբ, 3) 50 իրանցի սոցիալ-դեմոկրատներ՝ Ղոլամ-Հոսեյն խան Մոհամմադի (Քել Օսբովան) հրամանատարությամբ՝ զինված Թիֆլիսում հնչակյանների տրամադրած զենքով: 4) 14 դաշնակցականներ՝ եփրեմ խանի հրամանատարության տակ: 5) 45 մոջահեդներ՝ Սաթթար խանի զվյալորությամբ: 6) 46-ը՝ Բաղիր խանի հրամանատարության տակ և 7) մեկ խումբ էլ (թիվը չի նշում) կազմված կովկասյան թուրքերից: Սրանց միացավ նաև մեկ այլ խումբ՝ Սոխրե Սուլթանի հրամանատարության տակ⁶⁶:

Հնչակյան Ա.Դ. կուսակցության ներկայացուցիչները նաև 1908 թ. վերջին Թավրիզում բանակցություններ են վարել և համաձայնագիր են ստորագրել իրանական մոջահեդների Սոցիալ-դեմոկրատական (Եջթեմայուն-ե Ամյուն) կազմակերպության հետ: Համաձայնագիրը բաղկացած է եղել ինը կետից: 1908 թ. նոյեմբերին կողմերը փոխադարձ համաձայնությամբ՝ որոշում են Իրանում գործել սոցիալ-դեմոկրատական սկզբունքներին համաձայն: Ըստ որի հնչակյան կողմը պետք է Սահմանադրական հեղափոխության նպատակների

⁶⁵ Կիտուր Ա., Պատմություն Ա.Դ. Հնչակյան..., էջ 399-400; Afary J., *The Iranian Constitutional...*, pp. 238-239.

⁶⁶ Լույս տեղում:

համար «թագմական, նյութական և մարդկային օգնություն ստանալու»⁸⁷ Իրանին: Մի քանի շաբաթ անց հնչակականները Բաքվից ենթելի փոխափոխեցին զենքի առաջին բաժինը⁸⁸:

1908 թ. փետրվարից, Թավրիզի ինքնապաշտպանությանը, հանընթաց հեղափոխական խմբումներ սկսվեցին նաև Ռեշտում, որտեղ նույնպես կենտրոնացել էին մեծ թվով Կովկասից ժամանած իրանցի, հայ, վրացի, ազերի հեղափոխականներ և ֆիդայիներ: Թեհրանում թուսական գործերի հավատարմատար Սաբլինը 1908 թ. փետրվարի 21-ին հաղորդում էր. «Ռեշտում այդ հեղափոխականների պատճառով դրությունը բավականին լարված է: Գիշանում վերջիններս հեղափոխական բուժն գործունեություն են ծավալել և վերաբացում են էնջումենները»⁸⁹:

Թեև Իրանում Սահմանադրական շարժմանը հայերի մասնակցության վերաբերվող հարցերից ամենաուսումնասիրվածը եփրեմ խանի «թագմական հաղթանակներին վերաբերվող հարցերն են, սակայն Իրանի սահմանադրական շրջանին վերաբերվող որոշ աշխատություններում այս առումով ևս լուրջ քացթողումներ և ոչ լիարժեք գնահատականներ կան: Օրինակ՝ Մ. Ռեզա Ղոջաջ «Իրանը XX դարում» գրքում նշում է, որ Կովկասի սոցիալ-դեմոկրատական կոմիտեն միապետական ուժերի դեմ Գիլյանում հեղափոխական շարժում կազմակերպելու նպատակով այնտեղ է գործուղել Գրիգորի (Սեդոզ) Օրջոնիկիժեին և դաշնակ եփրեմ խանին⁹⁰: Հարկ է նշել, որ եփրեմ խանի մասնակցությունը սահմանադրական շարժմանը սկսվել է Թավրիզի ինքնապաշտպանությանից առաջ 1906 թ., որպես ՀՅԴ Գիլյանի կոմիտեի պատասխանատու, նա կապի մեջ էր Ռեշտի իրանցի ազգայնականների հետ, քանի որ կիսում էր ՀՅԴ այն անդամների տեսակետը, որ Ղաջնակցությունը պետք է գործուն մասնակցությունը ունենա Իրանում սահմանադրական կարգերի հաստատման գործին: Այլ հարց է, որ եփրեմ խանի և Օրջոնիկիժեի միջև հնարավոր է, որ եղել է որոշակի համագործակցություն: Եփրեմ խանը պարբերաբար անցել է Կովկաս, համագործակցել տեղի սոցիալ-դեմոկրատների հետ և գինամթերք տեղափոխել Գիլյան⁹¹: Ինչ

⁸⁷ Կետուր Ա., Պատմություն Ա.Դ. Հնչակեան..., էջ 400:

⁸⁸ Собрание жур. зок., 1911, вып. 2, с. 1.

⁸⁹ Peza Гоас М., Иран в XX веке..., с. 59.

⁹⁰ Էմսար Հ., եփրեմ, էջ 214-217, 224:

վերաբերվում է Օրջոնկիժեի գործունեությանը Պիլյանում, ապա նա, Բաքվի քոլեջիական կոմիտեի որոշմամբ Իրան է ժամանել միայն 1909 թ. աշնանը⁷¹, Թեհրանի գրավումից և շահին գահընկեց անելուց մի քանի ամիս հետո միայն: Օրջոնկիժեն բացի նրանից, որ գաղափարական գործունեություն է ծավալել մերձկասպյան նահանգներում, նա նաև, ինչպես նշում է Պ. Հարությունյանը, Էնզելիից Անդրկովկաս և Ռուսաստան էր ուղարկում արգելված հեղափոխական գրականություն և պարբերաբար կազմակերպում դրամահավաքներ քոլեջիական հրատարակություններին օժանդակելու նպատակով: Ինչպես նաև պատերից գումարներ էր փոխանցում այդ ժամանակ Փարիզում բնակվող Վ.Լենինին⁷²:

1908 թ. հոկտեմբերին Ռեշտում ծնավորվեց «Սաթթար» հեղափոխական կոմիտեն: Այս կոմիտեն կապեր հաստատեց Կովկասի Սոցիալ-դեմոկրատական, Սոցիալ-հեղափոխական և ՀՅԴ կուսակցությունների հետ⁷³: Մի քանի դաշնակցականներ, այդ թվում նաև Եփրեմ խանը, անդամակցեցին «Սաթթար» կոմիտեին⁷⁴: Ռեշտի տեղական էնջումանի (Անջոման-ե այալաթ) հետ համատեղ կոմիտեն իր ձեռքը վերցրեց հեղափոխական շարժման կազմակերպման և Ռեշտի գիմնանցի գրավման գործը: Երվանդ Արրահամյանը նշում է, որ Եփրեմ խանի ջոկատում Ռեշտի գրավման ժամանակ կային Բաքվից ժամանած 35 վրացի և 20 հայ⁷⁵: Ռեշտի և Էնզելիի գրավումուց հետո Եփրեմի շուրջ համախմբված 90 մարտիկներից 40-ը հայեր էին (20 վրացի և 30 պարսիկ), որոնք 1909 թ. ապրիլի 21-ին գրավեցին Ղազվինը⁷⁶:

Թեհրանում թուսական դիվանագիտական առաքելության կազմած ապրիլյան զեկույցը հայտնում է, որ արդեն ապրիլի սկզբին հազար հոգանոց հեղափոխական բանակը գրավել էր Էնզելի-Թեհրան ճանապարհը, իսկ ճանապարհի ամենակարևոր և կենտրոնական

⁷¹ Арутюнян Г., Иранская революция..., с. 134; Изанса М., Иранская революция..., с. 426.

⁷² Арутюнян Г., Иранская революция..., с. 140.

⁷³ Abrahamian Er., Iran between Two..., p. 99; Barberian H., Armenians and the Iranian Constitutional..., p. 132:

⁷⁴ Էնզելիում Եփրեմը իժմում է նաև «Բալդ» հեղափոխական կոմիտեն, նույնպես կազմված իրանցի և հայ անդամներից, էլմար Հ., Եփրեմ, էջ 222:

⁷⁵ Abrahamian Er., Iran between Two..., p. 99.

⁷⁶ Сборник мат. док., 1909, вып. 2, с. 159.

հատվածը վերահսկում էր 100 հոգանոց ֆիդայական խումբը՝ Եփրեմ խանի հրամանատարությամբ, որոնք սպասում էին շարժվել մայրաքաղաք, եթե շահը չվերահաստատի Սահմանադրությունը⁷⁷։ Մ. Իվանովը իր վերը նշված աշխատության մեջ այս հարցի կապակցությամբ նույնպես գրում է. «Գիլյանի հեղափոխական շարժմանը և դեպի Թեհրան ֆիդայիների արշավանքին «հարեցին» (руссабалас) դաշնակների մի խումբ՝ Ռեշտում աղյուսի գործարանի սեփականատեր Եփրեմ Դավիդյանցի գլխավորությամբ։ Ոնդ որում Իվանովը Եփրեմ խանին սկզբունքորեն անվանում է Եփրեմ Դավիդյանց չօգտագործելով ժողովրդի կողմից նրան շնորհված «խան» կոչումը։ Չենք կարող անտեսել նաև այն հանգամանքը, որ Մ. Իվանովի աշխատության համար սկզբնաղբյուր է հանդիսացել Ա. Ջարալիի «Թարիխ-ե մաշրուբ-ե Իրան» (Իրանի Սահմանադրության պատմություն) աշխատությունը, որում Ջարալին ճշգրիտ աղբյուրագիտական հենքի վրա, բավականին մեծ պատկասանքով և ակնածանքով է խոսում Եփրեմ խանի մասին և բարձր է գնահատում նրա կատարած ներդրումը Իրանի սահմանադրական շարժմանը⁷⁸։

1909 թ. հուլիսին Թեհրանի գրավումից և Մոհամմադ Ալի շահին զահընկեց անելուց հետո, Եփրեմ խանը Սեփահյարի ժամանակավոր կառավարությունում զբաղեցրեց Թեհրանի ոստիկանապետի պաշտոնը։ Շուրջ 100 հայ կամավորականներ, բախտիարական հեծյալների, մոջահիդների և կոզակական ջոկատների հետ համատեղ 1909 թ. աշնանից մինչև 1910 թ. գարուն միապետական ուժերի դեմ արշավանքի ժամանակ հնազանդեցրին՝ Ջենջանում մոլլա Դուրբան Ալիի, Աղդեբիլում՝ դարադաղցի Ռահիմ խանի և շահսենյան հետադիմական ուժերին⁷⁹։

1910-1911 թթ. կառավարության և մեջլիսի ներսում ձևավորված դեմոկրատների և պահպանողականների հակամարտությունները, ինչպես նաև Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի արտաքին ճնշումները վերջնականապես կազմալուծել և թողտվության էին մատնել երկրի պետական ապարատը։ 1911 թ. հուլիսին Ռուսաստանից վերադարձած նախկին շահ Մոհամմադ Ալին թուրքմենական ցեղերի

⁷⁷ Сборник зап. док., 1909, вып. 2, с. 148.

⁷⁸ Ջարալի Ա., Թարիխ-ե..., Թեհրան, 1378, (պարս.)։

⁷⁹ Հ.Յ. Դաշնակցություն, Եփրեմ, Պարսկական Սահմանադրություն (Հ.Յ.Ղ. Կենտրոնական Արխիվ), խմբ. Ա. Ամուշյան, Թեհրան, 1976, էջ 41-43.

աջակցությամբ սկսեց դեպի Թեիրան արշավանքի նախապատրաստություններ տեսնել: Մինևույն ժամանակ նրա հրահրմամբ՝ Ատրպատականում Շոջա էդ Դոուլեն, Քրդստանում՝ շահի եղբայր Սալար-էդ-Դոուլեն և այլ միապետական ուժեր հակակառավարական ելույթներ սկսեցին: Սահմանադրական կարգերի համար սպասնալիքի նման պայմաններում հակահեղափոխական ուժերի դեմ արշավանքի նախաձեռնությունը իրենց վրա են վերցնում Եփրեմ խանի հատուկ զորախումբը՝ կազմված հայ և պարսիկ կամավորներից և բախտիարական հեծյալները՝ Սարդար Բահադուրի գլխավորությամբ⁸⁰: 1911 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին միապետական Սարդար Արշադի ուժերի դեմ պայքարում Եփրեմ խանի հրամանատարության տակ եղել են շուրջ 300 հայ և իրանցի մարտիկներ (180-ը հայ)⁸¹: 1911 թ. սեպտեմբերին Եփրեմ խանի և Քեու գլխավորությամբ 150 հոգանոց հայկական խումբը, 600 բախտիարական հեծյալների և 100 ժանդարմներից բաղկացած զորախմբերի հետ միասին պարտության մատնեցին Սալար-էդ-Դոուլեին⁸²:

Պատմագրության մեջ Եփրեմ խանի զործունեության վերաբերյալ մի շարք վիճելի տեսակետների ձևավորման պատճառներնեղը միայն գաղափարական չեն: Դրանց անշուշտ նպաստել են նաև միջանձնային և ներկուսակցական հանգամանքներ: Ինչպես նշում է Հ. Բերրեդյանը, Եփրեմ խանի Թեիրանի ոստիկանապետի պաշտոնը զբաղեցնելուց հետո, նրա և ՀՅԴ կուսակցության որոշ անդամների միջև եղել են որոշակի անհամաձայնություններ⁸³: Եփրեմ խանի ընդդիմախոսները գտնում էին, որ ՀՅԴ որպես հեղափոխական կուսակցություն, պետք է հեռու մնա իրանական քաղաքականությունից: Իսկ ՀՅԴ պատմագիր Մ.Վարանդյանը նշում է, որ այս տեսակետի կողմնակիցները բավականին ազդված են եղել ժամանակի ռուս հեղափոխականների

⁸⁰ Atary J., *The Iranian Constitutional...*, pp. 304-310; Բաբրուդյան Վ., Իրանի պատմություն, էջ 529:

⁸¹ Ամուրյան Ա., Հ.Յ.Դաշնակցութիւնը Պարսկաստանում..., էջ 160-162; W. Morgan Shuster, *The Strangling of Persia*, New York, Century, 1912, pp. 127, 135; էմսար Հ., Եփրեմ, էջ 457-459, 473; Сводная записка, 1911, вып. 4, с. 57, 164.

⁸² Ամուրյան Ա., Հ.Յ.Դաշնակցութիւնը Պարսկաստանում..., էջ 162-166; Դրոշակ, № 4, 1912:

Barberian H., *Armenians and the Iranian Constitutional ...*, pp. 152-155.

«ընկերակարական», «աշխատավորական» և «դասակարգային» գաղափարներին»⁵⁴.

1909թ. հեղափոխական կասավարությունում եփրեմ խանի կողմից ոստիկանապետի պաշտոնը զբաղեցնելուց հետո դաշնակցականների և բոլշևիկյան ՌՍԴԲԿ-ի միջև գաղափարական հակասությունները իրանում ավելի սրվեցին: Գաղափարական նոր մրցակազմ սկսվեց նաև ՀՅԴ և Ա.Դ.Հնչակյան կուսակցության միջև: Հայ սոցիալ-դեմոկրատներ Տ. Տեր-Հակոբյանի և Վ. Փյուրյանի համագործակցությունն իրանի Դեմոկրատական կուսակցության հետ⁵⁵ նույնպես միանշանակ չի ազդել իրանում Դաշնակցության այդ բնույթին: Քանի դեռ սահմանափակ են իրանում Հնչակյան կուսակցության գործունեությանը վերաբերվող և Բաքվում եղած սոցիալ-դեմոկրատների հաշվետվությունների արխիվային փաստաթղթերն ուսումնասիրելու հնարավորությունները, իրանի սահմանադրական շարժանը հայերի մասնակցությանը վերաբերվող շատ հարցերին լիարժեք և համակողմանի պատասխան տալու համար առաջ են գալիս որոշակի դժվարություններ:

Այնուամենայնիվ 1909 թ. Սահմանադրության վերահաստատումից հետո Հնչակյան կողմը մասամբ հեռացավ իրանի քաղաքական ասպարեզից: Սակայն Դաշնակցությունը դեռ շարունակում էր շարժման ընթացքի վրա ազդելու իր հետագա փորձերը: Չնայած կուսակցության և եփրեմ խանի ներքին կոնֆլիկտին և այն հանգամանքին, որ եփրեմ խանը միշտ չէ, որ կիսում էր իր ընկերների այն տեսակետը, որ կուսակցությունը պետք է հեռու մնա իրանական քաղաքականությունից, ինչպես նշում է Հ. Բերբերյանը եփրեմի մահից, հետո կուսակցությունն իրանում իրեն ավելի խոցելի էր զգում: Իսկ 1912 թ. Դաշնակցությունը հետզհետե սկսեց հեռանալ իրանի քաղաքական դաշտից⁵⁶:

⁵⁴ Վարսանյան Ա., ՀՅ. Դաշնակցության Պատմություն..., հ. Բ., էջ 297:

⁵⁵ Afery J., The Iranian Constitutional..., pp. 267-269.

⁵⁶ Եփրեմի գրելելուց հետո Քեօն ստանձնում է հայկական գործառնի իրանաստորությունը և հայրական վերադառնում է Թեհրան: Սակայն շուտով ստիպված է լինում անցնել Կովկաս, քանի որ առաջացած մի շարք քաղաքական անհամաձայնությունների պատճառներով ՀՅԴ որոշում է լուծարել իր մարտական խմբից Թեհրանում: Էլմար Հ., Եփրեմ, էջ 164; Անուրյան Ա., ՀՅ. Դաշնակցությունը Պարսկաստանում..., էջ 75:

Կուսակցության այս որոշման վրա նախ և առաջ ազդեց 1910 թ. օսմանյան գորքերի մուտքը Իրանի հյուսիսային շրջաններ⁸⁷: 1912 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Թեհրանում անցկացվող Առաջին տարածաշրջանային համաժողովում կուսակցությունը որոշեց խզել իր հարաբերություններն իրանական կառավարության հետ և հետ կանչել իր զինվորներին: Քանի որ սահմանադրական սկզբունքներից ներկայիս իրանական կառավարության նահանջի, Մեջլիսի փակված մնալու, ինչպես նաև Իրանի ներքին խնդիրներին օտարերկրյա տերությունների չափազանց միջամտության պայմաններում, կուսակցությունը հետագա պայքարն անիմաստ էր համարում: Սակայն միևնույն ժամանակ ներքին հրահանգներով դիմեց իր իրանական մարմիններին՝ անցնելով ընդհատակ շարունակել գործադրել բոլոր ջանքերն Իրանում սահմանադրական կարգերի վերահաստատման, Մեջլիսի վերաբացման, դեմոկրատական տարրերի հետ համագործակցելու, աշխատավորության և գյուղացիության շրջանում սոցիալիստական սկզբունքների տարածման ուղղությամբ, ինչպես նաև իրանախայ համայնքի ինքնապաշտպանական խնդիրները կազմակերպելու նպատակով⁸⁸:

1905-1911թթ. Իրանում սահմանադրական կարգերի հաստատմանն ուղղված պայքարն իր տրամաբանական ավարտին չհասավ: Դրան գլխավորապես խոչընդոտեցին Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի դիրքորոշումները, ինչպես նաև իր քաղաքական կենտունակությունը կորցրած իրանական կառավարության քաղաքականությունը: Սահմանադրական հեղափոխության հետագա ընթացքի նկատմամբ: Սակայն անվիճելի է, որ սահմանադրական կարգերի հաստատման համար պայքարող իրանցի և հայ, ազերի, վրացի հեղափոխականները, չնայած իրենց ազգային և կրոնական տարբերությանը, առաջնորդվում էին ընդհանուր հաղթանակի սկզբունքով և միասնական հանդես էին գալիս քաղաքական միապետության, Իրանում Ռուսաստանի վարած քաղաքականության դեմ և ամենակարևորը՝ հանուն սահմանադրական կարգերի հաղթանակի:

⁸⁷ Berberian H., *Armenians and the Iranian Constitutional...*, pp. 155, 181.

⁸⁸ Berberian H., *Armenians and the Iranian Constitutional...*, p. 181.

**ON THE ISSUE OF THE ARMENIANS PARTICIPATION IN 1905-1911
IRANIAN CONSTITUTIONAL REVOLUTION**

The most soviet historiography researching devote to 1905-1911 Iranian Constitutional Revolution from the informative and historical point of view are of great value but for many decades, for suitable idealistic motives, they ignored and minimized the role of historical participation of Armenians on this movement. Nowadays, the issue is possible to analyze in a new and detailed way, which needs much deep research. later publications of the new western and Iranian researchings, as well as Armenian archive documents and periodicals make it possible to have not one sided estimation of Armenians military and ideological collaboration in Iranian Constitutional movement.

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱԻՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿՈՐՄԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՄՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ (1918-1921 թթ.)

1918 թ. մայիսի 26-ին Թիֆլիսում հռչակվեց վրացական անկախ պետականության վերականգնումը (Վրաստանի Դեմոկրատական Հանրապետություն/ՎԴՀ): Այդ օրը Վրաստանի Ազգային խորհուրդը (ՎԱխ) հաստատեց «Անկախության մասին ակտ»-ը¹: Ստեղծվեցին կոալիցիոն սկզբունքի վրա հիմնված հանրապետական առաջին կառավարությունը, ազգային պետական կառույցներն ու խորհրդանիշները²: 1918 թ. հունիսի 24-ին վարչապետի պաշտոնը ստանձնեց Ն.Ն. Ժորդանիան³:

Քանի որ անկախության հռչակումից հետո հնարավոր չէր միանգամից անցկացնել իրավագոր խորհրդարանի ընտրություններ, ուստի ՎԱխ-ը ճանաչվեց որպես ժամանակավոր քարծրագույն օրենսդիր մարմին, որի նախագահ ընտրվեց սոցիալ-դեմոկրատ Ն. Ա.

¹ Տես: Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, т. 336-337:

² ՎԴՀ-ի պետական դրոշն առաջին անգամ բարձրացվել է 1918 թ. մայիսի 26-ին օրս վերադրեաների նախկին պալատի շենքի վրա՝ Վրաստանի անկախության հռչակման արարողության ավարտից անմիջապես հետո: Հանրապետության դրոշի հեղինակն էր քանդակագործ և նկարիչ Յ.Ի. Լիկոսնին: 1918 թ. հուլիսի 26-ին կառավարությունը հաստատեց պատմաբան Ի. Տախաիշվիլու կազմած և նկարիչ Ի.Ա. Շաղեմանի գծած զինանշանի նախագիծը, որի կենտրոնական մասում պատկերված է Ար. Գևորգ: Պետական օրհներգ էր դարձել Կ. Փոցալեթաշվիլու «Դիդբա» («Ի փաս») մեղեդին: Տես: საქართველოს ისტორია. XX საუკუნე (საქართველოს ისტორიის უკვე აღნიშნული სტრუქტურայով), თბილისი, 2003, გ. 62.

³ Երա կազմի մեջ մտան չորս սոցիալ-դեմոկրատ՝ Ն. Ոսմիշվիլի (ներքին գործերի նախարար, որը աստիճանաչ վաղեց նաև վարչապետի պաշտոնը), Ա. Չիսնկի (արտ. գործ. նախարար), Գ. Գիբոգան (զին. նախարար), և Խոմերեկի (երկրագործության և աշխատանքի նախարար), երկու սոցիալիստ ֆեդերալիստ՝ Գ. Լախիշվիլի (ժողովրդական լուսավորության նախարար), Ը. Կեքել-Անսիխիշվիլի (արդարադատության նախարար), ազգային դեմոկրատ Գ. Գուրուշի (ֆինանսների, առևտրի և արդյունաբերության նախարար), սոցիալիստ հեղափոխական Ի. Լորեքիվանիձե (հաղորդակցության ուղիների նախարար): Տես: Silogava V. & Shengela K., History of Georgia: from the ancient times through the «Rose revolution», Tbilisi, 2007, pp. 208-209.

(Վարդ) Չխեժեն⁴։ Հաջորդ օրերին ձևավորվեց կուսակցական ներկայացուցչության սկզբունքով ընդլայնված ՎԱՍ-ի նոր կազմը, որին անդամակցեցին 67 սոցիալ-դեմոկրատ (այդ թվում հայազգի՝ Զ. Միկիլոսումովը և Մ. Վարդյանը)⁵, 16 սոցիալիստ ֆեդերալիստ⁶, 15 ազգային դեմոկրատ⁷, 12 սոցիալիստ հեղափոխական⁸, 3 օադիկալ-

⁴ «Sis Chronika. «Kavkazskoe slovo» (Tiflis), 30 mai 1918. և, Չխեժեժի ելույթը գործադիմյուց հետո (1919 թ., հունվար) խորհրդարանի նախագահ կարգվեց պառնաբան և ազգագրագետ է. Թադևոսյան (ազգային դեմոկրատ)։

⁵ «Sis «Հրեղեն» (Թիֆլիս), 2 հունիսի 1918։

⁶ 1904 թ. ծնունդ հիմնվում է սոցիալիստ ֆեդերալիստների (ՄՅ) կազմակերպություն՝ առաջին քաղաքական կուսակցությունը վրաց խորհրդային մեջ։ Այն սկզբնապես ընդգրկում էր քրդեր նրանց, ովքեր ձգտում էին վերականգնել Վրաստանի ինքնուրույնությունը։ Վրասկոցության կարգախոսները միաժող էին և՛ ազգային, և՛ սոցիալական ազատագրման գաղափարախոսական դրոշմները։ Իր գոյության վաղ շրջանում ՄՅ բաղկացած էր երկու՝ «ինքնավարականների» ու ազգային դեմոկրատների թևերից։ Վեցինիս հարեցին նաև վրաց «անարխիստները» (Մ. Օրեթելի, Վ. Չեթեժիշվիլի և այլք)։ Չիժեռվյ միատարր և վերաբերվյ մի շարք պատկերմաներ, 1919 թ. հունվարին ՄՅ հրահանգ դարձյալ կիսվեց։ Սեծամանությունը համախմբվեց *Սոցիալիստ ֆեդերալիստների հեղափոխական ցամաքորդական կուսակցության մեջ*, որի առաջնություն էր Գ. Լախիշվիլին, իսկ լրատվամիջոցը՝ «Սևախալստ սարքանժողովության գործը բերթը։ Երկրորդ՝ սակավաթիվ հոսանքը ձայն սոցիալիստ ֆեդերալիստների «Սաքալալուս» կուսակցությունը (Ա. Ի. Օրեթելի և ուրիշներ)։ Ունենալով «սիմոնիկալիստական» հակումներ ՄՅ-ի այս թևն ի վերջո (1920 թ.) վերադարձավ մաքր կուսակցության գիւղը։

⁷ Ազգային դեմոկրատների (ԱԴ) քաղաքական հոսանքը գոյություն ուներ դեռ 1905 թ. հունվարից, երբ մի խումբ վրաց հասարակական գործիչներ մտադրվեցին ստեղծել ազգային կուսակցություն։ Այդ առաջին վերոնց, սակայն, եղավ ասպարդյուն։ Վրաց գրականության դասական Իջա ձայնավածն առաջինը եղավ, ով համալսարանց ազգայնականների գաղափարախոսությունը և 1906 թ. շարադրեց նրանց ծրագիրը։ Մինչ օրսական միապետության տապալունը գոյություն ուներ այդ գաղափարախոսության կրողների երկու խումբ։ Սեկը համախմբված էր «երի» (Ազգ) անազորի շուրջ, մյուսը՝ «Կղե» (մայր)։ Գլխավոր ջրածանը կայանում էր ազնվականության և քաղցեմիության, ինչպես նաև ունեւոր գոյության վրաց սոցիալ-տնտեսական շահերի համադրի լինելու մեջ, սակայն կրանք քաղաքական ձգտումների համառեղումն, ի վերջո, հիմնականում և գերազանցապես հնարավոր եղավ հակամակվածն պատերազմի վրա։ 1917 թ. հունիսին հիմնվեց ազգային դեմոկրատների ինքնուրույն կուսակցություն։ Երա կարգադրում դեմքերից էին և՛ Նիկոլյան, Ս. Քեղիան, Գ. Գվազալան, է. Թադևոսյան, Գ. Գուտան, Գ. Կիկոնեն։ Այդ ժամանակաշրջանում Վրաստանի հասարակական կյանքում վրաց սոցիալ-դեմոկրատներից հետո ԱԴ իրականում երկրորդ քաղաքական ուժն էր։ Կուսակցությունը լույս էր ընծայում վրացալեզու «Սաքալալեղ» (նաև՝ «Ախալի Սաքալալեղ», «Իվլեխա») և օտարալեզու «Վոլոդոժնին», «Գրուգիա», «Օբնովնին» օրաթերթերը։ Վրաստանի պետական և հասարակական կյանքում անհամեմատ համառ դեր էին խաղում ԱԴ-ից առանձնացած և՛ երկու կուսակցություն։ *Պայքիկալ*

դեմոկրատ, 4 «ալիոնական» և 2 անկուսակցական⁹: 1918 թ. օգոստոսին ՎԱՍՆ-ը որոշում կայացրեց իր կազմում ընդգրկել նաև Վրաստանի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին, հատկացնելով հայերին՝ 10, արխազներին՝ 5, թաթարներին՝ 4, ռուսներին՝ 3, օսերին և հրեաներին երկուական, իսկ հույներին և գերմանացիներին մեկական պատգամավորական տեղ¹⁰։

խորհրդարանում ազգային փոքրամասնությունների ներկայացուցչության մասին օրենքն ընտրության իրավունք էր տալիս ազգային տակայն խորհուրդներին, որոնք բաղկացած էին Վրաստանի քաղաքացիներից և որոնց գործունեությունը սահմանափակվում էր հանրապետության շրջանակներով¹¹։ Վրաստանի Հայոց ազգային

դեմոկրատների գրուգաչևական կուսակցությունը ստեղծվել էր 1917 թ. աշնան, ԱԴ-ից իր անկախաբիվ «ծախ» թևի անջատման հետևանքով։ Հողային բարեփոխման շուրջ առաջացած սկզբունքային հակասությունների հետևանքով, 1919 թ. հունվարին ԱԴ-ից առանձնացավ նաև «աջ» պահպանողական թևը, որը խոսում էր կալվածատերերի չափերից։ Երա մասնակիցները (Գ. Կեչապեի, Ռ. Գաթալիյի, Դ. Կալանձե, Մ. Մալաբեի, Գ. Ամիրջեի և այլք) հայտնի են որպես «անկախ» ազգային դեմոկրատներ, սակայն նրանց կողմից ձևավորված կուսակցությունը կրում էր «ազգային» անվանումը։ Այդ քաղաքական հոսանքի տեսակետները արտահայտում էր «Կղզի» (նաև՝ «Սալի Կղզի») շաբաթաթերթը։ «Անկախ» ազգային դեմոկրատներին գաղափարապես հարում էին նաև «Վրաստանի անկախության կոմիտե»-ի (ստեղծվել էր 1914 թ.) նախնին անդամները (Մ. Արզրուկանձե, Գ. Մալաբեի, Մ. Շերբեի, Լ. Կեռեսիձե և այլք), որոնք և միաձուլվեցին ընդհանուր կազմակերպության մեջ։ 1921 թ. հունվարին «անկախ» և «տաղիվալ» ազգային դեմոկրատները, ինչպես նաև «անկուսակցականների միություն» կոչված հասարակական կազմակերպության անդամները ստեղծեցին *Դեմոկրատական կուսակցություն*, որը որպես միջուկ էր մտածված քոլոր պահպանողական և ազգային-արմատական ուժերի համախմբման համար։

Վրաստանի սոցիալիստ հեղափոխականների (խեծեր) Անդրկովկասյան ճյուղից առանձնացած վրաց կուսակիցները ստեղծեցին (1918 թ., հունիս) ինքնուրույն ԱԿ կուսակցություն։ Այդ հոսանքի տեսակետները արտահայտված են «Շրժմա» (Սշխատանք) պարբերականի էջերում։ Կուսակցությունը գլխավորում էին Լ. Շենգելյան (նույն ինքն՝ ականավոր զրոյ մեռ Կֆալեի), Ի. Լուցուրիձե, Ի. Գորբշևաև։

⁹ Տե՛ս Национальный совет Грузии, «Кавказское слово», 1 սեպ 1918.

¹⁰ Տե՛ս Хроника: Национальные меньшинства, «Кавказское слово», 27 августа 1918.

¹¹ Վրաստանի պառլամենտ, «Մշակ» (Յիճիխ), 31 հոկտեմբերի 1918: «Դեմոկրատական հանրապետության» ժամանակաշրջանում զղույթուն ունեին ռուս, հույն, հրեա, ասորի և Վրաստանի այլ գանձազան ազգությունների չափերը և տեսակետները ներկայացնող քաղմնաթիվ ու խախտարելու կազմակերպություններ։ Քաղաքական դաշտում առավելապես այցի էին ընկնում ռուս խեծերի և սոցիալ-դեմոկրատների կուսակցությունների անդրկովկասյան ճյուղերը։ Այդ հոսանքների ներկայացուցիչները իրականում չէին հաշտվում Վրաստանի և այլ կովկասյան հանրապետությունների անկախության փաստի հետ և իրենց ռուսաբեզու մամուլի էջերում («Ձևաձա տրույա»,

խորհրդի¹² անդամներից ՎԱՍ-ում աշխատանքի համար լիազորվեցին սոցիալ-դեմոկրատներ՝ Ա. Երզնկյանը, Ս. Փիրումյանը, Ա. Իվանյանը, դաշնակցականներ՝ Զ. Զորյանը, Դ. Դավիթբեկյանը, Տ. Ավետիսյանը, սոցիալիստ հեղափոխականներ՝ Լ. Թումանյանը, Ն. Թարխանյանը և Վրացալեզու կուսակցական մամուլը ջերմորեն ողջունեց նրանց մուտքը Վրաստանի խորհրդարան¹⁴: Հայ պատգամավորների առջև,

«Նարդոնը զնամբ», «Զնամբ սելվուցի», «Սոցիալ Դեմոկրատ» և այլն) «միջազգայնականության» տեսանկյունից խտրոն դատապարտում էին Այրևուկյանի քաղաքական կյանքում գոյություն ունեցող այս կամ այն քաղաքական և արատավոր երևույթները: 1919 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կոմունիստների ձեռքով կազմակերպված խռովությունների ճշումից անմիջապես հետո արգելվեց այդ կասույքների պարբերականների հետագա լրյա ընթացումը Վրաստանում: խորհրդային Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հետո վրաց իշխանությունները թուլակողեցին ՍՄԴԿ-ի «միջազգայնականների» ճյուղի գոյությունը, որի տեսակետները արտահայտում էր նաև հայալեզու «Լոր և սուր» շաբաթաթերթը: 1920 թ. աշխարհն այդ սակավաթիվ խումբը միացավ վրաց կոմկուսին: Կեղծիս հետ միաժողովեց նաև «Ախալաբ» մուսուլմանական սոցիալիստական կազմակերպությունը: ¹² Հայ համայնքի շահերին նեցուկ էր կանգնած Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը (ՎԱՍ), որի կազմավորման մասին Թիֆլիսում գործող հայկական քաղաքական հոսանքները համաձայնության եկան 1918 թ. հուլիս-օգոստոսին: ՎԱՍ-ում ներկայացված էին ՀՅԴ-ի, ՀԺԿ-ի, Հլեյան կուսակցության, ինչպես նաև ՎՍԴԿ-ի, ՌՄԴԿ-ի և խեծների «հայկական սեկցիաների» խմբակցությունները: ՎԱՍ-ի նպատակությունը վարում էր Բ. Թախանյանը, իսկ գործնորդ դեկավարն էր հանդիսանում Ա. Երզնկյանը: Վրաստանի ՎԱՍ-ը գրասենյակ մինչև 1921 թ. փետրվարի 28-ը, երբ այլ ազգային կազմակերպությունների հետ մեկտեղ խորհրդային իշխանությունների կողմից կանցվեց նաև նրա գործունեությունը: Բացի ՎԱՍ-ից, Թիֆլիսում գործում էր ևս 43 հայկական մշակութային-սովորական, քարեղբորական, արհեստակցական և հայրենակցական միություն: Տե՛ս Хроника Карабахского фронта, «Кавказское слово», 22 июня 1919. ¹³ Տե՛ս «Հոլիզոն», 27 սեպտեմբերի 1918: Նաև՝ կրատը, Հայերը Վրաց Ազգային խորհրդում, «Աշխատարար» (Թիֆլիս), 2 հոկտեմբերի 1918: ԿԴԿ-ի սահմաններում գտնվող հայ համայնքի հասարակական կյանքում առաջնային դեր էր խաղում ՀՅԴ-ի Վրաստանի ճյուղը: «Դաշնակցություն»-ից հետո երկրորդ քաղաքական ուժը 1917 թ. գալնանը Թիֆլիսում հիմնված լիբերալ-բուրժուական **Հայ Ժողովրդական կուսակցություն**ն էր, որին հաճախ կոչում են նաև հայ «կադետներ» անունով: Այս կուսակցության կենտրոնը մինչև 1919 թ. սեպտեմբերը գտնվում էր Վրաստանի մայրաքաղաքում և նրա Թիֆլիսի ճյուղի ղեկավար անդամները (Ռ. Հովհաննիսյան, Կ. Արեֆանյան, Գ. Ղուլխանյան և այլք) ստանձնապես էլ մեծ ցանկություն չէին դրսևորում ՀԺԿ-ի Կենտրոնը Հայաստան տեղափոխվելու համար: Այդ իրանքը արտահայտում էր ունեթ դասի շահերը, սակայն Վրաստանում հայ գործարար տարրի սնանկացման հետևանքով ՀԺԿ-ն կորցրեց իր երեմնի համբավը և հայրնվեց դեկավրին կացության մեջ:

¹⁴ Տե՛ս «Աշխատողներ», 4 օկտյոբեմբեր 1918. Նաև՝ «Յեռնա», 4 օկտյոբեմբեր 1918.

սակայն, դրվել էին մի շարք ոչ պաշտոնական սահմանափակումներ: Այդպես, օրինակ, արգելվել էր նրանց մասնակցությունը խորհրդարանի հանձնաժողովներում¹⁵: Հայ համայնքի լիազորները վրաց խորհրդարանում սակայն չպահպանեցին կազմակերպչական միասնականությունը: ՀՅԴ-ի ներկայացուցիչները հանդես եկան առանձին պատգամավորական խմբի ստեղծման նախաձեռնությամբ¹⁶:

1918 թ. հոկտեմբերի 8-ին ՎԱԽ-ը վերանվանվեց՝ Պատվամենտ: Այդ մարմնի գործունեության ժամկետ սահմանվել էր մինչև 1919 թ. հունվարի 31-ը: Սակայն նրա արտակարգ նիստերը զուամրվեցին նաև նույն քվի փետրվարին, որոնք նվիրված էին Սոցիի¹⁷ և Ախալցխայի¹⁸ դեպքերի քննարկմանը:

1918 թ. մայիս ամսից մինչև 1919 թ. փետրվարը նորակազմ Վրաստանի Հանրապետությունը հաղթահարել էր կայացման փուլը: Փետրվարի 14-16-ը, համաձայն 1918 թ. նոյեմբերի 12-ի Սահմանադիր ժողովի (ՍԺ) մասին օրինագծի՝ հանրապետությունում տեղի ունեցան ընտրություններ, որտեղ բացարձակ հաղթանակ տարան ՎՍԴԿ-ի¹⁹

¹⁵ Տես Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 441, ց. 1, գ. 26, ք. 18:

¹⁶ Տես «Աշխատակերպ», 18 հոկտեմբերի 1918:

¹⁷ Տես Машлян Б., «Социалкизм в российско-грузинских отношениях (июль 1918г. — март 1920г.)», Третья годовичная научная конференция РАУ, Сборник, ч. 1, Ереван, 2009, с. 77-82.

¹⁸ Տես Парламент Грузии, «Борьба» (Тифлис), 22 февраля 1919.

¹⁹ ՎՊՀ-ի տարածքում և արհեստակ վրաց իրողության մեջ գործող անենախոշոր և անենազինեցիկ քաղաքական ուժը **Վրաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցություն** էր, որը և հիմնականում իր ուսերի վրա կրեց անկախ հանրապետության քաղաքական ողջ պատասխանատվությունը: ՎՍԴԿ-ն առաջացել է 1918 թ. նոյեմբերին, ՈՍԴԿ-ի Անդրկովկասյան ճյուղի պատկանող ռետևաներով: Նրա անդամները հայտնի են նաև որպես վրաց «մեմչիկներ»: Կուսակցությունն առաջնորդում էին Ն. ժողդանիան, Ա. Ջիրյանեն, Ն. Չիսիծեն, Ի. Շերեթեյին, Ա. Չիսնեկեյին, Ե. Գեգեձևորին: ՎՍԴԿ-ին միացավ (1919 թ., հունվար) «Ալիոնի» (Արշալույս) խումբը, որի մասնակիցները (Ի. Գոմարեջի և այլք), մեղադրվելով ազգայնականության մեջ, դեռ 1916 թ. վտարվել էին ՈՍԴԿ-ից: ՎՍԴԿ-ի շարքերում անդամակցում էին մտավորականության, գյուղացիության և բանվորության ներկայացուցիչները, շուրջ 80 հազ. մարդ: Կուսակցությունը լույս էր ցնծայում տպագիր մամուլ, այդ թվում Կենտկոմի մարմիններ՝ վրացալեզու «Էրթորա» (Միասնություն) և ռուսալեզու «Բորբա», ինչպես նաև Սոխուժի ճյուղի ռուսալեզու «Նաչե Այովո» պարբերականը: 1921 թ. ՎՍԴԿ-ն պատարկվեց, նրա կազմից դուրս եկան մի խումբ «ձախ» քվին պատկանող կուսակցականներ, ովքեր ստեղծեցին «Սիլիվո» (ձառագայթ) խումբը (տպագիր մարմին «Ախալի Սիլիվո»): Ընկալվելով որպես վրացական ազգային

թեկնածուները: Սժ ընտրված պատգամավորներից 109 սոցիալ-դեմոկրատ էին, 8-ը՝ ազգային դեմոկրատ, 8-ը՝ սոցիալիստ ֆեդերալիստ, 5-ը՝ սոցիալիստ հեղափոխական²⁰: ՎՄԴԿ-ի ցուցակով խորհրդարան ընդգրկվեց նաև հայազգի չորս պատգամավոր²¹: Այսպիսով, ծայրերի պահանջված քանակը ապահովեցին միայն վրացական ազգային կուսակցությունների համամասնական ցուցակները: Դա պայմանավորված էր «դեմոկրատական հանրապետություն» որոշեցրված «ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկության» սկզբունքի լուրջ խախտումներով: ՎԴՀ-ի «հպատակություն» սահմանող կանոնադրության դիտավորյալ արգելքների շնորհիվ ծայրի իրավունքից զրկվեց ոչ վրացի ազգաբնակչության ստվար զանգվածը: 1918 թ. դեկտեմբերին վրաստանի և Հայաստանի միջև առաջացած բախման հետևանքով ՎԴՀ-ի հայաշատ վայրերում բնակչությունն ահաբեկված էր, օրինակ՝ Աղնախում (Կախեթ) վրաց գվարդիականները խլում էին ընտրողների ձեռքից ՀՅԴ-ի օգտին տրված քվեաթերթիկները²²: Բացի այդ,

կուսակցություն՝ ՎՄԴԿ-ն, այնուամենայնիվ, բազմազգ էր: Նրա շրջանակներում գործում էր նաև «**եղայնական սեկցիա**» (չուրը 150 կուսակցական), որը ղեկավարն էր ՎՄԴԿ Կենտկոմի անդամ Մ.Կ. Վարդյանը: Սեկցիան ուներ պարբերական՝ «Բանվորի Չայն» շաբաթաթերթը: Առավելագույն այցի է ընկնում «եղայնական սեկցիայի» Արեսաջիաի հյուրը, որի անդամները (Պ. Ավդայբեգյան, Տ. Աղոճոնյան, Ե. Սինապան, Վ. Ոչտունի և այլք) գլխավորում էին նաև Սովխոմի հայոց շրջանային ազգային խորհուրդը: Վրաստանի թուրք-թաթարական ազգաբնակչության շրջանակներում, ի նպաստ վրաց պետության կենսական շահերի, քաղաքական աշխատանք իրականացնելու նպատակով, կազմավորվեց «ինքնուրույն» սոցիալ-դեմոկրատական «Ըումմեթ» («Հումմաթ») կուսակցությունը, որը ՎՄԴԿ-ի նկատմամբ ոչ թե կրտսեղ գործընկերոջ դերում էր գտնվում, այլև, վրաստան, նրա պարզ ստորաբաժանումն էր: Տե՛ս Ե հատված արտաս: Сь еза партия «Гумет», «Борьба», 23 декабря 1919.

²⁰ Տե՛ս К еворам в Учредительное собрание, «Закавказское слово» (Тифлис), 12 марта 1919.

²¹ Ի տարբերություն Մ.Կ. Վարդյանի և Ո.Գ. Աուշարովի, խորհրդարանի մյուս հայազգի անդամ Կ.Ա. Գանիկը (Փանյան), միաժամանակ լինելով Յիճիխի քաղաքային վարչության քաղաքատիժան պաշտոնյա, առհասարակ հեռու էր պահում իրեն վիրահայ համայնքի գործերից: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 61, ք. 26: Նաև՝ Писем о революц. «Борьба», 3 августа 1919. Սժ-ի չորս կին-պատգամավորների շարքում էր նաև Է.Ս. Տեր-Քարսեղյանը (Տեր-Պարսեղովա, Ասխվիլյան):

²² Տե՛ս Вьборы в Сун-ахе, «Народное знамя» (Тифлис), 9 марта 1919. Արևուրդը շիկացած էր նաև Դուչքում, որտեղ «արգելած է խօսել հայերեն: Ընտրությունների ժամանակ յայտարարել են, որ այն հայը, որ ծայն կը տայ № 4-ին (ՀՅԴ-ի ընտրացուցակը. – Բ.Ա.) խկոյն և եթ կարտուի...»: Տե՛ս Դուրսիկը Դուչքում, «Ցառաք»

Անալոգիայի (Սանցիս-Մեսիսի), Անալոգիայի (Ջավախք), Բորչալուի (Տաշիր) գավառների, ինչպես նաև Սվանեթի, Խնուրեթի և Աբխազիայի ազգաբնակչության մասնակցությունն ընտրություններին առժամանակ հետաձգվել էր²³: 1919 թ. օգոստոսին տեղի ունեցած Սժ-ի լրացուցիչ ընտրությունների արդյունքում նրա կազմի մեջ ընդգրկվեցին նաև ՀՅԴ-ի երեք ներկայացուցիչ (Զ.Ն. Ջոդյան, Տ.Գ. Ալեխոյան և Դ.Գ. Դավիթխանյան²⁴, որին այնուհետև փոխարինեց Գ.Ա. Տեր-Ստեփանյանը):

Սժ-ի նախագահ ընտրվեց Ն.Ս. Չխեիժեն, սակայն վերջինիս տևական բացակայության հետևանքով այդ կառույցի նախագահությունը, նրա գոյության ողջ շրջանում, վարում էր տեղապահ Ա.Ս. Լոմթաթիժեն, որը զուգահեռաբար զբաղեցնում էր նաև Թիֆլիսի քաղաքային դումայի ղեկավարի պառոզը: Սժ-ի գումարման գլխավոր նպատակն էր մշակել Վրաստանի առաջին սահմանադրությունը: Այդ պետական մարմինն օժտվեց նաև խորհրդարանին բնորոշ քոլոր հատկանիշներով:

1919 թ. մարտի 12-ին անդրանիկ նիստում Սժ-ն վերահաստատեց 1918 թ. մայիսի 26-ի «Անկախության Ակտ»-ը: Այնուհետև ստեղծվեց նաև նոր կառավարություն, դարձյալ Ն.Ն. Ժորդանիայի գլխավորությամբ, որը այժմ բաղկացած էր միմիայն ՎՍԴԲԿ-ի ներկայացուցիչներից²⁵:

Վրաստանի առաջնորդները հավանում էին ոչ միայն Թիֆլիսի և Բուքայիսի նահանգների ողջ տարածքին, այլ նաև ծրագրել էին մշակում (1918 թ.) Սուխումի (Աբխազիա), Սուչիի (Ջիքեթի) և Ջաքարթալայի (ճար-Բելոքանի) շրջանների, ինչպես նաև Փամբակի, Դազախ-Շամշադինի

(Թիֆլիս), 18 փետրվարի 1919:

²³ Տե՛ս Парламент Грузии, «Законкакоето слово», 4 февраля 1919.

²⁴ Տե՛ս «Աշխատառ», 20 սեպտեմբերի 1919:

²⁵ Նրա կազմի մեջ մտան Ն. Վ. Ուանիշվիլի (գինեյորական, ներքին գործերի և ժողովրդական լրատվության նախարար), Ե. Գ. Գեզեմյորի (արտաքին գործերի և արտարդարության նախարար), Կ. Գ. Կանոնջևի (ֆինանսների, պետքի և արդյունաբերության նախարար), Ն. Գ. Խոմելիկի (ներքազրոնության, աշխատանքի և հաղորդակցության ուղիների նախարար): Տե՛ս საქართველოს ისტორია. XX საუკუნის 20-40-იანები, 2003, გ. 61-62. 1919 թ. դեկտեմբերին կառավարության կառուցվածքում, ինչպես նաև անհատական կազմում որոշակի փոփոխություններ եղան: Արտարդարության նախարար կարգվեց Ռ. Ս. Արսենիժեն, իսկ գինեյորական նախարարի պաշտոնը ստանձնեց Գ. Ա. Լորջիկանիժեն: Տե՛ս «Слово» (Тифлис), 3 января 1920.

(Տավուշ) և Դարաչազի (Կամրեճան) նկատմամբ: 1919 թ. վրացական կողմն «անվիճելի» էր համարում շուրջ 93 հազ. քառ. կմ. տարածք, որի մեջ ներառված էին նաև Բաթումի մարզը, Արդահանի և Օլջիի (Տայք) շրջանները: Այդ տարածքն ուներ շուրջ 3 մլն. 400 հազ. ազգաբնակչություն, այդ թվում 1 մլն. 757 հազ. ազգությամբ վրացի²⁶: Վերջիններս բացարձակ մեծամասնություն էին կազմում Քութայիսի նահանգում՝ 97.3%: Հարևան Թիֆլիսի նահանգում վրացիները ունեին 44.6%, հայերը՝ 21.5%, իսկ ցյուրքախոս տարրերը՝ 10.5 տոկոս²⁷: Թիֆլիսը մեծ մասամբ բնակեցված էր հայ (43.1%), ռուս (26.5%) և վրացի (10.8%) ազգաբնակչությամբ²⁸: Հանրապետությունն ուներ նաև 300 հազ. (1921 թ.) մահմեդական բնակիչ: Հայերն առավել զգալի ազգային փոքրամասնությունն էին. նրանք շուրջ 400 հազար էին: Այսպիսով, ազգային և կրոնական տեսակետից խայտառդետ Վրաստանում փոքրամասնությունները կազմում էին բնակչության ստվար մասը:

Վարչական տեսակետից ՎԴՀ-ի կառավարության իրական իշխանության սահմաններում գտնվող տարածքը ներառում էր (1918 թ.) երկու նահանգ (16 գավառ) և երկու վարչական շրջան: Պաշտոնական Թիֆլիսը հետզհետե իրեն ենթարկեց Արդահանի շրջանի հյուսիսարևմտյան մասը (1919 թ., ապրիլ), ինչպես նաև Բաթումի մարզը (1920 թ., մարտ-հուլիս): Խորհրդարանի 1918 թ. օգոստոսի 2-ի որոշման համաձայն նահանգներում, շրջաններում (ենթաշրջաններում), գավառներում (գավառակներում) և գյուղական տիպի բնակավայրերում տեղական վարչակազմը ենթարկվեց կոմիսարներին²⁹: Միաժամանակ, հիմք ընդունելով Անդրկովկասյան կոմիսարիատի 1918 թ. հունվարի 25-ի որոշումը, ՎԱՄ-ը վճիռ կայացրեց գավառական զեմստվոների (վրաց.՝ «երոբա») կազմավորման մասին, որի հիման վրա 1918 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցան գավառական ժողովների («սակոբուլո») ընտրություններ³⁰: 1919 թ. հունվարի 28-ի օրենքը զեմստվոներին

²⁶ Տե՛ս Ментешава А., Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии 1917-1921, Тбилиси, 1987, с. 115.

²⁷ Տե՛ս Хармандарян С.В., Ленин и становление Закавказской федерации 1921-1923, Ереван, 1969, с. 12. Գրականության մեջ երբեմն փախտվում են փոքր շեղումներ բերված թվերից: Արդահանի, որանք ընդհանուր առմամբ մոտ են ճշմարտությանը:

²⁸ Տե՛ս Кавказский Календарь на 1917г., Тифлис, 1916, с. 206-207.

²⁹ Տե՛ս Sikogava V. & Shengelia K., History of Georgia ..., p. 211.

³⁰ Սահմուլը իրագրվում էր, որ «земские выборы проходят довольно плохо. Везде и всюду

հանձնեց տեղական վարչակազմի և միլիցիայի կազմավորումը: Այսուհետև գավառներում հետզհետե սկսեց վերանալ կաթավարական կոմիսարների ինստիտուտը: 1919 թ. հունվարի 30-ի օրենքը վերացրեց երկրի նահանգային կառուցվածքը: Վրաստանը բաժանվել էր գավառական զեմստվոների, որոնք իրենց հերթին ներառում էին առանձին համայնքներ՝ «թեմի»:

Վրաստանի պետական կառավարման համակարգը իր սոցիալիստական առաջնորդների կողմից մտածված էր որպես «դեմոկրատական հանրապետություն»՝ ի տարբերություն «խորհրդային» կարգերի: Նոր պետական համակարգը կերտողների համար օրինակ էր ծառայում շվեյցարական կաթավարչական մոդելը: Նրա հիմքում պետք է գտնվեին զեմստվոները՝ օժտված լինելով տեղական կառավարման մարմինների գործառույթով²¹: Գավառների մակարդակով կենտրոնական պետական հիմնարկները զրկվում էին որևէ ենթակա պաշտոնյաներ կամ վարչական մարմիններ ունենալու իրավունքից: Հետևապես յուրաքանչյուր գավառ վերածվում էր տեղական (վարչատարածքային) ինքնավարության: Սակայն դա դեռ չէր նշանակում տարածքային ազգային ինքնավարությունների հնարավոր առաջացումը: ՎՄԴԲԿ-ն, որը վերահսկում էր երկրի կառավարմանը, միանշանակ իրականացնում էր որոշեցված «ունիտար պետության» գաղափարը: Ն. ժորդանիան խորհրդարանում (1920 թ., դեկտեմբեր) առաջ էր քաշել պարտադիր պահանջներ երկրի ապագա սահմանադրության նկատմամբ, այդ թվում՝ Վրաստանում որևէ դաշնային միավորների բացակայության սկզբունքը²²:

1918 թ. սեպտեմբերի 24-ին Վրաստանի խորհրդարանը հաստատեց հանրապետության դատական համակարգի մասին օրենքը: Չեղագույն դատարանի դերը ստանձնեց «Սենատ»-ը, որը բաղկացած էր 12 նշանակովի անդամից²³: Տեղերում բնակչությանն իրավունք էր վերապահված ընտրել «հաշտարար» դատավորներ, որոնք ըննում էին քաղաքացիական բնույթ ունեցող գործերը: Քրեական և քաղաքական հանցանքների մեղադրանքով հարուցած

заметен значительный абсентизм населения. В выборах принимало участие 20-30% общего числа населения». Sbu «Борьба», 10 августа 1918.

²¹ Sbu Pipes R., *The formation of the Soviet Union (Communism and Nationalism 1917-1923)*, Cambridge, Massachusetts (USA), 1964, p. 212.

²² Sbu «Борьба», 8 декабря 1920.

²³ Sbu Slogava V. & Shengelia K., *History of Georgia* ..., p. 211.

գործերը պարտադիր քննվում էին «արտակարգ» դատարաններում, որոնք նաև մահապատժի մասին վճիռ կայացնելու իրավունք ունեին: Թիֆլիսում, Զուբայիսում և Սուխումում գործող «արտակարգ» դատարանների փոխարեն 1920 թ. մարտի 8-ից բացվեցին երգվյալ առնանակալների ատյանները: Կառավարությունը, սակայն, խուսափեց իրականացնել դատական համակարգի բարեփոխումն ազգային փոքրամասնությունների բնակության մի շարք շրջաններում, հատկապես Ախալքալաքի և Բորչալույի գավառներում: Արդարադատության նախարարի պահանջով, 1921 թ. հունվարի 1-ից դատարաններում բոլոր գործերը անվերապահորեն պետք է քննվեն վրացերեն լեզվով³⁴:

1918 թ. հոկտեմբերի 1-ին ՎԱԽ-ը որպես պետական լեզու ճանաչեց վրացերենը: Սակայն մինչ այդ, Վրաստանի ՆԳՆ-ի հուլիսի 20-ին արձակած «ազգայնացման մասին կանոնադրության» հիման վրա աշխատանքից ազատվեցին ոչ միայն վարչական մարմիններում ծառայող և վրացերենին չտիրապետող պաշտոնյաները, այլև պետական ենթակայության տակ գտնվող բոլոր հիմնարկներում աշխատող շատ ու շատ բժիշկներ, ուսուցիչներ, բանվորներ, փոստ-հեռագրական ծառայողներ³⁵: Այսպիսով, ամենատարածված և հուսալի աշխատանքը՝ պետական ծառայությունը, գործնականում հայ, ռուս և այլազգի մտավորականության, առհասարակ կրթված ոչ վրաց զանգվածի համար մնում էր անհասանելի, քանի որ բոլոր պաշտոնները վերապահվում էին վրացիներին³⁶:

³⁴ Տե՛ս «Грузия» (Тифлис), 1 декабря 1920.

³⁵ Տե՛ս Ментешава А., Октябрьская революция..., с. 109.

³⁶ 1920-ական թթ. ազդեցիկ քաղաքական գործչի Մ. Օրաֆելաշվիլին, մեր կարծիքով, դիպուկ գնահատական է տվել այս երևույթին: «[Грузинская] интеллигенция – разночинная и дворянская, сплошь социалистична, – шло и в нас, – национализация государственных учреждений... школы, суда и т[ак] д[алее] поставили ее во главе управления страной, у каждого винтика государственного механизма, в земствах, в городских самоуправлениях, кооперативных и в прочих клевых местах. Независимость Грузии... для этих слоев стала идеалом поклонения, которая дает и сейчас, а в будущем сулит еще больше реальных материальных благ». Տե՛ս «Жизнь Национальностей» (Москва), 3 ноября 1920. Հիմնարկներում կադրերի ազգայնացման թրի արևելիկան և նրան հարողիված տխուր հետևանքները ստիպեցին արձագանքել նաև Վրաստանի փառաբանների միության նախագահին: Մ. Ջափարիժեն գրում է, որ «эта борьба за теплые места. Поскорее прогнать других и самим занять их должности... так и произошло по образованию грузинской республики с вопросом о национализации учреждений. Скорее гоните русских, армян и других... Есть ли

1918 թ. հուլիսի 16-ին ՎԱԽ-ը հաստատեց «Վրաստանի դեմոկրատական հանրապետության հպատակության մասին կանոնադրություն»-ը: Ըստ որի քաղաքացի էին ճանաչվում, քացի էթնիկական վրացիներից, նաև այն անձինք, ովքեր իրեն ափանդական խավերի (իմա՝ ազնվական, քաղցենի, զոտացի) ներկայացուցիչներ գրանցված են եղել Վրաստանի մաս կազմող վարչական որևէ օղակին կից մինչև 1914 թ. հուլիսի 19-ը (ն. տ. օգոստոսի 1-ը): Այս կանոնադրության համաձայն քաղաքացիության ձեռք բերման որևէ եղանակ չէր նախատեսված²⁷: 1919 թ. մայիսին ԱԺ-ին վավերացրեց «Վրաստանի հանրապետության քաղաքացիության մասին օրենք»-ը²⁸, որը գրեթե անփոփոխ էր թողել նախկին «կանոնադրության» հիմնական սկզբունքները: Երա գլխավոր նպատակն էր՝ հնարավորինս դարձնել խոչընդոտել և ղեկավարացնել Վրաստանում մինչև 1918 թ. մայիսի 26-ը մշտական բնակություն հաստատած ոչ վրացի ազգությունների

достаточный контингент подготовленных грузин, могущих сразу заменить удаленных инженеров, механиков, судей и других специалистов, не пострадавших от этого интереса молодого государства – это их не касается, свой карьерный вылез всего». Sbu К национализации суда, «Борьба», 9 марта 1919.

²⁷ Sbu «Кавказское слово», 24 июля 1918. Այս օրենքի կիրառման եղանակը պետք է լրացուցիչ որոշվեր ԼԳ-ի և արդարադատության նախարարների հայեցողությամբ, ինչը արարարտ դաշտ էր ստեղծել տարբեր տեսակի կանախականությունների համար: «Կանոնադրության» իրականացման պրակտիկայի տխուր հետևանքների մասին տխրված էր բարձրանայնել Վրաստանի Հայրց ազգային խորհուրդը: «Закон 16 июня (այսպես է վավերացրում. – Բ.Մ.) объявляет гражданами республики, за исключением лиц грузинского происхождения, лишь тех из не-грузин, которые могли представить доказательства о приписке к какой-либо административной единице бывших Тифлисской и Кутаисской губерний до 19 июля 1914 года. Такое определение понятия подданства означало в отношении в частности городского населения армян исключение более половины их из числа граждан Грузии...»: «в порядке же разъяснения Министерством Внутренних Дел, целяя группы армянской интеллигенции, служащих и рабочих не только в государственно-общественных, но даже и в частных учреждениях, оказалось не-грузинско-подданными и потому дозволительно, почему и означались с мест и мерями администрации выславлялись из пределов Грузии...»: «результатом такого разъяснения явилось исключение из городских избирательных списков по Тифлису и другим городам большинства не-грузин и, в особенности армян, благодаря чему последние оказались почти поголовно лишеными избирательных прав и, Тифлисская Городская Дума оказалась сплошь грузинской...», – մեկնանշում էին ՀԱԽ-ի անդամները: Sbu «MEMORANDUM», Կրեմլինոյնու Սոբրանիո ո Նացիոնալնոյնու Սամոստրավեննիս արյան ո Գրուզի, [Տիֆլիս, 1921], с. 15, 20.

²⁸ Sbu «Նախարարացւոն Բընախընդըլ», 16 ոյնիս 1919.

ներկայացուցիչների համար նորակազմ հանրապետության քաղաքացիության ծեղք բերումը: Գոյություն ուներ նաև խնդրի քաղաքացիության և զորքերի կողմը: Այլ ազգություններին պատկանող բնակչությունը տեսնում էր, որ մինչև այժմ վրացիները և, իրենց նման, Ռուսաստանի պարզ հպատակներ էին, որ՝ և՛ իրավական, և՛ ազգային տեսակետից առաջ որևէ տարբերություն չկար նրանց մեջ, այնինչ 1918-ից սկսած մեկը իշխող տարր է դարձել, մյուսը՝ ստորադաս:

ՎԴՀ-ի կառավարության մշտական հոգատարության աստրկան ռազմական ուղղուն էր: 1918 թ. օգոստոսի 20-ին Վրաստանի կառավարությունը 12 կետից բաղկացած որոշում կայացրեց քանակի ստեղծման և նրա կազմավորման սկզբունքների մասին³⁹: Հանրապետության կառավարությունը մտադիր էր նաև ստեղծել սեփական ռազմածովային ուժեր և այդ գործի ասացին ժիծեսնակ հանդիսացավ «Պատարա Կախի» ռազմանավը⁴⁰: ՎԴՀ-ի զինվորական գործերը (1921 թ.) տնօրինում էին նախարար Ն. (Պարմեն) Ճիճինաձեն, բանակի գլխավոր հրամանատար Գ. Կվինիտաձեն և գլխավոր շտաբի պետ Ա. Գեղանիչվիլին:

1918 թ. հուլիսի 2-ին ՎԱՄ-ը հաստատեց «ժողովրդական գվարդիայի» մասին օրենքը, որը համալրվում էր կամավորական սկզբունքներով: Նրա կորիզը կազմեցին «կադմիր գվարդիայի» ջոկատները, որոնք մինչև այդ ենթարկվում էին Թիֆլիսի բանվորական պատգամավորների խորհրդին: Ժողգվարդիան այսուհետև անմիջապես ենթարկված էր վարչապետին, սակայն նրա իրական հրամանատարն էր այդ կառույցի գլխավոր շտաբի պետ Վ. Ա. Ջուղեյին (Վալիկո): Վրաստանի տարբեր քաղաքական հոսանքները դժգոհում էին, որ ժողգվարդիայի վերահսկողությունը վերածվել է ՎՍՂԲԿ-ի մենաշնորհի, այսինքն նա շարունակում էր ըստ էության մնալ այդ կուսակցության զինուժի դերում⁴¹:

Պետական անվտանգության ուղղուղ վերահսկում էր ՆԳ նախարարությանը կից գործող «Հատուկ ջոկատ»-ը (ղեկ՝ Մ.Ն. Քեղիա): Այդ ծառայությունը, որ ստեղծվել էր «հակահեղափոխության և սպեկուլյացիայի» դեմ պայքարի նպատակով, իր կառուցվածքում ներառում էր երկու վարչություն. քաղաքական և տնտեսական:

³⁹ St'u Slogava V. & Shengelia K., *History of Georgia* ..., p. 210.

⁴⁰ St'u Хроника, «Кавказское слово», 19 марта 1918.

⁴¹ St'u Slogava V. & Shengelia K., *History of Georgia* ..., pp. 210-211.

Գերազանցաբար քաղաքական ուստիվանության պարտականություններ կատարող այս կառույցը կազմված էր հիմնականում և զխավորապես վրաց սոցիալ-դեմոկրատներից ու նրանց համակիրներից:

ՎԴԿ-ին բաժին հասած տարածքները, ինչպես և ողջ Անդրկովկասը, հանդիսանում էին ընդամենը կազմալուծված Ռուսական կայսրության ազրարային կցորդը: Վրաց ազգի վերնախաւի՝ ազնվականության, որը սերտ կապված էր ավատատիրական հարաբերությունների հետ, հզորությունն ու հասարակական դերն անկում էր ապրում Այրկովկասում կապիտալիզմի զարգացման հետ զուգահեռ: Վրաց կալվածատեր խավը չկարողանալով հարմարվել շուկայական տնտեսության պահանջներին՝ սնանկանում էր և զիջում էր իր հողային սեփականությունը զարգացող կապիտալի ներկայացուցիչներին՝ առաջին հերթին հայկական⁴²: Վրաց ազնվականությունը երկար տարիներ օգտվելով բանկային վարկերից, ավաղ, չարաշահում էր այդ հնարավորությունը, զխավորապես ուղղելով ընծեծված ֆինանսական միջոցները ոչ արտադրական ոլորտ: Նրա ներկայացուցիչների կողմից հսկայական դրամական գումարները, շատ ու շատ դեպքերում, աննպատակահարմար փոշիացվում էին սեփական կենցաղային կարիքները հոգալու համար: Գերազանցապես սա պատճառը եղավ, որ Արևելյան Վրաստանի ազնվականության 40 տոկոսը, բանկային պարտքերի մեջ կորչելով, մինչև 1905 թ. փաստացի զրկվել էր իր ժառանգական հողերից⁴³: Սակայն այդ կալվածքների նշանավոր

⁴² Տնտեսական ապարեզում հայ գրծարար դասի ծնեցբերումների մասին տե՛ս Դադայան Խ., «Հայոց արևտրատնտեսական ներկայությունը Թիֆլիսում (ուշ միջնադար – 1918 թ.)», «21-րդ դար», 2008, քիվ 1 (19), էջ 124-150: Հայերը հիմնել և մշտապես իրենց ծնեցում էին պահել Թիֆլիսի գրեթե ամբողջ բանկային բիզնեսը: Տե՛ս Оганакян А., Банки Закавказья до установления советской власти и идея создания «Армянского банка», ИФЖ, 1970, № 1, с. 229-230. Հայ ծնեարկատերերի առաջատար դերը XX դարի 10-ական թվականներին չեղարկում է նաև արդի վրաց հետազոտողը: Տե՛ս კვანჭავაძე ბონდო, სომხური ბურჟუაზიის როლი საქართველოში (XX საუკუნის 10-იანი წლები), ქართული ენციკლოპედია, წიგნი/წიგნები 5, თბილისი 1998, გ. 485-497.

⁴³ Տե՛ս Дребуна Ел., Грузинская контр-революция, Ленинград, [1928], с. 19. Կովկասի կրտսակալ Չ. Գրիշինն այս հարցի վերաբերյալ գրում էր՝ «Крайняя задолженность земледельческого класса, составляющая в Закавказье общее явление, с одной стороны, а с другой – сосредоточение денежных средств в руках армян-капиталистов неизбежно имеет самым близким последствием концентрацию в руках последних земледеления в названном крае». Տե՛ս նույն տեղում, էջ 36:

մասը, ֆորմալ տեսակետից, դեռ զրանցված էր նախկին տերերի անունով⁴⁴: 1917 թ. հոկտեմբերի 29-ին Թիֆլիսի նահանգի կալվածատեր ազնվականությունը, այժմ զուրկ լինելով կործանված տուսական ինքնակառույցի հովանավորությունից և, ինչպես երևում է, ակներևաբար խուսափելով հայկական ֆինանսական շրջանակների հնարավոր պահանջատիրությունից, ժողով գումարեց և վճեց իր ամբողջ հողային ունեցվածքը, որի արժեքն էր 30 մլն. օուրլի, նվիրաբերել վրաց ժողովրդին⁴⁵: Թուրայիսի նահանգի ազնվականությունը, որը անհամեմատ նվազ չափով էր առնչվում հայ կապիտալի հետ⁴⁶, նման քայլի չդիմեց: Սակայն, ինչպես հայտնի է, կալվածատիրական սեփականության քայքայման աստիճանը գրեթե չէր էլ թողել վրաց ազնվականության ակնասու մասի ձեռքերում լիիրավ իրավունքներ այդ գույքի նկատմամբ: Իզուր չէ, որ այդ «բարեգործական» արարքը չգտավ իր օրենսդրական շարունակությունը: Սակայն դա, այնուամենայնիվ, լիսանգառեց ՎԱՍ-ին իսկույն տեր կանգնել «ազգային» կարողությանը⁴⁷: Ազնվականական շրջանակները, այլ «հեշտ» ուղիներ որոնելով, պահանջ առաջ քաշեցին, թե «կառավարությունը պետք է ընտրի հայկական կապիտալի կոնֆիսկացիայի ուղին»⁴⁸: Նորաստեղծ

⁴⁴ «Кавказ» քերթի խմբագիր, հայտնի մոլեզին հայտնաց Վ. Վելիկովն, 1904 թ. անդրադառնալով այս երևույթին, շեշտում էր, թե «грузинское землевание идет с невероятной быстротой... Нужно заметить, что громадная часть этого процесса совершается тайно: время еще не смеет открыто предать огласку всех своих документов... Они боятся вызвать отчаяния в грузинском обществе и подозревают, что русское правительство, вследствие резкого кризиса, станет поближе присматриваться к кавказским делам». Տե՛ս Величко В., Кавказ: Русское дело и международные вопросы, Москва, 2003, с. 40.

⁴⁵ Տե՛ս «Գիտոճ», 31 օգոստոսի 1917.

⁴⁶ Տե՛ս Эрцков-Шаревский Н., Памятные записки о нуждах грузинского народа, Москва, 1906, с. 62.

⁴⁷ Տե՛ս «Գիտոճ», 14 երջմեջին 1917. «Նվիրատվության» հարցում քայլականաչափ մաշված տիրույթներ ունեցող վրաց «ընտրախալի» կեցվածքը սկզբից ի վեր եղել է կեղծ և խուսաճալոր: Նրա «խորամանկությունն» իսկույն քայքայությունից և ի որս ցնդեց կազերական գործերի Թիֆլիս ժամանակից անմիջապես հետո, երբ 200 վրաց ազնվական դիմել էին գերմանական դեսպանորդ և զտարդուն մեծատոհմիկ Ֆ. Վ. Շույներդինին՝ հայցելով օտարների օժանդակություն իրենց ժառանգական հողային տիրույթների վերադարձման գործում: Տե՛ս «Էրաբեր» (Թիֆլիս), 17 հունիսի 1918:

⁴⁸ Տե՛ս «Նախաճեղջջուր», 31 օգոստոս 1919. Բեկումաճին դարձաշրջանի վրաց մտավորականությունը, որը առաջացել էր մեծապես ազնվական խալից, մասնավոր կալվածքների վաճառքը հալաաարեցնում էր հայրենիքի զիջման և կործանաբար էր

վրացական հանրապետության կառավարությունը դրա համար էլ առաջին հերթին անցկացրեց հողային ռեֆորմ և փորձեց կարգի գցել տնտեսության այդ անչափ կարևոր բնագավառը:

Հողային բարեփոխումը Վրաստանում գլխավորապես իրականացվեց Սեյմի 1918 թ. մարտի 7-ի օրենքի դրույթների հիման վրա⁴⁹: Խոշոր հողատերերի, առաջին հերթին ռուսական քաղաքական քննադատական գնտանիքին պատկանող հողային սեփականությունը՝ Օինանդայի, Մուկուզանի, Նախարեուլի, Մուխրանի, Չակվի, Սինոպ, Դիոսկուրիա, Իզումնուլո, ինչպես նաև Փրիդոնյանի, Մանթաշյանի, Արամյանցի, Անանյանի, Սմեցկոյի առաջադեմ ու շահութաբեր հսկա տնտեսությունները պետականացվեցին և ստացան «ազգային կալվածքների» կարգավիճակ: Հողային բարեփոխումը հիմնականում ավարտվեց 1919 թ. գարնանը, և, ըստ հունիսի 1-ի վիճակագրության,

հայտարարում այդ ոլորտում սեփականության վերաբաշխման գործընթացը ամբողջ վրաց մոլոդոլոյի հետագա շահերի համար: Ուստի նորածին վրաց ազգային գաղափարախոսության ճակատագրական գործընթացը հայտնվել էր սնանկացող ազնվականների մեջքերում: Երանց կողմից տարածվող իսկախախտական հաջացքները պարարտ հող էին գտել վրաց քաղքենիության շրջանակներում, քանի որ հայկական կապիտալի հետ մրցակցության մեջ նրա զիջումն ունենում էր դրապես հետևանք ոչ միայն վրացական միջին և խոշոր բուրժուազիայի ճակատագրական գործընթացի կասեցում, այլ նաև վրաց մանր գյուղատերերի սնանկացում: Հակասությունները հալ և վրաց բուրժուազիայի միջև տնտեսական ոլորտում նպաստել էին նաև վրաց ազնվականության և քաղքենիության միավորմանն ընդհանուր քաղաքական ճանաչողի շրջանակներում: Ազնվական վերնախավի փոշիացումը և նրա փոխարեն նոր, սեփական մեծաթիվ և հզոր բուրժուական դասի ի հայտ լցալը վրաց մտավորականությանը հայտարարում էր հանազգային ողբերգություն և աղետաբեր հետևանքներ էր գուշակում ողջ վրաց ժողովրդի համար: Հայ բուրժուազիայի հանդեպ ունեցած սինդրոմը նրանք, կամա թե ակամա, վերածում էին թշնամության ամբողջ հայ ազգի նկատմամբ, ինչով էլ սխտեմ էր տառապել նորածին վրաց ազգային գաղափարախոսությունը: Այդ տեսակի գաղափարներ կենտոդների կարծիքով հայ կապիտալի հզորությունը կարելի էր կործանել միայն վարչարարական մեթոդներով՝ մինչև անգամ սեփականության բռնազրկում: Դա իրականություն դարձավ ԿԴԿ-ի գործչան տարիներին, երբ կյանքի կոչվեց վրաց ազգային գաղափարախոսության գլխավոր պահանջներից մեկը, թեև սոցիալական «բարեփոխումները» քրոյի տակ, քանի որ այդ առաջնությունը ստանձնեց սոցիալիստական կառավարությունը: Կյալիսով, տնտեսական ոլորտում հայատյաց քաղաքականության իրականացման հիմնական գործիքը եղավ 1919 թ. հուլիսի 11-ին ստեղծված հանձն՝ անչարժ ֆուլդի հարկադիր օտարման մասին օրենքը: Տես

⁴⁹ Տես: Сборник законов, инструкций и правил введены по министерству земледелия, Тифлис, 1918, с. 45.

ասօցրակվել էր 447816 դեպատին ընդհանուր մակերես ունեցող 2940 կալվածք⁵⁰։ Այդ տվյալները վերաբերում են Թիֆլիսի և Քութայսի նահանգներին։ Բաթումի մարզում այն չէր իրականացվել, իսկ Արխազիայի տարածքում կառավարությունը հողային բարեփոխմանը ձեռնամուխ եղավ միայն 1920 թվականին⁵¹։

Իշխանությունները սակավահող երկրագործներին անհատույց հատկացրեցին 340 հազ. դեպատին⁵²։ Ազրարային ոլորտի բարեփոխման շրջանակներում վրաց կառավարությունը նաև վաճառքի հանեց հողերի մի մասը, քանզի ջանում էր այդ եղանակով իրո մարել նախկին կալվածատերերի բանկային պարտքերը, շուրջ 15-18 մլն. ռուբլի⁵³։ Վրաստանի սոցիալիստական կառավարության ջանքերով իրականացված այս բարեփոխումը եղավ նրա ամենամխտրը և նշանավոր քաղաքական ձեռնարկումներից մեկը, որը սակայն ունեցավ հակասական հետևանքներ⁵⁴։

⁵⁰ Տե՛ս Хол аграрной реформы, «Кавказское слово», 8 июля 1919.

⁵¹ Проект культурно-земельных изменений в Абхазии, «Борьба», 12 февраля 1920.

⁵² Տե՛ս Առօրյակը ընդ մեծի մասով, XX հարյուրակ, 2003, թ. 74.

⁵³ Տե՛ս Мухоманов И., Аграрно-крестьянский вопрос в Грузии в 1900-1921 гг., Тбилиси, 1978, с. 306. Ըստ պաշտոնական տեսակետի, որը հնչել էր վրաց խորհրդարանի բարձր անդինից, «քանազակված կալվածքները պարտք են բանկերին և, քանզի ձեռք ընց որոշել էր պարտաբացիայի ենթարկել կապիտալը, պետությունը պարտավոր է վերցնել իր վրա բանկային պարտքերը»։ Տե՛ս Առօրյակը, 21 օգոստոս 1919.

⁵⁴ 1919 թ. հունվարի 28-ին Վրաստանի Պառլամենտը թույլատրեց անկալիստիկ պագեզործների կողմից նախկին կալվածատիրական հողերի մասնավորեցումը։ Այդ քայլը հետագայում էր խոչոր գյուղացիական տնտեսությունների ստեղծման նպատակով «Սոցիալիստական» փորձերին վերջ դրեց Ամ-ի որոշումը (1920 թ., փետրվար), որը դարձավ արտոնեց հողերի ասոմալաց։ Հողային բարեփոխման հարցում իրականացվում էր ՎՄԴԿ-ի ծրագիրը, որի դեմ հանդես եկան մի շարք ընդդիմադիր հոսանքներ։ ԱՅ և ԱԿ կուսակցությունները մերժում էին հողի վաճառքը և պահանջում էին իրականացնել էրա «սոցիալիզացիա» (իսմայնացում), այսինքն անհատույց հանձնել մշակողների օգտագործմանը՝ արևադարձային և սպառողական նորմավորումներով։ Տե՛ս Парламент Грузии, «Кавказское слово», 21 января 1919. Այս առթիվ վրաց քաղաքական գործիչ Ֆ. Ավիաթանն գրում էր, թե «нам кажется, что эти изменения в этом смысле интересуют не столько улучшение положения крестьянской бедноты, сколько конфискация или отобрание земли у не-грузинских землевладельцев»։ Տե՛ս Махарадзе Ф., Диктатура меньшевистской партии в Грузии, Москва, 1921, с. 110. Ըստ ՎՄԴԿ-ի, լուծման պղ տարրերակց (իմա՝ «սոցիալիզացիա») չէր զոհացնի երկրում շուկայի լայնածավալ պահանջները, քանզի տանում էր հողաբաժնեների պարբերական վերաբաշխման և, հետևապես, խոչընդոտ կհանդիսանար սպառչում շահավետ գյուղատնտեսության ստեղծման համար։ Իր հերթին, ԱԴ-ի «այդ» թե՛լ հողային

Այսպիսով, վրաց կապվածատեր ազնվականությունը «նվիրեց» իր ժողովրդին այն ունեցվածքը, որի նշանավոր մասը փաստացի իրեն արդեն չէր էլ պատկանում: Սակայն այդ մտածված քայլի դիմաց նա ետ ստացավ իր նախնին հողային սեփականության զգալի մասը⁵⁶, որն այժմ ազատ էր բանկային պարտքերից, քանզի նշված գումարների վճարման հոգսը ներդրվել էր գլխավորապես պետությունից վրա⁵⁶: Կառավարության «գրասրտության» այս դրսևորումը թխում էր, ինչպես վկայում են շարադրած փաստերը, զուտ քաղաքական հաշվարկներից և ակներևաբար, հետապնդում էր «ազգային խաղաղության» պահպանման հեռանկարը⁵⁷:

Կարճատև կառավարման ընթացքում վրաց սոցիալ-դեմոկրատները ձգտում էին ամրապնդել տնտեսական ոլորտում վրաց գործարարների դերը՝ օգտագործելով պետական մենաշնորհների լծակը և քաղաքացիության մասին օրենքը, որոնք պարզ կերպով ուղղված էին հայկական բուրժուազիայի թուլացման և այնուհետև վերացման նպատակին⁵⁸: Վրաց բուրժուազիան, որը հիմնականում

բարեփոխման ընդհանրապես դեմ էր արտահայտվում և պնդում, թե այն արձատյապես քայքայում է արդյունավետ և շահութաբեր տնտեսությունները: Տե՛ս Парламент Грузии, «Земельное дело», 22 января 1919. Կրասնատնում հողային բարեփոխման անդամաշնորհության հարցին և նրա իրականացման ընթացքում ստալազած խնդիրներին են անդրադարձել նաև մի շարք հեղինակներ: Տե՛ս Lang D.M., A modern history of Georgia, London, 1962, pp. 212-213. Suny R.G., The making of the Georgian nation, California, 1988, pp. 195-200. Kazemzadeh F., The struggle for Transcaucasia (1917-1921), New York, Oxford, 1951, pp. 188-189.

⁵⁶ 1920 թ. դրությամբ 274720 գոլդացիական տնտեսությանը պատկանում էր 1018767 դեքատին վարելահող (կամ՝ մեկ ծուխ – 3.7 դեքատին): Այնինչ 27871 ազնվական ընտանիք պզգեղորձական գույքում ուներ շուրջ 204785 դեքատին, այսինքն յուրաքանչյուր ազնվին կապվածատեր շարունակում էր տնօրինել միջին չափով 7.3 դեքատին մշակելի հող: Տե՛ս Жвания Г., Великий Октябрь и победа советского владыка в Грузии, Тбилиси, 1987, с. 178.

⁵⁷ Այս առիթվ, ուշադրություն է գրավում ՀԱՍ-ի անդամների պնդումը, ըստ որի «без преувеличения, хотя и гипотетически, можно утверждать, что около бюджета грузинского государства в своей значительной части держится именно на гражданах армянской национальности». Տե՛ս «MEMORANDUM», с. 79.

⁵⁸ Այս սկզբունքն ամալելիաֆն կարևորում են արդի վրաց պատմաբանները, գրելով՝ «Аграрная реформа, проведенная в Грузии не оставила без земли ни богатых землевладельцев (дворян, помещиков), ни крестьян. Такая политика помогла избежать столкновений между классами на социальной почве...». Տե՛ս Вачагаше М., Грузия В., История Грузии (XIX-XX века), учебник, Тбилиси, 2004, с. 82.

⁵⁹ Տնտեսական «ճնշումները հանդես էին գալիս ապագապես դիմադրվ, իրեն

ներկայացված էր ծանր արևոտականների դասով և ունևոր գյուղացիությամբ, պետական հովանավորության սուր կարիք ուներ, իսկ նրա արագ զարգացման համար «գերմոնցային», կամ մեռաշնորհային պայմաններ էին անհրաժեշտ, որոնց կիրառման պարագայում պետք է քացացված լիներ թե՛ ներքին և թե՛ արտաքին տնտեսական մրցակցությունը: Հայ գործարար խավը վրաց կառավարության «տոցիալիստական» քաղաքականության շնորհիվ սնանկացավ ավելի արագ, քան վրաց բուրժուազիայի կայացման գործընթացը կանգնեց իր լիարժեք և հուսալի ուղու վրա: Այսպիսով, վրաց քաղաքական վերնախավի անհետատես «բարեկեղծումները», որոնք ավելի շատ բխում էին քաղաքական նախասիրություններից, քան հենվում կյանքի իրական պահանջների վրա, անտարակույս մեծապես նպաստեցին այն լայնածավալ ճգնաժամի խորացմանը, որը արդեն խեղդում էր Կրաստանի տնտեսությունը⁵⁰:

հանրապետադիր օրէնքներ կամ կանոններ անետրա-արդիւնաբերական գործերով պարապող քոյրո քաղաքացիների համար: Բայց ոչ ոցի համար գայունից չէր, որ նրանց գլխատը զոնեք հայեք պետք է լինեն, որովհետեւ այդ գործերը գլխատրապէս նրանց ձեռքէն էին գտնուում: ...Այի կողմից՝ ծանր տուրքերի էին ենթարկում հայերի անետրա-արդիւնաբերական ձեռնարկները, նոր ձեռնարկների արտոնութիւնը դժուարացնում, նրանց համար չարաշահույթեան մշտադրանքով մեծամեծ տուգանքներ դնում նրանց վրայ, իսկ նրա կողմից՝ ամեն դիւրութիւն ու ազակցութիւն տալիս էին տնտես-գործական հակումներ ունեցող վրացիներին, որպէսզի նրանց մրցունակ դառնան հայերի դէմ: Տե՛ս Տամալեան Ա., Հայ-վրացական կնճիղը, «Հայրենիք» (Քրտան), 1929, մարտ, էջ 119: «Վրաց մենչեխէան կառավարութիւնը...լէ կուէր բուրժուազիայի դէմ ուժեղացած տուրքերու, կայրածներու պետականացման, աշխարհական փոխառութիւնների միջոցով...եւ եթէ նկատի առնենք, որ բուրժուազեան թիֆլիսի մէջ քաղկացած էր Հայերը...քոյրութիւն պարզ կ'ըլլայ, որ վերոյիշեալ քաղաքականութեան...գիծերն ալ ամբէն շատ լէց հարուածէին Հայերու անմիջական շահերը, եւ Հայերն էին, որ գլխատրապար, լէ տուժին թէ՛ նիւթապէս եւ թէ՛ քարոյապէս, լէ տրոսցնէին իրենց տուները եւ դրամագոյնները, ազնեցութիւնն ու դիպքը, եւ կ'ընդհարուէին Կրացիներու հետապիտան պրիեստական ազգայնացման հետ: Թիֆլիսի ամենայալ քատրոնը, «Նրոխատական Ընկերութիւն» անունով, լքնի գումարով անցաւ Իւզրաշեաններու ձեռքէն պետութեան: Քաղաքի ամենայալ տունը Մ. Արամեանցինը, Կրացիք գրանցին՝ վերածելով «քանոտրական տան»: Փրիտոնեաններու տունը դարձաւ նախարարի բնակարան, Սամբաշեանի տունը՝ դրամագիտական ներկայացուցչութիւն, եւ այլն»: Տե՛ս Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Գլխուք, 1968, էջ 225-226:

⁵⁰ Գնատուսաստանյան շրկայի վերացման հետևանքով վրաստանն ապրեց տնտեսական փլուզում: Կրճատվեց արդյունաբերության ու գյուղատնտեսության արտադրանքը: Տնտեսական կյանքի խլումն առաջացրեց նաև գեների հակապական տեղաշարժ: Դրա հետևանքով, առանց այն էլ հետամնաց տնտեսությունը՝ քայքայվեց:

Վրացական ազգային պետության ստեղծման նպատակին զոհաբերվում էին Վրաստանում ապրող ազգային փոքրամասնությունների շահերը, որի հետևանքով նրանց և վրաց իշխանությունների միջև փոխհարաբերությունները կամա թե ակամա լարվում էին: Ազգային փոքրամասնությունների պահանջները վրաց քաղաքական շրջանակների կողմից երբեմն մեկնաբանվում էին որպես «հակավրացական»: Առանցքային խնդիրների շուրջը վրաց ժողովրդի համախմբման նպատակով քաղաքական գործիչների մի մասը (խորհրդարանի պատգամավորներ՝ Վեշապելի, Գվազալա, Գուտուա, Մաչաբելի, Գոմարթելի և այլք) օգտագործում էր ներքին թշնամու գաղափարը՝ հանձնին ազգային փոքրամասնությունների: Նրանք խնամքով և գիտակցաբար հանրության մեջ սերմանում ու փայփայում էին ազգայնական հոգեբանությունը, որի տարածման զխավոր նպատակն էր նաև աշխատավոր զանգվածին սոցիալական պահանջներից հեռու պահելը: Վրաց բանվորին փորձում էին համոզել, թե սոցիալական ասպարեզում օրեցօր խտացող նրա բազմակուտակ

Կրճատվեցին ցանքատարածություններն ու ընտանի կենդանիների գլխաբանակը: Ապրանքների բանկազույմները աշխատավոր ժողովրդին հասցրին ծայրահեղ աղքատության: Գառկապես աղետաբեր էր պարենային ճգնաժամը: Քաղաքաբնակների հիմնական մասը գրեթե մատնվել էր սովի: Տե՛ս Գոառ և Օու, «Борьба», 5 февраля 1920. Անասելի զարգացում ստացավ պելուլյացիան: Աբուսիին անտրում առաջացած դեֆիցիտը զնահաստվում էր 219 մլն. օուլի (1919 թ.), որի հետևանքով գնաճի շահը մեծ ցուցանիշների էր հասել: Տե՛ս Կրճատման օգրեուս, «Слово», 4 января 1920. Դրան նպաստում էր նաև պետական բյուջեի հսկայական ճեղքվածքը, որը կառավարությունը բռնում էր՝ նոր «1000 օուլի» նոթինալ ունեցող սեփական րոնեղի թողարկմամբ (1919 թ., հուլիս) և նրանց լրացուցիչ էմիսիայով: Տե՛ս Կրճատման խառնակ, «Слово», 1 января 1920. Տնտեսական ճգնաժամի ցայտուն դրսևորումներից մեկը եղավ 1920 թ. օգոստոսյան խունաղը տաբաղրամի սովերային շուկայում, երբ վրացական րոնի կուրսը, մեկ անգլիական ֆունտի դիմաց, կարճ ժամանակամիջոցում արժեզրկվեց 3000-ից մինչև չոր հազարի: Տե՛ս «Աշխարհը շուրջ», II հոլցմեջի 1920. ԿԴԴ-ի Պետական Բանկը, որը ստեղծվել էր 1920 թ. հունիսին, ունենալով դատարկ գանձարան, որևէ կերպ չէր էլ կարող ներազդել խելագարված շուկայի վրա, այս տխուր իրադրությանը փոքրիշատե կարգավորելու նպատակով: Չորև լինելով հարկային եկամուտների իուսալի աղյուրներից, վրաց կառավարությունը փորձեց մեծ քանակ վարկային միջոցներ արտաքին շուկայում, քայքայ անգլիայի և Ֆրանսիայի պետական ու մասնավոր ֆինանսական կառույցները մեծապահ մնացին և լշտապեզին հատկացնել Վրաստանին որևէ դրամական օժանդակություն: Վարչապետ և ժողդանիան ստիպված էր խուսել լուրջ ճգնաժամային երևույթների մասին: Տե՛ս «Борьба», 16 октября 1920. Մամուլը իսկույն արձագանքեց դրան, սակայն ստեղծակցեցիվում նաև, որ «ճգնաժամը ոչ միայն տնտեսական է, այլ նաև քաղաքական և քաղաքական: Սա ամբողջական սնանկացում է»: Տե՛ս «Աշխարհը շուրջ», III հոլցմեջի 1920.

խնդիրները իբր կարելի է, և նույնիսկ անհրաժեշտ է լուծել, նրա օտարազգի գործընկերների հեռացման միջոցով: Դրա հետևանքով ևս պակաս չէին դեպքեր, երբ վրաց ազգայնական մամուլում ոչ վրացի ազգաբնակչության, հատկապես հայերի, վտարման կոչեր էին հնչում⁸⁰: Այդ տեսակի քարոզչությունը զուգանցվում էր վրաց հասարակության ներսում ազգայնական տրամադրությունների աննախադեպ աճով, որը տեղերում երբեմն վերածվում էր հայահալած միջոցառումների, քանզի վրաց հանրության մի մասն արդեն ստագրված էր հայաստյաց տրամադրություններով:

Վրաց ազգայնականները համատրոնն պահանջում էին «նոսրացնել» Վրաստանի հայ ազգաբնակչությունը: Հազարավոր հայ մարդիկ Վրաստանի շատ ու շատ վայրերից ոչ միայն հարկադրված էին ծախտող քաղաքական պայմանների շնորհիվ ինքնուրույն հեռանալ «դեմոկրատական հանրապետությունից», այլ նաև վրաց իշխանությունների կարգադրանքով նրանցից շատերը բռնի արտաքսվում էին երկրից: Ծայրահեղ ծանր կացություն էր ստեղծվել Թիֆլիսի հայության համար վրաց-հայկական պատերազմի հետևանքով: Այսօրինի ծերբակալությունները, խուզարկություններն ու բռնազրավումները դարձել էին սովորական երևույթ: Չինապարտ հասակի հայ տղամարդկանց կալանավորում էին, Քուքայիսի մոտ ստեղծված հատուկ նշանակության ճամբարներում նրանց սովատանջ էին անում և օգտագործում ծանր աշխատանքների համար⁸¹: Բուն Վրաստանի քաղաքներում և գյուղերում, ինչպես Գորի, Սղնախ, Թելավ, Գուրջաանի և այլն, տեղի ունեցան հայերի տների և խանութների թալան ու ավեր⁸²: 1919 թ. հունվարի 5-ին Թիֆլիսում

⁸⁰ Տե՛ս «Նանազե-եռ Նաջիթ», 20 օգոստոսի 1918 Նան' «Նախոտոջջելո», 22 օգոստոսի 1918 Նան' «Երեռոճո», 28 մարտի 1919:

⁸¹ Ծամբարներ արտոճված հայերի թվաքանակը 1919 թ. հունվարի 3-ի դրությամբ կազմեց 1600 մարդ: Տե՛ս Չերբակալված հայերի մասին, «Յասաթ» (Թիֆլիս), 12 հունվարի 1919:

⁸² Անդրապատկալով այս դեպքերին, քաղաքական գրողիչ Յ. Սախաբաճեն գրում է՝ «В самом Грузии во время этой войны все армянское население было взято под подозрение и обвинялось в измене отечеству. По всей Грузии гвардейцами, милиционерами и чинами особого отряда армяне подвергались насильственным оскорблениям, арестам, высылке и т. д. без всякого повода с их стороны. С армянами всякому мог сделать то, что хотел». Տե՛ս Махарадзе Ф., Диктатура..., с. 74. Այս անիրապարտ և անորակի երևույթների մասին քաղցրցս իշխատակում է ժամանակի մամուլը: Տե՛ս Դիժուժ Վրաց դեմոկրատական հանրապետության կառավարության

դարձյալ տեղի էին ունեցել հայերի զանգվածային ձերբակալություններ⁶³: Հայածանքների էին ենթարկվել հայ հայտնի հասարակական գործիչները⁶⁴: «Հատուկ ջոկատ»-ի գործակալների «եռանդագին» աշխատանքի շնորհիվ բերման էր ենթարկվել, ի թիվս շատերի, նաև Հովհաննես Թումանյանը⁶⁵: Այս ամենի պատճառը արդեն Հայաստանի հետ պատերազմը չէր: Պարզապես այդ միջոցով վրաց իշխանությունները փորձում էին Թիֆլիսի քաղաքային դումայի առաջիկա ընտրությունների նախօրյակին ահաբեկել և չեզոքացնել հայ ընտրազանգվածը: Մայրաքաղաքի 346 հազ. ազգաբնակչությունից 149 հազարը հայեր էին⁶⁶: 1918 թ. հուլիսի 16-ի չարաբաստիկ «կանոնադրության» համաձայն թիֆլիսաբնակ 110000 ընտրողներից իշխանությունները ծայր տալու իրավունքից զրկեցին 60000-ը⁶⁷: Այդ

նախազգեսին, «Մշակ», 12 հունվարի 1919: Նաև՝ Октябрьное восстание в Армении, «Социал-Демократ» (Тифлис), 13 января 1919. «Վրաստանի բնակչության կրած վնասների մասին ճանաչման տե՛ս՝ ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 238, ք. 1-55: «Հայ-վրացական պատերազմի կապակցությամբ կատարուած հայախաղվական հայածանքների... քացատրուքից պիտը է որոնել Վրաստանի հայութիւնը նստացնելու եւ տնտեսապէս թուլացնելու պն քաղաքականութեան մը... որին, հետեւում էր ժողովանիա-Դամիշվիլի կառավարութիւնը իր գոյութեան պահից սկսած՝ վրաց շուկինիստներին քաղաքացութիւն տալու համար: Պատերազմը հարթել էր այս քաղաքականութեան ճանապարհը: Նրա իրականացման համար այժմս կարից չկար օրինական ծեակերութիւնների խտնից ընկնել...»: Տե՛ս Տամայեան Ա., Հայ-վրացական կնճիղ, «Հարե՛նից» (Քաստն), 1929, ապրիլ, էջ 145: Ինչպես տեսնում ենք, ժամանակի նշանակիչ և իրազեկ գրքի այս պատիչ խոսքերը հավելյալ մեկնաբանության անհրաժեշտություն չունեն:

⁶³ Տե՛ս Массовые аресты, «Грузия», 7 января 1919.

⁶⁴ Խախտելով պատգամավորական անձեռնմխելիությունն այդ օրերին իշխանությունները կայացի տակ վերցրեցին խղիղաբարանի անդամ Չ. Տոլյանին, ինչպես նաև Թիֆլիսի քաղաքային դումայի իրավասուներ Ա. Արեղյանին, Ա. Թևոնյանին, Ա. Ամիրխանյանին, Գ. Ճոնյանին, Ե. Պապյանին: Տե՛ս Կաստու, «Յառաջ» (Թիֆլիս), 23 հունվարի 1919:

⁶⁵ Մայրաքաղաք Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Երևան, 2002, էջ 91:

⁶⁶ Տե՛ս Кавказскому Календарю на 1917г., Тифлис, 1916, с. 206-207.

⁶⁷ Ментешаевская А., Октябрьская революция..., с. 111. Թիֆլիսի 1917 թ. քաղաքային ընտրություններին այդպիսի խտրականության մասին խոսք չէր և կարող լինել: Այդ հիրավի ժողովրդական քվեարկության արտքին անզամ մասնակից եղան ոչ միայն քաղաքի բոլոր չափահաս բնակիչները, այն կապազորի զինվորականությունը: Վերջին հանգամանքից վարպետորեն օգտվեցին վրաց սոցիալ-դեմոկրատները, որոնք չափազեղելով հեղափոխական կարգախոսները շահեցին նաև օսու զինվորական ընտրազանգվածի մայերի նշանակելի մասը: Ուստի քաղաքային դումայում հայազգի քեկնածուներին բաժնի հասակ այրուների 40 տոկոսը, վրացիներին՝ 32.5%-ը, իսկ օսու իրավասուներին 27.5%-ը: Տե՛ս Karapetian C., Моря Тифлиса, Ереван, 2003, с. 22.

խտրականությունը դժգոհության ալիք առաջացրեց Թիֆլիսի բազմազգ բնակչության շրջանակներում: Էսեները, ՀՅԴ-ն ու ՀԺԿ-ն ի նշան իրենց բողոքի, բոլկոտեցին քաղաքային ընտրությունները⁶⁵: Այս վայրիվերումների արդյունքում Թիֆլիսի դումայում վրացազգի իրավասուներին բաժին ընկած աթոսների թիվը կազմեց 87 տոկոս⁶⁶:

Վրաստանի կառավարության ներքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից էր նաև իր իշխանության տարածումը և ամրապնդումը ոչ վրացաբնակ գավառներում: Վրաց իշխանությունները օգտվելով գանազան միջոցներից, չխորշելով նաև ուժային լծակներ գործադրելուց, տևական պայքարից հետո կարողացան հաստատել ՎԴՀ-ի գերակայությունը մի շարք վիճելի, ըմբոստ և հանդուգն շրջաններում⁶⁷: ՎԴՀ-ի բնակչության մոտ երրորդ մասը կազմում էին ոչ վրաց ազգությունները: Հետևապես վրաց մեծամասնության թվային գերակշռությունն այնքան վճռորոշ չէր, որպեսզի նրան թույլ տար ամբողջովին և մշտապես անտեսել ազգային և կրոնական փոքրամասնությունների ձգտումները: Ըստ վրաց ղեկավարների, քաղաքացիների ազգային կարիքները պիտի յուրացվեին տեղական ինքնակառավարման մակարդակով, քանի որ Վրաստանում հռչակված «դեմոկրատական» կարգերը երաշխիք են ստեղծում որևէ հալածանքի դեմ: Ինքնավարության սկզբունքի փոխարեն, այդ թվում նաև մշակութային, ազգային փոքրամասնություններին առաջարկվեց բավարարվել միայն լայն ժողովրդավարացման մասին կարգախոսով⁶⁸: Այնուամենայնիվ,

⁶⁵ Տե՛ս Тифлисские зымы в 1919 году, «Слов», 1 января 1920.

⁶⁶ Տե՛ս Բաղաքային ընտրությունները, «Ցասաթ» (Թիֆլիս), 7 փետրվարի 1919:

⁶⁷ Վրաց-հայկական հարաբերություններում տարածաշրջանի առարկա դարձած Ջավախքի հիմնահարցը ուսումնասիրել է և աչառիկ մեկնաբանություններ տվել ՀՀ ԱԼԼԻ թղթակից անդամ Լ.Լ. Մելչոկյանը: Տե՛ս Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003: Վրաց-աբխազական փոխհարաբերություններում առաջացած խնդիրները, ինչպես նաև Աբխազիայում գանազան իրադարձությունների չուրջ ծավալված քաղաքական զարգացումների վերաբերյալ կարևոր փաստերը և տեղեկությունները անխոփված են տպի հոդվածի հեղինակի հատուկ մենագրության մեջ: Տե՛ս Աբխազիայի կարգավիճակի հիմնահարցը 1917-1921 թթ., Երևան, 2008: Հետազոտվող ժամանակաշրջանում առաջացած նաև Հարավային Օսիայի, Ասոցիետի, Աբախիայի և Եսվյեթի կնճուր և խճճված հարցերը առաջին լին արժանացել պատշաճ ուշադրության հարցնեի պատմագիտության մեջ:

⁶⁸ Մանրամասն տե՛ս Մախլյան Բ., Զայոց մշակութային ինքնավարության ծրագիրը Վրաստանի Զանրապետությունում 1920 թ., Մեծնավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXVI, Երևան, 2007, էջ 173-179:

քաղաքակիրթ աշխարհի աչքերին բոզ փչելով, ժամանակի վրաց առաջնորդները մշտապես ընդգծում էին հայրենի պետությունում բնակվող այլ ազգությունների իրավունքները հարգելու իրենց «ջերմ» պատրաստականությունը:

Այսպիսով, հանրազուժարի բերելով վերը շարադրած նյութը, կարելի է հանգել եզրակացության, որ.

- Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունը կապացավ որպես անկախ պետականություն, իրեն բնորոշ թուր հատկանիշներով;

- վրացական վերածնված պետականության առաջնորդները իրականում նպատակ ունեին ստեղծել ունիտար և միատարր երկիր, սակայն փորձում էին քողարկել այդ ծգտումը դեմոկրատական կարգախոսներով;

- առօրյա քաղաքականության մեջ գերխնդիր էր համարվում Վրաստանի ներսում քաղաքացիական պատերազմի տարածման վտանգի չեզոքացումը և սոցիալական խաղաղության պահպանումը վրաց ժողովրդի տարբեր խավերի միջև;

- փոքրամասնությունների վերաբերյալ իրականացվող քաղաքականության պարագայում կայուն ծգտում էր նկատվում ստեղծելու գոյատևման այնպիսի պայմաններ, որոնք ուղղված կլինեն, եթե ոչ ամբողջական վտարման, ապա հեռանկարում նրանց ազգածուլման համար;

- ազգային փոքրամասնությունների կացության ջլուծված խնդիրները հրաշալի ափս՞ էին ստեղծել թե՛ «սպիտակ» մեծապետականների և թե՛ Ռուսաստանի կոմունիստական կառավարության համար միջամտելու Վրաստանի ներքին գործերին;

- ՎԴՀ-ի կառավարության սոցիալ-տնտեսական գործունեությունը, որը զուգակցվում էր շալլարար տարածվող սոցիալական բարեփոխումների մասին խոստումներով, հիմնականում ուղղված էր ոչ վրաց, գերազանցապես հայ գործարար տարրի ոչնչացման նպատակին և ի վերջո ճգնաժամային երևույթները երկրում վերածեց համընդհանուր տնտեսական աղետի:

Այսպիսով՝ 1918 թ. վերածնված վրացական անկախ պետականությունը, երեք փոթորկոտ տարիների ընթացքում անցնելով քազում փորձությունների միջով և քախվելով շատ ու շատ վտանգավոր և կնճոտ խնդիրների հետ, ի վերջո, անկարող եղավ, հայտնի պատճառներով, դիմագրավել Խորհրդային Ռուսաստանի գինված հարձակմանը: Սակայն պետք է փաստել, որ ներքին քաղաքականության քազմազան խնդիրներ, առաջին հերթին

ազգամիջյան փոխհարաբերությունների կարգավորման ոլորտում, իրենց լուծումը չգտնելով՝ վրաստանի Դեմոկրատական Հանրապետության գոյության շրջանում, օրակարգի մեջ էին մնում նաև խորհրդային վարչակարգի հաստատումից հետո:

BENJAMIN MALYAN

THE MAIN PRINCIPLES OF THE FORMING AND THE INTERNAL POLITICS OF THE REPUBLIC OF GEORGIA (1918-1921)

The Georgian leaders responded to offers of German aid and on May 26, 1918, declared Georgia an independent state. All national power was delegated to a «united democratic government» to be headed by Noi Zhordania. The Georgian socialist leaders intended to introduce into Georgia certain features of the Swiss political system, such as cantonal self-rule. But, simultaneously, they supported the main idea that Georgia is a unitary country. For local authoritative bodies, the government intended to establish the institute of «erobas» (self-government offices). In the second half of 1918, elections to Erobas were held. Despite the fact that almost all the seats in self-governing bodies were by the Social Democrat Labor Party of Georgia (SDLPG) members, other Georgian parties – Social Federalists (SF), National Democrats (ND) and Social Revolutionaries (SR) – had representatives in executive bodies.

The tenor of Georgian policy was conditioned by the determination of Zhordania's government to restore Georgian predominance in the East Georgia, especially in the city of Tiflis (the capital of Georgia), where the Georgians had become a minority. By the beginning of 1919 most Armenian officials, militiamen, and municipal employees in Tiflis had been erased from the payrolls, and the Georgians gained control of the local administration by monopolizing an election held in January. The sizable Non-Georgian elements were disqualified by intimidation or revised franchise requirements.

The National Council of Georgia, later known as Parliament, had not been regularly elected. Its powers being dubious, it was now decided to elect a Constituent Assembly (CA) which would write a constitution for Georgia and at the same time serve as a legislative organ. In February, 1919, elections were conducted on the basis of «universal, equal, and secret suffrage». Representation was proportionate. The population of the Batumi province, Borzhalo, Akhaltsikhe, Akhalkalaki regions, Khevsureti, Svaneti and Abkhazia were unable to vote. The SDLPG came to power with an overwhelming majority. The other parties to return delegates to the CA were the ND, the SF and the SR. Whereas in 1918 ARF «Dashnaktsutjun» had been represented in the Parliament by a small faction, not a single member of the foremost Armenian political party was to be seated in the CA when it convened on March 12, 1919. The only Armenian who entered the new legislature did so as deputy of the SDLPG. After

supplementary elections, held some months later in August 1919, «Dashnaksutiun» got three seats to the CA.

All the Georgian party supported the main idea that Georgia is a unitary country. Once the SDUPG had assumed the leadership of a national state they could not bow to the resurgent nationalism of the Georgian people. The nationalist virus spread with unexpected speed, affecting all organs of the state. The Non-Georgian residents of Georgia suffered great hardships owing to this resurgent Georgian nationalism. Various legal restrictions prevented them as foreigners from entering the civil service, while the artificially raised language barriers forced them out of the legal profession. The thousands of Non-Georgian officials, telegraph and postal employees, and even railway workers, lost their jobs. From the halls of the Georgian government nationalism spread into the courts, which were ordered to conduct all their business in the state language. The only language which was common to all residents of Georgia, Russian, was outlawed. The beautiful phrases of socialist solidarity of nations, self-determination, etc., were forgotten and buried. During the first year of Georgian independence the collective power of tens of thousands of Non-Georgians was sharply diminished. Moreover, the complicated question of citizenship threatened to relegate many Non-Georgians to the status of second-class subjects. The most pointed blow fell upon the Armenians bourgeoisie, which were the real masters of Tiflis. One after another their buildings were expropriated, assertedly to house government agencies, embassies and consulates, military and economic missions.

In March, 1918, the Transcaucasian Seim published a decree that stated that in order to promote the welfare of the landless peasants all lands belonging to the Crown, the Church, and private individuals, above a certain norm to be established, would be nationalized. Georgia was the only one of the three Transcaucasian republics where this reform was out. All surplus lands went into a state land fund. But the Georgian government did not take all the land away from the nobility. The peasants whose holdings were smaller than the norms established by law could lease additional land from the State. In Georgia under popular pressure this was soon changed, the peasants being allowed to buy rather than rent additional land. The Government expected to receive two hundred million roubles from the peasants who bought lands from the State. This money, however, had not yet been collected. Meanwhile the budget was unbalanced. The Government «balanced» the budget by printing more money, thus creating an inflation which further weakened the already shaky economy.

ԱՆՈՒԷ ՀՈՎԱՆՆԻԱՅԱՆ

ԱՐԵՎԵՅԱՆ ԼԵՂԵՆՈՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԶԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՂ

Անտանտի տերությունների և Թուրքիայի փոխհարաբերություններում առանձնակի տեղ են գրավում թուրք-ֆրանսիական հարաբերությունները: Հայտնի է, որ 1914-1918 թթ. Թուրքիայի դեմ պատերազմած արևմտյան տերություններից Ֆրանսիան առաջինն էր, որ հարաբերությունների մեջ մտավ քեմալականների հետ, դիվանագիտական կապեր հաստատեց և իր դաշնակիցներից անջատ, քաղաքական պայմանագիր կնքեց նրանց հետ: Առաջին Աշխարհամարտի և անմիջապես նրան հաջորդող տարիներին Ֆրանսիայի վարած այդ ելևէջներով լի, «սեքսեթող» քաղաքականությունը իր ողոշակի քաջատրությունը ունի, որը կներկայացվի հողվածի ամփոփիչ մատում:

Թուրք-ֆրանսիական հարաբերությունները, մասնավորապես Կիլիկիայում, եղել են հայ ականավոր թուրքագետ Ռ. Սահակյանի մշտական գիտական հետաքրքրության շրջանակում և տեղ գտել նրա արժեքավոր հետազոտություններում¹: Ֆրանսիայի մեծաձկորարևելյան քաղաքականության երկիմաստությունն իր արտացոլումը գտավ նաև Արևելյան (Հայկական) լեգեոնի հետ կապված գործընթացներում: Այդ թեմային վերաբերող սակավ գրականություն կա, մինչդեռ հրապարակված փաստաթղթեր զոռքե չկան²:

Ուստի, ուշագրավ են վերջերս Թուրքիայում լույս տեսնող «Review of Armenian Studies» պարբերականում հրապարակված Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության արխիվից Արևելյան լեգեոնին

¹ Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, 1970:

² Պոլաթյան Տ., Հայկական լեգեոնը, Ուրդաթաուն, 1965; d'Ary Benoit, L'Origine de la Légion d'Orient, Extrait de la Revue Diplomatique, Janvier-mars, 1939; Թիւրապեան Ալան, Հայ ժողովրդի դառառատանին առջև, Մարտի, 1925:

վերաբերող գիտական շրջանառության մեջ դրված որոշ փաստաթղթերը³:

Արևելյան լեզեոնը, որը 1918 թ. դեկտեմբերին վերանվանվեց Հայկական լեզեոն, կազմավորվել էր 1916 թ. նոյեմբերի 26-ին որպես օսմանյան հպատակներից կամավոր սկզբունքներով հավաքագրված օժանդակ զորք՝ Մարկ Սայքսի (Անգլիա), ժողովիկոյի (Ֆրանսիա) և Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի միջև Լոնդոնում կնքված (27 հոկտ.) համաձայնագրի հիման վրա:

Այդ համաձայնագրի համաձայն.

1. Կամավորները կօգտագործվեն բացառապես ափական (սիրիա-պաղեստինյան) ճակատում: Նրանք (հայերը և արաբները) կկռվեն իրենց դարավոր թշնամու դեմ՝ հայրենի հողերը ազատագրելու համար.

2. Ֆրանսիան պարտավորվում է, ինքնավարություն տալ Կիլիկիային, որը կդրվի նրա հովանավորության տակ:

3. Հրամանատարները լինելու են Ֆրանսիացիներ, լեզեոնի ծախսերը հոգալու էր Ֆրանսիայի կառավարությունը⁴:

Լեզեոն ստեղծելու նպատակով հայ կամավորների հավաքագրումը մեծ խանդավառություն առաջ բերեց Եգիպտոսում, Եվրոպայի ու Ամերիկայի հայաշատ գաղութներում: Մեծ եղեռնից մազապուրծ հայ գաղթականները հայրենի հողը օսմանյան դարավոր լծից ազատագրելու քուտն ծգտումով տարված եկան լրացնելու լեզեոնական շարքերը: Հատկանշական է, որ Արևելյան լեզեոնի կորիզը կազմեցին Պորտ-Սաիդում ժամանակավոր ապաստան գտած քաջարի մուսալեացիները (Եսայի Ցաղուբյան), որոնցից մոտ 600 հոգի շտապեցին զինվորագրվելու լեզեոնին, ստեղծելով առանձին վաշտ: 6-7 ամիս հետո հայ լեզեոնականների թիվը հասավ արդեն հազարի, իսկ 1918 թ. կեսերին Արևելյան լեզեոնը իր շարքերում ուներ 5500 հոգի, որից միայն 400-ն էին սիրիացի: Կազմավորման օրից մինչև 1918 թ. լեզեոնը տեղակայված էր Կիպրոս կղզում, որտեղ գտնվում էր նրա զինվորական մարզահրամարակը:

Համաշխարհային պատերազմը մոտենում էր իր վախճանին, երբ լեզեոնականները, երկար սպասումից հետո, Պաղեստինում կռվի մեջ

³ Turque: Legion d'Orient III, The French Foreign Ministry Archive, File № 893, Palabryk Mustafa, Establishment and activities of the French Eastern Legion in the light of French Archives (November 1917- April 1918), "Armenian studies", № 17, 2008.

⁴ Սահանջան Ռ., Թուրք-Ֆրանսիական հարաբերությունները... էջ 113-115:

մտան թուրքական բանակի դեմ, 1918 թ. սեպտեմբերի 19-ին տեղի ունեցած Արարայի ճակատամարտում:

Հայ լեզեռնականների դերը այդ ճակատամարտում ձեռք բերած հաղթանակի զործում ըստ արժանավույն գնահատեց մարշալ Ալենքիս, նշելով. «Հաբարտ եմ հրամանատարության տակ հայկական զորամաս ունենալու համար: Նրանք կոպեցին փայլուն կերպով և մեծ բաժին ունեցան հաղթանակում»²:

Արարայի ճակատամարտից հետո լեզեռնը Ալենքիսի բանակի կազմում առաջանալով դեպի հյուսիս, մտնում է Բեյրութ: Այստեղ նրան են զինվորագրվում Սիրիա տարագրված հայերը, կազմելով մի առանձին վաշտ: Նոր կամավորների հոսքը ընդհատվեց 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուղղոսի զինադադարով: Լեզեռնի մի մասը ֆրանսիական նավերով փոխադրվում է Ալեքսանդրետ, մյուս մասը՝ Մերսին: 1918 թ. դեկտեմբերի 17-19-ին Հայկական լեզեռնի զինվորները ոտք դրեցին իրենց բաղձալի Կիլիկիա:

Ուսումնասիրման նյութ հանդիսացող փաստաթղթերը գաղտնի նամակագրություններ են Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության, Ռազմական նախարարության և լեզեռնի հրամանատարության միջև և կերպերում են որոշ նշանավոր հայ հոգևորականների ցանկությանը՝ հավաքագրվելու լեզեռնի շարքերը և հոգևոր ծառայություններ մատուցելու հայ զինվորներին:

Հեռագրերից առաջինը (29.12.1917) Կահիրեի ԱԳՆ ներկայացուցչինն է, որը տեղեկացնում է, որ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի պատվիրակ Դանիել Ազապյանը, որը տարագրվել էր Երուսաղեմ, դիմել է հավաքագրվելու ցանկությամբ: Պատասխան հեռագրով (19.01.1918) ԱԳՆ առաջարկում է այս հարցում խորհրդակցել լեզեռնի հրամանատար Ռոմյոյի հետ:

Ռոմյոն պատասխանում է, որ թեև լեզեռնը արդեն ունի հայ քահանա (վարդապետ Բեքարյան), բայց Ազապյանի թեկնածությունը ընդունելի է, որպես օժանդակ (auxiliaire) սատարող: Ուշագրավ է, որ հեռագրի հետզրույթյան մեջ նշվում է, որ Ազապյանը 60-ից անց մարդ է, և ոչ «ակտիվ» հոգևորական³:

Այս հետզրույթյան իմաստը ավելի հասկանալի է դառնում, երբ դիտարկում ենք հետագա թղթակցությունը:

² The Lausanne Treaty, Turkey and Armenia, New York, 1926, pp. 141-142.

³ Palabryk Mustafa, Establishment..., p. 56.

Ազախյանի նշանակումը սկիզբ հանդիսացավ նոր դիմումների: Այսպես, 31.01.1918 թ. Վարչապետ և Ռազմական նախարար Կլեմանտյի նամակում ԱԳՆ Պիկոյին, որը նշանագրված էր «կոնֆիդենցիալ» և «հույժ շտապ», հաղորդվում է, որ Ամերիկայից լեզեռնում հավաքագրվելու նպատակով ժամանել են երեք «կարևոր» հայեր: Դրանցից առաջինի անունը հստակ չէ, քայք նշվում է, որ նա Ջեյթունի եպիսկոպոսն է (Սիսի արքեպիսկոպոս Սահակ ?? Ջեյթունի վարդապետ Վաղարշակ Արշակունի ?? - Ա.Կ.): Ասվում է, որ եպիսկոպոսը քաջ հայտնի է հայերի շրջանում, որովհետև ակտիվ դերակատարում է ունեցել Ջեյթունի ապստամբություններում, նա հերոսացվել է հայերի կողմից այն ժամանակ, երբ թուրքերը բազմաթիվ զրոհումներով փորձել են ճնշել «խռովարարներին»: Իհարկե, ասվում է նամակում, նման մարդու ներկայությունը լեզեռնում հայերի համար բարոյական մեծ ոգեշնչման աղբյուր կհանդիսանա: Սակայն նրա ազդեցությունը կարող է բերել ֆրանսիական սպայակազմի հեղինակազրկմանը: Այդ հանգամանքը առավել մտահոգիչ կարող է դառնալ ԱԳՆ համար, իրենց ծրագրերն իրականացնելու հնարավոր պահին:

Մեկ այլ անձնավորություն, որը հիշատակվում է, Ադանայի հոգևոր առաջնորդ Մուշեղ Սերոբյանն էր: Նրա անձը նույնպես, որպես հեղինակավոր և ազդեցություն ունեցող, անհամաձայնում էր ֆրանսիական իշխանություններին⁷:

Ինչ վերաբերում է Ջեյթունի եպիսկոպոսին, ապա հայտնվում է, որ նա ոչ միայն ապստամբել էր Օսմանյան պետության դեմ, այլ նաև ժամանակին հանդես էր եկել ֆրանսիական ազդեցության դեմ Կիլիկիայում, կոչ անելով հայ ժողովուրդին իրենց զավակներին ուղարկել ոչ թե ֆրանսիական, այլ հայկական դպրոցներ:

ԱԳՆ պատասխանը գալիս է փետրվարի 6-ին: ԱԳՆ նույնպես կիսում է Կլեմանտյի մտահոգությունն այս հարցում և հորդորում է հետազայում նույնպես նման հարցերը համաձայնեցնել նախարարության հետ, չվտանգելու համար «երկրի քաղաքականությունը»⁸:

Չնայած Պողոս Նուբար փառայի հորդորներին, Ֆրանսիայի ԱԳՆ շրջաբերական նամակ է ուղղում իր ներկայացուցչություններին

⁷ Նույն տեղում, էջ 57:

⁸ Նույն տեղում, էջ 58:

Ամերիկայում, որ խոչնդոտեն այն անձանց հավաքագրումը, որոնք կխաթարեն ռազմական կարգապահությունը և կնվազեցնեն ֆրանսիական սպայակազմի հեղինակությունը:

Երբ փորձում ենք վերծանել դիվանագիտական այս նամակագրության իմաստը, գալիս ենք հետևյալ եզրահանգմանը.

1. Սայքս-Պիկոյի պայմանագրով Կիլիկիան մտնում էր Ֆրանսիայի ազդեցության գոտու մեջ, սակայն վերջինս Մերձավոր Արևելքում բավարար չափով զորքեր չունեի Կիլիկիայի ռազմական գրավումն իրականացնելու համար: Հետևաբար, նա կարիք ուներ լեզբոնականների՝ «ուրիշի ձեռքով կրակից շագանակ փայսնելու» համար:

2. Ֆրանսիան չէր ցանկանում լեզբոնի շարքերում տեսնել հեղինակավոր, ազդեցիկ, հայրենասեր, ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակ հայ զործիչների, որոնք կարող էին չենթարկվել Ֆրանսիայի հնարավոր, իրենց ոչ ցանկալի հրամաններին:

Հետագա իրադարձությունները Կիլիկիայում, որոնք բերեցին կիլիկիահայության նոր ողբերգության, հաստատում են այս եզրահանգումը:

Ֆրանսիայի արևելյան քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունը, նրա մերձեցումը քեմալականների հետ հանգեցրին նրան, որ Ֆրանսիայի իշխանությունները, դրժելով իրենց խոստումը, ոչ միայն ինքնավարություն չտվեցին Կիլիկիային, այլև 1920-ի օգոստոսին լուծարեցին Հայկական լեզբոնը՝ Կիլիկիայի հայերին զրկելով թուրքական ուժերից պաշտպանվելու հնարավորությունից: (1920 թ. մայիսի 30-ին քեմալականների հետ կնքված գինադադարը, որով ֆրանսիական զորքերը դուրս էին քեղվում Կիլիկիայից):

Ֆրանսիան եվրոպական առաջին տերությունն էր, որը տակավին 1535 թ. Բ. Ղոսան հետ կնքեց այն պայմանագրերը, որոնք հիմք դրեցին կապիտուլյացիաների սեփմին: Ֆրանսիացի հայտնի լրագրող ժեդար Տոնգայի խոսքերով, չպետք է մոռանալ, որ Թուրքիայի միջոցով էր Ֆրանսիան մի քանի դարերի ընթացքում գերիշխող դեր խաղում և նանտում: Իսկ Ֆրանսիայի դիվանագետ Ժակ Բարդուն իր հուշերում խոստովանում էր, որ Ֆրանսիայի առաջնակարգ խնդիրը դա Արևելյան Միջերկրականի շրջանում տեղաբաշխված ֆրանսիական կապիտալների ետ ստանալն էր⁹: Ֆրանսիական կառավարության

⁹ Ստեփան Ո., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները..., էջ 20:

քաղաքականությունը, Անկարայի ղեկավար շրջանների հետ «լեզու գտնելու» նրա բազմաթիվ փորձերը վկայում էին հենց այն մասին, որ Ֆրանսիայի նպատակն էր պահպանել ֆրանսիական խոշոր դրամատերերի նախապատերազմական դիրքերը թուրքիայում և ձեռք բերել շահագործման ու հարստացման նոր աղբյուրներ:

Ձուր չէր, որ Աևրի պայմանագրի ստորագրումը ֆրանս-քեմալական «սեթևեթանքներից» հետո, լուրջ դիմադրության արժանացավ Ֆրանսիայում:

Արտաքին գործերի նախարարության լսափողը հանդիսացող «Տան» թերթը չէր դադարում հիշեցնել, որ Ֆրանսիան «մահմեդական երկիր է», որ չի կարելի վտանգել «ավանդական թուրք-ֆրանսիական բարեկանությունը»: Պայմանագրի տակ ֆրանսիական ներկայացուցիչների ստորագրության թանաքը դեռ չյորացած, այդ նույն մարդիկ սկսեցին հանդես գալ Աևրից հրաժարվելու այլազան առաջարկներով:

«Թուրքական պայմանագիրը, - գրել է Պուանկարեն, - ստորագրվեց Աևրում՝ ձեռնապակու գործարանի գտնվելու վայրում: Եվ նա ինքը փխրուն է, գուցե և ջարդված սափոր»¹⁰:

Փխրուն էր նաև հերոսական Հայկական լեգեոնի մասնակիցների երազանքը՝ ազատագրված տեսնել «ըզմեդու Կիլիկիան», երկիր, որ մեզ «խուր արև»:

Այսպիսով, Ֆրանսիայի տիրապետող շրջանների թուրքասիրությունը, որը խարսխվում էր նրանց աներկբա տնտեսական և դրամական շահերի վրա թուրքիայում, կարևոր գործոն հանդիսացավ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո սկիզբ առած ֆրանսիական թուրքանպաստ անջատ քաղաքականության գործում: Այդ քաղաքականությունը կործանիչ ազդեցություն ունեցավ կիլիկիահայության հետագա ճակատագրի համար:

¹⁰ Северный мирный договор и акты, подписанные в Лозанне, полный перевод с французского текста под ред. проф. Ю. Ключникова и проф. А. Сабанина, Москва, 1927, с. XVIII.

**EASTERN LEGION AND POLICY OF FRANCE IN THE LIGHT OF NEW
TURKISH PUBLICATIONS**

The article is analyzing developments regarding the Eastern (Armenian) Legion in the period between 1917 and April 1918, based on the documents provided from the French State Archives and recently published in Turkey. The documents show that some tensions arose from the requests of some leading prominent Armenians wanting to join the Legion. The correspondence demonstrates double-faced policy of French administration, wanting to have an offensive force ready for attack with the plans of France on the one hand, from the other hand concerning about the influence of those Armenians over soldiers and trying to prevent possible actions of Legion to the own interest of Armenians.

ԿԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵԿՍԱՆԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՄՆՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 1960-2000-ԱՎԱՆ թթ.

Ալեկների պատմությունը և խնդիրները շարունակում են մնալ ժամանակակից գիտնականների և հետազոտողների ուշադրության կենտրոնում: 20-րդ դարի վերջին տասնամյակներում և 21-րդ դարի սկզբին Եվրոպայի մի շարք երկրներում ձևավորված ալեխական համայնքներն ուսումնասիրված չեն հայ հետազոտողների կողմից, և սույն հոդվածում առաջին անգամ ներկայացվում է եվրոպական երկրներում ալեխական քնակչության հաստատման և կազմակերպությունների ստեղծման ու դրանց գործունեության պատմությունը:

Թուրքիայի Հանրապետության գոյության առաջին տարիներին ալեխները գլխավորապես կազմում էին գյուղական համայնքի մի մասը՝ քնակվելով առավելապես երկրի հարավ-արևելյան շրջաններում: Հիմնականում ազգությամբ թուրք ալեխներով քնակեցված էին Կայսերի, Սվազ, Դիվրիզ նահանգները, իսկ քուրդ ալեխներով՝ Թունջելի, էլազիզ և Մուշ շրջանները¹: Փոքր թվով ալեխներ քնակվում էին նաև Միջերկրական ծովի ափամերձ շրջաններում²: Սակայն տասնամյակների ընթացքում նրանց մեծ մասը գյուղից տեղափոխվում է քաղաք՝ քնակություն հաստատելով հատկապես Ստամբուլում, Անկարայում, Իզմիրում և այլն: Այս քաղաքներում քնակվող ալեխների վերաբերյալ, սակայն, տեղեկությունները շատ սուղ են և հստակ չեն:

Ալեխական համայնքը ժայրաստիճան փակ էր, և անժանոթներին դժվար էր թափանցել նրանց ներհամայնքային կյանքի մեջ: Սակայն հանրապետության հռչակումից հետո ալեխների նկատմամբ սկսված ճնշումները, հատկապես քրդական ապստամբությունների ժամանակ քրդերով ու նաև ալեխներով քնակեցված բազմաթիվ քնակավայրերի

¹ Zeidan D., The Alevi of Anatolia, Middle East Review of International Affairs, Volume 3, No. 4, December, 1999, <http://meria.idc.ac.il/journal/1999/issue4/lev3n4a5.html>

² 1919 թ. օգոստոսի տվյալներով՝ քզլաշների թիվը Կիլիկիայում հասնում էր 50 հազարի: Sbiru Tachjian V., La France en Cilicie et en Haute-Mésopotamie (Aux confins de la Turquie, de la Syrie et de l'Irak (1919-1933)), Paris, 2004, p. 82.

ոչնչացումը և դրանց բնակչության տեղահանումը, ինչպես նաև սոցիալական խնդիրները, որոնք այդ շրջանների տնտեսապես փակ կինեյուարությունը էին, մեծ հոսք առաջացրեցին դեպի երկրի արևմտյան շրջանները և հատկապես մեծ քաղաքներ, ինչի հետևանքով խախտվեց այլևիության գաղտնիության սկզբունքը, և համայնքը դարձավ ավելի թափանցելի³:

Ամեն դեպքում, մինչև 1950-60-ական թվականները այլևիների հոսքը գյուղից քաղաք նշանակալի չէր, եթե իհարկե չհաշվենք սեզոնային աշխատողներին, ովքեր գնում էին, օրինակ, Սև ծովի ափամերձ շրջաններում միրգ հավաքելու կամ շրջանային կենտրոններում ժամանակավոր աշխատանք կատարելու:

Այլևիները մեծ թվով սկսեցին ոչ միայն գյուղից, այլ ընդհանրապես երկրից արտագաղթել 1960-ական թվականներից սկսած, որը մեծ չափերի հասավ հատկապես 1970-ական թվականներին, երբ Թուրքիայի բազմաթիվ քաղաքացիների շարքում, նրանք գաղթեցին եվրոպական մի շարք երկրներ՝ Գերմանիա, Ավստրիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Անգլիա, Բելգիա և այլն: Ընդհանուր առմամբ գաղթականների հոսքն ուղղված էր հատկապես դեպի Արևմտյան Գերմանիա: Այս գործընթացը սկիզբ առավ այն քանից հետո, երբ 1961 թ. Թուրքիայի Հանրապետության և Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության միջև ստորագրվեց փոխշահավետ մի համաձայնագիր, որով Թուրքիայի քաղաքացիներին թույլատրվեց աշխատանքի մեկնել դեպի Գերմանիա՝ դրանով Թուրքիային հնարավորություն տալով նվազեցնելու երկրում գործազրկության թվաքանակը և ապահովելու դրամի հոսք դեպի երկիր, իսկ Գերմանիային՝ ունենալ էժան աշխատուժ⁴:

Ժամանակավոր աշխատելու մեկնած թուրք քաղաքացիներից շատերը, սակայն, պայմանները նպաստավոր համարելով՝ մնացին և մշտական բնակություն հաստատեցին՝ այնտեղ կազմելով ընտանիքներ կամ որոշ ժամանակ անց իրենց ճուտ տեղափոխելով նաև Թուրքիայում բնակվող իրենց ընտանիքներին⁵:

³ Shenklend D., *The Alevi in Turkey*, New York, 2003, p. 14.

⁴ Умургаєву С., Турецкая Диаспора в Германии. Социально-культурная Эволюция, Восточный Восток и современность, вып. 21, Москва, 2004, с. 457.

⁵ Kirisci K., *Turkey: A transformation from Emigration to Immigration*, <http://www.migrationinformation.org/Feature/display.cfm?id=178>

Այսօր արդեն թուրքիայից դեպի Չեռնոսիա մեկնած էմիգրանտների թիվը հասնում է 3 միլիոնի⁸, որոնց մեջ մեծ թիվ են կազմում ալեկները, ովքեր այստեղ են եկել ոչ միայն աշխատանք գտնելու, այլև մոլեռանդ տունիներից պաշտպանվելու նպատակով:

Եվրոպայում բնակվող ալեկների վերաբերյալ տարբեր տվյալներ կան, ըստ որոնց՝ նրանց թիվը 500 հազարից՝ հասնում է 1 միլիոնի⁹, որից միայն 600 հազարը բնակվում է Չեռնոսիայում⁹, 150 հազարը՝ Ֆրանսիայում¹⁰ և այլն: Որոշ աղբյուրներ թուրքիայից դուրս բնակվող ալեկների թիվն են ընդհանուր առմամբ գնահատում 1 միլիոն՝ ներառելով նաև Եվրոպայում, Ավստրալիայում և Միացյալ Նահանգներում բնակվող ալեկներին¹¹, քանզի ալեկական արտագաղթն ուղղված չէր միայն դեպի եվրոպական երկրներ: Դեռևս 19-րդ դարում արդեն սկսել էին ալեկական խմբեր տեղափոխվել ամերիկյան մայրցամաք, ժամանալորապես՝ Միացյալ Նահանգներ: Այս հոսքը սկզբում տեղի էր ունենում փոքր թվաքանակով, որին մեծապես նպաստում էին քրիստոնեական միսիոներական կազմակերպությունները: Այն համեմատաբար մեծացավ 20-րդ դարի երկրորդ կեսին՝ դեպի Եվրոպա շարժվող հոսքի հետ միասին, և հատկապես վերջին տարիներին, երբ ԱՄՆ-ն սկսեց խաղարկել «զրին քարտ»¹²:

Պետք է նշել, որ ի տարբերություն աշխարհի որևէ այլ վայրում բնակվող ալեկական համայնքի, Եվրոպայի ալեկական միություններն ամենակազմակերպվածն են և ակտիվորեն մասնակցում են ալեկական շարժման հետ կապված թուրքիայում տեղի ունեցող բոլոր գործընթացներին: Քանզի նրանք, ժամանելով Եվրոպա, չդադարեցին պայքարն իրենց իրավունքների, ինչպես նաև թուրքական պետության կողմից ալեկներին որպես կրոնական համայնք ճանաչելու համար:

⁸ BBC News, 23 December 2006, <http://news.bbc.co.uk/2/hi/europe/4385768.stm>

⁹ Kurees H., *Турецкая диаспора на западе, Мусульмане на западе, Москва, 2002, с. 72.*

¹⁰ *Türkiyedeki Kürtlerin sayısı*, *Milliyet*, 6 Haziran 2008.

¹¹ Gorzewski A., *Alevis in France, Striking a Balance between Old and New*, http://www.gantera.de/webcom/show_article.php?c=478/ nr-7864.htm

¹² Այն տեղում:

¹³ Erdemir A., *Death of a Community: Kızıbaş-Alevi Predicament in 1990s Istanbul*, www.alevibeitfasi.org/nykan_sempoiz.htm

¹⁴ Kaya A., *Migration, Migrant Policies and Changing Cultures of Belongings: Alevis from Turkey in Germany and the United States*, http://www.alevis.org/documents/advisorkaya_cleed0606.pdf

Միևնույն ժամանակ հարկ է շեշտել, որ Եվրոպայում բնակչություն հաստատելուց հետո դեռ երկար ժամանակ այնքան չէին ստեղծում առանձին պահպանման միություններ: Այս երևույթը պայմանավորված էր այդ ժամանակահատվածում Թուրքիայում բնակվող այնպիսի ունեցած պատիվ կարգավիճակով, քանի որ եվրոպարենակ այնպիսի շրջանում քիչ էր գործընթացները տեղի էին ունենում հայրենիքում կատարվող գործընթացներին զուգահեռ:

Թուրքիայից արտագաղթողների երկրորդ ալիքը բարձրացավ 1980 թ. Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո, երբ մեծ թվով քուրդ երիտասարդներ գաղթեցին երկրից և որպես փախստականներ՝ ապաստան գտան հիմնականում Շվեդիայում, Չեռմանիայում և այլ երկրներում: Դեռևս Թուրքիայում եղած ժամանակ՝ նրանք գրում, խոսում, անգամ մտածում էին թուրքերեն, սակայն, վերաբնակվելով Եվրոպայում և ծերրագատվելով թուրքերենի ազդեցությունից, սկսեցին խոսել տեղական լեզուներով և քրդերենով, ինչպես նաև հրատարակել ամսագրեր և գրքեր՝ ֆինանսավորվելով եվրոպական տարբեր ինստիտուտների կողմից: Այս գաղթականների մեջ այնպիսի սկսեցին ավելի ակտիվ կերպով միավորվել՝ ի հակադրություն Թուրքիայից գաղթած սուննիների, քանզի իրենք իրենց այնտեղ ավելի ազատ էին զգում, քան Թուրքիայում: 1980-ական թվականներին Թուրքիայից գաղթածների շրջանում հզորացան մուսուլման արձատականները: Այնպիսիք, որոնց մեծ մասը երկար ժամանակ գաղտնի էր պահել իր ինքնությունը, նույնպես սկսեցին ակտիվ գործունեություն ծավալել, հիմնադրեցին իրենց կազմակերպությունները և միությունները՝ շեշտելով իրենց և սուննի մուսուլմանների տարբերությունը և իրենց առջև նպատակ դնելով հստակ քայլերի միջոցով Թուրքիայում և եվրոպական երկրներում հասնել այնպիսի իրավունքների ճանաչմանը՝ որպես առանձին կրոնա-մշակութային խումբ: Նույնանման գործընթաց տեղի էր ունենում նաև Թուրքիայում, սակայն իր մասշտաբներով ավելի փոքր, քանի որ ինչպես նշվեց վերևում, կար ազատ գործելու խնդիր¹³:

Մինչև 1980-ականների կեսերը, Եվրոպայում բնակվող այնպիսի Թուրքիայում բնակվող իրենց հավատակիցների նման, պահպան

¹³ Bruinessen M., Clashes between or within civilisations?

http://www.let.uu.nl/~Martin.vanBruinessen/personal/publications/clashes_between_or_within.htm

կազմակերպություններն անվանում էին ալևի մեծերի անուններով՝ Հաջի Բեքթաշ, Փիր Սուլթան Արդալ, Արդալ Սուսա կամ ուղղակի բանվորական, հայրենասիրական միություններ և այլն՝ խուսափելով անվանման մեջ «ալևի» բառն օգտագործելուց: Տպագրվող ամսագրերում ևս հաճախ չէր հանդիպում «ալևի» բառը¹⁴: Թերևս այս երևույթը պայմանավորված էր ալևիների շրջանում դեռևս թուրքիայում բնակվելու ժամանակներից պահպանված վախի զգացումով, որն աստիճանաբար էր անցնում գաղթականների շրջանում:

Եվրոպայում առաջին ալևիական կազմակերպությունը, որն իր անվան մեջ պարունակեց «ալևի» անվանումը, ստեղծվեց 1988 թ.՝ կոչվելով «Համբուրգի ալևի-բեքթաշիների մշակութային միություն»: Աստիճանաբար, նման միությունների և կազմակերպությունների թիվն ավելացավ՝ 1996 թ. անցնելով 130-ը¹⁵: Դրանց թվաքանակի զգալի աճին նպաստեցին 1993 թ. Սվազում և 1995 թ. Ստամբուլում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները, որոնցից հետո թուրքիայում ավելի ակտիվ կերպով շարունակվող ալևիական պայքարը Գերմանիայում և եվրոպական այլ երկրներում ծնված ու բնակվող բազմաթիվ ալևիների ստիպեց մտածել իրենց կրոնական ինքնության մասին՝ մեծապես նպաստելով այդ երկրներում ալևիականության զարթոնքին¹⁶:

Ստեղծված ալևիական միությունների ղեկավարներն սկսեցին ակտիվորեն գործել՝ բազմաթիվ այցեր կատարելով Թուրքիա, որոնց նպատակն էր՝ քաջալերել Թուրքիայում բնակվող ալևիներին ծավալելու քաղաքական գործունեություն, մասնակցել քաղաքական քննարկումներին, ինչպես նաև սերտացնել համագործակցությունը գերմանական, ապա նաև եվրոպական բոլոր երկրներում գործող կազմակերպությունների և թուրք-ալևիական միությունների միջև:

Գերմանիայի ալևիական մի շարք միություններ թուրքաբնակ իրենց հավատակիցներին ցուցաբերում էին նաև դրամական աջակցություն, որի շնորհիվ 1990-ական թվականներին թուրք-ալևիական կազմակերպությունների ղեկավարները կարողացան պարբերաբար

¹⁴ Kaplan İ., Avrupa'da Alevîlik, http://www.levcakim.com/avrupada_alevlik.htm

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Zwick S., Carrying the flame, Times, 06 October 2002.

այցեր կատարել դեպի Պերմանիա, մասնակցել կազմակերպված միջոցառումներին¹⁷:

Ավստրիայի և Պերմանիայի ալեիական կազմակերպությունների ներկայացուցիչները, նպատակ ունենալով հետազայում ստեղծել համաեվրոպական ալեիական կազմակերպություն, 1990 թ. ձեռնարկեցին երկու երկրների ալեիական միության ստեղծման գործը՝ կազմելով Ալեիական Շնեյերացիությունների Ֆեդերացիա (ԱՇՖ), որի կենտրոնը սկզբում հաստատվեց Պերմանական Մայնց քաղաքում, իսկ 1993 թ. տեղափոխվեց Քյոլն: Այն բանից հետո, երբ Եվրոպայի մի շարք այլ երկրներում ստեղծված նմանատիպ կազմակերպություններ նույնպես ցանկացան միանալ ԱՇՖ-ին, այն վերանվանվեց Եվրոպայի Ալեիների Միությունների Ֆեդերացիա (ԵԱՄՖ)¹⁸՝ միավորելով Պերմանիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Եվեյցարիայում, Անգլիայում, Բելգիայում ստեղծված մոտ 140 ընկերություններ, որոնց անդամների թիվն անցնում էր 100 հազարը: ԵԱՄՖ ղեկավար օղակը կազմված էր մի շարք մարմիններից, որոնք էին՝ Դեղեների խորհուրդը, Մշակույթի և արվեստի խորհուրդը, Գիտության և հետազոտությունների խորհուրդը, Պերմանիայի ալեիների երիտասարդների խորհուրդը և Պերմանիայի ալեի կանանց խորհուրդը: 1990-ական թվականների վերջին Ֆեդերացիայի կազմում ավելացավ նաև Հոլանդիայի Ալեիների Միությունների Ֆեդերացիան (ՀԱՄՖ), որի անդամների ցանցերի շնորհիվ 1997 թ. ստեղծվեց Եվրոպայի Ալեիների Ակադեմիան և Եվրոպայի Ալեիների Ֆորդը¹⁹: Ավելի ուշ, ԵԱՄՖ-ն սերտ հարաբերությունների մեջ մտավ նաև Ավստրալիայի, ԱՄՆ-ի, Կանադայի, Իտալիայի, Կիպրոսի և Ռումինիայի ալեիական կազմակերպությունների հետ²⁰:

ԵԱՄՖ-ն չափազանց կարևոր համակարգող կառույց էր հանդիսանում ալեիական պայքարի համար, քանի որ այս կազմակերպության ծավալած ակտիվ գործունեությունը չէր սահմանափակվում միայն ալեիների համար օգտակար գրականություն հրատարակելով և ալեիական խնդիրներին

¹⁷ Demiray M., Wrestling for Self-Definition in Transnational Space: A Case Study of the Identity Construction of Alevi in Turkey and Germany, <http://interdisciplinary.net/au/diversity/diasporas/11/Aurice%20paper.pdf>

¹⁸ Kupees H., *Typeuxax aueonopa...*, c. 72.

¹⁹ Melikoff I., Hasluck's study of the Bektashis and its contemporary significance, *Turica et Ottomanica, Mosca*, 2006, c. 278-279.

վերաբերող կոնֆերանսներ կազմակերպելով: Իր ենթակայության տակ եղած ֆունդերի միջոցներով կազմակերպությունն օգնություն էր ցուցաբերում Թուրքիայի եղբայրական միություններին, ինչպիսիք են, օրինակ, «Հաջի Բեքթաշ», «Փիր Սուլթան Աբդալ» և այլն, օգնում էր նաև սոցիալապես անապահով մի շարք ալկիական գյուղերի և մեծ քաղաքներում ծնավորված ալկիական թաղամասերի բնակչությանը²⁰: Այժմ էլ այն ֆինանսավորում է մի շարք ծրագրեր, կազմակերպում միջոցառումներ: Օրինակ՝ 1995 թվականից ի վեր ԵԱՄՖ-ն, իր հեղինակությունն ու կարևորությունը ալկիների շրջանում մեծացնելու նպատակով, երկու տարին մեկ անգամ մեծ փառատոններ է կազմակերպում, որոնց մասնակցում են բազմաթիվ ալկիներ, ինչպես նաև ֆինանսավորում է Ավազում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների կապակցությամբ ամեն տարի հուլիսին կազմակերպվող տարբեր տեսակի միջոցառումներ²¹:

Հատկանշական է, որ ստեղծված ֆեդերացիայի կազմում ընդգրկված կազմակերպությունների մեջ ամենաակտիվ գործունեությունը գրեթե միշտ ծավալել են գերմանական միությունները: Հատկապես մեծ էր նրանց դերակատարությունը 1990-ական թվականներին տեղի ունեցած նշանակալի մի քանի իրադարձությունների կազմակերպման գործում, որոնց հարկ ենք համարում մանրամասնորեն անդրադառնալ, քանի որ կազմակերպված այդ միջոցառումները թեև Թուրքիայի քաղաքական դաշտում որևէ լուրջ ազդեցություն չունեցան, այնուամենայնիվ կարևոր նշանակություն ունեցան ալկիական շարժման համար և խթան հանդիսացան ալկիական կազմակերպությունների հետագա գործունեության համար:

Այդ իրադարձություններից առաջինը «Ալկիության հռչակագրի» հրապարակումն էր, որին հետևեցին ալկի-բեքթաշիների ներկայացուցիչների խորհրդի կազմավորումը և «Նսադադություն» կուսակցության հիմնումը:

1990 թ. մայիսի 6-ին «Զումհուրիեթ» օրաթերթում տպագրվեց «Ալկիության հռչակագիրը», որը նկարագրում էր ժամանակակից Թուրքիայում ալկիների իրավազուրկ կարգավիճակը և ալկի բնակչության անունից ներկայացնում պահանջներ: Հռչակագրում

²⁰ Kuşees H., *Typeusas* suçnopa..., c. 72-73.

²¹ Kaplan İ., *Avrupada Alevilik*, http://www.levetizm.com/avrupada_alevilk.htm

ներկայացվող առաջնային պահանջը պետությունից մյուս կրոններից, մասնավորապես իսլամից, ալեիության տարբերությունն ընդունելն էր: Այն, փաստորեն, Գերմանիայի ալեիների որոնքրած «տարբերություն», «ինքնության քաղաքականություն» և «թուրքական պետության կողմից ճանաչման պահանջ» ձևակերպումներն առաջին անգամ բարձրացրեց թուրքական հասարակական բեմահարթակ²²: Հռչակագրում ներկայացվող պահանջների շարքում էին, մասնավորապես՝ իրավահավասար քաղաքացիության, դադարեցրում կրոնի պարտադիր դասընթացների դադարեցման, կրոնի հարցերով զբաղվող տնօրինության գործունեության դադարեցման, ջեմկիները՝ որպես ալեիական պաշտամունքի վայրեր ճանաչելու, ալեիական բնակավայրերում մզկիթների կառուցման քաղաքականությունից հրաժարվելու վերաբերյալ պահանջները: Ալեիական շարժման որոշ ղեկավարներ պնդում էին, թե հռչակագիրն ամբողջությամբ շարադրվել է Գերմանիայում՝ 1988 թ. «Համբուրգի ալեիների հռչակագիր» անվամբ²³:

Հաջորդ նշանակալի իրադարձությունը 1994 թ. նոյեմբերի 18-ին Ստամբուլում Թուրքիայի և եվրոպական ալեիական միությունների ղեկավարների կազմակերպած ժողովն էր, որի ընթացքում ընդունվեցին մի շարք որոշումներ: Վերահաստատվեցին «Ալեիականության հռչակագրով» սահմանված պահանջները, որոնցից ամենակարևորը, թերևս, ալեիական շարժման նոր ուղվածության սահմանումն էր, այն է՝ ալեիական ինքնության ճանաչումը: Որոշում կայացվեց նաև հիմնել Ալեի-բեքթաշիների ներկայացուցիչների խորհուրդ (ԱԲՆԽ), որի առաջին ղեկավար ընտրվեց ԵԱՄՖ նախագահ Ալի Ռիզա Գյուլչիչեքը: Այս կազմակերպության ստեղծման կարևոր նշանակությունն այն էր, որ մինչ այդ ոչ մի թուրքական միություն չէր համարձակվել բացահայտ կերպով պահանջել ալեիների կրոնական ինքնության օրինական ճանաչումը: Նշենք, որ մինչ այդ ալեիական ինքնության ճանաչումը պահանջող հողված պարունակում էր Ալեիների Գերմանական Միությունների Ֆեդերացիայի (ԱԳՄՖ) սահմանադրությունը: Ընդհանուր առմամբ ԱԲՆԽ սահմանադրությունը

²² Sökefeld M., *Struggling for recognition: the Alevi movement in Germany and in transnational space*, New York, 2008, p. 16.

²³ Demiray M., *Wrestling for Self-Definition in Transnational Space: A Case Study of the Identity Construction of Alevi in Turkey and Germany*, <http://interdisciplinary.net/sites/default/files/papers/11/furcell%20paper.pdf>

գերմանական հաջողված փորձի ընդօրինակումն էր: Սակայն մեկ տարի անց խորհուրդը դադարեցրեց իր գործունեությունը²⁴:

Ժամանակագրական առումով շեղվելով նշենք, որ ավելի ուշ՝ 1999 թ. հիմնադրվեց Ալևի-բեքթաշիների Միությունը (ԱԲՄ), որի սահմանադրությունը ներկայացվեց Հաջըբեքթաշում անցկացվող ամենամյա փառատոնի ժամանակ: ԱԲՄՆ ղեկավարն այս առիթով նշեց, որ իրենք չեն ուզում այլևս ներկայանալ այլ անուններով, այսինքն՝ օգտագործել թաքիյան, այլ որոշել են եվրոպական փորձի հիման վրա 11 երկրների ներկայացուցիչների համագործակցության արդյունքում ստեղծված ֆեդերացիայի միջոցով միավորել թուրքիայի և Եվրոպայի կազմակերպությունները՝ շարունակելով զործել մեկ անվան տակ²⁵: ԱԲՄ նպատակներն ամբողջությամբ համընկնում էին ԱՐՆՆ-ի հետ²⁶:

1990-ական թվականների ընթացքում եվրոպական տարբեր երկրներում զործող միություններն աստիճանաբար, մեկը մյուսի օրինակին հետևելով, կազմեցին ֆեդերացիաներ: 1997 թ. սկսվեցին աշխատանքներ՝ «Եվրոպայի ալևիների կոնֆեդերացիա» ստեղծելու ուղղությամբ: Երկարատև աշխատանքներից հետո 2002 թ. Բրյուսելում ալևիական 165 կենտրոնների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած հավաքի ժամանակ պաշտոնապես հիմնվեց «Եվրոպայի ալևիների միությունների կոնֆեդերացիան» (ԵԱՄԿ), որի առաջին նախագահը դարձավ «Գերմանիայի ալևիների միությունների ֆեդերացիայի» նախագահ Թուրգութ Օքերը²⁷: ԵԱՄԿ-ն, ի թիվս ալևիական մի շարք խնդիրների լուծման ծրագրի, նպատակ ունի նաև օգնել թուրքիային ինտեգրվել Եվրոպական միության կազմին²⁸:

Գերմանական միությունների դերն ավելի նկատելի դարձավ 1990-ական թվականներին «Նաղաղություն» կուսակցության ստեղծման ժամանակ: Այս անգամ կուսակցություն ստեղծելու զործում Թուրքիայից դուրս քնակվող ալևիների ջանքերն անհամեմատ մեծ էին, քան 1970-ական թվականներին «Միություն» կուսակցության

²⁴ Առյ՛ն տեղում:

²⁵ "Radikal", 19.08.2002.

²⁶ Deminay M., Wrestling for Self-Definition in Transnational Space: A Case Study of the Identity Construction of Alevis in Turkey and Germany. <http://interdisciplinary.net/diversity/diversityscapes/v1/turner%20paper.pdf>

²⁷ Kaplan I., Avrupa'da Alevisik, http://www.levcakm.com/avrupada_alevisik.htm

²⁸ Zwick S., Carrying the flame, Time, 08 October 2002.

ստեղծման ժամանակ, ինպես նաև գործունեության մեջ ունեցած դերակատարման համեմատ: Վերջինս այն ժամանակ եվրոպաբնակ ալևիների հետ համագործակցում էր Գերմանիայում բացված մասնաճյուղի միջոցով՝ այնտեղ բնակվող գաղթականների շրջանում քվեներ ապահովելու նպատակով, և երբ Թուրքիայում այս կուսակցությունը դադարեցրեց իր գործունեությունը, նրա եվրոպական կուսակցությունը գերմանաբնակ գաղթականների հետ ուղիղ կապի մեջ էր՝ ներգրավվելով նրանց կուսակցության ստեղծման, գործունեության ծրագրի մշակման և այլ որոշումներ կայացնելու գործընթացներում: Դեռ ավելին, երբ կուսակցությունը որոշում կայացրեց հրաժարվել մասնակցել Թուրքիայում տեղի ունեցող ընտրություններին, ԱԲՄՖ-ն պնդեց, որպեսզի նրա անդամներն իրենց թեկնածությունը դնեն՝ որպես անկախ պատգամավորներ: Արդյունքում, թուրքական և գերմանական հատվածների միջև համագործակցությունն այնքան մեծացավ, որ թուրքական մամուլում անգամ հոդվածներ լույս տեսան այն մասին, թե եվրոպայի ալևիների միությունների ֆեդերացիան կուսակցություն է հիմնել²⁹:

«Եսաղաղություն» կուսակցության ծրագրի մեջ առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում գաղթականների խնդիրներին: Նրա նշանաբանն էր՝ «Երբ անունները տարբեր են, բայց ազգանունը մեկն է՝ Թուրքիա»: Եվրոպայում բնակվող ալևիները, շարունակելով մասնակցել Թուրքիայում ալևիական քաղաքական շարժմանը, աջակցեցին 1995 թ. նոր քաղաքական կուսակցության հիմնմանը՝ «Դեմոկրատական խաղաղ շարժում» անվամբ: Ալևիական եվրոպական կազմակերպությունների քաղմաքիվ ղեկավարներ մասնակցեցին այդ առիթով Թուրքիայում 1995 թ. տեղի ունեցած կոնգրեսին: Սակայն ավելի ուշ նրանք դադարեցրեցին իրենց աջակցությունը՝ կազմակերպչական տարածայնությունների պատճառով³⁰:

Գերմանիայից հետո ալևիների բնակության թվաքանակով երկրորդ երկիրը Եվրոպայում Ֆրանսիան է: Այստեղ ալևիների թիվն այսօր

²⁹ "Cumhuriyet", 26.11.1996.

³⁰ Demirey M., Wrestling for Self-Definition in Transnational Space: A Case Study of the Identity Construction of Alevis in Turkey and Germany, <http://interdisciplinary.net/alevi-diversity/diversity/diaspora/d1/funcoel%20paper.pdf>

հասնում է 150 հազարի³¹: Աշխատանք փնտրելու նպատակով Ֆրանսիա ներգաղթած բազմաթիվ ալևիններ, աստիճանաբար ձեռք բերելով ֆրանսիական անձնագրեր, մշտական բնակություն հաստատեցին այս երկրում, և ժամանակի ընթացքում հայրենիքի հետ կապը սերտ չպահելու պատճառով անգամ սկսեցին կորցնել թուրքերենի իմացությունը, ինչի պատճառով հավաքույթների ժամանակ այսօր արդեն շատ հաճախ որոշ տեքստեր թարգմանվում են թուրքերեն: Այստեղ բնակվող ալևինները թեև քաղաքական ակտիվությամբ զգալիորեն զիջում են գերմանաբնակ իրենց հավատակիցներին, սակայն այնուամենայնիվ որոշ քայլեր կատարվում են՝ ուղղված համայնքի վերջնական ձևավորմանը և այլ երկրների ալևինների հետ կապը պահելուն: Ալևինների ֆրանսիական համայնքը, հետևելով նմանատիպ միությունների օրինակին, շարունակում է աջակցել թուրքաբնակ հավատակիցներին՝ կազմակերպելով միջոցառումներ: Բացի քաղաքական աջակցությունից՝ ֆրանսաբնակ ալևինները փորձում են ներդրում անել նաև գիտության բնագավառում: Օրինակ՝ ըստ Ֆրանսիայի ալևինների միության նախագահ Դուրաք Ալանի կատարած հայտարարության՝ նախատեսվում է Ստրասբուրգի համալսարանում բացել ալևիագիտության բաժին³²:

2008 թ. Ֆրանսիայում ալևինները մեծ շուքով նշեցին Ֆրանսիայի ալևինների միության 10 ամյակը: Այս տոնակատարությունը, որն իրականում նպատակ ուներ ցույց տալ Թուրքիայի և Ֆրանսիայի ալևինների միասնականությունը, ևս մեկ անգամ ապացուցեց, որ բազմաթիվ հակասություններ կան երկու կողմերի միջև, քանի որ, օրինակ, հրավիրված լինելով հանդերձ, տոնակատարությանը չմասնակցեց Ալևի-բեքթաշիների միության հեղինակավոր նախագահ Ալի Բալբըզը³³:

Նշենք նաև, Ֆրանսիան, ի տարբերություն գերմանիայի, շարունակում է չընդունել ալևիններին՝ որպես առանձին կրոնական համայնք: Խնդիրը ոչ թե ալևիններին է միայն վերաբերվում, այլ բոլոր փոքրամասնություններին՝ անկախ այն հանգամանքից՝ նրանց

³¹ Gorzewski A., Alevites in France, Striking a Balance between Old and New, http://www.cantara.de/webcom/show_article.php?c=478/r=7864.html

³² Այն տեղում:

³³ Այն տեղում:

կրոնական են, քե ոչ: Այս երկրում ալկիները համախմբվում են, օրինակ, մարդու իրավունքների հարցի շուրջ, ինչը քաղաքականապես ալեյի հարմար է նրանց գործունեության համար²⁴:

Ի տարբերություն Չեռնանայում բնակվող ալկիների՝ համեմատաբար ալեյի պահվել են նաև եվրոպական մյուս երկրների ալկիները: Օրինակ՝ Նիդերլանդներում զրանցված են ոչ ալեյ քան 20 ալկիական միություններ: Երկրում բնակվող ալկիներից ոչ բոլորն են ալկտիվորեն մասնակցում միությունների գործունեությանը: Այս միությունների անդամների թիվը հասնում է մոտ 3000-7000²⁵: Բուլղարիայում ևս բնակվող մոտ 85 հազար ալկիներ այքի չեն ընկնում իրենց ալկտիվությանը²⁶:

Եվրոպայում բնակվող ալկիները չեն սահմանափակվում միայն իրենց բնակության վայրերում մշակութային և քաղաքական խնդիրներն արծարծելով և առաջ են քաշում պահանջներ՝ կապված նաև երկրից դուրս տեղի ունեցող իրադարձությունների հետ: Քաղաքական պահանջների արտահայտման եղանակներից ամենատարածվածը ցույցերն են, որոնք ալկիները կազմակերպում էին տարբեր նպատակներով: Օրինակ՝ 1995 թ. դեկտեմբերին Բելիխում ալկիների տեղական համայնքը երթ կազմակերպեց՝ ի հիշատակ իրենց ղեկավարի²⁷:

Ալկիական համայնքը Չեռնանիայում կազմակերպում էր ցույցեր ոչ միայն Թուքիայում, այլ նաև Չեռնանիայում կրոնական փոքրամասնությունների դիրքերը բարելավելու համար: Օրինակ՝ 1993 թ. Քյոլնում տեղի ունեցավ բողոքի ցույց՝ կապված Սվազում տեղի ունեցած իրադարձությունների հետ, որին մասնակցում էին 50 հազար ալկիներ²⁸: Սեկ ուրիշ անգամ 20 հազար ալկիներ նույն քաղաքում

²⁴ Massicard E., *Alevi mobilization in Germany and the perspective of Turkish integration in the EU*,

<http://soc.kuleuven.be/feb/ethn/mobilization/docs/proc-Massicard.pdf>

²⁵ Rossum W., *Religious Courts Alongside Secular State Courts: The Case of the Turkish Alevi*,

http://www.alevibektazi.org/yeni/index.php?option=com_content&view=article&id=85:religious-courts-alongside-secular-state-courts-the-case-of-the-turkish-alevi-&catid=34:ingilizce-makaleler

²⁶ Hunfar Sh., *Briefing Notes on Islam, Society, and Politics*,

<http://www.cleonet.org/pbel/csis/isp/iso.html>

²⁷ Ehrkamp P., Leitner H., *Beyond National Citizenship: Turkish Immigrants and the (re)construction of citizenship in Germany*, <http://www2.flu.edu/~fcs/summer/readings-h1.doc>

²⁸ Kupeas H., *Турецкая diaspora...*, с. 72.

բողոքի ցույցի դուրս եկան այն բանից հետո, երբ գերմանական հեռուստաալիքներից մեկով հեռարձակված ֆիլմում ծաղրեցին ալեհներին³⁸: Այս վերջին ցույցին բազմաթիվ ցուցարարներ էին մասնակցում նաև Ավստրիայից, Հոլանդիայից և Բելգիայից³⁹:

Հարկավոր է նշել, որ հստակ քննվածություն կա Պերմանիայում քննվող սուննի թուրքերի և ալեհների միջև: Սուննիների և ալեհների միջև կրոնական հակասությունները, որոնք գոյություն ունեն Թուրքիայում, իրենց արտացոլումն են գտնում նաև Եվրոպայում քննվող թուրքական ափյուռքում: Ինչպես Թուրքիայում, այնպես էլ Պերմանիայում ալեհ դպրոցականներն իսլամի վերաբերյալ դասերի ընթացքում սովորում էին սուննիզմ՝ թուրքերեն լեզվով⁴⁰: Սակայն հետագայում Պերմանիայում ԳԱՄԳ-ի ջանքերի շնորհիվ ալեհ աշակերտների համար նախատեսված կրթական ծրագիր մշակվեց, և 2002 թ. սկսած՝ Բեռլինում, իսկ ավելի ուշ նաև երկրի այլ շրջաններում գերմաներեն լեզվով սկսեցին անցկացվել ալեհականության մասին դասընթացներ⁴¹:

2000 թ. Պերմանիայում քննվող ալեհների համար կարևոր նշանակություն ունեցավ: Բեռլինի ադմինիստրատիվ դատարանը Բեռլինի Իսլամական Ֆեդերացիային տվեց կրոնական համայնքի կարգավիճակ: Մի քանի շաբաթ անց Բեռլինի ալեհական ամենամեծ կազմակերպություններից մեկը՝ Անատոլիայի Ալեհների Մշակութային Կենտրոնի (ԱԱՄԿ) ղեկավարությունը պահանջեց դատարանից իրենց կազմակերպությանը նույնպես տալ նույնանման կարգավիճակ: Օգտվելով ընծեծված հնարավորությունից՝ ալեհներն ակտիվ կերպով սկսեցին գործել՝ ներկայացնելով ալեհությունը որպես հայածված և պետության հովանավորությունը հայցող կրոն, որին հարկավոր է ունենալ սուննի իսլամին հավասար իրավունքներ: Արդյունքում, 2000 թ. ԱԱՄԿ-ին ևս տրվեց կրոնական համայնքի կարգավիճակ⁴²:

³⁸ Muslim Minority Marches Against German Crime Show,-

<http://www.spiegel.de/international/germany/0,1518,525957,00.html>

³⁹ "BIA Haber Merkezi", 31 Aralık 2007.

⁴¹ Ehrkamp P., Leitner H., Beyond National Citizenship: Turkish Immigrants and the (re)construction of citizenship in Germany, <http://www2.fu.edu/~ics/summer/readings-hl.doc>

⁴² Kaplan I., *Almanya'da üç Eyalette daha Alevlik dersleri başladı*,

http://www.aabk.info/sozkulama.html?&chash=28858529a&&ix_news%5BbackPic%5D=11&ix_news%5Bnews%5D=7194

⁴³ Massicard E., *Alevist mobilization in Germany and the perspective of Turkish integration*

ԱՄՄԿ-ի այս կարգավիճակի ընձեռումը տեղի ունեցավ նախանգային մակարդակով: Ալեկիների համար դրական այս տեղաշարժից հետո ՊԱՄՖ-ն, որի անդամ կազմակերպություններից էր ԱՄՄԿ-ն, անմիջապես ծեռնամուխ եղավ այս ճանաչումը գերմանական մակարդակով ստանալու գործին՝ ներկայացնելով պահանջներ՝ երկրի քոլոր նախանգների համար: Արդյունքում, Չեռմանիայի հինգ նախանգները որոշեցին հարցին տալ միանման լուծում և որոշում կայացրեցին ընդունել երկրում քնակվող քոլոր ալեկիներին որպես առանձին կրոնական համայնք: Նշենք, որ ԱՄՄԿ-ի ճանաչումը որպես կրոնական համայնք բացասաբար ընդունվեց թուրք պաշտոնյաների կողմից, քանզի դիտվեց որպես վտանգ՝ ուղղված թուրքական ազգի միությանը: Եվ քանի որ ալեկիների հարցը ԵՄ-Թուրքիա հարաբերությունների օրակարգում դրվել էր առանց թուրքական կառավարության հետ քննարկման և նրա համաձայնության, այս հանգամանքն ավելի բարդացրեց վերջինիս կողմից ալեկիների պահանջներն օրինական ճանաչելու գործընթացը⁴⁴:

Արդեն հանդես գալով որպես եվրոպական երկրների կառավարությունների կողմից պաշտոնապես ճանաչված միություններ՝ ալեկիներն իրենց պահանջներն սկսեցին արտահայտել ավելի քաղժր մակարդակով, քան առանձին երկրների կառավարություններն են: Նրանք իրենց պահանջները ներկայացրեցին Եվրոպական Միության (ԵՄ) հանձնաժողովներին, ինչը սկսեց քննարկվել Թուրքիայի ԵՄ անդամակցման ֆոնի վրա, քանզի երբ քննարկումների արդյունքում թուրքական կողմին ներկայացվեցին ԵՄ պահանջները և ոլորտները, որոնք պետք է բարելավվեին երկրում, ալեկիների հարցը ևս ընդգրկված էր ծրագրում: Արդեն 2000 թ. նոյեմբեր ամսին հրապարակվեց ԵՄ հանձնաժողովի՝ Թուրքիայում իրականացվող զարգացման գործընթացների վերաբերյալ պարբերական ասաջին հաշվետվությունը, որտեղ նշվում էր, թե ալեկիները զանգատվում են պարտադիր կրոնական դասերի անցկացումից, դասագրքերում ալեկիության վերաբերյալ նյութերի քացակայությունից, ինչպես նաև պետության կողմից միայն մզկիթները՝ որպես կրոնական հաստատություններ ֆինանսավորելու քաղաքականությունից: Ալդուհետև, ալեկիների կարգավիճակի և

in the EU, <http://ec.kuleuven.be/leab/ethnicmobilization/docs/proc-Maascard.pdf>

⁴⁴ Նույն տեղում:

խնդիրների վերաբերյալ ԵՄ կառույցների հանձնաժողովների ներկայացրած ամենամյա հաշվետվություններում սկսեց նշվել՝ ամեն տարի ավելի հստակ և մանրամասնորեն անդրադառնալով այս հարցին:

Այնուամենայնիվ, ԵՄ կողմից ալեկիների հարցի լուծմանն աջակցելու նպատակով տեղի ունեցած հանիպումները և ընդհանրապես ալեկական լոբբինգն իրականացնում են հիմնականում Եվրոպայի ալեկական կազմակերպությունները, որոնց գործունեությունը մեծամասամբ գլխավորում է ԵԱՄԿ-ն:

Եվրոպական ալեկական կազմակերպությունների օրինակին փորձեցին հետևել նաև թուրքական ալեկական միությունների ղեկավարները՝ փորձելով քանակցություններ սկսել եվրոպական կառույցների հետ, քանի որ Թուրքիայում բնակվող ալեկիների շրջանում տարածված է այն համոզմունքը, թե իրենց խնդիրների լուծման հարցում հաջողության հասնել հնարավոր է միայն Եվրոպայում գործող կառույցների աջակցությամբ:

2000 թ. հունիսին Թուրքիայում տեղի ունեցավ մի իրադարձություն, որն աօիթ հանդիսացավ քաղաքական մեծ սկանդալի, երբ հայտնի դարձավ, որ ալեկական «Ջեմ հիմնադրամ» և «Փիր սուլթան Աբդալ ընկերակցություն» կազմակերպությունների նախագահները պատրաստվում են զաղտնի հանդիպում ունենալ ԵՄ ներկայացուցիչների հետ՝ քննարկելու համար երկրում բնակվող ալեկիների խնդիրները: Այս կապակցությամբ Իզբթթին Դողանը՝ «Ջեմ հիմնադրամի» նախագահը, հայտարարեց, թե իրենց չեն ցանկանում, որպեսզի ԵՄ-ն խառնվի իրենց երկրի ներքին գործերին, քայք քանի որ Թուրքիայի իշխանությունները չեն կատարում իրենց տված խոստումները, իսկ Եվրոպայում բնակվող բազմաքանակ ալեկական համայնքը փորձում է իր ձայնը լսելի դարձնել, ԵՄ-ն որոշել է ներգրավվել տեղի ունեցող գործընթացին⁴⁵: Տեղի ունեցածի կապակցությամբ արտաքին գործերի նախարարությունը տարածեց հաղորդագրություն, որում ասվում էր, թե ԵՄ՝ Թուրքիայի ներքին գործերին այդ կերպ խառնվելն անընդունելի է, քանի որ ըստ տեղեկությունների՝ նախատեսված էր հանդիպումը ունենալ զաղտնի⁴⁶: Ավելի ուշ, ալեկական մի շարք կազմակերպությունների

⁴⁵ "Milliyet", 22.06.2000.

⁴⁶ "Hürriyet", 23. 06.2000.

ղեկավարներ հայտարարեցին, որ մնում են հավատարիմ բուրջական ազգային շահերին՝ հայտարարելով, որ ալևիների խնդիրների լուծումը հարկավոր է փնտրել ոչ թե Բրյուսելում կամ Ստրասբուրգում, այլ միայն Թուրքիայում⁴⁷:

Վերլուծելով տեղի ունեցած իրադարձությունները՝ կարելի է փաստել, որ Եվրոպայում երկար ժամանակ ալևիների խնդիրն նշանակություն չէր տրվում, և միայն ալևի աշխատավորների և գաղթականների թվաքանակի աճի արդյունքում ստեղծված կազմակերպությունների և «եվրոպական» ալևիականության զարթոնքի հետևանքով վերջին տարիների ընթացքում դրությունը փոխվեց, քանի որ սկսվեց մի գործընթաց, որը նպատակ ունի եվրոպական խորհրդարանի կողմից ճանաչել տալ ալևիների ինքնության առանձնահատկությունը և իրավունքները՝ որպես կրոնական փոքրամասնություն:

Տեղի ունեցած արտազաղթը բացեց ալևիական համայնքը աշխարհի առաջ, ինչի արդյունքում մեծացավ տարբեր երկրներում գիտնականների հետաքրքրությունն ալևիական համայնքի, ինչպես նաև ալևիների խնդիրների նկատմամբ: Եվրոպական ալևիական կազմակերպությունների ակտիվ գործունեության շնորհիվ եվրոպական մի շարք երկրներ ճանաչեցին ալևիական համայնքը՝ որպես կրոնական փոքրամասնություն և սկսեցին իրենց զեկույցներում պարբերաբար անդրադառնալ Թուրքիայում բնակվող ալևիների կարգավիճակին: Իսկ հայրենիքում բնակվող ալևիները, ի դեմս եվրոպայաբնակ ալևիների, ամուր հեծարան գտան իրենց հետազա պայքարում:

VARDAN HARUTYUNYAN

THE FORMATION AND ACTIVITIES OF ALEVI ORGANIZATIONS IN EUROPE IN 1960-2000

The Alevi community was opened for the others after the beginning of the urbanization process in Turkey in 1980s. Many Alevi left their families seeking for job not only in the big cities of Turkey, but in European countries also. Many of them immigrated to Germany and after some years began organizing Alevi

⁴⁷ "Hürriyet", 12.07.2000.

unions. During two decades many Alevi organizations emerged and were combined in Federation of Alevi Unions, which was renamed Confederation of Alevi Unions of Europe lately. This organization played a great role in the life of Alevis living in Europe and in the political life of Alevis living in Turkey.

Becoming more and more active in Europe Alevis organized demonstrations in the big cities and presented their demands about recognizing their religious identity by European countries and especially by Turkey.

The Alevi organizations in Europe aim to help Turkey in the process of integration in European Union.

ԵԿՈՆ ՀՈՎՍԵԾՅԱՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՂՈՒՄԻ ԴՅՑՆՈՒՆԻՑՄԱՆ ԿԱՍՏԱՄԱՐ ԹՈՒՐԿԻԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՆԱԿՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԸՈՒՐՋ

Աստղ պատերազմի ավարտով Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը կանգնեց իր պաշտպանական ու արտաքին քաղաքական նոր ուղեգծերի վերանայման խնդրի առջև: Անկարան արդեն պետք է քայլեր ձեռնարկեր ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրողություններին համարժեք պատասխանելու համար: Նախկինում այդ երկիրը գտնվում էր Հյուսիսատլանտյան դաշինքի ռազմաքաղաքական հայեցակարգի շրջանակներում, իր անվտանգությունն ապահովում էր այդ դաշինքի միջոցով և կատարում էր իր հստակ ռազմավարական դերը: Սառըպատերազմյան ժամանակաշրջանում Թուրքիան հստակ դերակատարություն ուներ ՆԱՏՕ-ի հարավային գծի պաշտպանության գործում՝ կանխելով ԽՍՀՄ-ի մուտքը միջերկրածովյան շրջաններ և Մերձավոր Արևելք՝ իրականացնելով դաշինքի «զսպման ռազմավարությունը»:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո վերացավ «խորհրդային վտանգը» և Թուրքիայի համար նոր հնարավորություններ քացվեցին այնպիսի տարածաշրջաններում, որոնք նախկինում անտեսված էին այդ երկրի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից, և Թուրքիան հայտնվեց նոր ծնավորվող ռազմավարական «բնապատկերի խաչմերուկում»: Իրենց հերթին, փոխվեցին Թուրքիայի անվտանգության նկատմամբ մարտահրավերներն ու սպասնաչիքները¹:

Թուրքիայի առջև առաջին հերթին ստեղծված աշխարհաքաղաքական հնարավորությունները վերաբերում էին ԽՍՀՄ-ի փլուզմանը և Հարավային Կովկասի ու Կենտրոնական Ասիայի նորանկախ երկրների ստեղծմանը: Անմիջապես թուրքական ղեկավարությունը գործի դրեց իր ռազմաքաղաքական, տնտեսական ու մշակութային զինանոցը՝ նորանկախ թյուրքալեզու երկրներին

¹ Larrabee S., Turkey as a US Security Partner, RAND Corporation 2008, http://www.rand.org/pubs/monographs/2008/RAND_MG694.pdf, p. 3

համախմբելու և իր իսկ առաջնորդությամբ քաղաքական-տնտեսական միավորում ստեղծելու ուղղությամբ: Չնայած գործադրված ջանքերին՝ Անկարայի «թուրքական միասնության» ուղղությամբ ձեռնարկած քայլերն ու հայեցակարգը ծախսողվեցին²: Ուստի Անկարայում ստիպված էին փոխելու իրենց նախկին հավակնոտ քաղաքականության շեշտադրումները: Այդ շրջանից արդեն թուրքական ռազմաքաղաքական վերնախավում սկսեցին ձևավորվել արտաքին քաղաքական ու աշխարհաքաղաքական նոր մոտեցումներ, հայեցակարգային նոր մշակումներ: Աստիճանաբար, թուրքական գինվորական շրջանակներում ևս ի հայտ եկան նոր արտաքին քաղաքական, տարածաշրջանային անվտանգության ու պաշտպանության «այլընտրանքային» մոտեցումների դրսևորումներ: 1990-ական թթ. Թուրքիայի քաղաքական ու գիտական շրջանակներում լայն տարածում գտան Եվրասիա հասկացության շուրջ քննարկումները: Չնայած այդ հասկացության շուրջ առկա տարբեր մոտեցումներին՝ քաղաքական ու որոշ գիտական շրջանակներ Եվրասիան համարում էին հիմնականում թյուրքալեզու ժողովուրդներով բնակեցված մի մեծ տարածաշրջան, որի մեջ մտնում էին Թուրքիան, Բալկանների ու Կովկասի մի մասը, Կենտրոնական Ասիան, Ռուսաստանի Կովգայի շրջանը և այլն: Իսկ վերջին տարիներին թուրքական բարձրագույն սպայակազմի մի մասի համար Եվրասիան դիտվում է որպես կարևոր աշխարհաքաղաքական առավելություն ու հնարավորություն³:

Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, անվտանգության ու պաշտպանական ռազմավարության հայեցակարգերը կրում են ինչպես միջազգային ու տարածաշրջանային զարգացումների, այնպես էլ աշխարհաքաղաքական գնահատականների ու ըմբռնումների տրամաբանությունը: Հետաաջդպատերազմյան ժամանակաշրջանում

² Այդ մասին տես Հովսեփյան Լ., Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում 90-ական թթ. որպես Եվրասիական քաղաքականության կարևորագույն ուղղություն: Չեռքերում, թե ծախսողում, Թուրքազգիտական և օսմանազգիտական հետազոտություններ, հ., V, Երևան, 2008; Հովսեփյան Լ., «Թուրքական մոդելը» և 90-ականների սկզբին Կենտրոնական Ասիայում Թուրքիայի քաղաքականության պայմանավորվածությունն արևմտյան ռազմավարական շահերով, Մեծապրի և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXVII, Երևան, 2009:

³ Սաֆրաստյան Ռ., «Նարավոր յէ 21-րդ դարում պատռնչներ ստեղծել հարևանների միջև...», Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային հոլովույթներում /2001-2003 թվականների հոլովածներ և հարցազրույցներ/, Երևան, 2003, էջ 5-8:

Թուրքիայի անվտանգության վերաբերյալ ռազմաքաղաքական պատկերացումները զգալի չափով կրում էին «աշխարհագրական դետերմինիզմի»⁴ ազդեցությունը, որով էլ պայմանավորվում են այդ երկրի առանձնահատուկ շահերն ու անվտանգության կարիքները⁵: Լևկարայի քաղաքականությունն անվտանգության ու պաշտպանության ոլորտում զգալիորեն կրում է այդ երկրի աշխարհագրական դիրքի ու աշխարհաքաղաքական միջավայրի խոր ազդեցությունը: Ուստի 1990-ական թթ. կեսերից Թուրքիայի գիտական, քաղաքական քննարկումներում սկսեց լայն տարածում գտնել այսպես կոչված «եվրասիական հայեցակարգը»: Այն ընդունվում է որպես Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, աշխարհաքաղաքական ռազմավարությունն ու ազգային անվտանգությունն արտացոլող հիմնական հայեցակարգերից⁶:

Ուսումնասիրելով թուրք զինվորականության աշխարհաքաղաքական հայացքներն ու մոտեցումները՝ կարելի է ասել, որ «եվրասիական հայեցակարգը» և աշխարհագրական դետերմինիզմի տեսությունը կարևոր տեղ են զբաղեցնում նաև Թուրքիայի զինվորականության շրջանում: Այդ երկրի պաշտպանության նախարարության կողմից պատրաստված Defence White Paper 2000 փաստաթղթում Թուրքիայի աշխարհաքաղաքական, աշխարհառազմավարական դերին վերաբերող բաժնում նշված է, որ «երեք մայրցամաքները միմյանց միացնող և շատ կարևոր գեոստրատեգիական նշանակություն ունեցող Թուրքիան միաժամանակ նաև եվրոպական, ասիական, քաղկանդան, մերձավորարևելյան, միջերկրածովյան և սևծովյան, ավելի կարճ ասած՝ եվրասիական երկիր է: Թուրքիան այդ եվրասիական գոտում գտնվելով կենտրոնական դիրքում՝ քաղաքական, անվտանգության և տնտեսական առումով մեծ դերակատարություն և նշանակություն է

⁴ Աշխարհագրական դետերմինիզմի տեսության համաձայն՝ աշխարհագրական դիրքը, քնական պայմաններն ու կլիման կանխորոշում են պետության սոցիալ-տնտեսական, մշակութային, քաղաքական կյանքի առանձնահատկությունները, ծնավորում ազգային քնավորություն: Այն էական ազդեցություն ունի պետության արտաքին քաղաքականության ու անվտանգության սահմանման համար:

⁵ Bligh P., Turkey's changing security discourses: The challenge of globalisation, *European Journal of Political Research*, № 44, 2005, pp. 185-186.

⁶ Թուրքիայում «եվրասիա» հասկացության շուրջ քաղաքական մոտեցումների մասին ավելի մանրամասն տե՛ս Safraşyan R., The Concept of Eurasia and Turkey's Regional Strategies, 24.06.2005, <http://www.globalpolitician.com/2761-turkey>.

ծեք բերել⁷: Բարձրաստիճան որոշ զինվորականներ կհսում էին քաղաքական գործիչների այն մտտեցումը, որ Թուրքիան եվրասիական երկիր է և պետք է իրականացնի համարժեք քաղաքականություն: 1999 թ. ելույթ ունենալով Վաշինգտոնում՝ Թուրքիայի պաշտպանության նախարար Հ. Սամի Թյուրքը նշել է. «Երջապատված լինելով երեք ծովերով և միմյանց կապելով երկու մայրցամաքները՝ Թուրքիան եզակի և աշխարհագրորեն ռազմավարական դիրք է զբաղում: Թուրքիան ոչ միայն իր հայացքն ուղղել է դեպի Արևմուտք, այլ նաև ավանդական կապեր է պահպանում մահմեդական երկրների հետ: Նրա արմատները գնում են Կենտրոնական Ասիա, Մերձավոր Արևելք, Անատոլիա և Եվրոպա: Թուրքիան եվրասիական երկիր է»⁸: Թուրքական քանակի թռչակառու գեներալ Ս. Էրգյուվենչն իր հոդվածում անդրադարձել է Թուրքիայի աշխարհագրական-ռազմավարական դիրքին՝ ընդգծելով, որ աշխարհագրական դիրքն ու ռազմական ներուժը կազմում են երկրի ռազմական ու ռազմավարական արժեքը: Թուրքիայի աշխարհագրական դիրքը դիտվում է որպես «նախանձելի ռազմավարական-ռազմական արժանիք»: Այն հնարավորություն է տալիս Թուրքիային գործել որպես վճռական փոխադրամիջոցների կամուրջ կամ խոչընդոտ և ապահովել բնական օեսուրներին հասնելու ամենահեշտ և կարճ ճանապարհ: Թուրքիան կարող է ազդեցություն գործել իր անմիջական տարածաշրջանների նկատմամբ: Նման աշխարհագրական դիրքը կարող է առավելություն դիտվել, սակայն անհրաժեշտության դեպքում պահանջում է ուժեղ պաշտպանունակություն (ռազմական ուժեր)⁹: Մեկ այլ գեներալ՝ Սուաթ Իլհանը, Թուրքիան անվանում է որպես «սահմանների երկիր»: Նա իր հոդվածում նշում է, որ «Թուրքիան կազմում է երեք մայրցամաքներից կազմված աշխարհի կղզու կենտրոնը և այն բանալու դեր է կատարում՝ Հյուսիսը բացելով դեպի Հարավ, Հարավը՝ Հյուսիս, Արևելքը՝ Արևմուտք, Արևմուտքը՝ Արևելք»:

⁷ Defence White Paper 2000,

<http://www.msb.gov.tr/Belgeler/GnPPD/GnPPDBeyazKisi1Kis2.htm>.

⁸ Sami Türk H., Turkish Defense Policy. The Washington Institute For Near East Policy, March 3, 1999, <http://www.washingtoninstitute.org/media/samitürk.htm>. (Քյուլենց երկրի գլխավորած կառավարությունում 1999 թ. հունվարից մինչև նույն թվականի մայիսը զբաղեցրել է պաշտպանության նախարարի պաշտոնը, որից հետո դարձել արդարադատության նախարար):

⁹ Ergüvenç S., Turkey's Security Perceptions, *Journal of International Affairs*, v. 3, № 2, June-August 1998.

Այն Բալկանները, Կովկասը և Մերձավոր Արևելքը միացնող և բաժանողն է: Աշխարհագրական դիրքը տարածաշրջանում ամեն հնարավոր փոփոխության պայմաններում ավելի մեծ կարևորություն է ստանում¹⁰:

Թուրքիայի ադրաքին քաղաքականության հայեցակարգերը կրում են ինչպես միջազգային ու տարածաշրջանային զարգացումների, այնպես էլ աշխարհաքաղաքական գնահատականների ու ընթացումների տրամաբանությունը:

Թուրքիայի գինված ուժերի (այսուհետ՝ ՁՈւ) գլխավոր շտաբի պլանավորման և սկզբունքների մշակման դեպարտամենտի ղեկավար, գեներալ Հ Աքքն Ջոլլուի բնորոշմամբ, Թուրքիան իր գեոստրատեգիական դիրքով լինելով եզակի երկիր, գտնվելով երեք մայրցամաքների «խաչմերուկում», հանդիսանալով ենթագետիկ տարանցիկ տարածք, միաժամանակ երաշխավորված չլինելով այդ տարածաշրջաններից եկող տարբեր մարտահրավերների ու սպառնալիքների նկատմամբ, հարկադրված է ունենալ 21-րդ դարի ռազմական ու քաղաքական պահանջներին համապատասխանող ՁՈՒ¹¹: 2009 թ. դեկտեմբերին Տրապիզոնում կայացած մամլո ասուլիսի ժամանակ Թուրքիայի ՁՈՒ-ի գլխավոր շտաբի պետ Ի. Բաշբուլը նշել է. «Մեր երկրի շրջակայքը լի է խնդիրներով և այդպիսի աշխարհագրության մեջ գտնվող ոչ հզոր պետությունները կենսունակ չեն: Ազգային հզորության հիմնական սկզբունքներից մեկը ռազմական ուժն է: Ազդեցիկ և հզոր ՁՈՒ-ը ուղղակի կապված են երկրի գոյության հարցի հետ»¹²:

Իմի բերելով վերոնշյալը՝ կարող ենք փաստել, որ Թուրքիայի ռազմական ոլորտում իրականացվող քարտեզիումները համահունչ են այդ երկրի աշխարհաքաղաքական ու ռազմավարական նպատակներին ու հավակնություններին: Զգտելով մեծացնել իր դերակատարությունը որպես տարածաշրջանային տերություն՝

¹⁰ İhan S., Geopolitical developments and the Turkish world, Eurasian Studies, TİKA, v. 2, № 3, 1995, p. 25.

¹¹ Թուրքիայի ՁՈՒ ԳԿ-ի պլանավորման և սկզբունքների մշակման դեպարտամենտի ղեկավար, գեներալ Հ Աքքն Ջոլլուի ելույթը Պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչության հիմնադրման 20-ամյակին նվիրված կոնֆերանսում: ՏԵՄ ՊԱԳՎ-ի պաշտոնական կայք՝ http://www.ssm.gov.tr/browser_tr.asp?srcURL=/library/docs/trkurmesai/SSM_20_yil.htm:

¹² Genelkurmay Başkan'ından sert sabah mesajları..., "Milliyet", 17.12.2009.

Թուրքիան քայլեր է իրականացնում նաև ռազմական ոլորտում տարածաշրջանային գերակալության հասնելու ուղղությամբ:

Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղար, գեներալ Թունջեր Բըլընջը Թուրքիայի արտաքին քաղաքականության համար առաջարկում էր նոր այլընտրանքային՝ արևելյան ուղղություն, ըստ որի Ռուսաստանը, Իրանը և Չինաստանը կարող են դառնալ Թուրքիայի եվրասիական ռազմավարության առանցքը¹³: Նա ԵԱ-ն անվանել էր «Քրիստոնեական ակումբ», որը, որպես նեոգաղութատիրական ուժ մտադիր է մասնատել Թուրքիան¹⁴:

Պաշտոնաթող մեկ այլ գեներալ՝ Շեներ էրույզուրը, որը ձերբակալվել էր «երգենեկոնի» գործով որպես մեղադրյալ, նույնպես հանդես էր գալիս հօգուտ Թուրքիայի եվրասիական քաղաքականության զարգացման օգտին՝ առաջարկելով ի հակակշիռ ՆԱՏՕ-ի ռազմաքաղաքական դաշնակցային հարաբերություններ ստեղծել Ռուսաստանի, Իրանի ու Շանհայի Համագործակցության Կազմակերպության անդամ երկրների հետ¹⁵:

Թուրք գեներալների այդ առաջարկը ներկայացնում էր ավանդական արևմտյան ուղղության արտաքին քաղաքականության այլընտրանքային տարբերակ, որի հիմքում ընկած է որպես Արևմուտքին հակակշիռ՝ զարգացնել համագործակցությունը

¹³ Թ. Բըլընջը 1999-2001 թթ. եղել է Թուրքիայի ՁՈՒ-ի 3-րդ քանակի իրամասնատարը, իսկ 2001-2003 թթ. Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղարը: Karavel M.Hall, *Islamic-Western Embrace Fuels Eurasianism in the Turkish Military*, *The Turkey Analyst*, v. 2, № 4, 27 Feb. 2009, Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, p. 3.

¹⁴ Kirişci K., *Turkey's Foreign Policy in Turbulent Times*, *Chailot Paper*, № 82, September 2006, Institute for Security Studies, p. 36.

¹⁵ Բանակի գեներալ Շ. էրույզուրը 2000-2002 թթ. եղել է Թուրքիայի ցամաքային զորքերի շտաբի պետը, իսկ 2002-2004 թթ. գլխավորել է ժամայրմերիայի գլխավոր իրամասնատարությունը: İpe Ergenekon'un Rus aklı hocası,

<http://www.samanyoluhaber.com>, 22 Ekim 2008. Թուրքական և այլ աղբյուրների հավաստմամբ՝ թուրք մի շարք բարձրաստիճան զինվորականների, այդ թվում Թ. Բըլընջը, Շ. էրույզուրը, Ա. Իլհանը, 2004 թ. ներկա են գտնվել Մոսկվայում ռուսական կողմի նախաձեռնությամբ կազմակերպված «Եվրասիական սիմպոզիում»-ի աշխատանքներին: Թուրքական քեթբերը իրապարակումներ ունեցան, ըստ որոնց, «Երգենեկոնի» պարազուլաները ակտիվ կապերի մեջ են եղել ռուսական քաղաքական, վերլուծական շրջանակների հետ, որոնք նույնպես «ստարված են եվրասիական գաղափարներով»:

Laruelle M, *Russo-Turkish Rapprochement through the Idea of Eurasia: Alexander Dugin's Networks in Turkey*, *The Jamestown Foundation*, April 2008,

http://www.jamestown.org/uploads/media/Jamestown-LaruelleRussoTurkish_01.pdf.

Եվրասիական տեռորիզմների հետ: Այս համատեքստում, ինչպես իրավացիորեն նշում է թուրք հետազոտող Ի. Ղազը, հակաթմոտականության ու հակամերիկյան տրամադրությունները ակնառու են ոչ միայն թուրքական հանրության լայն շրջանակներում, այլ նաև գինվորականության մոտ: «Հակաթմոտյան, հակաիմպերիալիստական ու հակազորալիստական գաղափարախոսական հոսանքները, մինչև ժամանակ չաղկաավելով երկրի լիակատար անկախության շեշտադրման հետ, հաջողության են հասել թուրքական գինվորական շրջանակներում»¹⁶:

Ստամբուլի Բեյքենթ համալսարանի օազմավարական հետազոտությունների կենտրոնի կողմից ՆԱՏՕ-ի 60-ամյակի կապակցությամբ կազմակերպված գիտաժողովի ժամանակ, թոշակատու դիվիզիայի զեներալ Ա. Քուլտլուն նկատել է, որ չնայած ՆԱՏՕ-ն Թուրքիայի անվտանգության խնդիրների առումով կարևոր կազմակերպություն է, այնուամենայնիվ չպետք է չափից շատ վստահել: Ըստ նրա՝ Թուրքիան պետք է կենտրոնում դնի իր անվտանգության շահերը, իրականացնի սեփական պաշտպանական քաղաքականությունը և անհրաժեշտաբար հարաբերություններ զարգացնի Ռուսաստանի, ՇՀԿ-ի անդամ երկրների ու այլ կառույցների հետ¹⁷: Նույն կենտրոնի կողմից թուրք-ամերիկյան հարաբերություններին նվիրված ցննարկման ժամանակ թոշակատու քրիզայի զեներալ Ն. Էյլենը նշել է, որ նախկինի նման Թուրքիայի ու ԱՄՆ-ի շահերը չեն համընկնում և այդ հարաբերությունները կրկին առողջ դաշտ քերելու ծախսողման կամ անհնարինության պարագայում, «Թուրքիան մի շարք արտաքին քաղաքական հնարավորություններ ունի՝ իր առանցքն ուղղելով դեպի Հյուսիս, Արևելք և Նույնիսկ Հարավ»¹⁸:

Նշենք, որ առաջին անգամ ՆԱՏՕ-ի հասցեին Թուրքիայի նախագահի կողմից հրապարակային սուր ցննադատություն է հնչել դեռ 1987 թ., Եվրախորհրդարանի կողմից ընդունված «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի կապակցությամբ.

¹⁶ Dağı I., Understanding anti-Americanism in Turkey, Today's Zaman, 02 July 2007.

¹⁷ 60. Yıldönü NATO paneli takım kampüsü'nde icra edildi, <http://yeni.beykent.edu.tr/WebProjects/Web/busamguncel.php?CategoryId=891>, 25.10.2010.

¹⁸ "Türkiye ile ABD ilişkileri 2008'e kadar bulanık", <http://yeni.beykent.edu.tr/WebProjects/Web/busamguncel.php?CategoryId=891>, 25.10.2010

որտեղ ՆԱՏՕ-ն մեղադրվում էր Թուրքիայի նկատմամբ դավաճանության մեջ: Թուրքիայի նախագահ, նախկինում ՋՈՒ-ի գլխավոր շտաբի պետ Քենան Էլլինի կողմից հանրության առջև առաջին անգամ նույնիսկ հարցադրում արվեց ՆԱՏՕ-ին Թուրքիայի անդամակցության վերանայման մասին¹⁹:

Թուրքական բարձրաստիճան զինվորականների, չնայած հիմնականում պաշտոնաթող, կողմից հայտարարված դիրքորոշումները նշանակում են, որ թուրքական բանակի վերնախավում ներկայումս նման կերպ մտածողները քիչ չեն: Իսկ այդ միտումը հատկապես վերջին տարիներին ավելի է ակնհայտ դարձել, ինչը պայմանավորված է ինչպես ներթուրքական, այնպես էլ արտաքին քաղաքական ոլորտում տեղի ունեցող զարգացումներով: Թուրքական հասարակական-քաղաքական շրջանակներում վերջին տարիներին նկատվող բացասական վերաբերմունքն Արևմուտքի նկատմամբ իր անդրադարձն է ունենում նաև երկրի բարձրագույն զինվորականության վրա, և այն մոտեցումը, որ ավանդաբար Թուրքիայի բարձրագույն սպայակազմը եղել է ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի ռազմաքաղաքական հայացքների ու ռազմավարության կրողը, այլևս այդպես չէ: Արդեն իսկ բարձրագույն հրամանատարական շրջանակներում Արևմուտքը՝ մասնավորապես ԱՄՆ-ն ու ՆԱՏՕ-ն, չեն դիտվում որպես Թուրքիայի անվտանգության երաշխավոր, առավել ևս որ որոշ հիմնախնդիրների վերաբերյալ ունեն հակասակ դիրքորոշումներ: Այս պարագայում թուրքական զինվորականությունը սկսել է ինչ-որ չափով վերազնահատել առկա իրողությունները և առավելապես հանդես գալ սեփական աշխարհաքաղաքական ու ռազմաքաղաքական մոտեցումներով ու զործելակերպով: Բացի այդ, Թուրքիայի ազգային անվտանգության ու այլ մի շարք կարևոր հիմնախնդիրների նկատմամբ Արևմուտքի՝ հատկապես ԱՄՆ-ի, տրամազծորեն հակասակ մոտեցումների պարագայում, թուրքական զինվորական շրջանակները ինքնըստինքյան ձեռք են բերում անվտանգության ու անապահովության զգացում և ստիպված են աշխարհաքաղաքական հայացքներն ու հայեցակարգերը վերախմբագրել սեփական

¹⁹ Laçiner S., Türkiye-Avrupa İlişkilerinde Ermeni Sorunun Etkisi (1980ler), 12 Haziran 2009, <http://www.usakundem.com/ders-notu/4/1/C3%8Ctkiye-avrupa-%C4%B01%C5%9Fkiilerinde-ermeni-sorunun-etkisi-1980ler-.html>, 2. էջերն 1978-1982 քք. դեկալարել է ՋՈՒ-ի գլխավոր շտաբը, 1982-1989 քք. եղել հանրապետության նախագահ:

մոտեցումներով՝ առավելագույնս ելնելով երկրի ազգային անվտանգության շահերից ու աշխարհաքաղաքական իրենց հավակնություններից: Ուստի, այս առումով ևս թուրքական զինվորական էլիտան, ի տարբերություն նախկին ժամանակների, երբ ստիպված էր առավելապես հաշվի նստել ամերիկյան կամ ՆԱՏՕ-ական ռազմավարական շահերի հետ, սկսել է առավել անկախ մտածել ու գործել: Այս առումով, վերջին տարիներին Անկարայի կողմից իրականացվող քաղաքականությունը համահունչ է վերը նշված մոտեցումներին՝ Ուսաստանի հետ բացի քաղաքական, էներգետիկ-տնտեսական հարաբերություններից նաև ռազմատեխնիկական ոլորտում նկատվող համագործակցության զարգացում, իրանա-թուրքական բարձր մակարդակի քաղաքական հարաբերություններին զուգահեռ տնտեսական-էներգետիկ ոլորտում գործակցության ծավալների մեծացում, և ի վերջո, ինչը բացառիկ երևույթ էր, 2010 թ. հոկտեմբերին առաջին անգամ չինական կողմի մասնակցությունն Անատոլիական արծիվ (թուրք. *Anadolü kartalı*) ռազմասօդային վարժանքներին և դրանց Իսրայելի մասնակցության բացառումը Թուրքիայի կողմից: Չինաստանի ռազմասօդային ուժերի մասնակցությունն այդ զորավարժանքին ամերիկյան փորձագետ Ա. Քոհենը բացատրում է որպես Անկարայի աշխարհաքաղաքական կողմնորոշման նոր տեղաշարժի ազդանշան և իր համար «աշինգտունից բացի ռազմավարական այլ զործնկերոջ հայտնվել»²⁰:

Անկարայում ԱՄՆ դեսպանության գաղտնի դիվանագիտական հեռագրերը, որոնք քննության էին առել 2003 թ. թուրքական բարձրագույն սպայակազմում տիրող իրավիճակն ու կողմնորոշումները, նշվում էր, որ Թուրքիայի բարձրագույն սպայակազմն ու գլխավոր շտաբը գաղափարական-արժեքային, աշխարհայացքային, աշխարհաքաղաքական կողմնորոշումներով միատարր չեն: Ավելին՝ թուրքական գլխավոր շտաբում առկա է երեք

²⁰ Cohen A., The Anatolian Eagle is Looking Eastward, <http://www.arielcohen.com/articles.php?id=377>, 15.10.2010. 2001 թ. սկզբ առած և ամեն տարի կազմակերպվող «Անատոլիական արծիվ» օդային զորավարժություններն անց են կացվել հիմնականում ՆԱՏՕ-ի անդամ երկրների, Իսրայելի, ինչպես նաև ԱՄՆ-ին դաշնակից մի քանի այլ երկրների՝ Պակիստանի, Հոլանդանի մասնակցությամբ, սակայն 2009 թ. Թուրքիան արգելանք դրեց զրեք միջոտ այդ վարժանքներին մասնակցող Իսրայելական կողմի վրա, ինչը պայմանավորված էր վերջին շրջանի երկրորդ լարված հարաբերություններով:

հավանաբար խումբ: Առաջին խումբը ներկայացնում են այսպես կոչված «ատլանտիստները», որոնք պաշտպանում են Թուրքիայի սերտ ռազմաքաղաքական դաշնակցության շարունակականությունն ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի հետ: Երկրորդ խմբում համախմբված են «ազգայնականները», որոնք հարցականի տակ են դնում ԱՄՆ-ի հետ ռազմաքաղաքական հարաբերությունների անհրաժեշտությունը, քավական անվտանգաբար են մոտենում արտաքին աշխարհին ու ամենքին և պնդում են քեմալիզմի համակարգի պահպանության անհրաժեշտությունը: Մյուս խմբավորումը պայմանականորեն կարելի է կոչել «եվրասիականներ», որոնք թեև ընդհանուր գծերով ավելի մոտ են «ազգայնականներին» և համարվում են սպայակույտի ներսում ժամանակավոր դաշնակիցներ, Թուրքիայի համար արտաքին քաղաքականության ոլորտում առաջարկում են նոր այլընտրանքային դաշնակցություն Ռուսաստանի, Իրանի ու Չինաստանի հետ²¹:

Ռազմատեխնիկական մասով Թուրքիայի անկախության ծգտումների վառ դրսևորումներից մեկը սեփական ռազմաարդյունաբերության զարգացումն է, ինչը որոշակիորեն հնարավորություն կտա այդ երկրին նվազեցնել Արևմուտքից իր ունեցած կախվածությունը²²:

Անկարայի ռազմաքաղաքական ինքնուրույնության ու կարելի է ասել, նաև անկախության առումով լական քաջ էր, երբ 2003 թ. մարտին Թուրքիան մերժեց ՆԱՏՕ-ին՝ իր տարածքն օգտագործել Իրաքի դեմ պատերազմում, իսկ 2008 թ. օգոստոսի վրաց-օուսական պատերազմից հետո թուրքական կողմը մերժեց ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի ռազմածովային ուժերին Վրաստանին մարդասիրական օգնություն տրամադրելու նպատակով սնծույան նեղուցներով Սև ծով մտնել: Չնայած որ սա քաղաքական որոշում էր, այնուամենայնիվ այն առաջնահերթորեն հավանության էր արժանացել նախ զլխավոր

²¹ 2011 թ. բուրջական "Tara" թերթը հրատարակեց Wikileaks-ի՝ 2003 թ. Թուրքիային վերաբերող ամերիկյան արտաքին գերատեսչության դիվանագիտական գաղտնի փաստաթղթերից, որտեղ քննության էին առնվել բուրջական բանակին առնչվող մի շարք հարցեր: Genelkurmay'ı öçe ayırmışlar!, <http://www.haber1urk.com/gundem/haber/615002-genelekurmayi-uce-ayirmislar>, 28.03.2011.

²² Հասկանալի է այն վիստը, որ 2009 թ. դրությամբ արդեն բուրջական ՁՈՒ-ի ռազմատեխնիկական կտրիքների շուրջ 46 %-ն ապահովում է սեփական ռազմաարդյունաբերական համալիրը: Ավելի մանրամասն տե՛ս Հոլխեվյան Լ., Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմաարդյունաբերությունը, Երևան, 2010:

շտաբում, ինչը նույնիսկ անակնկալ էր ամերիկյան վարչակազմի ու որոշ գերատեսչությունների համար: Իսկ 2003 թ. հուլիսին Իրաքի Առվելմանիյա քաղաքում ամերիկյան ուժերի կողմից թուրքական հատուկ նշանակության ուժերի 11 զինծառայողների կալանավորման դեպքը Թուրքիայի ՏՈՒ-ի գլխավոր շտաբի պետ Հ. Օզքյոզը բնորոշեց որպես թուրքական և ամերիկյան ՏՈՒ-ի միջև վստահության ճգնաժամ՝ նշելով, որ չի կարծում, թե դա ուղղակի տեղային մի միջադեպ է²³: Այդ իրադարձությունները, չնայած կային ավելի խորքային պատճառներ, շրջադարձային էին ինչպես թուրք-ամերիկյան հարաբերությունների, այնպես էլ թուրքական ռազմական դեկավարության նոր ռազմաքաղաքական հայեցակարգի ու մոտեցումների որոնելու և ասումով:

Ներկայումս թուրքական քաղաքագույն սպայակազմում դրսևորվում են այլընտրանքային մոտեցումներ, որոնք վերաբերում են ինչպես արտաքին, այնպես էլ պաշտպանական քաղաքականության հիմնական սկզբունքներին ու ուղղություններին, ինչը վկայում է, որ թուրքական քաղաքագույն սպայակազմն այլևս զաղախարական-աշխարհաքաղաքական կողմնորոշումների ասումով միատարր չէ, և այդ միտումը հետագայում էլ ավելի կուժեղանա:

LEVON HOVSEPYAN

ON THE APPROACHES OF EURASIANISM AND GEOGRAPHICAL DETERMINISM IN THE TURKISH MILITARY CIRCLES

In recent years there are also revealed alternative approaches on foreign policy, regional security and defence policy in Turkish military circles. In 1990s the discussions about the Eurasia concept are practised on a large scale in the Turkish political and scientific and also military circles. For some of the Turkish supreme officers Eurasia is considered to be an important geopolitical advantage and possibility. During the Post-cold war period the military-political notions of the Turkish security to a considerable extent carried the influence of "geographical determinism", by which the particular interests and security of the country are conditioned. The Turkish politics in the security and defence spheres

²³ Altınçak B. Meliha, Özlem T., Turkey: challenges of continuity and change, London: Routledge Curzon 2005, p. 119.

considerably carries the influence of the geographical location and geopolitical environment of the country.

Studying the geopolitical opinions and approaches of Turkish military, one may say that the "Eurasian concept" and "geographical determinism" theory ranks high among the Turkish military as well. Most of the high-ranking officers shared the approach of political figures that Turkey is a Eurasian country and must run an adequate policy. In this sense General T. Kılıç's statement was strictly characteristic that in the foreign policy sphere Turkey must adopt a new alternative "Eastern approach" according to which Russia, Iran and China can become Eurasian military axis of Turkey. And this already expressed the position asserted by some Turkish high ranking soldiers and meant that in the Turkish army ruling clique such thinkers were not few. And in recent years this tendency became evident which is conditioned by the developments both in the internal and external policies. Besides, in case of diametrically opposite approaches of the West, especially the USA, the Turkish military circles in themselves acquire the sense of distrust and insecurity and are forced to reedit geopolitical opinions and conceptions by their own approaches maximally in the interests of the national security and geopolitical pretensions of the country.

ՎԱՆՐԱՍ ՏԵՐ-ՄԱՅԵՎՈՍՅԱՆ


«ՎԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ-ԺՈՂՎՈՂԱԿԱՆ» ԿՈՄՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1960-2010 թթ., ԹՈՒՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՎՄՆԱԴՐԱԾ ԿՈՄՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՐԱՎՈՒՆՄԱՆ ԿԵՆ ԴԱՐԸ

Ներածություն: Թուրքիայի Հանրապետության քաղաքական պատմության ուսումնասիրության ցանկացած նախածեռնություն ամբողջական չի ստացվի, եթե թերազնահատվի Թուրքիայի հանրապետական վարչակարգի հիմնադիր «Հանրապետական ժողովրդական» կուսակցության (Cumhuriyetçi Halk Partisi - ՀԺԿ) ունեցած դերակատարումը: 1923 թ. Սուբաֆա Քեմալի կողմից հիմնադրված կուսակցությունը մինչև 1950 թթ. երկրի իշխող կուսակցությունն էր, իսկ հետագա տասնամյակների ընթացքում այդ կուսակցությանը միայն կարճ ժամակահատվածով, այն էլ որպես կռաւիցիոն կառավարությունների մաս հաջողվեց ստանձնել իշխանության դեկը: 1950-1960 թթ. ՀԺԿ-ի ղեկավարության և հատկապես Իսմեթ Ինոնյուի համար դարձավ կարևոր ժամանակահատված կուսակցության դերի վերաիմաստավորման ու նախկին պետականակենտրոն քաղաքականությունից մասամբ հրաժարվելու առումներով: 1960-ական թթ. ՀԺԿ-ն ուրք դրեց սեփական դերի վերաիմաստավորման հրամայականի գիտակցմամբ ու կարևորմամբ: Հետևապար, 1960-ից 2010 թթ. ընկած հինգ տասնամյակների ընթացքում ՀԺԿ-ն անցավ երկար ճանապարհ քաղաքական ինքնության ու համապատասխան գաղափարախոսական փնտրտուքի ուղղություններով: Նշված ժամանակահատվածը բուժն էր ներքաղաքական իրադարձությունների առումով ևս, հինգ ռազմական միջամտություններ, 11 խորհրդանական ընտրություններ, 36 կառավարություններ, երկու սահմանադրություն, իսլամականության և քրդական անջատողականություն վերելք, Եվրաիւնտեգրման գործընթաց և այլն: Սույն հոդվածը նպատակ ունի վեր հանել ՀԺԿ-ի վերջին հինգ տասնամյակի պատմության ուշագրավ դրվագները, ցույց տալ խորհրդարանական ընտրություններում այդ կուսակցության մասնակցության արդյունքները, գաղափարական վերակողմնորոշման ու փնտրտուքի հետևանքները և այլն: Ուշագրավ է, որ

քեմալականության ու հանրապետական-աշխարհիկ կարգերի անխտախտելիության դիրքերից հանդես եկող ՀԺԿ-ն տվյալ ժամանակահատվածում միայն 3 անգամ է խորհրդարանական ընտրություններում ստացել ամենաշատ քվեներ և միայն 8 անգամ է հաջողվել կազմել կառավարություն՝ այն էլ այլ կուսակցությունների հետ միասին: Հողվածում կփորձենք պատասխանել հետևյալ հարցերին.

ինչպիսի՞ գաղափարաքաղաքական վերակողմնորոշումներ է ունեցել ՀԺԿ-ն 1960 թ. ի վեր և ինչպե՞ս են այդ քայլերն արտացոլվել խորհրդարանական ընտրությունների արդյունքներում: Մեր կարծիքով, 1960 թ. ի վեր ընթացող ներքաղաքական քազմաշերտ գործընթացներում ՀԺԿ-ի գաղափարական վերակողմնորոշումները հասկանալու համար հարկավոր է խնդրո ածարկա ժամանակահատվածը բաժանել երեք պայմանական փուլերի՝ 1960-1980 թթ., երբ ՀԺԿ-ն դանդաղ, սակայն հստակորեն կողմնորոշվեց իր գաղափարական վերադիցավորման հարցում՝ ապավինելով «ձախ կենտրոնամետության» և «ձախ ժողովրդավարության» սկզբունքներին. երկրորդ շրջանը՝ 1980-1992 թթ., երբ կուսակցությունը, լինելով փակված, կարողացավ այլ անվան ներքո և ավանդույթի ուժով հասարակությանը ներկայանալ որպես քեմալիզմի ու «ձախ կենտրոնամետության» համադրմանը ձգտող քաղաքական ուժ, և վերջին՝ 1992-2010 թթ., երբ վերածնված կուսակցությունը փորձում է որդեգրել ընտրազանգվածի համար դյուրնկալելի և քաղաքական դաշտի համար մրցունակ գաղափարախոսական հենք, որի արդյունքներն տակավին ունեն հստակության կարիք:

Աղյուսակ 1՝ ՀԺԿ-ի պատգամավորական մանդատները ԹԱՄԺ-ում՝ 1961-2007 թթ.



1. ՀԺԿ-ն 1960-1970-ական թթ.

1960-1970-ական թթ. ՀԺԿ-ի գործունեության և գաղափարական կողմնորոշման հիմք հանդիսացավ 1957 թ. ՀԺԿ-ի 14-րդ համագումարի ժամանակ ընդունված «Առաջնային նպատակների հռչակագիրը» (*/// Kodzgher beyannamesi*): Հռչակագրում տեղ գտած սոցիալական լրջագույն վերափոխումների, օրենքի ու կարգուկանոնի սահմանադրական երաշխիքների ապահովման, կառավարման մեթոդներում նվազ քյուրկլոնատականության մասին կարևոր դրույթները հետագայում հանգամանորեն արտացոլվեցին 1961 թ. սահմանադրությունում: Հարևան է նաև, որ 1960 թ. մայիսի 27-ի օազմական առաջին հեղաշրջման պլանավորման ու իրականացման գործընթացում ՀԺԿ-ն՝ ի դեմս նրա առաջնորդ Իսմեթ Ինոյուի, ունեցավ կարևոր դերակատարում հանրային տրամադրությունների ուղղորդման առումով: ՀԺԿ-ի քանցելի շնորհիվ 1961 թ. սահմանադրությունում քաղաքացու իրավունքների պաշտպանության մասին ընդհանուր դրույթներից բացի առաջին անգամ նշվում էին քաղաքացու սոցիալական ու տնտեսական իրավունքների, միությունների կազմավորման, աշխատավորների իրավունքների պաշտպանության, գործադուլների կազմակերպման ու արհմիությունների ձևավորման, ինչպես նաև խոսքի ու ազատ կամարտահայտության պաշտպանության մասին դրույթները: Նոր սահմանադրության մեջ տեղ գտած մի շարք նորամուծություններ պատկանում էին ՀԺԿ-ին, ինչպես օրինակ՝ երկպալատ խորհրդարանի ձևավորումը, համամասնական ներկայացուցչության հիմնումը, Սահմանադրական դատարանի հիմնադրումը, տնտեսական պլանավորումը և այլն:

Նույն 1961 թ. օգոստոսին կայացած ՀԺԿ-ի տասնհինգերորդ համագումարում ընդունվեց կուսակցության նոր ծրագիրը, որը հիմնված էր հիշյալ հռչակագրի առանցքային դրույթների վրա, որոնցից առավել ուշագրավները ներառվել էին սահմանադրության մեջ: Լյսինքն, այս անգամ ևս, ինչպես 1930-ական թթ., ՀԺԿ-ի կուսակցական ծրագրային դրույթները միավորեցին համապետական նշանակության փաստաթղթի հետ: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ թե՛ 1957 թ. ՀԺԿ-ի Հռչակագրի, թե՛ 1961 թ. սահմանադրության և թե՛ ՀԺԿ-ի ծրագրային դրույթներում վերափոխարարվում էր նաև քեմալիզմը: Հատկապես ՀԺԿ-ն համալրած նոր սերնդի ներկայացուցիչները ցանկանում էին վերանայել քեմալականության հիմնական վեց

դրույթները և դրանց հարակից գաղափարախիխսովայական սկզբունքները՝ ցանկանալով կուսակցության գաղափարախոսությունն ասավել հեռացնել ընդգծված պետականակենտրոն դիրքորոշումից: Նոր սերունդը քանկանում էր նաև նվազեցնել քեմալականության վերնախավային ու պահապան գաղափարախոսության ընկալումը, ինչպես նաև քեմալիզմի արժեհամակարգի հիմնական առանցքային դրույթները: Ըստ նոր ուղղվածության աջակիցների, հիմնականում ՀԺԿ-ի «ծագող աստղեր» Շյուքրու Բյոչի, Մուսթաֆա Օքի, Թուրհան Գյունեշի, Թուրհան Ֆեյզիօղլուի և Մուսթաֆա Բյուլենթ Էջևիթի, քեմալականությունը ունեցել է դրական մտադրություններ, սակայն դրանցից ոչ մեկը չի իրականացվել, որի պատճառով այն արդարացի կերպով ընկալվել է որպես երկրի արդիականացմանն ու ասացադիմությանը խոչընդոտող գաղափարական կապանք:

Թվում էր, թե նոր քաղաքական իրավիճակի ստեղծման գործում ՀԺԿ-ի ունեցած դերակատարումը պետք է գնահատվեր ընտրազանգվածի կողմից, սակայն 1961 թ. հոկտեմբերի 15-ի խորհրդարանական ընտրություններում ՀԺԿ-ն ստացավ քվեների 36,4 տոկոսը (173 պատգամավորական մանդատ), որն իրականում ավելի քիչ էր քան 1957 թ. ընտրություններում կուսակցության ստացած 41,12 տոկոս քվեները: Մինչև 1965 թ. Իսմեթ Ինոնյուն ղեկավարեց 3 կուլիցիոն կառավարություններ: Իշխանության տարիներին Ինոնյուն չհաջողվեց իրականացնել իր խոստացած բարեփոխումները, չնայած թույլ կուլիցիոն կառավարությունները ևս պարարտ մթնոլորտ չէին ստեղծում արդյունավետ քաղաքականություն իրականացնելու համար: Այս տարիներին կուսակցության շարքային անդամներն սկսեցին կուսակցության ղեկավարությանը մեղադրել ճայրահեղ պահպանողականության և լճացման հիմքեր ստեղծելու համար¹: Գաղափարական կողմնորոշման հարցը նույնպես շարունակեց ակտիվորեն քննարկվել Ինոնյուի վարչապետության տարիներին, երբ կուսակցության ղեկավարության համար խնդիր դարձավ «վերնախավային կուսակցությունը դարձնել զանգվածային»²: Նման աննախադեպ ինքնաքննադատությունն անհետևանք չէր կարող մնալ, ուստի, օրինալափ էր 1964 թ. հոկտեմբերին տեղի ունեցած ՀԺԿ-ի

¹ Ahmad Feroz, *The Turkish Experiment in Democracy*, London, 1977, p. 250.

² Ciddi Sinan, *Kemalism in Turkish Politics: Republican People's Party, secularism and nationalism*, Routledge, London, 2009, p. 48.

տասնվեցերորդ համագումարում կուսակցության ծրագրային դրույթներում նոր գաղափարախոսական շեշտադրման՝ «ձախ կենտրոնամետություն» (*ortamın solı*) տեղմինի ի հայտ գալը: Նոր տեղմինն առավել մանրամասն ներկայացվեց 1965 թ. հուլիսի 25-ին «Ալիլիեթ» (*Milliyet*) օրաթերթում տպագրված Բ. Էջևիթի մեկնաբանությունում³: Կարծիք կա, որ Էջևիթի ձախակողմյան հայացքների ձևավորման վրա զգալի ազդեցություն է գործել «Յոն» (*Yön*) շաբաթաթերթը, որտեղ 1961 թ. ի վեր տպագրվում էին երկրի հասարակական ու քաղաքական կյանքում աճող ազդեցություն վայելող ձախ ուղղվածության մտավորականները⁴:

1965 թ. հոկտեմբերի 10-ի խորհրդանական ընտրություններում ՀԺԿ-ն տաքցավ քվեների 28,75 տոկոսը (134 պատգամավորական մանդատ)՝ 106 պատգամավորական մանդատով զիջելով ընտրություններում առաջին հորիզոնականը գրաված Արդարություն կուսակցությանը (*Adalet partisi* - ԱԿ): Այս պարտությունը կանխորոշեց ՀԺԿ-ում տարիներ շարունակ հասունացած գաղափարական ու քաղաքական վերակողմնորոշումների ավելի ինտենսիվ ընթացքը: Ներկուսակցական սերնդափոխությունը, հասարակությունում տեղի ունեցող սոցիալական ակտիվ վերադիրթավորումները, երկրի ներսում միգրացիոն տեղաշարժերը պարարտ հող նախապատրաստեցին ներկուսակցական խորջային գործընթացների համար: Գաղափարախոսական ընտրությունը կանգ էր առել երեք տարբերակների վրա՝ «ձախ կենտրոնամետության», «սոցիալ-դեմոկրատիայի» և «ձախակողմյան» ուղղվածության վրա, թեև այդ տեղմինները փոխարինաբար օգտագործվել են 1960-1970-ական թթ.: Այնուհանդերձ, եթե Ինոնյուն փորձում էր այդ տեղմինների մեջ փոխզիջում գտնել, ապա Էջևիթի նախապատվությունը հստակորեն «ձախ կենտրոնամետության» օգտին էր: Ս. Ջիլին նշում է, որ, հենվելով 1964-1969 թթ. Բ. Էջևիթի տարբեր ելույթների վրա, դժվար էր ճշգրտությամբ ընկալել «ձախ կենտրոնամետություն» գաղափարական ուղղվածության էությունը⁵: Ավելին, հղում կատարելով «Ջումհուրիեթ» (*Cumhuriyet*) օրաթերթի հրատարակմանը,

³ Ahmad Feroz, *The Turkish Experiment ...*, p. 251.

⁴ Nurhan Ince and Robert Olson, *Yön and its Influence on the leftist movement in Turkey and Foreign and Domestic Policy 1960-1964*, *Turcoica: Revue D'etudes Turques*, t. XII, 1980, p. 188.

⁵ Ciddi Shan, *Kemalism in Turkish Politics...*, p. 48.

նշվում է, որ շրջանառության մեջ էին դրված «ծախ կենտրոնամետ» տերմինի վերաբերյալ 27 ձևակերպումներ ու մեկնաբանություններ⁶:

1966 թ. տեղի ունեցած կուսակցության տասնութերորդ համագումարում, 1961-1964 թթ. երկրի աշխատանքի նախարար աշխատած Բ. Էջևիթը, Իսմեթ Ինոնյուի բացահայտ օժանդակությամբ, ընտրվեց կուսակցության գլխավոր քարտուղար⁷: 1969 թ. ընտրությունների նախօրեին Բյուլենթ Էջևիթը շրջանառության մեջ դրվեց «ծախ ժողովրդավարություն» տերմինը, որը 1970-ական թթ. դարձավ ՀԺԿ-ի քաղաքական հետտորաբանության հիմնական տերմիններից մեկը: 1969 թ. հոկտեմբերի 12-ի ընտրություններում ՀԺԿ-ն ԱԿ-ին զիջեց այս անգամ արդեն 113 մանդատով՝ ստանալով քվեների 27,37 տոկոսը: Ընտրություններում կրած հեթոթական պարտությունը և երկու տարի անց 1971 թ. մարտի 12-ի ռազմական հեղափոխությունը էլ ավելի ամրապնդեց Բյուլենթ Էջևիթի ու նրա գաղափարակիցների կողմից պաշտպանվող «ծախ ժողովրդավարության» և «ծախ քեմալիզմի» սկզբունքները⁸: Այդ իրադարձությունների հետևանքով կուսակցության ղեկավար կազմում գիտակցեցին, որ հարկավոր է հնավորինս հեռու դիրքավորվել «պետական ավտորիտարիզմից» ու որդեգրել հասարակական կացութաձևերի ու տնտեսական համակարգերի փոխակերպման արևմտաեվրոպական, հատկապես սկանդինավյան ու գերմանական սոցիալ-դեմոկրատական առավել հաջողված մոդելները: Նրանք նաև նպատակ դրեցին փոխարինել ԱԿ-ին, որը տարիներ շարունակ ընկալվում էր որպես ընտրազանգվածի հիմնական տրամադրությունները ներկայացնող զանգվածային կուսակցության: Գլխավոր քարտուղար ընտրվելուց հետո Էջևիթը ցանկանում էր նաև ՀԺԿ-ն «անհատների կուսակցությունից» դարձնել «գաղափարների կուսակցություն»: 1972 թ. մայիսին կուսակցության առաջնորդի պաշտոնում Էջևիթի ընտրվելուց ու Ինոնյուի 34-ամյա ղեկավարման

⁶ Ahmad Feroz, *The Turkish Experiment in Democracy ...*, pp. 253-254.

⁷ Kirişiođlu Suzal, Bülent Ecevit: Transformation of a politician, *Turkish Studies*, v. 1, № 2, 2000, p. 2.

⁸ Քեմալիզմի այլընտրանքային մեկնաբանությունների և Բ. Էջևիթի գաղափարական կողմնորոշման մասին մանրամասն տե՛ս Vahram Ter-Melevoşyan, *The Kemalist Discourse in Turkey Between 1960 and 1980: Challenging the Republican Ideology?*, *Եվրոպացիտական և օսմանագիտական հետազոտություններ*, հ. IV, 2006, էջ 85-102:

շրջակույի ավարտից հետո կարճ ժամանակահատվածում ՀԺԿ-ն կարողացավ նոր լույսի ներքո ներկայանալ ընտրագանգվածին:

1973 թ. հոկտեմբերի 14-ի ընտրություններում ՀԺԿ-ն ստացավ քվեների 33,29 տոկոսը (185 պատգամավորական մանդատ)՝ իլավամետ «Ազգային փրկություն» կուսակցության հետ կազմելով կուպիցիոն կառավարություն: Ընտրություններում տարած հաղթանակը ՀԺԿ-ի նոր մարտավարության արդյունքն էր, որի ղեկավար կազմը որոշեց որդեգրել ընտրագանգվածի հետ աշխատանքի ԱԿ-ի մեթոդները, որն ենթադրում էր հովանավորություն, ամբոխահաճո խոստումների ու պարտավորությունների ստանձնում և քաղաքային քնակչության հետ առանձնահատուկ աշխատանքի իրականացում: Պակաս կարևոր չէր նաև «Աշխատանքային արհիմությունների թուրքական համադաշնություն» (Türk-İş) հայտնի արհմիության աջակցությունը ՀԺԿ-ին, որի շնորհիվ քաղաքականապես ակտիվ աշխատավորական գանգվածները լրջորեն սատար կանգնեցին ՀԺԿ-ի ծրագրային դրույթների հրապարակայնացման գործին: Թեև այդ կառավարությունը գոյատևեց ընդամենը 11 ամիս՝ 1974 թ. հունվարից նոյեմբեր ամիսները, այնուհանդերձ էջիթին հաջողվեց լրջորեն խախտել քաղաքական դաշտի դիդեպվորումները և նորովի ներկայացնել իր կուսակցության շահերը: 1976 թ. մարտին ՀԺԿ-ի 23-րդ համագումարում Բյուլենթ էջևիթն էլ ավելի բյուրեղացրեց 1961 թ. ծրագրային դրույթներում առաջ քաշված դրույթները: Մերժելով զարգացման մարքսիստական և կապիտալիստական մոդելները՝ ՀԺԿ-ի նոր ծրագրում նորովի մեկնաբանվեցին քեմալիզմի «ժողովրդականություն» (*halkçılık*) և «էտատիզմ» (*etatizm*) տերմինները՝ ապացուցելու համար, որ գյուղաքնակ և քաղաքաքնակ քաղաքացիներն ունեն շահերի տարբերակված աստիճանակարգ և քեմալիզմի ծրագրային դրույթների ոչ նույնական ընկալում: Ուշագրավ է, որ Բ. էջևիթի կողմից «ձախ ժողովրդավարություն» տերմինի ներմուծման ու քեմալիզմի «էտատիզմ» սկզբունքի վերանայման պահանջի միջև ՀԺԿ-ի ուսումնասիրողները չեն նկատել ակնհայտ հակասություններ: Բ. էջևիթի առաջարկած «ձախ ժողովրդավարությանը» հնարավոր էր հասնել միայն դասական «էտատիզմի» ամբողջական կիրառման շնորհիվ, այսինքն, այն դեպքում, երբ պետությունը կկարողանար լիարժեք ուղղորդել տնտեսության գերական ճյուղերը և կարգավորել դասային պայքարը: Լլջ կերպ, 1930-ական թթ., այսինքն քեմալիզմի պաշտոնական

պետական գաղափարախոսության վերածվելու տարիներին անգամ էտատիզմի սկզբունքը դիտվեց ոչ հեռանկարային և երկրի տնտեսավարող սուբյեկտներն ընդդիմացան դրա ամբողջական կիրառմանը: Չորս տասնամյակ հետո Բ. Էջևիթն, ըստ էության, ծգտում էր վերաքաշխել պետական ու հանրային հարստությունը և նորոպի հաստատված պետական կարգավորման շնորհիվ հասնել զարգացած սոցիալ-դեմոկրատական մոդելի կիրառմանը, որը բնականաբար հանդիպելու էր երկրի արդյունաբերական հսկաների, խոշոր հողատերերի ու ազդեցիկ ձեռներեցների դժգոհությանը: Այլ խոսքերով, Էջևիթի կողմից առաջարկված հասարակական կացութաձևի տնտեսական քաղաղրիչը նրա ծրագրային դրույթների ամենախոցելի քաղաղրիչն էր:

1970-ական թթ. Թուրքիայում քնորոշվում են որպես գաղափարական-քաղաքական բնեռացման ու ժայռահեղ գաղափարախոսությունների հակամարտության տարիներ: Թեև քաղաքական դաշտում գործող բոլոր ուժերն էլ ընդգծում էին սոցիալական արդարության ու հավասար հնարավորությունների մասին, միայն ՀԺԿ-ին հաջողվեց հայեցակարգային կերպով մատուցել «ժախ ժողովրդավարության» մասին առավել մշակված ու հասարակության լայն զանգվածների համար առավել ընդունելի ծրագիրը: Թերևս դա էր պատճառը, որ 1970-ական թթ. Էջևիթին հաջողվեց ևս երկու անգամ որպես ՀԺԿ-ի նախագահ ստանձնել վարչապետի պաշտոնը՝ 1977 թ. հունիս-հուլիս ամիսներին, երբ հունիսի 5-ի ընտրությունների արդյունքում ՀԺԿ-ն ստացել է քաղմակուսակցական համակարգի ընթացքում ամենաշատ քվեները և պատգամավորական մանդատները՝ համապատասխանաբար 41,39 տոկոս և 213: Այնուհանդերձ, 1961 թ. սահմանադրության համաձայն 450 պատգամավորից բաղկացած խորհրդարանում կառավարություն կազմելու համար նրա քվեները բավական չէին, ուստիև, կարճատև դեկավարումից հետո, 1977 հուլիս – 1978 թ. հունվար ընկած ժամանակահատվածում երկրի վարչապետն էր Սուլեյման Դեմիրելը՝ ԱԿ-ի ղեկավարը: 1970-ական թթ. ՀԺԿ-ի կառավարման ամենաերկար շրջանը 1978 թ. հունվարից – 1979 թ. նոյեմբեր ընկած 22-ամյա կառավարման ժամանակահատվածն էր, որն երկար ժամանակահատված էր բռնություններով ու քաղաքական քախումներով բնութագրվող 1970-ական թթ. համար: Աջակողման և աջ կենտրոնամետ կուսակցությունների կողմից Բ. Էջևիթի հասցեին հնչող հիմնական քննադատությունը՝ վերջինիս կողմից սոցիալական դասերի

բաժանման հիման վրա երկրի կառավարումն իրականացնելու քաղաքականությունն էր, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ շոշափելի քայլեր չձեռնարկելը և մեծ քիզնեսի զարգացմանը խոչընդոտելը⁹ :

Ավելին, ինքնատիպ զուգահեյաության մեջ երկրի վարչապետության տարիներին Թուրքիայի տնտեսությունը զրեթե մշտապես ունեցել է խորը ցնցումներ¹⁰, որոնց ամենավերջին դրսևորումը 2001 թ. փետրվարյան ֆինանսատնտեսական ճգնաժամն էր, երբ երկրի վարչապետը կրկին ելկիթն էր: Հայտնի թուրք քաղաքագետ Սունա Քիլին, ամկուիելով ՀԺԿ-ի գործունեությունը 1960-1970-ական թթ., նշում է, որ Բ. Էլկիթը, ծգտելով «ծախ կենտրոնամետության» միջոցով համակարգել և քարմացնել քեմալիզմի վեց դրույթները, ստացալ քեմալիզմի գաղափարախոսության, Արևմտյան սոցիալ-դեմոկրատիայի և թուրք հասարակության աճող ակնկալիքների միախուսված համակարգ¹¹ :

2. Զախակողմյան ուժերի տարանջատման փուլը

1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումը նոր էջ բացեց Թուրքիայի քաղաքական պատմության մեջ: Հեղաշրջումից երկու ամիս անց Բ. Էլկիթը հրաժարական տվեց կուսակցության նախագահի պաշտոնից, իսկ մեկ տարի անց երկրի թուրք քաղաքական կուսակցությունների գործունեությունը կասեցվեց, որի արդյունքում երկրի հիմնադիր կուսակցությունը ևս զրկվեց քաղաքական գործընթացներին մասնակցելու իրավունքից: 1982 թ. նոյեմբերյան սահմանադրության անցումային դրույթների համաձայն՝ 1970-ական թթ. ակտիվ քաղաքական գործունեության ծավալած 723 անձ ընդմիշտ, 242 քաղաքական գործիչներ 10 տարով, իսկ 481-ը՝ 5 տարով զրկվեցին քաղաքականությամբ զբաղվելու իրավունքից, իսկ փակված կուսակցությունների անվամբ նոր կուսակցությունների վերաքացումը ևս 10 տարով արգելվեց: Զինվորականների եռամյա իշխանությունից հետո իրականացվեցին երկրի քաղաքական կյանքի

⁹ Kınıkdoglu Suzel, Bülent Ecevit: Transformation..., p. 4.

¹⁰ Рабинович Алексей, Турция: перекресток судеб: Воспоминания посла, Москва, 2006, с. 163, 204.

¹¹ Suna Kil, Kemalism in Contemporary Turkey, International Political Science Review, v. 1, №. 3, 1980, p. 398.

վերակենդանացման փորձեր և կուսակցություններ ստեղծելու թույլտվությանը հետևեց 15 նոր կուսակցությունների ստեղծումը: Ստեղծված կուսակցությունների շարքում մեզ առավել հետաքրքրում է 1981 թ. փակված ՀԺԿ-ի անդամների քաղաքական վերակողմնորոշման հարցը: Ուշագրավ է, որ 1983 թ. մայիսի 19-ին նախկին ՀԺԿ-ի անդամները հիմնադրեցին «Ժողովրդական» կուսակցությունը (*Halkçı Parti*)՝ նախ Նեջդեթ Չալփի, ապա Այդըն Գյուլեն Գյուլքանի գլխավորությամբ, որին մյուս երկու կուսակցությունների հետ միասին թույլատրվեց մասնակցել 1983 թ. նոյեմբերյան խորհրդարանական ընտրություններին: Հուլիսի 6-ին նախկին ՀԺԿ-ի կրիզը հիմնադրեց «Սոցիալ-դեմոկրատական» կուսակցությունը (*Sosyaldemokratik Parti*)՝ Իսմեթ Ինճնյուի որդու՝ Էրդայի գլխավորությամբ, որը քաղաքական դաշտում դիրքավորվեց որպես ՀԺԿ-ի իրավահաջորդ՝ որդեգրելով քեմալիզմի վեց դրույթները որպես կուսակցության գաղափարական խողիղղանիշներ¹²: 1985 թ. նոյեմբերի 4-ին նախկին ՀԺԿ-ում Էջևիթի կողմնակիցները հիմնադրեցին «Չախ ժողովրդավարական» կուսակցությունը (*Demokratik Sol Parti - ՉԺԿ*)՝ Բյուլեն՝ Էջևիթի կնոջ՝ Ռահշանի գլխավորությամբ: Հասկանալի է, որ վերջինիս անվանադրման և կուսակցական շինարարության գործը վերապահված էր քաղաքական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկված Էջևիթին՝ ում ժամանակավորապես օգնելու էր իր կինը: Քննըլլողուի դիտարկմամբ՝ «Էջևիթը հիմնադրեց ՉԺԿ-ն այն հույսով, որ վերջինս դառնա բացառապես իր կուսակցությունը»¹³, որի պատճառով այն վերածվեց «ամուսինների կուսակցության»՝ փաստորեն չստեղծելով կուսակցության՝ որպես ֆորմալ հաստատութենական կառույցի հիմքեր:

1984 թ. մարտին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում «Սոցիալ-դեմոկրատական» կուսակցությունը ստացավ քվեների 23.4 տոկոսը (մոտ 4,5 մլն. քվե), որն երկրորդ արդյունքն էր «Մայր հայրենիք» կուսակցությունից հետո¹⁴: ՏԻՄ ընտրություններում այդ կուսակցության ստացած քվեները բավական բարձր ցուցանիշ էր, որը վկայում էր ծախսակողմյան քաղաքական ուժի աճող հեղինակության մասին: 1985

12 Yegilada Birol Afi, Problems of political development in the Third Turkish Republic, Polity, Winter, 1988, v. 21, № 2, p. 359.

13 Kınıklıoğlu Suel, Bülent Ecevit: Transformasyon..., p. 12.

14 Cumhuriyet, 26-28 mart 1984.

թ. նոյեմբերի 3-ին «ժողովրդական» և «Սոցիալ-դեմոկրատական» կուսակցությունները միավորվեցին, ստեղծելով «Սոցիալ-դեմոկրատական ժողովրդական» կուսակցությունը (*Sosyaldemokratik Halkçı Parti* – ՍԴԺԿ)՝ երդալ Ինոնյուի գլխավորությամբ, որն էլ հետագա մի քանի տարիների ընթացքում դարձավ փակված ՀԺԿ-ի լիարժեք իրավահաջորդ քաղաքական ուժը: Ուշագրավ է, որ նորաստեղծ կուսակցության միավորման բանակցությունների ժամանակ է. Ինոնյուն և Գ. Գյուլըքենը հորդորեցին Բյուլենք էջևիթին ստանձնել նոր կուսակցության ղեկավարումը¹⁵, ի հեճուկս քաղաքականությամբ զբաղվելու վերջինիս վրա գործող արգելանքի: Բյուլենք էջևիթը սակայն մերժեց այդ կոչը և շարունակեց անուղղակիորեն մասնակցել իր կնոջ կողմից ղեկավարվող կուսակցության կազմակերպական աշխատանքներին՝ հուսալով, որ ռազմական հեղաշրջման պատճառով անավարտ մնացած իր գործը հնարավոր կլինի շարունակել միայն այդ ճանապարհով: Մեկ այլ կարևոր փաստ էր այն, որ հիշյալ վերոհիշյալ երկու կուսակցությունների միավորման ժամանակ «ժողովրդական» կուսակցության 114 պատգամավորներից ոչ բլրորը անդամակցեցին ՍԴԺԿ-ին՝ 33-ը դարձան անկախ պատգամավորներ, իսկ 4-ը միացան «Չախ ժողովրդավարություն» կուսակցությանը¹⁶:

1987 թ. մյուս քաղաքական գործիչների հետ միասին քաղաքականության զբաղվելու արգելանքը վերացվեց նաև էջևիթի վրայից և նա իրավունք ստացավ վերադառնալ ակտիվ քաղաքականություն: Այսպիսով, ինչպես կարելի է նկատել, 1980-ական թթ. ՀԺԿ-ի ներուժը պատակաված էր ու ներկայացված երկու մեծ հոսանքների ղեկավարների տեսքով՝ երդալ Ինոնյուի և Բյուլենք էջևիթի: Ջիդին նշում է, որ 1980-ական թթ. նախկին ՀԺԿ-ի պատակտման պատճառը Բ. էջևիթն էր ու նրա իդեալիստական պատկերացումները քաղաքական պայքարի ծավալման մասին ու անվստահության և անզամ ատելության զգացումը նախկին ՀԺԿ-ի անդամների հանդեպ¹⁷: Ավելին. քաղաքական գործընթացներից լինելով քավական հեռու, Բյուլենք էջևիթը չկարողացավ 1987 թ. նոյեմբերի 29-ի ընտրություններին նախորդող ժամանակահատվածում

¹⁵ Ciddi Siran, *Kemalism in Turkish Politics...*, p. 74.

¹⁶ Yeğilada Bırol Ail, *Problems of political development ...*, p. 369.

¹⁷ Ciddi Siran, *Kemalism in Turkish Politics...*, pp. 75-76.

մեկտեղել կուսակցության ռեսուրսները և ստացավ քվեների 8,27 տոկոսը՝ չկարողանալով հաղթահարել 10 տոկոսանոց ընտրաշեմը: Փոխարենը, ՀԺԿ-ի իրավահաջորդ ճանաչված ՄԴԿ-ն ստացավ քվեների 24,74 տոկոսը (99 պատգամավորական մանդատ) կարողացավ խորհրդարանում դառնալ երկրորդ մեծության խմբակցությունը: Այսպիսով, ընտրություններում երկու կուսակցությունների ստացած քվեները միավորելիս նկատում ենք, որ նախկին ՀԺԿ-ի գաղափարախոսությունից սերող կուսակցությունները միասին ստացել են 33 տոկոս, որը բավական բարձր ցուցանիշ էր: Այս պարագան խոսում է նաև երկու տասնամյակ շարունակ Բ. Էջևիթի հեշտակած սոցիալ-դեմոկրատական հասարակարգի ստեղծման գաղափարին հասարակությունում առկա աջակցության մասին: Հետագա տարիներին սակայն Բյուլենք Էջևիթը երբեք հավակնություն չներկայացրեց ՄԴԿ-ի հետ միավորվելու վերաբերյալ, ավելին շարունակում էր քննադատել վերջինիս քաղաքականությանը: ՄԴԿ-ի քաղաքական հայացքները քրդական ու այլսիների հարցերի կապակցությամբ տարբերվում էին մյուս կուսակցություններից, քանի որ կուսակցության ղեկավարությունը դեմ էր նրանց մշակութային ինքնավարություն շնորհելուն¹⁸: Արդ, ՄԴԿ-ն ևս ապրում էր ներկուսակցական պատակտումների ու ճյուղավորումների ժամանակաշրջան, որն հիմնականում արտահայտվում էր կուսակցության նախագահ՝ Էրդալ Ինոյուփի, գլխավոր քարտուղար՝ Դենիզ Բայքալի և երրորդ քնի՝ «առաջադիմականների» միջև ընթացող պայքարով: Հակասություններն առնչվում էին նաև այնպիսի խնդիրների, ինչպիսիք էին ՄԴԿ-ի խորհրդանիշները, հատկապես քեմալիզմի խորհրդանիշ համարվող վեց սկզբունքները և «վեց նետերից» բաղկացած նրա կարմիր կուսակցական դրոշը: Ուշագրավ է, որ միավորված «ժողովրդական» կուսակցության ղեկավար Գյուլբանի թևը կողմ էր «վեց նետերից» ազատվելու գաղափարին, մինչդեռ է. Ինոյուփի կարծիքով՝ «վեց նետերը» ընտրազանգվածին գրավելու ամենաարդյունավետ միջոցն էր: Կուսակցության անդամները համակարծիք չէին նաև քեմալիզմի վեց դրույթների մեկնաբանման վերաբերյալ, հատկապես սուր էին քննարկումները

¹⁸ Ayata Sencer & Ayata Ayge-Gönes, *The Centre-Left in Turkey*, Turkish Studies, 2007, v. 8, № 2, p. 217.

«աշխարհիկություն» (*İstiklik*) ու ազգայնականության (*milliyetçilik*) սկզբունքների մեկնաբանության շուրջ¹⁹։

1991 թ. հոկտեմբերի 20-ին տեղի ունեցած ընտրություններում ՍԴԿ-ն ստացավ 20,75 քվե (88 պատգամավորական մանդատ) և Սուլեյման Դեմիրելի ղեկավարած «Ճշմարիտ ուղի» կուսակցության հետ կազմեց կոալիցիոն կառավարություն, որը գոյատևեց մինչև 1995 թ.։ Կոալիցիոն հուշագրում է. Ինոնյուն պահանջեց թույլատրել նախկին կուսակցությունների վերաբացումը, որի շնորհիվ 1992 թ. հունիսին վերաբացվեց ՀԺԿ-ն անվամբ նոր կուսակցություն, որի ղեկավար ընտրվեց Դենիզ Բայքալը։ Կուսակցական գաղափարախոսությունը ստացավ «Նոր ծախ» (*Yeni Solu*) անվանումը, որի հիմնական սկզբունքներն արտացոլված էին Դենիզ Բայքալի և Իսմայիլ Ջեմի հեղինակած համանուն գրքում²⁰։ Շուտով ՍԴԿ-ի պատգամավորներից մի քանի տասնյակը շտապեցին անդամակցել վերաբացված ՀԺԿ-ին, որը դարձավ խորհրդարանական կուսակցություն։ 1992-1995 թթ. երկու գաղափարակից կուսակցությունները գոյակցեցին, ավելին, 1994 թ. լույս տեսած ՀԺԿ-ի ծրագրում նշվում էր սոցիալական արդարության, հավասար հնարավորությունների մասին, դրանց հետ միասին մատնանշվում էր քաղաքական իսլամի ու էթնիկ անջատողականության դեմ պայքարի կարևորությունը։

3. ՀԺԿ-ն Դենիզ Բայքալի կառավարման տարիներին

1995 թ. հունվարի 29-ին ՍԴԿ-ն և ՀԺԿ-ն վերամիավորվեցին՝ ստանալով ՀԺԿ անվանումը, կուսակցության ժամանակավոր ղեկավար ընտրվեց Հիքմեթ Չեթինը, ավելի ուշ Դենիզ Բայքալը վերընտրվեց կուսակցության ղեկավարի պաշտոնում։ Դեկտեմբերի 25-ի ընտրություններում ՀԺԿ-ն ստացավ քվեների 10,8 տոկոսը (49 պատգամավորական մանդատ), որն ամենանվազն էր ՀԺԿ-ի գոյության ընթացքում։ 1995 թ. ընտրությունների նախորդած ընտրարշավում և հետագա քաղաքական գործընթացներում ՀԺԿ-ն խստորեն բարձրաձայնում էր իր անհամաձայնությունը քաղաքական իսլամի աճող ազդեցության կապակցությամբ։ Բայքալին հաջողվեց

¹⁹ Ciddi Sinar, *Kemalism in Turkish Politics...*, p. 57.

²⁰ Մանրամասն տես՝ Cem İsmail, *Yeni Solu*, İstanbul, 1992.

ստեղծել աշխարհիկ կարգերը խաթարել փորձող ուժերի՝ հատկապես իսլամամետ «Բարորություն» կուսակցության դեմ պայքարող ճակատ: Նրա հոստոդրաբանության մեջ ընդգծվեցին աշխարհիկ կարգերին անվերապահ աջակցելու և քեմալականության հիմնադրույթները և Աթաթուրքի ժառանգությունը պահպանելու սկզբունքները: ՀԺԿ-ն իր աջակցությունը հայտնեց նաև 1997 թ. փետրվարի 28-ի ՁՈՒ-ի կողմից նախաձեռնած «քավչյա հեղաշրջմանը», երբ ԱՄՆ-ի նիստում վարչապետ էրթաջանին վերջնագիր ներկայացվեց աշխարհիկ կարգերը քայքայող կառավարման մեթոդները արմատապես վերանայելու նպատակով:

Ներկուսակցական ճգնաժամը, կազմակերպական ու գաղափարախոսական կողմնորոշման խնդիրները, ծայրահեղ քեմալիզմի ու պետականակենտրոն մտեցումների պատճառով 1999 թ. ապրիլի 18-ի ընտրություններում ՀԺԿ-ն չկարողացավ անցել 10 տոկոսի ընտրաշեմը և որպես քաղաքական ուժ առաջին անգամ դուրս մնաց խորհրդարանից²¹: Դենիզ Բայքալը հրաժարական տվեց և մայիսին կուսակցության ղեկավար ընտրվեց Աթան Օյմենը, ով 15 ամիս ղեկավարեց կուսակցությունը: Այդ ընթացքում ՀԺԿ-ն որդեգրեց նոր գաղափարախոսական ուղղություն, որն ստացավ «Անատոլիական ծախ» (*Anadolıu Solu*) անվանումը: 2000 թ. սեպտեմբերին Դենիզ Բայքալը նորից վերընտրվեց ՀԺԿ-ի նախագահ ու սկսեց նոր շունչ ու բովանդակություն հաղորդել «Անատոլիական ծախ» ուղեգծին: Նա անդում էր, որ հենվելով աշխարհիկ-հանրապետական կարգերի քարոզչության ու Աթաթուրքի դերի վերաիմաստավորման վրա, հարկավոր է Արևելյան Թուրքիայի հասարակ մարդու շահերն ու առաջնահերթությունները դրվեն պետական քաղաքականության ու սոցիալական ծրագրերի հիմքում, որը պետք է հիմնված լինի էթնո-կրոնական ինքնության հավասար կարգավիճակի իրացման վրա: Այդ ծրագրի այդ դրույթների համաձայն, վերադառնալով անատոլիական արմատներին ու մշակութային ինքնությանը, հասարակական ակնկալիքների և ծախսակողմյան կուսակցական ղեկավարության վերնախաւային ընկալումների միջև խորացած անջրպետը կվերանա: Կստեղծվի թուրքական ազգային

²¹ Ուշագրավ է, որ այդ ընտրություններում ամենաշատ քվեները (22, 19 տոկոս) ստացավ Բ. Էջևիթի «Չախ ժողովրդավարական» կուսակցությունը:

ինքնությանը հարիւր սոցիալ-դեմոկրատական զարգացման մոդել²²։ Նման ինքնաքննադատական միտումների և քաղաքական օրակարգում առկա խնդիրների վերաբերյալ վերահիմնաստավորված մտեցումների շնորհիվ ՀԺԿ-ին հաջողվեց 2002 թ. նոյեմբերի 3-ի ընտրություններում ստանալ քվեների 19,41 տոկոսը (177 պատգամավորական մանդատ) և չափավոր իւլամամետ Արդարություն և զարգացում կուսակցության հետ միասին ստեղծեց երկկուսակցական խորհրդարան։ 2002-2007 թթ. լինելով միակ խորհրդարանական ընդդիմությունը՝ ՀԺԿ-ին հնարավորություն ընձեռվեց հասարակությանը ներկայանալ առավել բյուրեղացված գաղափարախոսությամբ։ Վերջին 5-6 տարիների ընթացքում կուսակցության դավանած քաղաքական հայացքները ստացան բազմաթիվ որակավորումներ. «ավտորիտար քեմալիզմ», «ծայրահեղ աջ ուղղվածություն», «ծայրահեղ ազգայնամոլություն» և այլն։ Ընդհանուր առմամբ այն բնորոշվեց որպես փոփոխական ու պետականակենտրոն ուղղություն դավանող քաղաքական ուղեգիծ, որին բնականաբար ավելացան նաև կուսակցական կառավարման Բայքալի որդեգրած հակադեմոկրատական մեթոդները, նրա անհանդուրժողական կեցվածքը և այլն։ Բայքալի ու նրա մերձավոր գաղափարակիների համար սեփական պայքարի նպատակը «դասական քեմալիզմի» երկարակեցության ապահովումն է՝ գործարկելով պետության և նրա համապատասխան ուժային հաստատությունների ծեսուրսները։ Կրոնական ինքնության ու դրա քաղաքական ինքնարտահայտման խնդրի կասկակցությամբ ՀԺԿ-ի ղեկավարության ծայրահեղ ընդգվածությունն առավել ցայտուն դրսևորվեց 2007 թ. ապրիլից-օգոստոս ընկած նախ նախագահական, հետո խորհրդարանական ընտրությունների ժամանակահատվածում։ ՀԺԿ-ն, նախ հրահրելով, ապա աջակցելով զինված ուժերի գլխավոր շտաբի ապրիլի 27-ին նախածեռնած «էլեկտրոնային հեղաշրջման» գործողությանը, ընդդիմացավ նախագահի պաշտոնի համար արտգործնախարար Արդ. Գյուլի թեկնածության առաջադրմանը՝ դիմելով Սահմանադրական դատարան՝ Նախագահի ընտրության ընթացակարգը խախտելու պատճառով նախագահի ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու հացով։ Այդ իրադարձությանը

²² Alaya Ayşe Güneş, The Republican People's Party, Turkish Studies, v. 3, № 1, 2002, p. 112.

հաջորդած և նախորդող տարիներին ևս ՀԺԿ-ն չէր վարանում ԱԶԿ-ի գրեթե բոլոր օրենսդրական ու սահմանադրական փոփոխությունները բողոքարկել ԱԴ-ում, որով վերջինիս որպես դատական իշխանության մարմնի ավելի շատ ներքաշեց քաղաքական գործընթացներում:

Վերջին՝ 2007 թ. հուլիսի 22-ի ընտրություններում ՀԺԿ-ն, դաշինք կազմելով «Զախ ժողովրդավարական» կուսակցության հետ, ստացավ քվեների 20,85 տոկոսը (112 պատգամավորական մանդատ) և ԱԶԿ-ի ու «Ազգային շարժում» կուսակցության հետ միասին մտավ խորհրդարան: Այդ դաշինքը հնարավոր եղավ, քանի որ 2006 թ. կուսակցության առաջնորդ էջևիթը մահացել էր և նրա կնոջ մեկուսացվածության պայմաններում հնարավոր եղավ ստեղծել այդ նախընտրական դաշինքը: Հետագայում, ՀԺԿ-ից ու ԱԶԿ-ից առանձնացան մի շարք պատգամավորներ ու խորհրդարանում ստեղծվեցին նոր խմբակցություններ՝ «Զախ ժողովրդավարական» կուսակցությունը, քրդամետ «Դեմոկրատական հասարակություն» կուսակցությունը: Վերջին երեք տարիների ընթացքում ՀԺԿ-ն, ազգայնական «Ազգային շարժման» կուսակցության հետ միասին, չարունակեց խոչընդոտել ԱԶԿ-ի սահմանադրական բարեփոխումներին էլի ավելի խորացնելով երկիրը պատակտող ու հասարակության երկվության պատճառ դարձած հիմնախնդիրների: Այս ընթացքում պարզ դարձավ նաև, որ ի տարբերություն Սոցիալիստերնի մաս կազմող և սոցիալ-դեմոկրատական սկզբունքներ դավանող եվրոպական մյուս քաղաքական կուսակցությունների, ՀԺԿ-ի սոցիալ-դեմոկրատական մոդելը արտացոլում էր թուրքական քաղաքական ու գաղափարախոսական մշակույթի առանձնահատկությունները: Ավելին, ըստ թուրք վերլուծաբանների, ՀԺԿ-ի համետ ընտրական արդյունքների պատճառները պետք է փնտրել սոցիալ-դեմոկրատիայի դասական սկզբունքներից շեղվելու և էթնիկական, աշխարհիկ ու կրոնական խնդիրների վրա կենտրոնանալու մեջ²³:

2010 թ. մայիսին սկանդալային պատմության պատճառով Դենիզ Բայքալը հրաժարական տվեց և մայիսի 22-ին կուսակցության թվով իններորդ առաջնորդ ընտրվեց նախկին քաղաքացիական ծառայող Քեմալ Քըլըզդարաօլուն: Պատվիրակների կողմից կուսակցության համագումարում նրան տրված ծայները խոսում են նրա հետ կապվող հույսերի մասին, իսկ օտարերկրյա մեկնաբաններն այն վերլուծում են

²³ Ayata Sencer & Ayata Ayge-Güneş, *The Centre-Left...*, p. 230.

հետևյալ ձևակերպմամբ՝ «Կուսակցությունը փոխեց առաջնորդին, իսկ առաջնորդը կփոխի՝ կուսակցությունը»²⁴:

Եզրակացություն

Վերջին հինգ տասնամյակների ընթացքում Թուրքիայի հիմնադիր ու ամենաազնիվ կուսակցությունն անցավ մի շարք փուլերով, որի սկզբնափուլ կարելի է համարել 1957 թ. Հոյակագիրը, հետագայում՝ 1961 թ., 1964 թ., 1972 թ. և 1976 թ. համագումարները: ՀԺԿ-ի գաղափարական կողմնորոշման ու երիտասարդացման շնորհիվ հնարավոր դարձավ նորովի դիրքավորվել երկրի քաղաքական դաշտում: 1964 թ. առաջ քաշված սոցիալ-դեմոկրատական ուղղվածությանը և «ձախ կենտրոնի» գաղափարախոսությանը պահանջվեց ևս 13 տարի որպեսզի ամբողջության ընկալի ու զնախատվի հասարակության կողմից և դա էլ պատճառը, որ 1977 թ. ՀԺԿ-ն ստացավ բազմակուսակցական ընտրությունների ընթացքում ամենաշատ քվեները: Այդ հաջողությունը չի գերազանցվել մինչ օրս: 1980 թ. սազմական հեղաշրջումը ծանր հարված հասցրեց ՀԺԿ-ին ու նրա գաղափարական հիմքերին: Արդյունքում, 1980-ական թթ., այդ քաղաքական ուժը ներկայացավ պառակտված կերպով կենտրոնանալով՝ էրդալ Ինոնյուի և Բյուլենթե Էջևիթի քաղաքական կերպարների շուրջ: Բ. Էջևիթն, ըստ էության, յցանկացավ իր անավարտ գործը շարունակել իր նախկին կուսակիցների հետ, որոշեց հիմնել նոր կուսակցություն: Փոխարենը, էրդալ Ինոնյուի գլխավորած ՍԴԿ-ն, ներկայանալով որպես ՀԺԿ-ի իրավահաջորդ, ըստ հնարավորության, կարողացավ փոխարինել ՀԺԿ-ին: 1982 թ. ՀԺԿ-ի վերաբացմամբ և 1995 թ. ՍԴԿ-ի և ՀԺԿ-ի միավորմամբ թվում էր, թե ՀԺԿ-ն կվերականգնի իր երբեմնի ազդեցիկ դիրքը ժախսակողմյան ուժերի շրջանում: Իրականում, 1990-2000-ական թթ. ՀԺԿ-ի գերխնդիրը դարձավ նոր, հասարակության համար զրավիչ գաղափարախոսական տարբերակների փնտրուտը: Իրարահաջորդ գաղափարախոսությունները, որոնք ունեին իրականության զգացումի պակաս, միափոխվեցին կուսակցության ղեկավար Դենիզ Բալքալի կառավարման ոչ-կառուցողական մեթոդների հետ, որոնք պատճառով

²⁴ A new Kemal: Kemal Kılıçdaroğlu gives new hope to the Turkish opposition, The Economist, 27 May 2010, <http://www.economist.com/node/16219855>.

էլ ՀԺԿ-ին չի հաջողվում նորովի ներկայանալ հասարակությանը: Իսլամական ինքնության ու կամարտահայտմանն ընդդիմացող, քրդական հարցում անհանդուրժողականություն և քեմալիզմի աշխարհիկ ու հանրապետական սկզբունքների մոլի պաշտպանության դիրքերից հանդես եկող ՀԺԿ-ն ունի ժողովրդավարական զարգացման հետ անհամատեղելի սկզբունքներ: 2010 թ. մայիսի կուսակցության ղեկավարության փոփոխությունը կարող է նոր լիցք հաղորդել կուսակցության ներուժի ինքնաքննադատական վերաինաստավորման գործին:

VAHRAM TER-MATEVOSYAN

**THE REPUBLICAN PEOPLE'S PARTY BETWEEN 1960 AND 2010: THE
HALF CENTURY OF TRANSFORMATION OF A PARTY FOUNDING THE
REPUBLIC OF TURKEY**

The article discusses the history of one of the key political parties in Turkey which founded the republic in 1923 – the Republican People's Party. Starting from 1960 the party went through multiple phases of transformations. Each phase was characterized by extensive revision of party's ideological standing concerning some fundamental issues of Turkey's development. The RPP's profound support of republican-secular principles of Kemalist discourse insisted the party's leadership to rethink the ways to collaboration and consensus with emerging tide of political Islam in Turkey. Leaders of the party for the given period İsmet İnönü, Bülent Ecevit and Deniz Baykal left their imprint on the nature of the RPP's ideological and management transformation. Now, with the new leader Kemal Kılıçdaroğlu, who assumed the leadership of the party in May 2010, the RPP will go through new phase of development.

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ԻՐԱՔՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԵՌՈՐԶ (2009-2010 թթ.)**

Տնտեսական և ֆինանսական խնդիրների քնազավաթի պատմության հայտնի մասնագետ, պատմաբան, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Նայալլ Ֆերգյուսոնը համարվում է ժամանակակից առավել հետաքրքիր հետազոտողներից մեկը, որի 2006 թ. հրատարակված «Աշխարհի պատերազմը» գրքում նկարագրվում և ամփոփվում են XX-րդ դարի պատմության ոչ միայն դրական տեղաշարժերը, այլ նաև հիմնականում՝ պատերազմների և զինված ընդհարումների, ռազմական հակամարտությունների դաժան հետևանքները, ավերը, մարդկային անդաօնալի կորուստները: 2008 թ., նրա հետ հարցազրույցում, այն հարցին թե՛ որոնք են մոտակա երկու տասնամյակների ընթացքում մարդկության զարգացման «լավագույն» և «վատթարագույն» սցենարները, Նայալլ Ֆերգյուսոնը, նշել է, որ գոյություն չունի ապագայի միակ հնարավոր տարբերակ, քանի որ նման տարբերակները քազմաթիվ են, որոնցից պետք է ընտրություն կատարել: Նա առանձնացրել է հետևյալ «վատթարագույն» զարգացման հնարավոր սցենարը՝ «Մերձավոր Արևելքում հակամարտության սրում՝ Իրաքի սահմաններից դուրս և ողջ տարածաշրջանի ընդգրկումով, որին կմասնակցեն ոչ միայն ԱՄՆ-ը և Իրանը, այլ նաև Իսրայելը, Սաուդյան Արաբիան, Սիրիան, հնարավոր է նաև Եգիպտոսը և Թուրքիան: Այդ դեպքում դա կլինի նույնքան հակամարտություն իսլամի ճյուղերի՝ շիաների և սուննիների, որքան, ասենք, իսլամի և մնացած աշխարհի, կամ իսլամի և արևմուտքի միջև: Այստեղ կա պոտենցիալ: Հսկա պայթյունի համար քոլոր անհրաժեշտ նախադրյալները առկա են: Եթե այդպիսի հակամարտությունը վերահսկողությունից դուրս գա, ապա դա կլինի իսկական աղետ: Մենք գիտենք, որ նման քաներ երբեմն տեղի են ունենում»¹:

¹ Տե՛ս Непределенное будущее мира, "Деловой экспресс", № 35, сентябрь, 2008, с. 22.

Որպես «վատթարագույն» տարբերակ ընդգծվում է հակամարտությունների լայնածավալ զարգացումն ու պայթյունը Մերձավոր Արևելքում: Եվ քանի որ կանխատեսումները ամեն զնով խուսափելու և համապատասխան միտված, խաղաղասիրական նկատառումներով առաջնորդվող քաղաքականություն վարելու, որդեգրելու և զարգացնելու նպատակ ունեն, ուրեմն «վավագույն» տարբերակը պատմաբանի կարծիքով «Մերձավոր Արևելքի բոլոր ուժերին ներգրավելն է միասնական համաշխարհային տնտեսության ոլորտում, Մերձավոր Արևելքի երիտասարդությանը ուղղորդելու համար, որ ավելի լավ կլինի, եթե փող աշխատեն, ոչ թե մարտնչեն: 1980-ական թվականների հին կարգախոսը հնչում էր այսպես՝ «Ջրաղվեք սիրով, ոչ թե պատերազմով»: Ես կարծում եմ, որ «զբաղվեք փող աշխատելով, ոչ թե պատերազմով» - ամենանպատակահարմարն է:

Ուշադրության արժանի են նաև այս տարբերակների հեղինակի մտավախությունները կապված համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հնարավոր քայքայիչ հետևանքների հետ²:

Մերձավոր Արևելքի երկրների հասարակական քաղաքական իրադրության ուսումնասիրությունը անհրաժեշտ է և կարևոր ոչ միայն տվյալ երկրի նորագույն պատմության ուսումնասիրության տեսանկյունից: Ավելի քան հրատապ է դառնում քաղաքական դաշտի հանդեպ հետաքրքրությունը տարածաշրջանային ազդեցությունների, հնարավոր զարգացումների առումով: Հետազոտությունների ուշադրության առանցքում են ոչ միայն քաղաքական զարգացումները Իրաքի ներսում, այլ նաև Իրաքի շուրջ:

Այս առումով հետաքրքիր է հետևյալ սցենարների մասին մամուլում հրապարակումը արդեն 2010 թ. կապված Պենտագոնի «Չորսամյա պաշտպանողական տեսության» հետ՝ «Ամերիկյան երկու պատերազմ չի ձգի» վերնագրով³:

ԱՄՆ-ի առաջիկա «Չորսամյա պաշտպանողական տեսության» ծրագրերում առաջնահերթ են դառնում միաժամանակյա զործողությունների անցկացումը՝ հնարավոր ահաբեկչական ռազմական զործողություններին ի պատասխան, Աֆղանստանում, Իրաքում, ինչպես նաև երկրագնդի այլ մասերում:

² Նույն տեղում:

³ Америка не потянет две войны, "Независимая газета", 2.02.2010.

2011 թվականի ռազմական ծախսերի համար նախատեսվող բյուջեի չափը, որը նոր «Չորսամյա պաշտպանողական տեսլական» հրապարակման ֆունի վրա, Պենտագոնը ամերիկյան Կոնգրեսին է ներկայացրել, նախկինից 44 մլրդ դոլար ավելի է և կկազմի տեկորդային 708 մլրդ: Այդ միջոցների զգալի մասը նախատեսված է Իրաքում և Աֆղանստանում պատերազմների ֆինանսավորման համար⁴:

Տեղին է հիշեցնել, որ Բարաք Օբամայի նախընտրական կամպանիայի շրջանում արդեն տիրում էր այն համոզումը, որ նրա ընտրվելով, Իրաքում ամերիկյան ներկայությունը կավարտվի: Միաժամանակ կար հետևյալ մտավախությունը, «Ղա մեծ թխկի գործոն է, որովհետև ժամանակից շուտ իրաքյան նախագիծը բողոնելով, Օբամայի ադմինիստրացիան Իրաքը կթողնի քառսի մեջ: Այստեղ ամեն ինչ սխալ է ավել կամ պակաս կարգի ընկնել, կան իրադրության քարելավման նշաններ: Ղա մեծ հույս է ներշնչում, սակայն այդ ամենը կարող է լրիվ խորտակվել, եթե նոյեմբեր ամսվա շրջանում պարզ դառնա, որ նոր ադմինիստրացիան Իրաքում իրադրությունը կայունացնելու տեսլ մտադրություններ չունի»⁵:

Իրաքում իրադրության կայունացումը միայն հոգուտ ԱՄՆ-ի չի դիտարկվում:

«Եվ նույնիսկ ոչ հանուն իրենց՝ Միացյալ Նահանգների, այլ հանուն բոլորի, որովհետև ծախսողումը Իրաքում և նրա վերադարձը քաղաքացիական պատերազմի իրավիճակին, ինչպես էր 2006 թվականին, համաշխարհային տնտեսության վրա շատ թանկ կնստի»⁶: Փաստորեն պարզորոշ գծագրվում են ԱՄՆ-ի հետագա քաղաքականության նպատակները Իրաքի հետ առնչություններում, նաև համաշխարհային տնտեսական հանգույցներում:

Այդ նույն ժամանակահատվածում Տոնս Հուպինսի անվան համալսարանին կից Ֆունդամենտալ միջազգային հետազոտությունների դպրոցի պրոֆեսոր Ջրիգնև Բժեզինսկու արտահայտած կարծիքի համաձայն՝ Իրաքյան պատերազմը «հիվանդագին, չհաջողված ավանտյուրա էր», «պատերազմ սեփական ընտրությամբ», քացարձակապես անտեղի:

⁴ Լույս տեղում:

⁵ Տե՛ս Neopragmatistное будущее мира, "Деловой экспресс", № 25, сентябрь, 2008, с. 22.

⁶ Լույս տեղում:

Նա նշել է, որ Իրաքից զորքերի դուրսբերումը խելամիտ գործ է: «Ես արդեն համարյա երկու տարի է, ինչ հանդես եմ գալիս համակարգված բանակցային գործընթացի օգտին Իրաքի առաջատար ղեկավարների հետ ողջ քաղաքական և կրոնաէթնիկ հատվածում, համատեղ որոշելու համար այդ երկրից մեր հեռանալու ժամկետը»⁷:

Դեռևս 2008 թ. դեկտեմբերին Բաղդադի հետ համաձայնեցված փաստաթուղթը օտարերկրյա զորքերին թույլատրում էր Իրաքի տարածքում օրինական հիմունքով մնալ մինչև 2011 թվականը: Սակայն Պենտագոնի ղեկավար Ուորենտ Գեյթսը հայտարարել է, որ Իրաքում ԱՄՆ-ի ռազմական առաքելությունը ավարտվում է և հիմնական զորամիավորումները Իրաքում այլևս անելիք չունենալով, կհեռանան⁸:

ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման ՋԱՄ-ների ներկայացուցիչներին պատմել է Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերումը արագացնելու և ԱՄՆ-ի տնտեսությունը վերաշխուժացնելու մասին: ԱՄՆ-ի նախագահը 2009 թ. գարնանը խոստանում էր, որ Իրաքում տեղաբաշխված 140 հազ. ամերիկացի զինծառայողների մեծ մասը տուն կվերադառնա մեկ տարում⁹: Բարաք Օբաման այդ ժամանակ վերջնաժամկետ էր նշում 2010 թվականի օգոստոսը:

Եվ քանի որ կռալիցիոն զորամիավորումների շարքում էին նաև բրիտանացի զինծառայողներ, 2009 թ. մարտի վերջին Մեծ Բրիտանիան սկսեց Իրաքից պաշտոնապես դուրս բերել իր սեփական զորամիավորումները: Համաձայն հաղորդագրության՝ բրիտանացի 4 հազար զինծառայողների մեծ մասը Իրաքից դուրս կբերվի մինչև մայիսի 31-ը: Իրաքում մնացող 4 հարյուր բրիտանացի զինծառայողները կզբաղվեն իրաքցի զինվորների և նավաստիների վերապատրաստությամբ: Նույն տեղեկատու աղբյուրը նշում է, որ գեներալ-մայոր Անդրի Մելմոնը հրամանատարական իր լիազորությունները փոխանցել է Իրաքի հարավում տեղաբաշխված միջազգային ուժերի ամերիկացի գեներալ Մայքլ Օետսին¹⁰:

⁷ Նույն տեղում, էջ 23:

⁸ «Ազգ», 3.03.2009:

⁹ Նույն տեղում:

¹⁰ «Ազգ», 1.04.2009:

Նախատեսված էր, որ 2009 թ. առաջիկա վեց ամսում՝ մինչև նույն քվարկանի սեպտեմբեր, ամերիկացի 12 հազ. զինվորական Իրաքից կհեռանա: Մարտի վերջերին նախատեսվում էր Իրաքի կառավարությանը փոխանցել ամերիկացիների իրացան օբյեկտներից 74-ը¹¹:

2009 թ. հուլիսի 3-ին ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենը անսպասելիորեն մեկնեց Իրաք: Սա այդ պաշտոնում նրա առաջին այցելությունն էր այդ երկիրը, իսկ նախորդ այցելությունների ժամանակ նա զբաղեցնում էր ամերիկյան սենատի արտաքին քաղաքականության հանձնախմբի նախագահի պաշտոնը: Այս այցելության նպատակն էր պաշտոնապես հետևել Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման ընթացքին¹²: Օրակարգում էին այցելություններ, պաշտոնական հանդիպումներ Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանու, վարչապետ Նուրի ալ Մալիքիի և խորհրդարանի նախագահ Ալադ ալ Սամարայիի հետ¹³:

Այս այցելությանը հետևեց Վաշինգտոնի և Բաղդադի միջև երկկողմանի համաձայնագիրը քվեարկության ներկայացնելու նախագիծը, ինչը հավանության արժանացրեց Իրաքի կառավարությունը: Այս համաձայնագիրը անվտանգության ոլորտին է վերաբերվում: Համաձայնագիրը քվեարկությամբ անցկացնելը դիտվեց որպես կարևոր քայլ Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման գործում, ինչը նախատեսվում է ավարտին հասցնել 2012 թ.: Միաժամանակ պարզ էր դառնում, որ Իրաքում համաժողովրդական համաձայնագրի մերժման դեպքում 130 հազ. ամերիկացի զինծառայողներ ստիպված կլինեն մեկ տարվա ընթացքում հեռանալ երկրից: Այդ օրենքի նախագիծը Իրաքի խորհրդարանում նախատեսվում էր վավերացնել 2009 թ. սեպտեմբերին¹⁴:

2010 թ. Քուվեյթի վրայով Իրաքից Աֆղանստան, ինչպես նաև ետ՝ Ամերիկա, արդեն 2,2 մլն միավոր զենք և սարքավորում դուրս է բերված, ինչը ընդհանուր ռազմատեխնիկայի ընդամենը 35%-ն է, որ պետք է Իրաքից դուրս բերել մինչև 2010 թ. օգոստոսը:

¹¹ «Ազգ», 10.03.2009:

¹² «Ազգ», 4.07.2009:

¹³ Նույն տեղում:

¹⁴ "Независимая газета", 19.08.2009.

Ինչպես նշեցինք, Բարաք Օբամայի հրամանով, արդեն 2010 թ. օգոստոսի վերջին ամերիկյան զորամիավորումները պետք է դուրս բերվեին Իրաքից, քացառությամբ օժանդակ 35-50 հազ., որոնք պետք է ժամանակավորապես մնային երկրում¹⁵:

Ամերիկացի զենեղալ Ուիլյամ Վեսթերի կարծիքով՝ այդ հոծ լոգիստիկ գործողությունը դարձել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հաջորդող ժամանակահատվածում ամենախոշորագույնը¹⁶: Խոսքը վերաբերվում է Իրաքից ամերիկյան անձնակազմի հետ ռազմական տեխնիկայի դուրսբերմանը Քուվեյթի վրայով¹⁷: «Իրաքից ճողոպրում են Աֆղանստան: Ինչու»՝ սա էլ մեկ այլ ուսումնասիրության խնդիր է, կապված տարածաշրջանում ամերիկյան քաղաքականության հետ արդեն Բարաք Օբամայի պաշտոնավարման ընթացքում: «Ինչու» նրանք չեն հեռանում մյուս հոշոտված մուսուլմանական երկրից՝ Աֆղանստանից, որն ի դեպ նաև էլ չունի»: Այս և նման հարցադրումները կապված են աշխարհաքաղաքական հզոր և տեսանելի, հեռուն գնացող շարժառիթների հետ՝ պայքար ահաբեկչության դեմ, տարանցիկ ուղի դեպի Հնդկական օվկիանոս, ճնշում Պակիստանի վրա և այլն: Պարզվում է, որ այսքանը բավարար չեն գնահատելու համար իրադրության ճշգրիտ պատկերը, քանի որ կան նաև ոչ պակաս կարևոր խթանիչ, ավտորիտար գործոններ, հանուն որի ուժեղացվում է ամերիկյան ռազմական ներկայությունը Աֆղանստանում: Մամուլի ուշադրության կենտրոնից չեն վրիպում այս հարցադրումները, դրան ավելացրած ամերիկաիրաքյան ռազմական հակամարտությունը, դրա շարժառիթները՝ արդեն կատարված ավերածություններից տարիներ անց նույնպես: «Երբ ամերիկացիները ագրեսիա ձեռնարկեցին Իրաքի դեմ, ապա ամեն ինչ գլխավորապես վերագրվեց նավթի վերահսկմանը (գումարած Իսրայելի անվտանգության ապահովումը)», իսկ ՄԱԿ-ի տվյալներով Աֆղանստանում արտադրվում է 18 հազ. տոննա թմրանյութ կամ հերոինի 93%-ը: Պարզվում է, որ Իրաքից Աֆղանստան ամերիկյան զորքերի տեղափոխման «Օբամայի պլանը» ունի նաև այլ «շահագրգռություն» և նպատակներ: «Ամերիկացիների կողմից Աֆղանստանի խաշխաշի պլանտացիաների և թմրանյութերի

¹⁵ Լոյն տեղում, 28.04.2010:

¹⁶ Լոյն տեղում:

¹⁷ Լոյն տեղում:

արտադրության վերահսկողությունը հանգեցրել է այն բանին, որ այդ «տնտեսության ճյուղը» օկուպացման տարիներին աճել է 44 անգամ, իսկ այդ «մահաբեր արդյունաբերության» մեջ արդեն ներգրավված է 2 մլն-ից ավելի մարդ՝ երկրի յուրաքանչյուր յոթերորդ աշխատունակ անձը»¹⁸։

Եվ քանի որ զենք ու զինամթերքի, ռազմական տեխնիկայի տեղափոխումը Աֆղանստան իրականացվում է Քուվեյթի վրայով, ապա Քուվեյթի հանդեպ նույնպես ուշադրությունը ավելի սևեռուն է, ինչը քաղաքական դիտարկումների, մեկնաբանությունների դաշտից չի կարող անտեսվել։ «Независимая газета»-ն գրում է՝ «1991 թ. Սադամ Հուսեյնի պարտությունից հետո այդ էմիրությունը մնում է ամերիկյան սպիհների պաշտպանության ներքո։ Սակայն Քուվեյթի կառավարությունը ջանում է իր միջազգային դիրքերը ամրապնդել, երկխոսություն զարգացնելով Ռուսաստանի հետ», միաժամանակ ավելացնելով, որ 1991 թ. Քուվեյթի դեմ իրաքյան ռազմական հակամարտության՝ պատերազմի հետևանքով, ավերածությունները արդեն վերացվել են, սակայն «Իրաքից դեռ մինչև օրս հայրենից չեն վերադարձվել բոլոր ռազմագերիները, զոհվածների աճյունները վերահուղարկվորելու համար»¹⁹։

Իրաքում խաղաղ բնակիչների շրջանում զոհերի թիվը ավելանում էր արդեն ոչ պատերազմական պայմաններում։ 2009 թ. ապրիլին Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքին ամերիկացիներին մեղադրեց անվտանգության համաձայնագրի խախտման մեջ։ Այն ժամանակ ամերիկյան զորքը ալ Կուտ քաղաքում իրականացրել էր հատուկ գործողություն, որի ընթացքում զոհվել էր մի քանի խաղաղ բնակիչ։ Բաղդադի հետ կնքված անվտանգության պայմանագրի համաձայն, մինչև 2009 թ. հունիսի 30-ը համաձայնեցված էր ամերիկյան զինծառայողներին դուրս բերել Իրաքի քաղաքներից։ Ինչպես նշել է Իրաքում ամերիկյան զորքի հրամանատար զեներալ Ռեյ Օդիեբոնոն, չնայած այդ որոշման ընդունվելը, իրաքյան որոշ բնակավայրերում շարունակվում է ահաբեկչական խմբավորումների ակտիվությունը։ Այդ վտանգի առումով հատկապես նախթաօտ Մոսուլ քաղաքն է ընդգծված, որտեղից ամերիկյան զորքի դուրսբերումը հետաձգվեց։

¹⁸ «Ազգ», 12.03.2009:

¹⁹ СИА «взводит военную технику из Ирака, "Независимая газета", 28.04.2010.

Ըստ Օդիերնոյի, Իրացի քանակի հնարավորությունները «զգալիորեն ընդլայնվել են»²⁰:

Պենտագոնի ներկայացուցիչ զեներալ-մայոր Ղեվիոյ Պերկինսը Իրացում իրադրությունը բնութագրել է «խիստ անկայունից» դասնայով «կայուն» և որ վերջին վեց տարում բռնարարքների ցուցանիշները ամենացածրն են: Հակառակ այդ պնդումների, իրական կյանքն Իրացում հետ է «կայուն» լինելուց:

2010 թ. մայիսի 10-ին մի շարք պայթյունների և փոխիրաձգությունների հետևանքով Իրացում զոհերի թիվը անցել է հարյուրից, և մի քանի հարյուր մարդ վիրավորվել է: Հիվայում ավելի քան քառասունհինգ մարդ է զոհվել, մանածագործական ֆաբրիկայում տեղի ունեցած երեք պայթյունների հետևանքով: Բասրայում նույնպես պակաս չեն նման բռնարարքները: Այստեղ այդ նույն շաբաթվա ընթացքում յոթ մարդ է զոհվել պայթյունի հետևանքով:

Բաղդադում սպանվել է երկրի ազգային անվտանգության ծառայության յոթ աշխատակից: Ձոհեր են եղել նաև ֆալուջայում և Մոսուլում²¹:

Եվ քանի որ վերը նշված դեպքերը մարդկային անդառնալի կորուստներով, նաև խաղաղ բնակչության շրջանում, շրջայական անվերջանալի և դատապարտելի շարք են կազմում, իրավիճակը վկայում է, որ Իրաքը այդպես էլ չգտավ խոստացված խաղաղությունն ու ժողովրդավարությունը:

Հետաքրքրական է, որ Իրանի նախագահ Աիմադինեջադը իր պարտքն է համարել դիմել օտարերկրյա զինվորականներին Իրաքից և Աֆղանստանից շուտափույթ հեռանալու հորդորով: 2009 թ. սեպտեմբերի 22-ին (երեքշաբթի օրը) նա հայտարարել է, - «Ես ձեզ խորհուրդ եմ տալիս վերադառնալ ձեր երկրները և գումարներ ծախսել ոչ թե ռազմական հսկայական ծախսերի, այլ այն խնդիրների վրա, որ ծառայած են ձեր ժողովուրդների առաջ»:

Ձինվորական շքերթի ժամանակ, դիմելով Արևմուտքի երկրներին, նա ավելացրել է, որ իր կարծիքով՝ իրաքցիներն ու աֆղանացիները «թշնամաքար են վերաբերվում օտարականների ներկայությանը, և այդ պատճառով երկարաժամկետ հեռանկարներում օտարերկրացիները

²⁰ «Անգա», 4. 04. 2009:

²¹ "Hessousumai gazeta", 12. 05. 2010.

չեն կարող հուսալ տարածաշրջանում զինվորական ծագմակայաններ տեղադրելու մասին»²²:

Իրացում ստեղծված անկայուն վիճակը բացասաբար անդրադարձավ նաև տեղի հայ համայնքի կյանքին, քանի որ կրոնադավանական գործոնը չի կարելի անտեսել: Ինչպես նշում են Միացյալ Նահանգների կոնգրեսի դեմոկրատ անդամներ Թիմ Ռալզը և Բեքի Մլքը Քոլումբ պետքարտուղար Հիլարի Թլինթոնին մայիսի 14-ին հղած իրենց դիմում-առաջարկում՝ «իրացահայերը քրիստոնյա են և հետապնդումների են ենթարկվում»: Նրանց առաջարկել են ստեղծել հիմնադար՝ օգնելու համար իրացահայերին Հայաստանի տեղափոխվելու գործում: Ինչպես գրում է «Հայաստանի Հանրապետություն» թերթը՝ «Օրենսդիրները նամակում նշում են, որ Հայաստանը նշանակալից քայլեր է կատարել փախստականներին ընդունելու համար, նրանց տրվում է քաղաքացիություն և ապրելու տեղ»²³:

Լյս առաջարկին միացել և նամակը ստորագրել են հինգ կոնգրեսականներ, այդ թվում Ադամ Շիֆը, Ֆրենկ Փալոնը: Հանրապետական կուսակցությունից Քոլին Փիթերսոնը և աջակցություն է հայտնել և միացել է այդ առաջարկին, թեև նրա ստորագրությունը չկա²⁴:

Իրացի քրիստոնյա ազգաբնակչության դժվար վիճակի հատկապես հայերի Հայաստան հայրենադարձվելու խնդրին նախորդ աշխատության մեջ անդրադարձել ենք, կապված երկրում ստեղծված ընդհանուր իրադրության վերլուծության հետ²⁵:

Թվացյալ ժողովրդավարության տիպիկ և համոզիչ օրինակ են ծառայում նաև իրացյան բանտերը: Բազմազգ ուժերի ամենախտրոր կալանավայրերից ամերիկյան «Թեմփ-Բուքս» բանտը, որը գտնվում է Իրացի հարավում՝ Բասրայի մոտակայքում, պետք է որ դադարեցներ իր գոյությունը՝ մեկընդմիջտ փակվելը 2009 թ. օգոստոսի կեսերին: Ամերիկացիները մտադրվել էին այստեղ՝ պահվող 180 բանտարկյալներին հանձնել իրացյան իշխանություններին, ներառյալ

²² «Հայաստանի Հանրապետություն», 24.10. 2009:

²³ «Հայաստանի Հանրապետություն», 20.05.2010:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Տես Կարինե Սահլիվյան, Հասարակական քաղաքական իրադրությունն Իրացում 2008 թվականին և ամերիկյան զորքերի երկրից դուրսբերման խնդրը, «ԱՆԵՐԱՎՈՐ և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», պրակ XXVII, Երևան, 2009, էջ 123-134:

այդ տարածքում գտնվող օբյեկտներն ու սարքավորումները 50 միլիոն դոլար ընդհանուր արժեքով:

Իրաքի քանտարկյայների նկատմամբ անմարդկային, զարհուրելի վերաբերմունքի, ամերիկացի զինծառայողների իրականացրած խոշտանգումների հետ կապված մի շարք հրապարակային քացահայտումներից հետո թվում էր, որ վերջապես փակվեց նաև «Արու-Ղուրեյթ» սարսափազդու քանտը: 2006 թ. այն փոխանցվել էր Իրաքի իշխանություններին: Նախատեսվում էր, որ այն դասնալու էր պահեստային տարածք, այլևս երբեք որպես կալանավայր չօգտագործվելու պայմանով: Այդուհանդերձ, 2009 թ. «Արու Ղուրեյթը» վերանվանվեց՝ Բաղդադի Կենտրոնական քանտ, նորից հանձնվելով շահագործման²⁶:

Համաձայն մամուլում տեղ գտած հրապարակումների, հազարավոր կալանավորներ Իրաքում նշված ժամանակահատվածում հայտնվել ու պահվել են «առանց դատի ու քննության՝ լույ ապստամբ կամ ահաբեկիչ լինելու կասկածանքով»: Ամերիկա-իրաքյան զինված հակամարտության՝ պատերազմի անցած «վեց տարիների ընթացքում ամերիկացիները Իրաքում ձերբակալել են մոտ 100 հազար մարդու, որոնցից 13 հազ. դեռ մնում է քանտերում»²⁷: Ու թեև խոստացված էր, որ մինչև 2009 թ. ամառ ամերիկյան քանտերից ազատ կարծակվեն հազարավոր կալանավորներ, սակայն իրական պատկերը երկրում շատ ավելի մտահոգիչ էր:

2010 թ. փետրվարի 1-ի տվյալներով Բաղդադից հարավ-արևմուտք գտնվող Քերբելա շրջանում տեղի ունեցած հուժկու պայթյունից 41 շիա ուխտավոր է զոհվել, ևս 108-ը վիրավորվել է մահապարտ մի կնոջ կողմից պայթուցիկ սարքը զործողության մեջ դնելու հետևանքով: Քերբելան շիաների հոգևոր կենտրոնն է: Այս զազրելի ահաբեկությունը տեղի է ունեցել Արբանի տոնի նախաշեմին, ընտրելով այն պահը, երբ ուխտագնացության նպատակով այստեղ հազարավոր հավաքված շիաներին ուտելիք և ջուր էր բաժանվում: Այս տոնի անվանումը արաբերենից թարգմանաբար նշանակում է քառասունք: Այն նշանավորում է Մուհամմեդ մարգարեի թոռան՝ իմամ Հուսեյնի քառասունքից՝ սզո արարողությունից դուրս գալու կրոնական

²⁶ «Ազատամտություն», 18.10.2009:

²⁷ «Ազգ», 21.02.2009:

հանդիսությունը, քանի որ շիաների շրջանում այդպես է ընդունված²⁸։
Տոհերի և վիրավորների թվում կան կանայք և երեխաներ²⁹։

Նման մի պայթյուն էլ որոտացել էր 2010 թ. հունվարի 25-ին Բաղդադի հյուրանոցների մոտ։ Միաժամանակյա ահաբեկչության հետևանքով զոհվել էին ավելի քան քառասուն և վիրավորվել տասնյակ մարդիկ³⁰։

Դեռևս 2009 թ. սեպտեմբերին հանրությունը իրազեկվեց, որ «ԿԿԿ բժիշկները մասնակցել են Իրաքում բանտարկյալների հանդեպ իրականացված բոլոր կտուանքներին»։ Փաստը պնդում են միջազգային իրավապաշտպանները։

«Բժիշկները հանուն մարդու իրավունքների» միջազգային կազմակերպության ենթադրությամբ՝ իրաքյան «Աբու Ղուրեյբում», ինչպես նաև Կուբայի Գուանտանամոյի և Աֆղանստանի Բաղամի ամերիկյան ռազմակայանների բանտերում և այլ կալանավայրերում ԿԿԿ մասնագետ բժիշկները, որոնք «ընդլայնված հարցաքննությունների» վերահսկման նպատակով մասնակից էին և ներգրավված էին այդ զարհուրելի տեսարաններին, փաստորեն մարդկանց վրա փորձեր են կատարել, ինչը միջազգային նորմերին հակասում է և դատաապարտելի արարք է բժշկի կողմից։ «Նուշտանգումներին և հարցաքննություններին բժիշկների մասնակցությունը հիմնարար բարոյական արժեքների խախտում է», նշվում է կազմակերպության հայտարարության մեջ։ Փաստորեն ԿԿԿ բժիշկները կամայականորեն բանտարկյալներին նշված երկրներում օգտագործել են որպես փորձի համար կենդանիներ³¹։

Այսպիսի պայմաններում այնբախումներից և պայթյուններից զերծ Իրաք ակնկալելը կնշանակի իրականությանը նայել ծուռ հայելիների մեջ, իրականությունից կտրված անտես աչքերով։

Իրաքի հյուսիսում սեպտեմբերի 10-ին գիշերը բեռնատարի պայթյունից զոհվեց 19 մարդ, նույնքանն էլ վիրավորվեց մահապարտի իրականացրած ահաբեկչության հետևանքով, Մոսուլից 30 կմ դեպի արևելք գտնվող քրդական Վարդեկ գյուղում։ Թեև քրդական «իեշմերգայի» զինված աշխարհագրոայինների մարտիկներին

²⁸ «Առավոտ», 2 փետրվար, 2010:

²⁹ "Независимая газета", 4.02.2010.

³⁰ «Առավոտ», 2.02.2010:

³¹ «Ազգ», 5.09.2009:

հաջողվել է կասեցնել հաջորդ մահապարտի գործողությունը, սակայն շատ տներ այս գուղում վերածվել են փլատակների, իսկ զոհվածների թվում կան կանայք և երեխաներ³²:

Այդ նույն տարում՝ 2009 թ. մարտին Բաղդադում իրականացված խոշորագույն ահաբեկությունը տեղի ուստիկանական ակադեմիայի քակում էր: Այստեղ հավաքված ակադեմիայի սաների և ուստիկանների խմբի մեջ հայտնված մահապարտ ահաբեկիչը իր գործողություններով խլեց 28 մարդու կյանք, 60 մարդ էլ վիրավորվեց: Ինչպես նշված է մամուլում, «մահապարտ ահաբեկի մասնակցությունը սուների ծայրահեղականների ձեռագիրն է»³³:

2009 թ. մարտի 26-ին պայթուցիկով բեռնված ավտոմեքենան Բաղդադի հյուսիս-արևելքում, ավտոբուսի կայարանում օդում պայթել է շիաների աշ-Շաար շրջանում: Դարձյալ նույն ձեռագիրն է և անդասնայի կորուստներ՝ նաև կանանց ու երեխաների թվով: Շատ պաշտոնական տվյալների՝ 20 մարդ զոհվել է, 35 իրացքի ստացել են տարբեր աստիճանի վնասվածքներ³⁴:

Եվ եթե նշված ահաբեկությունները ցայտուն կերպով կրոնադավանական երկու ճյուղերի՝ շիաների և սուննիների միջև փոխադարձ «հաշվեհարդարներով» են ներկայացվում, ապա արդեն 2010 թ. մայիսի 25-ին Բաղդադի ոսկեղենի շուկայի զնդակոծումը Իրաքում ստեղծված քառասյին իրավիճակի պատկերն է դրսևորում: Հրածությունը տեղի է ունեցել Բաղդադի Բայա շրջանում, մարդաշատ շուկայում, որը սովորաբար հսկվում է ուստիկանության աշխատակիցների կողմից:

Պրոհայինները հինգ ավտոմեքենաներով և քաղաքացիական հագուստով, դեմքերը ծածկած արաբական զխաշորերով հարձակման են ենթարկել տասնմեկ խանութ ոսկու շուկայում, պայթեցրել դրանք և բայանել, սպանելով այստեղ մնացած աշխատողներին: Չոհվել է 14 մարդ, մեծամասնությամբ շուկայի տարածքում գործող խանութների աշխատակիցներ³⁵:

Այսպիսի իրավիճակը, բնական է, որ հավատ չի ներշնչում Իրաքում համատեղ տնտեսական ծրագրերի իրականացման համար: Խիստ

³² «Ազատամտություն», 11.09.2009:

³³ «Ազատամտություն», 10.03.2009:

³⁴ "Hesousucuaet racema", 27.03.2009.

³⁵ «Անվոտ», 26.05.2010:

տակալ են նման համագործակցության մասին տեղեկությունները, տակալն այնուամենայնիվ Իրաքը շարունակում է մնալ տնտեսական շահագրգռությունների դաշտում, քանի որ նավթի պաշարներ ունի: 2010 թ. հունվարին «Լուկոյլ»-ի նախագահությունը Բաղդադում ստորագրեց ծառայություններ մատուցելու պայմանագիր Արևմտյան Կուեյտ - 2 նավթահորը մշակելու, փորելու և նավթահանման մասին: Աշխատանքների սկիզբը 2011 թ., իսկ նավթի հանույթը 2012 թ.³⁶:

Իրաքի ներսում վաղուց հասունացող մյուս ոչ կարևոր հարցն էլ քրդական հարցն է, քանի որ դեռևս 1984 թ.-ից զինված պայքար է ընթանում Թուրքիայի հարավ-արևելքում, հանուն քրդական պետության ստեղծման:

Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին 2009 թ. մարտի 23-ին Զրդական քանվորական կուսակցության (ԶԲԿ) անջատականներին, որոնք հյուսիսային շրջաններից դեպի Թուրքիայի տարածք հարձակումներ են գործում, վերջնագիր է ներկայացրել:

Թուրքիայի նախագահ Արդուլլահ Գյուլի հետ Բաղդադում հանդիպումից հետո, Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին նշեց, որ Իրաքի Սահմանադրությունը արգելում է երկրի տարածքում զինված կազմավորումների, այդ թվում ԶԲԿ-ի գոյությունը: Նա հայտարարեց, որ «ԶԲԿ գրոհայինները ունեն ընդամենը երկու հնարավորություն՝ կամ զենքը վայր դնել, կամ էլ հեռանալ Իրաքից»:

Դեռևս 2008 թ. փետրվար-մարտին թուրքական քանակը լայնածավալ գործողություն իրականացրեց Հյուսիսային Իրաքի քրդաբնակ շրջաններում, հարուցելով Իրաքի իշխանության իրավացի քողոքը, «որոնք հարձակումը բնութագրեցին որպես ոտնձգություն Իրաքի իշխանության դեմ»: 2008 թ. նոյեմբերին ԱՄՆ-ը, Իրաքը և Թուրքիան համատեղ հանձնախումբ ստեղծեցին Իրաքի հյուսիսում քուրդ անջատականների դեմ պայքարելու համար³⁷:

Քաղաքականության մեջ մեկուսի խնդիրներ չկան և այնպիսի մի իրադարձություն, ինչպիսին համընդհանուր ընտրություններն են, չատ ալեի խտացված գույներով և արտահայտված շարժապարտ է երևույթներն ու իրադրությունը երկրում ու նրա շուրջը: Ահա այդպիսին էր իրավիճակն Իրաքում 2010 թ. հունվարի 30-ին ծրագրված ընտրությունների նախաշեմին և ընտրություններից հետո: Իրաքի

³⁶ "Независимая газета", 1.02.2010.

³⁷ «Ազգ», 25.03.2009:

վաղապես Նուրի ալ Մալիքին հենց սկզբից չէր թաքցնում նոր ժամկետով վերընտրվելու իր հավակնությունը: Սպասվող ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը «կանխատեսելի» սցենարով, թելադրում էր նաև ուժային աջակցություն՝ «անհրաժեշտության դեպքում օգնություն, օժանդակություն ցուցաբերել իրաքյան քանակին ընտրությունների ժամանակահատվածում»³⁶. Որ Իրաքի վաղապեսը կտրուկ գործողությունների էր անցել, դրա հաստատումն են նաև ընտրությունների ողջ ընթացքն ու դրան հաջորդող շրջանը:

Այս ընտրությունները կազմակերպչական առումով, ձգձգվելով հասան մինչև 2010 թ. մարտի սկիզբը: Մարտի 7-ին Իրաքում կայացած համընդհանուր ընտրություններում Ալաուիի խումբը սալթակող հաղթանակ տարավ, կարողանալով ապահովել 91 տեղ ներկայացուցիչների խորհրդում՝ Ազգային ժողովում: Նա «բազմիցս հայտարարել էր, որ «ալ-Իրաքիյա»-ն վեր է կրոնական տարածայնություններից, ինչը իրեն բերեց սուննիների ծայներ, որոնք դժգոհ են ազգային ժողովում շիա կուսակցությունների գերակշռությունից»: Մական Ալաուիի խմբակցությունը ինքնուրույն կառավարություն ձևավորել չի կարող, քանի որ 325 տեղանոց ներկայացուցիչների խորհրդում պահանջվում է առնվազն 163 տեղ, ինչը ինքը չունի: Ուրեմն սպասվում էին դժվարին քանակություններ խումբ-խմբակցությունների հետ:

Միջազգային դիտորդները և ՄԱԿ-ի ներկայացուցիչները ընդգծեցին, որ քվեարկության ընթացքում զանգվածային խախտումներ չեն զրանցվել: Մական, չնայած դրան, վաղապես ալ-Մալիքին, որի խումբը ստացել է ընդամենը երկու մանդատով պակաս «ալ-Իրաքիա» խմբի համեմատ, հրաժարվեց ընդունել հաշված ծայների արդյունքը:

Երրորդ տեղում շիա կրոնական կուսակցությունների միավորումն էր 88 պատգամավորական մանդատով: Այս միավորումը կոչվում է «Իրաքյան ազգային այլանս», ուր գլխավոր դերը իրականացնողը Մուքթադա ալ Մադր օադիկալ իմամի շարժումն է: Այս և «Օրենքի պետություն»ը կկարողանան ազգային ժողովում վերահսկել 159 տեղ, ապահովելով ծայների կեսից մի քիչ պակասը: «Քուրդիստանիյա» խումբը չորրորդ տեղում է և միավորում է Իրաքյան Քուրդիստանի

³⁶ "Hesabucumax gazetes", 19.05.2009.

երկու հիմնական քաղաքական կուսակցությունները: Նրանց աջակցությանը հասնելու դեպքում Ալաուիի խումբը ընդամենը 43 լրացուցիչ ձայն կստանա, ընդհանուր թվով 134, ինչը քավարար չէ և հարցականի տակ է³⁹:

Այստեղ ստացվում է շատ լարված և քարոզ իրավիճակով սցենար, ինչը և փաստորեն կյանքի կոչվեց Իրաքում: Նոր կառավարություն ձևավորելու նպատակով Ալադ Ալաուին ջանում էր համագործակցել քուրդ կուսակցությունների, խումբ-խմբակցությունների հետ՝ կառավարական կոալիցիա ստեղծելու առաջարկով: Իրաքյան ընտրությունների մասին ընդունված օրենքի համաձայն, ժամկետը 30 օր է, հաշված ընտրությունների ավարտից, որի ընթացքում չտեղավորվելու, այսինքն նախարարների խորհուրդ՝ նոր կառավարություն չձևավորելու դեպքում, այդ պաշտոնում գործում է նախկին վարչապետը:

Սրա հետ մեկտեղ իրաքյան այս ընտրությունների դիտորդները ծանոթ են անցյալի փորձին, երբ 2003 թ. Իրաք ամերիկյան ներխուժման հետևանքով սուննիները հայտնվեցին իրենց իրավունքները ուղնահարված փոքրամասնության տեղում և «ալ-Իրաքիյա» խմբի հետ հույսեր են կապում: Միաժամանակ նախորդ ընտրություններում՝ 2005 թ., շիաների հաղթանակը հանգեցրեց երկրում քաղաքացիական պատերազմի, ինչը տևեց մինչև 2007 թ., խլելով հազարավոր իրաքցիների կյանք: Հետևաբար հորդորները նախազգուշական բնույթի էին, քանի որ Ալաուիի խումբը փաստորեն շատ ավելի հաստատուն դիրք գրավեց ընտրություններում, չնայած քավարար ձայների քանակաչափին:

Իրադարձություններն Իրաքում անկանխատեսելի բնույթ հաճախ են ստանում: 2010 թ. ապրիլին Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքին մամլո հատուկ ասուլիսում հայտարարեց, որ Իրաքի անվտանգության ուժերը ամերիկյան զինվորականների հետ Իրաքում ոչնչացրել են «ալ Կաիդա»-ի երկու ղեկավարների՝ Աբու Այուբա ալ Մասրին և Աբու Օմար Բադդադիին: Կարծիք կար, որ ալ Մասրին է օգնել «ալ Կաիդա»-ի ղեկավարներից մեկին՝ Աբու Մուսաբ ալ Ջարկաուին Իրաքում ձևավորելու այդ խմբավորման առաջին քիչը, 2003 թ. ամերիկյան զորքերի այդ երկիրը ներխուժումից անմիջապես հետո: Բավական է նշել, որ 2007 թ. ապրիլին ալ Մասրին հայտարարված էր

³⁹ "Hesouscama gazeta", 29.03.2010.

«պատերազմի նախարար»՝ մի քանի մարտական խմբավորումների գլխավոր կազմակերպության ներսում⁴⁰:

Այստեղ գլխավորապես առանձնանում է Իրաքում ամերիկյան հրամանատարության խանդավառությունը: «Ամերիկյան հրամանատարությունը հույս է հայտնում, որ մարտիկների ղեկավարների ոչնչացումը կնպաստի Իրաքում կայունության ամրապնդմանը, որը հայտնվել է հարցականի տակ, երբ մարտին կայացած համընդհանուր ընտրությունները անվիճելի քացարձակ հաղթանակ չբերեցին քաղաքական ուժերից և ոչ մեկին: Առավելա, անցյալ երկուշաբթի իշխանությունները որոշում կայացրին վերահաշվելու Բաղդադում ծայները, ինչը կադող է հանգեցնել ընտրությունների արդյունքների վերանայմանը, առաջ բերելով շիաների ու սուննիների միջև քաղաքացիական պատերազմի վերսկսում»⁴¹:

2010 թ. ապրիլի 19-ին Իրաքի իշխանությունների որոշումը՝ համընդհանուր ընտրությունների ծայների վերահաշվարկի մասին, երկրում ընդունվեց ոչ միանշանակ, քանի որ կողմերից յուրաքանչյուրն ուներ իր «հաշվարկները»: Փաստորեն այս ընտրությունները երկրում ուժերի հարաբերակցության պատկերն են վկայում:

Իրաքի հասարակական-քաղաքական կյանքը երկրի ներսում, ամերիկացիների ռազմական ներխուժումից հետո, ողջան որ պայմանավորված է ներքին ազդակներով, ուժերի հարաբերակցությամբ, տապալված ռեժիմի վարած քաղաքականության հետևանքներով, նույնքան և շատ ավելի՝ արտաքին ճնշումներով, Իրաքում ամերիկյան ներկայությամբ և Իրաքի չուրջ քաղաքական զարգացումներով:

KARINE SAMVELYAN

THE SOCIAL-POLITICAL SITUATION IN AND AROUND IRAQ IN 2009 – 2010

This article deals with analysis of the social-political factors in Iraq during 2009 and 2010. This period included the final stage of an evacuation of American

⁴⁰ «Հոսսուսուսե րաթեմ», 21.04.2010.

⁴¹ Լույն տեղում:

troops from Iraq. Although the deadline for this process was determined as 2011, it will nevertheless embrace the year of 2012.

It is worth of noting that in the beginning of 2010 the social-political situation in Iraq was full of unrest and destabilization. The elections of the National Assembly on 7th of March were very important for Iraq. The elections discovered a certain correlation between the political forces and social moods. This, in its turn, bore serious contradictions and confrontation that existed between various religious trends and trends.

The foreign policy of Iraq in this period is rather complicated. It included certain relations with its neighboring countries such as Iran, Turkey and Kuwait.

The people of Iraq strived for democracy and stability for their country.

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՆԻԿՈՒԱՅ ԿԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՒՐԱՐՏԵՐԵՆ ԺՏԻՆԿ ԺՏՏՍ/ՔԱՆԵՐԻ ԱՏՈՒԳԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ժՏԻ բառը գիտությանը հայտնի է վաղուց, դեռևս ուրարտերեն արձանագրությունների գերմանացի Մորդոմանի 1872 թ. առաջին հրատարակությունից, սակայն, առայժմ նրա նշանակությունը չի բացահայտված: 1991 թ. հրատարակվեց բրոնզե արձանագիր մի առարկա՝ հետևյալ բովանդակությամբ.

¹Hal-di-e e-ú-ni-e i-ni da-šú-ú-si ²Me-nu-a-še ³Íš-pu-ú-ni-e-hi-ni-e-še uš-tú-ni ⁴Hal-di-ni-ni al-šu-i-ši-ni ⁵Me-nu-a-ni LUGAL DAN.NU LUGAL ⁶Ši-a-i-na-ú-e.

«Նապղի (աստծուն)՝ տիրոջը, այս ժՏՏՍ-ն Մենուան՝ Իշպուինի որդին, նվիրեց: Նապղյան մեծությամբ Մենուան արքա է հզոր, արքա՝ Բիայնիի (երկրի)»¹:

Այս նորահայտ ժՏՏՍ-ի համար ենթադրաբար առաջարկված է kandelaber քարզմանությունը, սակայն դա ոչ մի հիմնավորում չունի, քանի որ «ճրագը» tanasi ուրարտերեն գրառմամբ հայտնի է KYKH 395 արձանագրությունից²: Մյուս կողմից, ամենևին բացառված չէ սույն ժՏԻ-ի հետ առնչել նորահայտ արձանագրության նույնարմատ da-šú-ú-si-ն (այստեղ միջանկյալ ú-ն գրաֆիկ նշանակություն ունի՝ տողի ազատ մնացած հատվածը զբաղեցնելու համար): Ամենայն հավանականությամբ ժՏԻ-ն և ժՏՏՍ-ն սերում են միևնույն ժՏ - արձանաից: Սակայն, դա ևս առայժմ հետաքրքրության առարկա չի դարձել:

¹ Bell O., Ore Deposits and Mining in Eastern Anatolia in the Urartian Period: Silver, Copper and Iron, in R. Merhav (ed.), Urartu: A Metalworking Center in the First Millennium B.C.E., Jerusalem, 1991, pp. 16-41 (esp. p. 47f.).

² Арутюнян Н., Корпус урартских клинообразных надписей (այսուհետև՝ KYKH), Ереван, 2001. Դ՛նչպես նաև Salvini M., Corpus dei testi Urartei (այսուհետև՝ CTU), v. I, Roma, 2008.

Ի դեպ, հատկանշական է, որ **daši** - **dašusi** բառերը սերտորեն ասոցիվում են Մենուայի անվան հետ և հանդես են գալիս Իշպուինի - Մենուայի KՄԿԻ 38 և Մենուայի վերը նշված նորահայտ արձանագրության մեջ:

Հատկանշական է նաև, որ KՄԿԻ 38 պաշտամունքային արձանագրության մեջ **daši**-ն և **BE.LI^{MES}**-ը («զենքեր») միատեսակ ասոցիվում են խալդիի անվան հետ և նրանց համար նախատեսված է կենդանիների միանման զոհաբերություն՝ 2 ցուլ, 4 ոչխար³: Ի դեպ, ⁹Haldini **daši**-ի և ⁹Haldinil **BE.LI^{MES}**-ի հետ ասոցիվում է նաև ⁹Haldini ⁰⁸šuri-ն:

Այսպիսով, եթե դեպքերում ⁰⁸šuri «զենքի» և **BE.LI^{MES}** զենքերի ասոկյությունը և բոլոր երեք դեպքերում նաև **daši**-ի սերտ կապը խալդիի անվան հետ ակամայից ակնարկում է, որ **daši**-ի դեպքում ևս հավանաբար գործ ունենք զենքի հետ: Այդ տեսակետից ակամայից ծագում է հարց. արդյո՞ք ինքնավոր է ուրարտերեն **daši**-ի տակ տեսնել հայերենի նույնարմատ «դաշույն» բառը: Հմմտ., թերևս, ուրարտերենի šuri-ն և հայերենի «սուր»-ը: **daši**-ի զենք լինելու մասին է վկայում նաև նրա ⁹Haldini մակդիրը: Հմմտ. ⁹Haldini ⁰⁸šuri-ն, ⁹Haldinaue **BE.LI**-ն:

Մյուս կողմից, այդ բառը իր կազմությամբ ակնհայտորեն համադրելի է ուրարտերեն **ašhi** «զոհ» և **ašihusi** «զոհարան», **uršhi** «կապարճ» և **uršihusi** «կապարճարան», **bedi** «լավ» և **badusi** «հոյակապ» բառերին: Այս շարքը կարելի է շարունակել:

Եթե այս ամենը ինչ-որ չափով ճշմարիտ է, ապա ուրարտերեն **daši**-ն կարող է լինել հայերեն «դաշույնը», իսկ **dašusi**-ն՝ «դաշնոցը», որի մեջ պահել կամ զետեղել են դաշույնները:

Ի դեպ, պետք է նկատի ունենալ, որ նետապաշենքը պահվել են **uršhi** - կապարճների մեջ, որոնք **dašusi**-ի նման պատրաստվել են բրոնզից և երկու դեպքում դրանց վրա փորագրվել են սեպագիր տեքստեր⁴: Պատահական չէ նաև, որ **daši** - **dašusi**-ն, այսինքն՝ «դաշույն - դաշնոցը» արձանագրության տիտղոսաշարում սերտորեն ասոցիված է Մենուայի **LUGÁL DAN.NU** հզորության հետ: Հմմտ. ուրարտական տարեգրությունների յուրաքանչյուր տարվա այսպես կոչված

³ KՄԿԻ 38, տեքստ I, տողեր 7, 15, տեքստ II, տողեր 20, 26, ինչպես նաև՝ CTU A 3-1:

⁴ Տե՛ս KՄԿԻ 26-27 և 29 արձանագրությունները:

վերնագրային տեքստերի ⁴Haldi kuruni ⁴Haldini ⁶šuri kuruni «Նալդի աստվածը հզորը, Նալդի աստծո զենքը հզոր է» արտահայտությունը:

⁴Haldini daši-ն, ըստ երևույթին, ⁴Haldinaše BE.LI-ի սինոնիմն է՝ տեքստի փորագրման համար համեմատաբար փոքր հատված գրադեցնող տարբերակով: Այստեղ նույնիսկ կարելի է անտեսել **daši** բառի *-e* հոլովական վերջավորությունը՝ պահպանելով միայն վերջին նշանը (եզակի տրականը):

Եթե ուրարտերեն **šur** և հայերեն «սուր» համադրությունները վաղուց ընդունված է ուրատագիտության մեջ, ապա ուրարտերեն **daši**-ի և հայերեն «դաշույն»-ի համադրությունը գուցե նույնպես ընդունելի համարվի:

Հոլովածը եզրափակվենք այն կարևոր փաստով, որ հնդեվրոպական հայերենի «դաշույն»-ը հանդիպում է նաև հնդեվրոպական (եզվախմբի այլ քառարմատներում ևս: Հետևաբար, խուրդի-ուրարտական-արևելակովկասյան (եզվախմբի «դաշույն»-ը, ըստ երևույթին, կարելի է համարել փոխառություն հնդեվրոպական հայերենից:

NIKOLAY HARUTYUNYAN

THE ETYMOLOGY OF THE URARTIAN WORDS *daši* AND *dašusi*

The word *daši* has been known to scientists since a long time, when the German researcher Mordtmann published in 1872 the Urartian inscriptions for the first time; but until now the meaning of that word has not been discovered. In 1991 an inscription of a bronze object was published which had the following contents: "Menua, the son of Išpuini, gave this *dašusi* to the Lord God Haldi. With a might of Haldi Menua is powerful king, the king of the country of Biainili".

One purposed supposedly the translation "candelabra" for this newly discovered *dašusi*, but this translation has no substantiation, because the word "candle" – "tanaz" is known in an Urartian written form from the inscription KUKN, № 395. In all probability the words *daši* and *dašusi* stem from the same root "daš-". It is characteristic that in the ritual inscription KUKN 38 the words *daši* and BE.LI³²³ "weapons", have to do in a similar way with the name of ⁴Haldi and for both of them a similar sacrifice of animals is determined. By the way, also ⁴Haldini ⁶šuri has to do with ⁴Haldini *daši* and ⁴Haldinili BE.LI. So, in one case the presence of *šuri* "a weapon" and BE.LI "weapons" and in all cases the close connection of *daši* with the name of ⁴Haldi hint automatically at the fact that perhaps also in case of *daši* we have to do with a weapon. In that case the question arises, if it is possible to see in the Urartian word *daši* the similar Armenian word "dashujn" – "dagger" and in *dašusi* the Armenian word

"dashnoz", a case into which one put or kept the daggers. We are going to conclude the article with the important fact that the Armenian word "dashujn" is found also in other word roots of the Indo-European family of languages. Therefore, N. Harutyunyan considers the word "dashujn" of Hittite-Urartian-Indo-European family of languages to be a loan-word from the Indo-European Armenian language.

ՀԱՍՄԻԿ ՀԱՄՅԱԿՅԱՆ

ՆՈՒՈՒԿԱԿԱՆ ¹Ša(w)uš(x)a ԱՄՏԿԱԾՈՒՀՈՒ ԱՆՎԱՆ ԵՎ ԿԵՐՊԱՐԻ ԴՐՍԵԿՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՄՊԵԼԱԿԱՆ ԵՎ ԼԵՋԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ²

Նինվեի Շավուշկա աստվածուհու անվան վաղագույն վկայությունները հայտնի են Ուրի III դինաստիայի ժամանակաշրջանի տեքստերից, որտեղ նա հանդես է գալիս ³Ša-u₁₅-ša ni-nu-a⁴ ձևով՝ էնլիլից ու Նինլիլից հետո⁵:

Նինվեի Շավուշկան Նինվեի Իշտարի խուժիական անվանումն էր, և նա կայծակի ու ամպրոպի աստծո՝ Թեշուբի հետ զլխավորում էր խուժիական դիցարանը⁶:

Նրա պաշտամունքը հետագայում տարածվում է Փոքր Ասիայում, Սիրիայում և հասնում մինչև Միջերկրականի ափերը: Շավուշկայի

¹ Նորին շնորհակալություն ենք հայտնում քննարկումների և զրախանության տրամադրման համար Ա.Քուսանին, Ա.Գեորգյանին, Ե.Գրեկյանին, Տ.Դալայանին: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Հ.Մարտիրոսյանին՝ հոդվածի լեզվաբանական մասի մանրամասն քննարկումների համար:

² Գ.Ղափանցյանը, անդադաժանալով ³Ša(w)uš(x)a խուժիական աստվածուհու անվան արձագանքներին հայերենում, գտնում է, որ այն պատկանելի է մեր լեզվում հազվադեպ հանդիպող «շոշուկե» - «ժանձուկե, կոտրատվե, ժեքձեքե» բառերում, որոնք վկայված են Հովհան Ոսկեբերանի հայերեն բարձրանություններում: Ըստ Գափանցյանի, այս վերոնշյալ բառերը արտահայտում են սիրո և պաշարելության այդ աստվածուհու իրմանական հատկանիշները (Каландян Г., Историко-лингвистические работы, т. 1, Ерewan, 1956, с. 281-282): Նշված տեսակետը ընդունում է նաև Գ.Վարդումյանը (Вардумян Г., Древнеармянские культы армян, Армянская этнография и фольклор, 18, с. 71.): Սակայն Գափանցյանի այս ստուգաբանությունը անհիմն է համարել Գ. Ձախուկյանը (Ձախուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 423-424): Մենք ևս ժամանակին այդ տեսակետ ենք հայտնել (Հնագրական Հ. Սուսանվեր Անուշավանը և նրա կրթկապան ու խուժիական զուգահեռները, Մերձավոր Արևելք, Հոդվածների ժողովածու, II, Երևան, 2005, էջ 28-34): Մեր տեսակետներն այս առումով իրենց հետագա զարգացումն են առաքել սույն հոդվածում:

³ Westenholz J., The Old Akkadian presence in Nineveh: fact or fiction, Iraq, v. LXVI, 2004, p. 10.

⁴ Haas V., Geschichte der Hebräischen Religion, Leiden - New York - Köln, 1994, S. 346; Lambert W., Star of Nineveh, Iraq, v. LXVI, 2004, p. 35.

զլխավոր պաշտամունքային կենտրոններն էին Վերին Եփրատում գտնվող Մամուխա քաղաքը, հյուսիս-արևմտյան Սիրիայի Խատտարինա, հյուսիսային Կիցցուվատնայի Լավացանտիա և այլ քաղաքները⁴։

Ասորեստանյան տեքստերից մեկում, որ վերաբերում է Նինվեի Իշտարին, վերջինս բնութագրվում է որպես Նինվեի թագուհի, Մեծ տիրուհի պատերազմների տիրուհի, մեծ անգղ, որ որոշումներ է կայացնում և ճակատագրեր տնօրինում, ով ընտրում է հողեր, շատ հեշտասեր է, ով դեկավարում է բոլոր քաղաքները, ով հրկիզում է իր թշնամիներին և ում համար հաճելի է աղոթել⁵։

Գիտության մեջ քննարկվել է, որ Նինվեի Իշտարի կերպարը ծագում է Նինվեի Շավուշկայից⁶։ Նինվեի Իշտարը, ըստ ուսումնասիրողների, հայ առասպելաբանության մեջ հանդիսացել է Շամիրամի նախատիպը։ Ն. Ադոնցը գտնում է, որ Շամիրամն իր հոյակապ փառքի համար պարտական է «ոչ թե պատմական Շամուրամաթի դժգույն ուրվականին, այլ հատկապես այնքան ժողովրդական աստվածուհի Իշթարին»⁷։ Ուշագրավ է, որ Շամիրամի մասին Մովսես Խորենացու մուտ պահպանված բնութագրումները զրեթե նույնական են վերը քննարկված տեքստում տրված Նինվեի Իշտարի բնութագրերին⁸։ Մասնավորապես, հետևյալ տողերը համընկնում են Շամիրամի կերպարին. Իշտարը Նինվեի թագուհին է, այնպես, ինչպես հայկական առասպելում Շամիրամը, որ կոչվում է «Նինվեի թագուհի»։ Իշտարը պատերազմների տիրուհի է, որ որոշումներ է կայացնում և ճակատագրեր տնօրինում։ Հայկական առասպելում Շամիրամը, լսելով Արայի գեղեցկության մասին, *որոշում է* ամուսնանալ նրա հետ և, մերժում ստանալով, *պատերազմում է* Արայի դեմ ու կոտորում նրա զորքը։ Իշտարը բնութագրվում է որպես *հողեր ընտրող, շատ հեշտասեր, քաղաքներ հովանավորող և թշնամիներին հրկիզող*։ Ըստ Խորենացու, Շամիրամը Վանի շրջակայքում *ընտրում է հողեր* և կառուցել տալիս Վան քաղաքն իր այգիներով ու

⁴ Haas V., Geschichte der Hethitischen ..., S. 345-347.

⁵ Lambert W., *Ištar...*, p. 35.

⁶ Виллаке К., Ту'амат-базату и богиня Шав'шукка иишвалукаая, Древний Восток, № 5, Ереван, 1988, с. 23-24.

⁷ Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 94։

⁸ Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, բարձրագույնագույնը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Սև. Մախաչյանցի, գիրք 1, գլուխ ԾԵ, ԾԶ, ԾԷ, ԾԸ։

դաստակերտներով: Խորենացին Շամիրամին բնութագրում է որպես *վախաշուտ* և այրասիրտ, նա *հաշվեհարդար* է տեսնում իր որդիների հետ և *կոտորում* բոլորին՝ ազատվում է միայն Լինվաճ: Շամիրամի և Լինվեի Իշտարի բնութագրերի այս նմանությունները կարելի էր, միգուցե, բացատրել այն հանգամանքով, որ նրանք երկուսն էլ մայր դիցուհու կերպավորումներ են, և այս բնութագրումները բնորոշ են հեթանոսական դարաշրջանի բոլոր մայր աստվածուհիներին, որոնք հանդես են գալիս որպես դիցարանի գլխավոր աստծո կինը, մայր հողի տիրուհին, և որի հիմնական գործառույթներն են պտղաբերությունը, մարմնական սերը, քաղաքների հովանավորությունը, ռազմունակությունը և այլն⁹:

Սակայն ստորև քննարկվելիք նյութը ցույց է տալիս, որ ոչ միայն Լինվեի Իշտար-Շավուշկան նկատելի հետքեր է թողել հայ առասպելաբանության Արա Գեղեցիկ և Շամիրամ առասպելույթի ծնավորման վրա, այլ նաև հնարավոր է, որ Արա Գեղեցիկի թոռան՝ *Սոսանուէրի* անունը ստուգաբանորեն կապված լինի Լինվեի Շավուշկայի անվան հետ:

Սոսանվեր Անուշավանի մասին տեղեկություններ պահպանվել են Խորենացու «Հայոց պատմության» Արա Գեղեցիկին և Շամիրամին նվիրված առասպելաշարքում¹⁰:

Սոսանվեր Անուշավանը Արայան Արայի (Կարդոսի) որդին էր և, համապատասխանաբար, Արա Գեղեցիկի թոռը: Արա Գեղեցիկի կերպարի վերլուծությունը ցույց է տալիս, որ նա բազմաֆունկցիոնալ բնույթ ունի և օժտված է պտղաբերության, մեծնող-հարություն առնող աստծո, անդրաշխարհի, ինչպես նաև ռազմի գործառույթներով¹¹:

Արա Գեղեցիկի որդու՝ Արայան Արայի մասին հայտնի է, որ զոհվում է ռազմադաշտում, ինչը նրան դարձնում է ռազմական գործառույթների կրող, իսկ նրա որդի Սոսանվեր Անուշավանը օժտված է պտղաբերության գործառույթներով: Ըստ Խորենացու, նրա պաշտամունքը կապված էր սոսի ծառի հետ¹², իսկ ծառերի պաշտամունքը հին աշխարհում ամենուր կապվում էր

⁹ Токарев С., Богиня-мать, Мифы народов мира, т. 1, Москва, 1980, с. 179-180.

¹⁰ Մովսես Խորենացի, գիրք 1, գլուխ Ի:

¹¹ Այս մասին առավել ծանրամասն տե՛ս Հմայակյան Հ., Հայաստան ⁹Ա.GUR-ը և Արա Գեղեցիկը, Մեծավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXXII, Երևան, 2004, էջ 381-394:

¹² Մովսես Խորենացի, գիրք 1, գլուխ Ի:

պտղաբերության պաշտամունքին առնչվող, մեծնդ-հարության առնող աստվածությունների հետ: Ղ Ալիշանը, հաշվի առնելով տոսի ծածերին Անուշավանի նվիրաբերումը և խորենացու բերած նրա բնութագրերը, որպես «չատահանճար յիր և ի քան» (չատ զործունյա հանճարախոս), նրան համադրելի է համարում հունական Ապոլոնի հետ, որի պաշտամունքում ասանձնակի դեր ունի ծառապաշտությունը և որը երգահանության ու բանաստեղծության վարպետ էր: Ոստ Ղ . Ալիշանի Ապոլոնը ևս կոչվել է Սոսյան, որի պատճառները դիցաբանները չգիտեն¹³: Ապոլոնը պաշտվել է նաև որպես դեպի վեր նեղացող սյուն, հիացինտ, մոշենի, դավինի, կիպարիս, կադնի, արմավենի և այլն¹⁴:

Ճայկական հավատալիքներում այդ տիպի, այսինքն, պտղաբերության պաշտամունքին առնչվող կերպարներ են «Սասնա Շոթր» էպոսի Փոքր Միերը կամ «Վիպասանցի» Արտաշեսի և Սաթենիկի որդի Արտավազը: Սոսանվերի մասին, քացի վերը նշվածից, խորենացին հայտնում է, որ նա կարողանում է Նինվասից կամ Ջամեսեսից՝ Շամիրամի որդուց, բարեկամների օգնությամբ հետ ստանալ նախ մեր երկրի մի մասի կառավարումը, հետո ամբողջ երկրի իշխանությունը¹⁵:

Առասպելից պարզ չէ, թե ով է Սոսանվերի մայրը, սակայն մեզ հայտնի է, որ նրա հորը՝ Կարդոսին, Շամիրամը, Արա Գեղեցիկի նվառմամբ տածած սիրո պատճառով, կոչում է Արայան Արա և նշանակում է երկրի գլխավոր: Վերջինս պատերազմում զոհվում է Շամիրամի հետ: Փաստորեն, Արայան Արան Շամիրամի դաշնակիցն էր ու զինակիցը, ինչը թույլ է տալիս աստիճանաբար վարկած, որ Սոսանվերի մայրը, ըստ վերակազմության, հնարավոր է Շամիրամը լիներ (այս միտքը հիմնավորող այլ փաստարկներ կրելվեն ստորև):

Ինչպես արդեն նշվել է, գիտության մեջ տարածված է այն տեսակետը, որ Շամիրամի կերպարը ծագում է Նինվեի Իշտարից, վերջինս էլ՝ Նինվեի Շավուշկայից: Իշտարի կերպարը համադրելի է նաև կովկասյան ավանդազրույցների կենտրոնական կերպարի՝ Սաթանեյ-Սաթանայի հետ: Օրինակ, կարադղինական հերոսուհու անունն էր Իշտար-Սաթանեյ¹⁶:

¹³ Մեծն Ալիշան, Ճայրց հին հավատքը կամ Նրբանական կրոնը, Երևան, 2002, էջ 127:

¹⁴ Losse A., Античная мифология в ее историческом развитии, Москва, 1967, с. 284.

¹⁵ Սոսյան խորենացի, գիրք 1, գլուխ Ի:

¹⁶ Ички-уна Ш., Паметникъ ебхазского фольклора, Сухуми, 1977, с. 52, прим. 1:

¹⁷ Եսերույան Ա., Արամի աստվածը հնդեվրոպական աստվածաբանության

Կովկասյան Սաթանայի համարժեքն է հայկական ավանդույթում պատկանված Արտաշեսի կինը՝ պլանների արքայադուստր Սաթենիկը¹⁷, որի որդին էր Արտավազը (հիշենք վերը նշված Արտավազի և Սոսանվերի համարժեքությունը): Կովկասյան տարբերակներում Սաթանա-Սաթանեյի որդու անունն է օս. Սոսյան, աղղը. Սոսրուկո, արխ. Սասըրըկվա, որոնք ծնվում են քարից՝ Սաթանայի գետային արկածի հետևանքով: Օրինակ, աղղական տարբերակում Սաթանեյը գետում լվացք անելիս՝ տեսնում է մյուս ափին ծերունի հուլիվ Սոսին, որը, ապշած նրա գեղեցկությունից, բեղմնավորում է ասափնյա քարը, ծնված տղայի անունը դնում են Սոսրուկո: Կովկասյան տարբերակներում Սոսյան, Սոսրուկո և Սասըրըկվա անունները, ըստ ժողովրդական ստուգաբանության, նշանակում են Սոսի որդի¹⁸ և համահունչ են Սոսանվերի անվանը: Այս անվանումների մեկ այլ զուգահեռը կարող է համարվել աղղական ասասպեյներում ասկա Սոուսըրըջ աստծո անունը, որը հանդիսացել է ինչպես հողագործության, այնպես էլ անասնապահության հովանավոր աստվածություն¹⁹ և հավանականորեն կապված է եղել նաև արևի պաշտամունքի հետ²⁰: Այսպիսով, համակարգելով վերը նշվածը, տեսնում ենք հետևյալ համադրումները.

<i>Արացան Արա և Շանիրամ</i>	<i>Արտաշես և Սաթենիկ</i>	<i>Սաթանեյ և Սոս (աղղը.)</i>
<i>Սոսանվեր Անուշավան</i>	<i>Արտավազ</i>	<i>Սոսյան/Սոսրուկո/ Սասըրըկվա</i>

Նկատենք նաև, որ Սոսանվեր նշանակում է «սոսու ընծայած» (կամ «սոսուն նվիրված»), իսկ կովկասյան Սոսյան, Սասըրըկվա տարբերակներում նրանց անվանումների ժողովրդական ստուգաբանությունը, որպես «Սոսի որդի», իմաստային առումով զրեթե նույնական են: Սոսանվերի անվան «նվեր, ընծա» իմաստի հետ

համատեքստում և հայր ազգածագման խնդրը, Երևան, 1997, էջ 116:

¹⁷ Գեարգույան Ա., Արամի ասասպեյը..., էջ 112-116; Դալայան Տ., Հայրց փնայան Սաթենիկ բազուիու կերպարի ծագումնաբանության շուրջ, ԳԲՀ, քիվ 2, 2002, էջ 191-213:

¹⁸ Нарты, адыгский героический эпос, Москва, 1974, с. 194.

¹⁹ Аразинба В., Нартский сюжет о рождении героя из камня, Древняя Анатолия, Москва, 1986, с. 152.

²⁰ Лазров А., Доисламские верования адыгцев и кабардинцев, Исследования и материалы по вопросам первобытных религиозных верований, Москва, 1958, с. 216.

ուշագրավ զուգահեռներ կարելի է նկատել խուժի-խեթական ժայռ-հերոսի՝ Ուլլիկումմիի մասին առասպելում: Կումարբին՝ նրա հայրը, որ բեղմնավորելով ժայռը ծնում է Ուլլիկումմին, խորհում է, թե ինչպես թաքցնի նրա գոյությունը, մինչև նրա մեծանալը և հանձնելով նրան որպես «ընծա, նվեր» Իրսիդրա աստվածներին, պատվիրում է տանել որդուն դեպի Սև հողերը²¹, որոնք խորհրդանշում են անդրաշխարհը:

Սոսանվեր Անուշավանը իր ծնունդով չի կապվում ժայռի հետ, ինչպես կովկասյան առասպելների վերոհիշյալ հերոսները, կամ Ուլլիկումմին, սակայն նա համարժեք է Փոքր Միերին և Արտավազդին՝ ժայռում փակված հերոսներին: Իսկ Ուլլիկումմիի ծնունդը՝ ժայռի բեղմնավորման արդյունքում, զրեթե նույնական է կովկասյան ավանդազրույցների ժայռածին հերոսների հետ, որոնք անվանապես համահունչ են հայկական Սոսանվերին:

Հացդոդ հայ-կովկասյան-խուժիական զուգահեռը հետևյալն է. Սաթանայի մասին կովկասյան առասպելներում առկա է գետի ափից Սաթանայի և հովվի երկխոսությունը: Հայկական առասպելում Սաթենիկի և Արտաշեսի հանդիպումն ու երկխոսությունը ևս կայանում է գետի ափին: Այստեղ բացակայում է ժայռի պլոժեն, սակայն առկա է նրանց բաժանող գետը, և նրանց որդին է Արտավազդը՝ ժայռին զանված հերոսը (որը համարժեք է Սոսանվերին, Սուլանին):

Ուշագրավ զուգահեռ այս երկու՝ կովկասյան և հայկական սյուժեների հետ պահպանվել է նաև Ուլլիկումմիի երգի տարբերակում, երբ Նինվեի Շավուշկան (որը համարժեք է Շամիրամին և Սաթանային) տեղեկանալով, որ Ուլլիկումմին կովելու է եղբոր հետ, գնում է ծովափ՝ երգով մեղմելու Ուլլիկումմիի սիրտը²²: Ակնհայտ է նույնությունը հայկականում՝ Արտաշեսի և Սաթենիկի գետափնյա երկխոսության, որում վերջինս խնդրում է ազատել գերված եղբորը: Իսկ ժայռի մոտիվը առկա է կովկասյան տարբերակում: Փաստորեն, հայկական առասպելում պահպանված «եղբոր համար խնդրելու մոտիվը» բացակայում է կովկասյանում և առկա է խուժիական տարբերակում:

Խուժիական Ուլլիկումմին համարվում է ֆալլիկ աստվածություն, որը սակայն առնչվում է ոչ թե բուն պտղաբերությանը, այլ կույր,

²¹ Иванюв В., Луна упахала с неба, Москва, 1977, с. 128.

²² Haas V., Geschichte der Hethitischen ..., S. 90; Hittite Myths, Translated by Harry Hoffner, Atlanta, 1991, p. 56.

անկառավարելի կրքին²³։ Ի դեպ, խելահեղությունը, դիվականությունը և կերպարի երկվեղկվածությունը բնորոշ է նաև մյուս ժայռում փակվող կամ այդ պաշտամունքին առնչվող կերպարներին (օրինակ հայկական Արտավազդին, «Սասնա ծռեր» էպոսի Փոքր Մեծին, կովկասյան Սուլանին և Սոսրուկդին²⁴, որոնք համարժեք են խուժական Ուլլիկունմին)։

Կերպարանալով Սոսանվերին՝ ներկայացնենք այդ անվան ստուգաբանության մեր վարկածը։ *Սոսանուերի*-ի առաջին *saws* արմատը, որը հետագայում դարձել է *sds*, Ա. Գեղորոյանի քանավոր հաղորդմամբ հնարավոր է համարժեք լինի Շավուշկայի անվանը։ Բանն այն է, որ երրորդ հազարամյակի վերջում Ուրի III դինաստիայի աղբյուրներում պահպանված Շավուշկա աստվածուհու վաղագույն վկայված ձևն է *ša-u₂-ša*, ինչը կարելի է քաջատրել նրանով, որ *Ša(w)uša* անվան մեջ *k/gw* վերջավորությունը նվազեցուցիչ մասնիկ է²⁵։ Այստեղից բխում է, որ Շավուշկայի անվան արմատը *saws*-ն է, որը կարելի է համարել Սոսանվերի անվան նախնական *saws* քաղաղրիչի հետ։ Հետևաբար, հնարավոր չէ՝ արդյոք Սոսանվերի անունը մեկնաբանել որպես «Շավուշկայի(ն) նվեր, ընծա», մի գուցե նաև որդի։ Սա լրացնում է վերը ներկայացված մեր կարծիքն այն մասին, որ Սոսանվերի մայրը կարող է լինել Շամիրամը, իսկ Նինվեի Շավուշկայի (Իշտարի) և Շամիրամի հատկանիշների ընդհանրության մասին մենք խոսել ենք վերևում։ Ուլլիկունմիի մասին երգում էլ երբոր համար խնդրում է հենց Նինվեի Շավուշկան²⁶։

Այս աստվածուհին գլխավորում է «քաբելյական խուժների» դիցարանը, իսկ Կիցցուվատնայում նա հանդես է գալիս արական աստվածությունների շարքում կայծակնային թեշուրից, Կումարբիից և էայից հետո²⁷։ Նինվեի Շավուշկան օժտված է նաև ջազմական հատկանիշներով²⁸, որոնք հատուկ էին Շամիրամին և։

²³ Дьяконов И., Архивические мифы Востока и Запада, Москва, 1990, с. 141.

²⁴ Գեղորոյան Ա., Հայկական ավանդական դրամայի տկունքների շուրջ, ԳԲՀ, 2006, քիվ 2, էջ 283։

²⁵ Вильке К., Tu'umam-Šauum u boginya ..., с. 23-24, u prui. 3; Westenholz J., The Old Akkadian presence..., p. 10; Wegner I., Der name der Ša(w)uška, Studies on the Civilizations and Culture of Nuzi and the Hurrians, Winona Lake, Maryland, 1995, p. 117-119.

²⁶ Hass V., Geschichte der Hethitischen..., S. 90; Hittite Myths, p. 56.

²⁷ Diakonoff I., Evidence of the Ethnic Division of the Hurrians, Studies on the Civilizations and Culture of Nuzi and the Hurrians, in honor of E.R. Lacheman. Edited by Morrison M.A.

Շավուշկայի անվան մի շարք ստուգաբանություններ են առաջարկվել, որոնք քննարկելով և վերլուծելով, Ի. Վեզնեբը ելել է այն եզրակացության, որ առավել հավանական է նրա անվան բխեցումը խուսիերեն *šavoš*՝ ածականից՝ կազմված *ša(v) = 0* և *ši* ածականակերտ վերջավորությունից: Նա *šavoš*՝ ածականը առաջարկում է քարզմանել «երևելի, բացառիկ, մեծ, վեհ, վեհանձն, հզոր, ուժեղ»²⁹: Ի դեպ, այս հատկանիշները կարող են բնութագրական լինել նաև Սոսանվեր Անուշավանի տիպի աստվածությունների համար:

Սոսանուէրի անվան ծագումը և որենացու մոտ կապվում է սոսի ծառանվան հետ³⁰: Ըստ Հր. Աճառյանի *սոս-ը «ի»* հղղվման բառ է, «անտառային բարձր ծառ, չինար»: Այն ստույգ ստուգաբանություն չունի, հանդիպում է V դարի պատմագրությունից սկսած, «սոսանուէր» նշանակում է «հին Հայոց Սոսեաց սրբազան անտառին ծնունած», իսկ *սոս/* վոխաբերական իմաստով նշանակում է «պերճ, հպարտ, սեզ»³¹: Գրեթե նույն իմաստով է *սոս* ածականը գործածված Անկանոն Գիրք Հին Կտակարանացու տեղ գտած «Տեսիլ Ենույթայ Կրդարոյն»-ում, ուր այն հանդիպում է հետևյալ նախադասության մեջ. «Եւ ահա ի վերայ ծովուն արծուի մի սոս և բարձրաթիչ, ուր թեւք և երեք գլուխք ի վերայ նորա, և կայր ի վերայ ցուրց ծովուն և դիտէր ընդ հարաւ ...»³²: Այստեղ *սոս* բառը դարձյալ կարելի է մեկնաբանել որպես «սեզ, հպարտ»: Ի դեպ, այս հայերեն ածականը գրեթե նույնական է խուսիական *avoi* «երևելի, բացառիկ, մեծ, վեհ և այլն» ածականի հետ:

Ղ. Ալիշանը, խոսելով սոսի ծառի պաշտամունքի տարածվածության մասին հայերի շրջանում, հղում է ցուղայեցի մի վարդապետի, որը գրել է. «մեծամեծ ծառոցն համրութեն, եթ Սուրբ կայ ի վերայ», և նշում, որ մինչև այժմ էլ այդ մեծամեծ ծառերի գտնված վայրերում կան նաև դրանց չափից ավելի պատվի արժանացնողներ³³:

and Owen D.I., Winona Lake, Indiana, Eisenbruns, 1981, p. 87.

²⁹ Heas V., *Geschichte der Hebräischen...*, S. 352.

³⁰ Wegner I., *Der name der Ša(w)uška*, S. 117-119.

³¹ Խորենացի, գիրք 1, գլուխ Ի:

³² Աճառյան Հր., *Հայերենի արձատական բառարան*, IV, Երևան, 1979, էջ 290:

³³ Անկանոն գիրք Հին Կտակարանաց, Վեճեռիկ, Ս. Ղազար, 1896 («Թանգարան հին և նոր նախնեաց» Ա), էջ 378:

³⁴ Ալիշան Ղ., *Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը*, Երևան, 2002, էջ 43:

Մեկ այլ հնարավոր զուգահեռ Սոսանվերի անվան հետ դարձյալ տանում է դեպի՝ այս դեպքում խուտի-միտաննիական իրականություն. այն կարելի է համադրել Միտաննիի հնդարիական արքայատոհմի Պարսադատտարի որդի՝ Սաուսադատտար-Սաուսուատտարի անվանման հետ (Ջ.ա. XVդ. երկրորդ կես): Հնարավոր է, որ վերջինիս հայերեն տարբերակն է Սոսանվեր³⁵: Sa-uš-sa-ta-(at-)tar (Ալալախից վկայված ձևը) և Sa-uš-ta-at-tar (Նուզիից) արքայանունը ստույգ ստուգաբանություն չունի: Նրա համար առաջարկվել է հնդիրանական *sau-kšatra- ստուգաբանությունը, որը նշանակում է «ում պատկանում է լավ իշխանությունը», ինչն այնքան էլ հավանական չի համարվել³⁶: Այնուհայտ է անվան երկրորդ բաղադրիչի հնդիրանական լինելը (սկտ. *dātar-*, *dātār-*), սակայն անվան առաջին մասը՝ sa-uš-sa, վերջնականապես ստուգաբանված չէ: Վերոնշյալ երկու անվանաձևերից առավել հին է համարվում Sa-uš-sa-ta-(at-)tar-ը³⁷: Հաշվի առնելով Շավուշկա աստվածուհու պաշտամունքի վաղեմությունը և տարածվածությունը հյուսիս-արևմտյան Միդիայում, Կիցցուվատնայում, Վերին Եփրատի շրջանում, որոնք գտնվում էին խուտի-միտաննիական պետության ազդեցության ոլորտում, չի՝ կարելի արդյոք ենթադրել, որ Սաուշադատտարի՝ Միտաննիի արքայատոհմի թագավորի անունը ինչ-որ կերպ կապված լիներ այս դիցանվան հետ՝ նշանակելով օրինակ՝ «Շավուշկայի տված, նվիրած» անվան երկրորդ բաղադրիչի համար ենթադրելով հնդիրանական արմատ³⁸: Նման դիցանվանակերտ անձնանունների բազմաթիվ օրինակներ հայտնի են

³⁵ Ի դեպ, Սաուսադատտար-Սոսանվեր համապատասխանությունը չի կարելի դիտել որպես պատահական նմանություն, քանի որ ըստ Ա. Մովսիսյանի, Միտաննիի արքայատոհմի և Հայկազուն նահապետների ու արքաների ցանկում սակայն են մի շարք անվանական համապատասխանություններ՝ Պարսադատտա-Պարետ, Վասադատտա-Վաշտակ (տես Մովսիսյան Ա., Միտաննիի արքաները Հայկազուն նահապետների և արքաների ցանկում, Երիտասարդ Արևելագետների Հանրապետական 20-րդ գիտական նախադրանքի թեզիսներ, Երևան, 1999, էջ 25-27):

³⁶ Diakonoff I., Die Arter im Vorderen Orient: Ende eines Mythos, *Orientalia*, v. 41, f. 1, 1972, S. 102.

³⁷ Mayrhofer M., Die Arter im Vorderen Orient – Ein Mythos? mit einem bibliographischen Supplement, *Wien*, 1974, S. 25-26, 6.3.5.

³⁸ Իհարկե, հարց է առաջանում, թե ինչու՞ է Միտաննիի հնդարիական դիմաստիպի ակնառու արքաներից մեկը կրում նման անվանում, որի առաջին մասը խուտիական դիցանունն է, իսկ երկրորդ մասը՝ հնդարիական արմատ, սակայն կարծում ենք, քննարկված նրաթե թույլ է տալիս կատարել նման ենթադրություն:

քե խուօհական, քե հնդիրանական անձնանուններում: Իսկ Շավուշկայի պաշտամունքի տարածվածության մասին այս տարածաշրջանում վկայում է, ըստ Ֆ. Հաազի, տեքստերում պահպանված հետևյալ դարձվածքը. «խուօհական աշխարհի բոլոր իՅտ աստվածուհիները» (խոսքը Շավուշկայի մասին է)²⁶: Փաստորեն, հայկական Սոսանվերի անունը կարող է համարվել նաև այս հնդարիական անձնանվան տեղական դրսևորումը:

եզրակացություններ.

ա. Սոսանվերի անունը համահունչ է կովկասյան աօսսպելների ժայթածին հերոսների՝ Սուլան, Սոսրուկո, ինչպես նաև կովկասյան պտղաբերության Սոուսըրջ աստծո անվանը:

բ. Սոսանվերը, որպես պտղաբերության գործառույթներով օժտված կերպար, համարժեք է ժայթում փակված Արտավազդին և Փոքր Միերին, ինչպես և կովկասյան ժայթածին հերոսներին և խուօհական Ուլլիկումմիին:

գ. Ըստ վերակազմության՝ Սոսանվերի մայրը աօսսպելում կարող է լինել Շամիրամը:

դ. Նինվեի Շավուշկա-Իշտարը նախատիպ է հանդիսացել Շամիրամի կերպարի համար և տիպաբանական ընդհանրություններ ունի վերջինիս հետ: *Սոսանուէրի* անվան *saws* արմատը հնարավոր է համարել Նինվեի Շավուշկայի անվան վաղազույն վկայված *sawse* ձևին: Եվ Սոսանվեր կարող է նշանակել «Շավուշայի նվեր, կամ Շավուշային ընծայված»: Հնարավոր է հայերեն «սոս» ածականը, որ նշանակում է «պերճ, հպարտ, սեզ» ծագումնաբանորեն հանգում է խուօհերեն *sovi* «երևելի, բացաօիկ, մեծ, վեհ, վեհանձն, հզոր, ուժեղ» ածականին, որոնցից էլ, ամենայն հավանականությամբ, ծագել է հայերեն «սօսի» բուսանունը:

ե. *Սոսանուէրի* անվան *նուէր* բաղադրիչը իր գուգահեռն ունի խուօհական Ուլլիկումմիի աօսսպելաշարում, որտեղ ակնարկվում է վերջինիս՝ որպես «նվեր» հանձնելու մասին (տե՛ս վերը): Մյուս կողմից, Ուլլիկումմիի մասին աօսսպելը պլուծետային ընդհանրություններ ունի Արտաշեսի և Աաթենիկի ու կովկասյան ժայթածին հերոսների՝ Սուլան-Սոսրուկոյի մասին պատմող աօսսպելաշարքերի հետ, վերջիններս էլ անվանապես համարժեք են հայկական Սոսանվերին:

²⁶ Haas V., Geschichte der Hethitischen..., S. 346-347.

գ. Առսանուէրի անվան հնարավոր զուգահեռը կարող է լինել Միտաննիի հնդարիական արքայատոհմի Sa-uš-sa-ta-(at)-tar անձնանունը, որը ստուգաբանորեն նույնպես կարող է կապված լինել ša-uš-sa խուփական դիցանվան հետ:

Ի մի բերելով վերոհիշյալ կապերը՝ կարելի է եզրակացնել, որ խուփական Ուլլիկումնիի, կովկասյան Սաքանայի և նրա որդիների, հայկական Արտաշես-Սաքենիկ և Արտավազդի, Արա Գեղեցիկ և Շամիրամի առասպելության հատկապես երրորդ հերոսի՝ Առսանվեր անուշավանի մասին պատմող առասպելներում առկա են մի կողմից անվանակերպարային, մյուս կողմից՝ սյուժետային ակնհայտ ընդհանրություններ, որոնք կարող են վկայել կամ այս առասպելների և նրանց գլխավոր կերպարների ծագման մեկ ընդհանուր աղբյուրի, կամ նրանց ձևավորման ընդհանուր միջավայրի մասին: Թե երբ և որտեղ դա կարող էր տեղի ունենալ, այսօր միանշանակորեն չի կարելի ասել: Եշենք միայն, որ Սառուսադատարը, որն անվանապես համարժեք է Առսանվերին, թագավորել է Ք.ա. XV դարի կեսին, այսինքն այն ժամանակ, երբ Միտաննին Առագավոր Ասիայի ազդեցիկ պետությունն էր, քանզի նրա իշխանությունը տարբեր ժամանակաշրջաններում տարածվում էր Առափխայի, Աշշուրի, Հյուսիսային Սիրիայի երկրների, Կիցցուվատնայի, Վերին Եփրատի երկրների և Հայկական լեռնաշխարհի մի մասի վրա⁴⁰: Եվ հենց այս շրջաններում էլ, ինչպես տեսանք վերը, մեծապես տարածված էր Շավուշկա դիցուհու պաշտամունքը, որն այդքան զգալի ազդեցություններ է բողել այս առասպելության ձևավորման վրա: Միգուցե հենց այս ժամանակաշրջանում էլ ձևավորվել են այս առասպելության նախատիպերն ու սյուժեները, որոնք հատկաժաբար պահպանվել են խուփական, հայկական և կովկասյան առասպելներում:

⁴⁰ Ավետիսյան Գ., Հայկական լեռնաշխարհ և Հյուսիսային Սիրիայի սինտական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVIII-IX դդ., Երևան, 2002, էջ 41:

MANIFESTATION OF NAME AND CHARACTER OF HURRIAN GODDESS
 *Ša(w)uš(k)a IN ARMENIAN LANGUAGE AND MYTHOLOGY

Ilhar-Šawuška goddess of Nineveh had considerable influence on Armenian myth of Ara and Samiram. Also the name of *Sawzanuēr Artawazd* may relate to the earliest attested form of the goddess's name *šausz*. The conclusions are as follows:

a. *Sawzanuēr's* name is consonant with names of *Soslan*, *Sazarayo* as well as the name of fertility deity *Sowarad*

b. *Sawzanuēr* as a character enabled with fertility functions corresponds to *Artawazd* and *P'ok' Mher* - the heroes confined in rock as well as other rock-born Caucasian heroes and Hurrian *Ukkummi*.

c. The reconstruction shows that *Sawzanuēr's* mother may be *Šamiram* of the myth.

d. *Ilhar-Šawuška* of Nineveh can be considered as a prototype for *Samiram* and displays typological similarities with the latter. The root *šaw* of *Sawzanuēr* is possible to compare with the the earliest known form of name of *Šawuška* of Nineveh - *šausz*. *Sawzanuēr* may mean "gift of *Šawuška* or bestowed to *Šawuška*". It is possible that Armenian adjective *šaw* that means "excellent, proud, high" originates to Hurrian *šawū* "magnificent, unique, great, grand, magnanimous, powerful, strong" from which the Armenian phytonim *šawsi* (platanus) derives.

e. The component *nuēr* of *Sawzanuēr* has its parallel in Hurrian myths series of *Ukkummi*, that suggest of the latter's being given as a "gift". On the other side the myth of *Ukkummi* has thematic similarities with myth series about *Artuša* and *Sar'enuk* as well as Caucasian rock-born heroes *Soslan*-*Sazarayo* which in their turn are comparable with Armenian *Sawzanuēr*.

z. Possible parallel of *Sawzanuēr's* name can be seen in personal name of Mitanni's Indo-Arian royal dynasty *Sa-u-sa-ta-(ar)-itar* that may relate to Hurrian theonim *ša-u-sa-ša*.

К ПОНЯТИЙНОЙ ТИПОЛОГИИ СЛОВСОЧЕТАНИЙ
КУРДСКОГО ЯЗЫКА

Встречающиеся в современной курдской речи подчинительные словосочетания представляют собой самостоятельный тип проявления языковой материи, выделяющийся на наиболее общем уровне членения ее состава¹. Они образуются обычно в составе предложения в качестве его соответствующего члена (подлежащего, сказуемого, дополнения и т.д.) и независимо от характера структурных и семантических особенностей обладают целостной грамматической и ритмомелодической организацией обладающей присущей только ей системой изменения. Будучи типом проявления языковой материи, подчинительные словосочетания возникают в ответ на особую социолингвистическую потребность и обладают свойством удовлетворения этой потребности, выступающим их лингвистическим назначением в языковой системе².

Подчинительные словосочетания – это речевые единицы – элементы внутреннего членения предложения, являющиеся средствами синтаксической номинации, образующимися из потребности в синтаксическом обозначении особых денотатов в виде разнообразных по характеру типов проявления объектов действительности (предметов, действий, состояний, их признаков и т.д.) или же типов проявления самих этих типов, которые в свою очередь могут иметь типы своих проявлений и т.д. Своей этой особенностью единицы синтаксической номинации, т.е. подчинительные словосочетания резко отличаются от знаменательных слов и фразеологизмов, денотатами которых являются сами объекты действительности.

¹ Хамоян М., Проблема проявления в лингвистике (на материале курдского языка), *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և մշակութաբանություն*, հ. XX, Երևան, 2001, էջ 270-288; К понятийной типологии словосочетаний (на материале курдского языка), *Մերձավոր Արևելք և Հովիտա, գեղարվեստների թեմեր*, Երևան, 2008, էջ 82-84:

² Хамоян М., К разработке основ синтаксиса курдского языка, *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և մշակութաբանություն*, հ. XXIV, Երևան, 2006, էջ 458-472:

Вместе с тем образование подчинительных словосочетаний из номинативных потребностей языка показывает, что они занимают очень важное место в общем ряду с основными и главными типами средств языковой номинации – единицами лексической номинации – знаменательными словами и соотносящимися с ними единицами фразеологической номинации – фразеологизмами, отличаясь вместе с тем от них также характером обозначаемых ими объектов действительности – денотатов и выражаемых ими единиц мысли в виде понятий (или представлений) об этих объектах, а также специфическими особенностями внешней формы и присущей только им общей универсальной структурно-семантической модели образования.

Вопрос о денотатах подчинительных словосочетаний и о характере понятий о них, являющийся одной из первоочередных задач теории синтаксиса, отсутствует в специальной литературе. Об этом и свидетельствует тот факт, что синтаксическая наука, усматривающая семантику (значение) подчинительных словосочетаний лишь в отношениях³ между образующими их форму – внешнюю структуру компонентами, не располагает сведениями об объективной системе понятий, образующих план содержания подчинительных словосочетаний и о денотатах, отображаемых этими понятиями, а также и о зависимости выбора внешней формы (материальной оболочки) синтаксических единиц от характера этих понятий. Этот пробел в наших синтаксических знаниях в значительной степени восполняет впервые установленная в результате анализа синтаксического материала курдского языка понятийная система, прослеживаемая в сфере подчинительных словосочетаний⁴.

Функционирующие в сознании языкового коллектива понятия о познанных объектах действительности, из потребности в выражении которых образуются слова и фразеологизмы, могут представиться в различных типах проявлений, которые, как правило, выражаются не словами и не фразеологизмами, а только посредством образования подчинительных словосочетаний. Поэтому вполне правомерно констатировать, что

³ Валгина Н., Синтаксис современного русского языка, Москва, 1978, с. 11; Попов Р., Валькова Д., Маловицкий А., Федоров А., Современный русский язык, М., 1978, с. 273.

⁴ Хамован М., К понятийной типологии словосочетаний (на материале курдского языка), *Մերձավոր Արևելք և Հնդկան, գեներումների թեզեր, Երևան*, 2008, էջ 82-84:

подчинительные словосочетания, будучи особыми типами проявления языковой материи, формируются из потребности в объективации типов проявления выражаемых словами и фразеологизмами понятий, а также и типов проявления самих этих типов и т.д. Например, такие общие понятия (в их виртуальной форме), как "лал" ("хлеб"), "ав" ("вода"), "ба" ("ветер") и т.д. имеют многочисленные типы проявлений, которые в языке выражаются только посредством подчинительных словосочетаний: лалê лерт ("мягкий хлеб"), лалê хиск ("черствый хлеб"), ава сар ("холодная вода"), ава дерт ("теплая вода"), баê лерт ("мягкий ветер"), баê сар ("холодный ветер") и т.д.

Понятие о типе проявления объекта или типе проявления самого этого типа – это особая единица мысли идеального содержания, образующая план содержания подчинительного словосочетания. Оно возникает в результате познания у лексически или фразеологически обозначаемого объекта (предмета, действия, признака и т.д.) его определенного состояния (положения, статуса бытия, формы существования, и т.д.), представляющего собой некий тип его проявления в действительности. Тип проявления объекта, обозначаемого стержневым компонентом словосочетания, основан на каком-либо признаке объекта, обозначаемым его зависимым компонентом. Понятие о типе проявления объекта, образующее план содержания словосочетания, возникает в результате познания устанавливаемых между понятиями об объекте и его признаке отношений и дальнейшего объединения на основе этих отношений выражающих данные понятия словоформ, в своем соединении составляющих план выражения словосочетания. Внешняя формальная структура подчинительного словосочетания, являющаяся языковой характеристикой понятия о его денотате, будучи почвой для возникновения этого понятия, вместе с тем изначально служит средством – языковой формой его объективации.

Выявленные в результате анализа синтаксического материала курдского языка различные типы понятий, являющихся отражениями разных по характеру реалий в виде типов проявлений, дифференцируются на некоторые группы, основными из которых являются следующие:

1. Понятия о типах проявления объекта, основанных на соответствующих признаках этого объекта. Они выражаются

посредством их синтаксического описания – характеристики в виде синтаксического сцепления двух знаменательных слов, одно из которых является стержневым компонентом, обозначающим объект – предмет проявления, другое – зависимым, подчиненным компонентом, обозначающим признак предмета, приобретающий в условиях соединения классификационный характер. Например, понятие о холодной воде, как об отдельном типе проявления воды, объективируется двухкомпонентным сцеплением (формой) *ava sar* ("холодная вода"), а понятие о действии "красиво танцует", как об отдельном типе проявления действия "танцевать" – двухкомпонентным сцеплением (формой) *bedew dileyize* ("красиво танцует") и т.д.

2. Понятия о типах проявления объекта, основанных на определенных типах проявления признака этого объекта. Они выражаются трехкомпонентным сцеплением, в котором один из компонентов представляет собой стержневой компонент, остальные в своем соединении обозначают тип проявления признака, выступая зависимым компонентом. Словосочетаниями, выражающими понятия этого типа, являются, например, *bina şirê K'elandî* ("аромат молненного молока"), *dengê delala min* ("голос моей любовью") и т.д.

3. Понятия о типах проявления объекта, основанных на относящимся к ним типу проявления типа проявления признака. Они выражаются четырехкомпонентными словосочетаниями, в которых одно из компонентов выступает стержневым компонентом, а остальные же в своем сцеплении обозначают тип проявления типа проявления признака. Примерами таких словосочетаний являются: *ciyê qîja wane zivîstanê* ("место их зимнего селения"), *K'îlêba şayîrê meyi eyan* ("книга нашего известного поэта") и т.д.

4. Понятия о типах проявления типов проявления объекта, основанных на признаке, относящимся не к объекту, а к типам его проявления. Примеры словосочетаний, выражающих понятия этого типа: *ava barêye sar* ("холодная морская вода"), где признак "sar" ("холодная") непосредственно относится к типу проявления объекта ("av") в виде *ava barê* ("морская вода"); *belgêd darêye şin* ("зеленые листья деревьев"), *tama îmonêye t'îrş* ("кислый вкус лимона") и т.д. При распространении формы словосочетаний этого типа новой словоформой они выступают обозначениями типа проявления объекта. Например, словосочетание *ava barêye*

saḡe ʒog ("соленая холодная морская вода"), где *saḡe* *barēye saḡ* представляет собой стержневой компонент, а словоформа *ʒog* ("соленая") – зависимый компонент, определяющий весь комплекс стержневого компонента.

5. Понятия о типе проявления типа проявления объекта, основанном на типе проявления признака. В словосочетаниях, выражающих понятия этого типа стержневой компонент может расщепляться на две части, одна из которых занимает препозицию словосочетания, а другая – постпозицию, образуя своеобразную рамочную конструкцию, включающую в свой состав всю группу зависимого компонента, см. например, словосочетание *bīna kuḡḡkēd s'ṭuṭuṭe xwaḡ* ("приятный аромат горных цветов") и его преобразованную форму в виде *bīna xwaḡ ya kuḡḡkēd s'ṭuṭa*.

6. Понятия о типе проявления объекта, основанном на каком-либо его признаке, имеющим в свою очередь тип своего проявления, а последний, в свою очередь, тип своего проявления и т.д. Они образуют план содержания подчинительных словосочетаний, формальная структура которых состоит из четырех или более компонентов, одни из которых совмещают функции стержневого и зависимого компонентов, другие выступают компонентами однофункциональными. В формальной структуре таких словосочетаний каждый зависимый компонент обозначает признак предмета, служащий основой для типа его проявления, обозначаемого стержневым компонентом. Распространение формальной структуры каждым новым компонентом – знаменательным словом, что обусловлено характером выражаемого им понятия, служит основой образования в ее составе нового сцепления – обозначения типа проявления объекта, обозначаемого предыдущим компонентом или же обозначения типа самого типа проявления объекта, обозначаемого предыдущим сцеплением компонентов. Примеры:

destanīnēd ʒagirtēd dibistana gundē me ("достижения учеников школы нашего села"), *p'ēnūsa hevala xūḡka cīnara me* ("ручка подруги сестры нашей соседки") и т.д.

Выделенные разные типы понятий, отображающие разные по характеру денотаты, объективируются посредством образования соответствующих разных по составу типов материальных форм, формирующихся как языковые характеристики этих понятий, а через них и характеристики самих денотатов, отображаемых ими.

Представленные типы понятий, которые не подлежат объективации лексическими и фразеологическими средствами языка находят свое выражение исключительно благодаря выработанному в языке особому синтактикообразовательному механизму, сущность которого заключается в языковой характеристике (описании) этих понятий в виде сцепления разных по составу компонентов, разделенных во всех случаях формирования внешней структуры подчинительных словосочетаний на две части, одна из которых выступает стержневой частью, другая — частью зависимой. При этом в зависимости от характера выполняемых понятий эти части могут быть отдельными словоформами, представляющими минимальную конструкцию внешней формы подчинительных словосочетаний, или разными по составу компонентов сцеплениями словоформ, представляющими собой относительно максимальную конструкцию форм подчинительных словосочетаний. Например, если в случаях образования внешней формы подчинительного словосочетания *ava barē* ("морская вода"), выражающего понятие о типе проявления объекта "av", основанием на признаке "barē", стержневой и зависимой частями являются две словоформы *av* ("вода") и *barē* ("морская"), то в случаях образования внешней формы подчинительного словосочетания *ava barēye sar* ("холодная морская вода"), выражающего понятие о типе проявления типа проявления объекта "av", стержневой частью внешней структуры словосочетания выступает компонентная группа "ava barē", а зависимой частью — словоформа "sar" ("холодная"). Если же формируется внешняя структура словосочетания *ava barēye sarə ʒog* ("соленая холодная морская вода"), выражающего понятие о типе проявления самого типа проявления типа проявления объекта "av", то стержневой компонентной группой выступает *ava barēye sar*, а в зависимом компоненте — словоформа *ʒog* ("соленая").

Тип проявления объекта, обозначаемый словосочетанием, как правило, основан на относящимся к этому объекту типу проявления типа проявления признака этого признака: ср.

[bīna]⁵ ʒirē k'elandī ("аромат топленого молока")

⁵ Здесь и в дальнейшем стержневая часть обозначается квадратными скобками.

[bīna] ʒirē c'ālekayī k'elandī ("аромат топленого коровьего молока").

Ср. также

birēra [name nīvīs] ("написал письмо брату").

birēra [nameke dirēj nīvīs] ("написал длинное письмо брату").

Birēra [nameke gelek dirēj nīvīs] ("написал очень длинное письмо брату").

В языке в подавляющем большинстве случаев подчинительные словосочетания образуются из потребности в обозначении следующих трех разновидностей типов проявления объектов, являющихся их денотатами:

1. Типы проявления простых объектов в виде отдельных предметов, явлений, действий, признаков и т.д., основанные на каком-либо признаке этих объектов (примеры: tamē billnd ("высокий дом"), sēva ʒor ("красное яблоко"), gelek billnd ("очень высоко"), xanī ʒekīrīn ("построили дом"), bedew dīelze ("красиво танцует") и т.д.).

2. Типы проявления сравнительно сложных объектов в виде типов проявления простых объектов, основанные на каком-либо признаке этих объектов (примеры: kīre ser birē blātrē ("земля брата петь"), kitēb da birē ("отдал книгу брату"), bavēra name nīvīs ("написал отцу письмо") и т.д.).

3. Типы проявления сложных объектов в виде типов проявления простых объектов, основанные на каком-либо признаке этих объектов — (примеры: bīna kulīkād c'ʒayūd mēve xwəʒ ("приятный аромат цветов наших гор") ср. Bīna xwəʒ ya kulīkād c'ʒayūd mē. ava ʒare ʒor ("соленая холодная вода"), sēva ʒore jīrīn ("сладкое красное яблоко") и т.д.).

Сравнение формальных структур приведенных выше примеров подчинительных словосочетаний, допускающих наполнение соответствующих разных по составу стержневых и зависимых компонентов, показывает, что предмет проявления и основа его проявления могут быть отдельными объектами или типами их проявлений или же типами проявлений самих этих типов. В прямой зависимости от характера отображающих их понятий стержневая и зависимая части внешней структуры подчинительных словосочетаний могут быть отдельными словоформами и/или сцеплениями словоформ разной степени сложности, т.е. простой или сложный характер подчинительных словосочетаний в конечном счете обусловлен простым или сложным характером предмета проявления и/или основы его

проявления (признака) и устанавливаемыми между ними отношениями, приводящими к становлению соответствующего простого или сложного типа проявления данного предмета в действительности. Например, то, что словосочетание *ava sar* является простым словосочетанием, зависит от простого характера предмета проявления "av" и простого характера основы его проявления — признака "sar" и устанавливаемых между ними отношений, служащих основой для становления данного типа проявления этого предмета в виде *ava sar*. В случае же сложного подчинительного словосочетания *ava sare şor* сложность структурно-смысловой организации зависит только от сложного характера предмета проявления в виде *ava sar*, к которому относится признак *şor*. В то же время сложный характер словосочетания *ava sare delek şor* ("очень соленая холодная вода") зависит от сложного характера предмета проявления в виде *ava sar* и сложного характера основы его проявления — признака в виде *delek şor*.

Установленные разные типы понятий, отображающие разные по характеру денотаты, из потребности в объективации выражаются посредством образования соответствующих разных типов материальных форм, представляющих план выражения подчинительных словосочетаний. В зависимости от этого прослеживаемые в языке подчинительного словосочетания представляют разные характеристики состава своей структурно-семантической организации, лежащие в основе их дифференциации в общем на следующие две очень продуктивные группы: простые и сложные, определяющиеся рядом специфических особенностей выражаемой ими синтаксической семантемы — общего типового значения и обусловленной характером этой семантемы соответствующей внешней формы.

Простое словосочетание представляет собой речевое образование минимальной конструкции, формирующейся в составе предложения в качестве синтаксического обозначения определенного конкретного типа проявления объекта действительности, основанного на каком-либо признаке этого объекта. Признак объекта, приобретающий в условиях конфигурации свойство классификационного признака, определяет собой некоторое состояние (некий статус бытия, форму существования) объекта и тем самым служит основой данного типа его проявления. Понятие об этом состоянии — типе

проявления, присутствующее в сознании человека, из потребности в выражении объективируется посредством языковой характеристики объекта на основе его классификационного признака, осуществляемой по схеме "обозначение объекта – предмета проявления + обозначения признака предмета – основа проявления" (или по обратной форме этой схемы), выступающей формальным показателем любого простого словосочетания. Словосочетания не обнаруживающие этой схемы построения внешней формы, не являются простыми словосочетаниями. Это схема характеризуется тем, что допускает наполнение двух обязательных компонентов, одного стержневого в виде обозначения предмета проявления и одного зависимого в виде обозначения признака предмета, служащего основой его проявления. Поскольку предметы проявления и их признаки обозначаются исключительно знаменательными словами, то стержневым и зависимым компонентами, образующими материальную оболочку простого словосочетания выступают только знаменательные слова. В случаях распространения формы простого словосочетания третьим компонентом – знаменательным словом она перестает быть формой простого словосочетания, превращаясь в форму словосочетания сложного.

Тип проявления объекта, определяющийся как некое состояние его, основанное на каком-либо классификационном признаке, является денотатом простого словосочетания. Поскольку средством выражения понятия о типе проявления объекта служит языковая характеристика объекта на основе его классификационного признака, то в зависимости от характера типа проявления объекта или иначе говоря грамматической специфики понятия об этом встречающиеся в речи объекта подчинительные словосочетания оказываются в разных по характеру внешних формах. При этом в основе понятия о типе проявления объекта, которое является своеобразным проявлением понятия об объекте, изначально лежит характеризующее, квалифицирующее, оценивающее начало. Оно содержит указание на характеристику объекта и объективируется посредством сцепления обозначения объекта как предмета проявления и обозначения признака объекта как основы его проявления. Таким образом образование формы – материальной оболочки простого словосочетания предполагает обязательное наличие двух знаменательных слов, а именно, обозначения предмета проявления

и обозначения признака предмета, служащего основой его проявления. Такая форма у простого словосочетания является своего рода формальным показателем его структурно-семантической организации. Любая модификация состава стержневого и зависимого компонентов, связанная с характером соответствующих понятий, приводит к превращению простого словосочетания в словосочетание сложное.

Следует отметить, что в то время как, формальная структура словосочетания образуется по синтаксической модели, само словосочетание в своей цельности формируется по структурно-семантической модели "Общее типовое понятие (при различиях в частных проявлениях этого понятия) + форма в виде языковой характеристики этого понятия – сцепления двух обязательных компонентов (и/или компонирующих групп), один из которых представляет стержневую часть сцепления – обозначение денотата – предмета проявления, другой – зависимую часть сцепления – обозначение признака предмета – основы проявления (при различиях в частных проявлениях этой формы)". Познание этой модели, свидетельствующей о существовании подчинительных словосочетаний разных структурно-семантических типов, обуславливает необходимость пересмотра существующих в научной и учебной литературе концепций и схем, касающихся проблемы структурно-семантической организации подчинительных словосочетаний и их дефиниции.

Следует заметить, что простые словосочетания как синтаксические обозначения типов проявления объектов действительности, основанных на их классификационных признаках, характеризуются наибольшей частотностью образования в народном просторечии, в памятниках устного народного творчества и в художественной литературе.

Из числа выявленных различных типов понятий сферы подчинительных словосочетаний только один тип образует простые словосочетания. Он представлен понятиями о типе проявления объекта, основанном на каком-либо его признаке. Остальные типы понятий, являющиеся сравнительно сложными понятиями, обнаруживаются у дополнительных словосочетаний разной степени сложности формальной структуры, именуемых здесь сложными подчинительными словосочетаниями.

Сложные словосочетания – это сравнительно сложные по семантике и структуре конструкции синтаксической номинации. Группа понятий, образующих их план содержания, характеризуется той особенностью, что входящие в ее состав понятия отображают объект – предмет проявления и/или его признак – основу его проявления не как таковые, а в их определенных типах проявлений или типах проявления самих этих типов и т.д. При этом выражающие эти понятия их языковые характеристики, образующие план выражения подчинительных словосочетаний, представляют собой синтаксические сцепления, в которых стержневой и/или зависимый компоненты являются простыми или сложными словосочетаниями. Например, в случае подчинительного словосочетания [ava barêye] sar, выражающего понятие о типе проявления типа проявления объекта av и обозначающего этот последний тип проявления, стержневым компонентом формальной структуры является простое словосочетание [ava] bare, а зависимым компонентом – словоформа sar. В случае же словосочетания *ava barêye sare şor*, выражающего понятие о типе проявления типа проявления объекта и обозначающего этот тип, стержневым компонентом формальной структуры является сложное словосочетание *ava barêye sar*, а зависимым компонентом – словоформа *şor*. Другой пример: сложное подчинительное словосочетание [ava barêye sare] *gelek şor*, также выражающее понятие о типе проявления типа проявления типа проявления объекта, основанном не на признаке, а на типе проявления признака, имеет формальную структуру, в которой стержневым является сложное словосочетание *ava barêye sar*, а зависимым компонентом – простое словосочетание *gelek şor*.

Практическим примером объективного определения состава стержневого и зависимого компонентов формальных структур подчинительных словосочетаний служит их сопоставление друг с другом, а в ряде случаев и с предложением или именной частью составного сказуемого предложения. Этого можно достичь путем:

а) превращения субстантивных словосочетаний в предложение, в котором стержневому компоненту словосочетания соответствует подлежащее предложения. Ср., например,

ava sar ("холодная вода") - *av sare* ("вода холодная"),

ava barêye sar ("морская холодная вода") - *ava barê sare* ("морская вода холодная"),

ava barêye sarê şor ("соленая холодная морская вода") - ava barêye sar şorê ("холодная морская вода соленая"),

tamê gelek bilind ("очень высокий дом") - tam gelek bilinde ("дом очень высокий") и т.д.

б) превращения глагольного словосочетания в словосочетание субстантивное, где стержневому компоненту глагольного словосочетания соответствует стержневой компонент субстантивного словосочетания, а зависимому компоненту глагольного словосочетания - зависимый компонент субстантивного словосочетания. Примеры:

nama dirêj nivîsî ("писал длинное письмо"), ср. nivîsîna nama dirêj ("написал длинное письмо"), Kela Dîmdîmê Çêkir ("крепость Дымды построил"), ср. Çêkirina Kela Dîmdîmê ("построение крепости Дымды") и т.д.

MAXIM KHAMOYAN

ON THE CONCEPT OF THE TYPOLOGY OF KURDISH WORD-COMBINATIONS

In the given research work the character of the denotations of word-combinations is discussed, thanks to which it's possible to reveal the whole system of peculiar concepts of the expression forms of words combinations and also their principles of structural and semantic syntax classification.

ՔԱՆՈՒԿ ՄԻՐՁՈՅՄԱՆ, ՄՈՒՏԻՆԵ ՄԱՆԱԿՅԱՆ

ԹՈՒՐԵՐԵՆԻ ԿԻ ՍՏՈՐԱԴԱՍՏԱԿԱՆ ՇԱՂԿԱԳԻ ՆԱՄԱՏԱԳՈՐԾԱՊՈՒԹԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ստորադասական շաղկապներն արտահայտում են կախյալ հարաբերություններ, կապում երկրորդական նախադասությունները գլխավորի հետ: Ժամանակակից թուրքերենի շարահյուսական շղթայում շաղկապավոր երկրորդական նախադասություններն ավելի հաճախ ձևավորում են շարահյուսորեն համարժեք դերբայական դարձվածներով:

Այնուհանդերձ, բանավոր խոսքում ավելի կիրառական են ստորադասական շաղկապները: Թուրքերենը, ինչպես նաև այլ թյուրքական լեզուները, ունի բարդ ստորադասական նախադասության երկու տիպ՝ *գլխավոր+ստորադաս* և *ստորադաս+գլխավոր*¹:

Թուրքերենի բանավոր խոսքում լայն կիրառություն ունի և՛ ստորադասական շաղկապը, որը այլ բառերի հետ միանալով՝ ստեղծում է նոր՝ կառուցվածքի տեսակետից բարդ շաղկապներ, ինչպես նաև մակբայներ՝ տեղի, ժամանակի (սցենո-այսօրվա, մոնո-երեկվա): ԿԻ-ն ավելանում է նաև սեռական և ներգործական հոլովներով դրված գոյականներին՝ *babaninkı, elindeki*: Բուն թուրքերենում ԿԻ-ն ունեցել է երկու ձև՝ -ki, -ki: Օսմաներենում հանդես է եկել գրության մեկ տարբերակով, սակայն կարդացվել է ձայնավորների ներդաշնակության օրենքի համաձայն²:

ԿԻ շաղկապը թուրքերենում իրանական վաղ փոխառություններից մեկն է համարվում: Այս շաղկապի միջոցով նաև թուրքերենի նախադասությունների համակարգում ի հայտ եկան նախադասության բոլորովին նոր և օտար կաղապարներ, որոնք դարերի ընթացքում շատ արագ ամրագրվեցին և դարձան խոսակցական թուրքերենում ամենից կենսունակ և օգտագործվող նախադասության կաղապարածներից³:

¹ Кононов А., Грамматика современного турецкого литературного языка, Москва-Ленинград, 1956, с. 330.

² Sencan T., Dilbilgi, İstanbul, 2001, s. 68.

³ Ergil M., Türk Dil Bilgisi, Sofya, 1967, s. 343.

Այն նաև կիրառական է աղբյուրներենում և հիմնականում օգտագործվում է հարցական նախադասություններ կազմելիս, համարժեք է թուրքերենի *ya* հարցական շաղկապին: Օրինակ՝ *Hasta değil ki? Kar ki yağmadı?**: Եթե վերածննք ժամանակակից թուրքերենի, կունենա հետևյալ պատկերը՝ *Hasta değil ya?-Çıkanmış mı? Kar ki yağmadı?-* Չյուն չտեղա՞ց:

Իրանական լեզուներից փոխառյալ այս շաղկապն օգտագործվում է նաև երկու նախադասություններ կապելու համար, որի արդյունքում ձևավորում է բարդ ստորադասական նախադասություն՝ հետևյալ կաղապարով՝ գլխավոր նախադասություն +*ki*+ ստորադասական նախադասություն⁴:

Այս կաղապարը բնորոշ է հնդեվրոպական լեզուներին, իսկ դրա արտացոլումը թուրքական լեզուներում բացատրվում է իրանական շարահյուսության ազդեցությամբ:

KI շաղկապը նախադասության շղթայում ձևավորում է հետևյալ հարաբերությունները՝

1. Որոշիչ երկրորդական նախադասություն՝

Օրինակ՝ *Ben bir yolcuym, ki develerimin yanında sailanan tulumlar içinde bir damla su kalmadı.*

Ես ճանվորդ եմ, որի՝ ուղտերի կողքերից կախված տիկերում ոչ մի կաթիլ ջուր չմնաց:

2. Ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն

Օրինակ՝ *Birdenbire anladım ki o bana anam kadar yakındı.*

Հանկարծ հասկացա, որ նա ինձ մոտ չափի հարազատ է:

3. Նախառանկի պարագա երկրորդական նախադասություն⁵

Օրինակ՝ *Vapur Çanakkalede durmadı ki çıkayım.*

Նավը Ղարդանելում չկանգնեց, որ իջնեմ:

4. Ժամանակի պարագա երկրորդական նախադասություն

Օրինակ՝ *Bir senedir ki ne güzel annemi, ne kardeşlerimi gördüm.*

Մեկ տարի է, ինչ չեմ տեսել ո՛չ գեղեցիկ մոտս, ո՛չ էլ եղբայրներիս:

5. Պատճառահետևանքային երկրորդական նախադասություն⁶

⁴ Նույն տեղում, էջ 342:

⁵ Кононов А., Грамматика современного турецкого..., с. 544.

⁶ Նույն տեղում, էջ 426:

⁷ Նույն տեղում, էջ 426:

Օրինակ՝ *Genç kız da onu görmüş olacak ki uzaktan şemsiyesini sallıyordu.*

Երիտասարդ աղջիկը նույնպես պետք է որ տեսած լիներ նրան, քանի որ հեծվից քափահարում էր իր անձրևանոցը:

Եթե վերոհիշյալ գործառույթներում **ki** շաղկապը հանդիսանում է - **dik**, -**acak** գործողության անուններով ձևավորվող կառույցների քերականական հոմանիշ, որոնք հայերեն են քարգմանվում դերբայական դարձվածների միջոցով, ապա պատճառահետևանքային հարաբերություն արտահայտելիս, որի դեպքում գլխավոր նախադասությունում առկա են **öyle** - այնպես, **o kadar** - այդ չափ, **o derece** - այն աստիճան քառերը, իսկ ստորադասականում **bile** - նույնիսկ քառք, որպես կանոն, **ki** շաղկապը ոչնչով չի փոխարինվում:

Օրինակ՝ *Gece öyle sıcak ki uyumak kabil değil.*

Գիշերն այնքան շոգ է, որ քնելն անհնար է:

Ben bugün düğünde öyle güzel kız gördüm ki tarif edemem.

Ես այսօր հարսանիքի ժամանակ այնպիսի գեղեցիկ աղջիկ տեսա, որ նկարագրել չեմ կարող:

6. **Այնքանի պարագա երկրորդական նախադասություն*

Օրինակ՝ *Fakat ne yapayım ki azat edecek ne kölem var, ne de cariyem.*

Ես ինչ անեմ, եթե ոչ ստրուկ ունեմ ոչ էլ ստրկուհի, որոնց հնարավոր չլիներ ազատել:

Ինչպես նշեցինք, **ki** շաղկապը կարող է հանդես գալ տարբեր շաղկապների հետ միասին՝ ստեղծելով նոր շաղկապական կառույցներ⁸:

Այսպես՝ **oysaki**-այնուամենայնիվ, այն դեպքում երբ, **halbuki**-այնուամենայնիվ, **mademki**-քանի որ, **sanki**-կարծես, **şöyle ki**-հատկապես, այսպիսով, **yeter ki**-բավականին, **demek ki**-նշանակում է և այլն:

Oysaki (այնուամենայնիվ)-ծևի և կառուցվածքի տեսանկյունից **oysa** շաղկապը ածանցավոր է, իսկ **oysaki**-ին խմբավորված շաղկապներին է պատկանում, այն ձևավորվել է **ki** շաղկապի համադրման արդյունքում: Օրինակ՝ *Ergin çok güzel piyano çalıyor, oysa dört yaşında.* - երգինը շատ լավ դաշնամուր է նվագում՝ չնայած չորս

⁸ Henglimen M., Türkçe Dilbilgisi, İstanbul, 1999, s. 98.

տարեկան է: *Sınavlarda başarılı olmadım, oysaki çok çalışmıştım.* - *Քննություններում հաջողության չհասա, քեկ շատ էի աշխատել:*

Öyle ki (այդ պատճառով) - նախադասություններն արտահայտում են հետևանք:

Yüzü bembeyaz oldu. Öyle ki bir an ölecek sandım. - *Դեմքը սփփ-սպիտակ էր, այդ պատճառով մի պահ կարծեցի՝ կմահանա:*

Halbuki (քեկ, այն ժամանակ, երբ, այն դեպքում, երբ⁶) - նախադասությանը հաղորդում է պարզաբանում, արդյունք, հստակեցում է մտցնում նախադասության մեջ: Այս շաղկապը նույն իմաստն ունի, ինչ *oysa, oysaki* (այնուամենայնիվ, քեկ) բառերը: Արտահայտում է, մինևույն ժամանակ...երբ, այն դեպքում...երբ, քեկ իմաստները, բայց ոչ ժամանակային, այլ հակադրման ընկալմամբ: Չկի և կառուցվածքի տեսանկյունից խմբավորված շաղկապներին է պատկանում և ձևավորվել է *ki* շաղկապի համադրման արդյունքում: Արտահայտում է նաև հակասման հարաբերություն:

Օրինակ՝ *Yapraklar nedense sararmamıştı, halbuki artık sonbahar gelmişti.* *Չգիտես ինչու տերևները չէին դեղնել այն դեպքում, երբ արդեն աշուն էր եկել:*

Madem (ki) (քանի որ)-ներհակական պատճառական շաղկապ է, ունի քանի որ իմաստը: Չկի և կառուցվածքի տեսանկյունից խմբավորված շաղկապներին է պատկանում և ձևավորվել է *ki* շաղկապի համադրման արդյունքում:

Օրինակ՝ *Mademki beni dinlenmiyorsun, ben de bir deha konuşmam.* *Քանի որ ինձ չես խում, ես էլ այլևս չեմ խոսի:*

Taki (որպեսզի)-ստորադասական շաղկապը թուրքերենում ներթափանցել է իրանական լեզուներից, օգտագործվում է ստորադասական նախադասության ստորոգյալի հետ, որն արտահայտվում է հրամայական և ըղծական եղանակներով: Ժամանակակից թուրքերենում այս շաղկապը հազվադեպ է օգտագործվում:

Օրինակ՝ *Açık söylüyorum taki herkes anlansın.* *Ես պարզ եմ խոսում, որպեսզի բոլորին հասկանալի լինի:*

Demek ki - ուրեմն, հետևաբար-նախադասություններին հետևանք և պատճառ է հաղորդում, *Çok para haracıyor diyorsun, demek ki çok kazanıyor.*

⁶ Шека Ю., Практическая грамматика турецкого языка, Москва, 2007, с. 331.

been widely used in modern Turkish, particularly in the vernacular and dialects. In the syntactic chain, it connects attributive clauses, subordinate clauses of direct object, purpose, time, cause with each other.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՐԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ԻՐԱՆ-ԵՎՐԱՍԻՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20 - ՐԴ
ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ 21 - ՐԴ ԴԱՐԻ ՄՋՔԻՆ

Համաշխարհային հանրության ուշադրությունն այսօր առավել քան երբևէ սեռված է դեպի Իրանը: Դրա հիմնական պատճառներից են Իրանի միջուկային ծրագիրը, Իրանում մարդու իրավունքների առկա խնդիրները, Իրանի նկատմամբ իրականացվող ՄԱԿ-ի ԱԽ-ի հերթական բանաձևի կիրառումը և Իրանի միջուկային հավակնությունների զսպման փորձերը:

Չնայած այս ամենին, իր աշխարհագրական դիրքի, օգտակար հանածոների և մարդկային ռեսուրսների շնորհիվ Իրանը միշտ էլ եղել է միջազգային հանրության և հատկապես եվրոպական երկրների ուշադրության կենտրոնում:

1978-79 թթ. Ֆրանսիան, Բրիտանիան և Գերմանիան Իրանի հեղափոխական կառավարությանը ճանաչեցին որպես երկրի օրինական կառավարություն: Սակայն ԱՄՆ-ի դեսպանատան գրավումը լարվածություն մտցրեց Իրանի և եվրոպական երկրների միջև, իսկ ԱՄՆ-ի նախագահ Զիմի Բարտերի խնդրանքով եվրոպական երկրները միացան Իրանի դեմ տնտեսական պատժամիջոցներին: Այսպիսով, 1980-ականներին Իրան-ԵՄ հարաբերությունները քափական սառն էին: Դրան էր գումարվում նաև Իրանում Իսլամական հեղափոխությունից հետո մտցված սահմանադրական արգելանքը օտարերկրյա կապիտալի օգտագործման և օտարերկրյա մասնագետների գործունեության դեմ: Այս օրենքը նվազեցնելու էր ծախվող սնու հարաբերությունների մակարդակը:

Բացի վերոհիշյալ խնդիրներից եվրոպական երկրների և ԻԻՀ-ի միջև առաջանում էին տարատեսակ խնդիրներ, որոնք էլ ավելի էին

¹ Այսն հոդվածում հիմնականում կանոնադրական ԻԻՀ-ի հետ ԱՄՆ-ի, Գերմանիայի, Իտալիայի և Ֆրանսիայի հարաբերություններին:

քարդացնում հարաբերությունների զարգացման գործընթացը: 1987 թ. Ֆրանս-իրանական հարաբերությունները խզման եզրին էին: Դրա հիմնական պատճառը Իրանի իսլամական վարչակազմի ընդդիմությունն էր, որը հանգրվանել էր Ֆրանսիայում և կարծես ստեղծել էր Իրանի վտարանդի կառավարություն՝ Ա. Բանիսադդի և նրան աջակցող «Մոզահեդին-ե Նայբ» կուսակցության ղեկավար Ռաժալլիի գլխավորությամբ: Նրանց շուրջն էին հավաքվում երկրից հեռացած մեծահարուստները, քաղաքական ու մշակութային գործիչները, որոնց մեծ մասը բնակություն էր հաստատում Ֆրանսիայում: Պաշտոնական թեմերանն այս առիթով հայտնեց իր դժգոհությունը, իսկ Ֆրանսիայի նախագահ Ֆ. Միտերանը խորհուրդ տվեց Իրանում գործող դեսպանին և ողջ անձնակազմին շտապ հեռանալ երկրից²: Սակայն մի քանի տարի անց Իրան-Ֆրանսիա հարաբերությունները հնարավոր եղավ շուկել, որի առիթ հանդիսացավ 1990 թ. հուլիսին Իրանի միջնորդությամբ Լիբանանում պատանդ վերցված ֆրանսիական բոլոր քաղաքացիների ազատ արձակումը և փոխադարձաբար Ֆրանսիան էլ ազատ արձակեց Նադդաշին ու նրա ընկերներին, ովքեր անհաջող մահափորձ էին կատարել շահական Իրանի նախկին վարչապետ Շ. Բախտիարի նկատմամբ³:

Մեծ Բրիտանիան ևս քննադատեց Իրանում ԱՄՆ-ի դեսպանատան գրավման փաստը և միացավ տնտեսական պատժամիջոցներին: Սակայն Անգլիան հավատարիմ մնալով իր ճկուն դիվանագիտությանը, հայտարարեց, որ արգելանք է դրվում միայն այն առևտրային պայմանագրերի վրա, որոնք կնքվել են 1979 թ. նոյեմբերի 4-ից՝ դեսպանատան գրավման օրից հետո: Այս զգուշավորության շնորհիվ Անգլիան արդեն 1982 թ. Իրանի առևտրաշրջանառության մեջ զբաղեցրեց 3-րդ տեղը, իսկ նրա առևտուրը Իրանի հետ հասավ 971 մլն դոլարի⁴: Սակայն Իրան-Անգլիա հարաբերությունները վտանգվեցին Պարսից ծոցում “Տանկերային պատերազմի” ժամանակ, երբ Իրանը ոչնչացրեց Անգլիային պատկանող նավթային տանկերը:

² Большакова П., Отношения Ирана с Европой как фактор укрепления региональных позиций, Роль и место Ирана в регионе, Москва, 2007, с. 58.

³ ՀՀ Արևաշին գործերի նախարարություն, Պատմադիվանագիտական քաղաքական (աբիմ), Մեծավոր և Միջին Արևելքի վարչություն, Իրանի քաղաք, ք. 1, գ. № 284, ԻԻՀ Հաջատանի գործերի հաշվառամուտար Կառն Բաբրուդյան, Շուշազի, Իրանի Իսլամական Հանրապետություն արդի էտապում, էջ. 20:

⁴ Большакова П., Отношения Ирана с Европой..., с. 60.

Հարաբերություններն իրապես խզվեցին 1989 թ. սկզբներին Սալման Ռուշդիի՝ «Մատանայական բանաստեղծություններ» գրքի շուրջ ծավալված աղմկահարույց միջադեպի պատճառով: Հատկանշական է, որ եվրամիության անդամ երկրները, յուրաքանչյուրն առանձնահատուկ դիրքորոշում ուներ Իրանի նկատմամբ: Օրինակ Հունաստանի դիրքորոշումը մեծապես տարբերվում է Իռլանդիայի և սկանդինավյան երկրների մոտեցումներից մարդու իրավունքների և հատկապես Սալման Ռուշդիի խնդրի կապակցությամբ⁵:

Չնայած ԻԻՀ-ը սերտորեն համագործակցում էր եվրոպական մեկ այլ երկրի՝ Գերմանիայի հետ, այնուամենայնիվ Գերմանիան և քննադատեց ԱՄՆ-ի դեսպանատան գրավման փաստը ու միացավ Իրանի նկատմամբ կիրառվող տնտեսական պատժամիջոցներին: Իրանից հեռացան գերմանացի շատ մասնագետներ, Իրանն էլ փակեց «Գյոթեի անվան ինստիտուտը»: Չնայած այս ամենին, 1984 թ. Իրան ժամանեց Գերմանիայի արտգործնախարար Գ.Ղ.Գենշերը: Այս այցը մեղմեց լարվածությունը երկու երկրների միջև և խթանեց երկու երկրների հարաբերությունները ինչպես քաղաքական, այնպես էլ առևտրա-տնտեսական ոլորտում: 1984 թ. Գերմանիայից Իրան արտահանումը կազմեց 3 մլրդ դոլար, իսկ ներմուծումը Իրանից՝ 500 մլն դոլար: Իրանը Գերմանիայից հիմնականում գնում էր տանկեր, օազմանավեր, հրետանային զենք՝:

Իտալիան եվրոպական այն երկրներից է, որի հարաբերություններն Իրանի հետ երբևէ չեն ենթարկվել լուրջ փոփոխությունների: Ավելին, 1989 թ. Իտալիան Իրան ապրանքներ արտահանող պետությունների շարքում գրավեց երկրորդ տեղը: Զմոտանանք նաև, որ Իրանը Պարսից ծոցի միակ երկիրն է, ուր եվրոպական կապիտալը կարող է թափանցել՝ առանց ամերիկյան կապիտալի հետ մրցակցության մեջ մտնելու, ինչը խիստ կարևոր է եվրոպայի համար:

⁵ Սալման Ռուշդին Մեծ Բրիտանիայի քաղաքացի է: Եւ 1988 թ. հրատարակեց իր «Մատանայական բանաստեղծություններ»-ը, որտեղ կիրառվում էր մահմեդականների մադլաբե Սոխամեդին: Այս գալուսթի այլիք քաղերացոնց աշխարհի յուրոր մահմեդականների մոտ, իսկ Իրանի հոգևոր առաջնորդ իմամ Խոմենին ֆեթվա հռչակեց, ըստ որի Ռուշդին պետք է սպանվի: Այս առաքացոնց եվրոպական երկրների դժգոհությունը, որոնք գտնում էին, որ իմամի ֆեթվան ծաղախեղական սեպկցիա է, ունեճույցուն է ազատության դեմ և այն չիաների կարծիքն է, այլ ոչ տամիններինը:

⁶ «Հ Արտացին գործերի նախարարություն, Պատմադիվանագիտական քաճին (արխիվ), Մեծմվոր և Միջին Արևելյի վարչություն, Իրանի քաճին, ց. 5, գ. № 242, էջ. 252:

⁷ Бельяковский П., Отношения Ирана с Европой..., с. 57-58.

Իրանի հարաբերություններն եվրոպական երկրների հետ փոփոխության ենթարկվեցին Այաթոլլահ Խոմեյնիի մահից հետո և հատկապես նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆանջանիի կառավարման տարիներից սկսած, դա համընկավ նաև ԽՍՀՄ-ի փլուզման հետ, երբ աշխարհի գրեթե բոլոր երկրները սկսեցին վերանայել իրենց արտաքին քաղաքականությունն այլ երկրների հետ:

Հատկանշական է, որ 20-րդ դարի վերջին ԻԻՀ-ի արտաքին քաղաքականությունը միտված էր կարգավորելու և խորացնելու հարաբերություններն Արևմտյան Եվրոպայի երկրների հետ: Ռաֆասանջանիի կառավարման տարիներն այժի ընկան առավել լիբերալ մոտեցմամբ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության ոլորտում:

Ռաֆասանջանիի իրատեսական քաղաքականությունը խարսխված էր երկու զադախարների վրա.

1. Կերացնել իրանա-իրաքյան պատերազմի հետևանքով առաջացած խնդիրները

2. Կարգավորել Իրանի հարաբերություններն այլ երկրների հետ⁸:

Իրանն առաջին հերթին փորձեց խորացնել հարաբերությունները Չեռմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի հետ: Իհարկե այդ հարաբերությունները հիմնականում խարսխված էին առևտրատնտեսական կապերի վրա, ինչը և կարճ ժամանակահատվածում տվեց շոշափելի արդյունքներ: Դրա վառ օրինակ կարող է հանդիսանալ 1995 թ. Իրան-Եվրամիություն առևտրաշրջանառության մասին տվյալները: Եվրամիությունը միայն 1995 թ. Իրան է արտահանել 5,1 մլրդ դոլարի և ներմուծել 6,1 մլրդ դոլարի ապրանք: Իրանն ապահովում է Եվրոպայի նավթի պահանջարկի 10%: 1994 թ. առաջին 11 ամսվա ընթացքում Իրանի արտահանումն Իտալիա կազմել է 970 մլն դոլար (1993 թ. համեմատ 24,2%-ով պակաս): Նույն ժամանակաշրջանում Իրանը Իտալիայից ներմուծել է 670 մլն դոլարի ապրանք (1993 թ. համեմատ 6,4% ավելի պակաս): Բելգիայի արտոգործնախարար Էրիք Դիլիքը Բրյուսելում Իրանի դեսպան Համիդ Աբու-Թալեբիի հետ տեսակցության ժամանակ, արտահայտեց եվրոպական երկրների ցանկությունը՝ Իրանի հետ

⁸ Foreign Policy of Iran after Islamic Revolution, Journal of Politics and Law, v. 3, № 2; September 2010, p. 202. www.ccsenet.org/pol

ավելի սերտ կապեր հաստատելու մասին⁸: 1996 թ. Չեքոսլովակիայի և Եգիպտոսի հետ կապերի ընկերությունները մոտ 2,2 միլիարդ մարկի ապրանք արտահանեցին Իրան, մինչդեռ Չեքոսլովակիայի ներմուծեց 1,1 մլրդ մարկի իրանական ապրանք: 1996 թ. ԻԻՀ Եվեդիա է արտահանել 270 մլն դոլարի ապրանք և ներմուծել 85 մլն դոլար: Իրանական արտահանման ապրանքների 92% կազմել է նավթը⁹: Թվում էր թե Իրան-ԵՄ հարաբերությունների մակարդակը, թեկուզև առևտրատնտեսական հարաբերությունների միջոցով հնարավոր կլիներ քարծրացնել նոր հարթության վրա:

Սակայն 1997 թ. քաղաքական ծանր անդրադարձավ Իրան-ԵՄ հարաբերությունների զարգացման վրա: Նախ ԵՄ-ն Իրանի ղեկավար շրջանակներին մեղադրեցին ահաբեկությանը հովանավորելու մեջ, նկատի ունենալով «Միկոնոս» գործը: Այնուհետև 1997 թ. հոկտեմբերի 9-ին ԱՄՆ-ն ընդունեց Դ'Ամատոի օրենքը¹⁰ Իրանի նկատմամբ, ըստ որի պատժամիջոցների կենթարկվեին այն

⁸ ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, «Պատմադիվանագիտական բաժին (արխիվ), Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Իրանի բաժին, ց. 1, գ. № 286, էջ. 74:

⁹ ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, «Պատմադիվանագիտական բաժին (արխիվ), Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Իրանի բաժին, ց. 2, գ. № 168, էջ. 11-12:

¹⁰ 1997 թ.-ին Չեքոսլովակիայի դատարանը մեղադրեց իրանական կառավարությանը 1992 թ. սեպտեմբերի 17-ի Բեռլինում ընդ ընդ պայթյունների պայմանագրերը կազմակերպելու մեջ: Բեռլինի «Միկոնոս» ծեսադրանում սպանվեցին Սոհամեդ Ասեդի Շահաբադին, Ֆատուսի Աբդալին, Հոմալուն Արդաբան և Սոհամեդ Նուսի Դեհխոդին: Արանք ժամանել էին Բեռլին մասնակցելու Սոցիալիստական ինտերնացիոնալի Կոնգրեսին: Բեռլինի դատարանը վերոհիշյալ գործողության մեջ մեղադրեց ԻԻՀ-ին՝ կոլեկտիվ վերջինիս ահաբեկությունը հովանավորող պետություն: Բեռլինի դատարանը հայտարարեց նաև, որ սպանությունը չէր կարող իրականացվել առանց Իրանի բարձրաստիճանի իշխանությունների իմացության: Հետաքննության ժամանակ չի ելքվել, այն փաստը որ սպանությունը ունեցել է քաղաքական բնույթ և «կազմակերպությունը տրվել էր անձամբ հոգևոր աջակցող» Ալի Խանեմեհի և նախկին նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին», բառացիորեն մեջբերվում է մեղադրական ծաղիկ: Իրանը կտրականապես մերժում է իր մասնակցությունը: On the 5th Anniversary of the Mykonos Verdict, <http://www.pdk-iran.org/eng/ish/kurdistanbulletin/>, Sept. 11, «РГ-Ирак: оземь обреченных и ноемь», <http://www.imes.ru/rua/stat/2009/15-02-09.htm/>.

¹¹ 1995 թ. սեպտեմբերի 8-ին սենատոր Ալֆոնս Դ'Ամատոն ներկայացրեց «Իրանի օտարերկրյա նախկին պատժամիջոցների ակտը» Iran Foreign Oil Sanctions Act, որը նախատեսում էր պատժամիջոցներ իրականացնել օտարերկրյա այն ընկերությունների նկատմամբ, որոնք 20 մլն դոլարից ավել է ներգծելի սեյսմոլոգիաներ կներմուծեն Իրան: CRS Report for Congress, The Iran Sanctions Act, Kenneth Katzman, Specialist in Middle Eastern Affairs Foreign Affairs, Defense, and Trade Division, Order Code RS20871/.

ընկերությունները, որոնք տարեկան 20 մլն դոլարից ավելի ներդրում կանեն Իրանի նավթագազային ոլորտում: Ի դեպ դա հիմնականում վերաբերվում էր օտարերկրյա ընկերություններին, քանի որ ամերիկյան ընկերությունների նկատմամբ նման արգելքը գործում էր 1995-ից: Այն ընկերությունները, որոնք կիրառարկվեն ենթարկվել ԴՆձատրի օրենքին, նրանց գործունեությունը խիստ կսահմանափակվեր Միացյալ Նահանգներում: Արդյունքում՝ բազմաթիվ առևտրատնտեսական պայմանագրեր, որ կնքվել էին եվրոպական մի շարք երկրների և Իրանի կառավարության միջև, չեղյալ հայտարարվեցին:

Այսպիսով, 1997 թ. երկու լուրջ մարտահրավեր ծառայեցին Իրան-Եվրամիություն հարաբերությունների առջև: Դրանցից առաջինը կապված էր «Միկոնոս» գործի հետ: Բեռլինյան դատարանի որոշմանը հաջորդեցին բազմահազարանոց ցույցեր և եվրոպական երկրների դեսպանները զանգվածաբար հետ կանչվեցին Իրանից: Սա խնայաբե լուրջ հարված էր Իրան ԵՄ զարգացող հարաբերություններին: Իրան-ԵՄ հարաբերությունները հնարավոր եղավ ինչ որ կերպ վերականգնել միայն հաջորդ նախագահի՝ Մոհամեդ Խաթամիի կառավարման տարիներին: Առաջին հայտարարություններից մեկն արեց Իտալիայի վարչապետ Ռոմանո Պրոդին Մոսկվայում, ըստ որի եվրոպական երկրները խորհրդակցություն են գումարել և ապագայում հնարավոր է լուծվի դեսպանների վերադարձի հարցը Թեհրան¹²: Ճզնածածը Իրանի և Չեռմանիայի միջև հնարավոր է տևական չլիներ, եթե 1997 թվականին Չեռմանական դատարանը «Միկոնոս» գործի դատավճօի վերաբերյալ նմանատիպ կոշտ հայտարարություն չաներ:

Միևնույն ժամանակ, հետաքրքիր զարգացումներ տեղի ունեցան նաև ԴՆձատրի օրենքի հետ կապված եվրոպական ընկերությունների ներդրման ծրագրերի մասով: Համաձայն «Մալամ» քերթի, Ֆրանսիական SNTUI ընկերության նախագահը հրաժարվում էր ենթարկվել ԴՆձատրի օրենքին և իր ելույթներից մեկի ժամանակ ասել էր, որ այս ընկերությունը միջազգային, ՄԱԿ-ի և Ֆրանսիայի քոլոր օրենքները հարգելով հանդերձ, պարտավորվածություն չունի ԱՄՆ-ի ներքին օրենքների նկատմամբ, որոնք հաստատվում են իրենց նեղ շրջանակից ելնող շահերի պաշտպանության համար: Նա անուղղակի

¹² ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Պատմափիվանագիտական բաժին (արխիվ), Անթուրի և Միջին Արևելքի վարչություն, Իրանի բաժին, ց. 2, գ. № 169, էջ 170:

կերպով ակնարկելով ԱՄՆ-ի կոնգրեսում հաստատված օրենքի կապակցությամբ, ասել է, որ ՏՆՏԱՍ ընկերությունը գործում է աշխարհի 100 երկրներում և համոզված է, որ Իրանում ևս իրենց գործունեությունը ճիշտ է և օրինակելի: «Իրենց գործը իշխանություն փոխել և քաղաքականություն պարտադրելը չէ»¹⁴:

Արդյունքում 1997 թ. սեպտեմբերի 28-ին Իրանի Նավթի ազգային ընկերությունը և ֆրանսիական, ռուսական և մալայզիական ընկերություններից բաղկացած կոնսորցիումի միջև ստորագրվեց Պարսից ծոցում գտնվող «Հարավային Փարս» գազային ավազանի ընդարձակման պայմանագիր: Արտահանման գործում բաժնետոմսերը նախատեսվում էր բաժանել հետևյալ կերպ՝ մալայզիական «Պետրոնաս» ընկերություն 30%, ռուսական «Գազպրոմ» 30% և ֆրանսիական «Տոտալ» 40%: Նավթի փորձագետները նշում են, որ այն կարող է լինել գազի ամենամեծ ավազանը, որը ունի 8 տրիլիոն մետր խորանարդ գազ¹⁵:

Այս ամենով հանդերձ, բոլորն էլ հասկանում էին, որ Իրանի ու ԵՄ-ի միջև հարաբերությունները կարող են բարելավվել միայն հաջորդ նախագահի օրոք: 1997 թ. Իրանում նախագահական ընտրությունների տարի էր, որի ժամանակ մայիս ամսին ԻԻՀ նախագահ ընտրվեց բարեփոխիչների ֆեի ներկայացուցիչ սեյեդ Մոհամմադ խաթամին: Նորընտիր նախագահի գերխնդիրն էր վերականգնել Իրանի վարկանիշը և կարգավորել հարաբերություններն արտաքին աշխարհի հետ: Այդ ուղղությամբ նախագահը ձեռնարկեց մի քանի կարևոր քայլ, դրանց թվին էր պատկանում 1997 թ. հոկտեմբերին Իրանի կառավարության ստորագրած Բիմիական զենքի մասին կոնվենցիան, որի արդյունքում եվրոպական ութ նախարար ողջունեց Իրանի նախընտրած նոր կուրսը: Նորընտիր նախագահի ակտիվ արտաքին քաղաքականության շնորհիվ 1997 թ. նոյեմբերին հնարավոր եղավ

¹⁴ «Ալայան», 05.10.1997: «Հարավային Փարսի» նախարարություն, Պատճառելի անապահատական բաժին (արխիվ), Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Իրանի բաժին, ց. 2, գ. № 169, էջ 175:

¹⁵ «Ալայան», 30.09.1997: «Հարավային Փարսի» նախարարություն, Պատճառելի անապահատական բաժին (արխիվ), Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Իրանի բաժին, ց. 2, գ. № 169, էջ 138:

Kasaei Z., «Иностранные инвесторы в энергетическом секторе Ирана», <http://www.times.ruhus/etad/2009/02-06-09a.htm>

հետ կանչել ԵՄ անդամ երկրների ղեսպաններին¹⁶: Համաշխարհային հանրության վրա իրական ազդեցություն ունեցավ ԻԻՀ նախագահի՝ Մոհամմեդ խաթամիի 1997 թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում «Բաղաքակրթությունների երկխոսության» կոչը: Այս ամենին ավելացավ նաև խաթամիի և մի համարձակ քայլ, 1998 թ. նա ՄԱԿ-ում հայտարարեց, որ իրենք կյանքի չեն կոչի Աբաթուլահ խոմեյնիի 1989 թ. Ֆեթվան Ասլման Ռուշդիի նկատմամբ: Եվրոպական երկրները իրապես հավատացին և ցանկացան որակական նոր հարթության վրա դնել իրենց հարաբերություններն Իրանի հետ: Արդյունքը երկար սպասեցնել չտվեց: 1999 թ. ԻԻՀ նախագահը 20 տարվա ընդմիջումից հետո առաջին անգամ այցելեց Արևմտյան Եվրոպա՝ Իտալիա, Ֆրանսիա, Նորվեգիա և Անգլիա:

Խաթամիի բարեփոխական քաղաքականությունը խարսխվում էր երկու հիմնական թեզի վրա.

1. Իրանի խնդիրների լուծումն արտաքին քաղաքականության լիցքաթափման միջոցով
2. Բարեփոխումների քաղաքականությունը ներքաղաքական կյանքում:

Իրանի արտաքին քաղաքական խնդիրները լուծելու համար խաթամին հետամուտ էր լինում ներքոհիշյալ դրույթների իրականացմանը.

- Նպաստել Իրանի և Եվրոպական երկրների հարաբերությունների կարգավորմանը,
- Նպաստել Մեծամավորարևելյան տարածաշրջանում կայունության պահպանմանը,
- Իրանի ակտիվ մասնակցությունը միջազգային կազմակերպություններին,
- Վերականգնել Իրանի հարաբերություններն այլ երկրների հետ,
- Պահպանել ազգային ինքնությունը և արժեքները,
- Ապահովել խաղաղ միջավայր աշխարհում,
- Ամրապնդել քաղաքակրթությունների միջև երկխոսությունը,

¹⁶ Ruth Hansu Santini & Raffaele Mauriello, Report on Iranian perceptions of the European Union, Forum on the Problems of War and Peace & University of Bologna, p. 8, http://www.gamnet-eu.org/fileadmin/documents/working_papers/0109/0109_04.pdf.

• Ամրապնդել Իրանի դիրքերը Իսլամական կոնֆերանս կազմակերպությունում (ԻԿԿ-ի), «Չմիանալու շարժման» մեջ և համագործակցել Հյուսիս-Հարավ ծրագրին¹⁷:

Խաբամիլի վարած արտաքին քաղաքականության շնորհիվ, ինչպես նաև Եվրոպա կատարած այցերի ընթացքում կնքվեցին բազմաթիվ պայմանագրեր, որոնք շուտով էական նշանակություն ունեցան Իրանի արդյունաբերության և ասետրաշրջանառության զարգացման վրա: Կարճ ժամանակ անց կարգավորվեց ասետրաշրջանառությունն Իրանի և Եվրոպական երկրների միջև: 1998 թ. Հոլանդիան Իրանից արտահանեց 479 մլն դոլարի ապրանք, մինչդեռ Իրանը նույն տարում Հոլանդիայից ներմուծեց 181 մլն դոլարի ապրանք: Հոլանդիան հիմնականում Իրանից ներմուծում էր հում նավթ, որոշ քանակի սննդամթերք, մեքենաների սարքավորումներ և քիմիական ապրանքներ: Իսկ Իրանը Հոլանդիայից՝ մեքենաների պահեստային մասեր, փոխադրամիջոցների սարքավորումներ և գյուղատնտեսական ապրանքներ¹⁸: Հոլանդացիները շահագրգռված էին ներդրումներ անել Իրանի նավթի և գազի ոլորտում:

2000 թ. Իրանի և Չեռմանիայի հարաբերությունները ևս կարգավորվեցին, որի հիմքը դրվեց Չեռմանիայի կանցլեր Յոշկա Ֆիշերի այցելությամբ: 2000 թ. փետրվարին Իրանի պաշտամենտական ընտրություններից հետո Եվրախորհրդի նախարարները կարգադրեցին Հանձնաժողովին Իրանի հետ հարաբերությունների խորացման առաջարկների փաթեթ ներկայացնել: 2000 թ. նոյեմբերին առաջին անգամ հանդիպում կազմակերպեց Առևտրի ու ներդրումների բարձր աստիճանի նորաստեղծ աշխատանքային խումբը:

2000 թ. ասետրաշրջանառության մեծ աճ գրանցվեց Չեռմանիայի և ԻԻՀ-ի միջև: Իրանից Չեռմանիա ներմուծվող նավթամթերքի քանակը կտրուկ աճեց: 2000 թ. մարտին այն կազմեց 118000 տոննա, հունվար-փետրվար ամիսների 45000 տոննայի փոխարեն: Համաձայն Չեռմանիայի տնտեսական գրասենյակից ստացված տեղեկության Իրանից Չեռմանիա ներմուծված հում նավթի արժեքը մարտ ամսին կազմել է 49,018,380 մարկ (միջինը 415,41 մարկ 1 տոննայի համար),

¹⁷ Foreign Policy of Iran after Islamic Revolution, Journal of Politics and Law, v. 3, № 2, September 2010, p. 203, www.ccsenet.org/jpl

¹⁸ ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Պատմափոխանակության բաժին (արհիվ), Մեծնավթ և Միջին Արևելքի վարություն, Իրանի բաժին, ք. 6, գ. № 67, էջ 13:

իսկ հունվար փետրվարին այն կազմել է մոտավորապես 900000 մարկ¹⁹։

2002 թ. շարունակվում էր նաթամի այցելությունը եվրոպական երկրներ։ Այս անգամ նախագահն այցելեց Ավստրիա և Հունաստան։ Հաստիանշական է, որ Իրանը եվրոպական քաղաքական առաջնորդների կողմից դիտարկվում էր որպես տարածաշրջանի կարևոր տեղություն, որը կարող է իրապես ազդել Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի իրավիճակի վրա²⁰։ 2002 թ. դեկտեմբերին ԵՄ-ի պատվիրակությունն այցելեց Թեհրան, որի ժամանակ բանակցեցին քաղաքական երկխոսության, ահաբեկչության դեմ պայքարի, առևտրի ու համագործակցության համաձայնագրի շուրջ։

Նաթամին նպատակ ուներ մեծացնել օտարերկրյա ներդրումների չափը Իրանում, ինչի համար էլ նրա նախաձեռնությամբ 2002 թ. ընդունվեց նոր օրենք օտարերկրյա ներդրողներին ներգրավելու ուղղությամբ, սակայն այս օրենքը, ևս չթեթևացրեց իրանական տնտեսությունում օտարերկրյա ընկերությունների ներդրումների գործը, քանի որ Իրանի տնտեսությունում ներդրում կատարելուց առաջ օտարերկրյա ներդրողը պարտավոր է գտնել իրանցի պոտենցիալ գործընկեր։ Այնուհետև երկու կողմերն էլ համապատասխան նախարարությունից ստանում են հաստատող լիցենզիա և կնքում բազային համաձայնագիր։ Դրա հետ միասին քավական շատ պահպանվել են կապիտալի արտահանման սահմանափակումները։ Իրանական օրենքն արգելում է օտարերկրյա կառավարության ուղակի ներդրումը Իրանի տնտեսության մեջ, հակառակ դեպքում կապիտալը կարող է դուրս քերվել Իրանի տնտեսական սխտեմից։ Միևնույն ժամանակ արգելվում է 100%-ոց օտարերկրյա կապիտալով ընկերության ստեղծումը։ Այս ամենին ավելանում է ևս մի սահմանափակում։ Իրանում օտարերկրյա ներդրում կատարելու ժամանակ առաջացած վեճերը պետք է լուծվեն իրանական դատարաններում։ Չնայած նոր օրենքի համաձայն նման իրավունք ստացել են նաև արբիտրաժային դատարանները, քայքայ միայն այն դեպքում, եթե Իրանի ու այդ պետության միջև, որի

¹⁹ ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, *Ատոմադիվանագիտական բաժին (արբիվ), Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Իրանի բաժին, ց. 8, գ. № 67, էջ 37։

²⁰ Боньшакоева П., Отношения Ирана с Европой..., с. 62.

ներկայացուցին է ներդրողը, ստորագրված է օտարերկրյա ներդրումների մասին երկկողմանի համաձայնագիր²¹:

Այս ամենով հանդերձ եվրոպական քիզնես էլիտան կարողանում էր համագործակցության եզրեր գտնել Իրանում և ստանալ շահույթներ՝ նպաստելով Իրան-ԵՄ տնտեսական առևտրաշրջանառության մեծացմանը:

Իրան-ԵՄ հարաբերություններում առաջընթաց գրանցվեց Մոհամմեդ խաթամիի կառավարության 2002 թ. կատարած մի շարք գործողությունների շնորհիվ: Խաթամիի վարած «լիցքաբաշման» քաղաքականությունը, եվրոպական երկրների հետ հարաբերությունների կարգավորումը, այնուամենայնիվ, վստահություն չսերմանեցին ոչ ԵՄ-ի, և ոչ էլ առավելապես ԱՄՆ-ի մոտ Իրանի միջուկային ծրագրերի նկատմամբ:

Ավելին, ԵՄ-ի դիլեգորոշումը Իրանի նկատմամբ կտրուկ փոխվեց 2002 թ., երբ Իրանի կառավարությանն ընդդիմադիր համարվող Մոջահեդին-ե խալք²² խմբակցությունը ի լուր աշխարհի հայտարարեց, քե ԻԻՀ-ն համաշխարհային հանրությունից գաղտնի զբաղված է ուրանի հարստացմամբ, և որ ամենակարևորն է, աշխատում է միջուկային զենք ստեղծելու ուղղությամբ: 2002 թ. դեկտեմբերին Պենտագոնը, հենվելով արբանյակներից ստացված տեղեկատվության վրա, հայտնեց, որ Արաքի մոտ Իրանի կենտրոնական մատուց, կառուցվում է ծանր ջրի արտադրության օբակտոր²³:

²¹ Касеев Э., Иностранные инвесторы в энергетическом секторе Ирана, <http://www.imes.ru/ru/issue/2009/02-06-09a.htm>

²² Հիմնվել է 1965 թ. Եփրանի համալսարանականների կողմից, ովքեր դժգոհ էին չափ կառավարումից: Երանց գաղափարախոսությունն էր պայքարել չափազանց վարչակազմի, կապիտալիզմի, ինքնիշխանի և կոերականության դեմ: Երանց իմունական նպատակն էր ստեղծել սոցիալիստական իսլամական հանրապետություն: Մոջահեդին-ե խալքն աջակցում էր Խոմենիին հակաամերիկյան գործունեության ժամանակ, և ողջունեց 1979 թ. Իրանում ԱՄՆ-ի դեսպանատան գրավումը: Անկախ շուտով նրանց դարձան Խոմենու վարչակազմին ծաղախել ընդդիմադիրներ և Երանց գործունեությունը դարձավ խիստ վտանգավոր Խոմենու համար: Եւ միջոցներ ձեռնարկեց կազմակերպությունը յուճարելու համար: Բայց Մոջահեդին-ե խալքը, անցնելով ընդհատակ շարունակեց իր գործունեությունը ԻԻՀ դեմ: Mujahedin-e Khalq Organization, Muslim Iranian Student's Society <http://terrorism.walaf.ru/mek.htm>

²³ Тумербаев Р., Ближний Восток и атомная проблема, Ядерный контроль, № 3 (66), т. 9, с. 25.

Սա իսկապես սառը ցնցուղի ազդեցություն թողեց համաշխարհային հանրության վրա: Ինչպես ԱԵՄԳ-ն, այնպես էլ ԵՄ-ն բացատրություններ և պարզաբանումներ պահանջեցին Իրանից: Եվրամիությունը խիստ անհանգստացած է Իրանի միջուկային ծրագրով, քանզի Իրանն աշխարհագրական տեսանկյունից բավական մոտ է գտնվում իրենց: ԵՄ-ն համոզված է, որ Իրանի կառավարությունը ձգտում է ունենալ միջուկային զենք, ինչը սարսափ է ներշնչում նրանց, քացի այդ եվրոպացիները գտնում են, որ միջուկային զինանոցն անվտանգ պահելու համար անհրաժեշտ են համապատասխան բարձր տեխնիկական հնարավորություններ, ինչին Իրանը, նրանց կարծիքով, չի տիրապետում: Այս ամենին ավելացավ սեպտեմբերի 11-ի աղետը, որից հետո եվրոպացիներն էլ ավելի են զգուշանում, քանզի մտահոգվում են, որ եթե Իրանը ունենա միջուկային զենք, այն կարող է անգամ ընկնել ահաբեկիչների ձեռքը, քացի այդ ԵՄ-ում համոզված են, որ Իրանի միջուկային հավակնությունները կարող են խրախուսել տարածաշրջանի մյուս երկրներին՝ ունենալ նման ձգտումներ²⁴:

Չնայած պաշտոնական Թեհրանը բազմիցս հայտարարել է, որ Իրանը չի ձգտել ու չի ձգտում ունենալ միջուկային զենք և իրենց միջուկային ծրագիրը միտված է «խաղաղ ատոմ» ծրագրի շրջանակներին, այնուամենայնիվ, Իրանի միջուկային հավակնությունները հակասում են ԵՄ-ի անվտանգության շահերին:

Որպեսզի թուլացնի Իրան-ԵՄ ծագած լարվածությունը, Մոհամմեդ Նաթանյանը ընդունեց ԱԵՄԳ-ի ներկայացուցիչների առաջարկը՝ ցանկանալով ապացուցել, որ Իրանը ձգտում է ունենալ միայն «խաղաղ ատոմ» ծրագիր: 2003 թ. դեկտեմբերի 18-ին Եվրամիության խորհրդով Իրանը երաշխիքների համաձայնագրին զուգահեռ ստորագրեց «Հավելյալ արձանագրություն»²⁵, որով կարծես քե Իրանի միջուկային ծրագիրն ամբողջովին բաց էր դառնում գործակալության համար: Բացի այդ, 2004 թ. նոյեմբերի 15-ին Կիեմնայում ԱԵՄԳ-ի շուրջ-կայանում տեղի ունեցած քննարկումների ժամանակ, Իրանը կրկին վերահաստատեց պաշտոնական իր տեսակետը, որ

²⁴ Foreign Policy of Iran after Islamic Revolution, Journal of Politics and Law, v. 3, № 2, September 2010, pp. 203-204, www.ccsenet.org/jpl

²⁵ Համաձայն հավելյալ ծրագրի ԱԵՄԳ-ի ներկայացուցիչները կարող էին առանց նախապես զգուշացնելու մտնել երկիր և ուսումնասիրություններ կատարել:

Միջուկային զենքի չտարածման պայմանագրի 2-րդ հոդվածի համաձայն չի ձգտել և չի ձգտում ձեռք բերել միջուկային զենք²⁶։ Փոխարենը Եվրամիությունն ընդունեց Իրանի իրավունքը՝ Միջուկային զենքի չտարածման պայմանագրի անդամության շրջանակներում ատոմակայանը շահագործելու խաղաղ նպատակներով։

Իրան-ԵՄ հարաբերությունները որակական նոր հարթության վրա դրվեցին 2003 թ. փետրվարին, երբ Թեհրան ժամանեց ԵՄ-ի արտաքին հարցերով կոմիսար Կ.Պատտենը։ Նա հանդիպում ունեցավ Իրանի գերագույն իշխանության հետ և այդ հանդիպումը նպաստեց երկկողմ հարաբերության զարգացմանը։

Պատենի գնահատմամբ, մոտ ապագայում Իրան-ԵՄ երկխոսությունը կառուցվելու է հիմնականում երեք ուղղությամբ. մարդու իրավունքների, զանգվածային ուլունջացման զենքի և մերձավորարևելյան խնդիրների կարգավորման հարցերի շուրջ։ Հատկանշական է, որ Պատենը հստակ ցույց տվեց, որ ԵՄ-ն պատրաստ է սերտորեն համագործակցել Իրանի հետ Աֆղանստանի վերականգնման, թմրանյութերի դեմ պայքարի, փախստականների խնդիրների լուծման և Կիտոսոյի արձանագրության հարցերի շուրջ. ԵՄ-ն Իրանին դիտարկում է իբրև լավ և վստահելի գործընկեր։ խոսելով Իրանի միջուկային ծրագրի մասին, Պատենը նշեց, որ ԱՄՆ-ի հետ կնքվելիք Հավելյալ պայմանագիրը կդառնա ամենադրական ազդանշանը, որը լավ օրինակ կծաօայի տարածաշրջանում և կընդգծի միջազգային պարտականություններին Իրանի պատրաստակամությունը²⁷։

Պատենի նման հայտարարություններից և Նաթոյի կառավարության «Հավելյալ պայմանագրի կնքումից հետո» եվրոպական երկրներից շատերը վերահաստատեցին իրենց ցանկությունը համագործակցել Իրանի հետ, որոնցից առաջնային դիրք զբաղեցրեց Գերմանիան։ Կարևորելով իրանական շուկայում իր դիրքերի ամրապնդումը, Գերմանիան հիմնական շեշտը դնում էր իրանական տնտեսության մեջ գերմանական ներդրումային կապիտալի ավելացման վրա։ Իրանի տնտեսությունում ներդրումների կատարման ծավալով եվրոպական ներդրողների շարքում Բեռլինը զբաղեցրեց առաջին տեղը և մասնակցեց

²⁶ Nuclear Agreement reached between Iran and the European Union (November 15, 2004) <http://www.iranatom.ru/news/nc056.htm>

²⁷ Трофимов А., Об отношениях Исламской Республики Иран с государством Евросоюз, <http://www.imes.ru/news/stat/2003/21-05-03.htm>

19 տարածուսակ ծրագրերի իրականացմանը, այդ թվում ոռոգման ցանց կառուցելու և ջրամատակարարման ենթակառուցվածքներ ստեղծելու, էլեկտրոկայաների կառուցման, Բենդեր-Աբրասում «Ալ-Մեհդիի» այլոմինի գործարանի կառուցման աշխատանքներին և այլն: Գերմանիան այդ տարիներին ակտիվորեն աջակցում էր Համաշխարհային առևտրի կազմակերպությունում Իրանի անդամակցության հարցին²⁸:

Մոհամմեդ Խաթամիի վարած ակտիվ արտաքին քաղաքականությունը շուտով տվեց դրական պտուղներ: Եվրոպական երկրների հետ կնքվեցին մի շարք պայմանագրեր, որոնց արդյունքում ԵՄ-Իրան առևտրաշրջանառությունը կտրուկ աճեց:

2003 թ. Իրանի և Եվրամիության երկրների միջև առևտրաշրջանառությունը հասավ 16,7 մլրդ եվրոի: Եվրամիությունից Իրան կատարվող ներմուծման չափը կազմեց 8,9 մլրդ եվրո, իսկ Իրանի արտահանումը Եվրամիության երկրներ՝ 9,6 մլրդ եվրոի: Եվրամիության երկրների հետ Իրանի առևտրաշրջանառության 70% պատկանում էր Գերմանիային, Ֆրանսիային և Իտալիային²⁹: Իսկ հաջորդ տարի՝ 2004 թ. առևտրաշրջանառությունը Իրանի և ԵՄ-ի միջև, ներառյալ ինժինեռատեխնիկական ծառայությունները, կազմեց ավելի քան 24 մլրդ դոլար: Ընդամենը մեկ տարի առաջ այդ գումարը երկու անգամ պակաս էր, այն դեպքում, երբ Իրանից եվրոպական երկրներ արտահանումը գերազանցում էր 9 մլրդ դոլարի սանդղակը: 2005 թ. տվյալներով Գերմանիայի արտահանումն Իրան նախորդ տարվա համեմատությամբ կրկնապատկվել էր, իսկ Ֆրանսիայի արտահանումը և ներմուծումը աճել էր մեկուկես անգամ, մինչդեռ Իտալիան այդ նույն տարում ավելացրել էր իր առևտրաշրջանառությունը 40%-ով³⁰: Հատկանշական է, որ 2004 թ. տվյալներով Իրանի և Իտալիայի առևտրաշրջանառության ընդհանուր ծավալը կազմել էր 4 մլրդ եվրո: Իրանից Իտալիա առաջին հերթին արտահանվում էր նավթ ու՝ գազ, որը կազմեց 2,1 մլրդ եվրո, իսկ Իտալիայից Իրան ներմուծվեց 1,9 մլրդ եվրոյի ասպարեզ³¹:

²⁸ Sergeev M., Внеэкономические связи Ирана со странами Запада, <http://www.imes.ru/rus/stat/2005/11-10-05.htm>

²⁹ Богдашкова П., Отношения Ирана с Европой..., с. 62.

³⁰ Месаамед В., Евросоюз и иранская ядерная проблема: работают ли экономические санкции? <http://www.imes.ru/rus/stat/2007/12-03-07.htm>

³¹ Богдашкова П., Отношения Ирана с Европой..., с. 63.

2000-2005 թթ. Իրանի ներմուծման կեսից ավելին պատկանում էր Եվրոպական շուկային. Գերմանիան (10,5% ներմուծման) դարձավ Իրանի խոշոր մատակարարը, իսկ Իտալիան (8%) զբաղեցրեց 4-րդ տեղը³²:

Այսպիսով, 2002-2006 թթ. Իրան-Եվրամիություն առևտրաշրջանառությունն ուներ այս պատկերը³³:

Տարի	Ներմուծում (միլիոն)	Ընդհանուր ներմուծման ԵՄ մասնաբաժինը	Արտահանում (միլիոն)	Ընդհանուր արտահանման ԵՄ մասնաբաժինը
2002	5.615	41.86%	8.237	22.76%
2003	6.953	41.14%	10.011	23.81%
2004	8.217	42.67%	11.873	23.85%
2005	11.449	41.04%	12.902	24.37%
2006	14.126	33.45%	11.191	23.94%

2005 թ. Իրանում կրկին նախագահական ընտրությունների տարի էր: Պարզ էր, որ այս անգամ նախագահի աթոռին առավելապես հավակնելու էին պահպանողական թևի ներկայացուցիչները, քանզի մեկ տարի առաջ՝ 2004 թ., Իրանի պառլամենտական ընտրությունների ժամանակ հաղթանակել էին հենց նրանք: 2005 թ. նախագահական ընտրություններից կարճ ժամանակ անց Իրան-ԵՄ հարաբերությունների առաջ ծառայան նոր մարտահրավերներ, քանզի ընտրությունների արդյունքում հաղթանակել էր ծայրահեղ պահպանողական թևի աշխարհիկ ներկայացուցիչ Մահմուդ Ահմադինեժադը, բոլորը լարված սպասում էին, թե նորընտիր նախագահի կատավարման շրջանում Իրանում ինչպիսի զարգացումներ տեղի կունենան: Արդյունքը երկար սպասեցնել չտվեց. նախագահից կատավարման իր 100-օրվա ընթացքում և դրանից հետո էլ հանդես եկավ այնպիսի սենսացիոն հայտարարություններով, որ նույնիսկ ամենալավատես տեսաբանները սկսեցին տարակուսել Իրանի-Եվրամիության հետագա հարաբերությունների զարգացման ճակատագրի համար:

³² Նույն տեղում, էջ 82:

³³ European Union Center of North Carolina EU Briefings, March 2006, p. 5.

2005 թ. հոկտեմբերի 26-ին Մահմուդ Ահմադինեժադը «Աշխարհն առանց սիոնիզմի» խորագրով կոնֆերանսի ժամանակ կրկնեց իմամ խոմեյնիի հայտնի ելույթը, ըստ որի՝ Իսրայելը պետք է ջնջվի աշխարհի երեսից: «Իսլամական աշխարհը թույլ չի տա իր դարավոր թշնամուն ապրել մահմեդական աշխարհի կենտրոնում»³⁴: Այս հայտարարությանն արագորեն արձագանքեց ողջ աշխարհը: Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Գերմանիայի, Կանադայի, Ռուսաստանի Դաշնության արտաքին գերատեսչություններն անմիջապես քացատրություն պահանջեցին Իրանի դեսպաններից: Ահմադինեժադը, լինելով խոմեյնիական գաղափարների իրական հետևորդ, գտնում էր, որ երկիրը պետք է կառավարել օսիբարի եռյակ սկզբունքներով՝ արժանապատվություն, ռազիոնալիզմ և ազգային շահ, որոնց վրա էլ պետք է խարսխված լինի երկրի արտաքին քաղաքականությունը:

Ի զարմանա քչորի, 2005 թ. դեկտեմբերի 8-ին Մեքքայում տեղի ունեցած Իսլամական Կոնֆերանս կազմակերպության գազաթաժողովի ժամանակ, ԻԻՀ նախագահը կրկին հանդես եկավ ելույթով, որտեղ, կասկածի տակ առնելով հրեական Հուլոթոսի զոհերի թվի արժանահավատությունը, առաջարկեց եվրոպացիներին /Պատկապես գերմանացիներին և ավստրիացիներին/ Իսրայելի համար համապատասխան նահանգներ առանձնացնել եվրոպայի սրտում ու այնտեղ տեղափոխել Իսրայել պետությունը: Նշենք նաև, որ Իրանն աշխարհում միակ պետությունն է, որ մինչև այժմ չի ճանաչել Իսրայել պետության գոյության փաստը:

Եթե Իրանի նախագահի առաջին ելույթը ցննդատվեց հիմնականում եվրոպական երկրների արտգործնախարարների մակարդակով, ապա երկրորդը՝ արժանացավ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի և Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակի ամենախիստ պաշտարակմանը: Որոշ տեսաբաններ կարծում էին, որ այդ ելույթից հետո, ամենայն հավանականությամբ, միջազգային ֆորումներում կփոխվի Գերմանիայի դիրքորոշումը իրանական խնդիրների նկատմամբ: Ռուսաստանը ևս խստորեն դատապարտեց ԻԻՀ նախագահի ելույթը:

³⁴ Ahmadinejad: Wipe Israel off map, <http://english.ahfnews.net/News/15E6BF77-6F91-46EE-A4B5-A3CE0E9957EA.htm>

Բնականաբար, Մ.Աիմադինեժադի ելույթները զուտ պոսթկոմունիստական, այլ նախօրոք մշակված ծրագիր: Դրանով լուծվում են մի քանի խնդիրներ. նոր լիցք է հաղորդվում խոմեյնիզմի գաղափարներին, որոնք վերջին տարիների ընթացքում (Ռաֆսանջանիի և Խաթամիի օրոք) կարծես փոքր-ինչ նահանջել էին, «աջակցություն» է ցուցաբերվում տարածաշրջանում «հալածված» պաղեստինցիներին, դրանով Իրանը փորձում է հովանավորի դեր խաղալ Արաբական աշխարհում: Եվ ակնհայտ է, որ Մ.Աիմադինեժադի ելույթները պետք է դուր գան ոչ միայն Իրանի հոգևորականությանն ու պահպանողականներին, այլև միլիոնավոր արաբների, որոնք ատելությամբ են լցված սիոնիզմի դեմ: Միևնույն ժամանակ, սակայն, ԵՄ-Իրան հետագա համագործակցության համար առաջացնում էին բազմաթիվ հարցականներ:

Այդ հարցերի առաջին հորիզոնականում էր գտնվում Իրանի նոր կառավարության դիրքորոշումը միջուկային ծրագրի նկատմամբ: Դրա պատասխանն էլ երկար սպասեցնել չուլեց: Նորընտիր նախագահը շուտով հայտարարեց, որ Իրանը շարունակելու է ուրանի հարստացման ծրագիրը: Եթե Միացյալ Նահանգները միանգամից անցան կոշտ դիրքերի, ապա ի տարբերություն ԱՄՆ-ի, ԵՄ-ը փորձեց Իրանի հետ խնդիրը լուծել բանակցությունների միջոցով:

Ի հեճուկս Իրանի պնդումների, թե Իրանի միջուկային ծրագիրը միտված է «խաղաղ ատոմ ծրագրին», եվրոպական հանրությունն այլ տեսակետ ունի վերոհիշյալ խնդրի կապակցությամբ: Բերենք եվրոպական կառույցների հարցախոյզից մի քանի տվյալ, թե ինչ են նրանք մտածում Իրանի միջուկային ծրագրի մասին. եվրոպացիների 53%, եվրոպական խորհրդարան անդամների 36%, եվրամիության պաշտոնյաների 17% այն համարում են անմիջական սպառնալիք եվրոպայի անվտանգության համար: Մեծամասնությունը գտնում է, որ այն կայծ կլինի տարածաշրջանում միջուկային զենքի մրցավազի համար, այդպես են կարծում հանրության 71%-ը, պառլամենտականների 74%-ը և պաշտոնյաների 65%-ը: Հանրության մի զգալի մասն էլ գտնում է, որ Իրանը միջուկային զենք կմատակարարի ահաբեկիչներին (71%), մինչդեռ այդ կարծիքին են Եվրախորհրդարանի անդամների ընդամենը 51%-ը և իսկ պաշտոնյաների 31%-ն են համաձայնվում այդ մտքի հետ: Միևնույն ժամանակ հանձնաժողովների և խորհուրդների պաշտոնյաների 72%-ը գտնում են, որ Իրանը կօգտագործի միջուկային զենքը միայն

պաշտպանական նպատակներով, հանրության և Եվրախորհրդարանի անդամների կեսն են կիսում այդ կարծիքը³⁵:

Սակայն այդ ամենով հանդերձ, ԵՄ շարունակում է մնալ Իրանի գլխավոր ատերաւտնտեսական գործընկերը: Դա պայմանավորվում է նրանով, որ ԵՄ իրանական նավթի կարիքն ունի: 2008 թ. Եվրոպական տնտեսական համաձայնագրի վիճակագրական բաժնի տվյալների համաձայն ԻԻՀ-ԵՄ ատերաւաշրջանառությունը կազմել է 25 մլրդ եվրո, որը 1,5 մլրդ եվրոյով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը: Իրանի ատերաւտնտեսական հիմնական գործընկերներն են հայտարարվել Իտալիան, Չեռմանիան և Ֆրանսիան: Միայն Իտալիան 6 մլրդ դոլարի ատերաւական համաձայնագիր է կնքել: Այդ կապակցությամբ Իրանի Ատերաւ գարգացման կազմակերպության տնօրեն Մեհդի Հասանֆարին նշել է, որ «Չնայած տնտեսական պատժամիջոցներին Եվրոպական երկրները ձգտում են շարունակել և զարգացնել Իրանի հետ երկկողմանի տնտեսական հարաբերությունները»³⁶:

Մահմուդ Ահմադինեժադի կառավարման տարիներին Իրանը ենթարկվեց ԵՄ-ի կողմից քաղաքացիական խիստ քննադատությունների, իսկ այնուհետև գործը հասավ անգամ ՄԱԿ-ի Ան-ի պատժամիջոցներին: Ահմադինեժադի քաղաքականությունը չապես տարբերվում էր Ուժսանջանիի և Խաթամի քաղաքականությունից, նրա գործելակերպը ասավելապես խաղախաղ է ներքոհիշյալ դրույթների վրա.

- Միջազգային կազմակերպությունների անտեսում
- Թշնամական քաղաքականություն Իսրայելի նկատմամբ
- Չեռիզոր տեռությունների նվաճողական քաղաքականության քննադատում

- Միջուկային զենքի նորմերի քննադատում
- Հյուսիս-հարավի (հարուստ և աղքատ) երկրների միջև ընթացող հարաբերությունների քննադատում³⁷:

³⁵ European Elite Survey, Key Findings 2007, CIRCaP, Centre for the Study of Political Change, University of Siena, supported by the Compagnia di San Paolo, Turin, Italy, p. 22.

³⁶ Сагаи В., Иран: апрель-2008. Экономическая ситуация,

<http://www.times.ru/rus/stat/2008/28-05-09b.htm>

³⁷ Foreign Policy of Iran after Islamic Revolution, Journal of Politics and Law, v. 3, № 2, September 2010, p. 204, www.ccsenet.org/jpl.

ՄԱԿ-ի ԱՆ-ի բազմաթիվ քանաձևերից հետո 2009 թ. հունիսին Իրանի նախագահական ընտրություններով կրկին հարվածի տակ դրվեցին Իրան-Եվրամիություն հարաբերությունները: Եվրոպական շատ լրագրողներ, դեսպանատան աշխատողներ, նախագահական ընտրություններից հետո մեղադրվեցին լրտեսության մեջ և ծերբակալվեցին: 2009 թ. օգոստոսին համաշխարհային ՁԱՄ-ները արձանագրեցին, որ Եվրամիության երկրները միասնաբար կարող են հետ կանչել իրենց դեսպաններին Իրանից՝ ի պատասխան Ֆրանսիայի և Անգլիայի դեսպանատան իրանցի աշխատողների, ինչպես նաև Ֆրանսիայի քաղաքացուի ու նկատմամբ հետապնդումների: «Յուրաքանչյուր գործողություն, որ ուղղված կլինի ԵՄ ցանկացած երկրի, նրա քաղաքացու կամ դեսպանատան աշխատողի դեմ, կգնահատվի իբրև գործողություն ընդդեմ ողջ Եվրամիության և դրա պատասխանն էլ կլինի համարժեք», - ասվում էր Եվեդիայի պաշտոնական հաղորդագրության մեջ:

ԵՄ երկրների հակաիրանական պատժամիջոցների ակտիվացումը ընթանում էր այնպիսի պայմաններում, երբ ՄԱԿ-ի ԱՆ-ն քննարկում էր թվով չորրորդ պատժամիջոցը Իրանի նկատմամբ (2006 թ. դեկտեմբերի, 2007 թ. փետրվարի 22-ին, 2008 թ. մարտի 3-ին):

Եվրամիության դիրքորոշմանը միակարծիք են Չեռմանիան, Ֆրանսիան, Իտալիան: Նրանք հիմնականում գտնում են, որ պետք է խստացնեն տնտեսական պատժամիջոցների կիրառումը, սակայն միևնույն ժամանակ դեմ են հարցը ռազմական ուղիով լուծելուն: Ի պատասխան ԵՄ-ի խստացող դիրքորոշմանը Իրանում ևս տեղի են ունենում քողոքի ակցիաներ ԵՄ անդամ երկրների դեմ: Սակայն դրանցից թերևս ամենաազդեցիվ դրսևորումը տեղի ունեցավ 2010 թ., երբ Բասիջի անդամները հարձակվեցին Յեհրանում Իտալիայի դեսպանատան վրա, որը հրահրվել էր ոչ միայն Իրանի նկատմամբ պատժամիջոցների ընդունմանը պաշտպանելու համար, այլ նաև վարչապետ Միլվիո Բերլուսկոնիի հայտարարությանն ի պատասխան, որտեղ նա Իսրայելը ճանաչել էր ժողովրդավարության օրինակելի երկիր Մերձավոր Արևելքում և ցանկություն էր հայտնել տեսնել Իսրայելին Եվրամիության կազմում³⁸:

³⁸ Berg H., Политика Евросоюза по урегулированию санкций в отношении Ирана, <http://www.imes.ru/ua/stat/2010/26-02-10c.htm>

Իրավիճակն ավելի թեժացավ, քանի որ Իրանը չէր ներկայացնում միջուկային ծրագրի նկատմամբ ամբողջական տեղեկատվություն: 2010 թ. փետրվարի 18-ին Նյու-Յորք Թայմսը արձանագրեց, որ ԱԷՄԳ-ի մասնագետները հաստատել են, թե Իրանն արդեն աշխատում է միջուկային մարտազխիկներ ստեղծելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ նրանք փաստում են, որ Իրանը շարունակում է միջազգային հանրությանից թաքցնել միջուկային իր ծրագրի շատ մանրամասներ³⁹:

Հատկանշական է, որ մասնագետների վերոհիշյալ հայտարարություններից մի քանի օր առաջ տարաբնույթ տեղեկություններ էին հաղորդվում Իրանից: Օրինակ 2010 թ. փետրվարի 2-ին Իրանի նախագահը հայտարարեց, որ պատրաստ է ցածր հարստացված ուրանը ուղարկել արտասահման հետազոտ հարստացման համար, մեկ շաբաթ անց՝ փետրվարի 9-ին, հայտարարեց, որ իրենք անձամբ կհարստացնեն իրենց ուրանը, իսկ փետրվարի 11-ին՝ Իսլամական հեղափոխության օրը նա իր երկիրը հայտարարեց միջուկային տերություն: Կարծում ենք, որ այս հայտարարություններն արվում են միայն մեկ նպատակով՝ շեղել միջազգային հանրության ուշադրությունը և ժամանակ շահել իրենց ծրագրերը վերջնակետին հասցնելու համար: Հատկանշական է, որ Իրանի ողջ ժողովուրդը այսօր միակարծիք է, որ Իրանը չպետք է նահանջի միջուկային իր ծրագրից: Ընդդիմությունը ևս չի համարձակվի հակառակը պնդել, քանզի իր դեմ կհանի ողջ Իրանին:

Այս հանգամանքը չի վրիպում նաև Եվրամիության տեսադաշտից, Անգլիայի վարչապետ Գորդոն Բրաունը 2010 թ. փետրվարի 11-ին ԲիԲիՍի-ին տված հարցազրույցում նշեց, որ Իրանի համար սկսում է կրիտիկական պահ աշխարհի այլ երկրների հետ հարաբերվելու համար: Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզին փետրվարին ևս արտահայտվեց, ըստ որի կիսում էր Միացյալ Նահանգների տեսակետը Իրանի նկատմամբ ավելի կոշտ պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ: Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը ևս պաշտպանում էր Իրանի նկատմամբ առավել կոշտ պատժամիջոցներ կիրառելու անհրաժեշտությունը:

³⁹ Inspectors Say Iran Worked on Warhead.

http://www.nytimes.com/2010/02/19/world/middleeast/19iran.html?_r=1&ref=yukiva.amano

Եվ այս երեք տեղությունների ղեկավարները թերահավատությամբ վերաբերվեցին Իրանի նոր ասաջարկին, ըստ որի նա պատրաստ էր համագործակցել Թուրքիայի և Բրազիլիայի հետ ուրանի հարստացման աշխատանքները առավել քափանցիկ դարձնելու համար: Այս կապացությամբ հիշարժան է Գերմանիայի կանցլերի կոշտ հայտարարությունը, ըստ որի նրանք այլևս թույլ չեն տա, որ Իրանը իրենց «քրից բռնած» ման տա:

Այսպիսով, վերլուծելով Իրան-ԵՄ արդի հարաբերությունները գալիս ենք հետևյալ եզրահանգումների.

1. Իրանը ցանկություն ունի կարգավորելու իր հարաբերություններն ԵՄ-ի հետ, քանզի ԵՄ-ն Իրանի տնտեսությունում լուրջ ներդրումներ կատարող սուբյեկտ է և երկար տարիներ զբաղեցրել է նրա առևտրաշրջանառության մեջ առաջին հորիզոնականը:

2. Սակայն Իրանը պատրաստ չէ ԵՄ-ի հետ հարաբերությունների կարգավորմանը գնալ միջուկային ծրագրի հաշվին, մանավանդ, որ վերջին տարիների ընթացքում Իրանը լուրջ հաջողություններ է ունեցել այդ ոլորտում:

3. Իրանի քաղաքական օրակարգում միշտ էլ գերխնդիր է եղել տարածաշրջանում դառնալ ազդեցիկ գործոն, իսկ 21-րդ դարում դա հնարավոր է միմիայն գիտատեխնիկական մեծ հնարավորությունների դեպքում միայն:

4. Բացի վերոհիշյալ խնդիրներից ԵՄ-ն Իրանին խստորեն դատապարտում է նաև մարդու իրավունքների կոպիտ խախտման համար: Կարծում ենք, որ եթե Իրանը այս բնագավառում գնա որշակի փոփոխությունների, դրանով իսկ կմեղմի իր նկատմամբ ԵՄ-ի և համաշխարհային հանրության խիստ վերաբերմունքը:

GOHAR ISKANDARYAN

IRAN-EU RELATIONS IN THE END OF 20th AND THE BEGINING OF 21st CENTURIES

Today Iran is under the great attention of the International community as never before. It has several reasons, including the nuclear program of Iran, current problems with human rights in Iran, yet another resolution of UNSC regarding Iran and the fear of how to restrain the nuclear ambitions of Iran.

Notwithstanding all these, EU fosters its commercial and economic relations with Iran as it is in a badly need of Iranian oil. Iran-EU relations have developed in varying speed. If in the last years of Rafsanjani government Iran-EU relations recorded serious tensions, it was alleviated to some extent during the government of Khatami. However, today Iran-EU relations are again in an atmosphere of distrust as Iran is not ready to normalize its relations with EU at the cost of its nuclear program.

ՆՅԱՆՍԻՆԱՅԵԼ

**ԹՈՒՐԿԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅԻ
ԹՅՈՒՐՔԱԼԵՆՈՒ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ «ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (2002-
2007 թթ.). ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ**

2002 թ. նոյեմբերին Թուրքիայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարավ «Արդարություն և զարգացում կուսակցությունը» խոստիչներն ԱԶԿ/ և կազմեց միակուսակցական կառավարություն: ԱԶԿ-ն /Adalet ve Kalkinma Partisi/ ստեղծվել է 2001 թ. օգոստոսի 14-ին Անկարայում: Առաջնորդն է ներկայիս վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: ԱԶԿ-ն իսլամական կուսակցություն է և ստեղծվել է Ազգային տեսակետի /Milli Görüş/ տրոհումից: ԱԶԿ-ն Թուրքիայում շարունակեց քաղաքական իսլամի ամրապնդումը՝ իր գաղափարախոսության հիմքում դնելով կոնսերվատիվ ժողովրդավարության գաղափարը:

Կուսակցությունն անցնելով իշխանության զուխ վերանայեց Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, մասնավորապես Կենտրոնական Ասիայում: ԱԶԿ-ի ղեկավարությունը գտնում էր, որ Թուրքիան պետք է իր քաղաքականությունն ակտիվացնի տարածաշրջանում, որի մասն էլ կազմում է նաև Կենտրոնական Ասիան: Այսպես՝ 2002 թ. Թուրքիան սկսեց իրականացնել իր արտաքին քաղաքականությունը՝ հիմնվելով նոր տեսակետների վրա, ըստ որոնց Թուրքիան փորձում էր ազդեցության հասնել Բալկաններում, Կովկասում, Կենտրոնական Ասիայում, Կասպիցի ավազանում, Միջերկրական և Մեծովյան երկրների տարածաշրջանում: ԱԶԿ-ն առաջնորդվելով իսլամական գաղափարներով՝ փորձեց ակտիվացնել իր քաղաքականությունը Մերձավոր Արևելքում և Եվրասիայում¹:

Մյուս կողմից ԱԶԿ-ն ակտիվորեն համագործակցում էր միջազգային կառույցների հետ, մասնավորապես ՆԱՏՕ-ի շրջանակներում: Նշենք, որ Թուրքիան ծգտում է տարածաշրջանում

¹ Özgü Z. & Yılmaz S., *Between Europeanization and Euro-Asianism: Foreign Policy Activism in Turkey During the AKP Era*, *Turkish Studies*, v.10, № 1, March 2009, pp. 9-10.

ակտիվացնել ՆԱՏՕ-ի գործունեությունը և ընդլայնել այն: ԱԶԿ-ն շարունակեց համագործակցությունը ԱՄՆ-ի հետ՝ փորձելով կարևորել իր նշանակությունն Արևմուտքի համար: Մեծ ուշադրություն դարձվեց Կիպրոսի խնդրին:

1997 թ. Եվրոպական միությունը մերժեց Թուրքիայի անդամակցության հայտը, որից հետո Թուրքիայում դարձյալ ակտիվացան Արևելյան քաղաքականության գաղափարները: Սա ենթադրում էր համագործակցել Ռուսաստանի, Չինաստանի, Իրանի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ: Պետք է նշենք, որ այս երկրները այդ համագործակցությամբ այնքան էլ շահագրգռված չէին: Սա եվրասիականության քաղաքականությունն էր, որը տարածում էր գտել 1990-ական թթ. առաջին կեսին, և ԱԶԿ-ն այն նույնպես օգտագործում էր²: Ավելին՝ դարձյալ եվրասիականության գաղափարները օգտագործելով Թուրքիան փորձում էր տարածաշրջանում ընդգծել իր դերը և հասնել ազդեցության: Սակայն 1999 թ. ԵՄ-ի կողմից ընդունված Հելսինկի որոշումից հետո՝ Թուրքիան իր արտաքին քաղաքական կարևոր խնդիրներից մեկը դարձրեց ԵՄ-ին Թուրքիայի լիրավ անդամակցության հարցը³:

Այսպիսով ԱԶԿ-ն տարածաշրջանում սկսեց վարել ակտիվ արտաքին քաղաքականություն, սակայն նա Թուրքիայի համար առաջին կարևոր արտաքին քաղաքական խնդիրը դարձրեց անդամակցությունն Եվրոպական միության⁴: Մյուս կողմից ԱԶԿ-ն որդեգրելով տարածաշրջանում ակտիվ քաղաքական կուրս, ինչպես 1990-ական թթ. սկզբներին, փորձեց Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրներում հաստատել իր ազդեցությունը:

Թուրքիայի արտաքին քաղաքական այս կողմնորոշումները հաշվի էր առնվել «Արդարություն և զարգացում» կուսակցության նախընտրական ծրագրում, որտեղ նշվում էր. «Չնայած Կենտրոնական Ասիայի թյուրքական հանրապետությունների հետ մեր ունեցած պատմական, էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական ընդհանրություններին, համագործակցությունն այդ

² Eteğil E., Turkish AK Party's Central Asian and Caucasus Politics: Critiques and Suggestions, *Caucasian Review of International Affairs*, v. 2, № 3, Summer, 2008, p. 169.

³ Giannotta V., Is Turkey Turning its Face From the West, SGIR 7th Pan-European Conference "Politics in Hard Times", Stockholm, Sweden, 9-11 September 2010, p. 11.

⁴ Davutoğlu A., Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, *Insight Turkey*, c. 10, s. 1, 2008, s. 92.

երկրների հետ մեր սպասումները չի արդարացնում, ուստի ԱԶԿ-ն պետք է այս ուղղությամբ կատարի լուրջ աշխատանքներ՝ շեշտը դնելով թյուրքական հանրապետությունների հետ քաղաքական համագործակցության ամրապնդմանը»⁵:

Այս ծրագրային դրույթները հետագայում ներառվեցին ԱԶԿ-ի կառավարության ծրագրում, որն էլ նոյեմբերի վերջին ներկայացվեց թուրքական խորհրդարան՝ Նշելով Թուրքիայի և կենտրոնասիական երկրների միջև հարաբերությունների քարելավման և տարածաշրջանը սերտ համագործակցության գոտու վերածելու մասին⁶: Այսպիսով կարող ենք Նշել, որ ԱԶԿ-ն կենտրոնասիական թյուրքալեզու երկրների հետ հարաբերությունները զարգացնելով՝ դարձյալ շեշտը դրեց կրոնական, մշակութային, լեզվական և էթնիկական ընդհանրությունների վրա:

Այուս կողմից ԱԶԿ-ն տարածաշրջանի երկրների հետ համագործակցությունը զարգացնել նպատակով՝ ստորագրեց քաղաքացիական ամրապնդման, որոնք վերաբերում էին տնտեսության, էներգետիկայի, քաղաքականության, մշակույթի և այլ բնագավառներին: ԱԶԿ-ն Թուրքիային ներկայացնում էր տարածաշրջանում որպես ժողովրդավարության և ազատ շուկայական տնտեսության օրինակ: Այս երկու գաղափարները 1990-ական թթ. սկզբներին ներառված էին «թուրքական մոդելի» հայեցակարգում, որը ակտիվորեն քարոզվում էր կենտրոնասիական երկրներում⁷: Այս գաղափարները դարձյալ առաջ քաշելով՝ ԱԶԿ-ն նպատակ ուներ կենտրոնասիական թյուրքալեզու երկրներում քարծրացնել Թուրքիայի հեղինակությունը և նպաստել նրա դիրքերի ամրապնդմանը:

Այս շրջանում ԱԶԿ-ն տարածաշրջանի երկրներին ցույց տվեց տնտեսական և տեխնիկական քնույթի օգնություն՝ նախևառաջ փորձելով ընդլայնել առևտրատնտեսական համագործակցությունը կենտրոնասիական երկրների հետ, որը 1990-ական թթ. վերջերին քավականին թուլացել էր: Դա կապված էր 1998-2001 թթ. Ռուսաստանում և Հարավ-արևելյան Ասիայի երկրներում տեղի

⁵ Adalet ve Kalkınma Partî Programı, <http://www.akparti.org.tr/site/akparti/parti-programi#bolum>

⁶ Başbakan Abdülhâh Göl Tarafından TBMM'ne sunulan 58'inci Hükûmet Programı, Ankara, 23 Kasım 2002, s. 27.

⁷ Bal I., The Turkish Model and the Turkic Republics.-Perception, Journal of International Affairs, September-November, v. 3, № 3, 1998,

<http://iam.gov.tr/perception/Volume3/September-November1998/bal.pdf>

ունեցած տնտեսական ճգնաժամով, որը տարածվեց նաև
Թուրքիայում: Այս շրջանը բնութագրվեց Թուրքիայի և թյուրքալեզու
հանրապետությունների միջև առևտրատնտեսական
համագործակցության նվազմամբ⁸: Կրթություն ստանալու նպատակով
չարունակում էին Թուրքիա գալ երիտասարդներ կենտրոնասիական
երկրներից: Թուրքիան մեծ ուշադրություն դարձրեց նաև ռազմական
համագործակցության և ռազմական կրթության զարգացմանը⁹:

ԱԶԿ-ն մեծ տեղ հատկացրեց Կասպից ծովի ավազանին,
հատկապես Ղազախստանին և Թուրքմենստանին, որոնք հարուստ էին
նավթի և գազի պաշարներով: Թուրքիայում կարևորում էին ոչ միայն
էներգետիկ պաշարների խնդիրը, այլև դրանց տեղափոխման հարցը,
որը Թուրքիայի քաղաքականության մասն էր կազմում դեռևս 1990-
ական թթ. սկզբներից¹⁰: Թուրքիայի աշխարհաքաղաքական շահերը
պաշտպանելով՝ ԱԶԿ-ն դարձյալ շեշտը դնում էր Թուրքիայի միջանցիկ
դերի վրա՝ այսինքն ձևավորում էր Արևելք-Արևմուտք, Հյուսիս-Հարավ
էներգետիկ միջանցքը, որի նպատակն էր դարձյալ քարձրացնել
Թուրքիայի աշխարհաքաղաքական կարևորությունը: Այս ծրագիրը
ենթադրում էր, որ Արևմուտք հասնող նավթի և գազի
խողովակաշարերը պետք է անցնեն Թուրքիայի տարածքով: Հենց այս
տեսանկյունից էլ ԱԶԿ-ն մեծապես աջակցեց Բացու-Թրիլիսի-Տեյխան
նավթատարի¹¹, Բացու-Թրիլիսի-երզրում բնական գազի

⁸ Can N., Omon Uulu I., Bdyök Güçlerin Kıskaçında Türkiye-Orta Asya Türk Cumhuriyetleri Siyasal ve İktisadi İlişkileri (Kırgızistan Örneği), Journal of Azerbaijani Studies, s. 16, <http://as-khazar.org/wp-content/uploads/2010/06/2.pdf>

⁹ Eteğil E., AK Parti hükümeti'nin Orta Asya Politikalarına Eleştirel Bir Bakış, İSSA II. Uluslararası Sosyal Bilimler Kongresi 22. Ekim, 2008, Bilecik/Kırgızistan, Kocaeli, 2009, s. 358.

¹⁰ Winrow M. W., Turkey's Relations With The Transcaucasus and The Central Asian Republics, Perception-Journal of International Affairs, v. 1, March-May, 1996, p. 140.

¹¹ Բացու-Տեյխանի շուրջ երկարատև բանակցությունները, կարգի է առել, դրական հանգուցալուծման հասան 2002 թ. օգոստոսի 1-ին, երբ նախագծով շահագրգռված կողմերը կնքեցին նոր ընկերության ստեղծման մասին պայմանագիրը: Այդ օրը տնդնում ստեղծվեց Բացու-Թրիլիսի-Տեյխան ընկերություն (BTC co./ կոլվոր վերազգային մի կառույց, որն էլ պետք է կառուցեր և շահագրծեր նավթամուղը: Նոր ընկերության հիմնական փայտերը անգլո-ամերիկյան Բրիթիշ Փեթրոլիում (British Petroleum) ընկերությունն էր՝ 30,1 % բաժնեմասով: Alexander's Gas And Oil Connections, Baku-Tbilisi-Ceyhan Pipeline Company Founded, August 30, 2002, http://www.gasandoil.com/news/central_asia/05e64ce97241a092b52d5a35d8be6a60

խողվակաշարի և Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու
շինարարությանը:

Բաքու-Թբիլիսի-Տեհրան նախամուղը իրականություն դարձնելու
նպատակով Թուրքիան համաձայնագիր կնքեց Ղազախստանի հետ¹²,
իսկ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի համար՝ Թուրքմենստանի
հետ¹³: Եշենք, որ այս համաձայնագրերը վերաբերում էին նաև
կրթության, գիտության, երիտասարդության, սպորտի, ընտանիքի և
մյուս բնագավառներին¹⁴:

Աստ Թուրքիայի արտաքին գործերի նախարարության տվյալների
ԱՁԿ-ն կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների նկատմամբ
իրականացրած իր արտաքին քաղաքականության մեջ առանձնացնում
էր հետևյալ սկզբունքները. Առաջին՝ ենթոգետիկ, տնտեսական,
առևտրային, մշակութային, քաղաքական և սոցիալական
բնագավառներում համագործակցության զարգացումը: Երկրորդ՝
ենթոգետիկ խողվակաշարերի խնդիրը: Երրորդ՝ աջակցել
կենտրոնասիական երկրներում ժողովրդավարության զարգացմանը:
Չորրորդ՝ նպաստել այլ երկրների հետ հարաբերությունների
զարգացմանը և նրանց ինտեգրմանը միջազգային համակարգին¹⁵:

ԱՁԿ-ի կառավարման ժամանակաշրջանում շարունակվում էին
կազմակերպվել թյուրքալեզու երկրների գազաթնաժողովներ, որտեղ
թուրք պաշտոնյաները իրենց ելույթներում անընդհատ նշում էին
կենտրոնասիական թյուրքալեզու երկրների հետ համագործակցության
ամրապնդման և ընդլայնման մասին: Այսպես՝ Թուրքիայի վարչապետ
Էրդողանը ելույթ ունենալով Թյուրքալեզու երկրների և համայնքների
11-րդ գազաթնաժողովում հատուկ նշեց թյուրքալեզու երկրների հետ
համագործակցության զարգացման մասին¹⁶: Նա առաջարկեց
ծնավորել միասնական հեռուստատեսային համակարգ, Թյուրքական
աշխարհի գիտությունների միասնական ակադեմիա, քանգարան և

¹² Babali T., Implications of the Baku-Tbilisi-Ceyhan Main Oil Pipeline Project, *Perceptions. Journal of International Affairs*, Winter 2005, pp. 48-49.

¹³ Լույս տեղի ունեցավ էջ 50-52:

¹⁴ "Zaman", 07.12.2007.

¹⁵ Turkey's Dış İşleri Bakanlığı, *Synopsis of the Turkish Foreign Policy*,
<http://www.mfa.gov.tr/synopsis-of-the-turkish-foreign-policy.en.mfa>

¹⁶ Թյուրքալեզու երկրների և համայնքների 11-րդ գազաթնաժողովը տեղի ունեցավ
Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում, որտեղ էրդողանը մյուս թյուրքալեզու երկրների
դախտ օրինակ ներկայացրեց Թուրքիայի և Ադրբեջանի հարաբերությունները: Տե՛ս
"Zaman", 17.11.2007.

ստեղծել թյուրքական միասնական մշակույթ, լեզու, պատմություն, գրականություն¹⁷: Այսինքն Թուրքիան շարունակում էր քաղաքել թուրք միասնության գաղափարը, եթե դա հնարավոր չէր քաղաքական առումով, ապա դա ծնավորել մշակութային առումով:

Այս տեսանկյունից կարևորվեց թյուրքալեզու երկրների հետ միասնական լատինատառ այբուբենի ընդունման հարցը¹⁸, որը Թուրքիայի ղեկավար շրջանների կողմից առաջ էր քաշվել դեռևս 1990-ական թթ. սկզբներից: Ակսեցին իրականացնել տարբեր տեսակի միջոցառումներ՝ հրավիրվեցին գիտական նստաշրջաններ, խորհրդակցություններ, հրատարակվեցին հոդվածներ, գրքեր և այլն: Չնայած իրականացրած միջոցառումներին Կենտրոնական Ասիայի որոշ պետություններ /Ղազբկստան, Թուրքմենստան/ իրենց երկրներում ընդունեցին սեփական լատինատառ այբուբենները, որոնք թուրքականի հետ համեմատած, ունեին որոշ առանձնահատկություններ:

Թուրք պաշտոնյաները տարածաշրջան կատարում էին բազմաթիվ այցելություններ, աջակցում էին տարբեր ծրագրերի իրականացմանը՝ հատկապես անվտանգության բնագավառում: Թուրքիան մեծ ուշադրություն դարձրեց առևտրի և տնտեսության բնագավառներում համագործակցությանը: 1990-ական թթ. երկրորդ կեսի հետ համեմատած՝ 2002 թ. ակտիվացան Թուրքիայի և կենտրոնասիական երկրների միջև առևտրի ծավալները, որը բավականին աճ արձանագրեց¹⁹: Ընդհանրապես առևտրատնտեսական հարաբերությունները Թուրքիայի և կենտրոնասիական երկրների միջև աճ արձանագրեցին ԱԶԿ-ի կառավարման տարիներին: Տարածաշրջանում նաև ակտիվացան թուրքական ընկերությունները՝ հիմնականում շինարարական, որոնք կենտրոնասիական երկրներում իրականացրեցին բազմաթիվ ծրագրեր²⁰:

ԱԶԿ-ն կենտրոնասիական երկրների հետ առևտրատնտեսական հարաբերությունները զարգացնելու համար մեծ ուշադրություն

¹⁷ Başbakan Erdoğan'ın 17 Kasım 2007 tarihinde 11. Türk Devletleri ve Toplumları Kurultayı'nı da kapsayan konuşmasının tam metni için bakınız <http://www.akparli.org.tr>

¹⁸ "Zaman", 09.12.2007.

¹⁹ Trade Statistics, Undersecretariat for Foreign Trade of Turkey, 2006, Ankara and Country Reports of Turkish Foreign Economic Relations Board (DEİK) İstanbul, www.dtm.gov.tr/gad/uk/gogsh/uk/gogsh.htm and www.deik.org

²⁰ Kemal K., Turkey. Silk Road Studies,

<http://www.silkroadstudies.org/new/docs/publications/GCA/GCAPUB-13.pdf>

հատկացրեց միջազգային կազմակերպություններին, մասնավորապես Տնտեսական համագործակցության կազմակերպությանը²¹:

Այսպիսով, կարող ենք ասել, որ «Արդարություն և զարգացում» կուսակցությունը թուրքիայում անցնելով իշխանության զուխ մշակեց և փորձեց իրականացնել նոր արտաքին քաղաքական կուրս: ԱԶԿ-ն հիմնականում ուշադրությունը դարձրեց ԵԱ-ին Թուրքիայի անդամակցությանը: Սակայն կուսակցությունը կարևորեց նաև կենտրոնական Ասիայի տարածաշրջանը: Դրա մասին է վկայում այն, որ կուսակցության նախընտրական ծրագրում, ապա նաև կառավարության ծրագրում ներառնվել էր կենտրոնասիական երկրների հետ համագործակցության զարգացման դրույթը: Այսինքն՝ ԱԶԿ-ն փորձում էր ազդեցության հասնել տարածաշրջանում և այդ նպատակով նա դարձյալ հիմնական շեշտը դրեց Թուրքիայի և թյուրքալեզու երկրների միջև ասկա ընդհանրությունների վրա: ԱԶԿ-ի անդամ պաշտոնյաների այցելությունները կենտրոնասիական տարածաշրջան, տարբեր մակարդակների հանդիպումներն ու զագաթնաժողովները փաստում են այն մասին, որ Թուրքիայի կառավարող շրջանները շարունակում են իրականացնել թյուրքական միասնության քաղաքականությունը: Մյուս կողմից ԱԶԿ-ն կենտրոնասիական երկրների հետ ակտիվացրեց տարբեր բնագավառներում համագործակցությունը և հասավ որոշ հաջողությունների: Մասնավորապես սա վերաբերվում է աստորատնտեսական հարաբերություններին: Այսպիսով կարող ենք նշել, որ ԱԶԿ-ն կարևորեց կենտրոնասիական տարածաշրջանը և այս երկրների հետ համագործակցությունը դարձրեց Թուրքիայի արտաքին քաղաքականության մի մասը:

NELLY MINASYAN

**TURKISH POLICY IN CENTRAL ASIAN TURKIC REPUBLICS DURING
THE FIRST YEARS OF JUSTICE AND DEVELOPMENT PARTY RULE (2002-
2007): NEW TRENDS**

In November 2002, Justice and Development Party (JDP) won the parliamentary elections in Turkey and formed one-party Government. JDP was an

²¹ Adalet ve Kalkınma Partisi Programı, http://www.akparti.org.tr/site/akparti/parti-programi#bolum_

Islamic party and continued consolidation of political Islam in Turkey. Coming into power the party reformed foreign policy of Turkey especially in Central Asia. In its election campaign, and governmental program too, JDP involved the principle of development of cooperation with Turkic republics, thus JDP was trying to attain influence in the region.

We can state that, JDP put the main emphasis on existing historical, religious, linguistic, ethnic, cultural similarities between Turkey and Turkic Republics. Visits of JDP member officials to the Central Asian region, their meetings on different levels and conferences, show that Turkey continues implementing the policy of Turkic unity. Especially, this is accentuated during the Turkic republic summits. Then again, JDP activated cooperation with Central Asian republics in various spheres and achieved certain success here.

Thus, we can say that JDP attached importance to the region of Central Asia and made the issues of cooperation with these countries the part of Turkish foreign policy.

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՉԻՆ-ԵՂԻՊՏԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՌՈՂ

Մինչ 1955 թ. Կահիրեն ասիական տարածաշրջանին կարևորություն չէր տալիս իր արտաքին քաղաքականությունում, թեև Եգիպտոսն ամուր կապեր ուներ ասիական առանձին երկրների հետ՝ հատկապես Չինացման շարժման շրջանակներում¹: Եգիպտոսի արաբական հանրապետության (ԵԱՀ) նախագահ Գամալ Աբդ ալ-Նասերն ու Չինաստանի ժողովրդական հանրապետության (ՉԺՀ) վարչապետ Ճոու էնլայն առաջին անգամ հանդիպեցին 1955 թ. ապրիլին Բանդունգի աֆրո-ասիական Չմիացման շարժման (NAM) հիմնադիր գազաթնաժողովի ժամանակ²: 1955 թ. ՉԺՀ-ը դատապարտեց Բաղդադի պակտի կազմակերպությանն անդամագրված երկրներին՝ քարեկամություն դրսևորելով միավորումից հրաժարվող մերձավորարևելյան (ՄԱ) պետությունների՝ մասնավորապես Եգիպտոսի հանդեպ³: ԱՄՆ-ի կողմից ՉԺՀ-ի շրջափակման և մեկուսացման քաղաքականության պայմաններում ՉԺՀ-ի աջակցությունը հակաիմպերիալիստական, հակազաղութային և ազգային ազատագրական շարժումներին լայնորեն ողջունվեց արաբական աշխարհում՝ հիմք դնելով փոխադարձ դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացին⁴: Եգիպտոսն արաբական և աֆրիկական երկրներից առաջինն էր, որ 1956 թ. մայիսի 30-ին դիվանագիտական հարաբերություններ հաստատեց ՉԺՀ-ի հետ⁵, իսկ 1956 թ. հուլիսին Սուեզի ջրանցքի ձգնաժամի ընթացքում

¹ Ibrahim Nafie, *East of Egypt, Al-Ahram Weekly*, Issue: 423, 1-7 April, 1999, <http://weekly.ahram.org.eg/1999/423/top1.htm>.

² Chris Zambelli, *Down the River Nile: China Gains Influence in Egypt*, *China Brief*, v. 5, Issue: 22, 1999, The Jamestown Foundation, 31.12.2005; *People's Daily*, 29.05.2001.

³ Guang Pan, *China's Success in the Middle East*, *The Middle East Quarterly*, v. IV, № 4, December, 1997, pp. 35-40.

⁴ Kuangyi Yao, *Development of Sino-Arab Relations and the Evolution of China's Middle East Policy in the New Era*, *Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia)*, v. 1, № 1, 2007, p. 4.

⁵ Китайская Народная Республика. Политическое и экономическое развитие в 1973

Չինաստանը ՆԱՏՕ-ից հետո երկրորդ պետությունն էր, որը հանդես եկավ Եգիպտոսի նկատմամբ Անգլիայի, Ֆրանսիայի և Իսրայելի ագրեսիան դատապարտող հայտարարությամբ և առաջարկեց իր աջակցությունը⁶: Չինաստանը Եգիպտոսին աստարեց նաև արաբ-իսրայելական 1967 թ. Կեցօրյա պատերազմի ընթացքում⁷:

1950-ականների վերջերից ՉՃՀ-ի ղեկավարության մոտ նկատվեց ազգայնական և հակախորհրդային ուլտրաձախ միտումներ⁸, որը որոշ չափով ազդեց ՉՃՀ-ի և ՄԱ-ի երկրների, այդ թվում Եգիպտոսի հետ հարաբերությունների վրա⁹: Չինաստանի Մշակութային հեղափոխության տարիներին (1966-1976 թթ.), ավելի կոնկրետ 1966-68 թթ., ՉՃՀ-ի և ՄԱ-ի երկրների միջև բարձր մակարդակի փոխայցեր տեղի չունեցան, և Պեկինը հետ կանչեց այդ երկրներից իր դեսպաններին, բացառությամբ Եգիպտոսից¹⁰:

1970-ականների սկզբին Չինաստանի արտաքին քաղաքականության ուղեգիծ դարձավ երկու գերտերությունների՝ ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի, գերիշխանության դեմ պայքարը: Մինչդեռ 1972 թ. Պեկինի և Վաշինգտոնի միջև ուղղակի կապերի հաստատումից հետո ԱՄՆ-ի հետ մերձեցումը դիտվեց իբրև անհրաժեշտ փոխզիջում և Պեկինի արտաքին քաղաքականության հիմնանպատակ՝ «առավել վտանգավոր կայսերապետության՝ սոցիալ-իմպերիալիզմի» դեմ պայքարի նպատակով¹¹: Պեկինի արտաքին քաղաքականության տիրապետող հայեցակարգ դարձավ ՆԱՏՕ-ի դեմ «միասնական ճակատի ստեղծման ջանքավարությունը», առավել մեծ կարևորություն

600, Moscow, 1975, c. 289.

⁶ Li Jie, Reflections on New China's Diplomacy in the Past 60 Years, *China International Studies*, CIIIS, Beijing, September-October 2009, p. 12; Yang Fuchang, China-Arab Relations in the 60 Years' Evolution, *Journal of Middle Eastern and Islamic Studies (In Asia)*, v. IV, № 1, 2010, p. 4. ՉՃՀ-ի կառավարությունը որոշեց ՆԱՏՕ-ին 20 օրն չվերջարևական Ֆրանսի անհատույց օգնություն տրամադրել:

⁷ David H. Shinn, China's Approach to East, North and the Horn of Africa, *Elliott School of International Affairs, The George Washington University*, 21.07.2005, p. 13.

⁸ Michael G. Roskin, Nicholas O. Barry, *The New World of International Relations*, New Jersey, 2002, p. 90; *Политика США в Азии. Американо-китайские отношения*, Москва, 1977, с. 223.

⁹ Wang Jingle, Review and Thoughts over the Relationship between China and the Middle East, *Journal of Middle Eastern and Islamic Studies (In Asia)*, v. IV, № 1, 2007, p. 20.

¹⁰ Тео Зомер, "Китайская карта". 800-миллионный народ на пути к 2000 году, Москва, 1980, с. 264; Wang Jingle, Review and Thoughts over the Relationship..., p. 20.

¹¹ *Политика США в Азии, Американо-китайские отношения...*, с. 224-226.

տրվեց կապիտալիստական երկրների, հատկապես ԱՄՆ-ի հետ հարաբերությունների բարելավմանը՝ իբրև ռեալ սոցիալիզմի դեմ պայքարի գործընկերոջ¹²։ Չինացի առաջնորդները միաժամանակ զարգացրին «Երրորդ աշխարհի» տեսությունը, և արաբական երկրներին դիտելով իբրև ՄԱ-ում ԽՍՀՄ-ի ծավալապաշտությունը կասեցնող լծակ, ՉԺՀ-ն համակողմանի հարաբերություններ սկսեց զարգացնել արաբական բոլոր երկրների հետ¹³։ Պեկինը սատարեց ԵԱՀ-ի և Իսրայելի միջև Քեմի Դևիդի անջատ պայմանագրի կնքման գործընթացը՝ միաժամանակ խուսափարելով ԵԱՀ-ի և «Անճրության և դիմակայության ճակատի» մեջ մտնող երկրների միջև՝ իր դիրքորոշումը բացատրելով նոր զինված հակամարտությունների կանխարգելման ձգտումով¹⁴։ ՉԺՀ-ը սատարում էր պաղեստինախրայելական հակամարտության կարգավորման գործընթացից ԽՍՀՄ-ին բացառելու ուղղությամբ Սադատի որոշեզրած քաղաքականությունը¹⁵։

1978 և 1985 թթ. տնտեսության զարգացմանն ուղղված չինական բարեփոխումների ու բաց ռազմավարության որոշեզրմամբ Պեկինը հրաժարվեց ՉԺՀ-ի և տարբեր սոցիալական համակարգ և գաղափարախոսություն ունեցող պետությունների միջև «տարանջատման» սկզբունցից։ Չինաստանը որոշեզրեց արաբական բոլոր երկրների հետ քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունների հաստատման քաղաքականություն։ Դեռ ավելին, «Սառը պատերազմի» ավարտից հետո Պեկինի և ՄԱ-ի երկրների միջև հարաբերությունները մտան զարգացման նոր փուլ¹⁶, որն առավելապես պայմանավորվեց ՉԺՀ-ի ներքին հզորության աճով և

¹² Калуждан Б., К вопросу о внешнеполитической стратегии и тактике КНР. Гегемонистская политика Китая-угроза народам Азии, Африки и Латинской Америки, Москва, 1981, с. 54.

¹³ 1970-ականներին եզիպուղը Չինաստանից ստացել է 106 մլն ԱՄՆ դոլարի օգնություն։ Այս մասին տե՛ս Скородумов А., Экономические отношения КНР со странами Азии, Африки и Латинской Америки, Гегемонистская политика Китая-угроза народам Азии, Африки и Латинской Америки, Москва, 1981, с. 158.

¹⁴ ТАСС. БПИ, № 236, 5.12.1979, с. 42.

¹⁵ Шербухина И., Отношения Египта и Китая после октябрьской войны 1973г., Специальный Бюллетень, 4 (201), Москва, 1978, с. 93-98.

¹⁶ Massoud Daher, China and the Middle East: Establishing a New Partnership, Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia) v. 3, № 1, 2009, p. 19.

միջազգային թատերաբեմում վերջինիս զբաղեցրած բարձր դիրքով ու կարգավիճակով¹⁷:

20-21-րդ դարերի սահմանագծին Եգիպտոսի արտաքին քաղաքականության ակտիվ վեկտորներից մեկը դարձավ Արևելյան Ասիայի առաջատար երկրների, մասնավորապես ասիական մայրցամաքի խոշորագույն տերություն ՉԺՀ-ի հետ համագործակցությունը, որը մեծապես կապված էր ասիական տարածաշրջանի երկրների տնտեսական աճի տեմպերով և այդ երկրների հետ առևտրատնտեսական և քաղաքական սերտ կապերի հաստատման հարցում ԵԱՀ-ի շահագրգռվածությամբ¹⁸: Ընդամենը մեկ տասնամյակում Պեկինը վերածվեց ԵԱՀ-ի տնտեսության զարգացման օժանդակող այլընտրանքային աղբյուրի, մի դեր, որն ավանդապես կատարել են ԱՄՆ-ը, Եվրոպան և արևմտավար այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են Համաշխարհային Բանկն (ՀԲ) ու Արժույթի Միջազգային Հիմնադրամը (ԱՄՀ)¹⁹: Սա բացատրվում էր նաև վերջին տարիներին վերոնշյալ միջազգային կառույցներում, ինչպես նաև Առևտրի Համաշխարհային կազմակերպությունում (ԱՀԿ) ՉԺՀ-ի կշռի և դերի աճով²⁰: Հարկ է նշել, որ Եգիպտոսն աջակցեց ԱՀԿ-ին անդամագրվելու ուղղությամբ Չինաստանի ջանքերը²¹: Երկու երկրները սկսեցին համակարգել իրենց դիրքորոշումները միջազգային կազմակերպություններում ու առևտրատնտեսական գործերում և համատեղ ջանքերով պաշտպանում են զարգացող երկրների շահերը տնտեսական գլոբալիզացիայի և առևտրի ազատականացման գործընթացներում²²:

¹⁷ Xuwen Qian & Huanmin Li, Maintaining Cooperation within Competition: The Inevitable Path of China's Energy Cooperation in the Middle East, *The Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia)*, v. 3, № 1, 2009, p. 52.

¹⁸ Արևելյան Ասիայի երկրները, մասնավորապես ՉԺՀ-ը վերջին երկու տասնամյակին ցուցաբերում են ոչ պակաս, քան 8-10% տնտեսական աճ: Այս մասին տես Хэунмингэн С., Столкновение цивилизаций, Москва, 2003, с. 151-152; Masoud Dsher, *China and the Middle East...*, p. 19.

¹⁹ Chris Zambelis, Public Diplomacy in Sino-Egyptian Relations, *China Brief*, v. 7, issue: 7, The Jamestown Foundation, 18.05.2007.

²⁰ Weijian Li, The Transformation of the International System and China's Positive Diplomacy in the Middle East, *Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia)*, v. 3, № 1, 2009, p. 29.

²¹ Egypt Signs Cooperation Agreements with China, *Arabic News*, 4.23.2002. <http://www.ameinews.com/amein/sub/Daily/Day/020423/2002042331.html>.

²² Китаю и Египет подписали Основные положения по выполнению углубления

Եզիպտական վերլուծաբանների համաձայն՝ ՉժՀ-ի տնտեսական բարեփոխումների հարուստ փորձը եզիպտացիների և արաբական ողջ աշխարհի կողմից ընդօրինակման կարիք ունի²³, նամանականդ որ Չինաստանը պատմական և սոցիալական ավանդույթներով շատ ավելի մոտ է համարվում ՄԱԻ-ին²⁴։ Պատահական չէ, որ եզիպտացիական հարաբերությունները հատուկ տեղ են զբաղեցնում չին-արաբական երկխոսության, մասնավորապես 2004 թ. հունվարին հիմնադրված Չին-արաբական համագործակցության համաժողովի շրջանակներում²⁵։ Եզիպտոսը ծգտում է Պեկինի առևտրային ռազմավարության անբակտելի մաս կազմել²⁶ և վերջինիս հետ «հատուկ» առևտրատնտեսական հարաբերություններ հաստատել, որոնք, բացի ներկումից ու արտահանումից, կընդգրկեն ներդրումների ու համագործակցության այլ ոլորտներ²⁷։

Մինչ 2005-2008 թթ., Եզիպտոսի գլխավոր առևտրային գործընկերը ԵՄ-ն էր, երկրորդ և երրորդ գործընկերները՝ համապատասխանաբար ԱՄՆ-ն ու Միջին Արևելքի երկրները։ Եզիպտոսի և Չինաստանի միջև առևտրի դինամիկ զարգացման շնորհիվ ՉժՀ-ը 2006 թ. դարձավ ԵԱՀ-ի առևտրային երրորդ գործընկերը²⁸։ Եզիպտական բարձրաստիճան պաշտոնյաների և վերլուծաբանների կանխատեսումների համաձայն, 2010-12 թթ. ՉժՀ-ը կփոխարինի ԱՄՆ-ին Եզիպտոսի առևտրային

стратегического сотрудничества, Жэньмь Жубао онлайн, 19.06.2006.
<http://russian.people.com.cn/31520/4497923.html>.

²³ Al-Ahram Weekly, Issue: 819, 9-15 November 2006.

²⁴ Jon B. Alsterman and John W. Garver, The Vital Triangle. China, The United States, and The Middle East, Center for Strategic and International Studies, Washington, 2008, p. 82; Jon B. Alsterman, China's Soft Power in the Middle East. Chinese Soft Power and its Implications for the United States, Center for Strategic and International Studies, Washington, March 2009, p. 72.

²⁵ Liu Huiqiu, Brilliant Achievements and Great Innovation, China's Diplomatic Work in the 30 Years of Reform and Opening Up, China International Studies, Beijing, Winter 2008, p. 10.

²⁶ Министр торговли Египта: страна стремится к созданию особых торговых отношений с Китаем, Жэньмь Жубао онлайн, 05.08.2006.

<http://russian.people.com.cn/31520/4779077.html>.

²⁷ "Китайский бум" охватил Египет, Жэньмь Жубао онлайн, 17.10.2006.

<http://russian.people.com.cn/31520/4925542.html>.

²⁸ Министр Египта о мировом значении развития Китая, Жэньмь Жубао онлайн, 12.10.2006. <http://russian.people.com.cn/31520/4928009.html>; Egypt, African Economic Outlook, ADB/OECD 2007, 2007, p. 243.

<http://www.oecd.org/dataoecd/26/6/38562553.pdf>.

առաջին զործընկերոջ կարգավիճակում, երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալը կկազմի 5 մլրդ ԱՄՆ դոլլար²⁹, իսկ Եգիպտոս կատարվող շինական ներդրումները կհասնեն 2 մլրդ ԱՄՆ դոլլարի³⁰: Նման կանխատեսման հանդիպում ենք նաև Չարգացման աֆրիկյան բանկի և Միջազգային տնտեսական համագործակցության կազմակերպության՝ Աֆրիկայի տնտեսության զարգացման հեռանկարների վերաբերյալ 2007 թ. հրապարակած զեկույցում³¹:

ԶԺՀ-ն արդեն ուժեղ մրցակցության մեջ է ամերիկյան և արևմտասվրոպական սպառողական ապրանքներ և արտադրության միջոցներ առաջող ընկերությունների հետ: Պեկինը մտադիր է ավելացնել Առեզի ջրանցքով դեպի Եվրոպա իրականացվող արտահանման և վերաարտահանման ծավալները՝ կրճատելով տարանցիկ ծախսերը: Այդ ուղղությամբ բուլլետյալություն ձեռք բերելու նպատակով ԶԺՀ-ը վերջերս բանակցությունների մեջ էր Իտալիայի և Եգիպտոսի հետ³²: Փաստորեն, շին-եգիպտական ռազմավարական համագործակցությունը չի սահմանափակվում երկկողմ շրջանակներով, այլ ծառայում է ԵՄ և Աֆրիկայի երկրների հետ կապերի ակտիվացմանը՝ շնորհիվ ԵԱՀ-ի աշխարհագրական դիրքի առավելության օգտագործման³³ և Եվրոպայի, Աֆրիկայի ու ԱՄՆ-ի հետ Կահիրեի ստորագրած մի շարք առևտրային պայմանագրերի³⁴:

²⁹ В ближайшие 10 лет Китай станет крупнейшим торговым партнером Египта, *Жэньминь Жибао онлайн*, 15.06.2007. <http://russian.people.com.cn/31519/6733127.html>; Египет надеется, что к 2010 году Китай станет его крупнейшим торговым партнером, *Жэньминь Жибао онлайн*, 07.09.2006. <http://russian.people.com.cn/31521/4789237.html>.

³⁰ 2005 թ. երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալը հասել է 2,3 մլրդ ԱՄՆ դոլլար՝ 30%-ով ավելի 2004 թ. համեմատությամբ, 2006 թ.՝ 3,19 մլրդ ԱՄՆ դոլլար՝ 48,8%-ով ավելի 2005 թ. համեմատությամբ:

³¹ Xinhua News Agency, Cairo, 31.10.2006.

³² Egypt. African Economic Outlook, AfDB/OECD 2007, p. 243.

³³ Jon B. Alteman and John W. Garver, *The Vital Triangle. China...*, p. 75.

³⁴ Египетские СМИ уделяли пристальное внимание визиту китайского премьера, *Жэньминь Жибао онлайн*, 19.06.2006. <http://russian.people.com.cn/31520/4500356.html>.

³⁵ Министр Египта о мировом значении развития Китая, *Жэньминь Жибао онлайн*, 12.10.2006. <http://russian.people.com.cn/31520/4506009.html>. Եվրոպական, ալբանական և աֆրիկյան երկրներին զբաղելու նպատակով 2003 թ. Կահիրեում բացվեց արտերկրում ԶԺՀ-ի կազմակերպված բարձր տեխնոլոգիաների աստղաշին խոշորագույն ցուցահանդեսը:

Նշենք, որ եզիպտացիական հարաբերությունները հատուկ տեղ են զբաղեցնում չին-աֆրիկյան երկնախոսության շրջանակներում: Չինաստանի և Աֆրիկայի երկրների միջև կենսական կարևորություն ունեցող քաղաքական, տնտեսական, գիտամշակութային, տեխնոլոգիական, հատկապես էներգետիկ ոլորտներում հաստատված սերտ համագործակցությունը նպաստում է ՉԺՀ-ի համար ռազմավարական նշանակությամբ տարածաշրջանում Պեկինի ներկայության ու ազդեցության ընդլայնմանը³⁵: ԵԱՀ-ը փորձում է այդ գործընթացից ասավելագույն օգուտ քաղել³⁶:

Հարկ է նշել, որ տնտեսական օգնության, ներդրումների և քաղաքական աջակցության ձևով «soft power»-ի իրականացումը Պեկինի «մեծ մերձավորարեյան քաղաքականության» անկյունաքարն է³⁷: Ուստի պատահական չէ, որ երկու երկրների միջև հավասարակշռված հարաբերությունների զարգացման հիմնական նախապայմանը առևտրատնտեսական և ներդրումային համագործակցությունն է³⁸: Փաստենք, որ երկկողմ ներդրումների անվտանգության ապահովման նպատակով 1994 թ. Եզիպտոսի և Կահիրեի միջև պայմանագիր է ստորագրվել ներդրումների փոխադարձ խրախուսման և պաշտպանության վերաբերյալ՝ փոխադարձ կապիտալ ներդրումներում խտրականության քացածման հիմքերի վրա³⁹: Երկու երկրների միջև առևտրային փոխանակությունը կանոնակարգվում է Կահիրեում 1995 թ. մարտի 25-ին ստորագրված առևտրային փոխանակության և տնտեսական համագործակցության վերաբերյալ ստորագրված պայմանագրով, որի համաձայն ստեղծվել է

³⁵ Lei Wu & Youyong Wang, Comparative Analysis of China's Energy Activities in the Middle East and Africa, *Journal of Middle Eastern and Islamic Studies (in Asia)*, v. 3, № 1, 2008, p. 51.

³⁶ Мананд-заде П., Основные направления азиатско-китайского сотрудничества в начале XXI века, *Ближний Восток и Современность*, Сборник статей, Москва, 2007, с. 82.

³⁷ Chris Zambelis and Brandon Gentry, *China Through Arab Eyes: American Influence in the Middle East*, Chris Zambelis and Brandon Gentry, 2008, p. 87. <http://www.carfile.army.mil/usawc/Parameters/08spring/zambelis.pdf>.

³⁸ ЮНР и Египет опубликовали совместное коммюнике по случаю 50-й годовщины установления дипломатических между двумя странами, *Жэньминь Жибао онлайн*, 08.11.2006.

<http://russian.people.com.cn/31521/5011190.html>.

³⁹ Египет надеется на привлечение инвестиций из Китая, *Жэньминь Жибао онлайн*, 26.04.2007. <http://russian.people.com.cn/31520/5661058.html>.

նաև առևտրային փոխանակության և տնտեսական համագործակցության խնդիրներով զբաղվող համատեղ հանձնաժողով: Իսկ 1999 թ. ապրիլին «ԵԱՀ-ի և ՉԺՀ-ի միջև ռազմավարական համագործակցության հաստատման վերաբերյալ համատեղ հուշագրի» ստորագրումը լրացուցիչ խթան է ծառայում երկու երկրների գործարար շրջանակների միջև մի շարք նոր պայմանագրերի կնքման գործում⁴⁰:

Գործնականում չին-եգիպտական առևտրի արագ զարգացմանը նպաստեց համաշխարհային շուկաներում չինական ապրանքների մրցունակության աճը: Բարձրորակ և համեմատաբար էժանագին չինական ապրանքները բարձր ժողովրդականություն են վայելում նաև եգիպտացի սպառողների շրջանում, ուստի եգիպտոսը մտադիր է ալվելացնել ՉԺՀ-ից ներկրման ծավալները⁴¹: Մինևույն ժամանակ եգիպտոսի համար չափազանց կարևոր է չինական ընդարձակ շուկաներում եգիպտական ապրանքների արտահանման ծավալների աճի խնդիրն ու ՉԺՀ-ի հետ առևտրի քաջասական ապրիլի կրճատումը (1/10 հարաբերակցությամբ՝ հոգուտ ՉԺՀ-ի)⁴²: Առևտրային հակակշռի վերացման նպատակով Պեկինը եգիպտական ձեռներեցներին առաջարկում է հայրենական արտադրանքը ներկայացնել Աֆրիկյան ապրանքների ցուցահանդեսում, Չինաստանի ներմուծման և արտահանման (Կանտոնի) և Չինաստանի ներդրումային և առևտրային միջազգային տոնավաճառներում⁴³: Պեկինն անգամ չինացի առևտրականներին եգիպտական ապրանքների զննման նպատակով դրամաշնորհներ է տրամադրել⁴⁴: Համատեղ քանցերի շնորհիվ 2008 թ. ԵԱՀ-ի արտահանումը ՉԺՀ աճել է 78.6%-ով, և ՉԺՀ-ը

⁴⁰ Egyptian-Chinese Relations, Egypt State Information Service, 2006.

<http://www2.sis.gov.eg/En/Publish/Foreign/EAAsia/china/040314100000000001.htm>.

⁴¹ Китаю стало быт' выгодно Египет, Жэньхэнь Жубао օնլայն, 17.10.2006.

<http://russian.people.com.cn/31520/4925542.html>, 2006 թ. եգիպտական շուկայում քրճ առաջացրոց չինական արտադրության «Յիժույ», «ՖուաՖեյ», «Յիզիե» և «Ֆուալլին» ավտոմեքենաների մեծաքանակ հոսքը:

⁴² Современная внешнея политика Египта: приоритеты и особенности.

Пространство и время в мировой политике и международных отношениях, т. 6, Москва, 2007, с. 139.

⁴³ China-Egypt 10-Year Strategic Cooperation, Mutual Benefit and Win-Win Cooperation, Ministry of Foreign Affairs, PRC, 2009.06.08.

<http://www.focac.org/eng/jywh/tjzq/619121.htm>.

⁴⁴ David H. Shinn, China's Approach to East..., p. 14.

վեր է անվել Եգիպտոսի արագ աճող արտահանման շուկաներից մեկի⁴⁵։

Եգիպտոսը Չինաստան հիմնականում արտահանում է նավթ, մարմար, գրանիտ, քամբակ, արդյունաբերական գորգեր, խեցեգործական և սանիտարական իրեր, քաթան, բյուրեղապակի, ապակի և այլն։ ԶԺՀ-ը ԵԱՀ հիմնականում արտահանում է բակլա, քիմիական նյութեր, էլեկտրական տեխնիկա և դրանց բաղադրիչներ, մանկական խաղալիքներ, սպորտային կոշիկներ, կտորեղեն, հագուստ և այլն⁴⁶։

2002 թ. հունվարին Եգիպտոսի նախագահի ԶԺՀ կատարած այցի ընթացքում կողմերի միջև ստորագրվեցին մի շարք պայմանագրեր տնտեսության, նավթի, տուրիզմի, միջուկային էներգիայի, կրթության, գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության վերաբերյալ։ Երկու երկրների նախագահները ներկա գտնվեցին գործարար համաժողովի բացման և Եգիպտաչինական գործարար խորհրդի ստեղծման արարողությանը⁴⁷։ 2002 թ. ապրիլին երկու երկրների միջև պայմանագրեր ստորագրվեցին տնտեսական և տեխնոլոգիական համագործակցության շուրջ, փոխըմտման հուշագիր ստորագրվեց գյուղատնտեսության՝ մասնավորապես ցեղային անասնապահության ոլորտում համագործակցության շուրջ⁴⁸։

2004 թ. հունվարին ԶԺՀ նախագահ Հու Չին-տաոյի Եգիպտոս կատարած այցի ընթացքում կողմերի միջև ստորագրվեց փոխըմտման հուշագիր՝ տեղեկատվական ոլորտում համագործակցության և Եգիպտոսին քինական արտադրության տեխնոլոգիաներ, Սուեզի ջրանցքի հյուսիս-արևմտյան տնտեսական գոտին շահագործելու նպատակով ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու վերաբերյալ⁴⁹։ Նշենք, որ ԶԺՀ-ի նախագահին ուղեկցում էր Չինաստանի Տյանցզին քաղաքի

⁴⁵ China-Egypt 10-Year Strategic Cooperation, Mutual Benefit and Win-Win Cooperation, Ministry of Foreign Affairs, PRC, 2009.06.08.

<http://www.focac.org/eng/jydh/hjzsjz/1519121.htm>.

⁴⁶ Egyptian-Chinese Relations, Egypt State Information Service, 2006.

<http://www2.sis.gov.eg/En/Political/Foreign/EAala/chinara/04031410000000001.htm>.

⁴⁷ China Hails Egypt's Role in the Peace Process, Arabic News, 1.21.2002.

<http://www.arabicnews.com/ansub/Daily/Daw020121/2002012145.html>.

⁴⁸ Egypt Signs Three Cooperation Agreements with China, Arabic News, 4.23.2002.

<http://www.arabicnews.com/ansub/Daily/Daw020423/2002042331.html>.

⁴⁹ David H. Shinn, China's Approach to East..., p. 14.

առևտրային պատվիրակությունը: Տյանցզինը եզիպտոսում հիմնադրել էր 14 ձեռնարկություն և այցի ընթացքում ցանկություն էր հայտնում եզիպտական կողմի հետ շարունակել Սուեզի տնտեսական գոտու 3-րդ բլոկի շահագործման աշխատանքները⁵⁰: Եշենք, որ Տյանցզինի Տնտեսական զարգացման գոտու ներդրումային ընկերությունը (TEDA) մասնակցել էր Սուեզի Տնտեսական և Առևտրային համագործակցության գոտու կառուցման և զարգացման աշխատանքներին⁵¹:

1990-ականների վերջերին եզիպտոսում հայտնաբերված բնական գազի խոշոր պաշարները վերջինիս թույլ տվեցին մտնել տվյալ տեսակի ածխաջրածնային հումքի արդյունահանման առաջատարների խումբը ոչ միայն ՄԱ-ի տարածաշրջանում, այլ ողջ աշխարհում⁵²: ԶԺՀ-ն որպես 1993 թվից վառելիք ներկրող երկիր, ԵԱՀ-ի հետ սկսեց համագործակցել նաև գազի և ծանր նավթի ոլորտներում՝ հին նավթահորերում օգտագործվող տեխնոլոգիաների արդյունավետությունը բարձրացնելու և նավթաքիմիական արդյունաբերության համար սարքավորումներ պատրաստելու նպատակով⁵³: 2004 թ. հունվարին ԵԱՀ-ում երկու երկրների նախագահները համաձայնության եկան ԵԱՀ-ում և ՄԱ-ի ու Աֆրիկայի այլ երկրներում նավթահորերի փորման և ծառայությունների մատուցման նպատակով համատեղ ձեռնարկություններ հիմնելու շուրջ, որի վերաբերյալ պայմանագիր ստորագրվեց նույն թվականի օգոստոսի վերջին: Եզիպտական կողմը հույս հայտնեց, որ

⁵⁰ <http://eg.china-embassy.org/eng/zqbx/t150975.htm>, Տյանցզինը (ԶԺՀ-ի կենտրոնական ենթակայության 4 քաղաքներից մեկը) Եզիպտոսի Սուեզի տնտեսական և առևտրային համագործակցության գոտում (այն զբաղեցնում է 7 քառ. կմ տարածք) 2 մլրդ չինական ռուանի ներդրում է կատարել: Այս մասին տես <http://www.eg-teda.com/portal/introduction>.

⁵¹ China-Egypt 10-Year Strategic Cooperation, Mutual Benefit and Win-Win Cooperation, Ministry of Foreign Affairs, PRC, 2009.06.08.

<http://www.focac.org/eng/jydh/szjs/1519121.htm>.

⁵² Mavea-zae П., Египет и перспективы развития международного газопроизва, Ближний Восток и современность, вып. 20, Москва, 2003, с. 157, 2000 թ.

ղեկավարներին Եզիպտոսի, Սիրիայի և Լիբանանի միջև պայմանագիր ստորագրվեց միջառաքական գազամուղի կառուցման վերաբերյալ, որին 2001 թ. փետրվարին միացավ Հոլդանանը: ՄԱ-ում ծնավորվեց գազամուղային նոր ցանց, որում Եզիպտոսն առանցքային դեր է խաղում:

⁵³ David H. Shinn, China's Approach to East..., p. 14.

Չինաստանը կավելացնի Եգիպտոսի նավթազագային ոլորտում իրականացվող ներդրումները⁵⁴:

2006 թ. հունիսին Չինաստանի վարչապետ Կեն Չիաբաոյի Եգիպտոս կատարած այցի ընթացքում ստորագրվեց «Չինաստանի և Եգիպտոսի միջև խորացված ռազմավարական համագործակցության իրականացման ծրագիր»: Այն ընդգրկում էր առևտրա-տնտեսական համագործակցության երկկողմ պայմանագրի փաթեթ, նավթազագային սեկտորներում և հեռահաղորդակցության ոլորտում համագործակցության վերաբերյալ համաձայնագիր, տեխնիկական տնտեսական համագործակցության վերաբերյալ միջկատարական համաձայնագիր⁵⁵:

2006 թ. սեպտեմբերին Պեկինում կողմերի միջև ստորագրվեցին էներգետիկ և գիտատեխնիկական ոլորտների համագործակցության վերաբերյալ շուրջ 2 մլրդ ԱՄՆ դոլլարի պայմանագրեր⁵⁶: 2006 թ. նոյեմբերի 6-ին Պեկինում ՉԺՀ-ի Կոմերցիայի նախարարության և ԵԱՀ-ի Առևտրի և արդյունաբերության նախարարության միջև «Չինաստանի՝ իրեն լիակատար շուկայական տնտեսությամբ երկրի կարգավիճակի ճանաչման վերաբերյալ հուշագիր» և նշյալ նախարարությունների միջև ստորագրվեց երկկողմ առևտրատնտեսական համագործակցության ամրապնդման վերաբերյալ հուշագիր⁵⁷: 2006 թ. երկրորդ կեսին Եգիպտոսի առևտրի նախարարությունը ՉԺՀ-ի հետ առևտրատնտեսական հարաբերությունների ամրապնդման նպատակով հատուկ խումբ ստեղծեց: Որոշվեց ԵԱՀ-ից ՉԺՀ արտահանման աճը խթանելու նպատակով համատեղ նոր ծրագրեր մշակել բամբակի, մարմարի, շինանյութի և նավթաքիմիական ոլորտում⁵⁸: Նշենք, որ 2009 թ.

⁵⁴ Волович А., Китай на энергетическом рынке Ближнего Востока, Институт Ближнего Востока, <http://www.imes.ru/ru/inf/2004/22-09-04.htm>

⁵⁵ Xinhua News Agency, Cairo, 18.06.2006; Президент Египта встретился с премьером Госсовета КНР, Жэньминь Жибао онлайн, 19.06.2006. <http://russian.people.com.cn/31520/4486000.html>

⁵⁶ Египет надеется, что к 2010 году Китай станет его крупнейшим торговым партнером, Жэньминь Жибао онлайн, 07.09.2006.

⁵⁷ The Egyptian Gazette, 07.11.2006; Египет признал за Китаем статус страны с полной рыночной экономикой, Жэньминь Жибао онлайн, 06.11.2006. <http://russian.people.com.cn/31521/5004506.html>

⁵⁸ Министр Египта о мировом значении развития Китая, Жэньминь Жибао онлайн, 12.10.2006.

նյութերի 6-7-ը Հոսնի Մուբարաքի՝ ԳԺՀ կատարած պաշտոնական այցի շրջանակներում ևս հատուկ տեղ էր զբաղեցնում «տնտեսական օրակարգը»⁵⁹։

Չինաստանը ներդրումներ է կատարում եգիպտոսի հեռահաղորդակցության, շինարարության, գյուղատնտեսության, ծառայությունների և զբոսաշրջության ոլորտներում⁶⁰։ Պեկինը խրախուսում է եգիպտոս քիմիական, տեքստիլ, էլեկտրոնային, տեղեկատվական-տեխնիկական և քեթն արդյունաբերության, նավթային և շինանյութի ոլորտներում իրականացվող ներդրումները⁶¹։ Հարկ է նշել, որ ԵԱՀ-ում աշխատուժի ու էներգակիրների համեմատաբար ցածր ինքնարժեքը չինական ընկերությունների կողմից կատարվող կապիտալ ներդրումների համար բարենպաստ հող է հանդիսանում⁶²։

2005 թ. տվյալներով եգիպտական և չինական ընկերություններն առավել քան 85 համատեղ ձեռնարկություն են հիմնել, որտեղ չինական ներդրումները կազմել են 56 մլն ԱՄՆ դոլլար⁶³։ 2006 թ. դրությամբ 220 մլոդ ԱՄՆ դոլլարի ներդրմամբ Չինաստանը 186 նախագիծ է իրականացրել ԵԱՀ-ում⁶⁴։ 2006 թ. չինական ձեռնարկությունները 300 մլն ԱՄՆ դոլլարի ներդրում են իրականացրել եգիպտական նավթի և կապի ոլորտներում՝ եգիպտոսին տրամադրելով ոչ միայն համապատասխան միջոցներ ու տեխնոլոգիաներ, այլև ստեղծելով 6000 աշխատատեղ⁶⁵։ 2009 թ. չինական 600 ձեռնարկություն ԵԱՀ-ում գործվածքի, հագուստի, նավթային ծառայությունների, հեռահաղորդակցության, սննդի մշակման, մեքենաշինության ոլորտում 500 մլն ԱՄՆ դոլլարի ներդրումներ են կատարել։ Կառուցվել է 58 գործարան, ստեղծվել՝

⁵⁹ "Xinhua News Agency", Cairo, 31.10.2006.

⁶⁰ Египет надеется на привлечение инвестиций из Китая, Жэньминь Жибао онлайн, 26.04.2007. <http://russian.people.com.cn/31520/5661068.html>.

⁶¹ Мамма-заде П., Основные направления египетско-китайского сотрудничества..., с. 81.

⁶² Министр Египта о мировом значении развития Китая, Жэньминь Жибао онлайн, 12.10.2006.

⁶³ David H. Shinn, China's Approach to East..., p. 14.

⁶⁴ China-Egypt Ties, Model of South-South Co-op, Chinese Government's Official Web Portal, GOV.cn, 15.06.2006.

⁶⁵ В отношениях стратегического сотрудничества между Китаем и Египтом достигнуты плодотворные результаты, Жэньминь Жибао онлайн, 18.05.2007. <http://russian.people.com.cn/31520/5746750.html>.

3000 աշխատատեղ⁶⁶։ 2010 թ. չինական ձեռնարկությունների թիվը ԵԱՀ-ում հասել է 1070-ի։

Երկկողմ հարաբերությունների զարգացմանը զուգահեռ, ավելանում է Եգիպտոս այցելող չինացի զբոսաշրջիկների թիվը, որոնց հոսքը մեծացնելու և տուրիզմի ոլորտում առավել խոր և սերտ համագործակցելու նպատակով երկու երկրների միջև 2001 թ. հոկտեմբերին պայմանագիր է ստորագրվել⁶⁷։ Եթե 2005 թ. «բուրգերի երկիր» է այցելել 20Հ-ի շուրջ 50.000 քաղաքացի, ապա 2015 թ. այդ թիվը նախատեսվում է հասնել 1 մլն⁶⁸։ Երկու երկրների միջև տուրիզմի, առևտրային և գործարար կապերի խորացման նպատակով 2007 թ. Եգիպտական ավիաուղիները քայքայեցին Կահիրեից Գուանդուն լվերթը⁶⁹։

Չնայած 2008 թ. ֆինանսական ճգնաժամին, որից լրջորեն տուժեցին ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրները, այդ թվում 20Հ-ն ու ԵԱՀ-ը, այնուհանդերձ երկու երկրների միջև առևտուրը 2010 թ. 35.77% աճ է արձանագրել՝ հասնելով 5 մլրդ ԱՄՆ դոլլարի⁷⁰՝ արդարացնելով այդ ուղղությամբ կողմերի տածած ակնկալիքներն ու կանխատեսումները։ Այդ է թերևս պատճառը, որ երկու երկրները ձգտում են առավել խորացնել երկկողմ համագործակցությունը՝ զրբալ տնտեսական ու ֆինանսական կայունության ապահովման, միջազգային ֆինանսական համակարգում զարգացող երկրներին

⁶⁶ China-Egypt 10-Year Strategic Cooperation, Mutual Benefit and Win-Win Cooperation, Ministry of Foreign Affairs, PRC, 2009.06.08.

⁶⁷ <http://www.focac.org/eng/jydh/jzjz/919121.htm> ԵԱՀ-ում «Չինաստանի Արտահանող-Ներկրող քանից» 20 մլն ԱՄՆ դոլլար փոխառություն է տրամադրել Կահիրեի Միջազգային Համաժողովների կենտրոնի (CICC) վերանորոգման և նրա իրականացման կառուցման համար։ Չինաստանի մեծազույն պետական «Սիֆուրուա» կորպորացիան նախատեսում էր 800 մլն ԱՄՆ դոլլար ներդնել Իսմաիլիայի պլումինի գործարանում, որի նկատմի մեծ մասը պատկանելու է 20Հ-ին։ «Չինաստանի Ազգային ցինիական ինժեներական ցնկերությունը» Քուվեյթի «Ալ-Ֆալիժ»-ի հետ պայմանագիր ունի Եգիպտոսի Ֆայումի ցինիական գործարանում 700 մլն ԱՄՆ դոլլար ներդրում կատարելու վերաբերյալ։

⁶⁸ Число китайских туристов в Египет растет, Жэньминь Жибао онлаин, 07.09.2006. <http://russian.people.com.cn/31518/4789553.html>.

⁶⁹ Masala-zadeh P., Основные направления египетско-китайского сотрудничества..., с. 82.

⁷⁰ Chris Zambelis, Public Diplomacy in Sino-Egyptian Relations...

⁷¹ China-Egypt 10-Year Strategic Cooperation, Mutual Benefit and Win-Win Cooperation, Ministry of Foreign Affairs, PRC, 2009.06.08.

<http://www.focac.org/eng/jydh/jzjz/919121.htm>.

ներկայացնելու և նրանց խնդիրները բարձրացնելու ուղղությամբ: Իսկ սա նշանակում է, որ չին-եգիպտական հարաբերությունները դուրս են եկել աստղաթևաձևության համազործակցության շրջանակներից՝ ընդունելով ռազմավարական գործընկերության վերածող աշխարհաքաղաքական ծավալներ:

AGHAVNI HARUTYUNYAN

ON THE SINO-EGYPTIAN TRADE-ECONOMIC COOPERATION

Egypt is the first Arab and African country to declare the establishment of diplomatic relations with China in 1956, and the first to come into strategic cooperative relations with China in 1999. Egypt signed the Deepening Bilateral Strategic and Cooperative Relations with China and memorandum which recognized the full market status of Chinese economy in 2006.

Beijing is fashioning itself as an alternative source of economic development aid, a role traditionally dominated by the United States, Europe and Western-led institutions such as the World Bank and International Monetary Fund. Two countries are coordinating their positions in international trade and economic affairs and organizations work together to protect the interests of developing countries in the process of economic globalization and trade liberalization. Egypt supported China to join the WTO.

China attaches special importance to mutual cooperation with Egypt, which is considered the largest trade partner to China in the Middle East. Egypt was seeking to become an inseparable part of China's trading strategy and hopes to establish «special» economic and trade relations with China, which will not only be limited to import and export, but will include an investments and cooperation in all fields. Cairo sees China as a successful model of modernization and Egypt should borrow the successful experience of China during its economic development. Since the volume of bilateral trade is growing at 30-40 % over the next 8-9 years, Egypt is keen on making China its number one trade partner in 2012 replacing the US as its largest trading partner.

Sino-Egyptian strategic cooperation is not limited to the bilateral framework, it serves to the intensification of contacts between China and the EU and Africa through the use of geographical advantages of Egypt and the trade and economic contracts Egypt signed with these countries. Egypt is aiming to increase its share of Chinese exports and re-exports to Europe through the Suez Canal by lowering transit fees. China and Egypt maintain cooperation under the frameworks of China-Arab Cooperation Forum and Forum on China-Africa Cooperation, which is an important part of the bilateral strategic cooperative relations.

Chinese products are of good quality and reasonable prices, and that makes it competitive, so Egypt will increase imports of goods from China. Despite an expansion in bilateral trade, business relations continue to be characterized by a

large Egyptian trade deficit. Egypt is exerting efforts to reach Egypt's exports to the Chinese market aiming at reducing the negative balance in trade with China. In an effort to placate Cairo's concerns over the large trade imbalance, China is trying to take all positive and effective measures to encourage imports from Egypt, offering subsidies to Chinese traders to encourage the purchase of Egyptian goods, as well as creating favorable conditions for bilateral trade.

The important form of cooperation is the establishment of numerous joint Egyptian-Chinese enterprises to meet the needs of the Egyptian market and export of certain goods in the Arab, African and European markets. The investment environment in Egypt over the past few years has improved markedly. In 1994 Egypt and China signed an agreement on reciprocal promotion and protection of investments, on the basis of non-discriminatory of mutual investments. Egyptian government hopes that Egyptian cheap labor force and relatively low-cost price of energy will create a favorable basis for Chinese companies to invest and do business in Egypt.

Beijing encourages the intensification of investment by Chinese enterprises in the chemical, textile, electronics, information technology and light industry of Egypt. China has spearheaded a number of joint ventures with Egyptian businesses, especially in the oil and natural gas sectors, namely projects dealing with oil and gas exploration, enhancing the productivity of old wells, and manufacturing equipment for the hydrocarbon industry. With the initiative of the Chinese government, TEDA is building projects of strategic importance such as Suez Economic and Trade Cooperation Zone. Up till 2008, there are nearly 600 Chinese enterprises investing in Egypt, covering the areas of textile and garment, oil services, telecommunication, food processing, and machinery manufacturing, with the total investment exceeding US \$500 million, 58 factories and enterprises built, and generating over 3000 jobs. Despite the financial crisis of 2008, which seriously harmed especially the economies of developing countries, including China and Egypt, trade between the two countries increased 35,77% and reached 5 billion U.S. dollars. China and Egypt hope to further deepen bilateral economic and trade cooperation and to strengthen coordination in promoting the reform of the international financial system. To this end, they maintain close communication and work together to ensure global economic and financial stability and increase the representation and voice of developing countries in the international financial system.

ԲԵՆԻԱՄԻՆ ԳՈՂՈՍՅԱՆ

ԱՄՆ - ԻՍՐԱՅԵԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (2009 - 2010 թ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

ԱՄՆ 2008 թ. նախագահական ընտրություններից հետո նորընտիր նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը կանգնած էր երկրի արտաքին քաղաքականության ոլորտում էական փոփոխություններ իրականացնելու մարտահրավերի առջև: Օբամայի նախընտրական հիմնական լոզունգը «փոփոխության» կոչն էր, և դեռևս նախընտրական շրջանում Օբաման բազմիցս հայտարարել էր Բուշ կուտսերի կողմից իրականացվող արտաքին քաղաքական հայեցակարգում լուրջ սրբազրույթներ իրականացնելու մտադրության մասին: Ամերիկյան նոր վարչակազմը ձեռնամուխ եղավ փոփոխությունների իրականացմանը մի քանի ուղղություններով՝ Իրանի միջուկային ծրագիր, ռուս-ամերիկյան հարաբերություններ, արաբա-իսրայելական խաղաղության գործընթաց: Այս վերջին ուղղությունը անխուսափելիորեն ենթադրում էր նոր զարգացումներ ԱՄՆ-Իսրայել հարաբերություններում:

Սույն հոդվածի հիմնական խնդիրն է ներկայացնել նշված ժամանակահատվածում երկկողմ հարաբերություններում արձանագրված տեղաշարժերը, վերլուծել դրանց հիմնական պատճառները և գնահատել ԱՄՆ-Իսրայել հարաբերությունների ներկա մակարդակը:

Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Բարաք Օբամայի վարչակազմի իշխանության գալուց հետո երկկողմ հարաբերություններում որոշակի սաստույթուն է նկատվում: Այդ զարգացումները հիմնականում պայմանավորված են երեք գործոններով՝ ԱՄՆ նոր վարչակազմի Իրանի հանդեպ որոշեզրած քաղաքականությամբ, Իսրայել - Թուրքիա հարաբերություններում արձանագրվող փոփոխություններով, ինչպես նաև արաբա-իսրայելական խաղաղության գործընթացի վերակենդանացման ուղղությամբ ԱՄՆ իշխանությունների ձեռնարկած քայլերով:

Իրանի հանդեպ ԱՄՆ նոր քաղաքականությունը և ԱՄՆ – Իսրայել հարաբերությունները

1979 թ. իսլամական հեղափոխությունից ի վեր Իրանի հանդեպ ԱՄՆ քաղաքականությունը ԱՄՆ – Իսրայել հարաբերություններում կարևոր գործոնի է վերածվել: Միաժամանակ հարկ է նշել, որ Իսրայելը և իրեական սփյուռքը ԱՄՆ-ի իրեական համայնքի գլխավորությամբ զգալի ազդեցություն են ունեցել Մերձավոր Արևելքում, և մասնավորապես, Իրանի խնդրում ԱՄՆ-ի իրականացրած քաղաքականության վրա: Այդ գործոնի դերը հատկապես նկատելի էր Ջորջ Բուշ Կրտսերի վարչակազմի տարիներին: Սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից անմիջապես հետո ինչպես Իսրայելը, այնպես էլ ԱՄՆ-ի իրեական ազդեցիկ կազմակերպությունները լուրջ ջանքեր էին գործադրում՝ հասնելու համար ԱՄՆ-ի կողմից Իրանի դեմ ռազմական գործողությունների իրականացմանը՝ առաջ քաշելով Իրաքի փոխարեն Իրան ներխուժելու գաղափարը: Իրաքյան պատերազմի սկզբում ամերիկյան ուժերի արձանագրած հաջողություններից հետո այդ շրջանակներում ակտիվորեն քննարկվում էր մինչև 2003 թ. ավարտը Իրանի դեմ ԱՄՆ-ի կողմից ռազմական գործողություններ ձեռնարկելու խնդիրը: ԱՄՆ-ի իրեական համայնքի ակտիվ աջակցությամբ 2003 թ. ամռանը ԱՄՆ-ի Կոնգրեսի երկու պալատները բանաձև ընդունեցին Իրանում ռեժիմի փոփոխության հասնելու վերաբերյալ: Ջզալի էր նաև Իսրայելի և ԱՄՆ-ի իրեական կազմակերպությունների դերը 2003 թ. մայիսին Իրանի նախագահ Նաթանիի՝ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների կարգավորմանը միտված առաջարկների՝ ԱՄՆ-ի կողմից մերժման գործընթացում¹:

Բարաք Օբաման Իրանի հանդեպ իրականացվելիք քաղաքականության հիմնադրույթներն առաջին անգամ շարադրել էր դեռևս 2007 թ. ամռանը ամերիկյան «Ֆորին Ըֆեյրս» պարբերականում հրատարակված հոդվածում: Այստեղ Օբաման հստակ նշում էր, որ գործող վարչակազմի կողմից Իրանի հանդեպ իրականացվող սպասելիքների և ուղղակի շփումների փոխարեն միջնորդավորված հարաբերությունների վրա հիմնված քաղաքականությունը ծախսով էլ է շրացառելով ռազմական ուժի կիրառումը՝ ԱՄՆ-ը պետք է ուղղակի երկխոսություն սկսի Իրանի հետ՝ միջուկային զենքի ձեռք բերման

¹ Meznshelmer J. and Wall S., The Israel Lobby and U.S. Foreign Policy, Farrer, Straus and Groux, New York, 2007, pp. 280-305.

ծրագրերից հրաժարվելու դիմաց առաջարկելով անվտանգության երաշխիքներ, դիվանագիտական հարաբերությունների հաստատում և տնտեսական համագործակցություն: Միաժամանակ անհրաժեշտ է պաշտոնական Թեիրանին հստակ ներկայացնել ԱՄՆ-ի առաջարկից հրաժարվելու պարագայում Իրանին սպասվող հնարավոր հետևանքները²:

Ստանձնելով ԱՄՆ-ի նախագահի պաշտոնը՝ Օրաման ձեռնամուխ եղավ Իրանի հանդեպ որոշգրտած քաղաքականության իրականացմանն ուղղված կոնկրետ քայլերի կատարմանը: Օրամայի վարչակազմում Իրանի նկատմամբ նոր քաղաքականության ուղենիշերի մշակումը հանձնարարվեց Դենիս Ռոսին, որը դեռևս 1980-ական թվականներից լուրջ պաշտոններ էր զբաղեցրել ամերիկյան արտաքին քաղաքական գերատեսչությունում, իսկ 1990-ական թվականներին Բիլ Բլինթոնի վարչակազմում ներգրավվել էր արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման գործընթացում³:

Իրանի հետ ուղիղ երկխոսություն սկսելու և Իրանի միջուկային ծրագրի շուրջ առաջացած խնդիրը ռազմական ճանապարհով կարգավորելու հնարավորության փաստացի բացառումը լուրջ անհանգստություն առաջ բերեց Իսրայելի իշխանությունների շրջանում: 2009 թ. արտահերթ ընտրությունների արդյունքում Իսրայելում իշխանության եկած Բենիամին Նեթանյահուի կառավարությունը բավականաչափ կոշտ դիրքորոշում էր որդեգրել Իրանի հանդեպ: Իսրայելի խորհրդարանում վարչապետի պաշտոնն ստանձնելու արարողության ժամանակ ունեցած ելույթում Նեթանյահուն հայտարարեց, որ Իսրայել պետությանը և ողջ մարդկությանը սպառնացող ամենամեծ վտանգը Իրանի կողմից միջուկային զենքի ձեռք բերումն է⁴:

Իրանի միջուկային ծրագրի և Իրան - ԱՄՆ հարաբերությունների հարցը կարևոր տեղ զբաղեցրեց 2009 թ. մայիսի 18-ին Օրամայի և Նեթանյահուի՝ Վաշինգտոնում կայացած հանդիպման ժամանակ: Իսրայելական կողմը ցանկանում էր համոզվել, որ ամերիկյան նոր

² Barack Obama, *Renewing American Leadership*, Foreign Affairs, July – August, 2007, <http://www.foreignaffairs.com/articles/62636/barack-obama/renewing-american-leadership>.

³ Calabresi M., *The Final Countdown*, Time Europe, v. 173, № 24, June 15, 2009, pp. 20–23.

⁴ Netanyahu Swear in Speech, <http://www.pmo.gov.il/PMOEng/Communication/PMSpeaks/speechnetanikness310309.htm>.

վարչակազմի համար և անընդունելի է Իրանի կողմից միջուկային զենքի ձեռք բերումը: Բանակցություններին հաջորդած համատեղ ասուլիսի ընթացքում Օբաման վերահաստատեց այդ խնդրում ԱՄՆ նախորդ վարչակազմի դիրքորոշումը⁸:

Ախաժամանակ ակնհայտ էր մոտեցումներում ասկա տարբերությունը: Եթե Օբաման հայտարարում էր Իրանի կողմից միջուկային զենքի ձեռք բերման անթույլատրելիության մասին, ապա Նեթանյահուն պնդում էր, որ Իրանի ձեռքում միջուկային զենք ստանալու տեխնոլոգիաների ասկայությունն արդեն լուրջ սպառնալից է Իսրայելի անվտանգության համար: Պաշտոնական թե՛ Ալիվը նաև գտնում էր, որ ԱՄՆ քաղաքականությունը Իրանը կընկալի որպես ամերիկյան նոր վարչակազմի թուլության նշան, ինչն էլ ավելի կմեծացնի Իրանի կողմից միջուկային զենքի ձեռք բերման հավանականությունը: Իսրայելի իշխանությունները քազմիցս հայտարարեցին Իրանի հանդեպ միջազգային նոր պատժամիջոցների կիրառման անհրաժեշտության մասին՝ պնդելով, որ պաշտոնական Թեհրանի հետ բանակցությունները ընդամենը հավելյալ ժամանակ են տրամադրում Իրանի իշխանություններին՝ միջուկային զենքի ձեռք բերման ուղղությամբ իրականացվող աշխատանքներն ավարտին հասցնելու համար:

Իրանի հետ ուղղակի երկխոսություն սկսելու Օբամայի վարչակազմի նախաձեռնությունը որևէ եական արդյունքի չհանգեցրեց: Իրանի իշխանությունները մերժեցին 2009 թ. հոկտեմբերին «հինգ + մեկ» ձևաչափի անդամ պետությունների կողմից ներկայացված առաջարկը, որը նախատեսում էր Իրանից շուրջ 1200 կգ. թեթև հարստացված ուրանի տեղափոխում Ռուսաստան, որտեղ իրականացվելու էր ուրանի հետագա հարստացումը: Այնուհետև ուրանը պետք է տեղափոխվեր Ֆրանսիա, վերափոխվեր միջուկային վառելիքի և հետ վերադարձվեր Իրան⁹:

Իրանական կողմի մերժումից հետո ԱՄՆ-ի նախաձեռնությամբ 2009 թ. վերջին մեկնարկած բանակցությունների արդյունքում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամները համաձայնության

⁸ Remarks by President Obama and Prime Minister Netanyahu of Israel in Press Availability, May 18, 2009, http://www.whitehouse.gov/the_press_office/Remarks-by-President-Obama-and-Israeli-Prime-Minister-Netanyahu-in-press-availability/.

⁹ Uranium Deal Appears Close,

(<http://online.wsj.com/article/SB125618228904789907.html#>).

եկան Իրանի հանդեպ նոր պատժամիջոցներ նախատեսող թիվ 1929 քանաձևի նախագծի շուրջ, որն ընդունվեց 2010 թ. հունիսի 9-ին⁷:

Այնուամենայնիվ, Իսրայելի իշխանությունները շարունակում են որոշակի անվտանգություն ցուցաբերել ԱՄՆ-ի վարչակազմի՝ Իրանի հանդեպ իրականացվող նոր քաղաքականության հանդեպ՝ անուղղակի ակնարկելով, որ ԱՄՆ-ը այժմ շատ ավելի քիչ է հակված հաշվի առնել Իսրայելի մտահոգությունները: Այս հանգամանքը նպաստում է երկկողմ հարաբերություններում որոշակի սաստիկության առաջացմանը:

Թուրք-իսրայելական հարաբերությունների ազդեցությունը ԱՄՆ – Իսրայել զարգացումների վրա

Թուրքիայի հետ դաշնակցային հարաբերությունները էական դերակատարում ունեն Իսրայելի ռազմավարական անվտանգային շահերի պաշտպանության տեսակետից: Դրանք Իսրայելի կողմից օգտագործվում են արաբա-իսրայելական հակամարտությունը որպես հրեականության և մահմեդականության միջև բախում ներկայացնելու արարական որոշ շրջանների քաղաքականության դեմ հակաքարոզչություն իրականացնելու նպատակով: Թուրքիայի լարված հարաբերությունները ինչպես արաբական որոշ երկրների, հատկապես Սիրիայի, այնպես էլ Իրանի հետ հավելյալ նպաստավոր պայմաններ էին ստեղծում թուրք-իսրայելական կապերի հետագա խորացման համար: Թուրք-իսրայելական դաշինքի ամրապնդման համար կարևոր նշանակություն ունեին նաև Թուրքիա-ԱՄՆ հարաբերությունները: Տարածաշրջանում պաշտոնական Վաշինգտոնի ռազմավարական դաշնակցի կարգավիճակը ակնհայտորեն նպաստում էր թուրք-իսրայելական հարաբերությունների հետագա սերտացմանը:

Իրավիճակն աստիճանաբար սկսեց փոխվել 2002 թ. նոյեմբերին Թուրքիայում «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո: Թուրքական իշխանությունները ձեռնամուխ եղան մերձավորարևելյան նոր քաղաքականության իրականացմանը, որի հիմքում ընկած էր տարածաշրջանի բոլոր պետությունների հետ հարաբերությունների նորմալացման տեղականը: Միաժամանակ Թուրքիան քայլեր ձեռնարկեց

⁷ UN Security Council, Resolution 1929 (2010) <http://daccess-dds-y.un.org/doc/UNDOC/GEN/N10/396/79/PDF/N1039679.pdf?OpenElement>

մահմեդական աշխարհում սեփական դիրքերի ամրապնդման ուղղությամբ՝ առաջին հերթին հանդես գալով միջազգային ասպարեզում պաղեստինցիների պաշտպանությամբ: Թուրքիայի այս նոր քաղաքականությունը որոշակի ազդեցություն թողեց ինչպես թուրք-խրայելական և թուրք-ամերիկյան, այնպես էլ միջնորդավորված ձևով՝ ԱՄՆ-Իսրայել հարաբերությունների վրա:

Թուրքիայի նոր քաղաքականությունը որոշակի լարվածություն առաջ բերեց թուրք-ամերիկյան հարաբերություններում: Դրա հիմնական պատճառների թվում էին Թուրքիայի տարածքից Իրաք ամերիկյան զորքերի ներխուժման առաջարկի մերժումը, «Չարի առանցքի» մաս հռչակված Իրանի հետ Թուրքիայի հարաբերությունների բարելավումը և մի շարք այլ գործոններ⁸:

Ի տարբերություն թուրք-ամերիկյան զարգացումների, թուրք-խրայելական հարաբերությունների խորացումը շարունակվում էր: Իսրայելը գտնում էր, որ արաբական աշխարհի, առաջին հերթին Սիրիայի հետ Թուրքիայի հարաբերությունների բարելավումը կարող է նպաստել տարածաշրջանային հակամարտություններում լարվածության թուլացմանը, իսկ որոշ դեպքերում նաև Թուրքիայի կողմից միջնորդի դերի ստանձմանը: Այս տեսլականի քաղկացուցիչ մաս էր կազմում Թուրքիայի միջնորդությամբ իսրայելա-սիրիական անուղղակի բանակցությունների մեկնարկը 2008 թ.:

Իրավիճակն սկսեց փոխվել 2009 թ.: Նոր, և որոշ չափով իրարամերժ զարգացումներ գրանցվեցին թե՛ Իսրայել-Թուրքիա և թե՛ ԱՄՆ – Թուրքիա հարաբերություններում: Բարաք Օբամայի վարչակազմը մերժավորարևելյան քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը հռչակեց Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավումը՝ կարևորելով այդ երկրի դերակատարումը ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության իրականացման տեսակետից: 2009 թ. ապրիլին Օբաման այցելեց Թուրքիա՝ ընդգծելով այդ երկրի ռազմավարական կարևորությունն առաջին հերթին Աֆղանստանում և Իրաքում ԱՄՆ քաղաքականության հաջողության ապահովման տեսանկյունից⁹:

⁸ Մամրաման տե՛ս՝ Պեղոսյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունների հիմնական ճիւղումները 2003-2008 թթ., Թյուրքագիտական և օսմանաշխտական հետազոտություններ, հ. VI, Երևան, 2009, էջ 161-178.

⁹ Remarks by President Obama and Turkish Prime Minister Erdogan After Meeting, April 6, 2009, http://www.whitehouse.gov/the_press_office/Remarks-by-The-President-and-PM-of-

Թուրք-ամերիկյան հարաբերություններում նկատվող դրական տեղաշարժի ֆոնին նկատելիորեն սկսեցին վատթարանալ թուրք-խորայելական հարաբերությունները: Նոր զարգացումների մեկնակետ դարձավ 2008 թ. դեկտեմբերին Գազայի հատվածում իսրայելական բանակի ձեռնարկած ռազմական օպերացիան: Թուրքական իշխանությունները խիստ քննադատության ենթարկեցին Իսրայելի զործողությունները՝ հրեական պետությանը մեղադրելով պետական ահաբեկության և խաղաղ բնակչության դեմ հանցագործությունների կատարման մեջ: Հարաբերությունների վատթարացման գործընթացը հրապարակային քննույթ ստացավ: Դրա առաջին նշաններից էր 2009 թ. հունվարին Ղափուի տնտեսական համաժողովում Թուրքիայի վարչապետ Էրդողանի և Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի բանավեճը: 2010 թ. հունվարին Իսրայելի փոխարտգործնախարար Դենի Այալոնը հրապարակային նվաստացման ենթարկեց Իսրայելում Թուրքիայի դեսպանին: Երկկողմ հարաբերություններում լարվածության նոր բունկում արձանագրվեց 2010 թ. մայիսի 31-ին, երբ իսրայելական զինվորականները գրոհեցին Գազայի ափ շարժվող միջազգային նավատորմի՝ պատճառ դառնալով թուրք քաղաքացիների մահվան:

2009 թ. սկսած Իսրայելի իշխանությունները, ինչպես նաև ԱՄՆ-ի հրեական համայնքի ազդեցության տակ գտնվող ամերիկյան վերլուծական կենտրոններն ու զանգվածային լրատվության միջոցները անընդհատ քարծրածայնում են Թուրքիայի՝ Արևմուտքից հեռանալու և իսլամական աշխարհին ինտեգրվելու մասին՝ պնդելով, որ այդ երկիրը դադարել է Արևմուտքի դաշնակիցը լինելուց և հաճախ իրականացնում է բացահայտ հակաարևմտյան, ինչպես նաև հակաիսրայելական քաղաքականություն¹⁰: Այդ քարոզչության շրջանակներում կոչ է արվում ԱՄՆ-ին ավելի ակտիվ քաղաքականություն որդեգրել Թուրքիայի նկատմամբ՝ կանխելու համար այդ երկրի հետագա հեռացումը արևմտյան դաշնակիցներից¹¹:

Բարաք Օբամայի վարչակազմը ևս անհանգստություն է արտահայտում Իսրայել-Թուրքիա հարաբերությունների

Turkey-After-Meeting/

¹⁰ Ariel Cohen, Turkish Dangerous Shift,-

<http://www.heritage.org/Press/Commentary/ed041309c.cfm>.

¹¹ Cook S., Balancing a Bullish Turkey, December 4, 2009,

http://www.cfr.org/publication/20904/balancing_a_bullish_turkey.html

վատթարացման առնչությամբ: 2009 թ. դեկտեմբերին Էրդողանի՝ ԱՄՆ կատարած այցելության նախօրյակին Սպիտակ տան բարձրաստիճան պաշտոնյաները շեշտեցին Թուրքիա-Իսրայել ռազմավարական համագործակցության շարունակման կարևորությունը ԱՄՆ շահերի տեսանկյունից¹²:

Ամերիկյան իշխանությունները նաև անհանգստություն հայտնեցին մայիսի 31-ին Չազալի ակամեի մատվածում տեղի ունեցած դեպքերի առնչությամբ: Ցավակցություն հայտնելով մարդկային կորստների առնչությամբ, ԱՄՆ-ը նաև կոչ արեց Չազալի հատվածի բնակչությանը հումանիտար օգնություն տրամադրել գործող մեխանիզմների շրջանակում՝ հաշվի առնելով Իսրայելի՝ սեփական անվտանգությունն ապահովելու օրինական իրավունքը՝ անուղղակիորեն քննադատելով թուրքական իշխանությունների ձեռնարկած քայլերը:

2010 թ. հունիսին «Մեծ քսանյակի» գազաթնաժողովի շրջանակներում կայացած հանդիպման ժամանակ Օբաման Էրդողանին հայտնել էր, որ Թուրքիայի մի շարք գործողություններ, այդ թվում Իսրայելի հասցին հնչող քննադատությունը, կարող է խոչընդոտներ ստեղծել Թուրքիային ամերիկյան զինատեսակներ վաճառելու գործընթացում¹³:

Այնուամենայնիվ, Օբամայի վարչակազմը ընդունում է Թուրքիայի կարևորագույն դերակատարումը տարածաշրջանային գործընթացներում ամերիկյան շահերի ապահովման տեսակետից:

Այդ մասին ընդգծված է 2010 թ. մայիսին հրապարակված ԱՄՆ-ի Ազգային անվտանգության նոր ռազմավարությունում¹⁴, ինչպես նաև 2010 թ. հուլիսին ԱՄՆ պետքարտուղարության Գլխավոր տեսուչի գրասենյակի կողմից հրապարակված Անկարայում ԱՄՆ դեսպանատան գործունեությանն առնչվող զեկույցում¹⁵: Չնայած Իսրայել-Թուրքիա հարաբերությունների վատթարացմանը և Իսրայելի կառավարության և ԱՄՆ հրեական համայնքի քննքնի՝ հասնել ԱՄՆ

¹² Background Briefing by Senior Administration Officials on Turkish Prime Minister Erdogan's Trip to D.C., <http://www.state.gov/p/eur/rls/rms/2009/133233.htm>

¹³ Daniel Dombey, US issues arms deal ultimatum to Turkey, <http://www.ft.com/cms/s/0/35c01e4e-e895-11d1-86dd-00144feabdc0.html>.

¹⁴ US National Security Strategy, May 2010,

http://www.whitehouse.gov/sites/default/files/rss_viewer/national_security_strategy.pdf

¹⁵ United States Department of State and the Broadcasting Board of Governors Office of Inspector General, Report of Inspection, Embassy Ankara, Turkey, July 2010, <http://oig.state.gov/documents/organization/146175.pdf>.

կողմից Թուրքիայի հանդեպ ավելի կոշտ քաղաքականության որդեգրմանը, ամերիկյան իշխանությունները չեն շտապում առավել սրել հարաբերությունները պաշտոնական Անկարայի հետ: Այս զարգացումները որոշակիորեն նպաստում են ԱՄՆ – Իսրայել հարաբերություններում լարվածության առաջացմանը:

Արաբա-իսրայելական բանակցային գործընթացի ազդեցությունը ԱՄՆ – Իսրայել հարաբերությունների վրա

Մենք արդեն նշել ենք, որ Օրամայի վարչակազմի առջև ծառայած կարևոր մարտահրավերներից մեկը արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման ուղղությամբ ջանքերի ակտիվացումն էր: Այս քաղաքականության նպատակներից մեկը մահմեդական աշխարհի հետ ԱՄՆ հարաբերությունների նորմալացումն էր, քանի որ երկկողմ անվտանգության հիմնական պատճառներից մեկը Իսրայելին ցուցաբերվող ԱՄՆ անվերապահ աջակցությունն էր: Մահմեդական աշխարհի հետ հարաբերությունների կարգավորմանն էր նվիրված 2009 թ. հունիսին Օրամայի ելույթը Կահիրեի համալսարանում, որտեղ նա անդրադարձավ նաև արաբա-իսրայելական հակամարտությանը¹⁸:

Արաբա-իսրայելական բանակցային գործընթացում Օրամայի վարչակազմը բավականին ակտիվ դիրքորոշում էր որդեգրել, ընդ որում նրա հիմնական նպատակը Իսրայելի իշխանություններից որոշակի զիջումներ կորզելն էր: Ամերիկյան նոր վարչակազմի կարծիքով, արաբա-իսրայելական հակամարտության գործընթացում տեղաշարժերի արձանագրումը կետույացներ մահմեդական ժայռահեղական խմբավորումների դիրքերը, ինչպես նաև կնվազեցնել Ալ Քաիդայի և այլ ահաբեկչական կազմակերպությունների կողմից նոր ահաբեկիչների հավաքագրման հնարավորությունը՝ միաժամանակ բարձրացնելով ԱՄՆ-ի վերկանիչը մահմեդական աշխարհում:

2009 թ. մայիսի 18-ին Օրամա-Նեքանյահու պաշտոնական առաջին հանդիպման ժամանակ ԱՄՆ նախագահը Իսրայելի վարչապետին առաջարկեց դադարեցնել Արևելյան երուսաղեմում իսրայելական բնակարանաշինության ծրագրերը: Իր հերթին պաղեստինյան կողմն այս պահանջի կատարումը նախապայման էր համարում բանակցությունների վերսկսման համար: Սակայն Իսրայելի

¹⁸ Remarks by the President on a New beginning, Cairo University, June 4, 2009, <http://www.whitehouse.gov/the-press-office/remarks-president-cairo-university-6-04-09>

աջակողմյան կառավարությունը միանշանակ պատրաստ չէր այդ պահանջի կատարմանը: Օրամայի հետ հանդիպումից մի քանի օր անց Նեթանյահուն հայտարարեց, որ Երուսաղեմը հրեաների հավերժական մայրաքաղաքն է, և այն այլևս երբեք չի բաժանվելու տարբեր մասերի¹⁷:

Միաժամանակ հարկ է նշել, որ Օրամայի վարչակազմում ևս միանշանակ տեսակետ չկար Արևելյան Երուսաղեմում բնակարանաշինության դադարեցման պահանջի նպատակահարմարության հարցում: Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի բանազնաց Ջորջ Միտչելը գտնում էր, որ նախքան արաբա-իսրայելական բանակցությունների սկիզբը Իսրայելին նման պահանջի առաջադրումը բացասական հետևանքներ կունենա գործընթացի համար: Սակայն Օրամայի աշխատակազմի ղեկավար, ծագումով հրեա Ռահմ էմանուելը, որը Պարսից ծոցի առաջին պատերազմի ժամանակ որպես քաղաքացիական մեխանիկ կամավոր ծառայել էր իսրայելական բանակում, պնդում էր, որ անհրաժեշտ է հենց սկզբից քննարկել բոլոր բարդ հարցերը: Մի շարք քննարկումներից հետո Օրաման հավանություն տվեց իր աշխատակազմի ղեկավարի առաջարկին¹⁸:

ԱՄՆ-Իսրայել հարաբերություններում լարվածության նոր անձրձանագրվեց 2009 թ. հուլիսի սկզբին, երբ Երուսաղեմի քաղաքային իշխանությունները որոշեցին քանդել Արևելյան Երուսաղեմում գտնվող հյուրանոցներից մեկը՝ այնտեղ հրեա վերաբնակիչների համար 20 նոր բնակարան կառուցելու նպատակով: ԱՄՆ-ի պետքարտուղարության ներկայացուցիչները հուլիսի 17-ին և 18-ին Կաշինգտոնում հանդիպումներ ունեցան Իսրայելի դեսպան Մայքլ Օրենի հետ՝ պահանջելով չեղյալ համարել այդ որոշումը¹⁹:

Սակայն Նեթանյահուն տեղի չտվեց այդ պահանջներին և արդեն հուլիսի 19-ին հայտարարեց, որ Երուսաղեմի ողջ տարածքում որևէ սահմանափակում չի մտցվելու հրեաների համար նախատեսված շինարարության համար: Միաժամանակ Օրամայի քննադատությամբ

¹⁷ Israel PM says Jerusalem will never be divided, <http://www.reuters.com/article/idUSLL96214120090521>.

¹⁸ Calabresi M., Bibi and Barack: Can They Bridge the Gap., <http://www.3me.com/time/printout/0,8816,1992200,00.html>

¹⁹ Daily Press Briefing, July 20, 2009, <http://www.state.gov/r/pa/pr/dpb/2009/july/126250.htm>.

սկսեցին հանդես գալ ԱՄՆ-ի հրեական լոբբիստական կազմակերպությունները, ինչպես նաև Ներկայացուցիչների պալատի և Սենատի հրեա անդամները: Երկկողմ բանակցությունների արդյունքում 2009 թ. նոյեմբերի 25-ին Իսրայելի կառավարությունը հայտարարեց բացառապես Արևմտյան ափում բնակարանաշինության տասանպատասեցման մասին՝ փաստացի մերժելով Արևելյան Երուսաղեմում նմանատիպ քայլ կատարելու ամերիկյան կողմի պահանջը²⁰:

Իսրայելի կառավարության այս որոշումից հետո ամերիկյան վարչակազմը շարունակեց ինտենսիվ շփումները կողմերի հետ՝ ցանկանալով հասնել առնվազն անուղղակի իսրայելա-պաղեստինյան բանակցությունների մեկնարկին: Այս գործընթացին աջակցելու նպատակով 2010 թ. մարտի սկզբին տարածաշրջան այցելեց փոխնախագահ Զոգեֆ Բայդենը: Ասկայն Բայդենի՝ Իսրայելում գտնվելու ժամանակ Երուսաղեմի քաղաքային իշխանությունները հայտարարեցին քաղաքի արևելյան հատվածում 1600 նոր բնակարաններ կառուցելու որոշման մասին²¹:

Իսրայելական կողմի այդ քայլը տհաճ անակնկալ էր ամերիկացիների համար: Պաղեստինյան իշխանությունները հայտարարեցին անուղղակի բանակցություններից հրաժարվելու մասին: Օրամայի վարչակազմի համար առավել ևս անընդունելի էր որոշման հրապարակման ժամանակը: 2010 թ. մարտի 12-ին ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը հեռախոսազրույց ունեցավ Նեթանյահուի հետ՝ նրանից պահանջելով ժամանակավորապես դադարեցնել շինարարությունը²²:

Այս խնդիրը ջնարկվեց մարտի 23-ին Վաշինգտոնում կայացած Օրամա-Նեթանյահու հանդիպման ժամանակ: Արդյունքում կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին, որի համաձայն Իսրայելի իշխանությունները չէին դադարեցնում Արևելյան Երուսաղեմում իրականացվող շինարարությունը, սակայն դրա փոխարեն բույլատրում

²⁰ U.S. Praises Netanyahu Plan, <http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2009/11/25/AR2009112500760.html>

²¹ 1600 New homes approved in East Jerusalem, <http://palestinenews.com/csblogs/news/archives/2010/03/09/1-600-new-homes-approved-in-e-jerusalem.aspx>.

²² Clinton calls Netanyahu over Israel settlement plans, <http://www.alertnet.org/thenews/newsdesk/N12139595.htm>.

էին պաղեստինյան մի շարք կազմակերպությունների գրասենյակներ քացել Արևելյան Երուսաղեմում:

Ի վերջո քանակցային երկարատև գործընթացից հետո ամերիկյան իշխանությունները 2010 թ. մայիսի սկզբին կարողացան հասնել կողմերի միջև անուղղակի բանակցությունների մեկնարկին: 2010 թ. մայիսի 26-ին մասնավոր այցով Իսրայելում գտնվող Ռահմ էմանուելը հանդիպեց Նեթանյահուի հետ և վերջինիս հրավիրեց հունիսի 1-ին այցելել Վաշինգտոն և հանդիպել Օրամայի հետ՝ խորայելա-պաղեստինյան բանակցություններին և Իրանի միջուկային ծրագրին առնչվող խնդիրների ըննարկման համար²³: Սակայն մայիսի 31-ին Չազալի ափամերձ հատվածում Չազալի ափ հումանիտար օգնություն տեղափոխող նավատորմի վրա իսրայելական հարձակումը, ինչի հետևանքով զոհվեցին Թուրքիայի քաղաքացիներ, հարկադրեց Նեթանյահուին չեղյալ հայտարարել Վաշինգտոն նախատեսված այցը:

Երկու երկրների դեկավարները հանդիպեցին Վաշինգտոնում 2010 թ. հուլիսի 6-ին: Իսրայելի վարչապետը պատրաստակամություն հայտնեց առաջիկա շաբաթների ընթացքում ուղղակի բանակցություններ սկսել պաղեստինցիներ հետ: Իր հերթին Օրաման ևս մեկ անգամ շեշտեց, որ ԱՄՆ-Իսրայել հարաբերությունները հատուկ նշանակություն ունեն ամերիկյան կողմի վրա՝ վերահաստատելով Իսրայելի անվտանգությունն ապահովելու ԱՄՆ-ի անվերապահ պատրաստակամությունը: ԱՄՆ-ի նախագահը նշեց առաջիկա շաբաթների ընթացքում իսրայելա-պաղեստինյան ուղղակի բանակցություններ սկսելու անհրաժեշտության մասին, որոնց վերջնական նպատակը պաղեստինյան անկախ պետության ստեղծումն է և միաժամանակ Իսրայելի անվտանգության ապահովումը²⁴:

Հարկ է ընդգծել, որ չնայած 2010 թ. հուլիսին կայացած հանդիպման ժամանակ կողմերը հայտարարեցին դիդերոտշումների մերժեցման մասին, ակնհայտ է, որ ադաբա-իսրայելական բանակցային գործընթացում Օրամայի վարչակազմի քաղաքականությունը լուրջ անհանգստություն է հարուցել իսրայելական իշխանությունների

²³ Celebrez M., Bibi and Barack: Can They Bridge the Gap, <http://www.time.com/time/printout/0,8816,1992200,00.html>

²⁴ Remarks by President Obama and Prime Minister Netanyahu of Israel in Joint Press Availability, July 6, 2010, <http://www.whitehouse.gov/the-press-office/2010/07/06/remarks-president-obama-and-prime-minister-netanyahu-israel-joint-press-availability>

շրջանում: Ցանկացած հարցում Իսրայելի պաշտպանությամբ հանդես գալու Քուշ Կրտսերի վարչակազմի գործելաճից նկատվող հետացումը չէր կարող բացասական ազդեցություն չբողմել երկկողմ հարաբերությունների վրա: Իսրայելական որոշ շրջաններ, ինչպես նաև ԱՄՆ-ի հրեական համայնքի՝ արաբա-իսրայելական քանակցային գործընթացում առավել կոշտ դիրքորոշում ունեցող մի շարք ներկայացուցիչներ Օրամային անգամ մեղադրում են հակասեմիտականության մեջ, ինչն ավելի է նպաստում երկկողմ հարաբերություններում անվտանգության խորացմանը:

Ամփոփելով հոդվածը նշենք, որ նշված ժամանակահատվածում ԱՄՆ – Իսրայել հարաբերություններում որոշակի սասնություն է նկատվում, որի հիմնական պատճառը մեր կողմից նշված երեք գործոններն են: Ներկայումս ԱՄՆ – Իսրայել հարաբերությունները թեև պահպանում են իրենց ռազմավարական դաշնակցային բնույթը, սակայն ԱՄՆ-ը այլևս հանդես չի գալիս Իսրայելի միանշանակ աջակցությամբ, իսկ մի շարք դեպքերում Օրամայի վարչակազմի դիրքորոշումը էականորեն տարբերվում է հրեական պետության տեսակետներից:

Իր հերթին, Իսրայելը հաջողությամբ ընդդիմանում է իսրայելա-պաղեստինյան բանակցային գործընթացում ԱՄՆ-ի կողմից իրականացվող ճնշումներին՝ հստակ ցույց տալով, որ չնայած ԱՄՆ-ի հետ դաշնակցային հարաբերությունները էական նշանակություն ունեն Իսրայելի ռազմավարական - անվտանգային շահերի ապահովման տեսակետից, նա մտադիր չէ զիջումների գնալ իր համար կենսական կարևորություն ներկայացնող հարցերում:

BENIAMIN POGHOSYAN

MAIN TRENDS IN US-ISRAEL RELATIONS (2009-MID 2010)

The Obama administration came to power with a promise to make fundamental changes in US domestic and foreign policy. Among many challenges facing new American administration was the reinvigoration of the Middle East peace process. Any serious actions in this direction would inevitably influence the US-Israel relations.

During 2009-2010 period both countries faced deterioration in mutual relations. Among main factors influencing this process were new American policy toward Iran offering Tehran a possibility of direct negotiations to solve Iran's nuclear program issue, which was perceived in Israel as a sign of US weakness and the exclusion of military solution of Iran's problem from American foreign

policy agenda, the setbacks in Israel – Turkey relations and simultaneous efforts by Obama administration to positively engage Turkey in US new Middle East Policy.

The main reason of negative developments between two countries were Obama administration's efforts to push Israel toward some concessions in the Middle East peace process including the freezing of all Israeli settlement activities in West Bank and East Jerusalem. New American administration abandoned the Bush policy of supporting all Israeli actions and insisted on more balanced approach. Meanwhile Benjamin Netanyahu government overtly rejected some US suggestions especially regarding the settlement activities in East Jerusalem only announcing the temporarily moratorium of settlements in East Jerusalem.

Despite all the problems two countries continue their strategic cooperation in different fields. Meanwhile in some cases parties pursue different policies often overtly criticizing each other which is a clear sign of serious changes in mutual relations during this period.

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՄԱՐԻԱՍ ԽԱՆՁԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՂ ԵՃՐՈՒՅՑԻ ԵՈՒՋ

Էթնոգենեզի հետ կապված հարցերը վերջին տասնամյակներում մեզանում անհարկի սրությամբ են ձեռք բերել¹: Մի կողմ թողնելով սույն երևույթի խորացման պատճառները և գիտության համար ոչ քանկալի հետևանքները, փորձենք ձևակերպել, թե ինչպիսի հենքի վրա պետք է ընթանա էթնոգենետիկ գործընթացների գիտական ուսումնասիրությունը:

Եթե էթնոգենետիկ գործընթացների վերջավելոց միասնական էթնիկ ինքնագիտակցության ձևավորումն է², ապա այս գործընթացի սկիզբը սովորաբար դժվար նշմարելի է. էթնոգենետիկ գործընթացների «խմորումը» սովորաբար դուրս է մնում գիտության տեսադաշտից՝ անհրաժեշտ սովյալների բացակայության կամ սակավության պատճառով: Միայն կարող ենք փաստել, որ էթնոգենեզը տևական և քարդ գործընթաց է:

Էթնոսն, ինչպես քաղմիցս նշվել է, բաղկացած է առնվազն մի քանի շերտերից: Այդ շերտերը կամ արմատներն ամփոփված են չորս հարթություններում՝

- մարդաբանական
- լեզվաբանական
- պատմական-տղիալական
- հոգևոր-մշակութային, ներառյալ պաշտամունքային:

Այս հարթությունները կամ մատրիցաները համաժամանակյա երևույթներ չեն: Դրանցից յուրաքանչյուրն ունի առաջացման, զարգացման և ավարտի իր օրենքներն ու

¹ Խանզարյան Մ., Էթնոգենեզի որոշ ապակետների շուրջ, Մեծավրդ Արևելք, հ. VI, Երևան, 2009:

² Бромлей Ю., Очерки теории этноса, Москва, 1983, с. 58, 173-200; Арутюнов С., Чебоксаров Н., Передача информации как механизм существования этносоциальных и биологических групп человечества, Расы и народы, Москва, 1972, № 2, с. 11.

ասանձնահատկությունները: Պատմական որևէ փուլում նրանք կարող են հատվել, և հետագա ընթացքն ու զարգացումը շարունակել համակցված, բայց և կարող են ընդհանրապես չհամընկնել, և մեկ ընդհանրական համակարգի շրջանակներում հայտնվել միայն կոնկրետ պատմական գործընթացի միջավայրում ի հայտ գալու հետևանքով:

Հայոց էթնոգենեզի հետ կապված մարդաբանական հենքի ուսումնասիրությունը ունի մի շարք ասանձնահատկություններ, կապված հայերի ժառանգական պատկանելության և գիտության մեջ տեղ գտած *արմենոիդ ռասա* տերմինի հետ:

Գիտական շրջանառության մեջ այս տերմինը մտել է 20-րդ դարի սկզբներից: Մարդաբանական այս տիպը ասացին անգամ նկարագրել է ֆրանսիացի մարդաբան Ժ. Դենիկելը 1900 թ. ամբողջ անվանման տակ³: 1920-30-ական թվականներին շրջանառության մեջ մտավ *արմենոիդ ռասա* արտահայտությունը⁴: Մարդաբանական այս տիպի մեջ ներառվեցին եվրոպեոիդ ռասայի այն ներկայացուցիչները, որոնք բրախիկեֆալ (կլորագլուխ) են, միջահասակ, ունեն համեմատաբար լայն դեմք, խիստ զարգացած երրորդային մազածածկույթ և մեծ կրկնաբարո թիթ:

XX դարի կեսերին «արմենոիդ ռասա» տերմինը աստիճանաբար սկսում է փոխարինվել «բալկանա-կովկասյան» կամ «ասաջավորասիական ռասա» տերմինով⁵: Պատճառն այն է, որ

³ Denker J., Les races et les peuples de la terre. Elements d'anthropologie et d'ethnographie, Paris, 1900; Денкер Я., Человеческие расы. Санкт-Петербург, 1902.

⁴ «Արմենոիդ» տերմինը օգտագործվել է բազմաթիվ դասակարգումների մեջ (Montandon G., L'origenise humaine, Paris, 1928 (ստեղծումը Բյուսե Բ., Pour Homo, ergo socium nostrum u postulemosque socium, Москва, 1980, с. 279-287); Լույնի՝ La race, les races, Paris, 1933; Eickstadt E., Rassenkunde und Rassen Geschichte der Menschheit, Stuttgart, 1934; Բրեո Ա., (s) книга Бюнак В., Нестурж М., Рогинский Я., Антропология, краткий курс, Москва, 1941); Coon C., The Races of Europe, New York, 1939; Hooton E., Up from the ape, New York, 1946; Blasutti R., Le razze e i popoli della terra, New York, 1941; Baker J., Race, Oxford, 1974):

⁵ «Բալկանա-կովկասյան ռասա» տերմինը ասաջ քաշվեց 1951 թ. խորհրդային մարդաբան և Չեռնոբարովի կողմից ուսալագիտության պարսլացիոն տեսության զարգացման շրջանակներում: Այս ռասայի մեջ ներառվեցին չորս ենթատիպեր՝ ալպիական (կլպեր), դիմադյան (Բալկաններ), արմենոիդ (ամբողջ եվրասիա, աստվել մեծ խոտայամբ՝ Հայաստան, Փոքր Ասիա, Սիբիա, Կիբանան, Իրան, Անդրկովկաս), կովկասիոնիկ տիպ (Հյուսիսային Կովկաս): Այս անվանումը պահպանվեց Յա.Ուոզինսկու և Մ.Ա.Լինի մարդաբանության դասազրցի մեջ (Рогинский Я., Левин М., Антропология,

արմենոիդ անվանումը էթնիկ քննադրիչ է պարունակում, իսկ արմենոիդ սասային քննողը հատկանիշներն առկա էին ոչ միայն հայերի, այլև Առաջավոր Ասիայի և Կովկասի այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչների մոտ⁶:

Արմենոիդ կամ առաջավորասիական սասայի ձևավորման ժամանակաշրջանը: Եթե մեծ սասաների ձևավորումը վերագրվում է պալեոլիթի վերջին փուլին և մեզոլիթին, ապա փոքր սասաների ձևավորումն ըստ Վ.Քունակի⁷ սկսվում է նեոլիթից և շարունակվում մինչև բրոնզի, նոյնիսկ՝ երկաթի դար: Չստ կարծիքների մի մասի, արմենոիդ սասայական ենթատեսակը սկսել է ձևավորվել ավելի վաղ շրջանում առկա երկու ճյուղերից մեկի (լայնադեմք և նեղդեմք, որոնցից լայնադեմքը դարձել է կովկասիոնիկ մարդաբանական տիպի հիմքը, իսկ նեղդեմքը՝ արմենոիդ) հենքի վրա: Այս ճյուղը, ենթարկվելով քրոնիկեթայիզացիայի (գանգի կարճացում և լայնացում), դարձել է արմենոիդ ենթատեսակի հատկանիշների համալիրի ձևավորման հիմքը: Այդ հատկանիշների ձևավորման սկիզբը Վ.Ալեքսեևը համարում է բրոնզի դարաշրջանը⁸, իսկ Ն.Քոչալը, հիմնվելով դերմատոլոգիֆիկայի (ծեղքի ավի և ուտնաթաթի մաշկի մակերեսի պատկերար գծերի ուսումնասիրության, տես իդումը⁹) տվյալների վրա,

Москва, 1978), և Ալեքսեևի 1974 թ. իրատարակված "География челоуеческих рас" աշխատության մեջ: 1990 թ. Մ.Արդուշելիշվիլին առաջարկեց սասաների իր բաժանումը, որտեղ որպես «արմենոիդ» հավաքության հոմանիշ հանդես է գալիս «առաջավորասիական մարդաբանական տիպը»: Որպես տարբերակներ գրականության մեջ հանդիպում են նաև, *արարողնի տիպ, սիբիր-գաղտնյան տիպ, հայտնի-փայտյան տիպ (նույն Արդուշելիշվիլու մոտ), անդրկովկասյան տիպ, տարբերական տիպ, ձերական տիպ:*

⁶ Քանի որ արմենոիդ սասայական տեսակի հատկանիշների համալիրը հայտնաբերվել է նաև Առաջավոր Ասիայի և Կովկասի շատ պոպուլյացիաներում, այդ իսկ պատճառով ժամանակակից մարդաբանական գրականության մեջ ավելի նպատակահարմար է օգտագործել «առաջավորասիական սասա» հավաքությունը, քանի որ «արմենոիդ» տերմինը ձեռք է բերում էթնիկ և աշխարհագրական ենթակոնցրատ: Кочар Н., Антропология армян. Дерматоглифика и популяционная структура, Ереван, 1989, с. 26-27.

⁷ Буняк В., Расе Homo..., с. 269-278.

⁸ Ալելի մանրամասն տե՛ս Ալեքսեև Վ., География..., 1974; Происхождение народов Кавказа, Москва, 1974; Буняк В., Crania America, Москва, 1927.

⁹ Դերմատոլոգիֆիկա - մարդու ձևաբանության բաղկացուցիչ ճյուղ, որն ուսումնասիրում է ծեղքի ավի և ոտնաթաթի մաշկի մակերեսի պատկերար գծերը: Ձանգվածային ուսումնասիրության դեպքում ի հայտ են գալիս աչ-մաշկ, սեռական և տարածքային տարբերություններ, ինչը թույլ է տալիս օգտագործել այդ տվյալները տարբեր

ռասայի ձևավորումը վերագրում է նեոլիթի ժամանակաշրջանին¹⁰։ Ընդգծենք, որ վերը նշված քվազրումները, ըստ մասնագետների, ընդամենը նշում են ռասայի հատկանիշների համալիր ձևավորման սկիզբը, իսկ դասական արմենոիդ համարվող գանգառեսակները Առաջավոր Ասիայում և մասնավորապես Հայկական լեռնաշխարհում հայտնվում են միայն առաջին հազարամյակում¹¹։

Բրախիկեֆալիզացիա (Գանգի կարճացում և լայնացում)։ Մանրամասնենք վերը նշված գործընթացը՝ բրախիկեֆալ (կրորագլուխ) գանգառեսակը, որը լայն տարածում ունի ժամանակակից հայերի մոտ, ձևաբանական ուշ փոփոխությունների արդյունք է։ Մասնագետների կարծիքով, սկզբնական շրջանի դոլիխոկեֆալ (երկարագլուխ) գանգառեսակները ենթարկվել են աստիճանական կարճացման և լայնացման։ Դա երևույթ է, որը բնորոշ է համարյա թե քոլոր լեռնային գոտիներին։ Բրախիկեֆալիզացիան տվյալ դեպքում ենթադրում է նախկինում գոյություն ունեցող դոլիխոկեֆալ գանգառեսակների ծոծրակաչին հատվածի աստիճանական կարճացում ու լայնացում։ Նման ձևաբանական փոփոխության պատճառ համարվում է լեռնային պայմաններին հարմարվելու գործընթացը։ Այնուամենայնիվ նշենք, որ այս ուղղությամբ ուսումնասիրությունները դեռևս չարունակվում են և հնարավոր են նոր մեկնաբանություններ¹²։

Գենետիկ հետազոտություններ։ Այժմ լայն քափով ընթացող մարդաբանական և գենետիկ հետազոտությունների հետևանքով հնարավոր է վեր հանել կոնկրետ անհատի ծագումնաբանությունը՝ հենվելով նրա գենոմի մեջ պարունակվող միտախոնդրիալ գենոմի (կանանց պարագայում) կամ Y-քրոմոսոմի (տղամարդկանց պարագայում) ուսումնասիրության վրա¹³։ Սակայն նման

մարդկային խմբերի կամ պոպուլացիաների միջև ազգակից հարաբերությունների ուսումնասիրության քննազատում։

¹⁰ Кочар Н., *Антропология армян...*, с. 89.

¹¹ Բրախիկեֆալիզացիայի մասին ավելի մանրամասն տե՛ս ԲԶԻՅԵՎԿԵՅԻՍՄ Մ., *Антропология древнего и современного населения Грузии*, Тбилиси, 1964; Алексеев В., *География...; Происхождение народов...; Дебел Г., Заселение Южного и Переднего Азии по данным антропологии*, т. 16, Москва, 1951; Кочар Н., *Антропология армян...*, Ереван, 1989.

¹² Герни О., *Хомпы*, Москва, 1987, с. 188. Այս հարցերը քննարկված են նաև Վելֆրադ Թեոֆալդի *Anthropologie von Südwestasien* 1993 թ. աշխատության մեջ։

¹³ Վերջին տարիներին նման մարդաբանական հետազոտություններ հայերի հետ

ուսումնասիրությունները դեռևս զանգվածային քնույթ չեն կրում կապված նման հետազոտությունների համար պահանջվող մեծ միջոցների հետ: Նշենք, որ այս ուսումնասիրությունների արդյունքները պետք է զգուշությամբ օգտագործել էթնոգենետիկ վերակառուցումների ժամանակ թեկուզ հենց այն պարզ պատճառով, որ հետազոտություններին մասնակցող անձը կարող է ներկայանալ որպես "թուրք", "վրացի" կամ "ադրբեջանցի", իրականում էթնիկ առումով լինելով թուրքացած հայ, հույն կամ ասորի: Առավել ճշգրիտ և գիտական տեսակետից ավելի կոռեկտ կարող են լինել պեղումների ընթացքում վերհանված մարդաբանական նյութի հետազոտության արդյունքները:

Այսպիսով, հանրագումարի բերելով *արմենոիդ օստա* տերմինի վերաբերյալ առկա կարծիքները, կարող ենք փաստել հետևյալը. *արմենոիդ* օստայական տիպին քնոդոշ հատկանիշները առկա են որք Առաջավոր Ասիայի մի շարք ժողովուրդների մոտ՝ ներառյալ Հայկական Լեռնաշխարհը, Արևելյան Միջերկրականը, Իրանական սարահարթը և Հարավային Կովկասը: Այս օստայական տեսակը անցել է զարգացման իր ուղին, ենթարկվելով ձևաբանական էական փոփոխությունների: Հայկական Լեռնաշխարհը, որպես լեռնային տարածաշրջան, կարող է լինել այս պոպուլյացիոն տեսակի ձևավորման վայր, սակայն դա առավել հանգամանալի հետազոտություններ է պահանջում, և ըստ էության կարևոր է զուտ մարդաբանական, այլ ոչ թե էթնոգենետիկ տեսանկյունից: Բացի այդ, արմենոիդ զանգատեսակը Հայկական լեռնաշխարհում հանդիպող միակ զանգատեսակը չէ: Այն կարելի է ընդունել որպես հայերի էթնոգենեզի մարդաբանական հիմք, բայց հնարավոր չէ և հակազիտական է դրա բացարձակացումը և հայերի էթնոգենեզի համակցումը միմիայն օստայի ձևավորման և զարգացման հետ:

Մարդաբանական տիպ և էթնիկ սահմանում կապը կասկած չի կարող հարուցել միայն մեկ դեպքում, եթե այն աշխարհագրական տարածքը, որտեղ ձևավորվել է տվյալ էթնոսը, եղել է մեկուսացման

կապված անցյալով են Սեմ Բրիտանիայում, որոնց տվյալները հրատարակվել 2004 թ. (Nasidze I., Ling E.Y.S., Quinque D., Dupanloup I., Cordaux R., Rychkov S., Neumova O., Zhukova O., Semaf-Zadegan N., Naderi G.A., Aghary S., Sardes S., Farhud O.D., Sarkisian T., Asadov C., Kerimov A., Stoneking M., Mitochondrial DNA and Y-Chromosome Variation in the Caucasus, *Annals of Human Genetics*, London, 2004): Սակայն այս տվյալներն առավել մանրամասն գիտական քննարկման կարիք ունեն:

մեջ և որևէ կապ չի ունեցել հարևան տարածաշրջանների հետ: Ասել, որ Առաջավոր Ասիան ընդհանրապես, և Հայկական Լեռնաշխարհը՝ մասնավորապես, եղել են մեկուսացման մեջ, առնվազն լուրջ չէ: Ավելին, նույնիսկ այն փաստը, որ արմենոիդ ենթատիպը ցայտուն ներկայացված է հայերի մեջ, և գերակշռում է, բնավ չի նշանակում, որ այդպես է եղել նաև հազարամյակներ առաջ: Տարբեր ենթատիպերի հարաբերակցությունը տվյալ էթնոսի մեջ կարող է ենթարկվել փոփոխությունների դարերի ընթացքում, իր մեջ նոր տարրեր ընդունելու, «գեների դրեյֆի»¹⁴, մուտացիաների (գենետիկ ծրագրերի վերարտադրումը տեղի է ունենում քարձր, քայք ոչ քացարձակ ճշգրտությամբ, երբեմն ծրագիրը "սխալվում" է - տեղի է ունենում *մուտացիա*: Մուտացիաները պոպուլյացիայի գենետիկ փոփոխականության աղբյուրն են), այլևայլ կենսաբանական օրենքների հետևանքով և այլն: Բարձր լեռնային գոտիներում կարող էին պահպանվել «պալեոնեոլիթական» ռասայի մնացուկներ, տարաբնույթ միգրացիաների և հարևան շրջանների հետ չփճան ընթացքում լեռնաշխարհի կարող էին բազմաթիվ ներհոսքեր լինել, այդ թվում և այլ ռասայական ենթատիպերի, որոնք հավասար հիմունքներով մասնակցել են ներլեռնաշխարհային ինտեգրացիոն գործընթացներին, այդ թվում նաև հայերի էթնոգենեզին:

Այսպիսով, *արմենոիդ ռասա* և *հայ* պարտադիր համակցումը պիճարկելի դրույթ է, գիտության մեջ արմենոիդ տերմինն օգտագործելիս անհրաժեշտ է հնարավորինս խուսափել կենսաբանական բնութագրիչների և նրանց էվոլյուցիային վերաբերող շերտը (ինչը ռասայի շրջանակներում տեղի ունեցող բնական գործընթաց է՝ *ռաստգենեզ*) սոցիալ-պատմական բնութագրիչների և գործընթացների մակաշերտին (*էթնոգենեզ*) համակցելուց:

Վերը նշված օրենքներով պայմանավորված՝ մարդաբանական տվյալները հանդես են գալիս որպես ինքնուրույն նշանակություն ունեցող պատմական աղբյուր¹⁵, և դրանց կիրառումն էլ

¹⁴ *Գեների դրեյֆ* (կամ *գենետիկա-ալոտոմատ գործընթացներ*) - պատահական տատանումներ հետևանքով պոպուլյացիայի մեջ առկա գեների այլեպիս նախորդակների համախառնության ոչ ուղղորդված փոփոխություններ: Գեների դրեյֆի հետևանքով պոպուլյացիան կարող է գենետիկորեն ավելի միատարր դառնալ, քայք և նման գեներ ունեցող պոպուլյացիաները կարող են կորցնել սկզբնական նմանությունները և անջ:

¹⁵ Хрещанова Е., Переяслова И., Антропология, Москва, 1999, с. 274.

պատմագիտության մեջ պետք է խարսխված լինի այս
առանձնահատկությունների գիտական ընկալման և մեկնաբանման
վրա:

MARIAM KHANZADYAN

ON THE TERM ARMENOID

The article deals with the nuances of deployment of anthropological studies, aimed on ethnogenetic studies. In particular, the history of the term "Armenoid race" is discussed.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

ԻՐԱՆԻ ՊԱՍՏՏԱԿԱՆ ՊԱՏՏԱԳԻՐ ՍԱՐԱԿԻՆ ԱՊԱ ՍՈՒՎԱՍՏԱՐԴ
ԽԱՆԻ 1796 թ. ԴԱՐԱՔԱԴՅԱՆ ԱՐՇԱԿԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Մուհամմադ Ֆաթհալլահի իրն Մուհամմադ Թաղի Սարալին եղել է Աղա Մուհամմադ շահի ժամանակաշրջանի բանաստեղծներից ու նրա պաշատական պատմագիրը:

Հարուստ չեն հեղինակի մասին մեզ հասած կենսագրական տվյալները: Նա ծագումով Մազանդարանի սարի ցեղից էր: Հայտնի չեն նրա ծննդյան և մահվան թվականները, հայտնի է միայն այն, որ նա եղել է «Նադիրի պատմության» հեղինակ Միրզա Մեհդի խան Անտարաբադիի աշակերտը և, ստանալով իր ժամանակի համար լավ կրթություն՝ գտնվել է Աղա Մուհամմադի խանի մոտ պետական ծառայության մեջ:

Հեղինակը որևէ տեղ չի հիշատակում իր «Թարիխ-ե Մուհամմադի» (Մուհամմադի պատմությունը)¹ աշխատությունը գրելու ժամանակը: Այս երկը հրատարակող Ղոլամ Ռեզա Թարաբաբայի Մաջդի ենթադրությամբ հեղինակը այն սկսել է գրել 1785-1786 թվականներին՝ 1217 հ.թ. (1802/3 թ.) Սարալին թագաժառանգ Աբբաս Միրզայի պատվերով գրում է նաև «Ֆաթհալի շահի պատմությունը»:

«Մուհամմադի պատմություն» աշխատությունը գրվել է Աղա Մուհամմադ շահի պատվերով: Այն ընդգրկում է Ջենոյան արքայատոհմի վերջին 18 տարիների և հետագա մինչև Աղա Մուհամմադ շահ Ղաջարի մահն ընկած ժամանակաշրջանի (1761-1797 թթ.) պատմությունը: Այս երկը գրված է պարսկալեզու պալատական պատմագրությանը բնորոշ ներդրողական խորին ոճով, որը խճողված է անականներով: Հիշյալ հեղինակի հաղորդումները չնչին

¹ Հեղինակը ջանալով նմանակել «Հասան Ռումլուին» վերջինիս աշխատության օրինակով իր երկն անվանել է նաև «Ախսան ալ-Թավադդիս»:

محمد فتح الله بن محمد تقي ساروي تاريخ محمدان تهران ۱۳۳۱، ص ۱۱

փոփոխություններով իր պատմագրական «Ռուզնաթ ալ-Մաֆայե Նասերի» (Նասերի մաքրության ծաղկանոց) երկում օգտագործել է XIX դարի երկրորդ կեսին Ռեզադուլի խան Հեդայաթը³: ժամանակագրական առումով նկարագրվող դեպքերին մոտ գտնվող և դրանցից շատերին ականատես իրանցի պատմագիրը առատ տեղեկություններ է հաղորդում Աղա Մուհամմադ խանի կողմից Հարավային Կովկասի իշխանությունները իրեն հպատակեցնելու նպատակով ձեռնարկած միջոցառումների մասին: Նա հետաքրքրական փաստեր է արձանագրում Աղա Մուհամմադ խանի 1795 թ. Ղարաբաղյան արշավանքի ընթացքում տեղի ունեցած դեպքերի մասին, որոնք հաստատում ու լրացնում են հայկական աղբյուրների պահպանած տվյալները տեղի ու իրանական ուժերի միջև ծագմական ընդհարումների և հայ ու այլալեզու քնակիչների դիմադրական կռիվների մասին, որոնք մանրամասն ներկայացվել ու քննվել են Տիտանյանի աշխատության մեջ⁴:

Իրանի գահին հավակնող Աղա Մուհամմադ խանը 1791 թվականից ջանում է իրեն հնազանդեցնել Ատրպատականի ու Հարավային Կովկասի խաներին և այս հարցում որոշ հաջողությունների է հասնում: Ըստ Բուտկովի՝ 1793 թ. ամռանը Աղա Մուհամմադ խանը Սուլեյման խանին հաստատելով Ատրպատականի փոխարքա՝ 6000 զորքով ուղարկում է Թավրիզ և կարգադրում հավաքել այնտեղի բոլոր խաներին ու պահանջել նրանցից դրդել Ղարաբաղի Իբրահիմ խանին հնազանդվելու Աղա Մուհամմադ խանին⁵: Իրանի պալատական պատմագիրը հաստատելով Բուտկովի այս տեղեկությունները՝ նոր մանրամասներ է ավելացնում Ղարաբաղի խանի ու Սուլեյման խանի միջև Աղա Մուհամմադ խանին հպատակվելու շուրջ 1793-94 թթ. ընթացող բանակցությունների, վերջինիս սպառնալիքների մասին: Իսկ պատմագրի այն վկայությունը, որ Սուլեյման խանի սպառնալիքներից վախեցած Իբրահիմ խանը ապաստանում է Շուշի բերդում, հնարավոր է դարձնում Հակոբ Չաքարյանցի հաղորդումների հավաստիությունը այդ շրջանում Ղարաբաղ ներխուժած պարսից զորավար Սուլեյման

³ رشادعليخان منابث، روضة الصفاء، تاصرف، جلد ۸، تهران، ۱۳۳۹، ص ۳۳۹-۳۴۰.

⁴ Տիտանյան Ռ., Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.), Երևան, 1981:

⁵ Бутков П., материалы для новой истории Кавказа, т. 2, Санкт-Петербург, 1869, с. 328.

Ղաջարի զորքերի կողմից իրականացրած ասպատակությունների մասին⁸:

Եեն իրանցի պատմագիրը եղել է իր նկարագրած դեպքերի ժամանակակիցը և հաճախ ականատեսը, այնուամենայնիվ նրա հաղորդումներին պետք է զգույշ մոտեցում ցուցաբերել:

Խոսելով Աղա Մուհամմադ խանի կողմից Շուշիի պաշարման մասին իրանցի պատմագիրը նշում է, որ նա «կանգ է առնում Շուշի քերդի մոտակայքում, և իր հրածիզ թնդանոթները քերելով «Ֆաթհայի խանի ամրություն» կոչվող վայրը՝ այնտեղ կրակի օջախ հաստատում»⁹: Ինչպես նշում է Ղարաբաղի պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսյանը, այդ ամրությունը կառուցել էր 1758 թ. Ղարաբաղ ներխուժած Ուրմիայի Ֆաթհայի խան Աֆշարը Բալլուզեղայայի ու Խոջալուի միջև ընկած մի ընդարձակ դաշտում ճանապարհի եզրին¹⁰: Այդ ամրությունը սակայն չափազանց հեռու էր Շուշիից, որպեսզի հնարավոր լիներ այնտեղից գնդակոծել քերդաքաղաքը այն ժամանակվա ռազմական տեխնիկայով: Բացի այդ, խոսելով Ասկերան ուղարկված իրանական զորքի մասին, հեղինակը նշում է, որ նրանք հեռու էին շահի քանակատեղիից 4 ֆարսանգ (մոտ 24 կմ) է, մինչդեռ հիշյալ վայրի հեծավորությունը Ասկերանից շատ ավելի փոքր է:

Այս հարցում ավելի հավանական է թվում Ներսեսյանի վկայությունը, ըստ որի Ղարաբաղ ներխուժած Աղա Մուհամմադ խանի քանակը կանգ էր առել Շուշիի մոտակայքում Զանախչիի (Ալվետարանոցի) ու Շուշիքենդի¹¹ միջև գտնվող Նաբաթխան կամ Շահյուրտ կոչված վայրում¹²: Ըստ Ներսեսյանի այստեղ Իրանի ապագա շահը, իր քանակատեղիի շուրջը «ամրություններ է կառուցում, դրոնց հետքերը այժմ էլ կան»¹³: Իսկ «Ֆաթհայի խանի ամրությունում» ամենայն

⁸ Մադայան Ա., Ցանրթ Չաքաբանի «Պատմություն գառափն Արցախում» աշխատությունը, Հանդես Ամսօրեայ, Կիենա, 2006, էջ 349-350:

⁹ محمد فتح الله بن محمد تقي ساروقی، تاریخ محمدی، ص 174

¹⁰ Միրզա Յուսուֆ Ներսեսյան, Ճյուղարտացի պատմություն, Երևան, 2000, էջ 59-60:

¹¹ Ըստ Ղ. Ալիջանի Շուշաքենդը Շուշի քաղաքից մեկ ժամ հեռու Գարգալի այլ կողմում գտնվող հին Շուշի գյուղն է (Ալիջան Ղ., Արցախ, Երևան, 1983, էջ 110):

¹² Միրզա Յուսուֆ Ներսեսյան, Ճյուղարտացի պատմություն, էջ 67:

¹³ Ղարաբաղի ազգագրական նյութերն ուսումնասիրելիս Նրվանդ Լալայանը նշում է, որ «Նաբաթխան» (պարսկերենից թարգմանաբար նշանակում է «խանի այգի») է կոչվել Կարանդայի դաշտերից մեկը, (տե՛ս Լալայան Ծ., Երևան, հ. 2, Երևան, 1988, էջ 16):

հավանականությամբ հաստատվում է Ասկերանը գրավելու ուղարկված պարսկական զորագունդը:

Սարալին պաթեռիկ ոճով խոսում է Աղա Մուհամմադ խանի Ղարաբաղում ունեցած մարտական հաջողությունների ու անողոք կոտորածների մասին: Սակայն պատմագրի ստորև ներկայացվող հաղորդումներին ծանոթանալիս չպետք է մոռանալ, որ նա որպես Աղա Մուհամմադ խանի պալատական պատմագիր պարտավոր էր զովաբանել իր տիրակալին և այք փակել նրա անհաջողությունների վրա: Եւ իր այդ ներքողական ոճում երբեմն այնքան հեծու է գնում, որ Շուշի բերդից Աղա Մուհամմադ խանի հեռանալուց առաջ խոսում է Իբրահիմ խանի խնդրանքին ընդատաջ գնալու ու «մեծահոգաբար» նրան հանգիստ թողնելու մասին: Թեև Թիֆլիսյան արշավանքից անմիջապես հետո նշում է Սուլեյման խանին կրկին Ղարաբաղի խանի դեմ ուղարկված լինելու և նրա տարածքը ավերելու մասին:

Չնայած պատմագրական երկի քովանդակության վերջ նշված մանր անճշտություններին ու ներքողական ոճին, այն բարձրարժեք սկզբնաղբյուր է, որտեղ գտնում ենք նաև հայ ժողովրդի պատմության հիշյալ ժամանակահատվածին վերաբերող կարևոր անդրադարձներ կապված Աղա Մուհամմադ խանի կողմից XVIII դարի 90-ական թթ. Ղարաբաղը հպատակեցնելու նպատակով ձեռնարկված քայլերի հետ, որոնք կներկայացվեն սույն հոդվածի շրջանակներում:

Թարգմանաբար ներկայացվող հատվածում բազմակետերով փոխարինվել են հեղինակի երկարածիզ նկարագրությունները, որոնք ավելորդ երկարաբանությամբ ծանրացնում են տեքստը:

Թարգմանություն

(240) Այն տարի¹², երբ ողորմած տերը արքայական միտքն ուղղեց դեպի Ատրպատականի նվաճումը, քոլոր այն դրախտային վիլայեթները¹³ հպատակվեցին թագավորական շեմքի նվիրյալներին և անցան միապետի տիրապետության տակ: Այն երկրի պատվարժան ու զորեղ քոլոր խաները եկան համբուրելու Ալլահի սուվերի ուղեբերը և գլուխ խոնարհելու նրա առաջ: Իբրահիմ Խալիլ խան Ջևանշիրը, որն Ատրպատականի ազդեցիկ խաներից էր, չեկավ փաստապան՝

¹² 1791 թ.:

¹³ Վիլայեթ – Երկիր, երկրամաս, նահանգ:

տիրակալի մոտ: Աստղային համաստեղությունում բնակվող Նորին Մեծությունը լռեց և նրա [Իբրահիմի] պահվածքը ժամանակակից համարելով՝ նրան չնեղեց, [կարծելով], որ աստիճանաբար կհաստատակվի և կգա, գլուխ կխոնարհի քարձրագույն շնքի առաջ:

Երբ այդպես մեկ տարի անցավ, իսկ [Իբրահիմ խանը] հպատակություն չհայտնեց ու չեկավ արքայական ուղքի հողը համբուրելու, անմրցակից քազավորը, Ֆարսի ու Քերմանի զործերը կարգավորելուց հետո դարձավ դեպի Իսֆահան՝ այն ծածկելով իր փաստաեղությամբ, այնուհետև Սուլեյման խանին ընտրյալ զինվորականներից 6000 հոգով հեծյալ գնդերի զորավարներ Աբդալլահ Ուսանլուի, Քուլիայի Ալի Համմաթ խանի և Ուրմիայի Աքար խանի Աֆշարի հետ ուղարկեց Ատրպատականի կողմերը¹⁴...

(241) Սուլեյման խանը Նորին Մեծությունից հեռանալով՝ գալիս մտնում է Թավրիզ: Նրա ժամանելուց հետո Սադեղ խան Շադադին, Նասիր խան Շահսևանը, Նախիջևանի Քալբալի խանը, Երևանի Մուհամմադ խանը, Գանձակի Ջավադ խանը, Մալաղայի Ահմադ խանը, Բայազետի կառավարիչ Իսհաղ Փաշան, որոնք բոլորը հայտնի էին իրենց արդարամիտ նկարագրով, գալով Սուլեյման խանի մոտ, ծառայության են անցնում:

Իբրահիմ խալիլ խանը որոշ ժամանակ անց իր նշանավոր մարդկանցից երկուսին ուղարկում է Սուլեյման խան Սարդարի¹⁵ մոտ և հնազանդություն հայտնում: Քանի որ Ատրպատականի որոշ խառնակիչ մուրդալներ արտաքնապես համաձայնության էին եկել Իբրահիմ խալիլ խանի հետ, բայց ներքուստ կեղծում էին և նրան վախեցնում շահական բռնազանձումներով, նա այդ ժամանակ իր մարդկանց հասկացրեց, որպեսզի ուշադիր հետևեն և տեղեկացնեն սարդարի վիճակի ու նրա պաշտոնյաների խոսքերի մասին, որպեսզի իր քարեկամների ու կողմնակիցների խոսքերի կեղծն ու շիտակը հայտնի դառնա:

Սուլեյման խանը, որ պերճախոս ու խիզախ մարդ էր, ուղարկվածներին սիրալիկ կերպով ընդունում է: [Նրանց] հեռանալու

¹⁴ Ինչպես ստորև նշվում է, այս դեպքերը տեղի են ունենում 1207 հ.թ. (1792/3 թ.):

¹⁵ Սուլեյման խան սարդարը Ալյա Մուհամմադ խանի զորահրամանատարներից մեկն էր ու նաև Ատրպատականի կառավարիչը: Սարդար տերմինը լայն զորածություն է ստացել Դաշարական ժամանակաշրջանում: Կլղ պաշտոնը իր մեջ ներառում էր զորահրամանատարի և կառավարչի լիազորություններն ու պարտականությունները: Սարդար էր կոչվում օրինակ Երևանի վերջին խան Հուսեյնը:

ժամանակ (Սուլեյման խանը) անձամբ պատվիրում ու զրում է Իբրահիմ խալիլ խանին հետևյալը. «...Ատրպատականի ազդեցիկ մարդիկ այս շահի ու հզոր թագավորության սիրելի շեմքի առաջ զուխ են խոնարհել, ուստի անհրաժեշտ է, որ այն խիզախ անձը ևս հնազանդվի... Հակասակ դեպքում ոսկե գավաթի ոսկին և գինու գունավոր սրվակը աղետի ու պատերազմի քարին կվիշուվի և շահի դաժան ու մտայլ կողոպտիչների ձեռքով նրա քաղցր համին թույն կխառնվի:

(242) Իր մարդկանց վերադարձից ու զրույթունը կարողալուց հետո Իբրահիմ խալիլ խանը հասկացավ, որ իր չարամիտ ծանոթների խոսքերը կեղծ ու նեղ են, իսկ Շուշիի քարե պարիսպները սալակու են հավասարազոր...

Ուստի իր հորեղբոր որդի Աբդ ալ-Սամադ Բեկին որպես պատանդ քանկարծեց փիշքեշներով¹⁸ և իր հնազանդությունը ի ցույց հանող խնդրագրով ուղարկում է գերագույն միապետի պալատը՝ խնդրելով, որ այդ տարվա ծնունդ թույլ տրվի իրեն ճանապարհորդությանը նախապատրաստվել ու իր վիլայեթի գործերը կարգի բերել:

Նրա խնդրանքը Նորին Մեծության կողմից ընդունվեց և Սուլեյման խանը Ռաբի՝ օլ-ավվալ ամսի վերջին տանուրյակում Ատրպատականից Մազանդարան եկավ և պատվարժան գահի առջևի հողը համբուրելու պատվին արժանացավ...

(256-257) Բերմանի պաշարման ընթացքում որպես պատանդ Աղա Մուհամմադ խանին տրված Աբդ ալ-Սամադ Բեկը փախուստի է դիմում, սակայն ճանապարհին սպանվում է շահսևան ցեղի հետ ընդհարման ժամանակ:

(263) Սուլեյման խանը, 1209 հ.թ. սկզբին (1794 թ.) գնում է Ատրպատական, այն երկրի գործերը կարգի բերում և Երևանի քելլարքեկ Մուհամմադ խանի ու այլ դաջար խաների հետ նախքան շահի պրագան շքախմբի ժամանելը մտնում թագավորանիստ Թեհրան և շահին վայել ծառայություններ մատուցելով՝ նրա գոհունակությանն արժանանում:

¹⁸ Փիշքեշ - Ձանազան ափսներով քնակության կողմից ֆեոդալին կամ պետական պաշտոնյաներին նվերների անվան տակ հատուցվող տուրք, ինչպես նաև ստորադաս պաշտոնյաների կողմից իրենց վերադասին, կամ խոշոր ֆեոդալների կողմից՝ շահին մատուցվող նվեր:

(264) Հայթափական դրոշի ուղղումը դեպի Ատրպատական երկրորդ անգամ և 1209 թվականին համապատասխանող նապատակի տարվա իրադարձությունները

(265)...Երբ 1205 ի.թ. (1791/2 թ.) Նորին Մեծության Ալլահի ստվերը ծեռնամուխ եղավ Ատրպատականի երկրի հպատակեցմանը և իր մտադրության համաձայն հիշյալ երկիրը շահական հմուտ պաշտոնյաների տնօրինության տակ անցավ, այն վիլայեթի քոլոր խաներն ու առաջնորդները հնազանդություն հայտնեցին: Իբրահիմ խալիլ խան Ջևանշիրը, որը հաստատվել էր Ղարաբաղի Շուշի բերդում, փիշեք նւղարկելով երկնահաս պալատը, իր ծերությանը ու անկարողությանը պատճառաբանելով, չգնաց բարեբախտ տիրակալի պալատը: Ջամշիդի փառքին արժանի Նորին Մեծությունը ներողամտորեն չլեանչեց նրան [իր մոտ]:

1207 ի.թ. (1792/1793 թ.) երբ գերագույն շքախումբը Ֆարսի Ասփաս հովտից ուղևորվում է դեպի Թեհրան, Սուլեյման խանին մի քանի հազար հեծյալներով ու Ատրպատականի հաղթական զորքով ուղարկում է Ատրպատական որոշ գործեր կարգավորելու: Իբրահիմ խալիլ խանը նորից իր նախկին անմիտ պատճառաբանությամբ չի գնում Սուլեյման խանի մոտ: Արդ ալ-Սամադ Բեկին՝ իր հորեղբորորդուն որպես պատանդ ուղարկում է սրբազնագույնի մոտ: Նա էլ Քերմանի ճանապարհին արքայական բանակից փախչում է, բայց շուտով սպանվում, ինչպես որ վերը այդ մասին նշվեց:

Թագավորական դրոշի դեպի Քերման ուղղվելու տարին (1793/4 թ.) համընկնում է Սուլեյման խանի կրկին Ատրպատական ուղարկվելու հետ: Իբրահիմ խալիլ խան Ջևանշիրը նորից հրաժարվում է հպատակվել և իրեն համարելով Ատրպատականի խելացիներից խելացին՝ ամրանում Շուշի բերդում, որ գտնվում է բարձր սարի գագաթին: Վերոհիշյալ դեպքերն ու իր զարմիկի սպանությունը ավելացնում են նրա վախը: Այսպիսով, ելք փնտրելով, [Իբրահիմ խանը] նենգաբար միանում է Թիֆլիսի վալիին¹⁷: Հայթափական հերոսի

¹⁷ Վալի – Մեֆյան Իրանի ժամանակաշրջանի տերմիններից է, որով հորըրցվում էին ծայրամասային 4 վիլայեթների (Արաքիտան, Լուրիստան, Կրաստան և Թրքստան) կառավարիչները: Վալիները պատկանում էին տվյալ վիլայեթի տիրակալների տոհմին և ունեին ինքնավարության իրավունք: Համարվում էր, որ այդպիսի վիլայեթի եկամուտը չէր մտնում Իրանի պետական գանձարան: Վալին պարտավոր էր կատաշխարհայանց ցուցաբերել ռազմական աջակցություն և շահին ուղարկել քառօրյան: Վրաստանի վալին

ահեղ զորքի ահից [Իբրահիմ խանը] անհրաժեշտ է համարում
օգնություն խնդրել Շիրվանի ու Շամախու, Դուբայի, Դերբենդի
կաթավարիչներից և, ապավինելով անօգուտ դաշինքին ու
զինակցությանը, զոտզաբար համառում է:

Այս պատճառով թշնամիներին հաղթող դատավորը¹⁸ վճռական
որոշում կայացնելով պատժել Իբրահիմ խալիլ խանին, նրա
համախոհներին ու (266) բարեկամներին՝ աշխարհ նվաճող նժույզը
ուղղում է դեպի Ատրպատական...

Շահական զորքը թագավորանիստ Յեհրանից մանգելից¹⁹ մանգել
չարժվելով գալիս-իջևանում է Սուլթանիեի հովտում: Սուլթանիեն
ծածկվում է շահական վրաններով: Այնտեղից հաղթական դրոշները
ուղղվում են դեպի Ջենջան, երկու օր հետո՝ չարժվում դեպի Արդեբիլ:
Երեք օր [Աղա Սուլիամաղ խանը] բանակ է խփում Արդեբիլում
Ղարասու գետի ափին:

Արդեբիլից [Աղա Սուլիամաղ խանը] Սուլիամաղ Հուսեյն խան
Դոյունլու Դաջարին մի զորագնդով ուղարկում է Շուշիից 3 մանգել
հեռավորության վրա գտնվող Արաքսի խողա Աֆերինի կամուրջը
հսկելու, որպեսզի չուշեցիները այն չքանդեն:

Երբ տեղ հասնելուց հետո պարզվեց, որ կամուրջը չարագործների
կողմից քանդված է գեղեցկուհու ուխտի պես, Սուլեյման խանին
հանձնարարվեց ու հրաման հրապարակվեց, որ բրուցերոզցիներին
որպես օգնականներ ու վարձու աշխատողներ վերցրած, գնա
կամուրջը վերանորոգի և ամրացնի ինչպես Նեղոս գետի կամուրջը:
Արքայական բանակից նշանավոր ճարտարապետներ ու հմուտ
շինարարներ ուղարկվեցին Արաքս գետի այն կողմում չորս
աշտարակներով մի անառիկ ամրություն կառուցելու
կարգադրությամբ:

Այի Դուլի խանը զորքով ուղարկվում է Երևանի կողմերը...

(268) Նորին Մեծություն Ջամշիդի փառքին և Արտաշիրի բախտին
արժանի տիրակալը Սուլեյման խանին ուղարկելուց հետո վերը նշված
մանգելից չարժվում է և թագավորական վրանները հաստատում

Իրանից որպես օժիկ ստանում էր այնտեղ հավաքվող հարկերի մի մասը: Արաքսով
ենթադրվում էր, որ վրաց վալին Իրանի պաշտոնյա էր:

¹⁸ Խոսքը Աղա Սուլիամաղ խանի մասին է:

¹⁹ Մանգել – կայան, իջևան: Այդպես էր կոչվում նաև կայանների միջև ընկած
հեռավորությունը:

Ղարաթելիում: Այնտեղից սրբազան զի հաջգա ամսի առաջին օրը²⁰ աշխարհակալ դրոշմ, որն առաջնորդում է աշխարհը նվաճողի շքախումբը և ապահովում խտովարար առաջաստանակի նավաստիների համար համընթաց քամի, հասնում է [Արաքս] գետի ափը: Հիշյալ կամուրջը ջանասիրությամբ ու բախտի հովանավորությամբ [10] օրվա մեջ վերանորոգվում է:

Ամրությունների ու կամրջի կառուցումից հետո Բաղրամի ուժն ունեցող, աստղերի քազմության ծառա Մարսին նմանվող տիրակալի զորքը լեռնային հեղեղի նման եռալով ու փրվիրալով կամրջով անցնում է և Նույն գետի ափին իջևանում: Այնտեղ գերագույնին զեկուցվում է, որ Ղարաբաղի ցեղերն ու հայերը շահի զորքերի ահից իրենց բնակավայրերից փախել-հեռացել են Շուշիի վիլայեթի մեջ մտնող Ղափանի ու Խանզիրաբի (խնձորակի)²¹ կողմերը: Ղափանի [քոչվոր] ցեղերից երկու ցեղախմբեր հավաքվել ու ամրացել էին Խոդա Աֆերինի կամրջից 8 ֆարսախ²² հեռավորությամբ գտնվող մի վայրում, իսկ հայերի խումբը ամրացել էր կամրջից 12 ֆարսախ հեռավորության վրա գտնվող տնախում:

Արդարադատի պալատից հրամանագիր հրապարակվեց, որպեսզի քաջ հեծյալ ու հետիոտն զինվորականների մի զորագունդ Մուսթովֆի խանի հրամանատարությամբ գնա այն խմբին ճնշելու: Մուսթովֆի խանն էլ սրբազնագույն հրամանին համապատասխան շտապում է դեպի այն խմբի ամրությունը: Նրանց տնախները զրոհով գրավում է: Ապանում, գերեվարում ու կողոպտում է նրանց՝ տապալելով նրանց նախապատրաստության ու համախմբման դրոշմ, և 106 զլխատվածների գլուխները նիզակների վրա, անմիջապես դառնում դեպի արքունի բանակատեղին: Գերիները, որ շուրջ 500 մեծ մասամբ բարեկազմ կանանցից ու երեխաներից բաղկացած մի խումբ էր, սրբազնագույն հրամանով հանձնվում են առաքինի պաշտոնյաների հսկողությանը, որպեսզի օտարները հեռու մնան նրանցից:

Մուհամմադ Կելի խանին և Ռեզա Ղուլի խան Ղաջար Ղավալուին հրամայվում է հաղթական զորագնդերից մի ջոկատով գրավել մյուս տնախը, ուր հայերն էին ամրացել: Նրանք ևս հաղթանակ տարան և,

²⁰ 1795 թ. հունիսի 19:

²¹ Շուտ Ալիջանի խնձորակ կամ Խանզիրաբ գյուղը գտնվում էր Ախալանի Շախապոբ շրջանի Եզնաուտուն և Բջնակ կամ Բիջանակ գյուղերի մոտակայքում (Ղևոնդ Ալիջան, Միսաքան, Կենետիկ, 1893, էջ 486):

²² Ֆարսախ կամ ֆարսանգ - երկարության միավոր, = 6 կմ:

մեծ քվով գերինեղով ու ավարով սրբազան զի հաջգա ամսի 9-ին²³ հաղթական ասպանդակի մոտ վերադարձան:

Միապետների երկրպագության վայրը, որի շենքի սուրբ քարը տիրակալների աղոթատեղին և նրա նվիրյալների գոհաբերման վայրն է²⁴, մահմեդական գոհաբերման օղջ փղամարմին ուղտերին մատաղ արեց Արաքս գետի ափին: Հիշյալ ամսի 12-ին²⁵ նշված վայրից արծվաթօղջ ընթացքով շարժվեցին դեպի Թախթ-ե Թավուս²⁶ և այն իրենց սիրամարզի փետուրների պես զույգզույն վրաններով գունավորեցին: Որպեսզի Սուլթանաբեդլիին կամուրջ²⁷, (269) որ գտնվում է Շուշի բերդից 3 ֆարսախ հեռավորության վրա, հաղթանակող պետության թշնամիները չքանդեն, [Աղա Մուհամմադ խանը] Աթղ ալ-Ռահիմ խան Շիրազիին Չերաղ խան Բախթիարիի հետ հաղթական զորքի մի ջուկատով ուղարկում է այն կամուրջը պաշտպանելու և նրա մոտ մի ամրություն կառուցելու:

Նորին Մեծություն Ալլահի սովերը մտնում է հիշյալ ամրության մեջ՝ Մուլեյման խան Ղաջար Ղոյունուլուին ու Մուսթուֆի խան Ղալալուին իր զորեղ մարտիկներից ու վրիժառու քաջերից 10000-ի հետ ուղարկում է կամ որպեսզի մի հնարով Շուշի բերդ ներթափանցեն կամ [պաշարվածներին] նեղելով [բերդից] դուրս բերեն: Ժանապարհին աղմկահարույց գինվորականները բախվում են Շուշի պահակազորայիններին, մարտի բռնվում և արյուն հեղում: Քչերին գերեվարում են, մնացածը նահանջում են:

²³ 1795 թ. հունիսի 28:

²⁴ և ուսքն Աղա Մուհամմադ խանի մասին է:

²⁵ 1795 թ. հունիսի 1:

²⁶ Թախթ-ե Թավուս տեղանունը չի հանդիպում Ղարաբաղի պատմական աշխարհագրությանը նվիրված հայկական ու օտաական աղբյուրներում: Այն գրությունում է, նաև պարսկալեզու պատմագիր Աթղ ալ-Ղազալ Ղումբուլին, որի վկայությամբ այն գտնվում է Շուշիից 8 ֆարսախ (= 42 կմ) հեռու, (տե՛ս عبد القزاق مفتون ۱۷۸۰، ص ۱۷۵، سلطنتیه تهران ۱۳۵۱، ص ۱۷۵، مائتة)

²⁷ Ներկայացվող երկը հրատարակող Ղոլամ Ռեզա Թաբաթբաթի Մաթթը ասանց դրև է իդունի նշում է, որ Սուլթանաբեդլիին զորք գտնվել է Շուշիից 3 ֆարսախ հեռու, որտեղ էլ գտնվել իհիշյալ կամուրջը (بن محمد لقي ساروقی، تاریخ محمدی، ص ۳۶۶ محمد فتح الله): ԵՃՆ այդ անվամբ բնակավայր հնարավոր չեղավ գտնել ժամանակի հայկական ու օտաական աղբյուրներում, սակայն նույն անվամբ մի ժանտաբարիի մասին խոսվում է 1811 թ. Ղարաբաղ ներխուժած պարսկական զորքերի խոդա - Աֆերինի կամուրջից անցած ուղու կապանցությամբ (Մաղաթան Ա., Աղաթի մեյլիթաթյունները և մեյլիթական տները XVII-XIX, Երևան, 2007, էջ 233):

Այնուհետև զորավարները դեպի իրենց նպատակակետն են արշավում, քերդի մոտակայքում մի անառիկ ամրություն են կառուցում: Թագավորական շքախումբը Թախթ-ե Թավուսից նրանց հետևից են շարժվում: Ճանապարհին որսորդությամբ էին զբաղվում, Շուշիի հեծյալների մի ցուկատ, որն իր մահն էր որոնում, հավատի արծվաթիչ, խիզախ մարտիկների ճանկն է ընկնում, և ոչնչացվում:

Ալեքսանդրի պես հպարտ արքան զի հաջջա ամսի 20-ին²⁸ զայս կանգ է առնում Շուշի քերդի մոտակայքում, և իր հրամիզ թղանոթները քերելով «Ճաթիալի խանի ամրություն»²⁹ կոչվող վայրը՝ այնտեղ կրակի օջախ հաստատում: Մինչ Շուշի քերդի պարսպից հրացանի ծայն էլ չէր լավում և զենքերը լուռ էին, թշնամիներին ոչնչացնող թղանոթները անդադար գնդակներով հրետակոծում են նրա պարիսպները, որից [պաշտպանների] մի խումբ ոչնչանում է:

Թագավորական հրամանագիր է հրապարակվում, որպեսզի Մուսրուվֆի խանը 5000 զինվորներով գնա դեպի Ասկերան, որի հեծավորությունը շահի բանակատեղիից 4 ֆարսանգ էր, իսկ Շուշիից՝ 3 ֆարսան և փակի ամրոցի ճանապարհը: Մուհամմադ խան Դավադուն մի խմբով ուղարկվում է, որպեսզի գնալով Թախթ-ե Թավուս՝ փակի դեպի Շուշի գնացող-եկողների, լուտենների ճանապարհը:

Իբրահիմ Նալիկականները մի քանի անգամ կօվի համար պարսպից դուրս գալով՝ կենդանության նշաններ են ցույց տալիս, սակայն նրանց հայտնվելուն սպասող շահի դյուցազունների տաք հարվածներից, տեղում սատում են: Մի անգամ Իբրահիմ Նալիկն՝ ինքը, 8-9 հազար մարդկանցով համարձակվում է դուրս գալ և համառ դիմադրություն ցուցաբերել: Ալեքսանդրի զորքն ունեցող տիրակալը (270) մի խումբ է առանձնացնում նրա դեմ կօվելու համար: Կողմերը սկսում են մարտը՝ ծայրահեղ խիզախություն ու մարտունակություն հանդես քերելով: Ի վերջո Իբրահիմ Նալիկը ձակատագրի աջակցությամբ հեծնում է փախուստի նժույզը ու այն ասպանդակում դեպի քերդը: Թեև զայու ժամանակ դանդաղաշարժ կերպով մարտի հովատակի սանձերը ձգած

²⁸ 1795 թ. հուլիսի 9:

²⁹ Ըստ Միրզա Յուսուֆ Նեքսետի այդպես է կոչվում Քալուբ-դաա և Անդալուի միջև ընկած մի ընդարձակ դաշտում ճանապարհի եզրին Ումիյալի Ճաթիալի խանի ԱՅշադի կողմից կառուցված ամրությունը այնտեղ հաստատվում: Արա կառուցած պարիսպների հետքերը այժմ էլ երևում են և ժողովրդի մեջ հայտնի են «Ճաթիալի խանի ամրություն (անձադա)» անվանք (Միրզա Յուսուֆ Նեքսետի, Ճշմարտացի պատմություն, էջ 59-60):

էր պահում, սակայն նահանջելիս ծիու սանձերը թուլացրած շարունակ խթանում էր: Կարճ ասած, բացի այն, որ մարտում մի խումբ գերի ընկավ, շուրջ 500 հոգի հավատի մարտիկների սրերի զոհը դարձավ: 110 մարդ միանգամից սրբազնագույնի ներկայությամբ սպանվեցին:

Եվ որովհետև երկնահաս շեմքին տեղյակ անձանց զեկուցվեց, որ Իբրահիմ Խալիլի եղբորորդիներ Մուհամմադ ու Ասադուլլահ Թեկերը Շուշիից 6 ֆարսախս հեռու մի անմատչելի վայրում ամրացել ու ինքնապաշտպանական մարտեր են մղում, Ղարեհի պես զորեղ տիրակալը Փիր Ղուլի խան Շամբայաթիին ու Արդալլահ խան Օսանլուին ձառափկ ռազմիկների հետ ուղարկում է նրանց դեմ կռվելու: Ուղարկվածները նրանց ամրության դեմ զնալով՝ այն գրավում են և Մուհամմադին ու Ասադին իրենց ունեցվածքով ու ընտանիքներով վերցրած վերադառնում արժանապատիվ տիրակալի մոտ:

Իբրահիմ Խալիլը իր եղբորորդիների, [նրանց] կանանց ու երեխաների գերեվարման մասին լսելով, վրկության ճանապարհը խոչընդոտներով լի, իսկ պարտությանը մոտ է համարում: Նա իր ազգականներից մեկին ուղարկում է աշխարհակալի շեմքը հետևալ քովանդակությամբ մի խնդրագրով. «Մի քանի հազար թումանի փիչքեշ եմ տալիս իմ մի որդու հետ որպես գրավ Ֆերիդունի նման Քայումարսին սպանող տիրակալին, որպեսզի հիմա այս հաղթված ծերունու գլխից ձեռք քաշես և վերջ դնելով կռվին ու վախին՝ քայլենք քարեկամության ուղիով»:

Անկրկնելի տիրակալը, որի մեծահոգությունը անհրաժեշտության դեպքում անսահման էր, իսկ զայրույթը վրեժի ժամանակ նման էր Աստծո թարկությանը, թեև սկզբում հայտարարում է. «Այդ խնդրանքն այն ժամանակ կարող էր ընդունվել ու բավարարվել, եթե նա՝ ինքը գար, գլուխը խոնարհեք աշխարհականների ապաստանի շեմքին»: Սակայն տեղի տալով ամիրների միջնորդության, քարեկամության հաստատմանն ուղղված ջանքերի ու իր մեծահոգության առաջ՝ այդ ծերունու գլխից ձեռք է քաշում և նրա խնդրանքն ընդունում:

Երբ Իբրահիմ Խալիլի ընկձման և նրան պատկանող վիլայեթի ու մահալի ավերման լուրը տարածվում է Ատրպատականի կողմերում, մոտակա վայրերի ըմբոստները խուճապի են մատնվում: Երևանի Մուհամմադ խան Ղաջարն ու Գանձակի Զավադ խանը արժեքավոր փիչքեշներով և 1000 պաշտոնյաների, Ատրպատականի հայերի դեկավարներ Մելիք Մեջնունի, Մելիք Իսմայիլի, Մելիք Ղուլիի և նրանց 800 ծառաների հետ գալիս, ներկայանում են վեհապետին...

Նորին Մեծաթյուն միապետը Շուշիի մոտակայքից, ուր 33 օր է մնում, հաղթական դրոշմ պարզում է դեպի Աղդամ, որը գտնվում է Շուշիից 6 ֆարսանգ հեռու: 27 օր այնտեղ մնալուց հետո մտադրվելով գնալ Թիֆլիս՝ մտնում է Չանծակ, մեկ օրով այնտեղ հաստատում շահական վրանը, այնուհետև շարժվում դեպի Ղարաչայ...³⁰

(277) Անգերազանցելի տիրակալը Աղդամի ու Ավանի ճանապարհով վերադառնում է և շուտով հասնում Կուրի ափը, որտեղ Արաքսը նրան է միանում և այդ վայրը թուրքերեն կոչվում է «Ղոշն», իսկ արաբերեն՝ «Ջավադ»: Կամուրջ է գցում ու քանակով այն անցնում: Այնտեղից կես ֆարսանգ հեռու (Աղա Մուհամմադ խանը) հաստատում է հավատի հաղթական մարտիկների իջևանատեղին...

(Էջ 279) Մուսթովֆի խան Ղաջարի Շիրվանի կողմերը ուղարկվելուց հետո մի քանի օրվա ընթացքում Մուլեյման խանը 5000 հեծյալ և հետիոտն զինվորներով ուղարկվում է Շուշիի կողմը, որպեսզի եթե Իբրահիմ խալի խանը զինադադարի իր խնդրանքին համապատասխան վերջ տված լինի իր անհնազանդությանը, վերցնի ու բերի այդքալի մոտ, հակառակ դեպքում ավերի անվնաս մնացած քնակավայրերը և անխիղճ կերպով կողոպտի Շուշիի մոտակա քնակիչներին:

Երբ Մուլեյման խանին հայտնի դարձավ, որ Իբրահիմ խալի խանը չի համարձակվում գալ և նա մտադիր է ժամանակ շահել, իր հեծյալներին ուղարկում է ալան-թալանի ու հետիոտններին ծուղակը գցելու: Այս պատճառով Ղարաբաղի որոշ քնակիչներ, որ մտածում էին իրենց ուժերով պաշտպանվել, ինքնապաշտպանության համար ուղի են կանգնում: Մուլեյման խանը, որը տիրակալի առաջ իր պատիվը քարձր պահելու համար ջանք չէր խնայում, իր զինվորականներին նորից կոչի է մղում:

³⁰ Թարգմանության մեջ չենք ներառել Աղա Մուհամմադ խանի կողմից Թիֆլիսի գրավմանն ու ավելի մանր նվիրված մասերը, որոնք շարադրված են ընդհանուր նկարագրության մեջ, որը նոր փաստեր չի ավելացնում արդեն հայտնի տվյալներին:

**THE REPORTS OF SARAVI, THE COURT HISTORIOGRAPHER OF IRAN
ABOUT AGHA MUHAMMAD KHAN'S CAMPAIGN IN KARABAGH IN 1795**

Muhammad Fathallah ibn Muhammad Taqi Saravi was Agha Muhammad Khan's court poet and historiographer. His historiography entitled "Tarikh-i Muhammad" comprises the history of Iran in the period from 1761 to 1797. The work contains a detailed description of Agha Muhammad Khan's Karabagh campaign in 1795. The article reveals the valuable information of the historiography about the resistance of the local population of Karabagh to Agha Muhammad Khan's troops and his military undertakings against Ibrahim Khalil Khan. The article contains the Armenian translation of the parts of the work referring to the events connected with Karabagh campaign of Agha Muhammad Khan.

**«ՄԵՐՉԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐՆԵՅԻ
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՐՈՂՆԵՐ» ՄԱՏԵՆԱԶԱՐ**

1. Արևելագիտական ժողովածու - Հատ. I: Եր., ՀՍՍՐ ՊԱ հրատ., 1960, 402 էջ:
2. Արևելագիտական ժողովածու - Հատ. II: Եր., ՀՍՍՐ ՊԱ հրատ., 1964, 380 էջ:
3. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. III, Արաբական երկրներ: Եր., ՀՍՍՀ ՊԱ հրատ., 1967, 227 էջ:
4. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. IV, Իրան: Եր., ՀՍՍՀ ՊԱ հրատ., 1969, 405 էջ:
5. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. V, Թուրքիա: Եր., ՀՍՍՀ ՊԱ հրատ., 1970, 449 էջ:
6. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. VI, Արաբական երկրներ, Եր., ՀՍՍՀ ՊԱ հրատ., 1974, 434 էջ:
7. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. VII, Քրդագիտություն: Եր., ՀՍՍՀ ՊԱ հրատ., 1975, 383 էջ:
8. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. VIII, Իրան: Եր., ՀՍՍՀ ՊԱ հրատ., 1975, 404 էջ:
9. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. IX, Արաբական երկրներ: Եր., ՀՍՍՀ ՊԱ հրատ., 1978, 397 էջ:
10. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. X, Թուրքիա: Եր., ՀՍՍՀ ՊԱ հրատ., 1979, 329 էջ:
11. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XI, Իրան: Եր., ՀՍՍՀ ՊԱ հրատ., 1982, 345 էջ:
12. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XII, Թուրքիա: Եր., ՀՍՍՀ ՊԱ հրատ., 1985, 276 էջ:
13. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XIII, Քրդագիտություն: Եր., ՀՍՍՀ ՊԱ հրատ., 1985, 285 էջ:
14. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XIV, Արաբական երկրների ներքին և արտաքին քաղաքականության ժամանակակից պրոբլեմներ: Եր., ՀՍՍՀ ՊԱ հրատ., 1987, 315 էջ:
15. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XV: Եր., ՀՍՍՀ ՊԱ հրատ., 1989, 341 էջ:

16. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XVI: Եր., ՀՀ ՉԱԱ "Գիտություն", 1996, 270 էջ:
17. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XVII: Եր., ՀՀ ՉԱԱ «Գիտություն», 1998, 240 էջ:
18. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XVIII: Եր., «Ձանգակ-97», 1999, 236 էջ:
19. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XIX: Եր., «Ձանգակ-97», 2000, 218 էջ:
20. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XX: Եր., «Ձանգակ-97», 2001, 349 էջ:
21. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXI: Եր., «Ձանգակ-97», 2002, 405 էջ:
22. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXII: Եր., «Ձանգակ-97», 2003, 332 էջ:
23. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXIII: Եր., «Ձանգակ-97», 2004, 568 էջ:
24. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXIV: Եր., «Ձանգակ - 97», 2005, 536 էջ:
25. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXV: Եր., «Ձանգակ - 97», 2006, 476 էջ:
26. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXVI: Եր., «Ասողիկ», 2007, 316 էջ:
27. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXVII: Եր., «Էդիթ Պրինտ», 2009, 272 էջ:

ՄԵՐՉԱԿՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՌԵՎՅԱԼԻ
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐ
XXVIII

THE COUNTRIES AND PEOPLES
OF THE NEAR AND MIDDLE EAST
XXVIII

СТРАНЫ И НАРОДЫ БЛИЖНЕГО
И СРЕДНЕГО ВОСТОКА
XXVIII

Հրատարակչության տնօրեն
Գամալարզյային էջադուռը՝

Է.Ա. Ալրոյան
Գ.Ա. Գալուստյանի

ISBN 978-99941-1-939-4


Տպագրություն՝ օձեք: Չափազ՝ 60x84 1/16: Թուղթ՝ օձեք:
Շափառ՝ 22 տալ. ճան: Տպագրանակ՝ 300 օրինակ:



«ԶԱՆԳԱԿ-97» ԳՐԱՏԱՐԱՎՈՐԻԹՅՈՒՆ
ԳԳ, 0061, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28
Գեթապատճեն՝ (+37410) 23-25-95, էլ. փոստ՝ info@zangak.am
էլ. կայք՝ www.zangak.am, www.book.am



[3000pp.]



117 26

2011, 7. 28